

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Պրոֆ. դր. Ռ. Հովհաննիսյան (Լոս Անջելես), պրոֆ. դր. Ա. Մուքաթյան (Փարիզ), պրոֆ. դր. Յ. Հովհաննիսյան (Քայզերսլաութերն), պրոֆ. դր. Ժ.
Փիփեր (Մախեն), դր. Գ. Գևորգյան (Փարիզ), պրոֆ. Յ. Սուրբազան (Կահիրե), պրոֆ. դր. Լ. Ջեքոն (Վենետիկ), պրոֆ. դր. Ս. Հասարթյան (Երևան)

Աշխատությունը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

RAA ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՐՔ Ը

ՀԱՅԵՐԸ ԿԱԽԵԹՈՒՄ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

THE ARMENIANS IN KAKHET

SAMVEL KARAPETYAN

АРМЯНЕ В КАХЕТИИ

САМВЕЛ КАРАПЕТЯН

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 941 (479. 25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Կ - 294

Խմբագիրներ՝ **Անուշավան Զաքարյան**
բանասիր. գիտ. թեկնածու
Սուրադ Դասրաթյան
ճարտ. դոկտոր
Պավել Զոբանյան
պատմ. գիտ. թեկնածու

Կ - 294 Կարապետյան Սամվել
Չայերը Կախեթում.– Եր.: ՀՀ ԳԱԱ
«Գիտություն» հրատ., 2004.–224 էջ + 24 էջ
գունավոր ներդիր

Փաստական նյութի համալիր ուսումնասիրության հիման վրա ներկայացված է Կախեթի (Արևելյան Վրաստան) հայկական գաղթավայրերի պատմությունը: Զգալի տեղ է հատկացված երկրամասում պահպանված հայկական պատմական հուշարձաններին:

Հասցեագրվում է հայ ժողովրդի, մասնավորապես հայկական գաղթավայրերի պատմությանը ու նշակույթով հետաքրքրվողներին և ընթերցող հասարակությանը:

The present volume treats the history of the Armenian colonies in Cahetia (Eastern Georgia) on the basis of a complex research of factual materials. The Armenian historical monuments surviving in the region occupy a marked place in the book.

The work is addressed to the general reader as well as specialists in the history and culture of the Armenian people, in particular, Armenian colonies.

На основе комплексных исследований фактических материалов в книге представлена история армянской колонии в Кахетии (Восточная Грузия). Значительное внимание уделено описанию сохранившихся армянских исторических памятников этого района.

Книга предпослана как специалистам, изучающим армянскую историю и культуру, так и широкому кругу читателей.

Կ $\frac{0503020913}{703(02)-98}$ 2004 թ.

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5-8080-0585-X

© Սամվել Կարապետյան, 2004

© «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ (RAA), 2004

Աշխատության հրատարակությունն իրականացվել է
Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանի
հովանավորությամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան6	Փխովել (Բխովել)56
Պատմաաշխարհագրական ակնարկ7	Քողալո56
ԱԽՄԵՏԱՅԻ ՇՐՋԱՆ		ԹԵԼԱՎԻ ՇՐՋԱՆ	
Ալավերդի18	Ախատել58
Ախմետա19	Արթանա59
Ածղվեր19	Բայիխո60
Բախարիոն19	Գուլգուլա60
Բոստանա19	Թելավ60
Խորխել19	Իդայթո83
Մադրան20	Լալխոլո83
Մատան21	Ծինանդալ84
Մարելիս24	Կողոթո87
Չարինատր24	Կոնդոլ88
Սանադիրո24	Կուրդդելատր89
Ներքին Խողաշեն26	Նափարեուլ89
Փիչխովան26	Շալատր91
Քիսթատր26	Ջանասան91
Օժիո29	Ռուխսպիր92
ԳՈՒՐՋԱՆԻ ՇՐՋԱՆ		Սանիո95
Ագրան30	Տողնիան97
Ախաշենի30	Տուրիսցիխես99
Առաշենդա30	Փշավել102
Բակուրցիխես30	ԼԱԳՈՂԵՏԻ ՇՐՋԱՆ	
Գուրջան31	Լագողեյս (Լագողաղ)103
Ջիար31	ԾԻԹԵԼԻ-ԾՂԱՐՈՅԻ (ԴԵԴՈՓԼԻՍ-ԾՂԱՐՈ) ՇՐՋԱՆ	
Կալատր32	Ծիթելի-Ծղարո106
Կաճրեթ32	Մաճխան (Վերին)108
Կարդանախ32	Միրզան108
Կոլակ33	Սաբաթլու109
Մելան33	ՂՎԱՐԵԼԻ ՇՐՋԱՆ	
Մուկուզան33	Աղտոմա110
Շաշիան36	Գրեմ111
Չալատրան36	Խաչմիան կամ Մանավարդո127
Չունլաղ37	Կուճատան129
Ջիմիթ37	Հին կամ Վերին Գավազ (Ախալսուփել)132
Վաչնադյան37	Ձեզան133
Վելիսցիխես38	Ղվարել (Դորել)134
Վեջին50	Ճինճրիան136
Վեփիսյուսցիխես50	Նոր (Ներքին, Ախալի) Գավազ137
Ուրիաթուրան (Վազխուրան)51		

Շաքրիան	137	Սղնախ	165
Շիլդա	139	Վաքիլ	191
Փաշաան	141	Տիբաան	191
ՍԱԳԱՐԵՉՈՅԻ ՇՐՋԱՆ		ԲԵԼՈԿԱՆԻ ՇՐՋԱՆ	
Անթոկ	143	Բելոկան	193
Գիորգիծմինդա	143	ՋԱԶԱԹԱԼԱՅԻ ՇՐՋԱՆ	
Դավիթ-Գարեջա	143	Ջաքաթալա	194
Թոխլիաուր	148	Վարխիան	199
Խաշմ	148	ԿԱՆԻ ՇՐՋԱՆ	
Կակաբեթ	148	Կախ	200
Ղանդաուր	150	Ջազյան	202
Մանավ	151	Թասմալուր	202
Նինոծմինդա	154	Մարսան	202
Չայլուր	155	Վերջաբանի փոխարեն	203
Պատարձեուլ	156	ՑԱՆԿԵՐ	
Սագարեջո	156	Գունավոր լուսանկարների ցանկ	204
ՄՂՆԱԽԻ ՇՐՋԱՆ		Տեղանուններ	205
Անագա	159	Անձնանուններ	210
Բողբե	160	Օգտագործված աղբյուրներ	218
Բողբիսխեվ	160		
Մաղարո	161		
Մաճխան (Նեքքին)	161		
Նասոմխար	162		
Նուկրիան	163		
Ջուգաան	165		

ՆԱԽԱԲԱՆ

Դարերի ընթացքում Հայաստանը բազմիցս ենթարկվել է ավերիչ ասպատակությունների: Արաբները, թուրք-սելջուկները, մոնղոլ-թաթարները և այլ նվաճողներ ավերել են Հայաստան աշխարհը, կոտորել ու գերեվարել բնակիչներին, հաստատել իրենց բիրտ ու դաժան տիրապետությունը, բայց ամեն անգամ ժողովուրդն ընդդիմացել և պայքարել է հանուն իր ազատության: Դժբախտաբար, զավթիչների պարբերաբար կրկնվող արշավանքների հետևանքով հայ ժողովրդի մի ստվար մասը ստիպված է եղել լքել հայրենի տունը, երկիրը և ապաստան փնտրել օտար ափերում: Պետականությունը կորցրած հայը կամաց-կամաց սփռվել է աշխարհով մեկ և օտար երկրներում կազմել մեծ ու փոքր համայնքներ:

Հայերի առաջին ու հնագույն գաղթավայրերը, բնականաբար, գոյացել են հարևան կամ մոտակա երկրամասերում: Դրանց մեջ կարևոր տեղ է զբաղեցրել քրիստոնյա Վրաստանը: Աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ գրեթե բոլոր զավթիչների հետ ընդհարվելիս Հայաստանն ստանում էր առաջին ու առավել հուժկու հարվածները, ուստի Վրաստանն ապրում էր համեմատաբար ավելի խաղաղ կյանքով:

Հայտնի է, որ արդեն արաբական արշավանքների ու նրանց տիրապետության շրջանում վրաց հողում ապաստան են գտել զգալի թվով հայեր: Նրանք հաստատվել են գլխավորապես Վրաստանի կենտրոնական և արևելյան շրջաններում: Ի դեպ, պատմական մի քանի մարզերից (Կախեթ, Կուխեթ, Քիսեղ-Կիզիկիա, Հերեթ) բաղկացած ներկայիս Արևելյան Վրաստանը հարավից մասամբ ներառում է նաև Կուրի և Իորի միջագետքում փռված Կամբեճան գավառի հյուսիսային կեսը: Վերջինս մինչև 918 թ. ուներ ազգային եկեղեցու հետևորդ հայ բնակչություն, որը, սակայն, հետագայում միացավ վրաց եկեղեցուն՝ ընդունելով հունաղավանդություն:

Այդ ժամանակներից ի վեր՝ ցայսօր, Կախեթում, որը հիշյալ մարզերի ավելի ընդհանրական ու լայն ճանաչում գտած անվանումն է, բնիկ վրաց ազգաբնակչության հետ բնակվում են նաև հայեր:

Համախմբված ազգային եկեղեցու շուրջը՝ կախեթաբնակ հայերի առջև արդեն ԺԹ դարում ծառայել էին ուժացման հեռանկարն ուրվագծող խնդիրներ: Հակագրելու միակ միջոցը վրացական միջավայրին կուլ գնացող, մայրենին փրկելն էր: Հենց այս մտահոգությամբ էլ ԺԹ դարի 2-րդ կեսից երկրամասի մի շարք քաղաքներում և գյուղերում բացվում են հայկական դպրոցներ: Դրանց գործունեությունը շարունակվում և անգամ նոր թափ է ստանում Ի դարի սկզբներին: Սակայն Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո մեկը մյուսի հետևից փակված հայոց եկեղեցիներին հետևում են նաև դպրոցները: Արդեն 1930-ական թվականներին, երկրամասի հայ բնակչության ձուլումը կանխող պատվարները՝ հայոց դպրոցն ու եկեղեցին, գրեթե ոչնչացված էին: Հետագա տասնամյակներում ավելի ու ավելի է արմատավորվում վրացախոսությունը, որը հայերի ձուլման նախապայմանն էր:

Հայերի ուժացմանը նպաստող տևական ու նպատակամղված քաղաքականության հետևանքով կախեթաբնակ հայերի մեծագույն մասն այսօր վեր է ածվել սոսկ ծագումով հայի, քանի որ մայրենիի տեղը զբաղեցրել է միջավայրի լեզուն՝ վրացերենը:

Կախեթի հայ գաղթավայրերը (ավելի քան 100 բնակավայր), թեև մոտ են Հայաստանին, այնուամենայնիվ, մինչ այժմ գրեթե ուսումնասիրված չեն եղել: Սույն աշխատանքն այդ նկատելի բացը լրացնելու փորձ է:

ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տեղադրություն. Կախեթը Վրաստանի կարևոր ու պատմական մարզերից է: Ջրադեցնում է Իոր և Ալազան գետերի (Կուր գետի ձախակողմյան խոշոր վտակներն են) ավազանը: Հյուսիսից և հյուսիսարևելքից երկրամասի սահմանն է Մեծ Կովկասի ջրբաժան գիծը, հարավից՝ Կուր գետը, իսկ արևմուտքից՝ Քարթլիի լեռնաշղթան: Տարածքը, ներառյալ Հերեթն ու Կամբեճանը, որոնք Կախեթին օրգանապես կապված շրջաններ են, կազմում է մոտավորապես 17,000 կմ²: Սակայն ներկայիս Վրաստանի Հանրապետության կազմում ընդգրկված է հին Կախեթի միայն մոտ 12,000 կմ² տարածքը: Մնացածը՝ ներկայիս Բելոկանի, Ջաքաթալայի և Կախի շրջաններն ամբողջությամբ, մաս՝ Ղազախի, Թուրքի, Շամխորի և Խանկարի անդրկուրյան հատվածները (հարավային Կամբեճանը), գտնվում են Ադրբեջանի Հանրապետության կազմում: Ի դեպ, օրինակ, ԺԹ դարի վերջերին Կախեթը ներառում էր անհամեմատ ավելի սահմանափակ տարածություն, քանի որ չէր ընդգրկում նրան հարակից պատմական մարզերը. «Կախեթ անունով յայտնի երկիրը Վրաստանում բռնում է 2.100 քառակուսի վերստ տարածություն, այն է Թելալի ամբողջ գաւառը և Սղնախի ու Թիոնեթի գաւառների փոքր մասերը»¹:

Կախեթը բարեբեր, բարեխառն կլիմայով, ջրառատ ու անտառաշատ երկրամաս է: Տարբեր ժամանակների բոլոր այցելուները հիացած են եղել երկրամասի բնության գեղեցկությամբ. «Օդ երկրին Կախեթի՝ է ըստ ամենայնի քաղցր և ախորժական և բարեյարմար, և ջուրը նորա բարեհամբ. ունի զմեծ գետն Ալազան՝ որ սկսեալ ի լեռանց Կովկասու և ընթացեալ ընդ բովանդակ երկարութիւն դաշտին՝ խառնի ընդ Էօր գետ՝ որ բղխի ի Գոմբոռ լեռանց, և ընդ նմա միացեալ խառնին ի Կուր գետ մերձ ի Մամուխ դաշտ: Երկիրն է բերրի և այգաւետ, վասն որոյ և յամենայն տեղիս անուանի է գինին Կախեթի: Բնակիչք երկրիս յաղթանդամք են և հսկայաձևք և գեղեցկադիտակք»²:

Պատմություն. Կախեթի հարավային մասում գտնվող Կամբեճան գավառը պատմական Հայաստանին սահմանակից էր հյուսիսարևելյան կողմից և հնուց ենթարկվում էր Մեծ Հայքի այդ կողմերի նախարարներին: Այս իմաստով Հայաստանը, ի թիվս Վրաստանի շատ գավառների, սահմանակից էր նաև Կախեթին: Մարզպանության շրջանում (Ե-է դդ.) Կամբեճանը նախ եղել է Առանշահիկ Վաչագան Բարեպաշտի ստեղծած թագավորության, ապա՝ Գարդմանքի տեր Միհրանյանների իշխանության կազմում: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում (Ը-Թ դդ.) Կամբեճանը շարունակել է միացած մնալ Արցախ-Ուտիքի հայ նախարարների տիրույթներին: 787 թ. Կամբեճանը միացել է Կախեթի քորեպիսկոպոսությանը (իշխանություն), որից էլ Թ դարի 2-րդ կեսին այն ետ գրավեցին Առանշահիկները Գրիգոր-Համամ Բարեպաշտի օրոք: Կախեթի այս ընդարձակ գավառը հայ նախարարների տիրապետության ներքո մնաց մինչև Ի դարի սկզբները:

787 թ. Ճանարական հարստության ներկայացուցիչ Գրիգորը (787-827) հիմք դրեց Կախեթի իշխանությանը (քորեպիսկոպոսություն): Նրա օրոք Կախեթի կազմում էր գտնվում նաև Գարդաբան գավառը (այժմ՝ համանուն քաղաք և շրջան Թբիլիսիից հարավ-արևելք): Գրիգոր քորեպիսկոպոսի մահից հետո Կախեթի իշխանության գլուխ են անցնում զարդաբանցի Դոնատրի տոհմի ներկայացուցիչները: Դոնատրի հարստության իրար հաջորդած ներկայացուցիչներ Քվաբուլի որդի Դաչին (Վաչե, 827-839), Սամուել Դոնատրին (839-861), Գաբրիել Դոնատրին (861-881) կարողացան ամրապնդել Կախեթի իշխանության դիրքերը և իրենց տիրապետության սահմաններն արևմուտքում հասցնել մինչև Քսանի գետի հովիտը: Այնուհետև իշխանության գլուխ կանգնեց Փաղա քորեպիսկոպոսը (881-893): Նա Կախեթի մայրաքաղաք դարձրեց Բոչորման: Նրա հաջորդներն էին Կյուրիկե Ա-ն (893-918) և Փաղա Բ-ն (918-929): Վերջինս Արևմանելի հարստության ներկայա-

1 «Մուրճ», 1896, № 12, էջ 1648:
 2 **Տեր-Ղազարեանց Արշարունի Յովհաննես վարդ.** Ստորագրություն Կովկասեան գաւառաց.– «Բազմավէպ», 1851, № 18, էջ 281: Երկրամասի նկարագրությունը տես նաև՝ **Գարլա Մե-**

րենա, Երեք ամիս ի Կախեթ.– «Բազմավէպ», 1883, էջ 37-46, 142-151, 319-331: **Ղազարեանց Ե.,** Կախեթ և Շիրակ.– «Մուրճ», 1891, № 7-8, էջ 870-876: **Հակոբյան Հովհ.,** Ուղեգրություններ, հ. 2, Երևան, 1934, էջ 720-721:

ցուցիչ էր: Այս շրջանում Կախեթի հայաբնակ Կամբեճան գավառը ենթարկվեց վրաց հոգևոր ու քաղաքական ազդեցությանը: Քաղկեդոնականության տարածման հետևանքով Կամբեճանի հայերը մտան վրաց եկեղեցու ազդեցության ոլորտը, իսկ հետագայում մեծ մասամբ վրացացան. «918 թ. ...Դինար քագուհին Հերեթն հերձվածքից ուղղափառ դավանության դարձրեց»³: Փաստորեն, 918 թ. սկսած Կախեթի հարավային փոքր մասը կամ պատմական Հայաստանի Կամբեճան գավառի հայ բնակչությունը կրոնափոխության հետևանքով ժամանակի ընթացքում ձուլվեց դավանակից վրացիներին:

Կյուրիկե Բ-ի (929-976) օրոք Կախեթը ժամանակավորապես մվաճեցին արխազ քագավորները: 957 թ. արխազ Լևոն քագավորի և Կյուրիկե Բ-ի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որով Կախեթն ընկավ կախյալ դրության մեջ:

Կախեթի քորեպիսկոպոսության վերջին ներկայացուցիչը Դավիթն էր (976-1010): Նա կարողացավ բավական հզորանալ և պատերազմ ծավալել Քարթլիի քագավոր Բագրատ Գ-ի (975-1014) դեմ տարածաշրջանում առաջնության հասնելու նպատակով:

Մեծն Կյուրիկե Գ-ի (1010-1038/1039) անվան հետ է կապված Կախեթի իշխանությունը քագավորության վերածելու փաստը: Իրեն քագավոր հռչակելով՝ 1014 թ. Թելավը դարձրեց մայրաքաղաք: Կենտրոնացված (միացյալ) քագավորություն ստեղծելու նպատակով Քարթլիի քագավոր Բագրատ Գ-ն շարունակեց պատերազմել Կյուրիկե Գ-ի դեմ և 1010-1011 թթ. գրավեց Կախեթի գրեթե բոլոր բերդերը, իսկ Կյուրիկեին էլ գերեց ու բանտարկեց Բոչորմայի բերդում: Շուտով Կախեթի վրա է հարձակվում Գանձակուն հզորացած Փաղուն ամիրան (985-1031): Բագրատ Գ-ն, որը, փաստորեն, Կախեթը միացրել էր իր երկրին, համաձայնության գալով հայոց Գագիկ Բագրատունիի քագավորի հետ, համատեղ ուժերով կարողացավ պարտության մատնել Փաղունին և ապահովել Կախեթի սահմանների անվտանգությունը: արու գավակ չթողնելով 1038 կամ 1039 թ.՝ Կյուրիկե Գ-ն մահանում է: Կախեթում գահակալ է դառնում Կյուրիկեի քրոջ որդին՝ Գագիկը (1038/1039-1058), որը հայոց Բագրատունիների Կյուրիկյան ճյուղի Դավիթ քագավորի որդին էր. «1039 թ. Կվիրիկե Կախեթի քագավորը գավակ չունենալով՝ որդեգրել էր իր քեռորդուն՝ Մամշվիլդեի Հայոց Դավիթ քագավորի որդի Գագիկին և Կվիրիկե քագավորի մահից հետո այս Գագիկը Կախեթի քագավոր նստեց»⁴:

Կախեթի Գագիկ քագավորից⁵ սկսած՝ հիմք դրվեց Կախեթի հայ քագավորների հարստությանը

(«...քագաորն Կախեթոյ՝ Գագիկ, որդին Հայոց արքայի»)⁶: Գագիկին հաջորդեց Աղսարթանը (1058-1084): Մրանց օրոք Կախեթի քագավորության սահմանները հարավարևելյան ուղղությամբ մեծապես ընդարձակվեցին ու հասան մինչև Շամախի:

Կյուրիկե Դ-ի (1084-1102) գահակալության վերջին տարիներին պատերազմական գործողություններ էին ծավալվել Կախեթն իբրև առանձին քագավորություն պահպանելու համար: Թագավորության վերջին գահակալ Աղսարթան Բ-ի (1102-1103) օրոք ըստ էության Կախեթն արդեն միավորվել էր միացյալ վրացական քագավորությանը: Վրաց միացյալ քագավորության հիմնադիր Դավիթ Շինարարի (1089-1125) ջանքերն այս ուղղությամբ հաջողությամբ պսակվեցին 1103/1104 թ.:

Այդպիսով Կախեթում վերացավ Կյուրիկյան հայ Բագրատունիների քագավորական հարստությունը, որը տևեց 1038-ից մինչև 1103/1104 թվականը⁷:

Կախեթ-Հերեթը, շուրջ երեքուկես դար մնալով Վրաստանի կենտրոնացված պետության կազմում, ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանում (1468 թ.) կրկին առանձնացավ որպես ինքնուրույն քագավորություն՝ Գրեմ մայրաքաղաքով:

Ամենայն հավանականությամբ, հայ գահակալների քագավորության տարիներին Կախեթում ավելացել էր հայ ազգաբնակչության թիվը: Դրան կարող էր նպաստած լինել նաև թուրք-սելջուկների կողմից Հայաստանի ավերումը: Անկասկած, մոնղոլ-թաթարական արշավանքներին ևս հաջորդել էին Վրաստանում ապաստանած հայերի նորանոր խմբեր:

Վրաստանում հայերի հաստատվելը հովանավորել են նաև վրաց քագավորները: Երևույթն ակնառու է թե՛ միջնադարում (օրինակ՝ Դավիթ Շինարարի օրոք) և թե՛ ուշ միջնադարում (օրինակ՝ Հեռակ Բ-ի օրոք): Հատկանշական է, որ Վրաստանի իշխողներն իրենց երկիրն ու հատկապես քաղաքները ծաղկեցնելու նպատակով բյուզանդացիների և պարսիկների նման ջանք չէին խնայում Վրաստանը հայերով բնակեցնելու համար:

Այդպես կամաց-կամաց ստվարանալով՝ ԺԳ-ԺԶ դարերում Կախեթում, մասնավորապես մայրաքաղաք Գրեմում, կազմավորվել էր բազմամարդ ու աշխույժ հայ համայնք: Մայրաքաղաքում հայերը կառուցել էին մի շարք եկեղեցիներ ու զանազան շինություններ: Հնավայրերում պահպանված հայերեն արձանագրությունները վկայում են, որ Կախեթի հայերը մինչև ԺԶ-ԺԸ դդ., բնակվելով վրացական միջավայրում, կարողացել են անաղարտ պահել ազգային նկարագիրը, որը նախ և առաջ դրսևոր-

3 Մելիքսեթ-Քելե Լ. Մ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 67:

4 Նույն տեղում, էջ 67-68:

5 Կախեթի հայազն քագավորների մասին համառոտ տե՛ս նաև՝ Մովսեսիան Հ. Ղ., Կախեթի մեջ հայազնի քագաորներ Կիրիկեան տնե՛ն. – «Հանդես Ամսօրեայ», 1922, էջ 643-645:

6 «Համառոտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի», Վենետիկ, 1884, էջ 112:

7 Мкртумян Г. Г., Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983, с. 109-147.

վում է մայրենի լեզվի իմացությանը ու գործածությանը:

ԺՁ դարում Կախեթը հայտնվել էր քաղաքական բարենպաստ պայմաններում և էապես կարգավորել ու բարելավել էր իր տնտեսական վիճակը: Նշված ժամանակաշրջանում երկրամասն ամենազարգացած տնտեսությունն ուներ Վրաստանի մարզերի մեջ⁸: Այդ առումով խիստ արգասավոր էին Գիորգիի (1466-1476) որդի Ալեքսանդրի (1476-1511), Գիորգի Բ-ի (1511-1513), Լևանի (1520-1574) և վերջինիս որդու՝ Ալեքսանդր Բ-ի (1574-1605) գահակալության տարիները:

ԺՁ դարի վերջերից Թուրքիայի և Իրանի նվաճողական քաղաքականության պայմաններում Կախեթի տիրակալները կողմնորոշվեցին դեպի ռուսները: 1587 թ.՝ երկարատև բանակցություններից հետո, օգնության ակնկալությամբ Կախեթի Ալեքսանդր Բ թագավորը ռուսաց գահին հավատարմության երդում տվեց: Պարսից Շահ-Աբաս արքան իրար հաջորդած (1614 և 1617 թթ.) արշավանքների ընթացքում ամայացրեց երկրամասը. «...Շահ-Աբասն քակեաց և աւերեաց երկիրն Կախեթու, և Թամրազ որդի թագաւորին Աղեքսանդրի տարաւ ընդ իւր ի Պարս...»⁹: Սպանվեց 80 հազար մարդ, գերեվարվեց՝ 30 հազարը¹⁰: Համաձայն ռազմագետ-պատմաբան Վ. Պոտտոյի՝ «1617 թ. Շահ-Աբասի զորքերը մտան Կախեթ ամեն ինչ ողողելով արյամբ, քաղաքները մոխրացնելով, վանքերը թալանելով, սրբապատկերներն ու խաչերը կոտորատելով և սուրբ զարդերը վերածելով հարեմի զարդարանքների: Քրիստոնյաները պաշտպանվելու փոխարեն հավաքվել էին եկեղեցիներում՝ աղոթում էին՝ պատրաստվելով մահվան, և եկեղեցիների հետ հազարներով հրո ճարակ եղան: Իրենց հերթին լեզգիները շահի պահանջով սպանում կամ գերում էին նրանց, ովքեր փախել էին իրենց լեռները...»¹¹: Հասկանալի է, որ առաջին հերթին առավելագույն

տուժել էր մայրաքաղաք Գրենը. հայտնի է, որ 1617 թ. արշավանքից հետո դադարել էր իբրև բնակավայր գոյություն ունենալ: Կախեթին բաժին հասած այդ ողբերգությունը տեղի ունեցավ Ալեքսանդր Բ-ին հաջորդած Թեյմուրազ Ա-ի (1605-1634) օրոք¹²:

Քարթլիի գահաժառանգ Արչիլը, նույն ինքը՝ Շահ-Նազար խանը (1664-1675), Իրանի ուժեղացող ճնշման հետևանքով Կախեթի գահը հարկադրված զիջեց նրա դրածոներին:

Կախեթը ԺԸ դարում. այս դարում երկրամասում ոչ պակաս փոթորկալից իրադարձություններ տեղի ունեցան: Պարսից Հյուսեին շահը 1703 թ. գահազրկեց Կախեթի Հերակլ Ա թագավորին և երկրի կառավարիչ նշանակեց վերջինիս որդուն՝ Դավթին (1703-1722): Մահմեդականները նրան կոչում էին Իմամ-Կուլի-խան. «Կախեթու խանութիւնն տվին Վալի տղին»¹³:

1723-1735 թթ. օսմանյան թուրքերը Կախեթում հաստատեցին իրենց տիրապետությունը, բայց հետո՝ 1735-1744 թթ., պարսկական տիրապետությունը վերականգնվեց: 1744 թ. Կախեթում գահ բարձրացավ Հերակլ Բ-ն: 1762-ից մինչև իր մահը՝ 1798 թ., նա թագավորեց նաև Քարթլիի տարածքում:

ԺԸ դարում անպակաս չէին նաև Կովկասի լեռնականների արշավանքները Կախեթ: Որպես կանոն՝ դրանք ուղեկցվում էին թալանով ու գերեվարությամբ: Առանձնապես ծանր հետևանքներով ավարտվեց 1734 թ. արշավանքը¹⁴: Ի դեպ, լեզգիներն իրենց կողոպտչական արշավանքները շարունակում էին նաև երկրամասում ռուսական տիրապետության հաստատումից մի քանի տասնամյակ անց էլ:

1783 թ. Քարթլ-Կախեթի միացյալ թագավորությունն անցավ Ռուսաստանի հովանավորության ներքո: Հերակլ Բ-ի որդի Գիորգի ԺԲ-ի (1798-1800) մահից հետո 1801 թ. Կախեթը միացավ Ռուսաստանին: Ռուսական իշխանությունները երկրամասը վարչական վերաձևման ենթարկեցին. կազմավորվեցին, այսպես կոչված, Թելավի ու Սղնախի ուեզդները (գավառներ):

Բնակչություն. ԺԸ դարում և հատկապես դարի 2-րդ կեսին Կախեթում բնակություն են հաստատում հայ գաղթականության նոր զանգվածներ: Օգտվելով մեզ անհայտ մի աղբյուրից՝ «Մշակ» թերթի թղթակիցը այդ առթիվ գրում է. «...1745 թականին հայերը սարսափելի աղքատութեան մէջ հաստատվեցան Թելալի և Սղնախի մէջ...»¹⁵: Նրանք Արցախի ու Շաքի-Շիրվան գավառների բնիկ բնակիչներն էին: Հատկապես մեծաթիվ էին

8 Бердзенишвили Н. А., Очерк из истории развития феодальных отношений в Грузии (XIII-XVI вв.), Тбилиси, 1965, с. 94.

9 «Չարարեայ Սարկաազի Պատմագրութիւն», հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 94:

10 Мурадян П. М., Армянская эпиграфика Грузии. Картли и Кахети, Ереван, 1985, с. 156.

11 Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. 1, вып. 2, СПб., 1885, с. 253 (բնագրում՝ «В 1617 году войска Шах-Аббаса вступили в Кахетию, все заливая кровью, обращая в пепел города, грабя монастыри, разбивая иконы и кресты и обращая священные украшения на туалеты своего гарема. Христиане вместо защиты собирались в церкви, калялись и молились, готовясь к смерти, и вместе с церквами были сожигаемы тысячами. Лезгинцы своей стороны, по требованию шаха убивали и пленели тех, кто бежал к ним в горы...»). Ավելի հանգամանորեն տե՛ս **Առաքել Գավրիժեցի**, Գիրք Պատմութեանց (այսուհետև՝ **Առաքել Գավրիժեցի**), աշխատասիրությամբ Լ. Ա. Խանյարյանի, Երևան, 1990, էջ 126-137:

12 «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա (այսուհետև՝ ԺԷԱ), Երևան, 1974, էջ 757:

13 «Մանր ժամանակագրություններ», հ. Ա (այսուհետև՝ ՄԺԱ), Երևան, 1951, էջ 290, ծան. 11:

14 Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., նշվ. աշխ., էջ 172:

15 «Մշակ», 01.03.1888, № 25:

Հյուսիսային Արցախի հայկական հնամենի բնակավայրերը լքած գյուղացիները: Առաջվա պես վրաց թագավորները (տվյալ դեպքում՝ Հերակլ Բ-ն) հովանավորում և հողամասեր էին հատկացնում հայերին:

1770 թ. ապրիլի 5-ի մարդահամարի տվյալների համաձայն Կախեթում բնակվում էին 450 ծուխ հայեր, 7000 ծուխ վրացիներ և 1000 ծուխ մահմեդականներ¹⁶:

1801 թ. կազմված մի փաստաթղթի համաձայն՝ Կախեթում շեն ու ավեր վիճակում կար ընդամենը 324 գյուղ¹⁷: Ուշագրավ է, որ ԺԹ դարի սկզբներին գերմանացի ճանապարհորդ Հակստհաուզենը երկրամասում հաշվել է միայն 115 գյուղ. «Ի Թելաւ և ի Սղնաղ գաւառս Կախեթո քաց յերկուց քաղաքացն համարին 115 գիւղք և տունք ի նոսա 14253. յորս են եկեղեցիք Վրաց՝ 170, Հայոց՝ 12: Են գետոք, որք բաղկանան ի 20 կամ յ30 տանց և են որ ի չորս հարիւրոց»¹⁸: 1837 թ. Կախեթում գործում էր 35 հայոց եկեղեցի (22-ը՝ Թելավի գավառում, 13-ը՝ Սղնախի)¹⁹:

Նոզկոր վարչության տեսանկյունից Թելավ ու Սղնախ գավառների հայ ծխականները ենթակա էին Վրաստանի և Իմերեթի հայոց կոնսիստորիային: Վերջինս իր թեմական առաջնորդներից ամեն տարի ստանում էր բազմատեսակ հաշվետվություններ թեմերի հոգևոր գործերի վերաբերյալ: Դրանք հարուստ տեղեկություններ էին պարունակում ծխերի ու շնչերի թվի, եկեղեցիների վիճակի, դրանց ու քահանաների քանակի, դպրոցների և այլնի մասին:

Առկա նյութերից հետևում է, որ ԺԹ դարի սկզբներին Կախեթի շուրջ 300 վրացաբնակ գյուղերից համարյա յուրաքանչյուր երրորդում բնակվում էին նաև հայեր: Հարկ է նշել, որ դրանցից և ոչ մեկը զուտ հայաբնակ չէր: Կային բնակավայրեր, որտեղ հայերը կազմում էին բնակչության կեսից ավելին (Թելավ ու Սղնախ քաղաքները, Վելիսցիխե, Ուրիաթուրան, Մատան, Քիսթաուր գյուղերը), սակայն, հիմնականում, գյուղերում հայերը փոքր, երբեմն աննշան թիվ էին կազմում:

ԺԹ դարի վերջին Կախեթն ուներ 155.000 բնակիչ (65.000-ը՝ Թելավի գավառում, 90.000-ը՝ Սղնախի): Դրանց հիմնական մասը, այն է՝ 124.000-ը վրացիներ էին, մոտ 6.000-ը շիա և սյունի մահմեդականներ էին, կային քիչ թվով ռուսներ, գերմանացի-

ներ և հրեաներ, իսկ հայերը շուրջ 20.000 էին. «Հայերն այստեղ ընդամենը 20 հազար են, և նրանք գրեթե խավորապես բնակվում են Թելավ և Սղնախ քաղաքներում, որտեղ և կազմում են բնակչության մեծամասնությունը: Նրանք բնակվում են նաև որոշ խոշոր գյուղերում, ինչպես օրինակ Ուրիաթուրան (Թելավի գավառ) և Վելիսցիխե (Սղնախի գավառ): Ուրիշ գյուղերում նրանց կարելի է հանդիպել ծայր աստիճան փոքրաթիվ: Քաղաքներում նրանք զբաղվում են արհեստով և առևտրով, իսկ գյուղերում, ինչպես գյուղացիներն առհասարակ, հողագործությամբ և զինագործությամբ...»²⁰:

Վիճակագրական աղբյուրներից երևում է, որ եթե 1820-ական թվականներից 70-ական թվականների վերջերը կախեթաբնակ հայերի թիվը շարունակաբար աճել է, ապա մինչև 1910-ական թվականները՝ անընդհատ նվազել (ծխերի թիվն աճել է, շնչերինը՝ նվազել): Վերջին երևույթը նկատվում է նաև գործող եկեղեցիների ու ծխական քահանաների թվերում: Փոխարենը, սկսած 1860-ական թվականներից մինչև 1910-ական թվականներն անընդմեջ աճել է հայոց ծխական դպրոցների թիվը: Ուշագրավ է, որ նշված ժամանակահատվածներում երկրամասում զգալիորեն նվազել է հայաբնակ գյուղերի թվաքանակը (տե՛ս աղյուսակը):

Հայ-վրաց հարաբերություններ. հայերի հարաբերությունը երկրի հիմնական ազգաբնակչության հետ դարեր շարունակ եղել է բարիդրացիական: Ինչպես Կախեթի վրաց ողջ գյուղացիությունը, այնպես էլ հայերը, այս կամ այն վրացի ազնվականի ճորտն էր: Ֆեոդալական կարգերն ու ճորտատիրությունը Վրաստանում և մասնավորապես Կախեթում, փաստորեն, պահպանվեց մինչև 1860-ական թվականները: Ռուսաստանի հետ միացումը էապես փոխեց իրերի վիճակը: Երկրի բնակչությանը, վերջապես, հնարավորություն ընձեռվեց համահավասար պայմաններում աշխատելու և, որ գլխավորն էր, տնօրինելու սեփական աշխատանքի պտուղները: Սակայն Ռուսաստանի կազմում գտնվելը Կախեթի բնակչությանը ճորտությունից չազատեց: Գյուղացին կամ քաղաքացին ազնվական-կալվածատիրոջը միայն սահմանված գումարը վճարելով կարող էր թոթափել ճորտությունը: Ճիշտ է, հայտնի են դեպքեր, երբ ազգային կարողունակ գործիչներ սեփական նախաձեռնությամբ վճարել և ճորտությունից ազատել են ազգակիցներին (օրինակ, սրղնախեցի Շահվերդյանցը «...ազգաւեր նախանձու վառեալ ազատեաց յսրկութենէ զներագնեաց զքառասուն տունս յիշխանաց վրաց»:

Արդ, ովքե՞ր կարողացան ազատվել ճորտությունից: Ահա այստեղ է, որ երևան են գալիս երկրամասի բնակչության այս կամ այն ազգային խմբի ո-

16 Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., նշվ. աշխ., էջ 157:

17 «Акты собранные Кавказскою археографическою комиссиею» (այսուհետև՝ АКАК), т. 1, Тифлис, 1866, с. 193.

18 «Բարոն Օգոստոս ֆոն Հակստհաուզենայ ճանապարհորդորին Յայսկոյս Կովկասու այն է ի Հայս և ի Վիրս», Վարդապատ, 1872, էջ 155:

19 «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX-րորդ դարում, մասն Բ, աշխատասիրեց՝ Աղեքսանդր Գ. Երիցեանց, Թիֆլիս, 1895, էջ 256:

20 Кахетия: приложение к справочной книге старожилла. — "Кавказ", Тифлис, 1891, № 3, с. 11.

Հայաբնակ գյուղերի թվաքանակը Կախետում (1822-1909).

1822 թ. ²¹	տուն	ար.	իգ.	միասին	գյուղերի թիվը	եկդ.	քին.
Թելավի գավառ	990	3386	2947	6333	52	22	13
Սղնախի գավառ	1015	3495	2934	6429	37	35	22
Ընդամենը՝	2005	6881	5881	12762	89	57	35
1837 թ.²²							
Թելավի գավառ						22	13
Սղնախի գավառ						13	22
Ընդամենը՝							
1839 թ.²³							
Թելավի գավառ				7283			
Սղնախի գավառ				8041			
Ընդամենը՝				15324			
1857 թ.²⁴							
Թելավի գավառ				6075			
Սղնախի գավառ				8630			
Ընդամենը՝				14705			
1867 թ.²⁵							
Թելավի գավառ	1280	4213	3780	7993	23		
Սղնախի գավառ	1540	5654	5053	10707	20		
Ընդամենը՝	2820	9867	8833	18700	43		
1870 թ.²⁶							
Թելավի գավառ				8102			
Սղնախի գավառ				11770			
Ընդամենը՝				19872			
1875 թ.²⁷							
Թելավի գավառ				8613	24	15	
Սղնախի գավառ				13687	16	17	
Ընդամենը՝				22300	40	32	
1876 թ.²⁸							
Թելավի գավառ				8905	25		
Սղնախի գավառ				13832	16		
Ընդամենը՝				22737	41		
1883 թ.²⁹							
Թելավի գավառ		6223	5648	11871		22	
Սղնախի գավառ		5192	4915	10107		12	
Ընդամենը՝		11415	10563	21978		34	
1909 թ.³⁰							
Թելավի գավառ	1637	4628	4194	8832	23	15	12
Սղնախի գավառ	1549	4361	3892	8253	29	17	13
Ընդամենը՝	3186	8989	8086	17085	52	32	25

21 Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 332, ց. 1, գ. 866, թ. 1: Տե՛ս նաև **Շնիշէ ա. ք. Գեղամյան**, Պատմական քաղաածներ.– «Հովիտ», 1910, № 16, էջ 249:

22 «Ամենայն Հայոց կաթողիկոսիւնը եւ Կովկասի Հայք XIX-րորդ դարում, մասն Բ, աշխատասիրեց՝ **Աղէքսանդր Գ. Շրիցեանց**, Թիֆլիս, 1895, էջ 256:

23 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 8:

24 Նույն տեղում, գ. 3830, թ. 204-205:

25 Նույն տեղում, գ. 3850:

26 Նույն տեղում, գ. 3857, թ. 98-99:

27 Նույն տեղում, գ. 3864, թ. 49-50:

28 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6775, թ. 137-138:

29 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 135-136:

30 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 2-3:

րակական հատկանիշներն ու տարբերությունները: Նրանց աշխատասեր ու գործունյա մասը հարստանում էր, վճարում ճորտությունից ազատվելու գինը և շարունակում բարգավաճել, իսկ անգործներն ու անբանները մնում էին ճորտ: Այս երևույթն այնքան ակնառու ու ցայտուն էր, որ իսկույն նկատում էին նաև երկրամաս ոտք դրած օտարագրիները: Նրանցից մեկը՝ գերմանացի հետազոտող Գարլա Մերենան, 1881 թ. գրել է. «...Վրացիք բնալին հարուստ չեն. գործէ բան չեն հասկընար. յառևտուրս՝ իրենց բնութեան մէջ եղող անզգայութեամբ և անփութութեամբ կը վարուին և ունեցած բերքերէն օ-



գուտ քաղել չեն գիտեր, որոց մեծ մասը Հայոց ձեռքը կանցնի, որ փոխատու են դրամոյ»³¹:

1860-ական թվականներից տարեցտարի ծանրանում էր նաև վրաց ազնվական-իշխանների վիճակը: Ապրուստի միջոցներ հայթայթելու համար վերջիններս ստիպված սկսել էին կամ վաճառել իրենց ունեցվածքը, մասնավորապես՝ կալվածները, կամ դրանք գրավ դնել, կամ էլ տոկոսով գումար խնդրել: Փաստորեն, երեկվա հպարտ ու հարուստ ճորտատերը ճարը կտրած դիմում էր հայ հարուստին, որը ոչ վաղ անցյալում իր ողորմելի ճորտն էր եղել, և դրամ էր խնդրում, իսկ հայը «...խրոխտ իր դրամագիտական առաելությունը, իր բռնադատ յաճախորդին՝ շինական ազնուականին արհամարհոտ ատելություն վրեժը կը հանէ, որչափ կարելի է ծանրագին վաճառելով նմա իր ծառայությունը...»³²: Իսկ թե որքան հմուտ և ձեռներեց էին հայերը հատկապես առևտրի ոլորտում, երևում է թեկուզ միայն Ուրիաթուբան գյուղի օրինակով, երբ հայերն այդ ասպարեզից դուրս էին մղել անգամ տեղի հրեաներին. «...տեղը վաճառականութեան յարմար երևելուն համար՝ հայկայ որդիքն եկած են, և իսրայելի որդոց ինչուան ցյետինն ալ վնասած են անտի»³³:

1970-ական թվականների կեսերից հայ-վրաց հարաբերությունները Կախեթում (նաև Քարթլիում և այլուր) սկսել էին սրվել: Հարցն այն է, որ վրացի անվճարունակ ազնվականը պարտքի դիմաց շարունակ

կորցնում էր իր կալվածները, իսկ պարտքատեր հայն էլ չէր զբաղում ստորացնել իր երբեմնի անողորք ու կեղեքիչ տիրոջը: Գործը հասավ այնտեղ, որ ամենուր «Վրացին կը նկատէ զՀայն իբրև անյագաբար արիւն ծծող...»³⁴: Արդեն սովորական էր դատարանի միջոցով խնդիրների լուծումը, քանի որ հայ դրամատերերը չէին կարող հաշտվել փոխ տրված գումարների կորստյան հետ. «...ինչպես ամեն տեղ՝ կարօտ գեղացուց ստակ փոխ տուած են, և քստակնին առած չըլլալուն համար, տեղոյս խաղաղութեան դատաւորեն իրենց պարտապանաց երկիրները իրենց վրայ դարձուցած են: ...դատարանիս լուծումն մեծապէս շարժած է երկրին կալուածատէարքը, որոնք գրեթէ ամենքն հայկական ցեղին յափշտակիչ համագրաւորաց պարտուց տակ ինկած են...»³⁵:

Հարաբերությունների մման անխուսափելի ընթացքը բացասաբար անդրադարձավ երկու ժողովուրդների փոխհարաբերությունների վրա: Դրությունն այն աստիճան էր սրվել, որ, օրինակ, 1884 թ. վրաց իշխանի կողմից մի հայի սպանությունը քիչ էր մնացել, որ վերածվեր հայ-վրացական ընդհարման. «Վերջերս սղմախցի մի հայ կառնապանի սպանել էր իշխան Անդրոնիկովը: Սղմախցի հայերը, չգիտես ինչու, դրանում տեսել էին ոտնձգություն բոլոր հայերի կյանքի ու անվտանգության դեմ, և ուրոշ անմիտներ քաղաքային հրապարակում վրացիներին հրավիրում էին բացահայտ կռվի...»³⁶:

34 Նույն տեղում, էջ 43:

35 Նույն տեղում, էջ 150:

36 **Сослани Давид**, Путевые заметки.— “Новое обозрение”, 1884, № 113, с. 3.

31 **Գարլա Մերեմա**, նշվ. հոդվ., էջ 43:

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում, էջ 151:



Ի դարի սկզբներին արդեն տարեցտարի հզորացող հայկական կապիտալը ցավոտ ու վտանգավոր խնդիր էր նկատվել վրաց մտավորականության և հատկապես քաղաքագետների կողմից: Վերջիններս սկսեցին «չարանախանձ ու թունոտ» նյութեր տարածել և հրապարակել՝ դրանով իսկ ակամա փաստելով, որ իրենք արժանավոր ու հարազատ ժառանգորդն էին ճորտերի քրտինքով ճոխացած անբան ազնվականների. «...վրացիների մի ստուար մասը չի ուզում հաշտուել այն անյաղթելի դրութեան հետ, թե ներկայ ժամանակում տնտեսական խրնդիրներում ոյժը պատկանում է այն դասակարգին, որը տնտեսապես աւելի ընդունակ և աւելի աշխատասէր է»³⁷: Ծանր կացության մեջ հայտնված վրաց կալվածատեր-ազնվականությունն ու վերջիններիս շահերի պաշտպան վրաց քաղաքագետներն արդեն հետևյալ հարցերն էին առաջադրել. «Ինչո՞ւ առևտուրը հայերի ձեռքին է, ինչո՞ւ կալածների ստուար մասը նրանց է պատկանում, ինչո՞ւ վերջապես քաղաքային խորհրդի անդամները մեծ մասամբ հայեր են: Ահա այս մանկական հարցերից կազմելով մի խոշոր հայկա-վրացական հարց, վրացի ազգայնամուլները բարձրացրել են մի դրօշակ, որի վրայ գրուած է տկար մատներով՝ «Պետք է հայերին հեռացնել ասպարեզից»³⁸:

Այո՛, ժամանակները փոխվել էին: Այլևս Գավիթ Շինարարի կամ Հերակլ Բ-ի ժամանակները չէին, երբ առևտրից ու արհեստներից հետադեմ Վրաս-

տանը ծաղկեցնելու նպատակով զանազան արտոնությունների միջոցով հայերը Վրաստան էին փոխադրվում կամ էլ բռնազաղթեցվում էին: Հասել էր պահը, երբ հայերը պիտի վտարվեին Վրաստանից, որովհետև շատ բան տալով այդ երկրին՝ իրենք էլ ձեռքբերումներ ունեին: Ձեռքբերումներ, որոնք Վրաստանի պարագայում զգալի և անհանդուրժելի էին...

Միապետության տապալումով (1917 թ.) և Վրաստանի Հանրապետության հռչակումով (1918 թ., մայիսի 26) երկրի հայ բնակչության առջև բազմաթիվ խնդիրներ ծառայեցին: Դրանք առավել սուր բնույթ ստացան հայ-վրացական պատերազմի (13-31-ը դեկտեմբերի, 1918 թ.) ընթացքում և դրանից հետո: Կախեթի հայերը, որ հեռու էին գտնվում թե՛ մարտական գործողություններից և թե՛ նրան հարող շրջաններից, զերծ չմնացին դրանից: Ստեղծված կացությունը լիարժեք պատկերացնելու համար տեղին ենք համարում ներկայացնել Գուրջաանի ծխատեր քահանա Հարություն Ազնավուրյանի՝ 1919 թ. փետրվարի 8-ին գրած հետևյալ նամակն ամբողջությամբ. «Ես գալիս եմ Գուրջաանի շրջանից, մինչև օրս հնարատրութիւն չկար հայերի համար դէպի Թիֆլիս գալու: Պետք է ասել, որ դեռ նույնիսկ հայ վրացական պատերազմից առաջ էլ սուկալի վատ վերաբերմունք ունէին մեզ շրջապատող բոլոր վրացիները: Ինձ ուղարկել էր այնտեղ հոգևոր իշխանութիւնը հովուելու այնտեղի հայ համայնքին, բայց իմ այնտեղ երևալս բաւական էր, որ մի ընդհանուր թշնամանք արտայայտեր դէպի ինձ: Վատ էին վերաբերում ոչ թէ միայն տեղական աղմի-

37 «Լուսնայ», 1902, էջ 267:

38 Նույն տեղում:

նիստրացիան, այլև բոլոր խաւերն ու դասակարգերը առանց բացառութեան՝ գիւղացի, քաղաքացի, տղամարդ, կին, թէ նոյնիսկ երեխաներ: Մի հմուտ ձեռք լարել էր այդ բոլորին հայերի դէմ: Ինձ շարունակ յանդիմանանքներ էին տալիս, թէ ինչո՞ւ եմ եկել այստեղ, ի՞նչ գործ ունեմ և երբ ես նրանց ասում էի, որ ինձ ուղարկել է հոգևոր իշխանութիւնը հովուելու հայ համայնքին՝ ինձ պատասխանում էին. – այստեղ հայ համայնք չկայ: Նրանք շարունակ հայիւոյում էին հայերին ու յայտնում, որ հայերը պէտք է հեռանան այստեղից, նրանք այստեղ ոչ մի հարստութիւն ու կալուածք չպէտք է ունենան: Երբ որ պատերազմական գործողութիւններ սկսեցին՝ բառիս ամենախկական մտքով կացութիւնը անտանելի դարձաւ: Ինձ հասցրած անպատուութիւնների համար ես մի անգամ դիմեցի տեղական կոմիսարին. ոչ մի ուշադրութեան չարժանացան իմ գանգատս ու նրանից յետոյ այլևս ինքնըստիմքեան անելորդ դարձաւ որևէ իշխանութեան դիմելը, որոնք նոյնիսկ քաջալերում էին մեղաւորներին իրենց անտարբերութեամբ (?): Մի անգամ ինձ կանչեցին հիւանդ Մարիամ Հարութիւնեանին հաղորդելու, երբ ես հաղորդելուց յետոյ դուրս եկայ հիւանդի տանից՝ ինձ սկսեցին հետևել երեք զինուած վրացիներ: Նրանք սկսեցին հետևել ինձ գիւղի միջում: Մի քանի քայլ անելուց յետոյ սկսեցին հայիւոյել ինձ իմ կրօնս, ես նրանց չպատասխանեցի, նրանք ատելի սկսեցին հայիւոյել ու հրամայել, որ կանգնեմ: Նրանցից մէկը ընկերներին դիմեց՝ «Եկեք սպանենք, սրանից էլ լաւ յարմար առիթ չի լինի», ես արագացրի քայլերս, մէկը սկսեց վազել հետևիցս. ես ազատեցի շնորհիւ միմիայն այն բանի, որ բաւական տարածութիւն կար ու ես կարողացայ ծածկել նրանց աչքից: Երեքից մէկը, որ ճանաչեցի՝ Գիգա Իօսեփովիչ Չարտիաշիլիւն էր: Վախենալով այդ անձնատրութեանց վրիժառութիւնից՝ ես ոչ ոքի չդիմեցի:

Մաստիկ պրովոկացիա էին տարածում վրաց մասսայի մէջ ու ամեն կերպ աշխատում հայկական կոտորած առաջ բերելու: Գուրջաանի բազարը, ուր խմբւում էին շարունակ շրջակայ գիւղերից ահագին քանակութեամբ զինուած ամբոխ՝ մենք լսում էինք, թէ ինչպէս նրանց խոսակցութիւնը պտտում էր միմիայն հայերին կոտորելու ու թալանելու ձևերի մասին: Իմ որդի Սուրբն Ազնաւորեանին՝ 9 տարեկան, խաղալու ժամանակ բռնել էին մի խումբ երիտասարդներ ու տարել ինչ որ տեղ: Նրանք թույլ 5-6 հոգի ուզեցել են կուրացնել որդուս, ասելով, որ հայերը վրացիների աչքերը հանել են, մենք էլ պէտք է բռնը հանենք: Երեխան պատմում է, որ ինչպէս իրեն բռնել էին ու վառած լուցքին մօտեցրել աչքերին, որ այրելով կուրացնեն: Երեխայի լացից ու աղաղակից բաց են թողնում: Երեխան եկաւ վառած աչքով: Աչքի շուրջը կրակից այրել էր այնպէս, որ մինչև օրս էլ դեռ վերքերը մնում են ու բժշկւում:

Պատերազմի ժամանակ կարմիր գաւառիականները իրանց շատ ազատ էին զգում բոլոր ցանկացած գործողութիւնների մէջ: Մտնում էին, ազատ, հայերի տները և տանում ինչ ուզում էին՝ հաց, գինի, ոչխար և այլ ուտեստեղեններ: Ստախկո և Ալեքսանդր Առաքելեանները պատմեցին ինձ, որ գաւառիականները մեր տանից ամեն բան տանելուց յետոյ, երբ ոչխար չգտան մեզ մօտ, նրանք հարևան վրացուց վերցնում են մի ոչխար ու գնահատելով 300 ռուբլի հրամայում, որ մենք հայերս վճարենք: Նրանք էլ վճարում են: Ընդհանուր առմամբ ամբողջ այդ շրջանի հայութիւնը ահաբեկման տակ է: Շարունակ խուզարկութիւնների ու այդ միջոցին թալանի ենթարկելը հենց պաշտոնական իշխանութեանց կողմից սովորական երևույթ է: Փակել ունին բոլոր հայ վաճառականների ու արհեստատրոնների խանութներն ու արհեստանոցները, յորդորում են ամբոխի բոյկոտի ենթարկել: Յորդորողների տեղը ստանձնել էին տեղական հասկացող համարող անձինք, ինչպէսիքն են՝ քահանան և տեղական ականաւոր անձինք: Թէ պատերազմի ընթացքում և թէ նրա դադարելուց յետոյ պօստից այլևս ինձ չէին տալիս թէ իմ հասցեով ուղարկուող «Մշակը» և թէ միս թղթակցութիւնները ու այս բոլորի դէմ և ոչ մի միջոց ձեռք չի առնում կառավարութեան կողմից՝ հանգստացնելու վրացական մասսաներին, եթէ չասենք որ ընդհակառակը նա ատելի սրում է այդ սուկայի վերաբերմունքը դէպի տեղական հայերը»³⁹:

Մայրենիի վիճակը. կախութեամբ հայերը դարձրել շարունակ ապրելով վրացական միջավայրում, ԺԹ դարի կեսերից արդեն մեծ մասամբ վիրախոս էին դարձել: Մայրենի լեզվի իմացությունը սահմանափակվել էր միայն քաղաքային հայերի մի մասի շրջանում: Չնայած ԺԹ դարի 2-րդ կեսից հայաշատ մի շարք բնակավայրերում բացվեցին ազգային դպրոցներ, բայց դրանք, փաստորեն, դրոյթումը չփրկեցին, մանավանդ եթե նկատի ունենանք դրանցում աշակերտների ոչ մեծ թվաքանակն ու դրանց մի մասի՝ տարբեր պատճառներով հաճախակի, տարիներով փակ մնալը: Դա վերաբերում էր հատկապէս գյուղական բնակավայրերին: 1888 թ. «Մշակ»-ի թղթակիցը վկայել է. «Թէլախի գործակալութեան բազմահայ և հարուստ գիւղերը մնում են առանց ծխական ուսումնարանների, եռանդուն գործիչների բացակայութեան պատճառով: Յիշենք միայն Կվարել, Ուրիաթուբան, Սանիօրի և Մատան գիւղերը, որոնք ոչ թէ միայն մէկ այլ մինչև անգամ երկու դպրոց կարող էին պահել: Անհերքելի է եկեղեցական դպրոցների կարևորութիւնը այդ գիւղերի համար»⁴⁰:

Կախեթի վիրախոս հայերի վերաբերյալ ուշագրավ նյութեր են հավաքել Մ. Վ. Մաշաբեյին և Ա. Մ.

39 ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 136, ք. 3-4:

40 «Մշակ», 15.10.1888, № 117:

Արդությանը: Դրանց հիման վրա հետաքրքիր հետազոտություն է կատարել Ն. Աբեյանը⁴¹: Ի մի բերելով նախորդ հեղինակների ուսումնասիրությունները՝ նա հանգել է հետևյալ եզրակացության. «Հայերը գրեթե բոլորովին ձուլվել են վրացիների հետ: Թեպետ նոքա ունին իրանց եկեղեցիները, բայց շատերը նոցանից չեն խօսում մայրենի լեզուով: Մինչդեռ ազգաբնակչությունը (բնիկները) չարեկամաբար է վերաբերվում դեպի Սղնախի հայ առևտրականները, նա բոլորովին չէ ջոկում իր համագիտացի հայերին ընդհանուր բազմությունից: Ըստ արտաքին տեսքի, խոսակցութեան, սովորութեանց և հակումների, հայ գիտացուն շատ դժուար է ջոկել վրացի գիտացուց»⁴²:

Ժամանակի ընթացքում դրական տեղաշարժեր և նկատելի են եղել: Մասնավորապես «Արձագանք»-ի թղթակիցը 1896 թ. նշել է. «...երկար տարիների ընթացքում Կախեթիայի հայերի մեջ կրօնափոխութեան դեպք բնաւ պատահած չէ: Նույնիսկ հայուհի՝ վրացուն տալու կամ հայն վրացուհի առնելու շատ սակաւաթիւ դեպքեր կան, իսկ ներկայումս այդ էլ չէ պատահում շնորհիւ ինքնաճանաչութեան, որի նշոյլները մատաղ սերնդի մեջ մենք նկատում ենք անասհման սիրով...»⁴³:

1910-ական թվականներին Կախեթում մայրենի լեզուն գործածող հայերի թիվն էլ ավելի էր կրճատվել, բայց դրությունը չէր համարվում անհույս. նույն թվականներին առավել բազմամարդ վրացախոս հայերի գյուղերում բացվել էին 6-7 ազգային նոր դպրոցներ: Հայոց դպրոցները շարունակում էին գոյատևել նաև քաղաքական փոթորկալի այնպիսի մի ժամանակաշրջանում, ինչպիսին 1919 թվականն էր, բայց խորհրդային կարգերի հաստատման սկզբնական շրջանում՝ 1920-ական թվականների վերջերից մինչև 30-ականների կեսերը, մեկը մյուսի հետևից փակվեցին հայկական բոլոր դպրոցները (նշենք, որ վերջին իննամյա դպրոցը Թելավում փակվել է 1937 թ.): Հետագա տասնամյակներին ու առ այսօր երկրամասի և ոչ մի բնակավայրում, ուր բնակվում են վրացախոս հայեր, հայկական դպրոց չի գործել:

Հայտնի է, որ հայկական ցանկացած գաղթավայր, որտեղ դադարել են գործել հայոց եկեղեցին ու դպրոցը, դատապարտվել է ուժացման: Բացառություն չեն կազմում նաև կախեթաբնակ հայերը: Այո, ցավալիորեն, մենք ժամանակակիցն ու ակամատեսն ենք Հայաստանին այդքան մոտ գտնվող մեր բազմահազար հայրենակիցների՝ մեկ այլ ազգի հետ ձուլվելու գործընթացին:

Հայկական վրացերեն պարբերականի խնդիրը.

Օտար հողի վրա ծնունդ առած ցանկացած հայկական գաղթավայր, իր կամքից անկախ, ժամանակի

ընթացքում դատապարտված է միջավայրի կլանիչ ազդեցությանը գոհաբերելու ազգային ինքնության առաջնային հատկանիշը՝ մայրենի լեզուն:

Հայրենիքից արտագաղթած հայերը բոլոր ժամանակներում և ամենուրեք աստիճանաբար վերածվել և շարունակում են վերածվել օտարախոսների: Այս առումով բացառություն չեն կազմում նաև Վրաստանում հաստատված հայերը, սակայն, ի տարբերություն, օրինակ՝ ռուսախոս, անգլիախոս և կամ ֆրանսախոս հայերի, որոնք մինչ լիակատար ուժացումն օգտվելով տերությունների չեզոք, իսկ երբեմն էլ նույնիսկ նպաստավոր կեցվածքից, հայ կյանքին ինչ-որ չափով հաղորդակից լինելու նպատակով կարողացել էին (և տեղ-տեղ դեռևս էլ կարողանում են) լույս ընծայել իրենց համար մատչելի դարձած տարբեր օտար լեզուներով զանազան պարբերականներ: Մինչդեռ վրացախոսներին վրացական իշխանությունների որդեգրած մոլի ազգայնական և հակահայ քաղաքականության պատճառով նույնն անել այդպես էլ երբևիցե չի հաջողվել: Խնդիր, որի լուծման պարագայում վրացախոս հայերը զգալի չափով կկարողանային կապված մնալ և հաղորդակից լինել հարազատ ժողովրդի ընդհանուր հոգսերին ու իղձերին:

Իրողությունը, որ հակառակ մեծ կարիքին՝ վրացախոս հայերի համար վրացերենով երբևիցե հայկական գոնե մեկ անուն պարբերական լույս չի ընծայվել, ցայտուն կերպով ներկայացնում է ազգային-պետական խնդիրների վերաբերմամբ մեր՝ այլևս ցավալիորեն կարծրացած ու թերևս ավանդական անփույթ ու անխոհեմ կեցվածքը:

Ահա թե ինչպես է կարևորվել վրացերեն հայկական պարբերականի գոյությունը 1916 թ., որտեղ վեր հանված խնդիրներն այնպես արդիական են թվում նաև մեր օրերում. «Գիտեք, մենք հիմք ունինք բողոքելու հայ մտատրականութեան և մանուալնո ինտելիգենտների դեմ, որոնք դուրս են եկել վրացախոս հայերի շրջաններից: Նրանք այս մեծ և նշանակալից օրերին մեզ թողել են բոլորովին անուշադիր: Այն ժամանակ, երբ հայ թերթերը ծանօթացնում են իրենց ընթերցողներին հայկական կեանքի անց ու դարձի հետ, երբ նրանք ամբողջ հայութեան առաջ, ինչպես մի ամբիոնից, խօսում են ազգային մեծ խնդիրների մասին, վրացախոս հայերս ենք միայն, որ մատնուած ենք անուշադրութեան: Հատ ու կտոր լուրերը, բերանից բերան անցած, այլանդակւած «նորութիւնները» մեզ բաւարարել չեն կարող: Մենք ևս, իբրև մի անբաժան մասն հայութեան ուզում ենք, որ մեզ հետ ևս խօսեն, մեզ էլ հասկացնեն այն ամենը, ինչով այսօր ապրում է ողջ հայութիւնը... մենք ևս ցանկանում ենք գիտենալ, թե ի՞նչ է արւել, կամ ի՞նչ է արւում մեր դատի շուրջը... Մենք ևս տենչում ենք իմանալ, թե ի՞նչ է կատարւում արեան և կրակի երկրում... Չլինի թե կարծեք, որ

41 Աբեյան Ն., Արքունական հայ գիտացին Անդրկովկասում. – «Արձագանք», 1887, № 44, էջ 693-695:

42 Նույն տեղում:

43 «Արձագանք», 1896, № 90, էջ 3:

վրացախոսներս չե՛նք ապրում հայի կեանքով: Մխալում եք, մենք ևս նոյնպիսի հայեր ենք, ինչպիսին դուք... Մենք ևս պարծենում ենք հայի անցեալով, ներկայով և յուսալի ապագայով: Մենք այն հայերից չենք, որ մեզ մտաբերենք «բրիտավեան» օրերին: Անցեք Թելաւ, Սղնախ, Չաքաթալա, Լագոդախ, Գորի և կը տեսնէք, թէ որքան ճիշտ են ասածներս: Ի հարկէ բացառութիւնների մասին խօսք անգամ չէ կարող լինել:

Կասեք, ի հարկէ, որ մեղաւորը մենք ենք, որ հայերէն չգիտենք, որ չենք սովորել մեր մայրենի լեզուն: Անկասկած, մենք ևս զգում ենք մեր մեղքը, և այդ «մեղքի» համար էլ բաւականի պատժել ենք հոգեպէս: Մենք չենք ժխտում այդ, սակայն բաւական է մի փոքր ուսումնասիրել մեր անցեալն ու ներկան, մեր բնակավայրի ցեղագրական և այլ պայմանները, համոզելու համար, որ այլ կերպ լինել չէր կարող: Մենք այդ «մեղքը» հետզհետէ քաւել ենք և քաւում ենք: Մենք մեր երեխաներին հայ դպրոցներ ենք ուղարկում, հասկացնում ենք նրանց մայրենի լեզուի կարևորութիւնը և նրանք արդէն նման չեն իրենց հայրերին: Մենք ծիծաղում ենք մեզ «վրացի-գրիգորեան» անւանողների գառանցանքների վրայ: Մենք հայ ենք այժմ աւելի, քան երբևիցէ: Մենք միայն մի բան կխնդրէինք, աչքաթող չանել մեր գնացող սերնդի հոգեկան պահանջները: Չեռնամուխ եղեք մի վրացերէն թերթի հրատարակման գործին, որը նւիրած լինէր հայկական կեանքին: Թէկուզ մի շաբաթաթերթի միջոցով ծանօթացրէք մեզ այն ամենի հետ, ինչ մեզ հետաքրքրում է: Այդ նպատակի համար կգտնուին սպասածից էլ աւելի ոյժեր, միայն թէ գործին սկիզբ դրի: Վրացերէն լեզուով մի հայ թերթը բացի նրանից, որ մեր աչքերը կբանայ, այլ և մեր հարևաններին, վրացիներին ևս կը ծանօթացնէ մեր իրական կեանքի հետ, տալով նրա հարազատ պատկերը: Նրանք ևս աւելի մօտիկ կը ծանօթանան մեզ հետ և համոզւած են, որ այդպիսի թերթի միջոցով շատ և շատ հարցեր կաջողի պարզաբանել և լուծել: Հայ-վրացական փոխյարաբերութեան համար նա կը լինի մի միջնորդ, որը շատ բան կը պարզի մեզ երկուսիս համար: Նա իր արդար բողոքը կբարձրացնէ թէ՛ մեր և թէ՛ հարևանների սխալների դէմ»⁴⁴:

Մայիտակ ջարդը. պարզվում է, որ երբ մի ժողովուրդ միջոցներ ձեռք չի առնում ու ջանք չի թափում տեր կանգնելու իր կորսվող հատվածին, ապա հայտնվում են ուժեր, որոնք պատմությունը խեղաթյուրելով՝ աշխատում են տեր դառնալ վերջիններիս: Այս առումով անդրադառնանք վերջին տարիներին վրաց որոշ հեղինակների հրապարակած այն հոդվածներին, որտեղ արծարծվում է, այսպես

կոչված, «վրաց գրիգորյանների» խնդիրը⁴⁵: Հողվածագիրները զարգացնում են այն միտքը, թե Վրաստանի վրացախոս հայերը հայեր չեն, այլ միայն Ի դարում հայ քարոզիչ (միսիոներ) քահանաների ձեռքով, որին՝ խաբելով, որին՝ կաշառելով, երբեմն համոզելով կամ նույնիսկ բռնությամբ, հայ եկեղեցու ծեսով վերամկրտված վրացիներ են: Ըստ որում, այդ հեղինակները պնդում են, թե հայ մկրտված վրացիները, բարեբախտաբար, չեն կորցրել իրենց մայրենի լեզուն (վրացերենը): Իբրև իրենց պնդումների ապացույց, վրաց հեղինակները նախ և առաջ վկայակոչում են այդ բնակիչների ազգանունների ծագումով վրացական լինելը: Օրինակ՝ Լվարսաբյան, Գլախյան և այլն: Զանի որ Լվարսաբը, Գլախյան վրացական անուններ են, ուստի դրանք կրողը հայ չէ, այլ հայ եկեղեցու ծեսով մկրտված վրացի, այլ խոսքով՝ հայացած վրացի («գրիգորյանական վրացի»): Բայց չէ՞ որ վրացական միջավայրում դարերով ապրած հայերն իրենց գավակներին կարող էին և տալիս էին նաև վրացական անուններ, օրինակ՝ Լվարսաբ, Գլախյան, Ախալմուսուլ, Նասդիդ, Նինո, Գլախա, Ղադո, Մատի, Իվանե, Դեմետրե և այլն: Պարզ է, որ, օրինակ, եթե Գլախյանի որդին Լվարսաբն էր, իսկ սրա որդին էլ՝ Նասդիդը, ապա վերջինս Նասդիդ Լվարսաբյան Գլախյանցն էր և ուրեմն վրացի՞:

Նմանօրինակ «ապացույցներով» հարցերի ավելի արագ լուծման ձև, թերևս, հնարավոր չէ գտնել: Բայց դա դեռ ամենը չէ. ավելի «հայրենասեր» հողվածագիրները «հայացած վրացիներին» կոչ են անում փոխել կամ գոնե ուղղել իրենց ազգանունները: Օրինակ՝ Տերտերյանները կամ Տերտերովները առնվազն Տերտերաշվիլի պետք է լինեն (թեև ցանկալի է այն փոխել միանգամայն այլ, զուտ վրացական ազգանունով), Լվարսաբովները (սկզբում՝ Լվարսաբյան) կարող են բավարարվել Լվարսաբիշվիլի դառնալով և այլն:

Այս ամենի վրա, թերևս, կարելի էր ուշադրություն չդարձնել, բայց դրանց վրա հնարավոր է, որ ուշադրություն դարձնի իր ազգի պատմությանը մեծ մասամբ անտեղյակ կախեթցի վրացախոս հայը, և նրանց որոշ մասը ապակողմնորոշվելով կարող է «ուղղել» դեռևս հայկական կամ միայն վերջավորությունը հայեցի պահպանած իր ազգանունը, որով իսպառ ձուլվելու ճանապարհին հերթական (զուցե և վերջին) քայլը կատարած կլինի: «Գրիգոր-

44 **Թումանյան Ա.**, Վրացախոս հայի տրտումը, «Հորիզոն», 1916, N 82 (16 ապրիլ):

45 Այդ մասին տե՛ս հետևյալ վրացերեն հոդվածները. **Թափշիվիլի Ռոզանդ**, Վրացիների էթնիկական պատմությունից. – «Լիտերատուրուլի Սաքաթվելո» («Գրական Վրաստան»), 22.07.1988: **Կորանաշվիլի**, Մինչ տազնապ բարձրացնելը. – «Թրիլիսի», 22.06.1990: **Նասդիդան Է., Ընդհանրաշվիլի Ն.**, «Ախալգաղդա Իվերիելի», 26.06.1990: **Աբուլաճե Ա.**, Կրկին վրաց գրիգորյանականների մասին. – «Մախալխո գանաթեբա» («Ժողովրդական լուսավորություն»), 2.08.1990: **Մախալխոյան Գիգա**, Ինչո՞ւ վրացիների մի մասը դարձավ լուսավորչական. – «Ախալի Քարթուլի գագեթի», 1998, № 110, էջ 7:

յանացած» վրացիների հոգսերով տառապող վրաց «հայրենասերներին» արժեր հիշեցնել, որ հայտնի նկարիչ, ծնունդով սղնախցի Գևորգ Բաշինջաղյանը, 1937-53 թթ. Հայաստանի կենտկոմի առաջին քարտուղար, ծնունդով թելավեցի Գրիգոր Արտեմի Հարությունյանը, բազմաթիվ ազգային դպրոցների բացման նախաձեռնողներն ու նվիրատուները, Սըղնախի ու Թելավի քաղաքագլուխները, Սղնախի հայոց թատրոնի հովանավորներն ու դերասանները և այլք, որոնք ամբողջ էությանը ծառայել են իրենց ժողովրդին, վրացախոս, բայց ազգությամբ հայ էին:

Այսօր, այո, Կախեթի հոծ հայությունը գտնվում է սպիտակ ջարդի ավարտափուլում: Հայ ժողովրդի մի մասը, իբրև ազգային մասնիկ, գերեզմանվում է մեր աչքի առաջ: Տասնյակ հազար ստեղծարար մարդիկ ազգային պատկանելության իմաստով անկեանում են ճիշտ այն հողակտորի վրա, որը շենացրել ու ծաղկեցրել են սերնդեսերունդ ներդրած անհուն նվիրումի, ջանք ու եռանդի շնորհիվ:

Այսօրինակ կորուստներն անխուսափելի են այնքան ժամանակ, քանի դեռ Հայրենիքն իր պանդուխտ զավակներին ազգային ավյուն ներարկելու հոգսը իբրև սրբազան պարտք, չի ընկալել:

Վարչական բաժանում. Խորհրդային կարգերի հաստատմամբ պատմական Կախեթի արևելյան մասը, մասնավորապես Բելոկան-Ջաքաթալա-Կախ հատվածը կամայաբար կցվեց Ադրբեջանի Հանրապետությանը: Խորհրդային Վրաստանի տարածքում մնացած Կախեթի հիմնական մասում վարչատարածքային բաժանումով ստեղծվեց 8 շրջաններ: 1988 թ. այդ շրջանների վարչական պատկերը հետևյալն էր⁴⁶.

շրջաններ	տարածքը կմ ²	գյուղերի թիվը	քաղաքների, ավանների թիվը
Ախմետա	2207	60	1
Գուրջաան	846,2	29	1
Թելավ	1094,5	29	1
Լագոդեխ	890,2	63	1
Դեդոփլիս-Շղարո	2529,2	16	2
Դվարել	1000,8	16	1
Մագարեջո	1491,3	43	1
Սղնախ	1251,2	22	2
<i>ընդամենը՝</i>	11310,4	278	10

Սույն աշխատության մեջ Կախեթի հայ գաղթավայրերը ներկայացված են ըստ վարչական այս շրջանների: Թե՛ շրջանները և թե՛ դրանցում ընդգրկված բնակավայրերը տրված են այբբենական կարգով:

46 “Грузинская ССР, Административно-территориальное деление” Тбилиси, 1988.

ԱԽՄԵՏԱՅԻ ՇՐՋԱՆ

Գտնվում է Կախեթի հյուսիսային մասում: Նախկինում կազմում էր Թելավի գավառի մի մասը: Սահմանակից է Վրաստանի Հանրապետության Դուշեթի, Թելավի, Թխանթի, Սազարեջոյի շրջաններին և Ռուսաստանի Դաշնությանը: Շրջկենտրոնը Ախմետա քաղաքն է: Տարբեր ժամանակներում տարածքի 15 բնակավայրերում բնիկ վրաց ազգաբնակչության հետ բնակվել են նաև հայեր: Վերջիններս մի քանի գյուղերում, ուր համեմատաբար մեծաթիվ էին, կառուցեցին եկեղեցիներ, իսկ Ի դարի 10-ականներին Մատան գյուղում հիմնեցին նաև ազգային դպրոց:

ԱԼԱՎԵՐԴԻ		1863 ⁸	12	10	22
Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 12 կմ արևելք, Ալազան գետի աջ կողմում:		1864 ⁹	12	9	21
Պատմություն. Ալավերդին Կախեթի հիմնավորց ու նշանավոր գյուղերից է: Այստեղ կանգուն է վրաց ճարտարապետության արժեքավոր հուշարձաններից մեկը՝ ԺԱ դարի մի փառավոր եկեղեցի, որն իր չափերով ամենաբարձրն է Վրաստանում ¹ :	2	1865 ¹⁰	12	9	21
Հայերն Ալավերդիում. հավանաբար ԺԸ դարում այստեղ հաստատվել են սակավաթիվ հայեր: Վավերագրերում նրանց մասին տվյալներ կան մինչև 1880-ական թվականների սկզբները, որից հետո Ալավերդիում այլևս հայեր չեն հիշվում: 1802 թ. մի փաստաթղթում գրված է, որ գյուղի բնակիչները վրացիներն ու հայերն են (թվաքանակը չի նշված) ² :		1867 ¹¹	13	8	21
Վիճակագրություն. բնակչության թվաքանակի վիճակագրական տվյալների պատկերը 1818-1883 թթ. ընթացքում հետևյալն է.		1870 ¹²	13	8	21
		1873 ¹³	7	5	12
		1874 ¹⁴	6	5	11
		1875 ¹⁵	6	5	11
		1876 ¹⁶	6	6	12
		1877 ¹⁷	5	6	11
		1878 ¹⁸	5	6	11
		1880 ¹⁹	6	7	13
		1881 ²⁰	6	7	13
		1882 ²¹	7	5	12
		1883 ²²	7	4	11

1914 թ. Ալավերդին 121 շնչից բաղկացած վրացաբնակ փոքրիկ գյուղ էր²³:

Ազգաստիճան. ուշագրավ է 1818 թ. կազմված ալավերդաբնակ հայերի հետևյալ անվանացուցակը.

«1. Քարթլի Սիմոնաշուելեի, Գիորգի, Մելքոն և Գասպար, մայր՝ Թամար, միս հորեղբոր Յարութիւնի որդի՝ Ղազար, սորա կինն՝ Թինաթին, որդին՝ Յարութիւն:

2. Գիշերի որդիք՝ Կիկոյի և Ռեվազ, Կիկոյի կինն՝ Աննա, որդի՝ Նոնի, Ռեվազի կինն՝ Թինաթին, որդի՝ Ասլան:

3. Մարտիրոսի որդիք՝ Առաքել և Յարութիւն, սորա կինն՝ Թինաթին, դուստր՝ Մարիամ, որդի՝ Ռոստոմ:

4. Մարտիրոսեան Դատի որբ որդին՝ Ռոստոմ:

8 Նույն տեղում, գ. 3843, թ. 45-46:

9 Նույն տեղում, գ. 3846, թ. 13:

10 Նույն տեղում, գ. 3848, թ. 22, 54:

11 Նույն տեղում, գ. 3851, թ. 3:

12 Նույն տեղում, գ. 3857, թ. 62-63:

13 Նույն տեղում, գ. 3862, թ. 51:

14 Նույն տեղում, գ. 3864, թ. 35:

15 Նույն տեղում, գ. 3866, թ. 7:

16 Նույն տեղում, գ. 3868, թ. 6:

17 Նույն տեղում, գ. 3869, թ. 3:

18 Նույն տեղում, գ. 3870, թ. 57:

19 Նույն տեղում, գ. 3872, թ. 2:

20 Նույն տեղում, գ. 3873, թ. 2:

21 Նույն տեղում, գ. 3874, թ. 2:

22 Նույն տեղում, գ. 3875, թ. 22:

23 “Кавказский календарь на 1915 г.”, Тифлис, 1914, с. 85.

1 Ալավերդու տաճարի պատմության, ճարտարապետության և անվան հետ կապված հետաքրքիր ավանդությունների մասին տե՛ս **Иванович**, Алавердский праздник.—“Новое обозрение”, 1899, № 5396, с. 1-3; **Б. Т.**, Алаверды (Кахетинское предание).—“Кавказ”, 1900, №168, с. 2-3; **Могзаури**, Кахетинская жизнь.—“Новое обозрение”, 1902, № 6195, с. 2; **Светлана**, Путевые заметки в Кахетии.—“Кавказ”, 1901, № 337, с. 2; **Нель**, Алла верды.—“Кавказ”, 1901, № 45, с. 3; **Гелашвили М.**, Алаверди.—“Молодеж Грузии”, 1986 XI 29, с. 5; **Киселева Татьяна**, Гордость Кахети.—“Вечерний Тбилиси”, VIII. 6, 1990, с. 3.

2 АКАК, т. 1, с. 471.
3 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2569, ք. 20:
4 Նույն տեղում, գ. 3819, թ. 64:
5 Նույն տեղում, գ. 3830, թ. 129:
6 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, ք. 5:
7 Նույն տեղում, գ. 3839, թ. 5:

5. Գիթորայ որդի՝ Գօգի, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յովսէփ և Գիթորի:

6. Դարաբաղցի Յակոբ, կինն՝ Մայեա, դուստր՝ Մարթա:

7. Ռամազեան Յարութիւնի որդիք՝ Ռամազ և Դաիթ, մայր՝ Աննա:

8. Գիթօյի որդիք՝ Սօսի և Նօնի, մայր՝ Մարիամ, Սօսիին կինն՝ Էլիսաբէթ, այլևս միւս որդին Անդրեաս»²⁴:

Եկեղեցի. 1818 թ. գյուղում հիշվում է մի փայտաշեն եկեղեցի՝ կառուցված հասարակության միջոցներով²⁵: Հետագայում դրա գոյությունը վկայված չէ:

Տեղի հայերին հովվող քահանաները գալիս էին Թելավից, Ռուխալիից կամ Քիսթաուրից:

ԱԽՄԵՏԱ

Տեղադրություն. համանուն շրջանի կենտրոնն է: Գտնվում է Թելավից 25 կմ հյուսիս-արևմուտք, Մատան գյուղից 4 կմ հարավ:

Հայերն Ախմետայում. այս բնակավայրի հայերի գոյության մասին պատմող վավերագրերը խիստ հազվադեպ են: Հայտնի է, որ 1852 թ. Ախմետայում բնակվում էր Թելավի Սր. Գևորգ եկեղեցու քահանա Հարություն Տեր-Գրիգորյանի ծուխ համարվող միակ հայ թոմս Քորուլյանցի ընտանիքը: Նույն թվականին կրոնական ճնշումներից զերծ մնալու հույսով, ստիպողաբար, ընտանյոք ընդունել էր հունադավանություն՝ վերանկրտվելով վրաց քահանայի կողմից²⁶: Ախմետաբնակ հայերի վերաբերյալ այլ տեղեկություններ չկան:

Չուտ վրացաբնակ Ախմետան 1914 թ. ուներ 1653 բնակիչ²⁷:

ԱԾՂՎԵՐ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևելք, նույն ուղղությամբ կից է Վերին Խողաշեն գյուղին:

Հայերն Ածղվերում. վրացաբնակ այս գյուղում, հավանաբար, ԺԹ դարի սկզբներին հաստատվել են սակավաթիվ հայեր: 1818 թ. նրանք կազմել են ընդամենը 2 ծուխ՝ 12 շունչ (7 ար., 5 իգ.)²⁸: Ի դեպ, երկու ծխերն էլ այստեղ են փոխադրվել Թելավ քաղաքից: 1843 թ. մի այլ վավերագրից տեղեկանում ենք, որ Ածղվերում դեռևս հայեր էին բնակվում, բայց նրանք մոտակա սակավահայ գյուղերի պես մնացել էին անքահանա²⁹: Հետագա փաստաթղթե-

24 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 20:

25 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2569, ք. 20:

26 Նույն տեղում, գ. 3197, ք. 1:

27 «Кавказский календарь на 1915 г.», с. 93.

28 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21: Ի դեպ, նույն վավերագրում տրված է նաև բնակիչների անվանացանկը. «1. Թելավու Չվելգավանցի Շավարի որդի Դաիթ, կինն՝ Մարթայ, որդի Գիգօ: 2. Թելավեցի Գիթորայ որդիք Յարութիւն և Մարտիրոս, Յարութիւնի կինն՝ Մագդաղին, որդիք՝ Դաիթ և Պետրէ, Դաիթի կինն՝ Մարէթ, որոց ազգական Մարտիրոսի այրի կինն՝ Եղսում, որդի՝ Աղղօմէլ, դուստր՝ Մարթայ»:

29 Նույն տեղում, գ. 1383, ք. 1:

րում ածղվերաբնակ հայերի մասին այլևս ոչ մի վկայության չենք հանդիպել:

Չուտ վրացաբնակ Ածղվերը 1914 թ. ուներ 455 բնակիչ³⁰:

ԲԱՄՏՐԻՈՆ

Բախտրիոնում հայերի գոյության առաջին վկայություններից մեկը վերաբերում է 1802 թ.³¹: 1803 թ. Բախտրիոնը բաղկացած էր 41 տնից (114 ար., 105 իգ.), որից միայն 1-ը՝ հայ, մնացածը՝ վրացի³²: 1818 թ. տեղաբնիկ վրացիներից զատ հիշվում են քուլագիրցի Սղերաբ Պողոսի (կինն էր Մարիամը, որդիները՝ Սարգիսը, Գիգուրը և Ավետիքը, դուստրը՝ Մարթան) և դազախեցի Դազարի որդի Գլախայի (կինն էր Քեթեվանը, որդիները՝ Դավութն ու Գիգուլին, դուստրը՝ Դարեջանը) ընտանիքները՝ 11 շունչ (7 ար. և 4 իգ.)³³:

Նույն վավերագրում Բախտրիոնը հիշվում է Մատան և Մաղրան գյուղերի հետ, ուստի գտնվում էր այդ գյուղերի շրջանում (Ախմետայի շրջան): 1914 թ. Բախտրիոն անվամբ գյուղ հիշատակված է Թիանթեթի գավառում: Այն ուներ 64 վրացի բնակիչ³⁴: Այս անվամբ գյուղ Կախեթում չկա, բայց տեղադրությամբ (Ախմետայից 4 կմ հյուսիս-արևելք) այն համապատասխանում է ներկայիս Խորբալո գյուղին:

ԲՈՍՏԱՆԱ

Բոստանան Քիսթաուր գյուղին միավորված փոքր բնակավայրերից էր: Այստեղ հայերի բնակված լինելու վերաբերյալ կա 1843 թ. մի վկայություն: Հայտնի է, որ նրանք սակավաթիվ էին, չունեին քահանա ու, առավել ևս, եկեղեցի³⁵: 1865 թ. Թելավի գավառի հայ բնակչություն ունեցող գյուղերի մի ցուցակում նշված է, որ Բոստանայում այլևս հայեր չեն բնակվում³⁶: Հետագա որևէ վավերագրում ևս Բոստանայում հայերի գոյությունը վկայված չէ:

ԽՈՐԽԵԼ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հարավ-արևելք: Միավորված է Օժիո գյուղխորհրդի հետ:

Հայերը Խորխելում. ըստ ամենայնի՝ առնվազն ԺԸ դարի վերջերից Խորխելում հայեր են բնակվել: 1802 թ. մի փաստաթղթում նշված է, որ գյուղի բնակիչները վրացիներ և հայեր էին³⁷: Ամենայն հավա-

30 «Кавказский календарь на 1915 г.», с. 93.

31 АКАК, т. 1, с. 471.

32 АКАК, т. 2, Тифлис, 1868, с. 86.

33 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 22:

34 «Кавказский календарь на 1915 г.», с. 97.

35 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1383, ք. 1:

36 Նույն տեղում, գ. 3848, ք. 54:

37 АКАК, т. 1, с. 471.

նականությամբ, խորխելաբնակ հայերը եղել են արցախցի գաղթականներ:

Վիճակագրություն. խորխելաբնակ հայերի թվաքանակի փոփոխություններին վերաբերող վիճակագրական տվյալների պատկերը հետևյալն է.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ³⁸	5	17	14	31
1857 ³⁹		23	20	43
1858 ⁴⁰		23	18	41
1860 ⁴¹		26	19	45
1861 ⁴²		27	17	44
1862 ⁴³		26	16	42
1863 ⁴⁴		26	17	43
1864 ⁴⁵		25	18	43
1865 ⁴⁶	4	25	18	43
1867 ⁴⁷		28	16	44
1870 ⁴⁸		19	17	36
1873 ⁴⁹		23	21	44
1874 ⁵⁰		23	20	43
1875 ⁵¹		24	20	44
1876 ⁵²		24	23	47
1877 ⁵³		24	22	46
1878 ⁵⁴		25	22	47
1880 ⁵⁵		26	23	49
1881 ⁵⁶		26	26	52
1882 ⁵⁷		26	27	53
1883 ⁵⁸		26	29	55
1899 ⁵⁹		13	13	26
1900 ⁶⁰		15	14	29
1901 ⁶¹		17	15	32
1906 ⁶²		19	23	42

Աղյուսակից երևում է, որ խորխելաբնակ հայերի թիվը մշտապես եղել է 30-50 շունչ:

1914 թ. գյուղն ուներ 443 բնակիչ⁶³, որոնց մի չնչին մասը, հավանաբար, հայեր են եղել (աղյուսակի տվյալներ):

38 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21:

39 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:

40 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:

41 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:

42 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:

43 Նույն տեղում, գ. 3836, ք. 6:

44 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:

45 Նույն տեղում, գ. 3846, ք. 13:

46 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23, 54:

47 Նույն տեղում, գ. 3851, ք. 3:

48 Նույն տեղում, գ. 3857, քք. 62-63:

49 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:

50 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:

51 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:

52 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:

53 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:

54 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:

55 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:

56 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:

57 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:

58 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:

59 Նույն տեղում, գ. 3903:

60 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:

61 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:

62 Նույն տեղում, գ. 3915, ք. 6:

63 “Кавказский календарь на 1915 г.”, с. 199.

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. կազմված խորխելաբնակ հայերի հետևյալ անվանացուցակը.

«1. Յովվեփի որդիք՝ Թաթուլ և Գիգոլ, Թաթուլի կինն՝ Աննա և երբոր՝ Գօգինի այրի կինն՝ Մարգարիտ, որդիք՝ Լուարսաբ և Գիորգի, դստերք՝ Էլիսաբեդ և Մարթայ:

2. Ջամալի որդի՝ Դազար, կինն՝ Մայեա, որդիք՝ Գիորգի և Աւետիք, դստերք՝ Մարթայ, Մարիամ և Թինաթին:

3. Ասատուրի որդիք՝ Յակոբ և Ռէվլազ, մայր՝ Թինաթին, Յակոբի կինն՝ Մազդադին, որդիք՝ Իսակ և Աստուածատուր և Սև Գլախա:

4. Ջուլիակ Յոհաննեսի այրի կինն՝ Խանվերվան, որդի՝ Գիորգի, դուստր՝ Թինաթին:

5. Խօզ Բերոյի որդիք՝ Բէժան և Դաիթ, Բէժանի կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Սօսի և Գլախա և Դաիթի կինն՝ Մայեա»⁶⁴:

Եկեղեցի. երբևէ չեն ունեցել: Քահանաներն էլ գալիս էին այլ վայրերից, գլխավորապես Թելավ քաղաքից:

1908-1910 թթ. Խորխելում քահանայագործում էր Մատանի քահանան՝ Հովսեփ Տերտերյանցը⁶⁵:

ՄԱՂՐԱՆ

Տեղադրություն. գտնվում է Ալազան գետի ձախ կողմում, շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևելք:

Հայերը Մաղրանում. այն, որ 1840 թ. գյուղում գոյություն ուներ հայոց Սր. Աստվածածին եկեղեցի⁶⁶, կարծել է տալիս, թե Մաղրանում հայերը հաստատվել են առնվազն ԺԹ դարի սկզբներից: Մակայն դա հերքվում է 1803 թ. մի փաստաթղթով, որտեղ հիշված են միայն վրացի բնակիչներ (24 տուն, 90 ար. և 91 իգ.)⁶⁷:

Մաղրանում հայ բնակչության թվաքանակը շարունակաբար նվազել է, իսկ 1867 թ-ից հետո այնտեղ այլևս հայ բնակիչներ չեն հիշվում:

Վիճակագրություն. մաղրանաբնակ հայերի թվաքանակի փոփոխություններին վերաբերող վիճակագրական առկա տվյալների պատկերը հետևյալն է.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ⁶⁸	7	15	17	32
1843 ⁶⁹		12	8	20
1844 ⁷⁰		31	28	59
1845 ⁷¹		31	28	59
1852 ⁷²		3	4	7
1857 ⁷³		1	2	3
1858 ⁷⁴		1	2	3
1860 ⁷⁵		2	2	4

64 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21:

65 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 14:

66 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, ք. 29:

67 AKAK, T. 2, c. 86.

68 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 22:

69 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:

70 Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46:

71 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:

72 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, ք. 64-65:

73 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:

74 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:

75 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:

1861 ⁷⁶	1	3	4
1862 ⁷⁷	2	3	5
1865 ⁷⁸	2	3	5
1867 ⁷⁹		1	1

Չուտ վրացաբնակ Մադրան 1914 թ. ուներ 251 բնակիչ⁸⁰:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. կազմված մադրանաբնակ հայերի հետևյալ անվանացուցակը.

«1. Պապի որդի՝ Բաղդասար, կինն՝ Ռուսուդան, որդիք՝ Գրիգոր և Պողոս, դստերք՝ Մարիամ և Էլիսաբեդ, մայր՝ Խանում:

2. Խաչատուրի որդի՝ Յովակիմ, դստերք՝ Մարիամ, Խանում և Բարբարե, մայր՝ Խանվիեդ, ևս միս որդին Բաղդասարի ...:

3. Ասազի որդի՝ Յարութիմ, կինն՝ Աննա և եղբոր՝ Հանեսի այրի կինն՝ Մառա, որդիք՝ Ասազ և Մարգիս, դուստր՝ Չառահիր:

4. Գլախի որդիք՝ Սոսի և Ռամազ, Սոսինի կինն՝ Անախանում, որդի՝ Գլախա:

5. Դաթի որդիք՝ Ղազար և Գիօրգի, Ղազարի կինն՝ Էլիսաբեդ, դստերք՝ Անախանում, Մարիամ և Սաբեդ:

6. Միքելի որդի՝ Մարգիս:

7. Ասազի որդի՝ Բեժան, Սաքուլի այրի կինն՝ Մայի»⁸¹:

Մք. Աստվածածին եկեղեցի. հայտնի է, որ 1852 թ. եկեղեցին քայքայված ու անօգտագործելի վիճակում էր⁸²:

ՄԱՏԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հյուսիս՝ Մեծ Կովկասի հարավահայաց ստորոտին:

Հայերը Մատանում. Կախեթի այն վրացական գյուղերից է, ուր հայ գաղթականությունը, հաստատվելով առնվազն ԺԸ դարում, զգալի թիվ է կազմել և սակավաթիվ հայ բնակչություն ունեցող մերձակա գյուղերի համար եղել է իբրև կենտրոնական բնակավայր: Համեմատաբար վաղ շրջանի փաստաթղթերից մեկում Մատանում հայերի գոյությունը վկայված է 1802 թ.⁸³: 1849 թ. մի վկայության համաձայն՝ Մատանում բնակվող հայերն արդեն մոռացել էին մայրենի լեզուն և խոսում էին վրացերեն. «տունք Հայոց 27, եկեղեցին փայտեայ և անշուք. չգիտեն մերայինք զլեզու Հայոց. տունք Վրաց բազումք. առհասարակ ստրուկք են իշխանաց վրաց»⁸⁴:

Վիճակագրություն. Մատանի հայ բնակչության թվաքանակին վերաբերող մարդահամարի տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ⁸⁵	25	115	86	201
1841 ⁸⁶		201	183	384

76 Նույն տեղում, գ. 3839, թ. 5:
 77 Նույն տեղում, գ. 3836, թ. 6:
 78 Նույն տեղում, գ. 3848, թ. 22-23:
 79 Նույն տեղում, գ. 3851, թ. 3-4:
 80 “Кавказский календарь на 1915 г.”, с. 153.
 81 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 22:
 82 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, թ. 64-65:
 83 АКАК, т. 1, с. 472.
 84 **Տեր Ղազարեանց Յովհաննես վարդապետ Արշարունի,** նշվ. հոդվ., էջ 282-283:
 85 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 22-2:
 86 Նույն տեղում, գ. 3802, թ. 41-42:

1842 ⁸⁷		202	181	383
1843 ⁸⁸		203	183	386
1844 ⁸⁹		203	184	387
1845 ⁹⁰		202	186	388
1852 ⁹¹		207	151	358
1853 ⁹²		210	155	365
1854 ⁹³		212	159	371
1857 ⁹⁴		205	160	365
1858 ⁹⁵		206	163	369
1860 ⁹⁶		217	172	389
1861 ⁹⁷		223	176	399
1862 ⁹⁸		233	180	413
1863 ⁹⁹		234	180	414
1864 ¹⁰⁰		235	180	415
1865 ¹⁰¹	50	239	179	418
1867 ¹⁰²		241	177	418
1873 ¹⁰³		227	182	409
1874 ¹⁰⁴		270	217	487
1875 ¹⁰⁵		250	205	455
1876 ¹⁰⁶		254	206	460
1877 ¹⁰⁷		254	199	453
1878 ¹⁰⁸		255	201	456
1880 ¹⁰⁹		257	208	465
1881 ¹¹⁰		259	212	471
1882 ¹¹¹		263	220	483
1883 ¹¹²		264	222	486
1885 ¹¹³		280	237	517
1889 ¹¹⁴		300	248	548
1890 ¹¹⁵		300	252	552
1891 ¹¹⁶		320	262	582
1892 ¹¹⁷		322	262	584
1893 ¹¹⁸		330	266	596

87 Նույն տեղում, գ. 3805, թ. 92-93:
 88 Նույն տեղում, գ. 3805, թ. 46-17:
 89 Նույն տեղում, գ. 3809, թ. 45-46:
 90 Նույն տեղում, գ. 3811, թ. 106-107:
 91 Նույն տեղում, գ. 3819, թ. 64-65:
 92 Նույն տեղում, գ. 2743, թ. 12 5-126:
 93 Նույն տեղում, գ. 3825, թ. 7-8:
 94 Նույն տեղում, գ. 3830, թ. 129-130:
 95 Նույն տեղում, գ. 3823, թ. 129-130:
 96 Նույն տեղում, գ. 3833, թ. 5:
 97 Նույն տեղում, գ. 3839, թ. 5:
 98 Նույն տեղում, գ. 3836, թ. 6:
 99 Նույն տեղում, գ. 3843, թ. 45-46:
 100 Նույն տեղում, գ. 3846, թ. 13:
 101 Նույն տեղում, գ. 3848, թ. 22-23, 54:
 102 Նույն տեղում, գ. 3851, թ. 3:
 103 Նույն տեղում, գ. 3862, թ. 51:
 104 Նույն տեղում, գ. 3864, թ. 35:
 105 Նույն տեղում, գ. 3866, թ. 7:
 106 Նույն տեղում, գ. 3868, թ. 6:
 107 Նույն տեղում, գ. 3869, թ. 3:
 108 Նույն տեղում, գ. 3870, թ. 57:
 109 Նույն տեղում, գ. 3872, թ. 2:
 110 Նույն տեղում, գ. 3873, թ. 2:
 111 Նույն տեղում, գ. 3874, թ. 2:
 112 Նույն տեղում, գ. 3875, թ. 22:
 113 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 33:
 114 Նույն տեղում, գ. 3884, թ. 5:
 115 Նույն տեղում, գ. 3887, թ. 139:
 116 Նույն տեղում, գ. 3889, թ. 138:
 117 Նույն տեղում, գ. 3891, թ. 110:
 118 Նույն տեղում, գ. 3895, թ. 27:

1894 ¹¹⁹	330	264	594
1897 ¹²⁰	348	284	632
1898 ¹²¹	371	290	661
1899 ¹²²	372	293	665
1900 ¹²³	385	292	677
1901 ¹²⁴	386	306	692
1902 ¹²⁵	399	316	715
1905 ¹²⁶	433	355	738
1907 ¹²⁷			902
1908 ¹²⁸	141	466	833
1910 ¹²⁹		620	403
1912 ¹³⁰		644	422
1917 ¹³¹			2400

1914 թ. գյուղն ուներ 1770 բնակիչ¹³²: Եթե ընդունենք, որ նրանցից ամենապակասը 1000-ը հայեր էին, ապա ստացվում է, որ վերջիններս իրենց թվաքանակով գերազանցում էին տեղաբնիկ վրացիներին: Աղյուսակից երևում է, որ, ի տարբերություն Կախեթի շատ բնակավայրերի, Մատանում հայերի թվաքանակը ժամանակի ընթացքում անընդհատ աճել է, իսկ 1910-ական թվականներին նույնիսկ գերազանցել 1000 շունչը:

Ազգատոհմեր. հայտնի էին Բերդյանց, Գզերյանց, Գլախյանց, Կացյանց, Մարկոսյանց, Մարուքյանց, Մանուչարյանց, Սկրտումյանց, Մղերյանց, Նոնյանց, Սարգսյանց, Սաքոյանց, Վարդոսյանց, Տերտերյանց ու Փեյրքյանց ազգատոհմերը¹³³:

Խնդրո առթիվ ուշագրավ է նաև 1818 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Տեր Պետի որդիք՝ նացվալ Յոհան և Մարգար, Յոհանի կինն՝ Մաթո, որդիք՝ Դախթ, Բարադամ, Անանիա, Եօանե, դստերք՝ Մուսան և Մարիամ, Մարգարի կինն՝ Մագբաղեն և եղբոր՝ Դախթի այրի կինն՝ Մարիամ, որդիք՝ Սարգիս, Մարկոս, Յարութին, Անդրեսա և Յովսէփ, ևս Վարդանի այրի կինն՝ Թամար, որդիք՝ Մովսէս և Ջաքարիա, դստերք՝ Մարգարիտ և Եղսամ, Սարգսի կինն՝ Էլիսաբեդ, Մարկոսի կինն՝ Դասդա, որդի՝ Նիմիա:

2. Տեր Գեղգ, որդի՝ Մարտիրոս, կինն՝ Անախանում, որդի՝ Ալէքսի, դուստր՝ Գայանե, Ալէքսի կինն՝ Աննա:

3. Տեր Գեղգ, որդիք՝ Սահակ և Գրիգոր, Սահակի կինն՝ Մայիա, Գրիգորի կինն՝ Էլենե, որդիք՝ Պողոս և Դախթ, Պողոսի կինն՝ Հօռօսիմ, որդի՝ Յոհաննէս, դուստր՝ Վարդի, Տեր Անանիայի այրի կինն՝ Մաթո, որդիք՝ Սիմէօն և Առաքել, դստերք՝ Մարիամ և Շուշան:

119 Նույն տեղում, գ. 3896, ք. 163-164:

120 Նույն տեղում, գ. 3899, ք. 136-137:

121 Նույն տեղում, գ. 3897, ք. 158:

122 Նույն տեղում, գ. 3903:

123 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:

124 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:

125 Նույն տեղում, գ. 3907, ք. 12-13:

126 Նույն տեղում, գ. 3912, ք. 256-257:

127 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, ք. 8:

128 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:

129 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 4:

130 Նույն տեղում, գ. 3919, ք. 51-52:

131 «Համբաւաբեր», 1917, № 2 (վիճակագրական այս տվյալը թվում է չափազանցված):

132 “Кавказский календарь на 1915 г.”, с. 156.

133 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1259, ք. 7:

4. Ջուլիակ Սկրտում, կինն՝ Խանփերվան, որդի՝ Սարգիս, դստերք՝ Մարթո և Էլիսաբեդ:

5. Ջուլիակ Դախթ, կինն՝ Թինաթին, որդի՝ Յարութին, դուստր՝ Մարիամ, Յարութինի կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Նիմիա:

6. Սարգսի որդիք՝ Գօգի և Շերմազան, Գօգիի կինն՝ Մարիամ, որդի՝ Աւագ և միս որդույ Յարութինի որդիք՝ Յակոբ և Բերօ, դուստր՝ Մարիամ:

7. Սարգսի որդի՝ Դախթ, կինն՝ Բարբարե, որդիք՝ Յարութին, Թադէ և Մովսէս:

8. Կացենի որդի՝ Պապա, կինն՝ Եագունդի, որդի՝ Կացեա, դուստր՝ Բարբարե, այլ ևս եղբայր Պապայի՝ Դախթ, Կացեայի կինն՝ Մայիա:

9. Նիմիմի որդիք՝ Գիգօլ, Ջուրաք և Դախթ, մայր՝ Անախանում, քույրն սոցա Մարթայ, Մարիամ, Էլիսաբեդ, Թութայ:

10. Սարգսի որդի՝ Մանուչար, որդի՝ Սօլօման, դուստր՝ Մարիամ և միս Գրիգորի որդի՝ Ջովլէ:

11. Կիրակոսի որդի՝ Շերմազան, կինն՝ Աննա, որդի՝ Իսակ և եղբոր՝ Աբրահամի որդի՝ Յարութին:

12. Կիրակոսի որդի՝ Գօգի, կինն՝ Մարթայ, որդիք՝ Նիմի և Աբրահամ, դուստր՝ Էլիսաբեդ:

13. Յակոբի որդիք՝ Գիքօ, Ջուրաք և Սարգիս, մայր՝ Դարեջան, Գիքոյի կինն՝ Բարբարե, դուստր՝ Ժէժա, Ջուրաքի կինն՝ Աննա:

14. Բերօյի որդիք՝ Մամուկ, Պետրե և Թամազ, մայր՝ Մարիամ, Մամուկի որդիք՝ Բերօ և Գիքօզի:

15. Սարգսի որդի՝ Սօսի, կինն՝ Թինաթին, որդի՝ Մարկոս:

16. Մաթոյի որդիք՝ Ջուրաք, Օբար, Ռամազ և Գիքօզի, Ջուրաքի կինն՝ Թինաթին:

17. Մարութի որդիք՝ Ղազար և Յարութին, Ղազարի կինն՝ Մայիա, որդի՝ Պապի և Մարկոս, Յարութինի կինն՝ Անախանում, որդիք՝ Անդրե, դստերք՝ Մարթայ և Մարիամ, միս եղբոր՝ Պողոսի որդիք՝ Աւագ, Գիքօզի, Դաքիա և Նօնի, Աւագի կինն՝ Հօռօսիմ:

18. Նազիր Բերօյի որդի Գլախ, կինն՝ Մարիա, որդի՝ Միքայել, դուստր՝ Թինաթին:

19. Գանջէլ Աւետիք, կինն՝ Բէթվան, որդի՝ Գրիգոր, մայր՝ Աննա:

20. Քամալի որդի՝ Քամալ, կինն՝ Խանփերի, որդիք՝ Նօնօ և Պէպան, դստերք՝ Մայիա, Աննա:

21. Ղազարի որդիք՝ Բերե, Գիքօզի, Թանդիլ, Պապի և Սաակաճէ, մայր՝ Թինաթին, Բերեի կինն՝ Մարթայ, որդիք՝ Յոհաննէս և Յարութին, դստերք՝ Մարիամ և Էլիսաբեդ, Գիքօզույ կինն՝ Եղսամ, որդի՝ Սարգիս, դուստր՝ Աննա, Թանդիլի կինն՝ Թինաթին, որդի՝ Ղազար:

22. Վարդօյի որդիք՝ Թամազ և Յակոբ, Թամազի կինն՝ Խանում, որդի՝ Վարդան, դստերք՝ Մարթայ, Մարգարիտ և երրորդն՝ Գիգօլի այրի կինն՝ Մայեա, որդիք՝ Բերօ և Սօլօման, դուստր՝ Մուսաննա, Յակոբի կինն՝ Նաթալ, որդիք՝ Ստեփան և Դախթ, դուստր՝ Սարեդ, Ստեփանի կինն՝ Մայեա, որդիք՝ Փարսադան, Գիքօզի և Նիմիա:

23. Նօնիմի որդիք՝ Գաբիրէլ, Միրզայ, Գիքօ, Թաթօ, Սօսի, Ջուրաք, Սիմօն, մայր՝ Աննա, Գաբիրէլի որդիք՝ Յոհաննէս և Նիմի, Միրզի կինն՝ Մարիամ, դստերք՝ Աննա և Էլիսաբեդ, Թաթօյի կինն՝ Սարեդ:

24. Ջուրաքեան Բերօյի այրի կինն՝ Աննա, որդի՝ Գօգի, դուստր՝ Մարթայ:

25. Վարդանի որդի՝ գգիր Գիքօզի, կինն՝ Մարիամ, որդիք՝ Վարդան և Յարութին, որոյ եղբոր Յակոբի այրի կինն՝ Թինա-



ՄՍՏԱՆ. Սր. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևելքից, արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևմուտք (բոլորն էլ 1988 թ.) և 1978 թ. եկեղեցու ներսում խումբացած վիճակում պահպանված հայերեն գրքերի ու պարբերականների պատահիկներ

քին, որդի՝ Նասդիդ, դուստր՝ Թամար: Վարդանի այրի կինն՝ Խանուն և Նոնինի այրի կինն՝ Թամար»¹³⁴:

Դպրոց. չնայած համեմատաբար հայաշատ լինելու հանգամանքին՝ Մատանում երկար ժամանակ ազգային դպրոց չի եղել: Հայտնի է, որ Թեվալի Սր. Աստվածածին եկեղեցու քահանա Խաչատուր Եզեկյանցի ջանքերով գյուղում հիմնվել էր երկսեռ եկեղեցական-ժխական դպրոց¹³⁵: 1916 թ. այն գործում էր և գոյատևում շնորհիվ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության օժանդակության¹³⁶: Հաստատությունը գործել է մաև 1919 թ.¹³⁷:

134 Նույն տեղում, գ. 2569, թ. 21:

135 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 191, թ. 19:

136 «Համբարաբեր», 1916, № 33, էջ 1034: Ի դեպ, մեկ այլ հաղորդման համաձայն՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Թեվալի ճյուղի վարչության խնդրանքով Արշակ Ունանյանը հանձն էր առել 1917 թ. հունվարից իր միջոցներով բացել Մատանի դպրոցը («Համբարաբեր», 1917, № 2, 15 հունվար):

Եկեղեցի. գյուղի Սր. Աստվածածին փայտածածկ եկեղեցու կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ: Չի բացատրվում, որ այն հիմնադրված լիներ դեռևս ԺԸ դարում: Վավերագրերում առաջին հիշատակությունը 1818 թվականից է:

Սր. Աստվածածին եկեղեցին բազմիցս հիշատակվում է մաև հետագա վավերագրերում (ընդհուպ՝ Ի դարի սկզբները): 1923 թ. փակվել է¹³⁸:



Ճարտարապետություն. 1988 թ. մեր այցելության ժամանակ Սր. Աստվածածին եկեղեցին կիսավեր վիճակում էր¹³⁹: Ամբողջովին փլված էր փայտա-

137 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 48, թ. 104:

138 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, թ. 120-121:

139 Մատանում ծանոթացանք գյուղի ծխատեր Հովսեփ քահանա Տերտերյանցի թոռան՝ Իվան Դավթի Տերտերաշվիլու հետ, որն իրենց տոհմի մասին պատմեց մի շարք հետաքրքիր մանրամասնություններ:

ծածկը, կանգուն էին աղյուսով, անմշակ քարով ու կրաշաղախով կառուցված պատերը: Եկեղեցին՝ ուղղանկյուն հատակագծով, արևելյան կողմում խորանով և երկու ավանդատներով, հարավային ու արևմտյան կողմերից մեկական մուտքերով, 9 լուսամուտներով, առանց որևէ արձանագրության կամ հարդարանքի միանավ շենք է: Արևմտյան ճակտոնի գագաթին կանգնած է զանգակատունը: Շենքի արտաքին չափերն են՝ 12,78 x 7,55 մ:



ՍՍՍՍ. Սբ. Սստվածածին եկեղեցու հատակագիծը

Վիճակագր. հասարակության միջոցներով կառուցված փայտաշեն եկեղեցուն 1818 թ. պահվող բազմաթիվ իրերի շարքում եղել են նաև արձանագրվածներ: Դրանցից էին արծաթյա սկիհը և ձեռնաց խաչը:

Սկիհ.

Յիշատակ է սուրբ սկիհս Դատրբբեկեանց Կարապետի դուստր Շուշան կուսին, իւր հոգևոր եւ մարմնատր ծնողացն և մասնակցած ձեռամբ ձրի շինողաց, որ ընծայեցի Մաղանոյ Տէր Յոհաննէս քահանայի 1809, յունվարի 1:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21:

Չեռաց խաչ.

Յիշատակ Պէպանի:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21:

Քահանա. *Տեր Հովհաննէս.* ըստ վերոնշյալ սկիհի արձանագրության՝ քահանայագործել է 1809 թ.: *Հովսեփ Տերտերյանց.* հիշվում է 1908-1910 թթ., հովվել է նաև Քիսթատուր և Խորխեղ գյուղերին¹⁴⁰:

ՄԱՐԵԼԻՍ

Ներկայումս Ախմետայի շրջանում այս անվամբ գյուղ գոյություն չունի: ԺԹ դարի վերջերին, սակայն, հրատարակված մի շարք քարտեզներում այն տեղադրված է ներկայիս Մատան գյուղից փոքր-ինչ հյուսիս-արևելք:

Դեռևս 1887 թ. Ն. Արեյանն իր հետազոտության մեջ բերել է Մ. Վ. Մաչաբեյլու ուսումնասիրությունից

հետևյալ քաղվածքը. «19 ծուխ հայ-լուսաորչականները պահպանել են միայն իրանց ցեղի դասնութիւնը, իսկ մնացեալ բոլորում նոքա ոչինչով չեն որոշվում բնիկ վրացիներից: Նոքա չեն խօսում հայերէն», և իր կողմից ավելացրել. «Մարելիսի գիւղը գտնվում է Թիօնէթի հարաւային մասում, որը կազմում է հռչակաւոր Կախէթի հիւսիսային բաժինը և յիշեալ գիւղի հայերին պիտի հաշուել Կախէթի հայերի թում»¹⁴¹: 19 ծուխ հայերի թիվը 185 շունչ էր (95 ար., 90 իգ.)¹⁴²: Մարելիսում հայոց եկեղեցու, առավել ևս դպրոցի գործունեության մասին որևէ վկայության չենք հանդիպել: Չի բացառվում, որ այդ հաստատությունները գոյություն պարզապէս չեն եղել: Բնակիչների զբաղմունքը հողագործությունն ու խաղողագործությունն էր¹⁴³:

ՉԱԲԻՆԱՌԻ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք՝ միավորված Օժիո գյուղխորհրդի հետ:

Հայերը Չաբինատում. հայտնի է, որ 1818 թ. գյուղում բնակվում էին 33 շունչ (17 ար. և 16 իգ.) հայեր: Ըստ ազգատոհմերի պատկանելության՝ ներկայացնում ենք հետևյալ անվանացուցակը.

«1. Վարդանի որդիք՝ Մաքո և Գիօրգի, մայր՝ Էլէնէ, Մաքոյի կինն՝ Մարրա, դուստր՝ Մաբեղ և Մարտիրոսի այրի կինն՝ Թամար:

2. Վարդանեան Առաքելի որդի Յօհան, կինն՝ Թումիան, որդի՝ Նատիղ, դուստր՝ Մարիամ:

3. Վարդանեան Առաքելի որդի Փարսադան, կինն՝ Եագունդի, որդիք՝ Մատի և Գօգի, Մատիին կինն՝ Թինաթին և Գօգիին կինն՝ Նաբէլ:

4. Թէլավեցի ջուկիակ Գաբրիէլ, որդիք՝ Յակոբ և Յարութին, Յարութինի կինն՝ Մայիա, դուստր՝ Մաբեղ:

5. Աբօյի որդիք՝ Աւետիք և Յակոբ, Աւետիքի կինն՝ Մարթայ, որդի՝ Գալուստ, Յակոբի կինն՝ Ովաննա, որդի՝ Սօլօման:

6. Աբօյի որդի Չուրաբ, կինն՝ Անախանում, որդիք՝ Պէպան և Դաիթ, դուստրք՝ Մարթայ և Մայիա»¹⁴⁴:

Չաբինատարբնակ հայ համայնքի պատմության վերաբերյալ այլ տեղեկություններ չունենք:

ՍԱՆԱԴԻՐՈ

Տեղադրություն. գտնվելու վայրը կամ այժմ ինչ անվամբ կոչվելը (եթե, իհարկե, գոյություն ունի) պարզել չի հաջողվել: Չաբինատուրի նման այս գյուղը ևս հիշատակվում է միայն 1818 թ. կազմված փաստաթղթում: Ի տարբերություն նախորդի՝ այստեղ համեմատաբար մեծ թվով հայեր էին բնակվում՝ 21 ծուխ, 191 շունչ (104 ար. և 87 իգ.), և այդ թվին արդեն ունեին եկեղեցի ու երկու քահանա¹⁴⁵:

141 Արեյան Ն., Արքունական հայ գիւղացի Անդրկովկասում, «Արձագանք», 1887, № 44, էջ 693:

142 Նույն տեղում:

143 Кахетия: приложение к справочной книге старожилла.— "Кавказ", № 3, с. 11.

144 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21:

145 Նույն տեղում, ք. 22:

140 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 14:

1840-ական թվականներից առկա վավերագրերում Սանադիքո անվամբ գյուղ գավառում այլևս չի հիշվում: Մոտ 200 շունչ հայ բնակիչ ունեցող համայնքն այդքան արագ դժվար թե ցրված ու այլ վայրեր գաղթած լիներ: Ավելի հավանական է, որ Սանադիքոն այլ անվամբ է կոչվել: Բայց թե ինչպես մեզ չի հաջողվել պարզել:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Տեր Բարսեղ քահանայի կինն՝ Թամար և միս աշխարհական որդիք՝ Աբրահամ և Յոհաննես և տիրացու Յակոբի կինն՝ Մայե, որդի՝ Պետրոս, դստերք՝ Անաստաս և Հեղինե, Աբրահամի կինն՝ Հեղինաբեդ, որդի՝ Գալուստ, այլևս Անդրանիկ որդին Իսակ, կինն՝ Աննա. սա բնակեալ է ի Թելավ:

2. Տեր Գրիգոր քահանայի որդի՝ Մարտիրոս, դստերք՝ Մայի և Կատարինե և սորա եղբայրք՝ Յովակիմ և Յոհաննես Մելիքեանք. Յովակիմայ կինն՝ Անախանում, դստերք՝ Հեղինե և Տղիսաբեդ, Յոհաննեսի կինն՝ Թամար, որդիք՝ Չազ և Թովմաս:

3. Մենուզիլ Սարգսի որդի՝ Գլախա, մայր՝ Անախանում և հորեղբոր՝ Յովսեփի որդի՝ Գիորգի, մայր՝ Մայեա, քույր Աննա և Սարգսի մայր՝ Նաթալ:

4. Այվազի որդիք՝ Յարութին, Գիգոլ և Պետրե, մայր՝ Անախանում, Յարութինի կինն՝ Աննա, որդիք՝ Թոմայ, Նոնիա, Նիկողոս և Պավել, Գիգոլի կինն՝ Մայեա, որդի՝ Գեվո, դուստր՝ Սաբեդ, Պետրի կինն՝ Մարթայ, որդիք՝ Աբուջ և Իսանե, դստերք՝ Թինան և Մարիամ. այլևս որդույ՝ Դաւութի այրի կինն՝ Դարեջան, որդիք՝ Ստեփան և Վարդան, դստերք՝ Լալի և Մարիամ:

5. Սարգսի որդիք՝ Յակոբ և Յարութին, Յակոբի կինն՝ Մարթայ, որդիք՝ Գլախա և Գիորգի, դուստր՝ Սաբեդ, Յարութինի կինն՝ Մարիամ:

6. Մելիքի որդիք՝ Վարդան և Մարգար, Վարդանի կինն՝ Խորիշահ, որդիք՝ Գալուստ, Մելքո, Աբրամ և Գասպար, դուստր՝ Մուսի, Մարգարի կինն՝ Թինաբին, որդի՝ Կոնի, դստերք՝ Մարիամ, Բարբարե, Նինո և սոցա եղբոր՝ Յարութինի որդիք՝ Յակոբ և Բաղդասար, Յակոբի կինն՝ Աննա:

7. Ռամզակի այրի կինն՝ Մարգարիտ, որդիք՝ Յակոբ, Մովսես և Գիորգի և հորամայր՝ Շամի:

8. Յարութի որդի՝ Գիգո, կինն՝ Անանե, որդիք՝ Թաթուլ և Պետրե:

9. Յարութի որդի՝ Դահիո, կինն՝ Խորիշահ, որդիք՝ Խոսրով, Գիգո և Յովսեփ:

10. Առաքելի որդիք՝ Ղազար և Գօգի, Ղազարի կինն՝ Մարմար, որդիք՝ Պետրե և Յարութինի դստերք՝ Մայե, Թինա, Էլենե և Աննա, Գօգիին կինն՝ Բարբարե, որդիք՝ Անդրեաս և Գիորգիի դստերք՝ Մարթայ և Մալոմե:

11. Առաքելի որդի՝ Սաքո, կինն՝ Նաթել, որդիք՝ Ստեփան, Գիգոլ և Չաքարիա, ևս Գեվո, դստերք՝ Մարիամ և Սաբեդ, Պետրեի կինն՝ Թամար, որդի՝ Կոնանե, Գիգոլի կինն՝ Մարթայ:

12. Մարտիրոսի որդի՝ Չուրաք, կինն՝ Խորիշահ:

13. Գիոյի որդի՝ Սարգիս, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Գլախա, Թեոդորե, Իսակ և Յարութին, Գլախայի կինն՝ Թինա, որդի՝ Գիորգի, դուստր՝ Սոփիո:

14. Յարութի որդի՝ Նոնի, կինն՝ Մարթայ, որդիք՝ Գիորգի, Լեօ, Սոսի, դուստր՝ Սաբեդ:

15. Պապայի որդիք՝ Յարութին, Մոսի և Չաքարիա, Յարութինի կինն՝ Մամթա, որդիք՝ Գլախա Գիորգի և Յակոբ, դուստր՝ Լալիա, Սոսիին կինն՝ Մայեա, Չաքարի կինն՝ Մարթայ:

16. Յարութինի որդիք՝ Պետրե և Գլախա, Պետրեի կինն՝ Թինաբին, որդիք՝ Դաւիթ և Յարութին, դստերք՝ Սոփիո և Մարթայ, Գլախայի կինն՝ Մայեա:

17. Գաբրիելի այրի կինն՝ Մարթայ, որդիք՝ Լազարե, Գիորգի և Գլախա, դուստր՝ Սաբեդ:

18. Շավարի որդի՝ Ալեաիք, կինն՝ Նաթել, որդիք՝ Պետրե, Գիորգի, Գիգոլի, Յարութին, Մատի, դուստր՝ Մարթայ, Պետրի, կինն՝ Խանսիբեդ, դուստր՝ Էլենե, Գիորգայ կինն՝ Թամար, դուստր՝ Հոռոմսին:

19. Աբոյի որդիք՝ Կեկո և Դաւիթ, Կեկոյի կինն՝ Խանսիբեդ, որդի՝ Ղազար, դուստր՝ Մայեա, Դաւիթի կինն՝ Բարբարե, որդի՝ Իսանե և Մկրտիչ, դուստր՝ Սաբեդ:

20. Մարտիրոսի որդի՝ Դաւիթ, կինն՝ Աննա, որդիք՝ Ալեաիք, Թաքո, Աղայ և Մատի, Ալեաիքի կինն՝ Քեթևան, որդի՝ Դաւիթ, դուստր՝ Բարբարե, Թաքոյի կինն՝ Ռոստուան, Աղայի կինն՝ Սաբեդ, դուստր՝ Մարիամ:

21. Գանջել Յակոբ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յոհաննես և Սոսի, դուստր՝ Սաբեդ»¹⁴⁶:

Եկեղեցի. 1818 թ. գյուղում կանգուն փայտաշեն եկեղեցին կառուցել էին Աբազյան Գրիգորի որդիներ Սարգիսն ու Հովսեփը¹⁴⁷:

Նույն թվականին եկեղեցում պահված մի շարք իրեր ունեին հակիրճ հիշատակագրություններ: Դրանք են՝

Սկիհ.

Յիշատակ Վարդան Մելիքեանի:
Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21:

Փորուրար.

Յիշատակ Վարդան Մելիքեանի:
Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21:

Չիթե պատկերատիպ վարագույր.

Յիշատակ Մելիքեանի:
Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21:

Վակաս.

Յիշատակ Տեր Գրիգորի:
Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 21:

Քահանա. *Տեր Բարսեղ Սահակյան (1785-1818).* ծնվել է 1763 թ., ձեռնադրվել 1785-ին Սբ. Էջմիածնի նվիրակ Կարապետ արքեպիսկոպոսի կողմից: Կնոջ անունը Թամար էր: Որդիներն էին Աբրահամը, Հովհաննեսը և տիրացու Հակոբը (ծնվ. 1788)¹⁴⁸:

Տեր Գրիգոր Մելիքյան (1808-1818). ծնվել է 1782 թ., ձեռնադրվել 1808-ին Սբ. Էջմիածնի նվիրակ Բաղդասար արքեպիսկոպոսի կողմից¹⁴⁹:

Հայտնի է, որ այս քահանաները հոգում էին նաև Արթանա, Լալիսղուր, Նափարեուլ, Շաքրիան և Փշավել գյուղերի ծխականների հոգևոր պետերը:

146 Նույն տեղում, ք. 22-23:

147 Նույն տեղում:

148 Նույն տեղում, գ. 2569, ք. 22:

149 Նույն տեղում:

ՆԵՐՔԻՆ ԽՈՂԱՇԵՆ

Տեղադրություն. գյուղը գտնվում է Ախմետա քաղաքից 16 կմ հարավ-արևելք՝ Ախմետա-Թելավ մայրուղու վրա:

Հայերը Ներքին Խողաշենում (վրաց. Քվեմո-Խողաշենի). ԺԹ դարի սկզբներին այս գյուղում բնակվում էին նաև սակավաթիվ հայեր: Նրանց գոյությունն այստեղ վկայված է 1802 թ.¹⁵⁰: 1818 թ. գյուղում հայկական 4 ընտանիք կար (8 ար. և 8 իգ.)¹⁵¹: Նույն թվականի դրությամբ Խողաշենից հեռացել էին թիֆլիսեցի Պետրոսի և դարաբաղցի ջրաղացպան Սարգսի ընտանիքները, թելավցի այրի տիկին Մայան վախճանվել էր. գյուղում բնակվում էին Գոգինի և նրա երեք որդիների (Մատի, Շուխե, Գիորգի) ընտանիքները, ընդամենը՝ 8 շունչ¹⁵²: Սրանց հետագան մեզ հայտնի չէ:

1914 թ. գյուղը զուտ վրացաբնակ էր (597 շունչ)¹⁵³:

Տնտեսություն. 1887 թ. Ներքին Խողաշենում գործում էր մեծահարուստ Ղորղանյանցի օդու գործարանը¹⁵⁴:

Եկեղեցի. գյուղում հայկական եկեղեցի երբևէ չի եղել. հայերի հոգևոր պետքերը հոգում էր Թելավի քահանա Տեր Մարտիրոս Տեր-Սահակյանը¹⁵⁵:

Գյուղի վրացական եկեղեցու շինարարական արձանագրության մեջ նշված է, որ կառույցը գլուխ է բերվել նաև հայերի տրամադրած նյութական միջոցների հաշվին:

ՓԻՉԽՈՎԱՆ

Գտնվում է Մաղրան գյուղից հազիվ 2 կմ հարավ-արևմուտք:

Հայ բնակչության ներկայությունն այստեղ վկայված է միայն 1802 թ.¹⁵⁶ մի վավերագրում:

ՔԻՍԹԱՈՒՐ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հարավ-արևելք՝ Թելավ տանող մայրուղու վրա:

Հայերը Քիսթաուրում. երկրամասի առավել հայաշատ բնակավայրերից է: Հայերի՝ այդտեղ հաստատվելու ստույգ ժամանակը հայտնի չէ: 1802 թ. մի փաստաթղթում նշված է, որ Քիսթաուրի բնակիչները վրացիներն ու հայերն էին¹⁵⁷: Մի ակնատեսի 1849 թ. վկայության համաձայն («տունք Հայոց 30. աստ ևս չիք ոք գիտակ լեզուիս հայոց»)¹⁵⁸ հայերն այստեղ բնակություն հաստատած պետք է լինեին

150 AKAK, т. 1, с. 472.

151 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 17:

152 Նույն տեղում:

153 “Кавказский календарь на 1915 г.”, с. 126.

154 «Մշակ», 1887, № 70, էջ 1:

155 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 17:

156 AKAK, т. 1, с. 472.

157 Նույն տեղում, с. 471.

158 **Տեր Ղազարեանց Յովհաննես վարդապետ Արշարունի**, նշվ. հոդվ., էջ 282:

առնվազն ԺԸ դարից, քանի որ անհնար է կարճ ժամանակահատվածում խապառ մոռանալ մայրենի լեզուն և խոսել միայն վրացերեն:

Վիճակագրություն. գյուղի հայ բնակչության թվաքանակի փոփոխություններին վերաբերող վիճակագրական տվյալների պատկերը հետևյալն է.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1803 ¹⁵⁹	44			
1818 ¹⁶⁰	41	99	88	187
1841 ¹⁶¹		203	177	380
1842 ¹⁶²		197	175	372
1843 ¹⁶³		202	179	381
1844 ¹⁶⁴		210	172	382
1845 ¹⁶⁵		218	168	386
1849 ¹⁶⁶		161	147	308
1852 ¹⁶⁷		141	114	255
1853 ¹⁶⁸		164	134	298
1854 ¹⁶⁹		169	136	305
1857 ¹⁷⁰		143	113	256
1858 ¹⁷¹		147	116	263
1860 ¹⁷²		153	122	275
1861 ¹⁷³		157	121	278
1862 ¹⁷⁴		159	121	280
1863 ¹⁷⁵		156	120	276
1863 ¹⁷⁶		156	120	276
1864 ¹⁷⁷		147	120	267
1865 ¹⁷⁸	43	146	125	271
1867 ¹⁷⁹		142	131	273
1870 ¹⁸⁰		167	148	315
1873 ¹⁸¹		152	149	301
1874 ¹⁸²		159	162	321
1875 ¹⁸³		170	181	351
1876 ¹⁸⁴		170	184	354
1877 ¹⁸⁵		169	185	354
1878 ¹⁸⁶		173	186	359

159 AKAK, т. 2, с. 86. Ի դեպ, նույն թվին համագյուղացի վրացիները կազմում էին միայն 16 տուն:

160 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 20:

161 Նույն տեղում, գ. 3802, ք. 41-42:

162 Նույն տեղում, գ. 3805, ք. 92-93:

163 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:

164 Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46:

165 Նույն տեղում, գ. 3811, ք. 306-307:

166 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:

167 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:

168 Նույն տեղում, գ. 2743, ք. 125-126:

169 Նույն տեղում, գ. 3825, ք. 7-8:

170 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:

171 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:

172 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:

173 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:

174 Նույն տեղում, գ. 3836, ք. 6:

175 Նույն տեղում, գ. 3836, ք. 6:

176 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:

177 Նույն տեղում, գ. 3846, ք. 13:

178 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23, 54:

179 Նույն տեղում, գ. 3851, ք. 3:

180 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:

181 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:

182 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:

183 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:

184 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:

185 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:

186 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:

1880 ¹⁸⁷	175	185	360
1881 ¹⁸⁸	172	182	354
1882 ¹⁸⁹	175	179	354
1883 ¹⁹⁰	60	178	354
1885 ¹⁹¹	218	218	436
1889 ¹⁹²	223	217	440
1890 ¹⁹³	219	218	437
1891 ¹⁹⁴	305	218	523
1892 ¹⁹⁵	310	216	526
1893 ¹⁹⁶	308	210	518
1894 ¹⁹⁷	299	208	507
1897 ¹⁹⁸	299	211	510
1898 ¹⁹⁹	180	119	299
1899 ²⁰⁰	182	123	305
1900 ²⁰¹	182	127	309
1901 ²⁰²	185	132	317
1902 ²⁰³	196	136	332
1905 ²⁰⁴	210	165	375
1906 ²⁰⁵	210	165	375
1907 ²⁰⁶			471
1908 ²⁰⁷	261	210	471
1912 ²⁰⁸	286	233	519

1914 թ. Քիսրաուրն ուներ 1009 բնակիչ²⁰⁹: Եթե նկատի ունենանք աղյուսակի տվյալների շարժը, ապա կարելի է ասել, որ ոչ պակաս, քան այդ թվի կեսը հայեր էին: Ի դեպ, ինչպես պարզվեց 1988 թ. մեր այցելության ժամանակ, հայերը կազմում էին գյուղի բնակչության կեսը:

Ազգատոհմեր. հայանի էին Ալեքսանյանց, Այվազյանց, Բաղդյանց, Գալստյանց, Գզերյանց, Թաթուրյանց, Հլապյանց, Հովսեփյանց, Ղալաձյանց, Մակարյանց, Մալիյանց, Մատյանց, Մելքոնյանց, Մոսյանց, Մոքցկյանց, Չալա-Փեյքըրյանց, Պետրոսյանց, Սահակյանց, Վերդյանց և Փարեմուզյանց ազգատոհմերը²¹⁰:

187 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:
 188 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:
 189 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:
 190 Նույն տեղում, գ. 3875, ք. 22: Տե՛ս նաև՝ ֆ. 56, ց. 1, գ. 7727, ք. 1:
 191 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 33:
 192 Նույն տեղում, գ. 3884, ք. 5:
 193 Նույն տեղում, գ. 3887, ք. 139:
 194 Նույն տեղում, գ. 3889, ք. 138:
 195 Նույն տեղում, գ. 3891, ք. 110:
 196 Նույն տեղում, գ. 3895, ք. 27:
 197 Նույն տեղում, գ. 3896, ք. 163-164:
 198 Նույն տեղում, գ. 3899, ք. 136-137:
 199 Նույն տեղում, գ. 3897, ք. 158:
 200 Նույն տեղում, գ. 3903, ք. 7:
 201 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:
 202 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:
 203 Նույն տեղում, գ. 3907, ք. 12-13:
 204 Նույն տեղում, գ. 3912, ք. 256-257:
 205 Նույն տեղում, գ. 3915, ք. 6:
 206 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, ք. 8:
 207 Տվյալներն ընդգրկում են նաև Խորխոսի գյուղի հայության թիվը: Երկու գյուղերը միասին ունեին 82 տուն հայ բնակչություն (ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 559, ք. 21):
 208 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3919, ք. 51-52:
 209 “Кавказский календарь на 1915 г.”, с.142.
 210 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1260, ք. 4:

Քիսրաուրարնակ ազգատոհմերի պատմության ուսումնասիրության համար ուշագրավ է նաև 1818 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Տեր Խաչատուր քահանայ Մելիքսեփեան դարսեցի, յամի 1762 ծնեալ և ձեռնադրեալ 1789 ՚ի Յօհաննէս արքեպիսկոպոստ Ղօշավանից, որոյ որդին տիրացու Առաքել Տեր Խաչատուրեան. ծնեալ յամի 1808:

2. Թէլավէցի Թօսիկի որդի՝ Գրիգոր, կինն՝ Աննա, որդիք՝ ղազար և Գիօրգի, դստերք՝ Դասի և Էլիսաբէդ:

3. Ալեքսանդրի որդիք՝ Ասատուր, կինն՝ Էլէնէ, որդի՝ Ալեքսան, մայր՝ Թումիան:

4. Շերանի որդիք՝ Մովսէս, Յարութիւն և Դալիթ, Մօսէսի կինն՝ Մայեա, որդի՝ Մէսրօպ, Շերան և Աբրամ, դստերք՝ Սաբէդ, Պասիա և Մարիամ:

5. Դարբին Յօհանի կինն՝ Թումիան, որդիք՝ Գիօրգի և Յովսէփ, Գիօրգոյ կինն՝ Մարիամ:

6. Յակոբի որդի՝ Մայիլ, կինն՝ Հօռօմսիմ, որդիք՝ Յակոբ և Անջիբօ, դուստր՝ Էլիսաբէդ:

7. Շերմազանի որդի՝ Գլախա, կինն՝ Թինաթին, որդի՝ Շերմազան և իւր ազգական Գրիգորի որդի՝ Սօլօման, կինն՝ Աննա:

8. Առաքելի որդի՝ Մելքոն, կինն՝ Էլիսաբէդ, դուստր՝ Թամար:

9. Քօչինի որդի՝ Այվազ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Քոչի, Նօնի և Շաքարյօ, դստերք՝ Բարբարէ, Թինաթին, Քօչինի կինն՝ Ռսմիփէր:

10. Մանվէլի որդի՝ Մանվէլ, կինն՝ Մայեա, մայր՝ Թամար, քոյր՝ Մարիամ:

11. Մանվէլի որդի՝ Աբուլ, կինն՝ Թամար, որդի՝ Գլախա:

12. Մանուէլի որդի՝ անդամաւոյւծ Անտօն, կինն՝ Մարգարիտ, որդի՝ Յակոբ:

13. Վեդինի որդիք՝ Դալիթ, Մովսէս և Գրիգոր, մայր՝ Ազիզ, Դալիթի կինն՝ Մաթօ, Մովսէսի կինն՝ Մանէժաւ, որդի՝ Նօնի, դուստր՝ Սաբէդ, Գրիգորի կինն՝ Մարիամ, որդի՝ Յարութիւն:

14. Կալալի որդի՝ Գալուստ, կինն՝ Էլիսաբէդ, որդիք՝ Յակոբ և Մամուկ, դուստր՝ Մարիամ և եղբոր՝ Առաքելի այրի կինն՝ Աննա, որդի՝ Գիգօլ, դուստր՝ Մարթայ և Յակոբի կինն՝ Մարիամ:

15. Իսմայիլի որդի՝ Մարգիս, կինն՝ Մաթօ:

16. Մօսիկի որդի՝ Պէպան, մայր՝ Մարիամ:

17. Էլիզարի որդի՝ Յօհան, կինն՝ Անախանում:

18. Գլալամի որդի՝ Գրիգոր և եղբոր՝ Յարութիւնի այրի կինն՝ Մայեա:

19. Գարդաշի որդի՝ Աւազ, կինն՝ Մարթայ, որդի՝ Նիկի:

20. Ներսէսի որդի՝ երեցփոխ Աստուածատուր, կինն՝ Աննա, որդի՝ Յարութիւն, դուստր՝ Սալօնէ, Յարութիւնի կինն՝ Էլիսաբէդ, այլևս եղբոր Շահնազարի որդի՝ Մարգիս, կինն՝ Մայեա:

21. Շահօի որդի՝ Գալուստ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Լուարսաբ և Գրիգոր:

22. Գալուստի որդի՝ Կիրակոս, կինն՝ Մայեա, որդի՝ Նիկի, մայր՝ Մարմար:

23. Փարեմուզի որդիք՝ Գրիգոր և Բէժան, մայր՝ Մարիամ, Գրիգորի կինն՝ Թինաթին, Բէժանի կինն՝ Մարիամ:

24. Ջանօյի որդի՝ Յարութիւն, կինն՝ Մարթայ, մայր՝ Թինաթին:

25. Թէգեկի որդի՝ Ասատուր, կինն՝ Մարիամ:

26. Սօլօմանի որդի՝ Գրիգոր, կինն՝ Թինաթին, որդի՝ Յարութիւն, մայր՝ Բէթեվան:

27. Յարութիւնի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Թինաթին, դստերք՝ Սաբէդ, Մարմար:

28. Քօչինի որդի՝ կոյր Փիլիպպէ, որդի՝ Աբրամ, կինն՝ տրա՝ Հօռօմսիմ:

29. Ջուլիակ Մարտիրոսի որդիք՝ Մարտիւսան և Գիօրգի, Մարտիւսանի կինն՝ Բէթեվան, Գիօրգոյ կինն՝ Աննա:

30. Երեմի որդի՝ Յակոբ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յարութիւն և Մովսէս, Յարութիւնի կինն՝ Մարթայ:



ՔԻՍՏԱՈՒՐ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևելք

31. Յարութիւնի որդիք՝ Կիկօ, Էլիզար և Դավիթ, մայր՝ Քէթիկան, Կիկօյի կիճն՝ Մարթայ, որդի՝ Գիօրգի, դուստր՝ Թամար, Էլիզարի կիճն՝ Շուշան:

32. Փէլքրի որդի՝ Կիկօ և եղբոր՝ Հախօյի այրի կիճն՝ Մարիամ, յիշեալ այրի Կիկօի որդի՝ Դավիթ:

33. Մարգարի որդիք՝ Դաթ և Միրզայ, Դաթնի կիճն՝ Թամագ, Միրզի կիճն՝ Մայեա:

34. Սահակի որդի՝ Ջաքար և Գիօրգի, Ջաքարի կիճն՝ Թամար, որդի՝ Յարութիւն, Գիօրգու կիճն՝ Շուշան, մայր՝ Խօրէշան:

35. Արութիւնի որդի՝ Նիմի, կիճն՝ Մարթայ, որդի՝ Դաթ, մայր՝ Էլիսաբէդ:

36. Ըսքարի որդի՝ Թանդօ, կիճն՝ Նանօ:

37. Անանիայի որդի՝ Գլախա, կիճն՝ Մայեա, որդիք՝ Մարտի և Լաերթ, մայր՝ Խանգիւրվան:

38. Քէտէսի որդի՝ Եսուտի, կիճն՝ Մարիամ, որդի՝ Գլախա, դուստր՝ Մարգարիտ և եղբոր՝ Գօգիճի որդիք՝ Նօնի և Գիգօլ:

39. Գզրի որդի՝ Յարութիւնի որդիք՝ Կիկօ և Գիօրգի:

40. Բաբի որդիք՝ Գրիգոր, Կիրակոս և Պէպան, Գրիգորի կիճն՝ Մարիամ, որդի՝ Գիօրգի, Կիրակոսի կիճն՝ Մարիամ, Պէպանի կիճն՝ դարեջան:

41. Թաթուլի որդիք՝ Սահակ և Կիրակոս, Սահակի կիճն՝ Բարբարէ, Կիրակոսի կիճն՝ Աննա»²¹¹:

1905 թ. Մակար Մակարյանցը գյուղի տանուտերն էր, իսկ Նիկողայոս Մարտիրոսյան Փարենուզյանցը ընտրվել էր երեցփոխ²¹²:

Սբ. Աստվածածին եկեղեցի. լինելով հայաշատ բնակավայր, Քիսթաուրն ուներ իր եկեղեցին, որի կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ: Եկեղեցու մասին առաջին հիշատակություններից մեկը 1818 թվականից է: Այդ վավերագրում նշված է, որ շենքը փայտաշեն էր՝ կառուցված հասարակության միջոցներով²¹³: 1836 թ. եկեղեցին հիշված է Սբ.

Աստվածածին անվամբ, դարձյալ՝ փայտաշեն²¹⁴: Հետագա բոլոր վավերագրերում բազմիցս հիշվում է միևնույն անվամբ: 1852-53 թթ. եկեղեցին վերանորոգման կարիք ուներ: Այդ աշխատանքները նախատեսել էին իրականացնել թեմական գործակալի և տեղական իշխանների ուժերով²¹⁵: 1905 թ. մայիսի 2-ին ավագակները եկեղեցու բոլոր իրերը կողոպտում են²¹⁶: Դրա հետևանքով ծագում են անցանկալի բարոյություններ, մասնավորապես՝ «Յուսահատված տիրող անելանելի դրութիւնից ժողովուրդը, որ շատ ցաւալի է՝ ննջեցեալներին տանում է վրաց եկեղեցի, որովհետև միջոց չունի նորերը ձեռք բերել՝ պատարագ մատուցանելու»²¹⁷: 1912 թ. Թելավի հայոց Սբ. Գևորգ եկեղեցու երեցփոխին և միաբանությանը կարգադրվում է Քիսթաուրի հայոց եկեղեցուն տրամադրել մեկ սկիհ և այլ իրեր, որոնք նախատեսված էին եկեղեցական արարողությունների համար²¹⁸:

Եկեղեցին գործել է մինչև 1923 թ., ապա փակվել²¹⁹: Սբ. Աստվածածին եկեղեցին ցայսօր կանգուն է²²⁰:

Ճարտարապետություն. Եկեղեցին միանավ թաղածածկ հորինվածքով, արևելյան կողմում կիսաշրջանաձև եզրագծով բարձր բեմ-խորանով ու կից երկու ավանդատներով, երկու մուտքով (հարավից ու արևմուտքից), ինը լուսամուտներով (3-ական՝

214 Նույն տեղում, գ. 457, թ. 64:

215 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2207, թ. 6: Տե՛ս նաև՝ գ. 3166, թ. 4:

216 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1260, թ. 18:

217 Նույն տեղում:

218 Նույն տեղում, գ. 1260, թ. 18:

219 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, թ. 120-121:


220 Եկեղեցու մոտ է գտնվում Արուբյունով (Հարությունյան) Ալեքսիի տունը: Ընդհակառակը ենք հայտնում տանտիրոջը՝ մեզ ցույց տված աջակցության համար:

211 Նույն տեղում, գ. 2569, թ. 20:

212 Նույն տեղում, գ. 1260, թ. 2, 9:

213 Նույն տեղում, գ. 2569, թ. 20:

արևելյան ու հյուսիսային, 2-րդ հարավային, մեկը՝ արևմտյան ճակատներում), գլխավորապես աղյուսից ու գետաքարից, կրաշաղախով կառուցված շենք է: Երկթեք ծածկի տակ առնված կղմինդրապատ տանիքը ներքուստ պահում են երկու զույգ



ՔԵՓԵՓԵՔ. Սք. Աստվածածին եկեղեցու հասակագիծը

որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Հյուսիսային պատի մեջ իր ավանդական տեղում պահպանվել է մկրտարանի ավազանը: Եկեղեցու արտաքին չափերն են՝ 12,85 x 7,51 մ:

Քահանա. Տեր Խաչատուր Մելիքսեբյան (1789-1818 թթ.). ծնվել է 1762 թ., քին. ձեռնադրվել 1789-ին՝ Դոշավանքի Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից²²¹: Տեր Խաչատուրի որդին էր Առաքելը²²²:

1843 թ. գյուղը քահանա չունեւ²²³: 1883 թ. գյուղին հովվում էր Մատանի քահանան, սակայն վերջինս «...նչ միշտ ձեռնհաս կատարելոյ զօրմէնս նոցա»²²⁴:

1908-1910 թթ. նույնպես Քիսթաուրում քահանայագործում էր Մատանի քահանան՝ *Հովսեփ Տերտերյանցը*:

ՕԺԻՈ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևելք՝ Վերին Խողաշեն և Կողոթո գյուղերի միջև: Ախմետայի շրջանի գլխավոր բնակավայրերից է, ունի գյուղական խորհուրդ:

Հայերն Օժիոյում. հայերի գոյությունը վկայված է 1802 թ. մի փաստաթղթում²²⁵: 1818 թ. այստեղ բնակվելիս են եղել 4 հայ ընտանիք: Նրանք են՝

- «1. Ասլանի որդի՝ ջուլիակ Բանդի, կինն՝ Աննա, դստերը՝ Թինայ և Մարթա և Անախանում, մայր՝ Մարիամ:
- 2. Մենաբի որդի՝ Ափրիամ, կինն՝ Թամար, որդիք՝ Նինի և Գիորգի:
- 3. Փեւրբի որդի՝ Գախա, կինն՝ Սուսի, մայր՝ Թամար:
- 4. Գանջացի դալլաք Սարգիս, կինն՝ Նենե, որդիք՝ Իանե և Դաւիթ, դուստր՝ Սաբեդ»²²⁶:

1865 թ. Թելավի գավառի հայ բնակչություն ունեցող գյուղերի ցուցակում Օժիոն նշված է որպես հայ բնակիչ այլևս չունեցող բնակավայր²²⁷: Հետագա վավերագրերում գյուղը չի հիշվում:

221 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 20:
222 Նույն տեղում:

223 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1383, ք. 1:
224 Նույն տեղում, գ. 7727, ք. 1:
225 ԱԿԱԿ, տ. 1, ց. 471.
226 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 19: Ի դեպ, նույն քվականին գյուղից հեռացել էր գանձակեցի դալլաք Սարգսի ընտանիքը (նույն տեղում):
227 Նույն տեղում, գ. 3848, ք. 54:

ԳՈՒՐԶԱՆՆԻ ՇՐՋԱՆ

Գտնվում է Կախեթի կենտրոնական մասում՝ Ալազան և Իոր գետերի միջև: Նախկինում տարածքը հիմնականում մտնում էր Սղնախի գավառի կազմի մեջ, և միայն հյուսիսային մի փոքր մասն էր (Շաշիան, Կալաուր և Ուրիաթուրան գյուղերի շրջանը) գտնվում Թելավի գավառի մեջ: Սահմանակից է Վրաստանի Հանրապետության Թելավի, Լազոդեխի, Ղվարելի, Սագարեջոյի և Սղնախի շրջաններին: Շրջկենտրոնը Գուրջաան քաղաքն է: Տարբեր ժամանակներում տարածքի 22 բնակավայրերում տեղաբնիկ վրացիներից բացի բնակվել են նաև հայեր: Վերջիններս մեծամասնություն են կազմել միայն Վելիսցիխե գյուղում: Հայկական դպրոցներ գործել են Վելիսցիխե և Ուրիաթուրան (այժմ՝ Վազիսուրան) գյուղերում: Պատմական հուշարձաններից նշանավոր են Վելիսցիխե գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին ու զանգակատունը, Մուկուզան և Ուրիաթուրան գյուղերի եկեղեցիները և այլն:

ԱԳՐԱՄ (ՍԱԽԱՐԱԶԵ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 8-9 կմ հարավ-արևմուտք՝ ներկայիս Գուրջաանի շրջանի Ջիմիթ գյուղից 1 կմ արևմուտք:

Հայերն Ագրամում. հայերն այստեղ եղել են խիստ սակավաթիվ և եկեղեցի կամ սեփական քահանա չեն ունեցել: Հայ համայնքի գոյությունն Ագրամում վկայված է, օրինակ, 1845 թ.¹:

1874 թ. գյուղի (հիշվում է Ագրամի-Գարչիանի ձևով) բնակչությունը կազմում էր 1421 մարդ, որից 26-ը հայեր էին, մնացածը՝ վրացիներ²: Ագրամաբնակ հայերի մասին այլ տեղեկություններ չունենք:

ԱԽԱՇԵՆ (ԱԽԱԼՇԵՆԻ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հյուսիս-արևմուտք՝ Վելիսցիխե գյուղի հարավային կողմին գրեթե կից:

Սղնախի գավառի բազմամարդ գյուղերից է:

Հայերն Ախաշենում. հայերն այստեղ բնակություն են հաստատել առնվազն ԺԸ դարի վերջերից: Մուկուզանի, Վելիսցիխեի, նաև Չումլաղի հետ Ախաշենը հաճախ կազմում էր մի հասարակություն, և վավերագրերում այդ գյուղերի հայ բնակիչների թվաքանակը հիմնականում ցույց է տրված ընդհանուր գումարով:

Ազգատոհմեր. բացառիկ կարևորություն ունի 1862 թ. մի վավերագիր, որտեղ նշված են ախաշենցի 12 հայ գերդաստանների գլխավորների ստորագրությունները: Նրանց անուն-ազգանուններն են՝ Սիմոն Օմարյանց, Սարգիս Օմարյանց, Մարիամ Օմարյանց, Նասիսիդ Օմարյանց, Գլախ Դաթունյանց, Աղալո Դաթունյանց, Արրահան Դար-

բազյանց, Սարգիս Աթաբեզյանց, Իվանե Աթաբեզյանց, Սիմոն Ախալմոսուլյանց, Եզոր Թորոզյանց և Սարգիս Քոթյանց³:

1874 թ. գյուղի 1355 բնակիչներից հայեր էին 100-ը⁴, իսկ 1883 թ. նրանք ընդամենը 40 շունչ էին (25 ար. և 15 իգ.)⁵: 1908 թ. Ախաշենում հայերը կազմում էին 18 տուն՝ 108 բնակիչ (56 ար. և 52 իգ.)⁶:

Եկեղեցի. 1842 թ. ունեին փայտաշեն ծխական մի եկեղեցի⁷:

Քահանա. 1913 թ. քահանա էր առաջադրվել թեյալցի Հովսեփ Վախթանգյանը:

ԱՌԱՇԵՆԴԱ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևմուտք:

Հայերն Առաշենդայում. ստույգ հայտնի չէ, թե հայերը երբ են այստեղ հաստատվել, հավանական է՝ ԺԸ դարում: Հայ բնակչության թվաքանակը վավերագրերում գրեթե միշտ ցույց է տրված Ղանդաուրին կամ Քողալոյին միավորված գյուղախմբի հայերի թվի հետ: Միայն 1908 թ. մի փաստաթղթից երևում է, որ Առաշենդայում հայերը 11 տուն էին՝ 55 շունչ (29 ար. և 26 իգ.)⁸:

Առաշենդայի հայերը երբևէ եկեղեցի կամ սեփական քահանա չեն ունեցել:

ԲԱԿՈՒՐՑԻԽԵ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հարավ-արևելք՝ Գուրջաան-Սղնախ մայրուղու վրա:

3 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3841, ք. 229:

4 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.

5 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, ք. 23:

6 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

7 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, ք. 95:

8 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

1 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, ք. 54-55:

2 “Кавказский календарь на 1886 г.”, Тифлис, 1885, с. 118.

Հայերը Բակուրցիխեում. սակավաթիվ հայ բնակչություն ունեցող գյուղերից (օրինակ՝ Վաքիր, Կարդանախ) մեկն էր, որոնք, մոտ գտնվելով Անագա գյուղին, միավորված էին վերջինիս հետ: Վավերագրերում գյուղի հայերի թիվը հաշվված է Անագայի և միավորված մյուս գյուղերի հետ: Երբեմն էլ Բակուրցիխեն միավորված է եղել Գուրջասնի հետ (ի թիվս Վեջին և Կոլակ գյուղերի): Դա պայմանավորված է եղել նրանով, թե որտեղի քահանայի հովվությանն էր հանձնված գյուղը:

Հայերն այստեղ եկեղեցի չեն ունեցել, քահանան էլ գրեթե միշտ գալիս էր Անագայից, Գուրջասնից կամ էլ Սղնախ քաղաքից:

Բակուրցիխեն վրացաբնակ խոշոր գյուղերից էր, և հայերը չնչին մաս էին կազմում: Գյուղում հայերի առկայության մասին առաջին անգամ հանդիպում ենք 1802 թ.⁹: 1874 թ. 1335 բնակիչներից հայեր էին 69-ը¹⁰: 1894 թ. բակուրցիխեաբնակ հայերը 12 տուն էին¹¹: 1914 թ. գյուղն ուներ 2016 բնակիչ¹². հայերը, անշուշտ, կազմում էին աննշան մասը:

ԳՈՒՐԶԱՆՆ

Տեղադրություն. ներկայումս համանուն շրջանի կենտրոնն է, գտնվում է Թելավ-Սղնախ մայրուղու վրա: Կախեթի նշանավոր բնակավայրերից է:

Հայերը Գուրջասնում. առնվազն ԺԸ դարի վերջերին այստեղ հաստատվել են արցախցի ու գանձակեցի փոքրաթիվ հայեր: ԺԹ դարի կեսերին նրանց մեծ մասն արդեն մոռացության էր մատնել մայրենի լեզուն. «...զիտեն ոմանք զլեզու Հայոց՝ զի գաղթականք են յԱրցախայ և ի Գանձակա»¹³: Ի տարբերություն հարևան բնակավայրերի՝ Գուրջասնում հայերն ավելի մեծաթիվ էին, բայց ողջ բնակչության հաշվով փոքրամասնություն էին: Այդ երևում է, օրինակ, 1874 թ. մարդահամարից. 3656 բնակիչներից հայեր էին 277-ը¹⁴:

Վիճակագրություն. հայ բնակչության թվաքանակի փոփոխություններին վերաբերող վիճակագրական տվյալների պատկերը հետևյալն է.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1885 ¹⁵		120	100	220
1890 ¹⁶		137	120	257
1891 ¹⁷		141	122	263
1894 ¹⁸	12			
1897 ¹⁹		165	101	266

9 AKAK, т. 1, с. 473.

10 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.

11 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3339, ք. 3:

12 “Кавказский календарь на 1915 г.”, с. 95.

13 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 317:

14 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.

15 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3879, ք. 225:

16 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, ք. 141:

17 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, ք. 142:

18 Նույն տեղում, գ. 3339, ք. 3:

19 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 138-139:

1898 ²⁰	170	102	272
1899 ²¹	162	106	268
1902 ²²	177	124	301
1906 ²³	197	117	314
1908 ²⁴	46	192	104
1912 ²⁵	210	194	404

1914 թ. Գուրջասնն ուներ 4571 բնակիչ²⁶: Նկատի առնելով աղյուսակում ներկայացված տվյալների շարժը՝ կարծում ենք, այդ թվի շուրջ 1/11 մասը հայեր էին:

Եկեղեցի. 1850-ական թվականներին գուրջասնաբնակ հայերը կառուցել են փայտաշեն եկեղեցի և օծել Սբ. Սարգսի անվամբ: 1857-1883 թթ. վավերագրերում եկեղեցին բազմիցս հիշվում է²⁷: Այնուհետև քայքայված հին եկեղեցու տեղում կառուցվել է նոր եկեղեցի և օծվել Սբ. Սարգիս անվամբ. «Այս գյուղի եկեղեցին փտած փայտից լինելով, թեմիս ս. Առաջնորդի՝ 1883-ին այստեղ եկած ժամանակ, Սիմեոն Մելիք-Նուբարեանց ցանկությամբ յայտնեց նոր, քարաշեն եկեղեցու շինութեան ձեռնամուխ լինելու, սրբազանի յորդորանքը լսելով և նրա օրհնութիւնը ընդունելով: Այժմս այդ պարոնի աշխատութեամբ և գիւղի ժողովրդի նուիրատութեամբ կառուցուած կանգնած է քարաշեն Ս. Սարգիս անունը կրող եկեղեցի»²⁸: Եկեղեցին բազմիցս հիշվում է նաև Ի դարի մի շարք վավերագրերում:

Քանդել են խորհրդային տարիներին:

Քահանա. Գուրջասնում քահանայագործած հոգևորականներից հայտնի են Աբրահամ Տեր-Մելիքսեթյանը (1844)²⁹, Անդրեաս Մելքոնյանցը (1877)³⁰ և Հարություն Ազնավուրյանը (1919)³¹:

ԶԻԱՐ

Գտնվում է Գուրջասն քաղաքից 4 կմ հարավ-արևմուտք՝ Քողալո-Գուրջասն խճուղու մեջտեղում՝ լեռնային վայրում:

Այստեղ, ամենայն հավանականությամբ, հայերը հաստատվել են ԺԸ դարի կեսերին: Սակավաթիվ հայերի գոյությունը գյուղում վկայված է 1802 թ.³², ապա նաև 1845 թ. վավերագրերում³³: Հավանաբար նրանք եղել են միայն մի քանի տուն, երբևէ եկեղեցի չեն ունեցել, քահանաներն էլ եկել են Գուրջասն կամ Քողալո գյուղերից:

20 Նույն տեղում, գ. 3897, ք. 160:

21 Նույն տեղում, գ. 3905, ք. 243:

22 Նույն տեղում, գ. 3907, ք. 14-15:

23 Նույն տեղում, գ. 3915, ք. 8:

24 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

25 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, ք. 53-54:

26 “Кавказский календарь на 1915 г.”, с. 113.

27 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3516, ք. 81: Տե՛ս նաև՝ գ. 3870, ք. 76:

28 «Նոր-Դար», 1888, № 109, էջ 1:

29 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2423, ք. 2:

30 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 160:

31 ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 136, ք. 3:

32 AKAK, т. 1, с. 474.

33 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, ք. 54-55:

ԿԱՆԱՈՒՐ (ՂԱՆԱՈՒՐ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հյուսիս-արևմուտք՝ Թելավ-Գուրջաան մայրուղու վրա:

Հայերը Կալատում. վավերագրերում Կալատը գյուղում հայ բնակչության ներկայությունը վկայված է ԺԹ դարի սկզբներից: Մասնավորապես 1802 թ. գյուղն արդեն ուներ հայ բնակիչներ³⁴: Վերջիններս երբևէ եկեղեցի չեն ունեցել: 1818-ին կազմված վավերագրում նշված է, որ կալատարբնակ 8 տուն հայերից երկուսը ծագումով դարաբաղի էին, 1-ը՝ սղնախիցի (մյուսների որտեղացի լինելը նշված չէ)³⁵:

Վիճակագրություն. 1874 թ. վիճակագրական մի տվյալից երևում է, որ գյուղի 1784 բնակիչներից հայեր էին միայն 31-ը³⁶:

Կալատարբնակ հայերի թվաքանակի փոփոխություններին վերաբերող վիճակագրական տվյալների պատկերը հետևյալն է.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ³⁷	8	18	12	30
1857 ³⁸		14	7	21
1858 ³⁹		13	7	20
1860 ⁴⁰		13	7	20
1861 ⁴¹		26	18	44
1863 ⁴²		26	18	44
1864 ⁴³		27	17	44
1865 ⁴⁴	7	26	18	44
1867 ⁴⁵		28	18	46
1870 ⁴⁶		16	13	29
1873 ⁴⁷		14	9	23
1875 ⁴⁸		14	9	23
1876 ⁴⁹		16	9	25
1877 ⁵⁰		16	9	25
1878 ⁵¹		16	10	26
1880 ⁵²		18	8	26
1881 ⁵³		18	8	26
1882 ⁵⁴		19	9	28
1883 ⁵⁵		17	5	22

34 AKAK, т. 1, с. 472.
 35 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 15:
 36 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.
 37 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 15:
 38 Նույն տեղում, գ. 3830, ք. 130-131:
 39 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:
 40 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 41 Նույն տեղում, գ. 3839, ք. 6:
 42 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:
 43 Նույն տեղում, գ. 3846, ք. 14:
 44 Նույն տեղում, գ. 3848, ք. 23-24, 54:
 45 Նույն տեղում, գ. 3851, ք. 4:
 46 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:
 47 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:
 48 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:
 49 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:
 50 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:
 51 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:
 52 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:
 53 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:
 54 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:
 55 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:

1899 ⁵⁶	14	10	24
1900 ⁵⁷	14	11	25
1901 ⁵⁸	14	12	26

1914 թ. Կալատում ուներ 2058 բնակիչ⁵⁹, ուր եթե հայեր եղել են, ապա՝ սակավաթիվ:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. կազմված կալատարբնակ հայերի հետևյալ անվանացանկը.

- «1. Վաճար Միրզայ և Բուպայ Յոնանեան, Միրզայի կինն՝ Մարգամ, որդիք՝ Մելքոն, Գասպար, և Բաղդասար:
- 2. Ղարաբաղի Միրզայ, կինն՝ Մարիամ, դստերք՝ Էլիսաբեդ և Մագթաղին:
- 3. Սղնախիցի Գրիգորի որդի՝ Մելքո, կինն՝ Մարմար, դուստր՝ Շուշան:
- 4. Պապայի որդի՝ Գիօզի, կինն՝ Ռուսուղան, որդիք՝ Մարգիս, Պետրե և Աբրամ, մայր՝ Բարբարե:
- 5. Աղամայ որդի՝ ներկարար Յարութիւն, կինն՝ Աննա և իւր բեռորդիք՝ Յական և Աբրամ Յարութիւնեան:
- 6. Իւանե Ղեբրի խորթ որդին Մաթե, կինն՝ Էլէնե:
- 7. Աւագի որդի՝ Պողոս, կինն՝ Բարբարե:
- 8. Ղարաբաղի Ասրոյ այրի կինն՝ Չարի, որդիք՝ Էմիր և Գարբիել»⁶⁰:

ԿԱՃՐԵԹ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 600 մ միջին բարձրության վրա:

Հայերը Կաճրեթում երբևէ եկեղեցի կամ սեփական քահանա չեն ունեցել: Նրանց հովվել են կամ Ղանդաուրի, կամ Քողալոյի, իսկ երբեմն էլ ավելի հեռու վայրերից հրավիրված քահանաները:

1874 թ. վիճակագրական մի աղբյուր վկայում է, որ Չիար-Կաճրեթ գյուղն ուներ 1356 բնակիչ, որից միայն 9 շունչը հայեր էին, մնացածը՝ վրացիներ⁶¹: 1908 թ. հայերը 17 տուն էին՝ 69 շունչ (41 ար. և 29 իգ.)⁶²: 1914 թ. գյուղն ուներ 1558 բնակիչ⁶³ (պարզ է, որ մեծագույն մասը վրացիներ էին):

ԿԱՐԴԱՆԱԽ (ԿԱՐԴԱՆԵՆ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք՝ Գուրջաան-Սղնախ մայրուղու վրա:

Հայերը Կարդանախում. հայ գաղթականության գոյությունն այստեղ արձանագրված է արդեն 1802 թ., բայց կասկածից վեր է, որ նրանք Կարդանախում հաստատվել են ավելի վաղ ժամանակներում: 1849 թ. Հովհաննես վարդապետ Արշարունին, այցելելով գյուղ, այն նկարագրել է հետևյալ կերպ. «Կարդանեխ՝ է զիւղ իշխանացն Վրաց երկայնաձև դրիւք և այգեւէտ և զինին գովելի. տունք հայոց 40, ամենեքին հողագործք և այգեգործք, ստրուկք են

56 Նույն տեղում, գ. 3903:
 57 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:
 58 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:
 59 “Кавказский календарь на 1915 г.”, с. 132.
 60 ՀԱԱ, ֆ. 89, ց. 1, գ. 2569, ք. 15:
 61 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.
 62 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:
 63 “Кавказский календарь на 1915 г.”, с. 138.

իշխանաց և ունին զմի անշուք փայտեայ եկեղեցի»⁶⁴:

1840-ական թվականներին հիշվում է կարդանախցի Հովհաննես Ռոստոմյան Ղարաբեգյանցը, որը ցանկություն էր հայտնել մտնել հոգևոր կոչման մեջ: Նրա խնդիրքը բավարարվել էր, և 1848 թ. ձեռնադրվել էր քահանա Սղմախի գյուղերի համար⁶⁵:

Գրեթե բոլոր վավերագրերում Կարդանախի հայ բնակչության թվաքանակը հաշվված է մերձակա Անագա, Վաքիբ և Բակուրցիխե գյուղերի հետ և անհնար է որոշել, թե միայն Կարդանախում որքան հայ էր բնակվում: Հայտնի է, սակայն, որ գյուղի բնակչության թվի մեջ հայերն աննշան մաս էին կազմում: Այդպես էր, օրինակ, 1874 թ., երբ 3465 բնակիչ ունեցող Կարդանախում հայեր էին միայն 34-ը⁶⁶: 1914 թ. արդեն գյուղի բնակչությունը հասել էր մինչև 4661 մարդու⁶⁷, որտեղ հայերի թիվը, անշուշտ, աննշան էր:

Չքաղմունք. զինու արտադրությամբ մշտապես հայտնի է եղել ողջ Կախեթը, բայց առանձնապես նշանավորներից էր Կարդանախ գյուղը. «Կախեթի այդ գիւղերի մէջ ամենից յայտնի և «արիստոկրատ» գիւղը Կարդանախն է, որտեղ պատրաստում է ամենալա զինի, որտեղ գտնում է կոմս Շերեմետևի կալածքը՝ հիանալի տնով ու հարուստ, ճոխ, գեղեցիկ այգիով: Շերեմետևը ունի իւր կալածքում զինի պատրաստելու համար մի նորածն գործարան, որտեղ պատրաստում են երևելի զինիներ...»⁶⁸:

Եկեղեցի. հիշվում է 1842, 1849 թթ.՝ որպես ծխական, անշուք և փայտաշեն եկեղեցի⁶⁹:

ԿՈՒԼԱԿ

Գտնվում է Բակուրցիխե գյուղի մոտ:

Գաղթական հայերն այստեղ հիշվում են 1802 թվականից⁷⁰: Եկեղեցի չեն ունեցել. հաճախել են հարևան գյուղերի հայոց եկեղեցիները: Քահանաները ևս եկվոր էին: Վավերագրերի մեծ մասում կոլակցի հայերի թիվը ցույց է տրված միավորված մյուս գյուղերի հետ (Վեջին, Գուրջասան, Բակուրցիխե) և դժվար է որոշել, թե գյուղում հայերը քանի շունչ էին: Հայտնի է, որ 1894 թ. կոլակաբնակ հայերը 5 տուն էին⁷¹, իսկ 1908-ին՝ 2 (7 ար. և 5 իգ.)⁷²:

ՄԵԼԱԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հարավ՝ Առաշենոյա և Չալաուրբան գյուղերի միջև:

64 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 317:

65 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, ք. 1, 15:

66 «Кавказский календарь на 1886 г.», с. 118.

67 «Кавказский календарь на 1915 г.», с. 136.

68 **Ղազարեանց Ե.**, Կախեթ և Շիրակ. – «Մուրճ», 1891, № 7-8, էջ 871:

69 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, ք. 3805, ք. 94: «Բազմավեպ», 1851, № 20, էջ 317:

70 AKAK, т. 1, с. 473.

71 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, ք. 3339, ք. 3:

72 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, ք. 559, ք. 22:

Արխիվային աղբյուրներում հայերի ներկայությունն այստեղ վկայված է միայն մեկ անգամ՝ 1802 թ.⁷³:

ՄՈՒԿՈՒԶԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հյուսիս-արևմուտք՝ Վելիսցիխեի արևմտյան կողմին գրեթե կից:

Կախեթի հայտնի գյուղերից է:

Հայերը Մուկուզանում. գավառի շատ բնակավայրերի պես այստեղ էլ հայերի հաստատման առավել հավանական ժամանակը ԺԸ դարի կեսերն են, թեև ավելի վաղ ժամանակներում էլ նրանց այդտեղ լինելը չի բացառվում: Գյուղում հայ բնակիչների ներկայության առաջին վկայություններից մեկը 1802 թ-ից է⁷⁴:

Վիճակագրություն. մինչև ԺԹ դարի 80-ական թվականները Մուկուզանի հայ ծխերը միավորված են եղել Վելիսցիխեի հետ: Այդ է պատճառը, որ վիճակագրական շատ տեղեկատվություն առանձին-առանձին չի երևում ո՛չ Մուկուզանի, ո՛չ Ախաշենի և ո՛չ էլ Վելիսցիխեի հայ բնակչության թվաքանակը: Բոլոր տեղեկագրերում դրանք գումարված են իրար: Մուկուզանի հայերի թիվը ցույց է տրված միայն հետևյալ փաստաթղթերում.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1862 ⁷⁵	25			
1883 ⁷⁶		78	82	160
1885 ⁷⁷		76	83	159
1890 ⁷⁸		57	42	99
1891 ⁷⁹		59	49	108
1894 ⁸⁰	36	89	85	174
1897 ⁸¹		91	83	174
1898 ⁸²		93	85	178
1902 ⁸³		110	103	213
1908 ⁸⁴	42	113	105	218
1912 ⁸⁵		113	105	218

1914 թ. Մուկուզանն ուներ 596 բնակիչ⁸⁶: Աղյուսակի տվյալների աճի շարժից ակնհայտ է, որ այս թվի առնվազն 1/3-ը հայեր էին:

Ազգատոհմեր. 1862 թ. մի վավերագրում պահպանվել են մուկուզանի 24 հայ գերդաստանների գլխավորների ստորագրությունները: Նրանց անուն-

73 AKAK, т. 1, с. 473.

74 Նույն տեղում, էջ 472:

75 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, ք. 3841, ք. 229:

76 Նույն տեղում, ք. 3875, ք. 23:

77 Նույն տեղում, ք. 3877, ք. 33:

78 Նույն տեղում, ք. 3887, ք. 141:

79 Նույն տեղում, ք. 3889, ք. 140:

80 Նույն տեղում, ք. 3896, ք. 165-166:

81 Նույն տեղում, ք. 3899, ք. 138-139:

82 Նույն տեղում, ք. 3897, ք. 160:

83 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, ք. 3907, ք. 14-15:

84 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, ք. 559, ք. 22:

85 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, ք. 3919, ք. 53-54:

86 «Кавказский календарь на 1915 г.», с. 161.

ազգանուններն են՝ Իմերո Սաքոյանց, Հարություն Ծամուրյանց, Նասդիդ Հակոբյանց, Իվանե Աթոյանց, Գիորգի Մանթաշյանց, Բաբայե Տիդյանց, Գևորգ Տիդյանց, Սարգիս Հակոբյանց, Նաթել Գիգոյանց, Գևորգ Գիգոյանց, Իվանե Մանթաշյանց, Սարգիս Գորագյանց, Նինո Մանթաշյանց, Մատի Ախալմոսուկյանց, Իվանե Աջափյանց, Գևորգ Տերտերյանց, Էլինե Ծամուրյանց, Սիմոն Առաքելյանց, Մատի Օհաննեսյանց, Գիորգի Փարսադանյանց, Մովսես Առաքելյանց, Նասդիդ Հայկյանց, Նասդիդ Պասայանց, Հարություն Վարդանյանց⁸⁷:

Եկեղեցի. գյուղում հայոց եկեղեցու գոյությունն արձանագրված է 1839 թ.⁸⁸: Անշուշտ, սա հիմնադրման տարին չէ, և այն ավելի վաղ ժամանակներում է կառուցված եղել: 1843 թ. ապրիլի 9-ին եկեղեցին այրվել էր: Այդ մասին հոգևոր իշխանություններին հունիսի 5-ին հայտնել էր ծխական քահանա Սարգիս Սկրտումյանը⁸⁹: Մինչև 1874 թ. վավերագրերում եկեղեցին հիշվում է որպես փայտաշեն կառույց՝ Սբ. Աստվածածին անվամբ⁹⁰, այնուհետև 1875-ից հիշատակվում է Սբ. Համբարձման⁹¹ անունով (դարձյալ փայտաշեն): 1874-1875 թթ. եկեղեցին, ըստ ամենայնի, նորոգվել կամ հիմնովին վերականգնվել է, ապա օծվել, որի արդյունքն էլ եղել է անվանափոխությունը:

1902 թ. Մուկուզանի հայ հասարակությունը մի համախոսակամով հայտնել էր քայքայված փայտաշեն եկեղեցին հիմնովին վերակառուցելու մտադրության մասին: Նախատեսում էին կառուցել նոր եկեղեցի՝ հնի հորինվածքով: Նոր կառույցը պետք է ունենար 10,5 արշին երկարություն, 9 արշին լայնություն (7,45 x 6,40 մ) և 5,5 արշին (3,90 մ) բարձրություն: Ըստ նախահաշվի՝ պահանջվող ծախսը կազմում էր 220 ռ.⁹²: 1907 թ. դրությամբ Սբ. Համբարձման եկեղեցին դեռևս մնում էր քայքայված վիճակում⁹³: Նոր եկեղեցու կառուցման աշխատանքների ողջ ծանրությունն ստանձնել էր մուկուզանցի Գևորգ Հովսեփյան Սկիրավյանցը: Նրան աջակցել էր ողջ գյուղը: Գործին առնչվող վավերագրերից մեկում կարդում ենք. «...քաջ յայտնի է մի հայ համայնքի աննախանձելի ու վերին աստիճանի անմխիթար վիճակը. մի բուռն ժողովուրդ մօտաորապես 42 տուն, մոռացած մայրենի լեզուն ու ազգային սովորությունները սպառնում էր ընդմիջտ անջատուել մեր առաքելական ս. եկեղեցուց ու հաւատից, թէև շատ ցաւալի է, բայց և այնպէս դառն ճշմարտութիւն: Մոյն մեր տխուր վիճակը, թէև բացատրվում է մեր աննպաստ միջավայրով ու բացառիկ դրութեամբ, սակայն

պետք է ի նկատի ունենալ և այն հանգամանքը, որ մենք, գտնվելով նիսբապես անապահով կացութեան մէջ, զուրկ էինք հնարաւորութիւնից իրագործելու մեր շատերիս համար փայլալայտ ու ցանկալի դիտարութիւնը՝ ունենալ գիղամիջում մի սեպհական կարգին եկեղեցի, ուր հնարաւոր լինէր ստանալ հոգևոր մխիթարութիւն ու սփոփանք: Այն՝ ինչ-որ ամբողջ հասարակութեան ուժից վեր էր և անիրագործելի, յանձն առաւ ու իրականացրեց մեր համագիղացի Գէորգ Յովսէփեան Սկիրավեանցը, որ, լինելով ճշմարիտ բարեպաշտ ու ջերմեռանդ քրիստոնեայ, իր շափաւոր կարողութիւնից չխնայեց վերջին կոպէկն անգամ, որի շնորհիւ այսօր ի պարծանս նրա ունինք մի գեղեցիկ ու կոկիկ եկեղեցի: Ուստի և, ի նկատի ունենալով Գէորգ Սկիրավեանցի մեր հասարակութեանը մատուցած սոյն անգնահատելի ծառայութիւնը, խոնարհաբար խնդրում ենք արժանապատիւ տէր գործակալ միջնորդել ու աջակցել ուր հարկն է, որպէսզի Եղիսաբէթ ու Գէորգ Սկիրավեանց անուսինները ի տրիտուր նրանց բարեգործութեանց իրաւունք ունենան իւրեանց մահից յետոյ թաղուիլ հէնց եկեղեցում, որով լիովին կատարած կլինենք մեր հայ

ՄՈՒԿՈՒԶԱՆ. Սբ. Համբարձման եկեղեցու հատակագիծը

հասարակութեան ցանկութիւնն ու իղձը, որի համար և ստորագրում ենք. 1910 թ. յուլիսի 1-ին, ի գ. Մուկուզան»⁹⁴: Սկիրավյանցները եկեղեցու զավթում թաղվելու իրավունքն ստացել էին 1911 թ.⁹⁵: Մինչ այդ հին ավերակ եկեղեցու հիմքի վրա կառուցված եկեղեցին արդեն օծվել էր (1910 թ., 18 մայիսի)⁹⁶: Նորաշեն եկեղեցու բացման հանդեսին ներկա էին գտնվել բազմաթիվ հայեր նաև հարևան գյուղերից. «Մուկուզանի գիղի հայոց եկեղեցու օրհնութիւնը կայացել է շատ շքեղ: Եկեղեցի շինող Գիօրգի Սկերվալիան հրաւիրել էր շատ քահանաների և ժողովրդի: Նա իր հաշուով ճաշ էր տուել 400 հոգու...»⁹⁷: Կառույցի վրա ծախսվել էր ավելի քան 4000 ռուբլի⁹⁸: Եկեղեցու կառուցման փաստին լավատեղյակ էր նաև Վեհափառ հայրապետը⁹⁹:

87 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3841, ք. 229:

88 Նույն տեղում, գ. 457, ք. 26-27:

89 Նույն տեղում, գ. 1365, ք. 1:

90 Նույն տեղում, գ. 3864, ք. 115-116:

91 Նույն տեղում, գ. 3866, ք. 92:

92 Նույն տեղում, գ. 3421, ք. 2:

93 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 67:

94 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 556, ք. 90:

95 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 49:

96 Նույն տեղում, գ. 556, ք. 65, 89:

97 «Մշակ», 1910, № 177:

98 «Հորիզոն», 1910, № 139, էջ 2: Տես նաև՝ «Тифлисский листок», 1910, № 144, с. 2.

99 «Արարատ», 1911, էջ 617:



ՄՈՒԿՈՒԶԱՆ. Սբ. Համբարձման եկեղեցու տեսքը հարավ-արևելքից, հատված հարավային ճակատից, ներքին տեսքը դեպի արևմուտք և 1988 թ. տեղում՝ շինադրի մեջ, մեր հայտնաբերած շինարարական արձանագրությանը բեկորը

Եկեղեցու գավթում (բակում) 1914 թ. փետրվարի 11-ին ամփոփվել է Թովմա Ջաքարյան Թուշմալյանցի մարմինը¹⁰⁰:

1923 թ. եկեղեցին փակվել է, իսկ նույններից օգտագործվել որպես ընթերցարան¹⁰¹:

Ճարտարապետություն. Սբ. Համբարձման եկեղեցին ցայսօր կանգուն է: Միանավ, թաղածածկ հորինվածքով շենք է: Երկթեք ծածկի տակ առնված թաղը ներքուստ պահում են չորս գույգ բոլորածև հաստահեղույս որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Արևելյան կողմում կիսաշրջանաձև եզրագծով խորանն է, որի կենտրոնում պահպանվում է սեղանի վեմ քարը: Չունի ավանդատներ:

Երեք մուտքերը բացված են արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներից: Թվով 6 դեպի ներս լայնացող լուսամուտները (2-ական՝ հարավային և հյուսիսային, մեկական՝ արևմտյան ու արևելյան ճակատներից) հեռու են բավարար լուսավորությունն ապահովելուց: Եկեղեցին կառուցված է գրվաքարապես աղյուսով ու անմշակ քարով, կրաշաղախով: Արտաքին չափերն են՝ 22,80 x 8,70 մ:

Վիճակը. 1988 թ. մեր այցելության ժամանակ եկեղեցու ներսում՝ քարակույտերի մեջ գտանք վերին մասից կտորված արձանագիր մարմարե սալիկ: Ամենայն հավանականությամբ՝ այն ագուցված է եղել եկեղեցու արևմտյան ճակատում և հանվել էր վերջին տարիներին: Երկլեզվյան արձանագրությունը միևնույն բովանդակությամբ փորագրված է եղել սկզբում հայերեն (պահպանվել է

100 "Кавказ", 1914, № 34.

101 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, ք. 75:

չնչին մասը), ապա վրացերեն: Վիմագրի հնգատող վրացագիր հատվածի վերծանությունը հետևյալն է.

[ցե] ցკლეხისა ავაშენეთ (უ)ძველებმა ცოლქ- მარმა | ვიორვი ოსევეს, ღიზამ | მკერავის - შვილი | 1 მარია/მობის თვის 1909.

Թարգմ. Այս եկեղեցին կառուցեցինք անժառանգ ամուսիններ Գիորգի Օսեփիչս [և] Լիզա Սկերավիչիլին, 1 նոյեմբերի 1909:

Ծանոթ. ի դեպ, Սկերավյան կամ Սկերավիլի ազգանվան հիմքը վրացերեն մկերավի = դերձակ բառն է:

Քահանա. 1843 թ. ծխատեր քահանան էր *Սարգիս Սկրտումյանը*¹⁰²:

1913 թ. առաջադրվել էր Մուկուզան և Ախաշեն գյուղերի համար քահանա ձեռնադրել թելավցի *Հովսեփ Վախթանգյանին*¹⁰³:

ՇԱՇԻԱՆ (ՇԱՆՇԻԱՆ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հյուսիս-արևմուտք՝ Թելավ-Գուրջաան մայրուղու մեջտեղում՝ Ուրիաթուրան (այժմ՝ Վազիստուրան) գյուղին գրեթե կից:

Հայերը Շաշիանում. հավանական է, որ Շաշիանում հայերը հաստատվել են ԺԸ դարի վերջերին, բայց վավերագրերում նրանց ներկայությունն այստեղ վկայված է 1802 թվականից¹⁰⁴:

Ինչ վերաբերում է գյուղի բնակչության թվի մեջ հայերի տոկոսին, ապա, հիմնվելով թեկուզ միայն 1874 թ. մարդահամարի տվյալների վրա, երբ 1378 շնչից հայ էին 43-ը¹⁰⁵, կարելի է եզրակացնել, որ Շաշիանը գրեթե վրացաբնակ էր:

Վիճակագրություն. շաշիանաբնակ հայերի թվաքանակը տասնամյակներ շարունակ գրեթե անփոփոխ է մնացել: Վիճակագրական տեղեկագրերում նրանց քանակը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ¹⁰⁶	6	15	12	27
1857 ¹⁰⁷		20	15	35
1858 ¹⁰⁸		20	16	36
1860 ¹⁰⁹		20	16	36
1861 ¹¹⁰		23	21	44
1862 ¹¹¹		23	22	45
1863 ¹¹²		21	21	42
1864 ¹¹³		21	18	39
1865 ¹¹⁴	6	20	15	35

102 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1365, թ. 1:
 103 «Արարատ», 1913, էջ 695: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 861, թ. 1:
 104 АКАК, т. I, с. 472.
 105 "Кавказский календарь на 1886 г.", с. 118.
 106 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 15:
 107 Նույն տեղում, գ. 3830, թ. 130-131:
 108 Նույն տեղում, գ. 3823, թ. 129-130:
 109 Նույն տեղում, գ. 3833, թ. 5:
 110 Նույն տեղում, գ. 3839, թ. 6:
 111 Նույն տեղում, գ. 3836, թ. 7:
 112 Նույն տեղում, գ. 3843, թ. 46-47:
 113 Նույն տեղում, գ. 3846, թ. 14:
 114 Նույն տեղում, գ. 3848, թ. 23-24, 54:

1867 ¹¹⁵	22	18	40
1870 ¹¹⁶	27	24	51
1873 ¹¹⁷	25	24	49
1874 ¹¹⁸	26	18	44
1875 ¹¹⁹	26	20	47
1876 ¹²⁰	27	20	47
1877 ¹²¹	27	19	46
1878 ¹²²	28	22	50
1880 ¹²³	27	21	48
1881 ¹²⁴	28	21	49
1882 ¹²⁵	28	20	48
1883 ¹²⁶	27	18	45
1889 ¹²⁷	26	17	43
1900 ¹²⁸	28	19	47
1901 ¹²⁹	27	18	45

1914 թ. գյուղն ուներ 1701 բնակիչ և, հայերի թիվն էլ ավելի չնչին էր¹³⁰:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. կազմված բնակիչների հետևյալ անվացուցակը.

- «1. Մամասի որդի՝ Թաթոյի այրի կինն՝ Մարթայ, որդի՝ Աբրամ:
- 2. Մամասի որդի՝ Դաիթ, կինն՝ Թինայ, որդի՝ Գախա, դստերը՝ Քեթո և Բարբարե:
- 3. Սիմոնի որդիք՝ Նինիայ և Սաթո, Նինիայի կինն՝ Էթեր, որդիք՝ Սոսի, Աբրամ և Սիմոն, Սաթոյի կինն՝ Խօրեշան, որդիք՝ Աբրամ և Գախա:
- 4. Երևանցի դոնդաղսազ Վարդան, կինն՝ Էլիսաբեդ:
- 5. Ղարաբաղցի ջուլիակ Յոհաննես, կինն՝ Մայի, որդի՝ Ռօստոմ, դուստր՝ Թիկօ:
- 6. Սիմոնի որդի՝ Սօլոման, կինն՝ Դարեշան, որդի՝ Իսակ, դստերը՝ Աննա և Խօրեշան¹³¹:

Եկեղեցի. սակավաթիվ շաշիանաբնակ հայերը երբևէ չեն ունեցել իրենց եկեղեցին և հաճախել են համարյա կից Ուրիաթուրան գյուղի հայոց եկեղեցին:

Քահանա. գյուղին հովվում էին Ուրիաթուրանի քահանաները:

ՉԱԼԱՌԻԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ՝ Թբիլիսի-Գուրջաան մայրուղու ձախ կողմում:

Վրացաբնակ այս գյուղում հայերի ներկայության մասին արխիվային վավերագրերում հիշատակվում է միայն մեկ անգամ՝ 1802 թ.¹³²:

115 Նույն տեղում, գ. 3851, թ. 4:
 116 Նույն տեղում, գ. 3857, թ. 62-63:
 117 Նույն տեղում, գ. 3862, թ. 51:
 118 Նույն տեղում, գ. 3864, թ. 35:
 119 Նույն տեղում, գ. 3866, թ. 7:
 120 Նույն տեղում, գ. 3868, թ. 6:
 121 Նույն տեղում, գ. 3869, թ. 3:
 122 Նույն տեղում, գ. 3870, թ. 57:
 123 Նույն տեղում, գ. 3872, թ. 2:
 124 Նույն տեղում, գ. 3873, թ. 2:
 125 Նույն տեղում, գ. 3874, թ. 2:
 126 Նույն տեղում, գ. 3875, թ. 22:
 127 Նույն տեղում, գ. 3903:
 128 Նույն տեղում, գ. 3905, թ. 8:
 129 Նույն տեղում, գ. 3906, թ. 2:
 130 "Кавказский календарь на 1915 г.", с. 210.
 131 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 15:
 132 АКАК, т. I, с. 473.

ՉՈՒՄԼԱՂ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 3 կմ հյուսիս-արևմուտք:

Հայերը Չումլաղում. հայերի ներկայությունն այստեղ վկայված է 1802 թ-ից¹³³, սակայն հաճախակի հիշվում է 1840-ական թվականներից:

Վիճակագրություն. 1874 թ. Չումլաղի 1140 բնակչից հայեր էին միայն 90-ը¹³⁴: Վավերագրերի մեծ մասում գյուղի հայ ծխականների թիվը հաշված է մոտակա Կուլակ, Վեջին և Գուրջաան գյուղերի հետ իբրև մեկ գյուղախումբ կամ հասարակություն: Ուստի ստորև ներկայացնում ենք միայն այն տվյալները, որոնցում չումլաղաբնակ հայերի թիվն առանձին է տրված:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1862 ¹³⁵	13			
1874 ¹³⁶				90
1883 ¹³⁷		53	57	110
1885 ¹³⁸		81	87	168
1887 ¹³⁹		58	69	127
1897 ¹⁴⁰		59	62	121
1898 ¹⁴¹		60	65	125
1902 ¹⁴²		68	70	138
1908 ¹⁴³	16	57	54	111

1914 թ. Չումլաղն ուներ 1175 բնակիչ¹⁴⁴: Աղյուսակի տվյալների շարժից ելնելով՝ կարծում ենք, այդ թվի շուրջ 1/10 մասը հայեր էին:

Ազգատոհմեր. 1862 թ. մի վավերագրից հայտնի են Չումլաղի հայ համայնքի 13 տնատերերի անուն-ազգանունները՝ Գուրգեն Ջուրաբյանց, Գևորգ Ջուրաբյանց, Սուլման (Սողոմոն) Միրվելյանց, Գլխաս Միրվելյանց, Մարիամ Միրվելյանց, Գեորգի Միրվելյանց, Գևորգ Մեհնաբոյանց, Դեմետրե Գզիրյանց, Գաբրո Դալլաբյանց, Իվանե Թամազյանց, Մատի Թամազյանց, Պեպան Ախալմոսուլյանց¹⁴⁵:

Եկեղեցի. 1850-ական թվականների վերջերին Չումլաղում հայերը կառուցել էին մի փոքրիկ եկեղեցի և օժել Սբ. Աստվածածին անվամբ: Եկեղեցին միևնույն անվամբ վավերագրերում հաճախակի հիշվում է 1885-1906 թթ.¹⁴⁶:

Հիմնահատակ ավերվել է խորհրդային տարիների:

133 Նույն տեղում, ս. 472.
 134 "Кавказский календарь на 1886 г.", с. 118.
 135 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3841, ք. 229:
 136 "Кавказский календарь на 1886 г.", с. 118.
 137 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, ք. 23:
 138 Նույն տեղում, գ. 3877, ք. 39:
 139 Նույն տեղում, գ. 3880, ք. 10:
 140 Նույն տեղում, գ. 3899:
 141 Նույն տեղում, գ. 3897, ք. 160
 142 Նույն տեղում, գ. 3907, ք. 14-15:
 143 Նույն տեղում, գ. 559, ք. 22:
 144 "Кавказский календарь на 1915 г.", с. 208.
 145 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 3841, ք. 229:
 146 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 33, գ. 3880, ք. 10, գ. 3896, ք. 66, գ. 3905, ք. 243, գ. 3915, ք. 8:

Գերեզմանոց. հայոց գերեզմանոցը տարածվում է գյուղի բարձրադիր մասում և կից է վրացականին: Այստեղ ևս, ինչպես վրացախոս հայերի՝ ուրիշ շատ գյուղերի գերեզմանոցներում, տապանագրերի գերակշռող մասի լեզուն վրացերենն է, բայց նոր ժամանակների (1983 թ.) մի շիրմաքար կրում էր հայերեն և վրացերեն հետևյալ արձանագրությունը.

Բալուխաշվիլի Անիչկա Ս.:
 Հրատ. «Ազատամարտ», 1991, № 42, էջ 13:

ՋԻՄԻԹ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևմուտք՝ հարավահայաց սարալանջին:

Նկարագրություն. 1849 թ. գյուղ այցելած Հովհաննես վարդապետ Արշարունին այսպես է նկարագրել այն. «Ջիմիթ՝ է մեծամիստ գիւղ Վրաց. տեղին պատկանի եկեղեցոյ նոցա, վասն որոյ և բոլոր Վիրք գեղջս ստրուկ են եկեղեցոյ իրեանց: Տունք Վրաց մինչև ց800, իսկ Հայոց 22: Հայք են վաճառականք և արհեստաւորք և հողագործք, բայց չեն ստրուկ ոչ եկեղեցոյն և ոչ իշխանաց»¹⁴⁷:

Հայերը Ջիմիթում. Ջիմիթը երբեմն Ղանդաուրի, երբեմն էլ Քոդալոյի հետ միավորված գավառի սակավաթիվ հայ բնակչություն ունեցող գյուղերից էր: Այստեղ հայերի հաստատման ստույգ ժամանակն անհայտ է, բայց նրանց ներկայությունը վավերագրերում վկայված է 1802 թ.¹⁴⁸:

Վիճակագրություն. վավերագրերի մեծ մասում ջիմիթաբնակ հայերը հաշվված են եղել Ղանդաուր կենտրոնով միավորված գյուղախմբի հետ: Առանձին ցույց տրված երկու տվյալ խոսում վկայում են, որ տասնամյակների ընթացքում ջիմիթաբնակ հայերի թիվը չի ավելացել, այլ զգալի չափով նվազել է. 1849 թ. 22 տան փոխարեն 1908 թ. ունենք ընդամենը 8 տուն՝ 42 շունչ (27 ար. և 15 իգ.)¹⁴⁹: Ավելորդ չէ նշել, որ գյուղի բնակչության թվի մեջ հայերը կազմում էին չնչին մասը: Այսպես՝ 1874 թ. Ջիմիթի 2158 բնակչից միայն 48-ն էին հայեր¹⁵⁰, մնացածը վրացիներ: 1914 թ. գյուղի բնակչությունն աճել էր մինչև 3061 մարդու¹⁵¹, ուրեմն և այն Կախեթի առավել մարդաշատ, բայց սակավահայ բնակավայրերից էր:

Ջիմիթում, ինչպես մոտակա Ջիար, Առաշենդա և Կաճրեթ գյուղերում, փոքրաթիվ հայերը երբևէ եկեղեցի չեն կառուցել: Հոգևոր հովիվն էլ այցելում էր Քոդալո կամ Ղանդաուր գյուղերից:

ՎԱՉՆԱԳՅԱՆ

Տեղադրություն. գտնվում է Ալազան գետի աջակողմում՝ գետափից 4-5 կմ հեռու:

147 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:
 148 АКАК, т. 1, с. 474.
 149 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:
 150 "Кавказский календарь на 1886 г.", с. 118.
 151 "Кавказский календарь на 1915 г.", с. 120.

Նախախորհրդային տարիներին մտնում էր Թե-լավի գավառի մեջ:

Հայերը Վաչնադյանում. միակ վավերագիրը, որտեղ նշված է, թե Վաչնադյանում 7 ընտանիք (21 ար., 13 իգ.) հայ բնակիչ կար առանց եկեղեցու և քահանայի, թվագրված է 1818 թ.¹⁵²:

Հետագա աղբյուրները գյուղում այլևս հայ բնակչության առկայություն չեն փաստում: 1874 թ. Վաչնադյանն ուներ 1336¹⁵³, իսկ 1914-ին՝ 1509 միայն վրացի բնակչություն¹⁵⁴:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. կազմված բնակիչների հետևյալ անվացուցակը.

«1. Յովսեփի որդի՝ դավաթ Յարութունի կինն՝ Բեզգադ, որդիք՝ Սարգիս և Աբրահամ, դուստր՝ Էլիսաբեդ և եղբոր՝ Յակոբի որդի՝ Ադամ:

2. Բարսիլի որդի՝ դավաթ Պողոս, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յոհաննես և Եսայի, դստերք՝ Մարթայ, Մարմար և Էլիսաբեդ:

3. Ղարաբաղցի Ալլահվերդի, կինն՝ Հերիք, որդիք՝ Մահակ, Գաբրիել և Սարգիս, դուստր Մարթայ:

4. Ռոստոմի որդի՝ Գարո, կինն՝ Էլենե, որդիք՝ Ռոստոմ, Մարտիրոս և Իսանե:

5. Թիֆլիզցի Ղազար, կինն՝ Մայի, որդի՝ Աբրահամ:

6. Թիֆլիզցի ջուլիակ Գիորգի, կինն՝ Թինաթին, որդի՝ Ադայ, դուստր՝ Էլիսաբեդ, և եղբայր Սոսի:

7. Ճօն Գիորգի, կինն՝ Քալիա»¹⁵⁵:

Ի դեպ, ըստ վավերագրի, գյուղի յոթ հայ ընտանիքից մեկը ծագումով Ղարաբաղից էր, երկուսը՝ թիֆլիսցի:

ՎԵԼԻՍՑԻՆԵ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 7-8 կմ հյուսիս-արևմուտք՝ Ալազան գետի աջ կողմում՝ գետափից շուրջ 5 կմ հեռու, ծովի մակերևույթից 380 մ բարձրությամբ արգավանդ հարթավայրում:

Անվան ծագումը. Վելիսցիխես բառացի թարգմանվում է՝ դաշտային բերդ:

Կառուցապատում. Կախեթի կենտրոնական ու մարդաշատ գյուղերից է: Ավելի ավանի կամ գյուղաքաղաքի տպավորություն բողոք Վելիսցիխեսն իր բարեկարգ վիճակով մշտապես առանձնացել է հարևան գյուղերից: Այսպես, 1890 թ. ակնատեսը նշել է. «Վելիսցիխա գիղն ամբողջ Կախեթի մեջ օրինակելի գիղ է համարուած իւր բարեկարգ վիճակով...: Վելիսցիխայի դիրքը բաւականին հարթ է, բայց շինութիւնները ի բնէ փոքր ինչ խառն կերպով դարսուած իրենց լայնածաւալ ընդարձակ հայաթով: Փողոցները լայն են և մաքուր և գրեթէ ուղղագիծ: Տանուտեր պ. Մ. Քալանթարեանը, ինչպէս երևում է մեծ ճիգ է թափել այդ գիղի բարեկարգութեան համար...»¹⁵⁶:

Ջրամատակարարում. Օհանյան գերդաստանից Հ. Օհանյանի ջանքերի շնորհիվ Վելիսցիխեսն «արժանացել» էր մի հորդահոս աղբյուրի. «Վերջ ի վերջոյ գիղի բնակիչները շնորհիւ պ. Յ. Օհանեանի ջանքերի, որը հրաւիրեց ինժեներ Կուրդիանուն և աջակցութեամբ տեղիս վաճառ. Մամիսովների և հայ հոգևորականների, արժանացան մի աղբիւրի, որի առատութիւնը գրեթէ կարող է մի անիւ պտտեցնել...»¹⁵⁷:

Ջրաղմուք. Կախեթի շատ այլ գյուղերի նման Վելիսցիխեսն էլ էր հայտնի խաղողի այգիներով և գինու արտադրությամբ: Մասնավորապես 1849 թ. Հովհաննես վարդապետ Արշարունին գրել է. «...ամենեքին վաճառականք և այգետեարք և բազմակալուածք... առ հասարակ բնակիչք Հայք և Վիրք ունին գերեւելի այգիս՝ ոմանք q5, ոմանք q4, q6, մինչև g10, ուստի միաբանք են ամենեքին...»¹⁵⁸: 1881 թ. ի վեր Ի. Ե. Օհանյանի խաղողի այգիների բազայի վրա Թիֆլիսի Գոլովինսկի պողոտայում գործում էր «Վելիսցիխես» գինու արտադրության և արտահանման ընկերությունը¹⁵⁹:

Հայերը Վելիսցիխեսում. այստեղ հայերի հաստատման ստույգ ժամանակը հայտնի չէ: Հավանաբար դա տեղի է ունեցել ԺՁ-ԺԷ դարերում կամ գուցե էլ ավելի վաղ ժամանակներում: 1660 թ., օրինակ, հիշվում է վելիսցիխեսցի Սարգիս Տեր-Առաքելյանցը¹⁶⁰: Գյուղի տարեցներից Վանո Արուսյունովի վկայությամբ՝ իրենց տոհմը Վելիսցիխես էր գաղթել Արցախից. «Շատ հնուց են ապրում այստեղ: Ասում են՝ Հերակլ թագավորի ժամանակներից: Քեռի Վանոն դեռ պապից է լսել, որ նրանց արմատը Արցախից է գալիս, Լեռնային Ղարաբաղից, ու ողջ գյուղն է վերաբնակվել այս կողմերում, դեռ Հերակլ Երկրորդի՝ օրոք»¹⁶¹:

Վելիսցիխեսն Կախեթի ամենահայաշատ գյուղն է, որտեղ հայերի ներկայության մասին առաջին գրավոր տեղեկություններից մեկը վերաբերում է 1802 թ.¹⁶²: Արդեն ԺԹ դարի սկզբներին այստեղ շուրջ 100 հայ ընտանիք էր բնակվում:

Վիճակագրություն. վիճակագրական աղբյուրների մեծ մասում Վելիսցիխեսի հայ բնակչության թվաքանակը ցույց է տրված մոտակա Մուկուզան և Ախաշեն գյուղերի հայերի թվի հետ, և հնարավոր չէ որոշել, թե դրանցից յուրաքանչյուրում որքան հայ էր բնակվում: Առանձին ցույց տրված սակավաթիվ տվյալները ներկայացնում ենք ստորև.

157 «Հորիզոն», 1912, № 111, էջ 4:

158 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 317:

159 «Тифлисский листок», 1902, № 85, с. 3. Ի դեպ, վելիսցիխեսցի կալվածատեր Եգոր Օհանյանը 1896 թ. պատահարի հետևանքով զոհվել էր և ամփոփվել գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու բակում («Արձագանք», 1896, № 60, էջ 2):

160 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), Կաթողիկոսական դիվան, թրք. 1, վավ. 79:

161 «Խորհրդային Վրաստան», 06.03.1990:

162 AKAK, т. 1, 1866, с. 472.

152 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 15:

153 «Кавказский календарь на 1886 г.», с. 118.

154 «Кавказский календарь на 1915 г.», с. 104.

155 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 15:

156 «Նոր-Դար», 1890, № 51, էջ 2:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1803 ¹⁶³	73			
1818 ¹⁶⁴	108	483	406	889
1862 ¹⁶⁵	162			
1874 ¹⁶⁶				1605
1883 ¹⁶⁷	500			
1886 ¹⁶⁸	500			
1887 ¹⁶⁹		1027	925	1952
1897 ¹⁷⁰		1051	1061	2112
1899 ¹⁷¹		1090	1083	2173
1901 ¹⁷²		1175	1120	2295
1902 ¹⁷³		1183	1128	2311
1908 ¹⁷⁴	408	1259	1184	2443

Գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող այս տվյալների համադրումից երևում է, որ բնակչությունն այդ տարիներին հիմնականում աճել է: Վելիսցիխեցիների բնական աճի վրա որևէ ազդեցություն չեն թողել անգամ մահաբեր վարակիչ հիվանդությունները: Այսպես, հայտնի է, որ 1884 թ. չորս ամիսների ընթացքում ծաղիկ և քութեչ հիվանդություններից մահացել է 300 մարդ (հիմնականում՝ երեխա)¹⁷⁵:

Բնակչություն. 1914 թ. Վելիսցիխեն ուներ 4177 բնակիչ¹⁷⁶, որի մեծ մասը հայեր էին: Բնակչության ընդհանուր թվի մեջ հայերի գերակշռությունը իրականություն էր մահ ԺԹ դարի կեսին (հավանաբար և ավելի վաղ շրջանում): Օրինակ, հայերի մեծամասնությունը փաստված է 1847 թ.¹⁷⁷: Ի դեպ, 1874 թ. գյուղի 2748 բնակիչներից հայեր էին 1605-ը, վրացիներ՝ 1143-ը¹⁷⁸: 1881 թ. գյուղի 650 տուն բնակիչներից հայեր էին 350-ը¹⁷⁹, իսկ 1904 թ. 940 տնից հայեր էին 600-ը, վրացիներ՝ 300-ը, ռուսներ, թուրքեր և հրեաներ՝ 40-ը¹⁸⁰: Հատկանշական է, որ 1988 թ. մեր այցելության ժամանակ գյուղի շուրջ 4800 բնակիչից ավելի քան 2600-ը հայեր էին:

163 AKAK, т. 2, с. 81. Ի դեպ, մույն թվին համագյուղացի վրացիները կազմում էին 91 տուն:

164 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 42-45:

165 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3841, ք. 226-228:

166 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.

167 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, ք. 23:

168 Ըստ «Արձագանք» շաբաթաթերթի՝ 500 տուն հայերից զատ Վելիսցիխեում բնակվում էին նաև 350 տուն վրացիներ: Կարծում ենք շաբաթաթերթի այս տվյալները չափազանցված են և մոտավոր («Արձագանք», 1895, № 23, էջ 3):

169 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, ք. 10:

170 Նույն տեղում, գ. 3899, ք. 138-139: ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 321, ք. 71-72:

171 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, ք. 243:

172 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 131-2:

173 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 14-15:

174 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

175 «Նոր-Գար», 1884, № 130, էջ 1:

176 “Кавказский календарь на 1915 г.”, с. 104.

177 Д. М., Очерк о Кахетии.— “Закавказский Вестник”, 1847, № 8, с. 60.

178 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.

179 «Մեղու Հայաստանի», 1881, № 273, էջ 2:

180 “օցցրօ», 1904, № 42, 18 փետրվարի:

Ազգատոհմեր. առանձնակի արժեք ունի 1818 թ. կազմված վելիսցիխեցի հայ բնակիչների անվանացուցակը.

«1. Աազ քահանայ Տեր Մովսես Յարության, որդին՝ Բարսեղ, սորա կինն՝ Քալե, որդի՝ Իովանե, դստերը՝ Հոնիսիսն և Եղիսաբեդ:

2. Տեր Յարության Ղազարեան, կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Սիմօն և եղբայր Օթար և Թամազ, Օթարի կինն՝ Բարբարե, որդիք՝ Դաբա, Մառ և Գիորգի, դուստր՝ Լալի, Թամազի կինն՝ Մարիամ, որդիք՝ Պեպան և Իսակ, և մնջեցեալ եղբոր՝ Պապայի այրի կինն՝ Էլենե, որդիք՝ Փերան և Սոլոման, դուստր՝ Անախանում, այլևս մնջեցեալ եղբոր՝ Յակոբի այրի կինն՝ Թինաթին, որդի՝ Բեժան, դուստր՝ Քալիա:

3. Տեր Յոհաննես Տեր Գրիգորեան, կինն՝ Բարբարե, որդի՝ Իսակ, դստերը՝ Մարիամ և Խօրիշահ և եղբայր Յիսել և Սոլոման, Յիսելի կինն՝ Թինաթին, որդիք՝ Գօգի, Յովսեփ, դուստր՝ Դարեջան և հորեղբայր Տեր Յոհաննեսի Դաթի որդի՝ Էսզատի կինն՝ Բարբարե, որդիք՝ Մառիա, Իովանե և Գուրգեն և խորք դուստր՝ Աննա և Մատենի կինն՝ Էլիսաբեդ, դստերը՝ Սաբեդ և Մարրա և Իովանեի կինն՝ Դարեջան:

4. Կնեազ Իանե Արդուբեան, որդիք՝ Ռամազ և Ստեփան, մայր՝ Մարիամ, Ռամազի կինն՝ Աննա, որդիք՝ Դալիթ և Գալուստ, դստերը՝ Քալի, Մայիա և Բարբարե, Ստեփանի կինն՝ Նիմօ, որդիք՝ Պապա և Սարգիս:

5. Քափանակեան Գիորգույ որդի՝ Ճարօ, կինն՝ Բարբարե, որդիք՝ Սոլոման և Իսակ:

6. Խալաթի որդի՝ Սարգիս, կինն՝ Աննա, որդի՝ Գիորգի, դստերը՝ Քալի, մայր՝ Մարմար:

7. Ոսկանեան Չալօյի որդի՝ Նիկողոս, որդիք՝ Գուրգեն, Բարսեղ, Աբրահամ և Չալօ, դուստր՝ Մարիամ, մայր՝ Մարմար և Տեր Դալիթի որդի՝ Ստեփան, կինն՝ Թամար, որդի՝ Աբրահամ, դստերը՝ Էլիսաբեդ, Քալի և Էլենե և Նօնի որդի՝ Բեժան, կինն՝ Աննա, որդի՝ Կօնի, մայր՝ Մայիա և քույրք Բեժանի՝ Քալի և Թինաթին:

8. Ղօնեան Գիորգույ որդիք՝ Սարգիս և Դալիթ, Սարգիսի կինն՝ Թինաթին, դստերը՝ Մաթօ, Սաբեդօ և Էլենե, Դաթի կինն՝ Մարիամ, դուստր՝ Քալի և Պեպանի այրի կինն՝ Մաթօ, որդի՝ Փիրան:

9. Մծեղա Սարգսի որդի՝ Բաղդասար, կինն՝ Թամար, որդիք՝ Ստեփան, Սօսի, Չաքար և Սոլոման, դուստր՝ Մարիամ:

10. Յարությանի որդի՝ Դալիթ, կինն՝ Մարրա, որդիք՝ Յովսեփ և Պողոս, դստերը՝ Թամար և Աննա:

11. Սօմխեան Ղթեսայի որդիք՝ Չուրաք, Բերօ, Գօգի և Շայսե, Չուրաքի կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Դեմետրե, Թամազ և Չաքարիա, դստերը՝ Մայիա և Դասթայ, Բերօյի կինն՝ Աննա, որդիք՝ Սարգիս և Անդրեաս, դուստր՝ Չալե, Գօգիների կինն՝ Դարեջան, որդիք՝ Բարսեղ, Սօսի և Թօվմայ, դուստր՝ Մայիա, Շայսեի կինն՝ Դարեջան և եղբոր՝ Չուրաքի՝ Նասողիի որդիք՝ Շուժե, Ղարիպ և Փարեմազ, սոցա մայր՝ Խօրեշահ, Դեմետրեի կինն՝ Մարթայ, որդի՝ Իովանե, Շուժեի կինն՝ Թինաթին, դուստր՝ Նիմօ, Ղարիպի կինն՝ Թամար, որդի՝ Միքել և Չուրապի հորեղբոր՝ Իսանեի որդի՝ Պապա, կինն՝ Քալիա, որդիք՝ Նասողի և Սիմօն, մայր՝ Մարիամ:

12. Բայինդուրի որդի՝ Նինի, կինն՝ Մարթայ, որդիք՝ Գիգօլի և Նասողի:

13. Տառեան Գլախայի որդի Բափի, կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Չուրապ, մայր՝ Խալիա:

14. Տառեան Բերեժի որդիք՝ Գօգի, Պեպան, Գիգօլի, Յոհաննես, Սօսի և Բեժան, դուստր՝ Էլիսաբեդ, Գօգիների կինն՝ Մայիա, որդի՝ Պետրե, Ստեփանի կինն՝ Մաթօ:

15. Վելիխանեան Դաթայ որդիք՝ Ռօստօմ և Նօնի, Ռօստօմի կինն՝ Մաթօ, որդի՝ Յօհաննես, դուստր՝ Աննա, Նօնիների կինն՝ Մարիամ, դուստր՝ Քալի:

16. Մեզլոթ Իսանի որդի՝ Սարգիս, կինն՝ Մարիամ, որդի՝ Միրզայ, դուստր՝ Մաթօ:

17. Տառեան Չուրաքի որդի՝ Դաթօ, կինն՝ Էլենե, որդիք՝ Չուրաք, Յոհաննես և Մատի, Չուրաքի կինն՝ Մարմար, որդի՝ Յարության, դստերը՝ Աննա և Լալօ, Յոհաննեսի կինն՝ Մայիա, դուստր՝ Սաբեդօ:

18. Յարութիւնի որդի՝ Բերո, կինն՝ Աննա, որդիք՝ Նինի, Միքէլ և Չաքարիա, Նինի կինն՝ Մայիա:

19. Ջանջի Բողեան Գօզինի որդիք՝ Ղարիպ, Գօձի, Պետիայ և Նինի, Ղարիպի կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Գլախա և Մարգիս, Գօձինի որդի՝ Չաքար, կինն՝ Քալի, Պետինի կինն՝ Թամար, որդիք՝ Բեժան, Իւանէ և Գիօրգի, դուստր՝ Բարբարէ, Նինի կինն՝ Աննա, որդիք՝ Սօսի և Յարութիւն, դստերք՝ Մարիամ և Մարթայ:

20. Աթոյի որդի՝ Միրզայ, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Նատիղ, դուստր՝ Նինօ:

21. Կօնեան Յարութիւն, որդիք՝ Գլախա և Գօզի, Գլախի կինն՝ Թինաթին, որդի՝ Իւանէ, դստերք՝ Մարիամ և Քալի, Գօզինի կինն՝ Աննա, որդի՝ Մատ, դստերք՝ Էլիսաբէր և Մարիամ:

22. Կօնեան Յօսէփի որդիք՝ Մոքար և Դաւիթ, Մոքարի կինն՝ Մայիա, որդի՝ Գօզի, դստերք՝ Մարիամ և Բարբարէ, Գօզինի կինն՝ Մաթօ, որդիք՝ Չուրաք և Իւանէ, Դաւիթի կինն՝ Դարեշան, որդի՝ Պետրէ, դստերք՝ Թինաթին և Մարթայ, մայր՝ Թումիան:

23. Ջանջի Բողեան Գլախայի որդիք՝ Բեժան, Գիգօլօ, Յովսէփ և Նինիո, Բեժանի կինն՝ Մաթ, որդիք՝ Նատիղ և Իովանէ, դուստր՝ Սաբէրօ, Գիգօլայի կինն՝ Անախանում, որդիք՝ Դեմէտրէ և Չուրաք, դուստր՝ Թամար:

24. Քաչալ Չուրաքի որդի՝ Դաթօ, կինն՝ Նաթէ, որդիք՝ Գիօրգի և Դաւիթ, դստերք՝ Մարիամ և Մարթայ:

25. Ազնի Փիրաղեան Դաթի որդի՝ Ստեփան, կինն՝ Դարեշան, որդի՝ Աղայ, կինն՝ Խօրէշան:

26. Ազնի Փիրաղեան Դաթի որդիք՝ Գօզի, Ալօ և Նօնի և Գօզինի կինն՝ Մաթօ, որդիք՝ Նատիղ, Դաւիթ, Սօլօման, Սիմօնայ և Իովանէ, դուստր՝ Քալի, Ալօյի կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Մատի և Բեժինայ, Նօնիին կինն՝ Խօրէշան:

27. Բաթի որդի՝ Դաղո, կինն՝ Մարիամ, որդիք՝ Նօնի և Մարգիս, Նօնիին կինն՝ Էլիսաբէր, դստերք՝ Բարբարէ և Մարթայ, Մարգիսի կինն՝ Մաթօ, դուստր՝ Թամար:

28. Տողեան Գլախի որդիք՝ Գօզի և Դաթ, Գօզինի կինն՝ Մարիամ, որդիք՝ Սարգիս և Գիգօլի, Դաթին կինն՝ Էլիսաբէր, դուստր՝ Թամար:

29. Կօխտեան Յարութիւնի որդիք՝ Սարգիս, և Դաւիթ, Սարգիսի կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Չաքարիա, Յարութիւն, Իօվանէ, Գասպար և Աղայ, դստերք՝ Դարեշան, Օվաննա և Բարբարէ, Դաւիթի կինն՝ Աննա, որդիք՝ Ստեփան և Գեորգ, դստերք՝ Լալի, Նաթէ և Շուշան:

30. Ալթունի որդիք՝ Նատիղ և Չուրաք, Նատիղի կինն՝ Մագթաղէն, որդիք՝ Գեորգ, Իսակ և Սօլօման, դուստր՝ Մայիա, Չուրաքի կինն՝ Աննա, որդիք՝ Գիօրգի, Ջէգի, Թաթխան և Յօհաննէս և եղբոր՝ Դաւիթի որդի՝ Յարութիւն, դուստր՝ Թամար:

31. Մետեղեան Գաբրիէլի որդիք՝ Չուրաք, Գիգօլի, Չուրաքի կինն՝ Մաթօ և դստերք՝ Քալի և Աննա, Գիգօլու կինն՝ Մայիա, որդի՝ Գաբրիէլ:

32. Մետեղեան Մովսէսի որդիք՝ Մատ և Գօզի, Մատնի կինն՝ Մարալ, որդիք՝ Կօնի, Գուրգէն, Չաքարիա, Եագօր, Սօսի և Սիմօն, դուստր՝ Քալի, Գօզինի կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Նատիղ և Անտօն, դուստր՝ Աննա, Դաւիթի այրի կինն՝ Մայիա, որդիք՝ Սօլօման և Դաւիթ, դուստր՝ Քալի:

33. Մետեղեան Մովսէսի որդի՝ Պապա, կինն՝ Խանփէրվան, որդիք՝ Գլախա, Սօսի և Գիգօլի, դուստր՝ Մայիա:

34. Գէլասի որդի՝ Նուր, կինն՝ Մայիա, որդիք՝ Գլախա, Մարտիրոս, Մախարօբէլ և Իսակ, Գլախայի կինն՝ Էլիսաբէր, Մարտիրոսի կինն՝ Էլիսաբէր:

35. Չիթա Չուրաքի որդիք՝ Ստեփան, Սիմօն և Գօզի, մայր՝ Թամար, Ստեփանի կինն՝ Թէլլէ, դստերք՝ Թինաթին և Թուրայ, Սիմօնի կինն՝ Սօփի:

36. Մէլումի որդիք՝ Մատի և Գիգօլի, Մատինի կինն՝ Բարբարէ:

37. Ջէյնայի որդի՝ Գլախա, մայր՝ Էլիսաբէր:

38. Մէզլի Չուրաքի որդիք՝ Յարութիւն, Գիգօլի, Իօսէփ, Բեժան, Սիմօն և Դաւիթ, մայր՝ Մարիամ, Յարութիւնի կինն՝ Թամար:

39. Ազնի Ղօրղանեան Արանդիլի որդիք՝ Օրար, Սօսի, Շերմազան, Քայիխօսրօ և Դաւիթ, Չուրաքի որդիք՝ Բեժան, Գօզի, Նինի, Պետան, Չաքարիա և Սիմօն, դուստր՝ Էլէնէ, Օթարի կինն՝

Էլէնէ, որդիք՝ Գիօրգի և Սօլօման, դուստր՝ Բարբարէ, Սօսինի կինն՝ Էլէնէ, Շերմազանի կինն՝ Թամար, որդի՝ Դաթ, Քայիխօսրօյի կինն՝ Խանփէրի, որդի՝ Իօվան, Բեժանցուցինի կինն՝ Թուրայ և Թէմուրազի այրի կինն՝ Մայիա, որդիք՝ Թէվթօրէրէ և Աղայ, դուստր՝ Մաթօ:

40. Թօրօզի որդիք՝ Գիգօլ, Թաղէ և Յովսէփ, Գիգօլու կինն՝ Մայիա, որդիք՝ Դաթ, Յակոբ, Մատի և Պետան, Թաղէին կինն՝ Քէրէվան, որդիք՝ Նինիա և Ալան, դստերք՝ Մարիամ և Շուշան, Յովսէփի կինն՝ Մայիա, որդի՝ Գիօրգի և Թօրօսի եղբոր՝ Չուրաքի որդիք՝ Նատիղ և Թաթօ, Նատիղի կինն՝ Թամար, որդի՝ Անտօն, մայր՝ Էլիսաբէր և Գիգօլայի եղբոր՝ Յարութիւնի այրի կինն՝ Մայիա, որդիք՝ Իսահակ և Գլախա:

41. Աջանեան Կակալօ, կինն՝ Խօրիշան, որդիք՝ Յովսէփ և Դաւիթ, դուստր՝ Խանփէրի և եղբոր՝ Գուրգէնի որդի՝ Սիմօն և Դաւիթ, որդի՝ Գօզի:

42. Յոհանի որդիք՝ Շերմազան և Ստեփան, Շերմազանի կինն՝ Դարեշան, դուստր՝ Մարթայ և եղբոր՝ Դազարի այրի կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Ալան և Յօհաննէս, մայր՝ Շերմազանի՝ Մարմար:

43. Մճեղեան Դաթի կինն՝ Մարգարիտ, դստերք՝ Սաբէրօ և Բարբարէ:

44. Գուրգէնի որդի՝ Սօլօման և Դաւիթ, Սօլօմանի կինն՝ Լալի, որդի՝ Սօսի, դուստր՝ Բարբարէ, Դաթի կինն՝ Թինաթին, որդի՝ Չուրաք, դստերք՝ Մարթայ և Աննա:

45. Բայիւնդուրի որդի՝ Գիգօլի, կինն՝ Լալօ և եղբոր՝ Բերօյի այրի կինն՝ Թինաթին, որդի՝ Սօսի, դուստր՝ Դաւիթ:

46. Գուրգէնեան Չուրաքի որդիք՝ Գուրգէն, Գլախա և Գիօրգի, մայր՝ Էլիսաբէր, Գուրգէնի կինն՝ Էլիսաբէր, Գլախայի կինն՝ Բարբարէ, որդի՝ Իօսէփ:

47. Ջանջի Բողեան Պապունի որդիք՝ Յակոբ, Ստեփան, Յարութիւն և Դեմէտրէ, դուստր՝ Քալի և Գօզինի որդի՝ Ղթէսիա և Յակոբի կինն՝ Մարթա:

48. Մեմարէ Շերմազանի որդի՝ Գօզի, կինն՝ Մարիամ, որդիք՝ Չուրաք և Նատիղ, դուստր՝ Դարեշան:

49. Յոհաննէսի որդի՝ Անտօն, սորա որդիք՝ Շաքար և Մատի, Շաքարի կինն՝ Մաթօ, որդի՝ Յարութիւն, Մատիին չօռօսիմ:

50. Աբրամի որդի՝ Նէրսէս, կինն՝ Թումիան, որդիք՝ Մարտիրոս և Գիգօլի, մայր՝ Թինաթին:

51. Վերազի որդի՝ Գեորգ, կինն՝ Թամար, որդիք՝ Պետան, Յարութիւն և Յօհաննէս և դուստր Վերազի՝ Թամար:

52. Աբէլեան Մարտիրոսի որդիք՝ Դաւիթ և Մարտիրոս, մայր՝ Դարեշան, Աբէլի որդի՝ Գիգօլ, սորա կինն՝ Էլիսաբէր, Դաւիթի կինն՝ Թինաթին, Մարտիրոսի կինն՝ Քէրէվան, որդի՝ Ալէքսի, դստերք՝ Քալի, Թուրայ և Մարիամ և Դաւիթի որդի՝ Գիօրգի, դստերք՝ Քալի և Աննա:

53. Բաղալեան Թանդիլի որդիք՝ Չազա և Նինիա, Պապայի կինն՝ Շուշան, որդի՝ Յարութիւն, դստերք՝ Պասի և Թինաթին, Նինիայի կինն՝ Մաթօ, դստերք՝ Քալի, Սաբէրօ և Աննա:

54. Տողեան Քեղոյի որդի՝ Սիմօն, կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Նատիղ և Քիթօ, մայր՝ Աննա և եղբոր՝ Կապօյի այրի կինն՝ Դարեշան, որդիք՝ Գիօրգի, Յարութիւն, Պետան և Իւանէ, դստերք՝ Նաթէ և Մարիամ:

55. Տողեան Գաբրիէլի որդիք՝ Գօզի և Կիկօ, մայր՝ Մարթա, Գօզինի կինն՝ Թամար, որդի՝ Ղվինի, ջոյր՝ Թամար:

56. Նապիլլեան Յոհաննէսի որդիք՝ Սահակ, Յարութիւն, Մոսի և Բաղալ, մայր՝ Աննա, Սահակի կինն՝ Մայիա, որդիք՝ Կացիա, Կօնի և Իօվան, դուստր՝ Աննա, Յարութիւնի կինն՝ Խօրէշան, որդի՝ Թէվթօրի, դստերք՝ Էլիսաբէր և Թինաթին:

57. Տողեան Մամուլի որդի՝ Պետի, կինն՝ Էլիսաբէր, դուստր՝ Թինաթին:

58. Տողեան Գարսէվանի որդիք՝ Սօլօման, Բեժան և Նէրսէս, մայր՝ Մագթաղին, Սօլօմանի կինն՝ Մայիա, դուստր՝ Աննա:

59. Տողեան Նատիղի որդիք՝ Պետի, Եսայի, Դաթ և Դեմէտրէ, Պետինի կինն՝ Դարեշան, որդի՝ Յարութիւն, դստերք՝ Մարիամ և Աննա, Եսայիի կինն՝ Մաթօ, որդի՝ Յակոբ, Դաթին կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Միխայէլ:

60. Ասանբէգեան Մատինի որդի՝ Նօնի, կինն՝ Մաթօ, դստերք՝ Մարիամ, Մարթայ և Աննա:

61. Չիճի որդի՝ Կիկո, կինն՝ Մարմար, որդիք՝ Գլախա, Պետրև և Գալո:

62. Բարդա Գօզինի որդի՝ Ջուրաք, կինն՝ Շիրենե, որդիք՝ Նինի և Եսայե, դուստր՝ Մարթայ:

63. Յարութիւնի որդիք՝ Յոհաննէս և Թաթո, Յոհաննէսի որդի՝ Ստեփան, Թաթոյի կինն՝ Մարթայ:

64. Մէքաղէ Յոհանի որդիք՝ Գիքո, Դաթ և Պէպի և Գիքոյի կինն՝ Նաթէլ, որդի՝ Յոհան, դուստրք՝ Մագթաղ և Բարբարէ, Դաթի կինն՝ Թամար, դուստր Մայիա:

65. Բաղալ Մամուլի որդիք՝ Բէժան, Բացիա, Սօսի և Սիմօն, մայր՝ Խօրէշան, Բէժանի կինն՝ Բարբարէ, որդի՝ Մամուլ, Բացիայի կինն՝ Մարիամ: Այլ ևս դուստր՝ Մամուլի Աննա:

66. Դարիսի որդիք՝ Գօզի և Դաթ, Գօզինի կինն՝ Աննա, որդի՝ Մայիազ, դուստր՝ Քալի, Դաթի կինն՝ Խօրէշան:

67. Կարապետի որդի՝ Կակօ, կինն՝ Քէթօ, որդի՝ Մանվէլ, Դաթ, Բէժան, Իսակ և Աղայ, դուստր՝ Մարիամ:

68. Ամիրանէան Գիօրգոյ որդիք՝ Ամբրան և Ստեփան, մայր՝ Մագթաղին և սոցա ըորք՝ Քալի, Մայի և Թինաթին և իօրեթօր՝ Մարգարի որդիք՝ Նինի, կինն սորա՝ Մարթայ:

69. Սարեան Բէրոյի որդի՝ Ջուրաք, կինն՝ Դարէշան, որդիք՝ Սաթօ և Նասողի, դուստր՝ Թութայ և երթօր Գալօյի այրի կինն՝ Շուշան, դուստր՝ Մայլա:

70. Սարեան Գօզինի որդիք՝ Ջաքարիա, Սիմօն և Դաիթ, մայր՝ Խանում, Ջաքարիայի կինն՝ Քալի, որդիք՝ Գօզի և Իսանէ, դուստրք՝ Մարէդ, Լալօ և Թինաթին, Սիմօնի կինն՝ Մայիա, Դաիթի կինն՝ Էլիսաբէդ, դուստր՝ Սիդօնիա:

71. Լեջարասնէի որդի՝ Նօնիա, կինն՝ Բարբարէ, մայր՝ Մագթաղին:

72. Ոսկանի որդի՝ Սօսի, կինն՝ Մարրա:

73. Սուլխանէան Դազարի որդի՝ Մատի, կինն՝ Թինաթին, մայր՝ Մանիմա:

74. Սուլխանի որդի՝ Գասպար, կինն՝ Աննա, որդիք՝ Յարութիւն, Գորգէն և Գիգօյի և երթօր՝ Մէրոյի այրի կինն՝ Թինաթին, որդիք՝ Սօլօման, Սօսի և Սիմօն:

75. Չիչախտեան Դաթի կինն՝ Թամար, որդիք՝ Սիսակ և Սիմօն, դուստր՝ Էլիսաբէդ, Սիսակի կինն՝ Մաթօ և Սիմօնի կինն՝ Ուլասննա:

76. Մարտիրոսի որդի՝ Ջուրաք, կինն՝ Մարրա, մայր՝ Մայլա, ըրդ սորա, որ է այրի կինն՝ Մարգաի՝ Մարրա, որդի՝ Նասողի:

77. Գանջեալ Գօզի, կինն՝ Ունի, որդիք՝ Մաթօ և Յարութիւն, դուստր՝ Քալի:

78. Պապայի որդիք՝ Դաթ, Յարութիւն, Տուկի և Մարգիս և մայր՝ Մագթաղին, Դաթի կինն՝ Էլիսաբէդ, որդիք՝ Աղայօ և Նինիա, Յարութիւնի կինն՝ Բարբարէ, Տուկինի կինն՝ Մաթօ:

79. Սկրտումի որդիք՝ Մարտիրոս, Թաթայ, Մարտիրոսի կինն՝ Աննա, որդի՝ Իովանէ, դուստր՝ Բարբարէ և երթօր՝ Շաքարօյի այրի կինն՝ Լալի, որդի՝ Սկրտում:

80. Չիչաթօյի որդի՝ Ջուրաք, կինն՝ Խանում, որդիք՝ Նասողի, Սօլօման, Գիօրգի և Սօսի, դուստրք՝ Թինաթին և Բարբարէ:

81. Գիգօյի որդիք՝ Մաթօ, Ռամազ, Նազար և Ալէքսի և մայր՝ Մարիամ, Մաթօյի կինն՝ Մարիամ:

82. Միթթալ Սահակ, կինն՝ Խօրէշան, որդիք՝ Դաթ, Կօնի և Դաթի կինն՝ Դարէշան:

83. Ամիրխանի որդիք՝ Մուրադ և Դաիթ, Մուրադի կինն՝ Էլէնէ, դուստր՝ Մարիամ, Դաիթի կինն՝ Էլէնէ, որդի՝ Աղայ:

84. Արէշի որդի՝ Պապա, կինն՝ Լալիթարս, որդի՝ Յոհաննէս, դուստր՝ Թամար:

85. Դալլաքեան Գիօրգի, որդիք՝ Պէտրև և Սիմօն, մայր՝ Մայիա և միս երթայր՝ ննջեցեալ Տէր Մովսէսի որդի՝ Պէպան և Ջաքարիա, սոցա մայր՝ Հօնօմիսի:

86. Նասողի որդիք՝ Պէտի, Իսանէ և Յարութիւն, մայր՝ Հօնօմիսի:

87. Գանջէլ Դանէլ, կինն՝ Մայիա, որդի՝ Մատի, դուստրք՝ Նաթէլ և Գուլի:

88. Մաթուսի որդի՝ Թաթօ, կինն՝ Մաթօ, որդի՝ Գօզի, դուստրք՝ Մայլա և Մարիամ:

89. Օհանի որդի՝ Թօմայ, կինն՝ Լալօ, որդիք՝ Գասպար և Բաղդասար, դուստր՝ Քալի:

90. Կալա Բէժանի որդիք՝ Ջուրաք և Աղայ, մայր՝ Աննա, Ջուրաքի կինն՝ Խանում, որդիք՝ Իովանէ և Սօլօման, դուստրք՝ Շուշան և Մագթաղ:

91. Մարտիրոսի որդիք՝ Դաթօ, Մարգիս և Թաթօ, Դաթին կինն՝ Մաթօ, որդիք՝ Կօնի, Աղան և Նասողի և Մամատիայ, դուստր՝ Էլէթվան, Մարգիսի կինն՝ Թինա, դուստր՝ Քալի:

92. Սիմօնի այրի կինն՝ Աննա, որդիք՝ Դազար, Ջաքար և Գալօ, դուստր՝ Խօշի:

93. Բաղեան ճիճիկօյի այրի կինն՝ Աննա, դուստր՝ Էլիսաբէդ և փեսայն սորա՝ Դարախանէան Նինի, կինն՝ Քալի, որդի՝ Իովանէ:

94. Դալլաք Ասատուրի որդիք՝ Նօնի և Սիմօն, մայր՝ Դարէշան և դուստր՝ Խօրէշան և մայր՝ Ասատուրի Մարիամ:

95. Տուտեան Ջազարջայի որդի՝ Մարգիս, կինն՝ Էլիսաբէդ, որդիք՝ Իովանէ և Պակագի, դուստր՝ Դարէշան, մայր՝ Մարիամ:

96. Մանթաշեան Մարտիրոսի որդի՝ Նինի, կինն՝ Մարիամ, դուստրք՝ Քալի և Էլիսաբէդ, մայր՝ Էլէնէ, իօրեթօր՝ Դաթի որդիք՝ Իօսէփ, Ստեփան և Յարութիւն, Յովսէփի կինն՝ Սօփիօ և դուստրք՝ Էամար և Էլէնէ և Ստեփանի կինն՝ Ուլասննա և երթօր՝ Գօզինի այրի կինն՝ Մայիա:

97. Ակուլի որդիք՝ Գօզի, Սօլօման և Ստեփան, Գօզինի կինն՝ Անախանում, որդիք՝ Իսանէ, Ջուրաք, Դենէտրև և Իսակ, դուստր՝ Լալի, Սօլօմանի կինն՝ Մարթայ, որդի՝ Սիմօն և դուստրք՝ Սօփի և Մարիամ, Ստեփանի կինն՝ Նաթէլ, որդի՝ ...:

98. Կարապետի որդի՝ Մատի, կինն՝ Թամար, դուստր՝ Նինօ և Թաթուլի այրի կինն՝ Մարիամ, որդի՝ Գիօրգի:

99. Կարապետի որդի՝ Գօզի, կինն՝ Դարէշան, որդիք՝ Գլախա, Յարութիւն, Իովանէ և Բէրօ, դուստր՝ Թամար:

100. Լալաղի որդի՝ Գիքօ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Գալօ և Յակոբ, դուստր՝ Էլիսաբէդ:

101. Մարգարի որդիք՝ Գօզի, Կունծուլ և մայր՝ Մարիամ, Գօզինի կինն՝ Աննա, որդիք՝ Ջուրաք, Մօսէ և Իօսէթ, դուստր՝ Դարէշան, Ջուրաքի կինն՝ Խօրէշան և Կունծուլի կինն՝ Բարբարէ, որդի՝ Գիգօյի, դուստր՝ Քալի:

102. Բէրոյի որդի՝ Գօգօ և Դաիթ. Գօզինի կինն՝ Մարիամ, որդի՝ Ջուրաք, դուստրք՝ Էլիսաբէդ և Քալի և Դաիթի կինն՝ Խանփէրի, որդի՝ Մատի:

103. Գափօյի որդիք՝ Կախօ և Իովանէ:

104. Տուղեան Նինիինի այրի կինն՝ Քէթվան, որդի՝ Դէտիա:

105. Առաքէլի որդի՝ Դանիէլ, կինն՝ Թամար, որդի՝ Սօլօման, դուստրք՝ Բարբարէ և Էլիսաբէդ. այլևս Դազարեան Յարութիւն, կինն՝ Լալօ:

106. Մէցիվաբէ Յոհաննէս, կինն՝ Աննա, որդի՝ Դաիթ և Պէպան, դուստր՝ Մարէդ, այլևս Մէզվրէ Սահակի այրի կինն՝ Խանում:

107. Գօզինի այրի կինն՝ Մայիա, դուստրք՝ Թինաթին և Ուլասննա:

108. Ջաղացպան Դաթի այրի կինն՝ Մայի, որդիք՝ Սօսի, Յակոբ և Գիգօլ, դուստր՝ Մարէդ¹⁸¹:

Վելիսցիխտարնակ հայ ազգատոհմների պատմության ուսումնասիրության առումով ուշագրաւ է նաև 1862 թ. կազմված բնակիչների անվանացուցակը. Ազգինյանց, Ալոթյունյանց, Ակոլյանց, Ամիրխանյանց, Ասատուրյանց, Արղոթյանց, Բաղալյանց, Բալոյանց, Բայրամյանց, Բայնդուրյանց, Բաղդասարյանց, Բաղլյանց, Բերոյանց, Բեժանյանց, Գեյլյանց, Գիգոյանց, Գուրգենյանց, Գուրջենյանց, Դալլաքյանց, Դաթոյանց, Ջալոյանց, Չինձախասյանց, Չիպիտյանց, Թաթոյանց, Թարխանյանց, Թորոսյանց, Թորոզյանց, Թոմյանց, Լեջյանց, Խարատյանց, Խատինյանց, Կիկլումյանց, Կինիփերյանց, Կոխտյանց, Հարոթյանց, Դազարյանց, Դաղյանց, Դորդանյանց, Դարոյանց,

181 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 42-45:

Ճիճիկոյանց, Մաթարյանց, Մեճրաքյանց, Մե-նոդյանց, Մեպուրյանց, Սկրտումյանց, Մչիթավ-յանց, Մուրադյանց, Միրզյանց, Միտիչյանց, Մղե-բրդյանց, Շարմազանյանց, Շիրվանյանց, Չիթավ-յանց, Չինդախոյանց, Պացսյանց, Պետրումյանց, Ջանջիբուխյանց, Սարյանց, Սոմխյանց, Սուդրավ-յանց, Տուսյանց, Տեր-Գրիգորյանց, Տեր-Մովսես-յանց, Փերյանց, Փիրադյանց, Քալանթարյանց, Քափանակյանց, Քեչիչոլյանց, Քիտոյանց, Քյու-միրյանց, Քրիվճիրյանց, Օհանյանց¹⁸²:

Դպրոց. Վելիսցիխեն Կախեթի հայաշատ այն սակավաթիվ գյուղերից էր, ուր դեռևս ԺԹ դարի կեսերին բացվել էր հայոց ծխական դպրոց: Արգասա-բեր էին հատկապես Ստեփանոս քահանա Տեր-Ղա-զարյանցի ներդրած ջանքերը՝ միտված «...ուսում-նարանին ուղղութիւն և ապահովութիւն մի տալու»¹⁸³:

Հայտնի է, որ 1874 թ. սկսված դպրոցի շինության աշխատանքները նյութական միջոցների սղության պատճառով 1881-ին չէին ավարտվել: Այդ առթիվ նշվել է. «...մօտ եօթ տարի սկսուած ծխական ուսում-նարանի շինութիւնը դեռևս չէ աւարտուած...: Ինչ-պէս հաստատ աղբիւրներից տեղեկացել եմ 1874 թականին Տեր-Ստեփանոս քահանայի թեմական վերատեսչութեան օրով նրա յորդորմամբ սկսուած է այս ուսումնարանի շինութիւնը երկու սենեակներից և տուած է կապալաւ Միքայէլ Քալանթարեանցին և Մերգեյ Վասիլեանցին վեց ամիս ժամանակով...»¹⁸⁴: Ի դեպ, 1880 թ. Ստեփան Տեր-Մովսիսյանը շենքն «ամբողջացնելու» նպատակով նվիրել էր 300 ռ.¹⁸⁵:

Դպրոցը համարյա անընդմեջ գործել է մինչև 1885 թ., որից հետո փոխարինվել է իգական դպրոցով և վերաբացվել 1888-ին: Այն կյանքի էր կոչվել Սոմախի գավառի գործակալ Արշակ քահանա Տեր Ստեփանյանի, թեմական նախկին տեսուչ Ղազարոս Աղայանի և ուսուցչուհի Վարվառե Սիմոնյանցի ջանքերով¹⁸⁶: Ի դեպ, դպրոցի վերաբացման գործում մեծ դեր է խաղացել նաև երեցփոխ Մ. Քալանթարյանը¹⁸⁷:

Հայտնի է, որ 1890 թ. Վելիսցիխեում բացի իգական դպրոցից գործում էր նաև արական դրպրոց, որտեղ, ի թիվս այլ առարկաների, դասավանդվում էր նաև հայոց լեզու. «Ունին նաև երկու ուսում-

նարան-տղայոց և օրիորդաց, որոնցից առաջինը պահում է հասարակութեան հաշուով, ուր ուսանում են երկու ազգի երեխաներ. ուսուցիչներ են՝ մի վրացի և միսը հայ քահանայ, որը բացի կրօնից ուսուցանում է և հայոց լեզու, իսկ վերջինս՝ օրիորդաց եկեղեցական-ծխական միդասեան ուսումնարանը, որը 50-ի չափ աշակերտուհիներ ունի, պահում է նոյն տեղի հայոց եկեղեցու սահմանեալ տուրքով, մոմավաճառութեան արդյունքով և աշակերտուհի-ներից բերած թոշակադրամներով: Օրիորդաց ուսումնարանը բաւական առաջադիմութիւն է արել: Այս վրացախօս գիւղում աշակերտուհիները բաւական պարզ խօսում են հայերէն, գրում են և կարդում շատ վարժ...»¹⁸⁸:

Սակայն դպրոցը կառավարության հրամանով ազգային բոլոր դպրոցների նման փակ է մնացել 1896-1905 թթ. և վերաբացման թույլտվությունն ստանալուն պես կրկին գործել 1906-1911 թթ., բայց արդեն որպես երկսեռ դպրոց: Ի դեպ, 1911 թ. օրվա խնդիր էր «Պետրոսովի» դպրոցի ընդարձակումը՝ շինությանը 2-րդ հարկ հավելելով¹⁸⁹: Դպրոցը գործել է նաև քաղաքական այնպիսի անկայուն ժամանակաշրջանում, ինչպիսին 1919 թ. էր: Հավանաբար, նաև խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին ևս այն գործել է:

Դպրոցը բազմիցս հայտնվել է նյութական սուղ պայմաններում: Այսպես, 1890 թ. դպրոցի հոգաբարձության կողմից թեմի առաջնորդ Մամբրե եպիսկոպոսին հղված հայտարարության մեջ նշված էր. «Միակ միջոց տարածելոյ զհայախօսութիւն ի վիրախօս հասարակութեան մերում և ծանօթս առնելոյ զնոսս յատկութեանց առաքելական ամենամաքուր եկեղեցույ Հայաստանեայց է ազգային ուսումնարան, որպիսին ունի և զիւղս այս յերկուց ամաց հետէ և աշակերտեալ ի նմին օրիորդք ի սուղ ժամանակի բաւական ընտելացեալ են մայրենի լեզուի և տան զմեծ յոյս յառաջադիմութեան, այլ առ ի չգոյէ աղբերաց արդեանց՝ ընդ կարծեօք է յարատւութիւն այնորիկ, իսկ ժողովուրդն, որոց այգիք յանցելումն ամի բոլորովին չորացան և անպատու մնացին, կայ յուսաբէլ և ի վերջին աղքատութեան և չկարէ նպաստել յարատւութեան ուսումնարանին, ուստի հարկ է ապաստանել յօժանդակութեան արդեանց եկեղեցույ գեղջս»¹⁹⁰:

1895 թ. մի լրատվության համաձայն՝ «Մեծ կարողութիւն ունին նոյնպէս ներկայ երեցփոխը, հոգաբարձուները և ուրիշ շատ շատերը, սակայն ինչպէս որ մայրենի լեզուն մոռացուել է, այնպէս էլ հայ ոգին հանգել է սրանց մեջ»¹⁹¹: Անշուշտ, հողավաճառ-գիրը, դպրոցի նյութական ծանր կացությունը հաշ-

182 Նույն տեղում, գ. 3841, ք. 226-228: Ի դեպ, առանց պատմական հիմնավորման՝ ոմն Գ. Մախվիլաճե համարում է, որ վելիսցիխեցի շատ հայեր ի սկզբանե վրացիներ են եղել ու հետո (ԺԹ-Ի դդ.) միայն «հայ գրվել»: Այդ «հայացած» վրացիները, իբր նախապես կրել են Բերձենիշվիլի, Բակիշվիլի, Փերիշվիլի, Գելաշվիլի, Դարբուաշվիլի և Թամիլիաշվիլի ազգանունները (**Գիգա Մախվիլաճե**, Ինչո՞ւ վրացիների մի մասը դարձավ լուսավորչական. - «Ռուբիկոնի», 1988, № 8, վրացերեն):

183 «Հայոց Աշխարհ», 1867, № 9, էջ 384-385:

184 «Մեղու Հայաստանի», 1881, № 273, էջ 2:

185 Նույն տեղում:

186 «Մշակ», 1888, № 129, էջ 2: Տե՛ս նաև՝ «Տարագ», 1893, № 30, էջ 484, № 34, էջ 515:

187 «Նոր-Դար», 1888, № 178, էջ 1:

188 «Նոր-Դար», 1890, № 51, էջ 2:

189 «Тифлисский листок», 1911, № 11, с. 2.

190 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 14, ք. 2:

191 «Արձագանք», 1895, № 23, էջ 3:

վի առնելով, ակնհայտորեն հանգել էր ծայրահեղ եզրակացության: Հարկ է նկատել, որ Վելիսցիխետում գործում էր նաև պետական դպրոց, որն ապահովված էր ամեն ինչով, իսկ ուսուցիչներն էլ անհամեմատ ավելի բարձր աշխատավարձ էին ստանում, ուստի, կարծում ենք, հայկական դպրոցի հոգաբարձուները պահանջվածից շատ ավելին պիտի անեին, որպեսզի հայ ծնողներն իրենց երեխաներին պետական դպրոց չուղարկեին:

Ստորև ներկայացնում ենք Վելիսցիխե գյուղի արական ծխական դպրոցի գործունեությունը 1853-1885 թթ. ընթացքում.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1853 ¹⁹²	հիմնադրվել է		
1861 ¹⁹³	գործում էր		
1865 ¹⁹⁴		1	37
1866 ¹⁹⁵		1	30
1867 ¹⁹⁶		1	20
1868 ¹⁹⁷			27
1871 ¹⁹⁸			31
1872 ¹⁹⁹		2	30
1873 ²⁰⁰		2	35
1875 ²⁰¹	Ստեփանոս քհն. Տեր-Ղազարյանց		30
1876 ²⁰²		1	32
1877 ²⁰³			33
1878 ²⁰⁴		1	30
1882 ²⁰⁵		1	25
1883 ²⁰⁶		1	20
1885 ²⁰⁷	փակվել է		

Ներկայացնում ենք նաև Վելիսցիխե գյուղի իգական ծխական դպրոցի գործունեությունը 1888-1911 թթ. ընթացքում.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1888 ²⁰⁸	սեպտեմբերի 4-ին բացվել է ուսուցիչ Ստեփանոս քհն. Տեր-Ղազարյանց		
1890 ²⁰⁹			56
1891 ²¹⁰	Նունե Օրոյան		50

192 **Խուրդյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 607:

193 Նույն տեղում:

194 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 43:

195 Նույն տեղում, գ. 3848, ք. 115:

196 Նույն տեղում, գ. 3851, ք. 33:

197 Նույն տեղում, գ. 3853, ք. 12:

198 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 608:

199 Նույն տեղում:

200 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, ք. 49:

201 ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 44:

202 Նույն տեղում, գ. 62, ք. 13:

203 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 608:

204 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 99:

205 Նույն տեղում, գ. 3874, ք. 159-160:

206 Նույն տեղում, գ. 3875, ք. 135-136:

207 «Արձագանք», 1895, № 23, էջ 3:

208 «Նոր-Ղար», 1888, № 178, էջ 1:

209 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, ք. 141:

210 Նույն տեղում, գ. 3889, ք. 140: Տե՛ս նաև՝ «Արձագանք», 1895, № 23, էջ 3:

1892 ²¹¹		1	58
1894 ²¹²	օր. Մ. Ջազունյան		52
1895 ²¹³			
1896 ²¹⁴	փակվել է կառավարության հրամանով		
1905 ²¹⁵	նախապատրաստվում էին բացմանը		
1906 ²¹⁶	բացվել է		
1909 ²¹⁷		1	44
1911 ²¹⁸		2	50

Ստորև ներկայացնում ենք Վելիսցիխե գյուղի երկսեռ ծխական դպրոցի գործունեությունը 1912-1920-ական թվականներին.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1912 ²¹⁹	գործել է		
1916/17 ²²⁰	գործել է Կովկ.հայոց բարեգ. ընկ. նպաստով		
1919 ²²¹	գործել է (տարրական)		

Արքունի (պետական) դպրոց. Վելիսցիխետում գործել է նաև պետական (արքունի) դպրոց: Այդտեղ հայերեն չէին սովորում, և վրացական միջավայրում վրացախոս հայ ազգաբնակչության համար դպրոցը կործանարար ազդեցություն էր ունենում: Ի դեպ, այս դպրոցը գործել էր նաև այն բոլոր տարիներին (1885, 1896-1905 թթ.), երբ կառավարության հրամանով փակ էին հայկական դպրոցները: Պետական դպրոցում, ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների մի մասը հայեր էին: Այսպես, 1884թ. դպրոցի կրոնուսույցը Եղիշե քահանա Տեր-Ղազարյանցն էր²²²:

Սբ. Աստվածածին եկեղեցի. շրջակա գյուղերի համեմատ ավելի հայաշատ Վելիսցիխետում հայոց եկեղեցին, անշուշտ, ավելի վաղ է կառուցվել, քան վավերագրում նրա մասին հանդիպող առաջին հիշատակությունն է (1810 թ.)²²³: 1818 թ. եկեղեցին նկարագրված է հետևյալ կերպ. «Ի գեղոն Վելիսցիխե գոյ եկեղեցի մի կամարաշէն կառուցեալ քարիւ և բռանք յանուն Սրբոյ Աստուածածնայ արդեամբ ճարօ Քափանակեանի, իսկ արտաքոյ եկեղեցոյ ի հարաւ կուս ի վերայ դրան քար մի մարմարոնեայ յարմարեալ, որոյ վերայ գրեալ է վրաց. Սուրբ Աստուածածին օգնական լեր ճարօին: Ես Քափանակեանց ննջեցեալ Գէորգոյ որդի՝ ճարօս շինեցի զայն Աստուածածնայ եկեղեցիս, վասն իոր և մօր իմոյ Սարիամին և վասն հոգոյ իմոյ, այլևս վասն զուզակցոյ իմոյ և եղբօր՝ Սարգսի կենացն»²²⁴:

211 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, ք. 112:

212 Նույն տեղում, գ. 3896, ք. 165-166:

213 «Արձագանք», 1895, № 23, էջ 3:

214 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1267, ք. 1:

215 Նույն տեղում, գ. 1267, ք. 1:

216 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 608:

217 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, ք. 11:

218 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 58:

219 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 608:

220 «Համբարաբեր», 1916, № 33, էջ 1035:

221 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 48, ք. 104:

222 «Արձագանք», 1886, № 42, էջ 549:

223 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 447, ք. 8:

224 Նույն տեղում, գ. 2569, ք. 42:



ՎԵԼԻՍՑԻՒՆ. Սբ. Աստվածածին եկեղեցին հյուսիս-արևելքից, հարավ-արևելքից, ներքին տեսքը դեպի արևմուտք և դեպի արևելք

Հայտնի է, որ 1849 թ. Սբ. Աստվածածին եկեղեցու մոտ ուխտավորների համար երեք սենյակ կար²²⁵:

Վելիսցիխեի հայոց եկեղեցին բազմիցս նորոգվել է: 1862 թ. օգոստոսի 8-ին Չաքարիա Քափանակյանցը հոգևոր իշխանություններին հայտնել էր, որ եկեղեցու արևմտյան, արևելյան և հարավային պատերը ճեղքված էին այն աստիճան, որ այլևս ենթակա չէին նորոգման, և հարկավոր էր «ի հիմանէ» նոր եկեղեցի կառուցել: Այդ աշխատանքները կատարելու համար պահանջվել էր 50.000 աղյուս, 60 սայլ կիր, 300 սայլ ավազ, 60.000 կղմինդր և այլ շինանյութեր, ընդամենը՝ 2000 ռուբլի արժողությամբ²²⁶: Ուշագրավ է, նաև Չ. Քափանակյանցի՝ 1865 թ. մեկ

այլ գրությունը, որտեղ կան հետաքրքիր մանրամասներ. «Որպես յայտնի է բազմաց զեկեղեցին Հայոց Վելիսցիխու կառուցեալ է հաւն իմ հանգուցեալ ճարօն Քափանակեանց ի հիմանց իւրովք վաստակօք առանց մասնակցութեան այլոց ուրուք ի վերայ սեպիական գետնոյ մերոյ, ի պատճառս որոց նախնիք մեր հայրն հաւուն իմոյ ընդ ամուսնոյն և եղբորորդոյն թաղեալ են ի մէջ եկեղեցոյն, իսկ յիշեալ հաւն ի հարօն, եղբայր նորա Սարգիսն, որդի՝ նորա՝ Սահակն և թոռն նորա եղբայրն իմ՝ Յօհաննէս թաղեալ են ի գաւթի եկեղեցոյն առ դրան նորին իբրու ի մերում հայրենի գերեզմանատան: Այժմ հայրն իմ՝ Սօլոմանն յ8-ն սոյն (1865) փետրվար ամսոյ վախճանեցաւ անդ ի Վելիսցիխայ և մինչ արարաք զպատրաստութիւն թաղելոյ զնա ի գաւթի նոյն եկեղեցոյ մերոյ մերձ այլոց ննջեցելոց ազգայնոց մե-

²²⁵ Նույն տեղում, գ. 3818, ք. 121-122:

²²⁶ Նույն տեղում, գ. 4429, ք. 1-2, 4:



ՎԵԼԻՍՑԻՆԵ. Սբ. Աստվածածին եկեղեցու զանգակատան տեսքը հարավից, 2-3-րդ հարկերը և ներսը

րոյ...»²²⁷: Հոգևոր իշխանություններն արգելել էին հանգուցյալին թաղել եկեղեցու զավթում և թույլտվություն տալու համար հարազատներից պահանջել 400 ռ. գումար. «...մեք անիրաւացի համարեցաք զպահանջ նոցա, զի 1. եկեղեցին այն հանդերձ գետնովն է սեփականութիւն նախնեաց մերոյ և շինեալ արդեամբք նոցա, մանաւանդ ի դէպս այժմեան նորոգութեան նորին հանդերձեալ իմ նպաստել շինութեան որչափ զօրեսցէ ներկայ կարողութիւնս իմ...»²²⁸: Այնուամենայնիվ, Չաքարիային թույլ չեն տալիս հորը՝ Սողոմոնին, թաղել իրենց իսկ տոհմի միջոցներով կառուցված եկեղեցու բակում, և հանգուցյալի մարմինն ամփոփվում է գյուղի հասարակաց գերեզմանատանը:

²²⁷ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4629, ք. 1:
²²⁸ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4629, ք. 1:

1888 թ. Սբ. Աստվածածին եկեղեցուն հավելվել է զանգակատուն. «Վելիսցիխէ բազմամարդ գիւղը, ուրի եկեղեցին չէր ունեցած զանգակատուն, այս տարի շնորհիւ երեցփոխ Մ. Քալանթարեանցի այդ պակասն էլ լրացաւ: Թէպէտ զանգակատան փառատոր շինութիւնը կանգնեցաւ հասարակութեան տուրքով, բայց մինչև այժմ մտածող և առաջնորդող չէր եղած այդ բարի գործի կատարման համար, բացի պ. Քալանթարեանցից: Պարոնը, ահա վեցերորդ տարին է, որ երեցփոխ է և աշխատում է եկեղեցու պայծառութեան համար»²²⁹: Հարկ է նշել, որ եկեղեցին հնում էլ է ունեցել զանգակատուն: Այսպէս, 1818 թ. նշվել է, որ եկեղեցին ուներ գմբեթազարդ փոքրիկ

²²⁹ «Նոր-Դար», 1888, № 178, էջ 1:



ՎԵԼԻՍՑԻՆԵ. Սբ. Աստվածածին եկեղեցու մկրտարանի ավազանի նվիրատվական վրացագիր արձանագրությունը, զանգակատունը հարավից և տապանաքարեր եկեղեցու ներսում

զանգակատուն. «Մէկ զոյգ զանգակ արտաքոյ եկեղեցոյ կախեալ գիոքոյ կաթողիկէ»²³⁰:

1892 թ. եկեղեցու զանգը կտորվել էր: Նոր զանգ գնել-բերելու նպատակով երեցփոխը բնակիչներից 250 ռ. էր ժողովել, բայց մինչև 1894 թ. այն տեղ չէր հասել²³¹:

1894 թ. եկեղեցին կրկին հայտնվել էր անմխիթար դրոսթյան մեջ և կարոտ էր նորոգության. «Եկեղեցոյ գմբէթը տրաքտրաքուած է և կաթում է անդադար անձրևային օրերին. ուղիղ է, քանի մի տարի առաջ պ. երեցփոխը իբր թէ կարկատեց այդ գմբէթը, բայց... Աստուած կարկատան համարի... իր սեպիական քուրախանից արիզի (չայրած) աղիսներով նորոգելով շուտով երևեցաւ այդ տեսակ

կարկատելու ողբալի հետևանքը և ամենավորը անձրևի ժամանակ սկսան գոյանալ լճակներ եկեղեցում»²³²:

Վելիսցիխեցիները եկեղեցու նոր և հիմնավոր նորոգումներին ձեռնամուխ են լինում 1913 թ., քանի որ «...մօտ քառասուն տարի Վելիսցիխէ գիւղի հայ եկեղեցին բնաւ չէ նորոգուել, թե կտուրը և թե առաստաղն ու պատերը խարխուլ դրոսթեան են հասել...»²³³: Աշխատանքները գլխավորում են երեցփոխները՝ Եփրեմ Իսահակյանցը, Սարգիս Բեժանյանցը, Նասիդ Վասիլյանցը, Դավիթ Իսահակյանցը, Աղասի Մոմխյանցն ու Արշակ Ղազարյանցը: Նրանք պետք է կազմակերպելին և վերահսկելին հանգանակվող նվիրատվություններն ու նորոգման

230 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 42:

231 «Արձագանք», 1894, № 71, էջ 3:

232 Նույն տեղում:

233 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3433, ք. 50, 52:



ՎԵԼԻՍՅԻՆԵ. գերեզմանոցի մնացորդները եկեղեցու հարավ-արևմտյան կողմում, հայերեն և վրացագիր արձանագրություններով տապանաքարեր


գործերը. Կատարված աշխատանքների ու ժամանակի վերաբերյալ, սակայն, տեղեկություններ չունենք:

Եկեղեցին խորհրդային տարիներին. խորհրդային կարգերի հաստատումից հետո Սբ. Աստվածածին եկեղեցին շարունակել է գործել մինչև 1923 թ. ապրիլի 6-ը. ի դեպ, ողջ գույքը բռնագրավվել էր, տեղափոխվել այլ վայր, իսկ եկեղեցին էլ նախատեսվել էր վերածել հասարակական որևէ շենքի²³⁴: Երկու տարի անց, սակայն, այն վերաբացվել է: Այդ կապակցությամբ Վելիսցիխեի հայոց եկեղեցու խորհրդի երեցփոխ Սարգիս Եագորյան Օհանյանը Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Խորեն արքեպիսկոպոսին 1925 թ. հուլիսին գրել է. «Անչափ բաղրատր եմ համարում ինձ ամենախոնարհաբար մատուցանելու առ ոսոս Ազգիս վեհափառ Հայրապետի, որ ամսոյս 21-ին հանդիսատր կերպով և աղօթաւորների խումն բազմութան ներկայութեամբ երկու տարայ արգելանքից յետոյ բացեց տեղիս Սուրբ Աստվածածին եկեղեցին և մատուցեց հանդիսատր պատարագ...»²³⁵:

Հետպատերազմյան տարիներին, 1946 թ., եկեղեցին չէր գործում, սակայն գյուղում կար քահանա²³⁶: Քահանան էր Վարդան Տեր-Ղևոնդյանը, որն էլ նույն քվի հունիսի 26-ին գրել է. «...տեղի եկեղեցին փակ է և բանալու խնդիրը չէ լուծված, թե հաստացեալ համայնքը դժուարանում է օրենքներ կատարել տալ և թե պետական ներկայացուցչութիւնը իմ ներկայութիւնը համարում է ոչ օրինատր, քանի որ ես պաշտօնավարում եմ այնպիսի վայրում, ուր եկեղեցի չկայ, հետևաբար իմ ներկայութիւնը համարվում է ապօրինի...»²³⁷: Ըստ ամենայնի, դրությունը ծանրանում էր նաև Սբ. Էջմիածնի վարած անհեռատես քաղաքականության հետևանքով: Այսպես, 1951 թ. հոկտեմբերի 8-ին, Վարդան Տեր-Ղևոնդյանցին փոխարինած Վահան ավագ քահանա Գրիգորյանը Վելիսցիխեի Վեհափառին գրել էր. «...ս. քահանայապետ նաստիս ուղարկեցիք Վրաստանի վրացախօս Վելիսցիխե գիւղը, ոչ ես նրանց լեզուն գիտեմ և ոչ էլ նրանք իմ լեզուն և եկեղեցի էլ չկայ...»²³⁸: Անտարակույս, վրացախոս հայերին իբրև հովիվ վրացերեն չիմացող քահանա ուղարկելը ակնհայտ ու կոպիտ սխալ էր: Ինչպես և սպասելի էր, շուտով Վելիսցիխեն կորցրեց նաև իր վերջին հոգևոր հովիվին, իսկ եկեղեցին այլևս չվերաբացվեց²³⁹:

Ճարտարապետություն. Սբ. Աստվածածին եկեղեցին բավական ընդարձակ (արտաքին չափերն

են՝ 16,96 x 9,32 մ), միանավ թաղածածկ բազիլիկ է: Երկթեք ծածկի տակ առնված տանիքը ներքուստ պահում են երկու զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Արևելյան կողմում են խորանն ու երկու ավանդատները: Ներքուստ հյուսիսային պատի մեջ պահպանվել է մկրտարանի ավազանը: Երեք մուտքերը բացված են արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներից: Եկեղեցին կառուցված է գետաքարով, աղյուսով ու կրաշաղախով: Ծածկերը կղմինդրապատ են:



ՎԵԼԻՍՑԻՒՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը

Եկեղեցու հյուսիսարևմտյան անկյան մոտ մի քանի մետր հեռավորությամբ կանգուն է 1888 թ. կառուցված բարձրաշեն զանգակատունը: Կառուցված է աղյուսով և կրաշաղախով, ավարտվում է սրածայր վեղարով: Ունի շուրջ 14 մ բարձրություն:

Վիմագրեր.

Արձանագիր քար (գետաքար). ազուցված է եկեղեցու հարավային ճակատին, վրացերեն՝ 3 տող.

*ՏՅ յԵ յՅՏՈՆ ՄՄՕԾԸՕՆ | ԵԵԸԵՆՕՆ
ՏՅՏՄՅԵ Զ... | ՆՏԵՅՏՐԵԾՕՏ ՅՏՐՕ
ՅՏԵՆՏԵՅՆՕՆ.*

Թարգմ. Այս Աստվածածնի եկեղեցին կառուցեցի ծախքով Ճարո Քափանակովի:

1818 թ. եկեղեցում եղած բազմաթիվ իրերից մի քանիսն ունեցել են հայերեն և վրացերեն հակիրճ հիշատակագրություններ²⁴⁰: Ահա դրանք.

1. Շուրջատ.

Յիշատակ Սարգսի կինն՝ Խանումի:

2. Շուրջատ.

Յիշատակ Ճարոյի կինն Բարբարի:

3. Սկիհ.

Յիշատակ է ս(ուր)ք սկիհս Չալոյի որդի՝ Խանսամին, որ ետ Տէր Դաւիթ քահանային. յիշեցէք ի Զ(րիստո)ս. թուին Ռ-ՍԽԳ (1795):

234 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, ք. 9: Նաև՝ ֆ. 57, ց. 3, գ. 525, 33:

235 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3145, ք. 20:

236 Նույն տեղում, գ. 3348, ք. 1:

237 Նույն տեղում, գ. 3341, ք. 36:

238 Նույն տեղում, գ. 3371, ք. 28:

239 1995 թ. զանգակատան տանիքը նորոգել է Չալուաշվիլի Նիկոլոզը:

240 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3371, ք. 28:

Տապանաբար. եկեղեցու ներսում, վրացերեն՝ կարճ 11 տողերով արձանագրված է.

*Քթըլըջնիսրջ ջար /
 յիջանձկոջնոն /
 ճարեհեկեց /
 ջուրջո մե- /
 յճարեհ ջքջլըջնոն մ- /
 յնճոճ ճրճանջո ջուրջոճոն տջջ /...:
 Թարգմ. Ես այստեղ եմ հանգչում Քափանակով-
 ներից Դարչոյի որդի՝ Գիորգին, կարդացողից
 խնդրում եմ ողորմյով հիշեք, նոյեմբեր...*

Հին գերեզմանոց. համաձայն հայոց եկեղեցու կանոնների՝ 1910 թ. մերժվել էր Վելիսցիխեի գերեզմանոցի տարածքը վաճառելու միջնորդությունը²⁵²:

ՎԵՋԻՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հարավ-արևելք:

Հայերը Վեջինում. երկրամասի բազմամարդ այս գյուղում ևս, հավանաբար, ԺԸ դարի 2-րդ կեսին հանգրվանել են փոքրաթիվ հայեր: Վավերագրերում հայերի ներկայությունն այստեղ վկայված է 1802 թ.²⁵³: 1839 թ. նրանք ունեին իրենց ծխական եկեղեցին²⁵⁴: Վեջինը Գուրջաանի հետ միավորված գյուղերից մեկն էր, և արխիվային վավերագրերում նրանց հայ բնակիչների թվաքանակը մեծ մասամբ միասին է հաշվված: Այս հանգամանքով պայմանավորված՝ անհնար է իմանալ Վեջին գյուղի հայերի թվաքանակը յուրաքանչյուր տարվա դրությամբ: Հայտնի է, միայն, որ նրանք համագյուղացի վրացիների համեմատ փոքր թիվ էին կազմում: Այսպես, 1874 թ. 2673 բնակիչներից հայեր էին 109-ը²⁵⁵:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակչության թվաքանակի փոփոխությունները 1885-1908 թթ. ընթացքում.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1885 ²⁵⁶		50	36	86
1890 ²⁵⁷		54	43	97
1891 ²⁵⁸		59	47	106
1892 ²⁵⁹		48	43	91
1894 ²⁶⁰	16			
1897 ²⁶¹		71	58	129
1898 ²⁶²		72	60	132
1899 ²⁶³		71	57	128

252 «Արարատ», 1910, էջ 590:
 253 AKAK, т. 1, с. 472.
 254 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, ք. 26-27:
 255 "Кавказский календарь на 1886 г.", с. 118.
 256 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3879, ք. 225:
 257 Նույն տեղում, գ. 3887, ք. 141:
 258 Նույն տեղում, գ. 3889, ք. 140:
 259 Նույն տեղում, գ. 3891, ք. 112:
 260 Նույն տեղում, գ. 3339, ք. 3:
 261 Նույն տեղում, գ. 3899, ք. 138-139:
 262 Նույն տեղում, գ. 3897, ք. 160:
 263 Նույն տեղում, գ. 3905, ք. 243:

1902 ²⁶⁴		85	65	150
1908 ²⁶⁵	14	54	31	85

1914 թ. գյուղն ուներ 3095 բնակիչ²⁶⁶: Պարզ է, որ հայերը (եթե, իհարկե, կային) շատ փոքր թիվ են կազմել:

Սր. Աստվածածին եկեղեցի. եկեղեցին այս անվամբ հիշվում է 1839 թվից²⁶⁷:

1893 թ. եկեղեցին արդեն քայքայված վիճակում էր. «...եկեղեցին իրեանց գոլով փայտաշեն և է յոյժ հնացեալ և փտեալ և կամին կառուցանել սագաճև քարաշեն ի տեղի նորա...»²⁶⁸: 1894 թ. նոր եկեղեցու կառուցմամբ շահագրգռված էին նաև մերձակա մի քանի գյուղերի հայ բնակիչները, որովհետև նրանք էլ էին հաճախում դրա ծխականները. «...ի Վեջին գեղջ գտանին 16 տուն, ի Բակուրցիխե որ կից է ընդ Վեջին գեղջ 12 տուն, այլև ի Կուլակ 5 տուն, որ սա ևս կից է ընդ Վեջին գեղջ, որ և վասն հաղորդութեան երթան անդ՝ ի Վեջին, ընդ ամենն 33 տուն և դրանք հարկատրին վասն կառուցանելոյ զնոր քարաշեն եկեղեցի մինչ ցհազար ռուբլի»²⁶⁹: Եկեղեցու շինության հոգաբարձուներ էին ընտրվել Արշակ Սարգսյան Յարյանցը, Ալեք Ստարույանը և Միքայել Ներսիսյանը²⁷⁰:

1896 թ. նոր եկեղեցու կառուցման աշխատանքները դեռևս չէին սկսվել: Պատճառը դրամի պակասն էր: Հոգաբարձուները հույս էին հայտնել, թե 1897 թ. բերքահավաքից հետո ժողովարարություն կանեն և կսկսեն կառուցումը²⁷¹:

Թեև տեղեկություն չունենք եկեղեցու կառուցման ընթացքի մասին, բայց 1906 թ. մի վավերագրում Վեջին գյուղում դարձյալ Սր. Աստվածածին անվամբ եկեղեցու հիշատակումը թույլ է տալիս ենթադրելու, որ շինարարական աշխատանքները կատարվել են²⁷²:

ՎԵՓԵՅՈՒՄՅԻՆԵ

Տեղադրություն. դա մեզ չի հաջողվել ճշտել:

Հայերը Վեփյուսցիխեում. ամենայն հավանականությամբ՝ բնակություն են հաստատել ԺԸ դարի վերջերին: Հայերի գոյությունը գյուղում վկայված է 1818 թ.՝ 27 տուն՝ 190 անձ (107 ար. և 83 իգ.):

Ազգատոհմեր. ստորև ներկայացնում ենք հայ ընտանիքների անվանացուցակը՝ ըստ 1818 թ. կազմված վավերագրի.

«1. Տեր Առաքել Մկրտումեան, կինն՝ Մարիամ և տիրացու Մարտիրոս, կինն՝ Մայիա, դուստր՝ Քալիա:

2. Մարգարեան Գիգոյի որդի՝ Յարութիւն, կինն՝ Մաթո, որդի՝ Սարգիս, մայր՝ Նաթել, քոյր՝ Մարիամ, փեսայն տրա, որ առ

264 Նույն տեղում, գ. 3907, ք. 14-15:
 265 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:
 266 "Кавказский календарь на 1915 г.", с. 104.
 267 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, ք. 26-27:
 268 Նույն տեղում, գ. 3339, ք. 1:
 269 Նույն տեղում, ք. 3:
 270 Նույն տեղում, ք. 5:
 271 Նույն տեղում, ք. 7:
 272 Նույն տեղում, գ. 3915, ք. 8:

ինքն եղբայր է արարեալ՝ Սարգիս, կինն՝ Դարեշան, որդիք՝ Պէպան և Յակոբ:

3. Մարգարեան Ափրեանի որդի՝ Ալան և Աղայի այրի կինն՝ Աննա, որդիք՝ Անդրեաս, Մօսէ և Իօսէր և եղբոր՝ Թամազի այրի կինն՝ Թամար, որդի՝ Դաթ, դուստր՝ Մարէր, այլևս եղբոր՝ Ռեվազի դուստր՝ Էլիսաբէր:

4. Ալահվերդեան Գլխալի այրի կինն՝ Մարիամ, որդի՝ Անտօն, դուստր՝ Աննա և Խունթօյի որդի՝ Դաթ, դուստր՝ Մարիամ և Մարկոսի այրի կինն՝ Մայիա:

5. Ալոբեան Գօգլի որդիք՝ Դալիթ, Գիօրգի և Նիհիա, մայր՝ Մայիա, Դաթի կինն՝ Մարիամ, դուստր Մարթայ:

6. Դարբին Գօգինի Իօսէր, կինն՝ Աննա, մայր՝ Աննա:

7. Փարսադանեան Գրիգորի որդի՝ Լամազօ, որդիք՝ Սիմօն և Օսկին:

8. Փարսադանի որդի՝ Աթօ, կինն՝ Աննա, որդիք՝ Յոհաննէս, Մովսէս, Պէտրէ և Դէմէտրէ, ևս Մարբալօ, դուստր՝ Բարբարէ, Յօհաննէսի կինն՝ Էլիսաբէր:

9. Փարսադանի որդի՝ Տօլօ, կինն՝ Թինաթին, որդիք՝ Մաթօ և Լէջա, դուստր՝ Մարթայ:

10. Մելիքի որդիք՝ Մատիա, Գիգօլ և Գիօրգի, դուստրք՝ Թինաթին և Մարէր, Մատինի կինն՝ Մարթայ, դուստր՝ Դարեշան:

11. Բօզինի որդի՝ Սիմօն, կինն՝ Մագթաղին, որդի՝ Իօսանէ, դուստր՝ Նինօ և եղբոր՝ Գրիգորի որդիք՝ Գիօրգի, Պէկն և Բարդօ, Գիօրգոյ կինն՝ Մարիամ, որդի՝ Յարութիւն, Պէպանի կինն՝ Խօրէշան, որդիք՝ Մօսէ և Ջուրաբ, Բարդօյի կինն՝ Մարթայ և Մատինի որբ որդի՝ Աթօ:

12. Շէրմազանի որդիք՝ Մասօ, Շէրմազան, Գիգօլի և Ղազար, Մասօյի կինն՝ Էլէնէ, դուստր՝ Մարթայ, Շէրմազանի կինն՝ Մագթաղին, Գիգօլի կինն՝ Մագթաղին, որդի՝ Մօսէ և Ղազարի դուստր՝ Աննա:

13. Բօշի որդի՝ Ղազար, կինն՝ Մայիա, որդիք՝ Պէպան, Իսանէ և Գիգօլ, դուստրք՝ Դաստա և Էլէնէ:

14. Փէքքար Դաթօ, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Սիմօն:

15. Թանդիլի որդիք՝ Թամազ և Ահարօն, Թամազի կինն՝ Խօրէշան, որդիք՝ Յօհաննէս, դուստրք՝ Մայիա և Մարթայ, ևս Աննա, Ահարօնի կինն՝ Մարթա, որդիք՝ Գէորգ և Աբէլ, դուստր՝ Սուսաննա:

16. Բաբեան Ջազայի որդիք՝ Մամուկ, Գաբրիէլ, Յակոբ, Գիգօլ, Պէտրէ, Ջուրաբ, Գիօրգի, դուստր՝ Թամար, Գաբրիէլի կինն՝ Դարեշան, որդիք՝ Յարութիւն և Ռօստօն, դուստր՝ Մարթայ, Յակոբի կինն՝ Թինաթին և Յարաբէրի որդի՝ Դալիթ:

17. Բաբեան Սարգիսի այրի կինն՝ Մարիամ, որդիք՝ Սօսի և Մաթէ, դուստր՝ Թամար:

18. Ջուրաբի որդիք՝ Նօնէ, Յարութիւն, Անտօն, Իօսանէ, մայր՝ Մարիամ, Նօնինի կինն՝ Թամար, որդիք՝ Սօսի, Գիգօլ և Ջուրաբ, դուստր՝ Մարթայ, Յարութիւնի կինն՝ Աննա, որդի՝ Գիօրգի:

19. Ղազարեան Գօգինի այրի կինն՝ Նաթէլ, որդիք՝ Սօսի, Ղազար, Սօսինի կինն՝ Աննա և Պապունի որդիք՝ Գալ, Գիգօլ և Գիօրգի:

20. Թորոսի որդի՝ Յարութիւն, կինն՝ Մագթաղին, որդի՝ Կահա, դուստր՝ Թինաթին և Յօհաննէսի որբ դուստր՝ Մարիամ:

21. Գանջէլ Պէպան, կինն՝ Բարբարէ, որդիք՝ Աբրամ, Մարտիրոս և Հէրակլ:

22. Յոհաննէսի որդիք՝ Պէպան, Ղազար և Մատի, մայր՝ Մարիամ, թոյր՝ Թամար, Պէպանի կինն՝ Աննա, դուստրք՝ Մարթայ և Մայիա, Ղազարի կինն՝ Թէկլէ, որդի՝ Յօհաննէս, Մատինի կինն՝ Դարեշան:

23. Յարէլի որդիք՝ Թաթուլ և Շաքար, Թաթուլի կինն՝ Լալօ, որդի՝ Գլխալ, դուստր՝ Թինայ, Շաքարի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Յարութիւն, դուստր՝ Աննա:

24. Էսգարի որդիք՝ Ջուկի և Յոհաննէս, Ջուկինի կինն՝ Թինաթին, որդիք՝ Մարտիրոս և Յովսէփ:

25. Բէրձէնի որդի՝ Յակոբ, կինն՝ Դարեշան, որդի՝ Դալիթ և դուստր՝ Աննա, Դաթի կինն՝ Էլիսաբէր:

26. Էստատեան Գիօրգոյ որդի՝ Պէպան, կինն՝ Դարեշան, որդի՝ Գիօրգի, դուստրք՝ Շուշան և Մարիամ և փեսայն սոցայ գանջօցի Յօհաննէս, որ յայժմոյս եղբարացեալ է Պէպանին կինն՝ Մայիա, որդին Գիգօլ, դուստրք՝ Էլիսաբէր և Մարթայ:

27. Վէլիսիսացի Տուղեան Իսանի որդի՝ Թամազ, կինն՝ Թինաթին, որդի՝ Գիգօլ²⁷³:

Եկեղեցի. 1818 թ. հիշվում է գյուղի հայ հասարակության միջոցներով կառուցված փայտաշեն եկեղեցին²⁷⁴:

Քահանա. նույն թվականին Վեփխյուսցիխեի հովիւն էր քահանա *Տեր Առաքել Սկրտումյանը*. ծնվել է 1778 թ., ձեռնադրվել է 1800-ին Շամքորի Ազարիա արքեպիսկոպոսի կողմից²⁷⁵: Որդին տիրացու Մարտիրոսն էր. ծնվել է 1800 թ.:

ՈՒՐԻԱԹՈՒԲԱՆ (ՎԱԶԻՍՈՒԲԱՆ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս-արևմուտք՝ Թելավ տանող մայրուղու վրա:

Անվան ծագումը. Ուրիաթուբան բառացի թարգմանվում է՝ հրեական թաղ: Բայց գոնե ԺԹ դարում գյուղում հրեա բնակչության ներկայությունը որևէ վավերագրում արձանագրված չէ, ուստի, կարծում ենք, որ այդտեղից նրանք հեռացել են ավելի վաղ ժամանակներում: Ի դեպ, 1881-ին գյուղ այցելած գերմանացի հետազոտող Գարլա Մերենան գրել է. «...Ուրիաթուբանի, որ կը նշանակէ „Հրէից գիւղ„: Իրացընէ Հրէայք շինած են այս գեղս, բայց տեղը վաճառականութեան յարմար երևալու համար՝ Հայկայ որդիքն եկած են, և Իսրայելի որդոց ինչուան ցյեկինն՝ ալ վնտած են անտի...»²⁷⁶:

Հայերը Ուրիաթուբանում. Ուրիաթուբանը Կախեթի հայ գաղթականության գլխավոր հանգրվաններից էր: Առնվազն ԺԸ դարում այստեղ հաստատվել են որոշ թվով հայեր: Նրանց ներկայությունը տեղաբնիկ վրացիների հետ վկայված է 1802 թ. մի վավերագրում²⁷⁷: Ողջ ԺԹ դարում հայերը կազմում էին գյուղի բնակչության մոտ կեսը, երբեմն էլ՝ կեսից ավելին: 1874 թ. գյուղի 1251 բնակիչներից²⁷⁸ հայեր էին 653-ը²⁷⁹:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակիչների թվաքանակն ըստ հետևյալ տարիների՝

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ²⁸⁰	34	169	118	281
1839 ²⁸¹		316	269	585
1841 ²⁸²		304	263	567
1842 ²⁸³		307	262	569
1843 ²⁸⁴		306	263	569
1844 ²⁸⁵		311	265	576

273 Նույն տեղում, գ. 2569, թ. 26:
 274 Նույն տեղում:
 275 Նույն տեղում:
 276 Գարլա Մերենա, նշվ. հոդվ., էջ 150-151:
 277 ԱԿԱԿ, տ. 1, ս. 472.
 278 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.
 279 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, թ. 35:
 280 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 14-15:
 281 Նույն տեղում, գ. 3798, թ. 359:
 282 Նույն տեղում, գ. 3802, թ. 42-43:
 283 Նույն տեղում, գ. 3805, թ. 92-93:
 284 Նույն տեղում, գ. 3907, թ. 46-47:
 285 Նույն տեղում, գ. 3809, թ. 45-46:

1845 ²⁸⁶	313	277	590
1847 ²⁸⁷	303	264	567
1852 ²⁸⁸	306	286	592
1853 ²⁸⁹	299	280	579
1854 ²⁹⁰	308	285	593
1857 ²⁹¹	301	256	557
1858 ²⁹²	291	268	559
1860 ²⁹³	304	283	587
1861 ²⁹⁴	313	296	609
1862 ²⁹⁵	320	304	624
1863 ²⁹⁶	329	314	643
1864 ²⁹⁷	323	320	643
1865 ²⁹⁸	100 325	323	648
1867 ²⁹⁹	355	338	693
1870 ³⁰⁰	365	296	661
1873 ³⁰¹	368	298	666
1874 ³⁰²	357	296	653
1875 ³⁰³	365	310	675
1876 ³⁰⁴	374	321	695
1877 ³⁰⁵	378	328	706
1878 ³⁰⁶	339	325	718
1880 ³⁰⁷	415	333	748
1881 ³⁰⁸	429	351	780
1882 ³⁰⁹	432	359	791
1883 ³¹⁰	160 439	365	804
1885 ³¹¹	487	388	875
1887 ³¹²	515	424	939
1889 ³¹³	547	443	990
1890 ³¹⁴	548	456	1004
1891 ³¹⁵	578	466	1044
1892 ³¹⁶	585	468	1053
1893 ³¹⁷	588	474	1062

286 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:
 287 Նույն տեղում, գ. 3814, ք. 67-68:
 288 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:
 289 Նույն տեղում, գ. 2743, ք. 125-126:
 290 Նույն տեղում, գ. 3825, ք. 73:
 291 Նույն տեղում, գ. 3830, ք. 130-131:
 292 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:
 293 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 294 Նույն տեղում, գ. 3839, ք. 6:
 295 Նույն տեղում, գ. 3836, ք. 7:
 296 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:
 297 Նույն տեղում, գ. 3846, ք. 14:
 298 Նույն տեղում, գ. 3848, ք. 23-24, 54:
 299 Նույն տեղում, գ. 3851, ք. 4-5:
 300 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:
 301 Նույն տեղում, գ. 3862, ք. 51-52:
 302 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:
 303 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:
 304 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:
 305 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:
 306 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:
 307 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:
 308 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:
 309 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:
 310 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:
 311 Նույն տեղում, գ. 3877, ք. 33:
 312 Նույն տեղում, գ. 3880, ք. 10:
 313 Նույն տեղում, գ. 3884, ք. 5:
 314 Նույն տեղում, գ. 3887, ք. 140:
 315 Նույն տեղում, գ. 3889, ք. 139:
 316 Նույն տեղում, գ. 3891, ք. 111:
 317 Նույն տեղում, գ. 3895, ք. 27:

1894 ³¹⁸	538	438	976
1897 ³¹⁹	554	446	1000
1898 ³²⁰	617	418	1035
1899 ³²¹	724	420	1144
1900 ³²²	733	445	1178
1901 ³²³	742	454	1196
1902 ³²⁴	753	460	1213
1906 ³²⁵	585	508	1093
1907 ³²⁶			896
1908 ³²⁷	221 622	521	1143
1910 ³²⁸	682	578	1261
1912 ³²⁹	698	592	1290

1914 թ. Ուրիաթուրբանն ունեւր 3158 բնակիչ³³⁰: Աղյուսակի տվյալների համեմատական ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ շուրջ 40%-ը հայեր էին:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Տեր Շմսուճ Մաղաթեան, կինն՝ Էլենե, որդիք՝ տիրացու Գեորգ (ծնեալ 1800), Մալխազ և Դախթ, դստերք՝ Էլիսաբեդ և Թինայ:

2. Բուզուլայի որդի՝ Ռեվազ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Դախթ, Գիգուլ և Սոսի, դուստր՝ Թամար, Դախթի կինն՝ Մարիամ, որդիք՝ Աղայ, Սուլաման և Իսակ, դստերք՝ Անախանում, Մալխա, Գիգուլույ կինն՝ Քալիա և թելավեցի Եզանի որդի՝ Գարօ:

3. Ղարիսի որդի՝ Բաձօ և Օման Բաձօյի կինն՝ Լալօ, որդիք՝ Ջուրապ, Սիմօն և Յովսէփ, դուստր՝ Քալի, Օմանի կինն՝ Դարեջան, որդիք՝ Աբրամ, Պապի և Կիկօ և հորեղբոր Գօզինի որդիք՝ Մեսի և Ջուրապ, Մեսիի կինն՝ Էլենե, որդիք՝ Գօզի և Լուարսաբ և հորեղբոր դուստր՝ Թինայ:

4. Թամազի այրի կինն՝ Մալխա, որդիք՝ Իսակ, Սուլաման, Աբրամ և Շաքրիո:

5. Ղարիսի որդի՝ Սիրգայ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Նինի և Գիօրգի, Նինինի կինն՝ Էլիսաբեդ, դստերք՝ Քեթ, Խանում, Մարիամ և Սիդօնիսա, Գիօրգույ կինն՝ Աննա, որդիք՝ Պետրե և Մատի:

6. Խէչօյի որդի՝ Դաթ, կինն՝ Նազուլխան, որդիք՝ Գլախա և Յարութիմի դուստր՝ Քալիա:

7. Չանտի որդի՝ Պետրե և Ռեվազ, Պետրի կինն՝ Աննա, որդի՝ Գլախա, դստերք՝ Մալխա և Անախանում:

8. Չանտի որդի՝ Յակոբ, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Յովսէփ և Աբրամ ու Սև Գիգուլ, մայր՝ Մարիամ:

9. Չանտի որդի՝ Աբօ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Սիմօն, Կիկօ և Պետրե, դստերք՝ Մարթայ, Էլիսաբեդ և Բարբարե:

10. Սուլամանի որդի՝ Առաքէլ, կինն՝ Թինաթին, որդիք՝ Անտօն, Ղարսաւետար և Աբրամ, Անտօնի կինն՝ Քալի, որդի՝ Յովսէփ և եղբայր Բացօյի որդիք՝ Թարուլ և Շերմազան, դուստր՝ Մալի, մայր սոցա՝ Դարեջան:

11. Տուրոյի որդիք՝ Մեսի և Չաքար, մայր՝ Թամար, Մեսիի կինն՝ Բարբարե, որդի՝ Աբրամ, դուստր՝ Սաբեդօ, ևս միս որդիք՝ Տուդօյի՝ Սիմօն, Նինի և Դենէտրե:

318 Նույն տեղում, գ. 3896, ք. 164-165:

319 Նույն տեղում, գ. 3899, ք. 137-138:

320 Նույն տեղում, գ. 3897, ք. 159:

321 Նույն տեղում, գ. 3903:

322 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:

323 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:

324 Նույն տեղում, գ. 3907, ք. 13-14:

325 Նույն տեղում, գ. 3915, ք. 6:

326 Նույն տեղում, գ. 240, ք. 8:

327 Նույն տեղում, գ. 559, ք. 21:

328 Նույն տեղում, գ. 3917, ք. 4:

329 Նույն տեղում, գ. 3919, ք. 52-53:

330 “Кавказский календарь на 1915 г.”, с. 192.

12. Աբոյի որդիք՝ Գիգի, Պեպան, Սարգիս և Սօլօման, Ջուրաբ, և Մատի, Գիգիների կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Յովսեփ և Կօնի, դստերը՝ Քալի և Մայի, Պեպանի կինն՝ Էլեն:

13. Ղարիպի որդի՝ Դուրա, կինն՝ Թամար, որդիք՝ Իսակ, Գեօ և Կակի, դստերը՝ Սաբեդ և Նաթել և միս խորթ որդին՝ Սօսի, կինն՝ Մարթայ, որդիք՝ Պեպան, Սարգիս և Ջաքար:

14. Տարիելի որդի՝ Ղուքասար, կինն՝ Մարիամ, որդի՝ Սարգիս, դստերը՝ Էլեն, Բարբարե և Սաբեդ:

15. Տերտերի որդի՝ Պապօ, Կիկօ և Թաթուլ, Պապօյի կինն՝ Դարեջան, որդիք՝ Սօսի, Յովսեփ և Կակի, Կիկօյի կինն՝ Մայիա, Թաթուլի կինն՝ Դարեջան, որդի՝ Թեփօրե, դստերը՝ Թինայ և Լալի, Սօսիների կինն՝ Թինա, դստերը՝ Քալիա և Գաբոր, Յովսեփի կինն՝ Խօրեջան, որդի Գլախա, Կակիների կինն՝ Անախանու:

16. Պեպանի որդիք՝ Գիօրգի, Աբրամ և Գրիգոր և Գիօրգույ կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Դաթի և Պեպան, դուստր՝ Թակի, Աբրամի կինն՝ Մայի:

17. Շահերդի որդի՝ Սկրտում. կինն՝ Խօշի, որդիք՝ Թաթուլ, Սիմօն և Դաթ, Թաթուլի կինն՝ Մայիա և բոռն Նօնիհի, դուստր՝ Թամար:

18. Ջուլիների որդի՝ Մատի:

19. Մեկօկի որդի՝ Դաթ, կինն՝ Նաթել, որդիք՝ Սարգիս և Սիմօն, դուստր՝ Թինա և հօրեղբոր Շերմազանի որդի՝ Սօսի, կինն՝ Մարթայ, դստերը՝ Քալի և Խանուն, մայր՝ Քեթևան:

20. Մատիների որդիք՝ Ղարիպ, Ջազա, Գօգի և Սիմօն, քոյր՝ Քեթևան, Ղարիպի կինն՝ Էլեն, դստերը՝ Աննա և Թինա, Ջազի կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Սարգիս, Գօգիների կինն՝ Մարթայ և հօրեղբայր Բեժանի որդի՝ Յակոբ, Ջաքար և Սօսի:

21. Մամաջանի որդի՝ Գլախա, որոյ հորամայր՝ Մարիամ:

22. Սարգսի որդի՝ Սիմօն, կինն՝ Սարրա, դուստր՝ Մայիա, մայր՝ Մարիամ:

23. Խաչօյի որդի՝ Գօգի, կինն՝ Մարիամ, որդի՝ Ալան, դստերը՝ Անախանուն, Մայիա, Մարթայ և Նաթել, եղբոր՝ Տարիելի որդիք՝ Սօսի, Քօջօր և հօրեղբոր որդի՝ Խեչօյի որդի՝ Գլախա, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Աբրամ և Իսակ, դստերը՝ Քալի և Թինաթին:

24. Աբար Պետրոսի կինն՝ Բարբարե, որդիք՝ Պեպան և Յոհաննես, դստերը՝ Մարթայ և Թեկել:

25. Յարութիների որդի՝ Գլախա, կինն՝ Բարբարե, մայր՝ Էլեն, որոյ փեսայն Մարիկի որդի՝ Նիհի, որդիք՝ Իսակ և Սիմօն, դուստր՝ Աննա, Իսակի կինն՝ Թինաթին:

26. Պապայի որդի՝ Դաթ, կինն՝ Աննա, որդիք՝ Գիգօլ, Յովսեփ և Իսակ:

27. Բարբումի որդիք՝ Պապօ և Աբրահամ, Պապօյի կինն՝ Շարուզան, որդիք՝ Գլախայ և Սիմօն, Գլախայի կինն՝ Դարեջան, որդի՝ Սօսի և եղբոր՝ Սեմանի որդի՝ Անդրեա, դուստր՝ Դասեսայ:

28. Բագրատի որդիք՝ Թամազ, Սիմօն և Դաիթ, Թամազի կինն՝ Մարիամ, որդիք՝ Ալան և Շերմազան, Սիմօնի կինն՝ Թինաթին և Դաիթի կինն՝ Լալի:

29. Ղեքար Բեժանի որդիք՝ Բաթօ, Չալօ, Կակի և Սիմօն, մայր՝ Նաթել, Բաթօյի կինն՝ Քեթևան, որդիք՝ Պեպան, Բեժան և Յովսեփ, Չալօյի կինն՝ Թինաթին, Կակիների կինն՝ Բարբարե, Սիմօնի կինն՝ Մարիամ:

30. Իւանի որդի՝ Թաթուլ, կինն՝ Դարեջան, որդիք՝ Սարգիս, Պետրե և Իօհաննէ:

31. Ղարիբօյի որդի՝ Սօսի, կինն՝ Մայիա, որդի՝ Սիմօն, դուստր՝ Էլիսաբեդ և միս եղբարք Մամուկ և Թաթուլ, քոյր՝ Լալի, մայր՝ Ռուստղան:

32. Դալլաք Պօղոս, կինն՝ Դարեջան, որդիք՝ Աղայ, Մալխազ և Մարտիրոս, դստերը՝ Թեկել և Քալի:

33. Մատիների որդի՝ Թամազ, կինն՝ Նաթել, որդիք՝ Յովսեփ, Իւանէ և Սօլօման:

34. Աղբատ կին Մարիամ, որդի՝ Աբրամ»³³¹:

1841 թ. հիշվում է ուրիաթուրանցի Դավիթ Ռւծաղյանը³³²:

331 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 14:
332 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 884, ք. 1:

Ինչ վերաբերում է Ուրիաթուրանի հայագի բնակիչների ազգանուններին, ապա 1912 թ. շարադրված մի համախոսական խնդրագրի ներքո եղած 109 ստորագրությունների մեջբերումը ստորև, կարծում ենք, օգտակար կլինի խնդրով հետաքրքրվողների համար: Ի դեպ, ստորագրությունների մեջ հայերեն են ստորագրել միայն երկու անձ՝ Իսահակ Ղոնյանցն ու տանուտեր Եագոր Ազատյանցը, մյուսները՝ վրացերեն: Դրանք են՝ Աբազաշվիլի՝ Բաղդո, Լևան, Մոսիկո, Ազատով՝ Էլիկո, Սարգիս, Ավետիքով՝ Գասպար, Գևորգ, Գիորգի, Արուֆնով՝ Բաղդո, Գասպար, Սարգիս, Մերգո, Մոլիկո, Բաբլումիշվիլի՝ Աբել, Գասպար, Բագրատաշվիլի՝ Աբել, Մատիա, Եագանով՝ Վանո, Եագորով՝ Աբել, Իագորով՝ Ալեքսի, Գրիգուլ, Խեչոշվիլի՝ Ալեքսի (2 անձ), Արուֆին, Դարչո, Եագոր, Սիխա, Սարգիս, Սաթուլ, Ղարիբաշվիլի՝ Աբել, Եագոր, Ճղալոբ (3 անձ), Կոնիա, Շաքրո, Սարգիս, Սաթուլ (2 անձ), Ստեպկո, Մամաջանով՝ Սարգիս, Մանուչարով՝ Ճղալոբ, Վանո (2 անձ), Մատիաշվիլի՝ Աբրամ, Ալեքսի, Արշակ, Արտեմ, Գիա, Մախո, Նատիլո, Մերգո (2 անձ), Մատիևով՝ Ալյան, Մաքիաշվիլի՝ Դարչո, Մեկոկիշվիլի՝ Արուֆին, Գրիգուլ, Սարգիս, Մոսիկո, Մեկոկիշվիլի՝ Աբել, Միրգոն՝ Բագրատ, Մղեբիշվիլի՝ Աբել, Ալեքսո, Արուֆին, Եագոր, Սիխա, Սարգիս, Մճեղիշվիլի՝ Աղալո, Սիխո, Նիկոլո, Սաթուլ, Վանո, Ռևազաշվիլի՝ Գիա, Մոսիկո, Մանդրո, Փիրուզ, Ռևազիշվիլի՝ Դարչո, Մատիա, Նատիլո, Շաքրո, Սաթուլ, Ռևազով՝ Մելքո, Մոլումնիշվիլի՝ Աբել, Ալեքսի, Աղալո (2 անձ), Արտեմ, Գիա (3 անձ), Սիխա, Նատիլո, Նիկալա, Սաթուլ (2 անձ), Մոլումնիշվիլի՝ Գեուրք, Լևան, Մելիք, Շաքրո, Վանո, Մոլումնյանց՝ Եագոր, Տերտերով՝ Աղալո, Դարչի, Սարգիս (2 անձ, մեկը երեցփոխն էր)³³³:

Դպրոց. ուրիաթուրանաբնակ հայերը վրացախոս էին ու չնայած խորապես գիտակցում, գնահատում ու ավստսում էին մայրենի լեզվի կորուստը, այնուամենայնիվ, անգամ ԺԹ դարի վերջերին, երբ վրացախոս հայերի շատ գյուղերում ծխական դպրոցներ բացվեցին, այստեղ այդպես էլ չբացվեց ազգային դպրոց: Ճիշտ է, տակավին 1880 թ., երբ համազյուղացի վրացիները բացել էին իրենց դպրոցը, հայերը նույնպիսի ցանկություն էին դրսևորել³³⁴, բայց գործը գլուխ չէր եկել:

1912 թ., երբ ազգային դպրոց ունենալու խնդիրն արդեն վաղուց հասունացած էր, գյուղի հասարակության կողմից գրվել էր մի նամակ, ուր մասնավորապես ասվում էր. «Ուրիաթուրան գիւղի հայ ազգաբնակչությունը մօտաւորապէս 200 տուն կորած

333 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 705, ք. 26-27:
334 “Ջրօջծս”, 24.XII.1880. Հոդվածագիր «ուրիաթուրանցի հարևան»-ը այն կարծիքին է, թե հայերը մայրենի լեզուն անտեղի են կարևորում, քանի որ նրանք արդեն վրացախոս են, իսկ եթե հետևեն վայ հայրենասերներին ու, այնուամենայնիվ, բացեն իրենց դպրոցը, ապա ոչ թե կշահեն, այլ կտուժեն:

գոյով Վրաստանի խորքում կորցրել է իր մայրենի լեզուն և հայու յատկությունը պահպանել է միայն եկեղեցու միջոցով, որով մոլորուած ծխականներին կապել է իւր նախահայրերի դաւանութեան հետ»³³⁵: 1913 թ. լրագրային մի հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ երկար սպասված ազգային դպրոցի բացումը վերջապես իրականություն պիտի դառնար. «Թելալի մօտ Ուրիաթուբան վրացախօս գիւղում Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. նախաձեռնությամբ բացելու է ծխական դպրոց»³³⁶: Ծաբաթներ անց նույն օրաթերքը վկայում է 212 տուն հայ բնակիչ ունեցող Ուրիաթուբանում հայոց դպրոցի՝ արդեն բացված լինելու մասին³³⁷: Հայտնի է, որ երկսեռ դպրոցի բացման գործում մեծ է եղել Թելալի Սր. Գևորգ եկեղեցու քահանա Խաչատուր Եզեկյանցի դերը³³⁸:

1914 թ. կանոնավոր գործող հայոց ծխական դպրոցը շարունակեց գործել նաև հետագա մի քանի տարիներին: 1916/17 ուստարում դպրոցը 500 ռուբ. նպաստ է ստացել Կովկ. հայոց բարեգ. ընկերությունից³³⁹: Դպրոցը գործել է անգամ 1919 թ.՝ քաղաքական անկայուն մի ժամանակաշրջանում³⁴⁰: Ըստ ամենայնի, դպրոցը փակված պիտի լինի խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին:

Եկեղեցի. կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ: Վավերագրերում եկեղեցու մասին վաղագույն հիշատակությանը հանդիպում ենք 1818 թ.: Փայտե շինությունը կառուցված էր հասարակության միջոցներով:


1830 թ. եկեղեցին հիշատակվում է Սր. Աստվածածին³⁴¹, իսկ 1840 թ. և հետագա տարիների բոլոր վավերագրերում՝ Սր. Սարգիս անվամբ³⁴²: 1849 թ. հիշված է որպես «փայտեայ անշուք եկեղեցի»³⁴³: 1852 թ. եկեղեցին քայքայված էր ու նորոգման կարոտ: Նորոգման ծախսը, որ կազմում էր 100 ռուբլի, տեղացիները խոստացել էին կատարել իրենց հաշվին³⁴⁴: Մինչև 1876 թ. եկեղեցին վավերագրերում դարձյալ հիշվում է որպես փայտաշեն կառույց³⁴⁵, իսկ 1878 թ. և դրանից հետո արդեն՝ քարաշեն, միևնույն՝ Սր. Սարգիս անվամբ³⁴⁶: Պարզ է, որ 1876-1878 թթ. Սր. Սարգիս եկեղեցին հիմնովին վերակառուցվել էր: Այդ ժամանակահատվածում եկե-

ղեցուց ոչ հեռու կար մի մեծ փայտաշեն տուն՝ ուխտավորների համար³⁴⁷: 1912 թ. թեմական առաջնորդ Եփրեմ եպիսկոպոսին գյուղի հայ հասարակության հղած խնդրագրից երևում է, որ եկեղեցին 1907-ից քայքայված էր ու կարոտ անհապաղ նորոգման: Խնդիրքը հինգ տարի ձգձգվել էր, որի արդյունքում «...եկեղեցին կատարելապես քանդուում է թէ ներքուստ և թէ արտաքուստ...: Եթէ այդ եկեղեցին մինչև ձմեռը չնորոգուի՝ նա հիմնովին կկործանուի»³⁴⁸: Նորոգումը հանձն էին առել կատարել համազոտացիներ Ադա և Աննա Հարությունյանցները՝ եկեղեցու գավթում (բակում) թաղվելու թույլտվություն ստանալու պայմանով³⁴⁹: Համազոտացի մեկ ուրիշ ամուսնական զույգ՝ Տերտերյանները, 1907 թ. միևնույն պայմանով եկեղեցուն նվիրել էին դրան կից գտնվող իրենց սեփական հողամասը (ի դեպ, նրանք ևս թույլտվություն էին ստացել թաղվել եկեղեցու գավթում)³⁵⁰:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ 1923 թ. հուլիսի 21-ին, եկեղեցին փակվել է և նույն օրն իսկ վերածվել գրադարանի, ապա՝ հոկտեմբերի 29-ին՝ ակումբի³⁵¹:

Ուրիաթուբանի Սր. Սարգիս եկեղեցին այժմ էլ գոյություն ունի:

Ճարտարապետություն. եկեղեցին միանավ թաղածածկ շենք է: Արևելյան կողմում ունի բարձր բեմով խորան և կից երկու կրկնահարկ ավանդատներ: Երեք մուտքերը բացված են արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներից: Թվով 8 լուսամուտները ապահովում են բավարար չափով



ՈՐՐԻԱԹՈՒԲԱՆ. Սր. Սարգիս եկեղեցու հատակագիծը

լուսավորությունը (2-ական՝ հյուսիսային և հարավային, 3-ը՝ արևելյան և 1-ը՝ արևմտյան ճակատներում): Երկթեք ծածկի տակ առնված սլաքածև թաղը ներքուստ պահում են երկու զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Եկեղեցին

335 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 705, ք. 26-27:

336 «Հորիզոն», 1913, № 169, էջ 2:

337 «Հորիզոն», 1913, № 211, էջ 3:

338 ՀԱԱ, ֆ. 57Պ, ց. 3, գ. 191, ք. 19:

339 «Համբարաբեր», 1916, № 33, էջ 1034:

340 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 48, ք. 104:

341 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, ք. 64:

342 Նույն տեղում, գ. 3798, ք. 31:

343 **Տեր Ղազարեանց Յովհաննես վարդապետ Արշարունի**, նշվ. հոդվ., էջ 284:

344 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2207, ք. 6, գ. 3166, ք. 4:

345 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 6:

346 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:

347 Նույն տեղում, ք. 60:

348 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 705, ք. 26:

349 Նույն տեղում:

350 «Արարատ», 1912, էջ 291:

351 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, ք. 9: Նաև՝ ֆ. 57, ց. 3, գ. 525, ք. 75:



ՈՐՐԱԹՈՐՔԱՆ. Սբ. Սարգիս եկեղեցին հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, արևմուտքից և արևելքից

կառուցված է աղյուսով և զետաքարով: Արտաքին չափերն են՝ 14,46 x 7,98 մ:

Վիմագրեր. Եկեղեցում եղել են բազմաթիվ իրեր. դրանցից երկուսն ունեցել են հիշատակագրություններ: Ահա դրանք.

Շուրջատ.

Յիշատակ Տէր Յոհաննէս քահանայի:

Հրատ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 14:

Աստվածաշունչ.

Յիշատակ Տէր Յոհաննէսի:

Հրատ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 14:

Քահանա. *Տեր Շմական Մադաթյան.* քահանայագործել է 1793-1818 թթ.: Ծնվել է 1768 թ., ձեռնադրվել է 1793-ին՝ Հաղբատի առաջնորդ Դավիթ

արքեպիսկոպոսի կողմից³⁵²: Որդին տիրացու Գևորգն էր. ծնվել է 1800 թ.:

Գյուղի քահանայի մասին 1883 թ. նշվել է. «...քահանայ տեղոյն զառամեալ և վատացեալ աչօք, չկարէ հովուել զնոսա...»³⁵³:

Գևորգ Մեհրաթյանց. հիշվում է 1908 թ.³⁵⁴:

Գերեզմանոց. Եկեղեցու շրջակայքում և գլխավորապես հյուսիսային պատի տակ ամփոփված են վերևում հիշատակված նվիրատուներն ու նշանավոր այլ անձինք: Տապանաքարերը գորշ ավազաքարից են, սրբատաշ, ուղղանկյունաձև ու դազադաձև և ունեն վրացերեն արձանագրություններ: Ահա դրանցից մի քանիսը.

352 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 259, ք. 14:

353 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7727, ք. 1:

354 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:

կան է, որ նրանք գյուղում հաստատվել էին ԺԸ դարի վերջերին (ինչպես շրջակա շատ բնակավայրերում): Վավերագրերի մեծագույն մասում Քողալոյի հայերի թիվը ցույց է տրված մերձակա գյուղերի սակավաթիվ հայերի հետ: Հայտնի է, որ 1874 թ. գյուղի 1003 բնակիչների մոտ 1/10- մասը հայեր էին³⁶⁰: 1908 թ. քողալոյաբնակ հայերը ընդամենը 3 տուն էին՝ 8 շունչ (4 ար. և 4 իգ.)³⁶¹: 1914 թ. գյուղի բնակչության թիվը հասել էր 1607-ի³⁶²:

Եկեղեցի. հայերն ունեցել են իրենց եկեղեցին, բայց, ցավոք, այդպես էլ չկարողացանք գտնել մի

աղբյուր, որից հայտնի լիներ դրա կառուցման ժամանակը: Այն առաջին անգամ հիշվում է 1839 թ.՝ Սբ. Հրեշտակապետաց անվամբ³⁶³: Եղել է փայտաշեն³⁶⁴: ԺԹ դարավերջին ու Ի դարասկզբին եկեղեցին հիշվում է Սբ. Գևորգ անվամբ³⁶⁵: Անվանափոխությունը, անշուշտ, կապված է եղել եկեղեցու օժման հանդեսի հետ, որն էլ կարող էր տեղի ունենալ միայն եկեղեցու հիմնավոր վերանորոգումից կամ վերակառուցումից հետո: Ըստ ամենայնի՝ ԺԹ դարի 2-րդ կեսին Քողալոյի հայոց Սբ. Հրեշտակապետաց եկեղեցին վերանորոգվել է:

360 "Кавказский календарь на 1885 г.", с. 118.

361 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

362 "Кавказский календарь на 1915 г.", с. 144.

363 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, ք. 26-27:

364 Նույն տեղում, գ. 3805, ք. 95:

365 Նույն տեղում, գ. 3895, ք. 63, նաև՝ գ. 3896, ք. 66, ց. 1, գ. 3915, ք. 8:

ԹԵԼԱՎԻ ՇՐՋԱՆ

Գտնվում է Ալազան գետի աջ ու ձախ կողմերում: Նախկինում կազմում էր Թելավի գավառի հիմնական մասը: Սահմանակից է Վրաստանի Հանրապետության Ախմետայի, Սագարեջոյի, Գուրջաանի, Դվարեղի շրջաններին և Ռուսաստանի Դաշնության կազմում գտնվող Դաղստանի Ինքնավար Հանրապետությանը: Շրջկենտրոնը Թելավ քաղաքն է: Տարբեր ժամանակներում տարածքի 19 բնակավայրերում վրաց ազգաբնակչության հետ բնակվել են նաև հայեր: Վերջիններս գերակշռող մաս էին կազմում միայն Ռուխայիր, Սանիոր գյուղերում և Թելավ քաղաքում, իսկ մնացած գյուղերում փոքրաթիվ էին: Հայկական դպրոցներ գործել են միայն Թելավում: Պատմական հուշարձաններից նշանավոր են Թելավի Սբ. Աստվածածին, Չվեղգավազանի Սբ. Գևորգ, Սբ. Երրորդություն, Ծինանդալի Սբ. Աստվածածին և այլ եկեղեցիները:

ԱԽԱՏԵԼ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 5-6 կմ հյուսիս-արևմուտք: Միավորված է Ռուխայիրի գյուղխորհրդի հետ:

Հայերն Ախատելում. երկրամասի վրացական այս փոքր գյուղում հայ գաղթականները հաստատվել են ԺԸ դարից ոչ ուշ: Նրանց ներկայությունն այստեղ հիշվում է 1802 թ.¹: Սակավաթիվ հայեր բնակվել են մինչև 1870 թ., որից հետո այն վերածվել է վրացախառն քրքարնակ գյուղի: Լրագրային մի հաղորդագրությունից պարզվում է, որ այդտեղ առևտուր անող մի հայ 1885 թ. ընդունել էր մահմեդականություն (սա խիստ մասնավոր դեպք է). «Մեր քաղաքին մօտիկ Ախատել գիղում, որն առանձնապես բնակեցված է թուրքերով, առուտուր անող մի հայ վաճառական Չ. մահմեդականություն ընդունեց...»²:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք Ախատելի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ³	22	70	57	127
1841 ⁴		37	44	81
1842 ⁵		42	43	85
1843 ⁶		42	42	84
1844 ⁷		42	41	83
1845 ⁸		43	44	87
1847 ⁹		20	21	41
1849 ¹⁰		12	6	18

1 AKAK, T. 1, c. 471.
 2 «Նոր-Նար», 1885, № 88, էջ 1:
 3 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3879, ք. 225:
 4 Նույն տեղում, գ. 3802, ք. 41-42:
 5 Նույն տեղում, գ. 3805, ք. 92-93:
 6 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:
 7 Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46:
 8 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:
 9 Նույն տեղում, գ. 3814, ք. 67-68:
 10 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:

1852 ¹¹		10	8	18
1857 ¹²		1	1	2
1858 ¹³		1	1	2
1860 ¹⁴		2	2	4
1861 ¹⁵		4	2	6
1865 ¹⁶	2	4	2	6
1867 ¹⁷		5	2	7
1870 ¹⁸		3	1	4

1914 թ. Ախատելը զուտ վրացաբնակ գյուղ էր՝ 242 շնչով¹⁹:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

- «1. Տեր Պետրոս Յարութիւնեան, կինն՝ Մարթայ, որդի՝ Յոհաննես, դուստր՝ Մարիամ:
- 2. Բեգիջանի որդի՝ Ղասում, որդի՝ երեցվոխ Յովսէփ, կինն՝ Թամար, որդիք՝ Պետրոս, Յոհաննես և Մարտիրոս, դստերք՝ Հռիփսիմէ և Մարիամ:
- 3. Բեգիջանեան Մարգսի որդիք՝ Գօգի, Աւետիք, մայր՝ Մարիամ, Գօգիմի կինն՝ Էլիսաբէդ, որդի՝ Գասպար, դստերք՝ Թինաթին, Քէրէվան, Աւետիքի կինն՝ Մարթայ:
- 4. Բեգիջանեան Դաւթի որդիք՝ Գրիգոր և Աբրահամ, Գրիգորի կինն՝ Թամար, որդի՝ Դարչիա, դուստր՝ Ովսաննա, Աբրահամի կինն՝ Մայիա, դուստր՝ Բարբարէ և միս որդոյ՝ Գալուստի այրի կինն՝ Էլիսաբէդ, որդիք՝ Գլխիս և Պապիկ, դուստր՝ Մարթայ:
- 5. Ղարաբաղցի Սիմօնի որդիք՝ Մահակ և Գիօրգի, Մահակի կինն՝ Աննա, Գիօրգոյ կինն՝ Մարթայ:
- 6. Եսաեայ որդի Մարգիս, կինն՝ Մարիամ:
- 7. Բեգիջանեան Դաւթի այրի կինն՝ Ազիզ, որդիք՝ Յոհաննես և Մէլքօ, դուստր՝ Կատարինէ:
- 8. Կլէկչի Մարգսի կինն՝ Թինաթին, որդիք՝ Դաւիթ և Ղազար:
- 9. Չուրաբի որդիք՝ Մարգիս և Նիկողայոս, Մարգսի կինն՝ Քէրէվան, դուստր՝ Խանում, Նիկողայոսի կինն՝ Թամար, որդիք՝ Չուրաբ և Մէլքօն:

11 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:
 12 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:
 13 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:
 14 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 15 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:
 16 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23,54:
 17 Նույն տեղում, գ. 3851, ք. 3:
 18 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:
 19 "Кавказский календарь на 1915 г.", с. 92.

- 10. Ղազարի որդիք՝ Գեորգ և Աղալօ, մայր՝ Էլիսաբեդ:
- 11. Շահողուի որդի՝ Գլախա, կինն՝ Քեթեվան, որդիք՝ Յարութին և Սօլօման, դստերը՝ Մայիա և Էլիսաբեդ:
- 12. Թուրաբի որդի՝ Յոհաննես, կինն՝ Մաթօ, որդիք՝ Յոհաննես, Գուրգեն, Սիմօն և Ջուրաբ և Շերմազան, այլև որդույ Գուրգենի կինն՝ Էլիսաբեդ, ևս միս եղբոր՝ Ստեփանի որդիք՝ Գլախա և Գիօրգի:
- 13. Բեգիջանեան Մարգի որդի Յարութին, կինն՝ Մարթայ, որդիք՝ Գեվօ և Ենօբ, դուստր՝ Քալիա և միս որդույ՝ Առաքելի որդի՝ Շաքարօ:
- 14. Թուրաբեան Ռօստօմի որդի Յովսէփ, կինն՝ Մայիա, որդիք՝ Դաթ և Ղազար, դուստր՝ Բարբարե, մայր՝ Աննա:
- 15. Մաղդեի Ազարիա, կինն՝ Աննա, դուստր՝ Թամար:
- 16. Բաղդասարի որդի Յարութին, կինն՝ Մայիա, որդիք՝ Աղայ, Դաթ, Կակի և Պէպան:
- 17. Բահնդուրի որդի Դաթ, կինն՝ Աննա, որդիք՝ Սօսի և Գեօրգի և խորք դուստրն՝ Քալիա և Մարիկ:
- 18. Ապրեսի որդիք՝ Եսայի և Դանէլ, մայր՝ Հուրի, Եսայեա կինն՝ Մարիամ, որդիք՝ Աւետիք, Յոհաննես և Պետրոս, Դանէլի կինն՝ Եղիսաբեդ, որդի՝ Սօղօմօն, դստերը՝ Վարթ և Դասիա:
- 19. Բեգիջանեան Պէպան, կինն՝ Մարիամ, դուստր՝ Բարբարե, գոքանչն՝ Էլէն, սորա տեգեր՝ Թաթուրի դուստր՝ Խօրէշան և եղբոր՝ Խաչօյի որդիք՝ Իսանէ և Գեվօ:
- 20. Սօմխի որդիք՝ Աղալօ և Աւետիք, որոց հայրն՝ Պէպան, մայրն՝ Մայիա, քորք՝ Մարթայ և Քալի:
- 21. Աֆեմի որդի Կօնի, կինն՝ Քեթեվան, որդի՝ Գլախա:
- 22. Սամաչէլ Յօհանի որդի Սօլօման, կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Շիօ, դուստր՝ Թամար»²⁰:

1857 ²⁸		39	36	75
1858 ²⁹		38	36	74
1860 ³⁰		43	36	79
1861 ³¹		37	30	67
1862 ³²		37	29	66
1863 ³³		38	28	66
1864 ³⁴		37	28	65
1865 ³⁵	7	37	28	65
1867 ³⁶		39	27	66
1870 ³⁷		30	29	59
1873 ³⁸		21	14	35
1874 ³⁹		29	14	43
1875 ⁴⁰	28	15	43	
1876 ⁴¹		27	15	42
1877 ⁴²		27	15	42
1878 ⁴³		27	16	43
1880 ⁴⁴		27	19	46
1881 ⁴⁵		27	20	47
1882 ⁴⁶		28	18	46
1883 ⁴⁷		28	15	43
1899 ⁴⁸		15	17	32
1900 ⁴⁹		18	16	34
1901 ⁵⁰		19	17	36
1908 ⁵¹	5	18	10	28
1910 ⁵²		19	11	30

Եկեղեցի. եղել է հասարակության ծախսով կառուցված Սբ. Աստվածածին անվամբ փայտաշեն մի եկեղեցի: Կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ, բայց արդեն 1818 թ. հիշատակվում է²¹:

1852 թ. եկեղեցին գտնվում էր քայքայված ու անօգտագործելի վիճակում²²:

Քահանա. Տեր Պետրոս Հարությունյան. հիշվում է 1804-1818 թթ.: Ծնվել է 1763 թ., ձեռնադրվել 1804-ին Սինաս արքեպիսկոպոսի կողմից²³:

ԱՐԹԱՆԱ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս՝ Մեծ Կովկասի ստորոտում՝ Ալազան գետի ձախակողմում՝ Մանիոր գյուղից 3 կմ հյուսիս:

Հայերն Արթանայում. վրացաբնակ այս գյուղում հայերի ներկայությունը վկայված է 1802 թ.²⁴: Հավանաբար, ԺԸ դարում այստեղ հաստատված հայերը ԺԹ դարի առաջին կեսին արդեն մոռացության էին մատնել մայրենի լեզուն:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ²⁵	7	25	26	51
1841 ²⁶		37	32	69
1852 ²⁷		33	26	59

20 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 19:
 21 Նույն տեղում: AKAK, Դ. 1, Կ. 471.
 22 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, ք. 29: Նաև՝ գ. 3891, ք. 64-65:
 23 Նույն տեղում, գ. 2569, ք. 19:
 24 AKAK, Դ. 1, Կ. 472.
 25 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, ք. 41-42:
 26 Նույն տեղում:
 27 Նույն տեղում, գ. 3815, ք. 64-65:

1914 թ. Արթանա գյուղն ուներ 369 բնակիչ⁵³: Աղյուսակի տվյալներից կարելի է պատկերացնել, որ հայերը կազմում էին բնակչության չնչին մասը:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. վավերագիրը, որտեղ տրված է գյուղի հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

- «1. Ազարիայի որդի Բեդո, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Նիհիայ և Լազարե, մայր՝ Դարեջան:
- 2. Ազարիայի որդիք՝ ճրել և Ջուրաբ, ճրելի կինն՝ Քեթեվան, որդիք՝ Յարութին և Թօմայ, ևս դուստր՝ Ազարիայի՝ Մարթայ, Ջուրաբի կինն՝ Եղսում, դստերը՝ Մայիա և Էլէն:

28 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:
 29 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 30 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 31 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:
 32 Նույն տեղում, գ. 3836, ք. 6:
 33 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:
 34 Նույն տեղում, գ. 3846, ք. 13:
 35 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23, 54:
 36 Նույն տեղում, գ. 3851, ք. 51:
 37 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:
 38 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:
 39 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:
 40 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:
 41 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:
 42 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:
 43 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:
 44 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:
 45 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:
 46 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:
 47 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:
 48 Նույն տեղում, գ. 3903:
 49 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:
 50 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:
 51 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:
 52 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 5:
 53 “Кавказский календарь на 1915 г.”, с. 91.

3. Դաթնի որդիք՝ Դալիթ և Բեժան, մայր՝ Մարիամ, Դալիթ կինն՝ Մայիա, որդի՝ Սօսի, դուստր՝ Թեկլե:

4. Բիտենի որդի՝ Սիմօն, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Նինի, Ամիրան, Սօսի և Ջաքարիաս, դուստր՝ Մայիա, Նինիի կինն՝ Ռուստոյան, դուստր՝ Մանիժա, Ամիրանի կինն՝ Էլեն:

5. Փիրանի այրի կինն՝ Թամար, որդի՝ Գիօրգի և Բերօ, դստերը՝ Նինօ և Աննա:

6. Բիտեան Բեժանի այրի կինն՝ Աննա, որդի՝ Պավլե, կինն՝ Ռուստոյան, որդի՝ Պետր:

7. Պատարկացի որդիք՝ Շերմազան, Գլախա, Բեժան, Սիմօն և Պեպան, մայր՝ Էլիսաբեդ, Շերմազանի կինն՝ Թինաթին, որդի՝ Յարուիթն, դստերը՝ Գուրբայ և Միրբայ, Գլախայի կինն՝ Բարբարե, դուստր՝ Էլեն:⁵⁴

Եկեղեցի. արքանաբնակ սակավաթիվ հայերը եկեղեցի չունեին, իսկ շատ դեպքերում գուրկ են եղել նաև ծխական քահանայից:

Հայերն ունեին իրենց գերեզմանատունը:

Հանքեր. Կարայանցները (գյուղում նշանավոր ազնվական տոհմ էր) տիրում էին ընդարձակ կավածքների, որոնք հարուստ էին նաև մետաղի հանքավայրերով⁵⁵: Մասնավորապես, պղնձի որոշ հանքավայրերի հետազոտումը սկսվել էր դեռևս 1875 թ.⁵⁶: Հայտնի է, որ գյուղից հյուսիս՝ ազնվական Գ. Ս. Կարալովի կավածքում գտնվող պղնձի հանքավայրը 1891 թ. դեռևս չէր շահագործվում⁵⁷:

ԲԱՅԻՆՈ

Տեղադրություն. գտնվում է Օժիո և Գուլգուլա գյուղերի միջև:

Հայերը Բայիխոյում. այդ մասին հիշատակություններ համարյա չկան: Միայն հայտնի է, որ 1818 թ. գյուղում բնակվում էր մեկ տուն հայ՝ Գորգի որդիներ Ավետիքն ու Դավիթն իրենց ընտանիքներով, ընդամենը՝ 10 շունչ (4 ար. և 6 իգ.)⁵⁸:

ԳՈՒԼԳՈՒԼԱ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 5-6 կմ հյուսիս, Ալազան գետի աջափնյա հարթավայրում:

Հայերը Գուլգուլայում. հայերի ներկայությունն այստեղ վկայված է 1802 թ. մի վավերագրում⁵⁹: Ժողարում գյուղում նրանց թիվը գրեթե միշտ կազմել էր միջինը 40 շունչ: 1874 թ. 1041 բնակիչներից հայ էին միայն 37-ը⁶⁰: Ի դարի սկզբներից նրանց թիվը խիստ նվազել է, իսկ 1910-ականներից հետո այլևս հայեր չեն բնակվել:

Վիճակագրություն. տարբեր տարիներին Գուլգուլայում բնակված հայերի թվաքանակը ներկայացնում է հետևյալ պատկերը.

54 ՀԱՍ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 24:

55 “Закавказье”, 1909, № 14, с. 2.

56 «Մշակ», 1875, № 28, էջ 3:

57 Кахетия. приложение к справочной книге старожила “Кавказ”, № 3, с. 22.

58 ՀԱՍ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 19:

59 АКАК, т. 1, с. 471.

60 “Кавказский Календарь на 1886 г.”, с. 118.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ⁶¹	6	20	21	41
1865 ⁶²	5			
1870 ⁶³		22	24	46
1873 ⁶⁴		17	16	33
1874 ⁶⁵		16	22	38
1875 ⁶⁶		16	23	39
1876 ⁶⁷		16	22	38
1877 ⁶⁸		18	23	41
1878 ⁶⁹		18	24	42
1883 ⁷⁰		18	24	42
1900 ⁷¹		10	15	25
1901 ⁷²		11	16	27
1908 ⁷³	4	7	8	15
1910 ⁷⁴		3	3	6

1914 թ. գյուղն ուներ 943 բնակիչ⁷⁵ (հավանաբար, բոլորն էլ վրացիներ):

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. վավերագիրը, որտեղ տրված է գյուղ հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Արուքի որդի ջուլիակ Դալիթ, կինն՝ Խամփերվան, մայր՝ Աննա:

2. Փարսաղանի որդիք՝ Մարգիս և Գլախա, մայր՝ Մարիամ, Մարգիսի կինն՝ Նաթել, դուստր՝ Աննա, Գլախայի կինն՝ Մարիամ, որդիք՝ Դալիթ և Իանե, դստերը՝ Էլիսաբեդ, Նինօ և Մայիա:

3. Առաքելի որդի Յովսեփ, կինն՝ Թամար, որդի՝ Գիօրգի, դստերը՝ Ռուստոյան և Բարբարե և եղբոր՝ Տեր Պետրոսի այրի կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Յոհաննես, Ստեփան և Բաղդասար, այլևս Մամաջանի դուստր՝ Թամար:

4. Սուքիասի որդի Սօսի:

5. Պեպանի որդի Ջուրաբ, կինն՝ Մարիամ, դուստր՝ Մայի:

6. Իսմաէլեան Դալիթ, որդիք՝ Սօլոման, Գլախեն, Ջուրաբն, Իանե և Անդրիաս, մայր՝ Մագաղին, Գլախի կինն՝ Մարիամ, որդի՝ Իսակ և եղբոր՝ Յակոբի որդի Աթօն և ևս եղբոր՝ Յարուիթի այրի կինն՝ Մայի, որդի՝ Պետրե, դստերը՝ Բարբարե և Նինօ»⁷⁶:

ԹԵԼԱՎ

Տեղադրություն. համանուն շրջանի կենտրոնն է, Արևելյան Վրաստանի խոշորագույն քաղաքը. գտնվում է Կախեթի կենտրոնական մասում՝ Թբիլիսիից 60 կմ հյուսիս-արևելք՝ Յիվի-Գոմբորի անտառածածկ լեռնաշղթայի հյուսիսարևելյան ստորոտին՝ Ալազան գետի աջ ափից 9 կմ հեռու, ծովի

61 ՀԱՍ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 20:

62 Նույն տեղում, գ. 3848, ք. 54:

63 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:

64 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:

65 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:

66 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:

67 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:

68 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:

69 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:

70 Նույն տեղում, գ. 3875, ք. 23:

71 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:

72 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:

73 ՀԱՍ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:

74 ՀԱՍ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 5:

75 “Кавказский Календарь на 1915 г.”, с. 113.

76 ՀԱՍ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 20:

մակերևույթից 620-800 մ բարձրությամբ մեղմաթեք լեռնալանջերին: Թելավը համանուն շրջանի կենտրոնն է:

Անվան ծագումը. հայտնի են Թելավ անվան ստուգաբանության մի քանի տարբերակներ: Դրանցից մեկի համաձայն՝ քաղաքը «...այսպես յորջորջեալ է իր խիստ առողջարար օդոյն համար, Վրացուր թելի-աւա բառից աղաւաղութեամբ, որ ասել է «առողջ օդ»⁷⁷:

Ըստ մեկ այլ կարծիքի՝ Թելավն իր անունն առել է վրացերեն մարմին (թելա- uimus) բառից, որից ծագում են նաև Թելավ, Թելովան, Թելեթ տեղանունները⁷⁸:

Ըստ հայկական ավանդապատում-ստուգաբանության՝ անվան ծագումը բացատրվում է հետևյալ կերպ. «Տեղացի հայերը վկայում են, որ Թելավ բառը ծագում է հայերեն թե-լավ է (եթե լավ է) խոսքից: Որպես ապացույց նրանք բերում են հետևյալ ավանդությունը. Կյուրիկե Մեծը Ելիզավետպոլից իր մոտ է հրավիրում հայերին իրենց հավանած տեղում բնակվելու՝ վստահեցնելով, որ այնտեղ կլիման բարենպաստ է: Հայերը տեղափոխվում են միայն կլիմայի բարեհաջող լինելու պայմանով: Ի հաստատումն այս ավանդության, նրանք պնդում են, որ Թելավի բնակիչները եղել են հայերը և մատնացույց են անում հին բերդում գտնվող հայկական եկեղեցին...»⁷⁹:

Պատմություն. Թելավի տարածքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից: Հայտնաբերված հնագույն հուշարձանները վերաբերում են բրոնզե դարին: Մ. թ. առաջին դարերում Թելավն արդեն խիտ բնակեցված վայր էր, իսկ Ը-Ժ դարերում քաղաք էր: 1014-ից Կախեթ-Հերեթի թագավորության մայրաքաղաքն էր:

Քաղաքի հիմնադրումը. ըստ որոշ աղբյուրների՝ քաղաքի հիմնադրումը կապվում է Կյուրիկե Մեծի անվան հետ (մահ. 1039 թ.), բայց, ակնհայտորեն, խոսքը վերաբերում է Թելավը մայրաքաղաք դարձնելուն⁸⁰:

Քաղաքը ԺԲ դարում. 1104 թվականից, երբ Դավիթ Շինարարը հինք դրեց Վրաստանի միացյալ թագավորությանը, Թելավն այլևս մայրաքաղաք չէր, բայց շարունակեց գոյատևել որպես բազմամարդ վաճառաշահ ու հարուստ քաղաք:

Քաղաքը ԺԳ դարում. սոնդոլներն ավերեցին Թելավը:

Քաղաքը ԺԵ-ԺԷ դարերում. ԺԵ դարի կեսերից մինչև 1760-ական թվականները, երբ Կախեթի թագավորության մայրաքաղաքը Գրեմն էր, Թելավը

երկրամասի երկրորդ գլխավոր քաղաքն էր: 1614 և 1616 թթ., երբ պարսիկներն ավերեցին Գրեմնը, ու այն կամաց-կամաց ամայացավ, Թելավը կրկին վերածվեց թագավորանիստի: 1667 թ. Արչիլ թագավորը (Շահ-Նազար խանը)⁸¹ Կախեթի մայրաքաղաքը պաշտոնապես փոխադրեց Թելավ ու կառուցեց արքայական պալատ⁸²:

ԺԸ-ԺԹ դարերում. Թելավում շինարարական գործունեությունը շարունակեց նաև Կախեթի Դավիթ Բ թագավորը: Մինչև Ռուսաստանի հետ երկրամասի (նաև ողջ Վրաստանի) միացումը (1801 թ.) Թելավը Կախեթի թագավորների նստավայրն էր⁸³: Այնուհետև մինչև խորհրդային կարգերի հաստատումը Թելավը գավառական քաղաքի կարգավիճակով համանուն գավառի, ապա՝ համանուն շրջանի կենտրոնն էր:

Կառուցապատում. արդեն ԺԹ դարի կեսին Թելավը բարեկարգ քաղաք էր, աչքի էր ընկնում գեղեցիկ ու հարմարավետ բնակելի շենքերով. «Շինուած տանց են գեղեցկաշէն ըստ ձևակերտութեան եվրոպական ճարտարապետաց, և զոգցես ամէն մի տուն ունի զառանձին ծառազարդ պարտեզս ի զուարճութիւն բնակչաց...»⁸⁴:

Քաղաքը բաղկացած էր հին և նոր մասերից: Գերմանացի հետազոտող Գարլա Սերենանն նշել է. «Քաղաքն որ 1877-ին վեց հազար երկու հարիւր ութ բնակիչ ուներ, կրկին մասէ կը բաղկացած, որ են՝ Հին Թելան, ուր կը տեսնուին Ա. Գրիգալի դղեկին մնացորդքն իր ատամնաձև աշտարակազարդ պարսպովն և մտից դրամբ, յետոյ մզկրթաց անբակքն, և այլն. որք մինչև ի Պարսկաց արշաւանաց ժամանակն կը հասնին. և արդի Թելան, զոր կառոյց Հերակլ Բ. խիտ անտառի մը տեղն է, որ նախկին քաղաքին անբակաց վրայ աճեր էր»⁸⁵:

Հայերը Թելավում. բնակություն են հաստատել առնվազն միջնադարից. «Առաջին գաղթականություն Հայոց բնակչաց ի Թելաւ քաղաքի, ասեն ոմանք ի գիտնականց, թէ եղեալ է յելս կոյս ԺԳ դարում Զրիստոսի ի ժամանակս սասանման Հայաստան աշխարհի մերոյ...»⁸⁶: Հայտնի է, որ հատկապես Կախեթի Ալեքսանդր Բ թագավորի օրոք Թելավում հայերը մեծ թիվ էին կազմում: Այդ շրջանում քաղաքապետի (մոռորավ) հետ հանդես է եկել հայ համայնքի պետը՝ մելիքը: Նրան էին ենթարկվում

77 Գարլա Սերենան, նշվ. հոդվ., էջ 320:

78 Գան Կ., Кавказская географическая названия.— “Кавказ”, 1907, № 124, с. 3.

79 Амбарданов Е., Медико-топографическое описание Телавскаго уезда.— “Кавказ”, 1867, № 89, с. 433.

80 Նույն տեղում, էջ 433-434:

81 Вейденбаум Е., Путеводитель по Кавказу, Тифлис, 1888, с. 384.

82 Кикнадзе В., Памятники древности Телавскаго уезда, Сборникъ материаловъ для описания местностей и племень Кавказа(այսուհետև՝ СМОМПК), вып. VII, Тифлис, 1889, с. 40.

83 Закария Пармен, Древние города и крепости Грузии, Тбилиси, 1982, с. 29-34.

84 Երզնկեանց Ռոստոմ-Քէլ, Թելաւ քաղաք ի Կախեթ.— «Մեղու Հայաստանի», 1861, № 21, էջ 163:

85 Գարլա Սերենան, նշվ. հոդվ., էջ 321:

86 Երզնկեանց Ռոստոմ-Քէլ, նշվ. հոդվ., էջ 164:



ԹԵԼԱՎ. քաղաքի տեսքը Չվեյզալավանի Սբ. Գևորգ եկեղեցուց



ԹԵԼԱՎ. քաղաքի տեսքը ԺԹ դ. սկզբին [արտատպված «Le Caucase Pittoresque dessin et d'après nature par Le Prince Gregoire Gagarine» (Paris, 1847) գրքից]



ԹԵԼԱՎ. Չվեյզալավանի Սբ. Գևորգ եկեղեցու քահանա Կարապետ Տեր-Ներսեսյանն ընտանյոք հանդերձ (1897 թ.)

առևտրականների ներկայացուցիչները՝ քեթխուղաները, և արհեստավորական համքարությունների պետերը՝ ուստաբաշիները⁸⁷:

Թելավաքնակ հայերի ծագումը. հայաշատ Գրեմի անկումից հետո թելավաքնակ հայերի թվաքանակն ավելի էր ստվարացել, իսկ ԺԸ դարում մահմեդական բռնակալների կողմից Արցախի ու Շաքի-Շիրվանի տարածքներում հայերի դեմ ծավալված մասսայական բռնությունների, հավատափոխության ու կոտորածների, նաև Հերակլ թագավորի կողմից Գանձակը գրավելուց հետո Թելավը համալրվեց հայ գաղթականության նոր խմբերով. «...ի ժամանակս Հերակլայ արքայի Վրաց, որ տիրեալ Գանձակ քաղաքին, զբազում գերդաստանս Հայոց ի քաղաքէ անտի տեղափոխեալ է ի Թելաւ, տալով նոցա զառանձին տեղի բնակութեան յա-

րուարձանս քաղաքին Թելաւի ի շրջակայս Չվեյզալաւանի, այնու ղիտաւորութեամբ՝ զի ունիցին նոքա զառաջս ամեհի յարձակմանց լեռնական Լեկզի թըշնամեաց, որք անդադար ոտնակոխ առնէին զԹելաւ. և յիրաւի, նոր գաղթականքն Հայոց, իբր առաջնապահ զօրք, բազմիցս զդէմ կալեալ են լեռնականաց և եղեալ են պատճառ խաղաղութեան ի Թելաւ քաղաքի»⁸⁸: Մի հաղորդման համաձայն՝ Հերակլ արքայի նախաձեռնությամբ Թելավ փոխադրված հայերի թվաքանակը կազմում էր մինչև 60 ընտանիք. «Հերակլ թագավորը Ղարաբաղից և Ելիզավետպոլից իր մոտ հրավիրեց մինչև 60 հայ ընտանիք, որոնք մահմեդականների ճնշման պատճառով ձգտում էին նրա հովանավորությանը. նրանց է նվիրում հին քաղաքի զբաղեցրած տեղը և այդ ժամանակից այնտեղ հիմնվում է նոր բնակավայր, որը

87 «Հայկական Սովետական Հանրագիտարան» (այսուհետև՝ «ՀՄՀ»), հ. 4, Երևան, 1978, էջ 162:

88 Երզնկեանց Ռոստոմ-Քէլ, նշվ. հոդվ., էջ 164:

տարեցտարի բարեկարգվում է և ստանում քաղաքի տեսք»⁸⁹:

1900 թ. մի լրատվության մեջ նշվել է, որ Հերակլը Թելավում բնակության տեղ է տվել գանձակցի և դարաբարդցի 60 հայ ընտանիքի: Մասնավորապես, գանձակեցի հայերից էին Խեչինովները, Կիրակոսովները, Օհանեսովները, Մամացովները և այլն: Ի դեպ, Մամացովներին Հերակլը թույլ էր տվել մտնելու հոգևորականության դասը: Այդ տոհմի ներկայացուցիչներից Տեր-Աբրահամ Մամացովը թաղվել էր Չվեղգալավանի եկեղեցու բակում: Նրա շիրմաքարին արձանագրված է եղել.

Ես Տեր-Աբրահամ Մամացով. ժողովրդին նոր տեղում հաստատող, անտառ աճեցնող ու այս եկեղեցին հիմնող:

Հրատ. "օջջօօս", 1900, № 98, էջ 2-3:

Առանձին վավերագրերի շնորհիվ մասամբ պարզվում է, թե թելավաբնակ հայերը Հայաստանի հատկապես որ կողմերից էին գաղթել: 1849 թ. քաղաք այցելած Հովհաննես վարդապետ Արշարունին նշել է. «Թաղը Հայոց երկու, մի՛ բնիկ Թելաեցոց, իսկ միւսն՝ գաղթականաց ի գանազան տեղեաց Հայոց՝ անուանեալք Չուելգալաւանցիք...»⁹⁰: Քաղաքաբնակ հայերի համար բնիկ ու գաղթական տարբերակումները հատուկ են եղել նաև ավելի ուշ շրջանում: Համենայն դեպս, 1881 թ. մի հաղորդման մեջ դարձյալ նշված է, որ Թելավի 1000 տուն հայերից 800-ը բնիկ էր, 200-ը՝ գաղթական⁹¹: Անշուշտ, Թելավի բոլոր հայերն էլ եկվորներ էին, տարբեր ժամանակներում այնտեղ գաղթածներ, և բնիկ հայեր ասելով պետք է հասկանալ ԺԶ-ԺԷ դարերից կամ ավելի վաղ ժամանակներից ի վեր (առնվազն ԺԳ դարից) Թելավում հաստատված հայերին, իսկ գաղթականներ՝ ԺԸ դարի 2-րդ կեսից մինչև ԺԹ դարի սկզբները քաղաքում հաստատված հայերին:

Մեկ այլ վկայության համաձայն՝ Թելավում հայերի հաստատման ժամանակ է համարվում ԺԷ դարի վերջերը. «...Թելալի հայերը մեծ մասամբ գաղթած են Ղարաբաղից և Գանձակի գիղերից, սրանից երկու հարիւր տարի առաջ...»⁹²:

1899 թ. Չվեղգալավանի Սբ. Գևորգ եկեղեցուն պատկանող մի հողակտորի պատճառով ծագած վեճի առնչությամբ վկայություններ տված մի շարք անձինք հայտնել են, որ իրենց նախնիները Թելավ էին գաղթել Գանձակից և Արցախի Գյուլիստան գյուղից: Այսպես, 76-ամյա Մարգարյանը հայտնում էր. «Ինչպես լսած եմ իմ հանգուցեալ հայր Աւագից, որ մենք գաղթել ենք Գանձակից մօտաւորապէս քսան տուն, որք բնակվում էին Չուելգալաւանի ե-

կեղեցոյ հարաւային կողմը պարսպից դուրս...»⁹³: Թելավի պատվավոր քաղաքացի 58-ամյա Միքայել Գևորգյան Վարդագարյանը վկայել է. «Ինչպես ինձ յայտնի է իմ հանգուցեալ պապս և հայրս՝ Գեորգ Վարդագարեանը գաղթել էր Գանձակից Թելաւ և բնակուել են Չուելգալաւանի Սբ. Գեորգ եկեղեցոյ գաւթում...»⁹⁴: 58-ամյա Ստեփան Պողոսյան Աչաբաշյանցն էլ վկայել է. «...պապս՝ Յովհաննէսը, երբ գաղթել է Գիւլիստանից (Կանջու գաւառ) և եկել է Թելաւ, բնակվում է եղել եկեղեցոյ հիւսիսային պարսպից դուրս այգիների գլխին...»⁹⁵: Ահա 63-ամյա Հովհաննէս Պողոսյան Աչաբաշյանցի վկայությունը. «Ինձ քաջ յայտնի է և գիտեմ, որ իմ պապս Յովհաննէսը և հայրս գաղթել են Գիւլիստանից (Գանձակի նահանգ) և բնակուել էին Չուելգալաւանի Սբ. Գեորգ եկեղեցոյ գաւթում...»⁹⁶:

Գյուլիստանից գաղթած հայերի մասին տեղեկություններ են պահպանվել նաև վրացական աղբյուրներում: Մասնավորապես, Փանահ խանի դեմ երկարատև կռիվներից հետո Գյուլիստանի մելիք Հովսեփն իր 100 ծուխ ժողովրդով ստիպված գաղթել էր Վրաստան: Նրանց մեծ մասը հաստատվել էր Տփղիսի Քարափի թաղ արվարձանում, իսկ մնացածը՝ մելիքի գլխավորությամբ Թելավ քաղաքում. «Ղարաբաղի Փանահ խանն ուժ էր գործադրել Սըղնախի (մելիքների) նկատմամբ. հայերն այլևս չէին կարողացել դիմանալ. մի ձորի մելիք (Յ)ուսուփ-բեկը հարյուր ծուխից բաղկացած խիզաններով տեղահան էր եղել ու գալով Վրաստան, (տեղ) խնդրել (Վրաց) թագավորներից: Այս հանգամանքները գեկուցին թագավորներին Թելավում. իսկույն ևեթ մարդ կցեցին նրանց և այս սղնախցիներին բնակեցրին (Տփղիս) քաղաքի քարափ թաղի կողմը, իսկ իրեն (մելիքին) կանչեցին Կախեթ: Գնաց մելիք (Յ)ուսուփ-բեկն իր գործով Կախեթ, միացավ թագավորներին: Հրամայեցին ողորմածություն ցույց տալ նրան և պատվելով պահեցին»⁹⁷:

Ըստ ամենայնի՝ Թելավում բնակություն էին հաստատել նաև Լոռուց գաղթած հայեր, մասնավորապես՝ Հաղբատից, որի անունն էր կրում քաղաքի մի ամբողջ թաղամաս: Այսպես, 1900 թ. մի վավերագրում Թելավում հիշվում է Հախսպատելյանց (հաղբատցիների) թաղը⁹⁸:

Հաղբատցի հայերի ներկայությունը Թելավում վկայված է նաև մեկ այլ աղբյուրում. «...Չը նայելով, որ Թելալի բոլոր գաղթականները Հաղբաղից և Գանձակից են, չը նայելով, որ նրանց բնակած թաղերը մինչև այսօր կոչվում են հաղբատեցիների և գանձակեցիների թաղեր, չը նայելով, որ նրանք 25

89 Князь Андроников, Телав.— “Кавказский календарь на 1852 г.” Тифлис, 1851, с. 387-388.

90 Տեր Ղազարեանց Յովհաննէս վարդապետ Արշարունի. նշվ. հոդվ., էջ 281:

91 «Մեղու Հայաստանի», 1881, № 275, էջ 2:

92 «Մեղու Հայաստանի», 1881, № 250, էջ 3:

93 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3385, ք. 14:

94 Նույն տեղում, ք. 15:

95 Նույն տեղում, ք. 19:

96 Նույն տեղում:

97 Մելիքութ-Բեկ Լ. Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 144:

98 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1053, ք. 31:

տարի առաջ մի բառ չը գիտեին վրացերեն, բայց այժմ բոլորն էլ վրացախօս են...»⁹⁹:

Վիճակագրություն. Թելավը երկրամասի առավել բազմամարդ քաղաքներից էր: ԺԹ-Ի դարերի վիճակագրական տվյալներից երևում է, որ թելավաբնակ հայերը երբեմն կազմում էին բնակչության 80%-ից ավելին:

1770 թ. ապրիլի 5-ի մարդահամարով քաղաքն ուներ 740 տուն բնակիչ. «Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ և հայեր...` 740 ծովս»¹⁰⁰:

Տարբեր տարիներին քաղաքի հայերի թվաքանակը բնակչության թվի մեջ ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	հայեր	վրացիներ և այլ ազգ.	ընդամենը
1835 ¹⁰¹	2680		
1851 ¹⁰²	4006	1320	5326
1865 ¹⁰³			7240
1886 ¹⁰⁴	9182	2032	11214
1897 ¹⁰⁵			11810
1916 ¹⁰⁶	7062	2964	10026

Ըստ վիճակագրական տվյալների (տե՛ս աղյուսակը)` 1851 թ. Թելավում հայեր էին քաղաքաբնակների 75,2%-ը, 1886-ին` 81,9%-ը, 1916 թ.` 70,4%-ը, մինչդեռ 1886 թ. բուն Հայաստանի շատ քաղաքներում հայերի թիվն ավելի պակաս էր. այսպես` Արդվինում` 76 % (6422-ից` 4922-ը), Կարսում` 64 % (3939-ից` 2496-ը), Շուշիում` 60 % (32570-ից` 19120-ը), Երևանում` 47 % (14363-ից` 6733-ը), Գանձակում` 44 % (24810-ից` 10938-ը)¹⁰⁷:

Չեռքի տակ եղած վիճակագրական աղբյուրներում անհամեմատ ավելի առատ են այն տվյալները, որոնք ցույց են տալիս քաղաքի միայն հայ բնակչության թվաքանակը: Հարկ է նշել, որ կոնսիստորիայի տվյալները տարբերվում են պետական վիճակագրական տվյալներից: Թվում է, թե վերջինս հայերի թվաքանակը որոշ դեպքերում ավելի ուժնացված է ներկայացնում (համեմատի՛ր աղյուսակները):

Ստորև ներկայացնում ենք Թելավ քաղաքի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ¹⁰⁸	293	805	730	1535
1822 ¹⁰⁹	310	926	843	1769

⁹⁹ «Մշակ», 1900, № 50, էջ 2:

¹⁰⁰ Սելիստեր-Քել Լ. Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 156:

¹⁰¹ Ա. Կ-ձե, Этнические состояния Грузии в XIX веке, "Тифлисский листок", 1900, № 61.

¹⁰² "Кавказский календарь на 1852 г.", с. 387-388.

¹⁰³ Ա. Կ-ձե, նշվ. հոդվ.:

¹⁰⁴ "Кавказский календарь на 1897 г.", с. 52-53.

¹⁰⁵ Ա. Կ-ձե, նշվ. հոդվ.:

¹⁰⁶ "Кавказский календарь на 1917 г.", Тифлис, 1916, с. 190-193.

¹⁰⁷ «Արձագանք», 1891, № 2, էջ 18:

¹⁰⁸ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 1-10:

¹⁰⁹ ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 866, ք. 1:

1839 ¹¹⁰	490	1531	1348	2879
1841 ¹¹¹		1477	1267	2744
1842 ¹¹²		1505	1277	2782
1843 ¹¹³		1596	1354	2950
1844 ¹¹⁴		1600	1360	2960
1845 ¹¹⁵		1640	1398	3038
1847 ¹¹⁶		1748	1764	3552
1849 ¹¹⁷	600	1641	1481	3122
1852 ¹¹⁸		1928	1685	3613
1853 ¹¹⁹		1932	1820	3752
1854 ¹²⁰		1954	1853	3807
1857 ¹²¹		2072	1929	4001
1858 ¹²²		2119	1981	4100
1860 ¹²³		2186	2030	4216
1861 ¹²⁴		2221	2052	4273
1862 ¹²⁵		2270	2108	4378
1863 ¹²⁶		2312	2128	4440
1864 ¹²⁷		2341	2138	4479
1865 ¹²⁸	789	2345	2159	4504
1867 ¹²⁹		2442	2278	4720
1870 ¹³⁰		2535	2404	4939
1873 ¹³¹		2598	2442	5040
1874 ¹³²		2667	2486	5153
1875 ¹³³		2732	2538	5270
1876 ¹³⁴		2785	2577	5362
1877 ¹³⁵		2774	2556	5330
1878 ¹³⁶		2858	2612	5470
1880 ¹³⁷		2973	2733	5706
1881 ¹³⁸		3014	2764	5778
1882 ¹³⁹		3079	2830	5909

¹¹⁰ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, ք. 359:

¹¹¹ Նույն տեղում, գ. 3802, ք. 41-42:

¹¹² Նույն տեղում, գ. 3805, ք. 92-93:

¹¹³ Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:

¹¹⁴ Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46:

¹¹⁵ Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:

¹¹⁶ Նույն տեղում, գ. 3814, ք. 67-68:

¹¹⁷ Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33: Տե՛ս նաև` **Տեր Վազարեանց**

Յովհաննես վարդապետ Արշարունի, նշվ. հոդվ., էջ 281:

¹¹⁸ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, ք. 64-65:

¹¹⁹ Նույն տեղում, գ. 2743, ք. 125-126:

¹²⁰ Նույն տեղում, գ. 3825, ք. 7-8:

¹²¹ Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:

¹²² Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:

¹²³ Նույն տեղում, գ. 3833, ք. 5:

¹²⁴ Նույն տեղում, գ. 3839, ք. 5:

¹²⁵ Նույն տեղում, գ. 3836, ք. 6:

¹²⁶ Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:

¹²⁷ Նույն տեղում, գ. 3846, ք. 13:

¹²⁸ Նույն տեղում, գ. 3851, ք. 3:

¹²⁹ Նույն տեղում, գ. 3851, ք. 3:

¹³⁰ Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:

¹³¹ Նույն տեղում, գ. 3862, ք. 51:

¹³² Նույն տեղում, գ. 3864, ք. 35:

¹³³ Նույն տեղում, գ. 3866, ք. 7:

¹³⁴ Նույն տեղում, գ. 3868, ք. 6:

¹³⁵ Նույն տեղում, գ. 3869, ք. 3: Ի դեպ, 1876-77 թթ. բնակչության նվազումը, կարծում ենք, պայմանավորված էր քաղաքում «ծաղիկ» հիվանդության տարածմամբ: Հայտնի է, որ միայն 1877 թ. փետրվարի 26-ին 13 շունչ էր հողին համձնվել («Մշակ», 1877, № 22, էջ 3):

¹³⁶ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3870, ք. 57:

¹³⁷ Նույն տեղում, գ. 3872, ք. 2:

¹³⁸ Նույն տեղում, գ. 3873, ք. 2:

¹³⁹ Նույն տեղում, գ. 3874, ք. 2:

1883 ¹⁴⁰	3104	2873	5977
1885 ¹⁴¹	3152	2984	6136
1887 ¹⁴²	3341	3085	6426
1888 ¹⁴³	3376	3143	6519
1889 ¹⁴⁴	3573	3276	6849
1890 ¹⁴⁵	3592	3301	6893
1891 ¹⁴⁶	3601	3319	6920
1892 ¹⁴⁷	3621	3333	6954
1893 ¹⁴⁸	3657	3371	7028
1894 ¹⁴⁹	3676	3376	7052
1897 ¹⁵⁰	3646	3341	6987
1898 ¹⁵¹	2585	2341	4926
1899 ¹⁵²	2589	2432	5021
1900 ¹⁵³	2601	2446	5047
1901 ¹⁵⁴	2621	2482	5103
1902 ¹⁵⁵	2653	2497	5150
1905 ¹⁵⁶	2786	2575	5361
1906 ¹⁵⁷	2341	2156	4497
1907 ¹⁵⁸			5008
1908 ¹⁵⁹	822	2236	2137
1910 ¹⁶⁰		2460	2319
1912 ¹⁶¹		2538	2398
			4936

Բնակչության թվաքանակի կտրուկ ավելացման կամ նվազման դեպքերը պայմանավորված են եղել այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք էին ներգաղթն ու արտագաղթը, վարակիչ մահաբեր հիվանդությունները, դավանափոխությունը և այլն:

Թելավ քաղաքը ներկայումս ունի շուրջ 30.000 հազար բնակիչ (1975-ին ուներ 23.100 բնակիչ):

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է թելավաբնակ հայերի անվանացուցակը.

«1. Տեր Բաղդասար առաջ քահանայ Տեր-Սարգսեանի կինն՝ Եղիսաբեդ, որդիք՝ Մարգիս և Գեորգ, դստերք՝ Մարթայ, Ովսաննա և Թելկէ, քոյրն՝ Հռիփսիմէ, մայրն՝ Մարիամ և հանգուցեալ քրոջ որդին՝ Պետրոս:

2. Տեր Յարութիւն Տեր-Սահակեանի կինն՝ Մայիա և տիրացու Ահարօնի կինն՝ Թամար:

3. Տեր Մարտիրոս Տեր Սահակեանի որդի Յարութիւն և դուստր՝ Մարթայ, ևս հօրեղբօր՝ Տեր Սահակի որդի Սկրտում, որդի՝ Յարութիւն, այլևս զըզանն Տեր Մարտիրոսի՝ Մայիա:

- 140 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:
- 141 Նույն տեղում, գ. 3877, ք. 33:
- 142 Նույն տեղում, գ. 3880, ք. 10:
- 143 Նույն տեղում, գ. 3882, ք. 10:
- 144 Նույն տեղում, գ. 3884, ք. 5:
- 145 Նույն տեղում, գ. 3887, ք. 138:
- 146 Նույն տեղում, գ. 3889, ք. 137:
- 147 Նույն տեղում, գ. 3891, ք. 109:
- 148 Նույն տեղում, գ. 3895, ք. 27:
- 149 Նույն տեղում, գ. 3896, ք. 162-163:
- 150 Նույն տեղում, գ. 3899, ք. 136-137:
- 151 Նույն տեղում, գ. 3897, ք. 158:
- 152 Նույն տեղում, գ. 3903:
- 153 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:
- 154 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1-2, գ. 205, ք. 129-130:
- 155 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 12-13:
- 156 Նույն տեղում, գ. 3912, ք. 256-257:
- 157 Նույն տեղում, գ. 3915, ք. 6:
- 158 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, ք. 8:
- 159 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:
- 160 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 4:
- 161 Նույն տեղում, գ. 3919, ք. 51-52:

4. Մարթայ կոյս Քեթխուդեան. չորս աստիճանատր, ծնեալ 1781: Դուստր Տեր Յարութիւն քահանայ Տեր Սահակեանի՝ Կատարինէ կոյս, ծնեալ 1802: Գասպարի դուստր՝ Շուշան կոյս, ծնեալ 1804: Դաւիթ Աւետիսեանի դուստր՝ Փեփրոնեայ կոյս, ծնեալ 1805:

5. Ալանի որդի Ստեփանի այրի՝ Թինաթին, որդի՝ Թամազ:
6. Միքէլի որդի՝ Գիքօ, կինն՝ Էլէնէ, որդիք՝ Թաքօ և Պետրոս, դուստր՝ Մաթօ, Թաքօյի կինն՝ Մարթայ, որդի՝ Գեորգ:

7. Աւետիսի որդի Դաւիթ, կինն՝ Աննայ, որդիք՝ Գիօրգի և Մէլքօ, դստերք՝ Սօփիօ և Մայիա:

8. Աբգաի որդի՝ Գօգի, կինն՝ Քեթեվան, որդի՝ Գեորգ, դուստր՝ Մարիամ, Գեորգի կինն՝ Մարիամ, որդի՝ Գիգօլի:

9. Սկրտումի որդիք՝ Մարտիրոս, Աւետիք և Գօգի, Մարտիրոսի կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Պէպան և Մէլքօ, դուստր՝ Քալի, Աւետիքի կինն՝ Անախանում, որդիք՝ Սկրտում և Գիգօլի, Գօգիների կինն՝ Էլիսաբեդ, դուստր՝ Աննա:

10. Ստեփանի այրի կինն՝ Թամար, որդի՝ Պետրոս, դուստր՝ Էլէնէ:

11. Մախիմի որդիք՝ Գալուստ, Գիգօլի, Դաւիթ և Ջաքարէ, Գալուստի կինն՝ Նաթէլ, որդիք՝ Ռէվազ և Ադայ, դուստր՝ Թինաթին, Գիգօլայ կինն՝ Մարիամ, որդի՝ Բէժան, դստերք՝ Քեթեվան, Մարթայ և Գայանէ, Ջաքարի կինն՝ Մայիա:

12. Յոհաննէսի որդի թժիշկ Գեորգ, կինն՝ Ովսաննա, որդի՝ Գազար, դստերք՝ Քեթեվան և Նէնէ:

13. Յոհանի որդի՝ Թամազ, կինն՝ Մայիա, որդի՝ Միքաէլ:

14. Թիֆլիզցի Գեորգի որդիք՝ Աբէլ, Մարգար, Կարապետ և Յարութիւն, Աբէլի կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Սարգիս, Գեորգ և Ստեփան, դուստր՝ Բարբարէ, Մարգարի կինն՝ Մարիամ, որդիք՝ Գեորգ և Յոհաննէս, Կարապետի կինն՝ Մայիա:

15. Ալանի որդի՝ Դաւիթ, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Գիօրգի, Ալան և Յարութիւն, դստերք՝ Խանսիփէրի, Գայանէ և Մարթին:

16. Կիրակոսի որդիք՝ Սկրտում և Յարութիւն, Սկրտումի կինն՝ Մաթօ, որդիք՝ Մարտիրոս և Գէվօ, դստերք՝ Շուշան, Մայի և Աննա, Յարութիւնի կինն՝ Մարմար, որդի՝ Մօսի:

17. Թիֆլիզցի Մարտիրոսի այրի կինն՝ Մարմար, որդեգիր՝ Թաքօ:

18. Թիֆլիզցի գառափ Անտօնի այրի կինն՝ Նանօ, որդիք՝ Ջուրաք, Պէպան և Գիգօլի, դստերք՝ Մայիա և Թասին:

19. Դուլիաջանի որդի՝ Գեորգ, դուստր՝ Մարմար:

20. Թիֆլիզցի Եանգուլի որդի Յոհանի այրի կինն՝ Էլէնէ, որդի՝ Գիօրգի, դուստր՝ Մարթայ:

21. Գեորգի որդի՝ Բաղդասար, կինն՝ Աննա, դուստր՝ Քալի:

22. Գեորգի որդի՝ Մէլքօ, կինն՝ Մայիա, որդիք՝ Գէվօ, Սօսի և Իսակ, դստերք՝ Ովսաննա և Շուշան:

23. Ալանի որդի՝ Ադայ, կինն՝ Մարթայ, որդի Բաղդասար, դստերք՝ Բարբարէ, Մայիա և Տասին:

24. Նօնիմի որդի՝ Անանիա, կինն՝ Խօրէշան, որդի՝ Իօսանէ:

25. Բաղդօյի որդի՝ Պետրէ, կինն՝ Մայիա, որդիք՝ Դաւիթ և Իւանէ, դուստր՝ Դասիա:

26. Աբէլի որդի՝ Չաալ, դուստր՝ Դասիա, մայր՝ Մագրաթին:

27. Բէժանի որդիք՝ Սօսի և Դաթն, Սօսիների կինն՝ Ուննիփէր, որդի՝ Բէժան, դուստր՝ Քեթեվան, Դաթնի կինն՝ Մարթայ:

28. Ճօն Մօսիմի որդի՝ Յակոբ, կինն՝ Մաթօ, որդիք՝ Կօնի և Գլախ, դստերք՝ Խանում, Խօրէշան, Տասի և Թալալ:

29. Գիգիմի որդի՝ Գուրգէն, կինն՝ Մարթայ, որդիք՝ Բաղդասար, Ջուրաք և Յարութիւն, դստերք՝ Թագուհի և Շուշան:

30. Գրիգորի որդի՝ Յակոբ, կինն՝ Նանօ, որդի՝ Գիգօլի, դուստր՝ Բարբարէ:

31. Խարազ Մարտիրոսի որդիք՝ Գրիգոր և Ավթանդիլ և Կիկօլի, Գրիգորի կինն՝ Մարթա, Ավթանդիլի կինն՝ Մայիա և Կիկօլայ կինն՝ Էլիսաբեդ, դստերք՝ Մայի, Բարբարէ, Սօփիօ և Շուշան:

32. Խարազ Մարտիրոսի որդի՝ Նօնի, կինն՝ Մարթայ, որդի՝ Եսայեա, դստերք՝ Թինաթին, Նաթէլ, Քալիմ և Դասիա:

33. Խարազ Մարտիրոսի որդի՝ Դաւիթ, կինն՝ Ուննիփէր, որդիք՝ Պետրոս և Պօղոս, դուստր՝ Թալօ:

34. Թիֆլիզցի Մովսէսի որդի՝ Գարդիշ, կինն՝ Դէտէքօ, որդի՝ Մօսի:

35. Ադամա որդի՝ Դաւիթ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Պէպան, Գէվօ, Ներսէս և Կիկօլի:

- 36. Մուճրիկի որդի՝ Առաքել, կինն՝ Էլենե, դուստր՝ Սիրմայ:
- 37. Մարտիրոսի որդի՝ Աղի, կինն՝ Էլիսաբեթ, դստերք՝ Էլենե, Շուշան և Քեթևան, մայր՝ Մագաղին:
- 38. Մահմուդի որդիք՝ Յովսէփ և Յակոբ, Յովսէփի կինն՝ Քալի, որդի՝ Չուրաք, դուստր՝ Մարիամ:
- 39. Փանչուլի որդիք՝ Դաթն և Ղազար, Դաթնի կինն՝ Ղազար:
- 40. Աբոյի որդի՝ Մաքօ, կինն՝ Էլիսաբեթ, սորա խորք որդի՝ Իւանէ:
- 41. Դատանի որդի՝ Խէչօ, կինն՝ Մարթայ, դուստր՝ Մարիամ:
- 42. Թիֆլիզցի Արուի որդի՝ Թաքօ, մայր՝ Մաքօ:
- 43. Չուկակի որդիք՝ Գիօրգի, Սիմօն և Յարութիւն, մայր՝ Լալօ, սոցայ ընդր՝ Գիօրգայ կինն՝ Շուշան:
- 44. Յարութիւնի որդի՝ Ոսկան, կինն՝ Դարէջան, որդիք՝ Աւետիք, Յարութիւն, Թօմայ:
- 45. Յարութիւնի որդի՝ Դաւիթ, կինն՝ Մայիա:
- 46. Վերմիշի որդիք՝ Գլախէն, Խէչօն, Աւետիք և Վերմիշ, Գլախէի կինն՝ Նէնօ, դստերք՝ Բարբարէ, Մարթայ և Շուշան, Խէչօյի կինն՝ Մարթայ, դուստր՝ Նիմօ, Աւետիքի կինն՝ Էլիսաբեթ, որդիք՝ Կակալօ և Յարութիւնի դուստր՝ Թալալ, Վերմիշի կինն՝ Մայիա, դուստր՝ Սօփիօ:
- 47. Այվազի որդի Գեորգի այրի կինն՝ Անէն, որդիք՝ Թօմաս և Մարտիրոս, դստերք՝ Բարբարէ:
- 48. Յարութիւնի որդիք՝ Ափրիամ և Սօսի, մայր՝ Աննա:
- 49. Յրկար Յակոբի որդիք՝ Յոհաննէս և Ստեփան, Յոհաննէսի կինն՝ Թէօփիմէ, դստերք՝ Էլենէ և Բարբարէ:
- 50. Մարգսի որդի՝ Գլախա, կինն՝ Էլիսաբեթ, որդի՝ Մարգիս, դուստր՝ Նիմօ:
- 51. Ապազի որդի Առաքել, կինն՝ Մարթայ, որդիք՝ Չուրապ և Գլախա, դուստր՝ Նէնէ:
- 52. Յակոբի որդի՝ Պողոս, կինն՝ Մարթայ, որդիք՝ Գիօրգի, Յակոբ և Դաւիթ, մայր՝ Մարմար:
- 53. Թիֆլիզցի Փօլաղի որդի՝ Ստեփան, կինն՝ Նէնէ:
- 54. Թալինի որդի՝ Գօգի, կինն՝ Բատօ, որդիք՝ Սօսի, Չաքար, Սիմօն, Իօաննէ և Սօլօման, դուստր՝ Մարթայ:
- 55. Բերօյի որդիք՝ Գիօրգի, Աբրահամ և Պապա, մայր՝ Էլիսաբեթ, Գիօրգայ կինն՝ Ուսի, դուստր՝ Բէգուն, Աբրահամի կինն՝ Մարթայ, Պապայի կինն՝ Մայիա:
- 56. Գալուստի որդէգիր՝ Թաքօ, կինն՝ Մայիա:
- 57. Մարգսի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Անախանուն, որդիք՝ Ղազար, Մարգիս, Բաղդասար, Փրիդօն և Թօմայ, դուստր՝ Շուշան, Ղազարի կինն՝ Էլիսաբեթ:
- 58. Սօսիանի որդի՝ Միրիման, կինն՝ Շուշան, որդի Բաղդասար, մայրն՝ Էլիսօ:
- 59. Մատինի որդիք՝ Սօլօման և Բէժան, մայր՝ Մայիա:
- 60. Աւետիքի որդի՝ Գիօրգի, ընդր՝ Նաթէլ, մայր՝ Մայիմ:
- 61. Դօն Մօսիմի որդիք՝ Բաթէլ և Աւետիք, Բաթէլի կինն՝ Մարիամ, դուստր՝ Մարթայ, Աւետիքի կինն՝ Նաթէլ:
- 62. Գիբօյի այրի կինն՝ Անէն, որդի՝ Գիօրգի, դուստր՝ Դասի, մայրն՝ Գիբօյի՝ Մարիամ:
- 63. Աւետիքի որդիք՝ Պէպան, Մարգիս և Գիօրգի, ընդրն՝ Մարիամ, մայրն՝ Անախանուն, սոցայ մօրամայրն՝ Բագանդի:
- 64. Աւետիքի որդի՝ Մարտիրոս, կինն՝ Մարթայ, որդին՝ Աւետիք, դուստր՝ Աննա, մայր՝ Էլիսաբեթ:
- 65. Նարիմանի որդի Ազարիա, կինն՝ Անախանուն, որդիք՝ Սօլօման և Իւանէ, դուստր՝ Շուշան:
- 66. Նարիմանի որդի Աբօն, կինն՝ Մայիա, որդիք՝ Նիմիա, Դաթն, Իսակ և Գիօրգի, դուստր՝ Աննա, Նիմիայի կինն՝ Սուսի:
- 67. Չուլխիմի Մանուչար, կինն՝ Լալի, որդիք՝ Գլախա և Սօսի, դստերք՝ Մարթայ և Մակայ:
- 68. Բէգալի որդիք՝ Թաթուլ, Պէպան, մայր՝ Խամփերվան, Թաթուլի կինն՝ Դասի, որդիք՝ Բէգալ և Դաւիթ:
- 69. Մատինի որդիք՝ Փարսաղան և Խէչօ, մայր՝ Մալալ, Փարսաղանի կինն՝ Մայիա, որդի՝ Իւանէ, Խաչօյի կինն՝ Թիմաթիմ, դուստր՝ Մարիամ:
- 70. Աբուլի որդի Սօլօման, կինն՝ Նաթէլ, որդին՝ Գիօրգի, դստերք՝ Քեթևան և Ովաննա:
- 71. Յովսէփի որդի Կօնի, կինն՝ Էլիսաբեթ, որդիք՝ Գիօրգի, Սօլօման, Մէլքօ և Գասպար, դստերք՝ Մարմար և Ռոստոյան:

- 72. Յարութիւնի որդի Աւետիք, կինն՝ Մարթայ, դուստր՝ Դասիա, որոյ եղբոր՝ Ռօստօմի որդի Սօլօման, միւս եղբոր՝ Ալէքսանայրի կինն՝ Մարթայ, որդիք՝ Ստեփան և Թօմաս և դուստր՝ Մարթայ:
- 73. Չիքաւ Մարգիս, կինն՝ Նանօ, որդիք՝ Գիօրգի, Փրիդօն, Սիմօն, Թօմա և Մարտիրոս, դստերք՝ Ովաննա և Մարիամ:
- 74. Դօն Մօսիմի որդի Սիմօն, կինն՝ Էլիսաբեթ, որդի՝ Մօսի, դստերք՝ Նաթէլ և Սալօմէ:
- 75. Փրիդօնի որդի Յոհաննէս, կինն՝ Աննա, որդին՝ Յարութիւն:
- 76. Բէգալի որդի Սօսի, կինն՝ Խանուն, դուստր՝ Բարբարէ:
- 77. Գօգալի որդի Մատին, կինն՝ Խօրէշան, որդի՝ Մօսի, կինն՝ Էլիսաբեթ, որդի՝ Չապա:
- 78. Յոհանի որդի Դաւիթ, կինն՝ Թիմաթիմ, դուստր՝ Սօփիօ:
- 79. Երանգուլի որդի Յովսէփ, կինն՝ Խանուն, որդիք՝ Սիմօն, Բաղդասար, Չօհրաք, դստերք՝ Սօփիօ և Մայիա:
- 80. Թէմուրազի որդի Դէմէտրէ, կինն՝ Նիմօ, որդիք՝ Թէմուրազ, Սրապիօն, Երեմիա, Թօմա, Գիօրգի և Մարգիս, դուստր՝ Շուշան, Թէմուրազի կինն՝ Շուշան, դստերք՝ Քալի և Ուսնիփէր, Սրապիօնի կինն՝ Մագաղին:
- 81. Բերօյի որդի Դաւիթէլայ, կինն՝ Մարթայ, որդին՝ Պետրոս, դուստր՝ Դասի:
- 82. Պետրոսի այրի կինն՝ Մարիամ, դուստր՝ Բատօ, ննջեցեալ որդոյ՝ Մարգսի այրի կինն՝ Աննա, որդիք՝ Պետրոս և Պօղոս, դստերք՝ Անախանուն և Մարթայ:
- 83. Ղամբարի որդիք՝ Գօգի և Նիմի, մայր՝ Դարէջան, Գօգիի կինն՝ Դարէջան, որդիքն՝ Գլախա, Պէպան և Գիգօլի, դուստր՝ Մաթէո, Նիմիի կինն՝ Մարթայ, որդիք՝ Աղալօ և Յարութիւն, դուստր՝ Քալի:
- 84. Գօգիմի որդի Դաթ, կինն՝ Մարթա, որդի՝ Ղազար, դուստր՝ Մարիամ, ննջեցեալ եղբոր՝ Ստեփանի որդիք՝ Գիօրգի, Գալուստ, Սօլօման, Գիգօլի և Յոհաննէս, մայր՝ Էլիսաբեթ, Գիօրգայ կինն՝ Մայիա:
- 85. Մէտինի որդիք՝ Պէպան և Մարգիս, մայր՝ Անախանուն, Պէպանի կինն՝ Մարիամ, որդի՝ Մարտիրոս:
- 86. Պազայի որդի Թաքօ, կինն՝ Նաթէլ, մայր՝ Մանիժա:
- 87. Գօգիմի որդի Նօնի, կինն՝ Նէնէ:
- 88. Չիքաւ Թաթուլ, կինն՝ Աննա, որդի՝ Գէվօ:
- 89. Չուրաքի որդի՝ Աբգար, կինն՝ Աննա, որդի՝ Սիմօն, կինն՝ Թիմաթիմ, որդիք՝ Գիօրգի և Իսակ:
- 90. Ամիրգուլի որդիք՝ Նիմիա և Պետսէ, Նիմիի կինն՝ Մարթայ, որդի՝ Իւանէ:
- 91. Մարգսի որդի Գլախէն, կինն՝ Մագաղալ, որդիք՝ Ստեփան, Պետրէ և Իւանէ, դստերք՝ Էլիսաբեթ և Մարիամ, Ստեփանի կինն՝ Դարէջան:
- 92. Աբէլի որդիք՝ Յարութիւն, Պապա և Ստեփան, Յարութիւնի կինն՝ Աննա, որդիք՝ Դաթ, Ղազար և Գիօրգի, դուստր՝ Մարիամ, Պապայի կինն՝ Թիմաթիմ, դուստր՝ Մարթայ, Ստեփանի կինն՝ Մարիամ:
- 93. Պապայի որդի Ղազար, կինն՝ Մարմար:
- 94. Յոհանի որդի Սիմօն, կինն՝ Մայիա, դուստր՝ Բարբարէ:
- 95. Յոհանի որդի Գեորգ, կինն՝ Քեթևան, որդի՝ Յարութիւն, դուստր՝ Դարէջան:
- 96. Էլիզբարի որդի Մարգիս, կինն՝ Աննա, որդիք՝ Չաքար, Պէպան և Յարութիւն, Չաքարի կինն՝ Քալի:
- 97. Խէչօյի որդի Բէժան, կինն՝ Նաթէլ, որդի՝ Գիօրգի, դուստր՝ Մարիամ:
- 98. Յարութիւնի որդիք՝ Յոհաննէս, Գօգ, Գիգօլ, Սօսի, Գլախա և Դաթ, Յոհաննէսի կինն՝ Էլիսաբեթ, որդիք՝ Թէոդորէ և Սօլօման, մայրն՝ Դարէջան, Գօգիմի կինն՝ Քեթևան:
- 99. Կիկօլոյ որդի Թաթուլ, կինն՝ Աննա, որդիք՝ Ստեփան և Գլախա, դստերք՝ Դարէջան և Մաթէր, որոյ ննջեցեալ եղբոր՝ Գիօրգայ այրի կինն՝ Թիմաթիմ, որդի՝ Յարութիւն և դուստր՝ Մաթէր:
- 100. Թիֆլիզցի Մլխիթարի որդի Մովսէս, կինն՝ Թամար, որդի՝ Մլխիթար:
- 101. Գասպարի որդիք՝ երեցվոխ Թէմուրազ, Սօսի, Դաւիթ և Սօլօման, մայր՝ Մարթայ, Թէմուրազի կինն՝ Բարբարէ, որդիք՝

Ձագայ և Ալեքսանդրէ, դուստր՝ Դալիթայ, Սօսիանի կինն՝ Էլիսաբէր:

102. Գեորգի որդի Գրիգոր, կինն՝ Թամար, որդի՝ Գելօ, դուստր՝ Թինաթին, մայր՝ Մարիամ:

103. Թօսիկի որդիք՝ Դալիթ և Յովսէփ, Դալիթի կինն՝ Շուշան, որդի՝ Մէլքօ, դուստր՝ Մայիա:

104. Կօյստի որդիք՝ Գիօրգի, Սօսի և Յարութիւն, մայր՝ Անախանում, Գիօրգոյ կինն՝ Թամար, դուստր՝ Մարթայ, Սօսիանի կինն՝ Թինաթին:

105. Մէլքաբէր Դագարի որդիք՝ Պէպան, Գաբրիէլ, Դալիթ և Սօյօման, Պէպանի կինն՝ Մայիա, դուստր՝ Թինաթին:

106. Բժիշկ Յակոբ, կինն՝ Մայիա, որդիք՝ Պետր, Ալեքսանդրէ և Գիօրգի, դուստր՝ Հռիփսիմէ:

107. Բէգինի որդի Գալսա, կինն՝ Մայիա, որդի՝ Գրիգոր, դուստր՝ Մարթայ:

108. Պէտրէ Էլիբէգեան, կինն՝ Մայա, որդի՝ Գրիգոր, դուստր՝ Մարթայ:

109. Վարդանի որդի՝ Թաթուլ, կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Սարգիս, Սօսի, Սիմօն, դուստր՝ Քէթիկան, մայր՝ Մագարիս:

110. Ժամկոչ Սիմօն, կինն՝ Մանիժա, որդիք՝ Ձաքարի, Դալիթ, Իսանէ և Սօյօման, դուստր՝ Մայիա և Բարբարէ, Ձաքարիայի կինն՝ Աննա, դուստր՝ Սօփիօ:

111. Մղէբար Յարութիւն, կինն՝ Դարեշան, որդի՝ Յովակիմ:

112. Սօրոյի որդիք՝ Շաքար, Պէպան, Յարութիւն, մայրն՝ Մագարիան, քոյր՝ Մայիա:

113. Մամացի որդի Յարութիւն, կինն՝ Էլէնէ, որդիք՝ Դալիթ և Գիօրգի, դուստր՝ Բարբարէ:

114. Փիլիմի որդիք՝ Գիօրգի և Պետրոս, Գիօրգոյ կինն՝ Սուսի, որդի՝ Չապ, դուստր՝ Սօփիօ:

115. Չիլիմգոյր Գօգինի որդիք՝ Աւետիք և Դագար, Աւետիքի կինն՝ Քէթիկան, որդիք՝ Գօգի և Թաթուլ, դուստրք՝ Շուշան և Մարթայ, Դագարի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Յակոբ:

116. Նալբանդ Սկրատունի որդիք՝ Ղաստան, Գիօրգի, Գուրգէն և Իօաննէ, մայր՝ Թէօփիմէ, դուստրք՝ Մարիամ, Քէթիկան և Շուշան:

117. Մաքուի որդիք՝ Մատի, Սարգիս, Մատինի կինն՝ Դարեշան, որդիք՝ Գալսա և Յակոբ, Սարգիսի կինն՝ Մաթօ:

118. Մէլքաբէր Կիրակոսի որդիք՝ Բաբէլ և Գեորգ, մայր՝ Աննա, Բաբէլի կինն՝ Քէթիկան, որդիք՝ Պէտրէ և Թէդօ, դուստր՝ Դալիթայ, Գեորգի կինն՝ Եկատարինէ, որդի՝ Յարութիւն:

119. Չիթա Դագարի որդի Բաբէլ, կինն՝ Թամարխանում, որդիք՝ Գասպար, Բաղդասար, Դագար և Յարութիւն, դուստրք՝ Նինօ և Խօրէշան, այրի հարս՝ Մարթայ, որ է կին Թաթուլի, տրա որդի...:

120. Կարդաշի որդիք՝ Ձաքար, Գիքօ, Թէմուրագ, Ձաքարի կինն՝ Մայիա, որդիք՝ Իսանէ, Յարութիւն, Գիքօյի կինն՝ Խօրէշան, դուստրք՝ Բարբարէ և Էլիսաբէր:

121. Փիլիմի որդիք՝ Իսակ և Աթանդիլ, մայր՝ Շահխաթան, Աթանդիլի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Իօաննէ:

122. Գօգոյի այրի կինն՝ Աննա, որդի՝ Գելօ:

123. Միլիթարի որդի Պետրոս, քոյր՝ Մայիա, մայր՝ Լալօ, սոցայ փեսայն՝ Դուլի որդի Պէպան, կինն՝ Նանօ, որդի՝ Աւետիք:

124. Կարչի Նազար, որդիք՝ Դագար և Բէրօ, Դագարի կինն՝ Աննա, դուստր՝ Մարթայ:

125. Շէրմազանի որդի Ստեփանի այրի կինն՝ Խանփէրի, դուստր՝ տրա՝ Օսէփի այրի կինն՝ Բարբարէ, որդի՝ Իսազի (Էջմիածնայ ճուրղ):

126. Բահնդուրի որդի Աղայ, որդիք՝ Իսակ, Յարութիւն, Փարսադան, Գիօրգի և Բաղդասար, դուստր՝ Նէնէ:

127. Մէրալաշուկի Լալօ, կինն՝ Հռիփսիմէ, որդիք՝ Իօաննէ և Գալսա:

128. Սուքանի որդի Յոհաննէս, կինն՝ Մայիա:

129. Ասազի որդիք՝ Աղալօ և Իօաննէ, Աղալօյի կինն՝ Մայիա:

130. Աստուածատուրի որդի Անդրէ, կինն՝ Մարիամ, մայր՝ Աննա:

131. Պապայի որդի Բարսեղ, կինն՝ Մայի, դուստրք՝ Բարբարէ, Նէնէ և Էլիսաբէր:

132. Պապայի որդի Օդօ, կինն՝ Խաթա, որդի՝ Պապա:

133. Ձաքարի որդի դէրձէկ Գաթօ, կինն՝ Հռիփսիմէ, որդիք՝ Ձաքարիս, Յարութիւն և Սիմօն, դուստրք՝ Մայիա և Մաբէր:

134. Ձաքարի որդի Պողոս, կինն՝ Մայիա, որդի՝ Գալսա:

135. Փարմուզի որդիք՝ Սօսի և Բէժան, քոյր՝ Մայիա, մայր՝ Մագարիան:

136. Ջուրաբի որդիք՝ Նինին, Դալիթ և Գալուստ, Նինինի կինն՝ Աննա, որդի՝ Իսակ, դուստրք՝ Ռուստուրան և Թամար, Դալիթի կինն՝ Նաբէլ, դուստրք՝ Նանօ և Լալօ, Գալուստի կինն՝ Մայիա, մայր՝ Մանան:

137. Ջուրաբի որդի Բէրի, կինն՝ Բարբարէ, որդիք՝ Գիօրգի և Յոհաննէս, դուստր՝ Սուսի:

138. Գուրգէնի որդի՝ Յակոբ, կինն՝ Բարբարէ, որդի՝ Գուրգէն, մայր՝ Մարիամ:

139. Մճէղէ Կիրակոսի որդիք՝ Աբրահամ և Ստեփան, մայր՝ Թինաթին, քոյր՝ Մարիամ, Աբրահամի կինն՝ Քէթիկան, որդի՝ Իօաննէ:

140. Աբօյի որդի Յակոբ, կինն՝ Մարթայ, որդիք՝ Գիօրգի և Յարութիւն, դուստր՝ Աննա:

141. Դանիէլի որդի Նէսօ, կինն՝ Թինաթին:

142. Մէլքոյի որդիք՝ Աւետիք և Թօմա, մայր՝ Թամար, Աւետիքի կինն՝ Խօրէշան, որդիք՝ Մէլքօ և Ձաքարիս, դուստր՝ Եփեմիա, Թովմայի կինն՝ Խօրէշան, որդի՝ Դագար:

143. Ստեփանի որդի Շաքար, կինն՝ Մայիա, մայր՝ Խանփէրի:

144. Վարդօյի որդի Թաթօ, կինն՝ Մայիա, որդիք՝ Ջուրաբ և Եսայի:

145. Յարութիւնի որդի Թաթօ, կինն՝ Մարթայ:

146. Յարութիւնի որդի Բէժան, կինն՝ Աննա, որդի՝ Գալսա, դուստր՝ Մայիա:

147. Գալուստի որդի Պէպան, կինն՝ Մարիամ, որդիք՝ Իօաննէ և Սօյօման, դուստրք՝ Էլիսաբէր և Սօփիօ, մայր՝ Մարմար:

148. Դալիթի որդիք՝ Ստեփան և Կօնի, Ստեփանի կինն՝ Նէնի, դուստր՝ Թալալ, Կօնիի որդի՝ Ձաքար, դուստր՝ Մաթօ:

149. Յարութիւնի որդի Նօնի, կինն՝ Թամար, որդիք՝ Ձաքար և Յարութիւն:

150. Դուլիջանի որդիք՝ Գօտրձի և Անտօն, տրա կինն՝ Մայիա, որդի՝ Իսաննէ:

151. Յոհաննէսի որդիք՝ Գիգօյի և Գալսա և Դալիթ, Գիգօյի կինն՝ Խօրէշան, որդիք՝ Իսահակ և Սարգիս, Գալսայի կինն՝ Էլէնէ:

152. Նօնիի որդի Գիգօյի, կինն՝ Մայի, որդի՝ Իսաննէ, մայր՝ Մայի:

153. Դալիթի որդիք՝ Իսակ, Դալիթ, Պողոս և Պէպան, մայր՝ Անախանում, Իսակի կինն՝ Լալի, որդիք՝ Բաղդասար, Յակոբ և Գիօրգի, Դալիթի կինն՝ Նաբէլ, որդի՝ Յարութիւն, դուստրք՝ Էլիսաբէր և Սօփիօ:

154. Յարութիւնի որդիք՝ Գասպար, Պէտրէ և Յոհաննէս, Գասպարի կինն՝ Քալի, որդի՝ Մէլքօ, Պէտրէի կինն՝ Մարթայ:

155. Քօյոյի որդի Պետրոս, կինն՝ Ովաննա, դուստրք՝ Բարբարէ և Դալիթ, որդի՝ Գալսա:

156. Պատարկացի որդի Գիօրգի, կինն՝ Թինաթին, որդիք՝ Պատարկաց և Թովմա, Պատարկացի կինն՝ Էլէնէ:

157. Մարգարի որդիք՝ Սարգիս, Աւետիք և Թունի, մայրն՝ Մարիամ, Սարգիսի կինն՝ Դարեշան, որդիք՝ Մարգար և Բաղդասար, Աւետիքի կինն՝ Նանօն, դուստր՝ Մարիամ:

158. Խանգուլի որդի Թաթուլ, կինն՝ Մարթայ, որդի՝ Մարտիրոս, դուստր՝ Մաբէր:

159. Խանգուլեան Վարդան, կինն՝ Մաբէր, դուստրք՝ Ռուստուրան և Խաննում:

160. Սուլխանի որդիք՝ Նօնի և Գիօրգի, Նօնիի կինն՝ Թինաթին, որդի՝ Գալսա, Գիօրգոյ կինն՝ Մայիա:

161. Դագարի որդի Յարութիւն, կինն՝ Մաթօ, որդիք՝ Գասպար և Իօաննէ, դուստր՝ Մարիամ, աներն՝ մաղղեսի Յարութիւն:

162. Պատարկացի որդի Մարտիրոս, կինն՝ Շուշան, որդի՝ Ձաքարիս, դուստրք՝ Բարբարէ և Մարիամ:

163. Դալիթի որդիք՝ Պապա, Գասպար, Պապայի կինն՝ Նանօ, դուստրք՝ Մարիամ, Բարբարէ և Սօփիօ, Գասպարի կինն՝ Մարթայ, որդի՝ Դալիթ, դուստր՝ Կէկէլայ:

- 164. Գօզինի որդեգիր՝ Մանուէլ, մայրն՝ Մագթաղին:
- 165. Խաչատուրի որդի Յակոբ, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Գալուստ, դստերը՝ Խանիկիսի և Գայանէ:
- 166. Թաքուլի որդի Ղազար, կինն՝ Մայիա, որդիք՝ Մէլքո և Գասպար, դուստր՝ Բարբարէ:
- 167. Պետրոսի որդի Աղալօ, մայր՝ Աննա, քոյրէ՝ Դասի, Մարթայ, Բարբարէ և Մայի:
- 168. Չէրքէզ Յարութիւնի որդիք՝ Դաթ, Յոհաննէս, Մարտիրոս և Սիմօն, Յոհաննէսի անկանոն որդի՝ Սիմօն:
- 169. Գօզինի որդի Բարձնէմ, կինն՝ Բատո, որդի՝ Փարսադան, դստերը՝ Մարթայ, Շուշան և Բարբարէ:
- 170. Գրիգորի որդի Դաթ, կինն՝ Շուշան, որդի՝ Գիօրգի, դուստր՝ Մարիամ:
- 171. Յոհանի որդի Մարգար, կինն՝ Աննա, որդիք՝ Կօնի և Գէորգ և դստերը՝ Քալի, Թինաթին և Մուսի:
- 172. Ծղաբէխի որդի Դաթ, կինն՝ Աննա, որդի՝ Ջաքար, դստերը՝ Մարթայ և Սաբէր:
- 173. Մուլխանի որդի Դաիթ, կինն՝ Սալօմէ, որդիք՝ Գաբրիէլ, Իսանէ և Սօսի, դստերը՝ Մարթայ, Բարբարէ և Նինօ:
- 174. Ռէվազի որդի Անտօն, կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Մարգիս, Ջաքարիա:
- 175. Նիկողայոսի որդի Դաիթ, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Ջուրաթ, դուստր՝ Ովսաննա:
- 176. Բէրօյի որդի Դանէլ, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Դեմետրէ, դստերը՝ Թուբան, Մագթաղ և Մարթայ:
- 177. Յոհանի որդի Գլախա, կինն՝ Մարիամ, որդիք՝ Կօնայ և Գիգօլի, դուստր՝ Մարթայ:
- 178. Պապայի որդիք՝ Յարութիւն, Յոհաննէս, Վախտանգ, Պետրոս և Պօղոս, Յարութիւնի կինն՝ Աննա, որդի՝ Պապա, դուստր՝ Բէզան, Յոհաննէսի կինն՝ Բարբարէ, որդի՝ Գլախա, դստերը՝ Մարիամ, Սօփիօ, Նինօ և Թալալ, Վախտանգի կինն՝ Աննա, Պետրոսի կինն՝ Բատո, որդի՝ Մէլքո:
- 179. Պողոսի որդիք՝ Աբանդիլ և Փարսադան, մայր՝ Էլէնէ, Աբանդիլի կինն՝ Շուշան:
- 180. Պապայի որդի՝ Պէլան Օթարեան, կինն՝ Մարթայ, դուստր՝ Մուսան:
- 181. Պապայի որդի՝ Նատիղայ, կինն՝ Աննա, որդի՝ Գլախա, դստերը՝ Նինօ և Բարբարէ:
- 182. Բէրօյի որդի Արմօն, կինն՝ Թինաթին, որդի՝ Յարութիւն, դուստր՝ Մարիամ և մնջեցեալ եղբոր՝ Պապայի որդի՝ Գիօրգի, ևս միւս մնջեցեալ եղբոր՝ Մարտիրոսի դուստր՝ Մարթայ:
- 183. Մուլխանի որդի՝ Նօնի, կինն՝ Աննա, որդի՝ Ջաքար, դստերը՝ Էլիսաբէր և Մարթայ:
- 184. Բէրօյի որդիք՝ Գէորգ և Անդրեաս:
- 185. Թիֆլիզցի քիրա Իսան, որդիք՝ Նօնի և Ջուրաթ:
- 186. Գուրգէնի որդի Պապա, կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Գուրգէն և Գէորգ, դստերը՝ Սօփիօ և Մայիա, մայր՝ Էլէնէ:
- 187. Պապայի այրի կինն՝ Խօրէշան, որդիք՝ Սօսի, Սօլօման, Իսանէ և Անդրի:
- 188. Խէչօյի որդի Նօնի, կինն՝ Զէքէվան, որդիք՝ Աւտիք և Գլախա, դուստր՝ Նինօ:
- 189. Ջաղազպան Յարութիւնի որդիք՝ Նօնի և Նինի, Նօնիկի կինն՝ Մարգարիտ, Նինի կինն՝ Էլէնէ, որդիք՝ Դաիթ և Ջուրաթ և դուստր՝ Շուշան:
- 190. Չախմախասազ Գալօ:
- 191. Յոհաննէս բրտոսի որդիք՝ Անդրի, Ջալալ, Փարսադան և Սիմօն, դստերը՝ Մարիամ և Էլիսաբէր, մայր՝ Թամար:
- 192. Պետրոսի որդիք՝ Էստատղէն և Գլախա, մայր՝ Մարիամ:
- 193. Մարգարի այրի կինն՝ Դարէշան, որդի՝ Իսահակ, դուստր՝ Մարթէ:
- 194. Մէլքոյի որդիք՝ Նիկողայոս և Սիքէլ, սորա եղբոր՝ Գրիգորի որդի՝ Ղազար:
- 195. Էլիզբարի որդիք՝ Իսակ, Գասպար և Իօաննէ, դուստր՝ Շուշան, մայր՝ Աննա:
- 196. Գաբրէլի որդիք՝ Ղազար և Աւտիք, քոյր՝ ապաշխարօղ Մարիամ, մայր սոցա՝ Էլէնէ:
- 197. Ստեփանի որդի Թաթօ, կինն՝ Մարթայ, որդի՝ Գլախա, դուստր՝ Մայիա:

- 198. Ղօրդանեանց Սօլօմօնի որդիք՝ Պէլան, Փարէմուգ և Իօաննէ, մայր՝ Խօրէշան, Պէլանի կինն՝ Մայիա, դուստր՝ Սօփիօ:
- 199. Գօզինի որդի Իօաննէ, կինն՝ Մայիա, մայր՝ Անախանում:
- 200. Սօսիկի որդի Անդրի, քոյրք՝ Էլիսաբէր և Գայանէ:
- 201. Սափարի որդի Պապա, կինն՝ Լալօ, որդիք՝ Փարսադան, Աղալօ, Անտօն, Ալան և Սօլօման, դուստր՝ Բարբարէ և Փարսադանի կինն՝ Նէնէ, որդիք՝ Ջալալ և Գիգօլի, դստերը՝ Դասիա, Սաբէր, Շուշան, Մայիա և Սալօմէ և Աղալիյի կինն՝ Քալի, որդիք՝ Իօսէր և Ջաքար:
- 202. Թանդիլի այրի կինն՝ Մարիամ, որդի՝ Իսահակ, դուստր՝ Աննա:
- 203. Արէշի որդի Գօտերձի կինն՝ Մայիա:
- 204. Տէր Դաիթ, կինն՝ Զէքէվան, որդի՝ Սիմօն:
- 205. Կիրակոսի որդի Գաթօ, կինն՝ Մարմար, որդիք՝ Սօսի և Սօլօման, դստերը՝ Բարբարէ և Աննա, որոյ փեսայն՝ դալաչի Աբրահամ, կինն՝ Բատո:
- 206. Կիրակոսի որդի Յոհաննէս, կինն՝ Ովսաննա, որդի՝ Կիրակոս, դուստր՝ Սաբէր:
- 207. Կիրակոսի որդի Սահակ:
- 208. Առաքելի որդի Դաթ, կինն՝ Թամարխանում:
- 209. Դէրձէկ Աւտիքի այրի կինն՝ Թինաթին, որդի՝ Յովսէփ:
- 210. Աթաբէգի որդի Յոհաննէս, կինն՝ Աննա, որդիք՝ Սօսի, Սօլօման և Գիօրգի, դուստր՝ Մարթայ:
- 211. Կիրակոսի որդի Մանուչար, կինն՝ Լալօ, որդիք՝ Ղազօ և Բաղդասար, դուստր՝ Նէնէ, միւս որդոյ՝ Աբրահամի այրի կինն՝ Բարբարէ:
- 212. Արդուբեան Ջուրաթի այրի կին՝ Մագթաղ, որոյ մնջեցեալ քոյրոյ՝ Դաիթի որդիք՝ Ջուրաթ և Յովսէփ:
- 213. Դաիթի որդիք՝ Իսակ, Պէլան և Դաթ, Իսակի կինն՝ Էլիսաբէր:
- 214. Տէր Բարսեղի որդի Յարութիւն, կինն՝ Աննա, որդիք՝ Ալէքսի և Բաղդասար, դստերը՝ Մարթայ, Թինաթին և Մարիամ:
- 215. Պապայի որդի Գլախա, կինն՝ Մարթայ, որդիք՝ Գիօրգի, Պապա, Շիօշ և Դաիթ, մայր՝ Էլէնէ:
- 216. Խարազ Մատիկի որդի Մարգիս, մայր՝ Մագթաղ:
- 217. Տէր Յարութիւնի կինն՝ այրի՝ Բատօն:
- 218. Սահակի որդի Դաիթի այրի կինն՝ Մարիամ, որդիք՝ Ջաքար և Բաղդասար, Փրիդօն և Մէլքօն, դուստր՝ Դասի:
- 219. Կիրակոսի որդիք՝ Աւտիս և Գիօրգի, մայր՝ Նաբէլ:
- 220. Մացիկի որդի Կակայն, կինն՝ Սաբէր, դուստր՝ Կէկէլ, մայր՝ Աննա:
- 221. Տէր Յարութիւնի որդիք՝ Գասպարէ, Նիկողայոս, Պետրոս և Յոհաննէս, դուստր՝ Մարիամ, մայր՝ Էլիսաբէր:
- 222. Միտեղի որդի Գէորգ, մայր՝ Մարիամ:
- 223. Յարութիւնի որդի Գուրգէն, քոյր՝ Սաբէր:
- 224. Սօսիկի որդիք՝ Գասպար և Մէլքօ:
- 225. Ջուրաթի որդի Գլախա, կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Պէլան և Ջուրաթ, դուստր՝ Քալի:
- 226. Էջմիածնայ ճուրտ Մէլքոյի որդի Պապա, դուստր՝ Հռիփսիմէ:
- 227. Չափի Մէլքոյի որդի Թաթուլ, կինն՝ Շուշան:
- 228. Աղալօյի եղբայր Ասագեան Սօսի, կինն՝ Նաբէլ, որդի՝ Ասագ:
- 229. Գիօրգի որդիք՝ Աբգար, Թաթօն:
- 230. Տիրացու Գէորգի Մամուլեան, կինն՝ Մարթայ, որդիք՝ Յարութիւն և Եղիայ, դուստր՝ Նինօ:
- 231. Տիրացու Ստեփան Տէր Սահակեան, կինն՝ Նինօ, որդի՝ Իսակ:
- 232. Տէր Խաչատուր քահանա, կինն՝ Մայի, որդի՝ Մուքիաս, դստերը՝ Դասիա և Սօփիօ:
- 233. Տիրացու Իսրաէլ, մայր՝ Նէնէ:
- 234. Հաչաբաչի որդիք՝ Յոհաննէս և Ստեփան, Յոհաննէսի կինն՝ Թաի, որդիք՝ Պօղոս, Յակոբ և Պետրոս, դուստր՝ Սօնա և Ստեփանի կինն՝ Մագթաղին, դստերը՝ Անախանում և Եղիսաբէր և եղբոր՝ Յարութիւնի այրի կինն՝ Մարիամ, որդի՝ Ալահվէրդի, դուստր՝ Հռիփսիմէ:
- 235. Եթանայ որդի մերկարար Պողոս, կինն՝ Սիրունան, որդիք՝ Յովսէփ, Մարտիրոս և Աղան, դստերը՝ Մարիամ և Մարթայ, մայր՝ Երիկնէ:

236. Բաղի որդի ճոն Սարգսիս, կինն՝ Զանի, որդի՝ Արզուման, դստերը՝ Մարիամ, Եղիսաբեդ, Շուշան և Խօրիշան:

237. Յակոբի որդի՝ Ոսկան, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յարութիւն, Մինաս և Գասպար, դուստր՝ Մարգարիտ, մայր՝ Եղիսաբեդ:

238. Ջիլավորի որդի Աբրահամ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Աղաբեգ և Աղայօ, դստերը՝ Ովսաննա և Հռիփսիմէ և եղբոր այրի կինն՝ Մարգարիտ, որդի՝ Յարութիւն:

239. Յարութիւնի որդի խարազ Յոհաննէս, կինն՝ Եղիսաբեդ, որդի՝ Յարութիւն, դստերը՝ Մարիամ և Աննա:

240. Պետրոսի որդի Գաբրիէլ, կինն՝ Մարիամ, որդի՝ Յակոբ, դուստր՝ Ովսաննա:

241. Յոհաննէսի որդի կոնդաղասազ Առաքի որդիք՝ Յարութիւն և Գրիգոր, դուստր՝ Եասաման:

242. Բաղի որդի դալլաք Խաչատուր, կինն՝ Մարգարիտ, որդի՝ Աղայօ:

243. Մարգսի որդի ճոն Աւագ, կինն՝ Մարիամ, որդի՝ Յոհաննէս, դստերը՝ Մարթայ և Գայանէ:

244. Վարդապարի որդի լէինչի Յոհաննէս, կինն՝ Աննա, որդիք՝ Մարգիս և Գեորգ, դուստր՝ Հռիփսիմէ:

245. Յոհաննէսի որդի նալբանդ Աւագ, կինն՝ Աննա և դուստր՝ Մարթայ:

246. Մուռչի որդի Յարութիւն, կինն՝ Մարիամ, որդի եղբոր-որդի՝ նալբանդ Յոհաննէս, սորա քոյրն՝ Եղիսաբեդ:

247. Յովսէփի որդի Գրիգոր, կինն՝ Ռեհան, որդի հօրեղբոր՝ Մօսիսի այրի կինն՝ Հռիփսիմէ, որդի՝ Մնացական, դստերը՝ Մաթօ և Պարոննան:

248. Շէկի որդի Առուշան, կինն՝ Թէլօ, որդի՝ Դաւիթ, դստերը՝ Մաթօ և Ջաւահիր, որդի աներ Յոհանի որդի՝ Գրիգոր, սորա մայր՝ Մարգարիտ:

249. Յարութիւնի որդիք Յովակիմ և Գրիգոր:

250. Փաթալի որդի Յարութիւնի այրի կինն՝ Հռիփսիմէ, որդի՝ Յակոբ:

251. Ոսկանի որդի Ռէվագ, կինն՝ Մարթայ, որդիք՝ Գրիգոր, Մագբաղ և Համբարձում, դուստր՝ Մայի, Գրիգոր կինն՝ Մայի:

252. Պետրոսի այրի կինն՝ Մայիմ:

253. Պապիկի որդի խառատ Յարութիւն, կինն՝ Եղսապետ, որդի՝ Մէլքօն և դուստր՝ Մայի:

254. Մարգսի որդի Յոհաննէս, կինն՝ Աննա, որդին՝ Մարգիս, մայր՝ Եղսապետ:

255. Սօղօմանի որդիք՝ Արզուման և Աղապապ, Արզումանի որդիք՝ Առուստան և Աղայօ, դուստր՝ Ովսաննա, Աղապապի կինն՝ Հռիփսիմէ, որդիք՝ Մէլքօն, Եսայի և Ոսկան, դուստր՝ Ունիփէր, մայր՝ Հռիփսիմէ:

256. Սկրտչի որդի նալբանդ Գրիգոր, կինն՝ Նաթէլ, որդի՝ Գեորգի, մայր՝ Հէրիքնագ:

257. Բաղդասարի որդի Յոհաննէ, կինն՝ Աննա, դուստր՝ Էլէնէ:

258. Բաղդասարի որդի Գրիգոր, կինն՝ Անախագ, որդի՝ Բաղդասար:

259. Ուլուխանի որդի Յարութիւն, կինն՝ Մարիամ, դուստր՝ Եղսապետ, քոյրն՝ Մարթայ:

260. Մարգսի որդի ճոն Ստեփան, կինն՝ Մարիամ, որդի՝ Յովսէփ, դստերը՝ Մարթայ և Աննա:

261. Փաթալի որդի Խաչատուր, կինն՝ Հէրիքնագ, որդիք՝ Յոհաննէս, Մէլքօն և Սկրտչի, դստերը՝ Էլիսաբեդ, Աննա և Մարիամ:

262. Թաթուսի որդիք՝ Եսայի և Պողոս, Եսաեայ կինն՝ Աննա, որդիք՝ Գրիգոր և Յարութիւն:

263. Կալթաղասազ Վարդան և Ղուկաս, Վարդանի կինն՝ Շուշան, որդի՝ Մարտիրոս, դուստր՝ Հռիփսիմէ, Ղուկասի կինն՝ Մարիամ, որդիք՝ Գրիգոր և Յոհաննէս, դստերը՝ Աննա և Նանօ:

264. Յոհաննէսի որդի Մարգար, կինն՝ Թամար, որդի՝ Դաւիթ և Գրիգոր, դուստր՝ Բարբարէ, զոքանչն՝ Դարեջան:

265. Խաչապան Յոհաննէսի որդի Ստեփան, կինն՝ Մէրի, մայր՝ Հէրիք, քոյր՝ Մարգարիտ:

266. Խաչատուրի որդի Մնացական, կինն՝ վիուկ Մաթօ, դուստր՝ Մարգարիտ:

267. Վարդանի որդի Ղազար, կինն՝ Մայիա, որդիք՝ Մէլքօն, Գօգին և Յակոբ, դուստր՝ Մարիամ, Մէլքօնի կինն՝ Ովսաննա,

որդի՝ Շէրմազան, դուստր՝ Մարթայ, Գօգինի կինն՝ Մայի, դուստր՝ Բարբարէ:

268. Վարդանի որդի Մարտիրոս, կինն՝ Թինաթին, որդիք՝ Մարգար, Աբրահամ, Մարգարի կինն՝ Քէրէվան, դստերը՝ Նինօ և Բարբարէ և միս որդոյ՝ Յարութիւնի այրի կինն՝ Մայի, որդի՝ Դաւիթ, դուստր՝ Մանիժա:

269. Չօպան Սաթօ, կինն՝ Աննա, որդիք՝ Թօմաս և Աւետիք, Թօմասի կինն՝ Բարբարէ, Աւետիքի կինն՝ Էլէնէ և միս ննջեցեալ Մարտիրոս, Յարութիւն և Պետրոս, դստերը՝ Քէրէվան և Եղիսաբեդ:

270. Մխիթարի որդի Յարութիւն և Մարտիրոս, Յարութիւնի կինն՝ Մագբաղին, որդիք՝ Մխիթար և Սարգիս, Մարտիրոսի կինն՝ Մայր, որդի՝ Գեորգ:

271. Օրբէլի որդի Նօնի, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Մովսէս և Յարութիւն, դստերը՝ Շուշան, Մարիամ և Նանօ:

272. Չօպան Իւանէ, կինն՝ Էլիսաբեդ:

273. Ջուլիակ Աւան, կինն՝ Մարթայ, զոքանչ՝ Մալայ, որ է այրի կինն՝ Ղազարի, որդի՝ Գեորգ, դուստր՝ Շուշան:

274. Տէտիկի որդի Յոհաննէս, կինն՝ Թամար, դուստր՝ Դասի:

275. Պատարկացի այրի կինն՝ Մարիամ, որդի՝ Աւետիք:

276. Դուրգարի որդի Աբրահամ, կինն՝ Նաթէլ, որդիք՝ Դաւիթ և Գլախայ, դուստր՝ Զալի:

277. Յարութիւնի որդի՝ Յովսէփ, կինն՝ Քէրէվան, որդիք՝ Գիօրգի, Պողոս և Սկրտչի:

278. Կոստանդի որդի Վարթան, կինն՝ Շահգաղայ, որդիք՝ Առուստան և Գեորգ, դուստր՝ Թինաթին:

279. Բաղդասարի այրի կինն՝ Մաթօ, որդիք՝ Նիկողոս և Գեորգ:

280. Խարազ Չաքարն և Գէվօն, Չաքարի կինն՝ Մարիամ, որդիք՝ Յովսէփ, Եսայի և Աղայօ, դուստր՝ Մարթայ, Գէվօյի կինն՝ Զալի:

281. Դարբին Յարութիւն, կինն՝ Աննա, դուստր՝ Մարթայ:

282. Դարբին Դարչի, մայր՝ Աննա, քոյր՝ Բաթէլ:

283. Բուղդանի որդի դալլաք Մօսի, կինն՝ Աննա, որդիք Գրիգոր և Յարութիւն, դստերը՝ Ովսաննա և Եղիսաբեդ:

284. Տէտիկի որդի Աբրահամ, կինն՝ Էլէնէ, որդիք՝ Իսահակ և Գեորգ, դստերը Մարթայ և Մագբաղին:

285. Ջուլիակ Փարսադան, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յոհաննէս, Խաչատուր և Աղայօ, դուստր՝ Մարթայ:

286. Աւետիսի որդիք՝ Յարութիւն, Ստեփան, Դաւիթ, Շահվերդի, Գիօրգի և Յովսէփ, Յարութիւնի կինն՝ Մայի, որդիք՝ Թաթուլ և Կօնի, դստերը՝ Դասի, Սօփի և Մարթայ, Ստեփանի կինն՝ Մարիամ և որդի՝ Պապա, Դաւթի կինն՝ Նաթէլ, Շահվերդու կինն՝ Աննա:

287. Ջուլիակ Յոհաննէս և աղբատ Մարութ:

288. Երկար Յակոբի որդի Յարութիւն, կինն՝ Մարիամ:

290. Դաւթի այրի կինն՝ Մարիամ, որդիք՝ Գիօրգի և Պէպան:

291. Դարչիկի որդիք՝ Նինի և Պէպան, Նինիին կինն՝ Մուսի, Պէպանի կինն՝ Բարբարէ, որդի՝ Գլախայ:

292. Ներկարար Իսայի և կինն՝ Զալի:

293. Նեսոյի որդի Յարութիւն, կինն՝ Էլէնէ, դուստր՝ Բարբարէ, մայր՝ Խօրէշան և հօրեղբոր՝ Նօնիին դուստր՝ Մարթայ»¹⁶²:

Մայրենին՝ վտանգված. Թելավի հայերը երկրամասի հայության մեծամասնության պէս արդեն ԺԹ դարի կեսերին հիմնականում մոռացել էին մայրենի լեզուն: Տեղի տալով վրացական միջավայրին՝ նրանց մեծ մասը դարձել էր վրացախոս: Ուշագրավ է, որ եթե 1849 թ. թելավաբնակ հայերի (մոտ 600 տուն) կեսը դեռևս գիտեր հայերեն՝ «Ի մերայնոց կիսով չափ գիտեն զլեզու Հայոց, այլ հասարակեալ լեզու նոցա է լեզու Վրաց»¹⁶³, ապա 1905 թ. քաղա-

162 Նույն տեղում, գ. 2569, ք. 3-10:
163 Տե՛ր Կազարեանց Յովհաննէս վարդապետ Արշարունի, նշվ. հոդվ., էջ 281:

քում հայախոս էին միայն 53 ընտանիք¹⁶⁴։ Բազմաթիվ աղբյուրներից միաժամանակ երևում է, որ մայրենի լեզվի նկատմամբ նրանք անտարբեր չէին և այն ամբողջապես, հատկապես ազգային դպրոցներում մանուկներին կրթելու համար անում էին ամեն հնարավորը։

Մայրենի լեզվի կորստյան խնդրին բազմիցս և ցավով անդրադարձել են ժամանակի հայ մտավորականները։ Նրանցից ոմանք պարզապես արձանագրել են ստեղծված ծանր կացությունը, ուրիշները վերլուծել և ցույց են տվել դրա պատճառները, մատնանշել մայրենին վերակենդանացնելու ուղիները։ Խնդրո առթիվ ուշագրավ է հատկապես զինվորական-պատմաբան Ռոստոմ-Քեկ Երզնկյանցի նկատառումը. «Հին գաղթականք Հայոց, ի վաղուց անտի բնակեալք աստ ի մէջ Վրաց, հանգոյն Չէրբէգահայոց ի սպառ ի մոռացոնս արկեալ են զլեզուախօսութիւնս Հայոց, իսկ նորքն ևս նման նոցա, բնակեալք աստ հետզհետէ մոռացեալ են զբուն հայրենի լեզուն և ըստ սովորութեան երկրին ի գործ եղեալ են զվրացերէն լեզուախօսութիւն, մանաւանդ նորասէր և փառամոլ կանայքն, բաց ի քանի մի հին ծերունի Գանձակեցի կանանց, որք մինչև ցարդ ըստ հին սովորութեան իրեանց ի գործ դնեն զհայախօսութիւնս. սակայն նորաձևքն պախարակեն զնոսա և այնու անհետացուցանեն զմնացեալ նշոյլս հայախօսութեան։ Ասող ազգակործան վատ սովորութեանցն և չարաչար կարծեաց նորաձևութեան կարճահաս մտաց։ Հոգևորականութիւնն հագի հազ կարաց ի մէջ եկեղեցական պաշտամանց պահպանել զհայերէն լեզուախօսութիւն ընդ միմեանս, այլ ի ժամանակս քարոզից...»¹⁶⁵։ «Մշակ»-ի թղթակիցն էլ հայերի վրացախոս լինելու համար մեղադրում էր հոգևորականութեանը. «Ես կարծում եմ, որ սրանում մեղաւոր են նրանց հովիւները, որոնք ոչ թէ ժողովրդի հետ, այլ նոյն իսկ իրար հետ եկեղեցում վրացերէն են խօսում»¹⁶⁶։

Կրթություն. այդ ասպարեզում հայերի մասնակցությունը հին պատմություն ունի։ Հայտնի է հայ մանկավարժ Փիլիպե քահանան, որը 1757-1767 թթ. ուսուցչություն է արել Թելավում. «Թելավի դպրոցում նա (Անտոն Ա կաթողիկոսը) դասատու նշանակեց հայ քահանա տեր Փիլիպե Ղայթմազաշվիլուն, որը մեծ գիտնական էր և փիլիսոփա՝ ինչպես հին փիլիսոփայության տեղյակ, նույնպես և նորում հույժ փորձված...»¹⁶⁷։ Հայոց դպրոցները, սակայն, քաղաքում հիմնականում բացվեցին միայն ԺԹ դարի 2-րդ կեսին։

Դպրոց. ժողովրդի ուժացող հատվածին դարձի բերելու միակ ճանապարհը, անշուշտ, հայոց դպրոց-

ները կյանքի կոչելն էր։ Հայտնի է, որ տակավին 1831 թ. Թելավում 3 ուսուցչով, 40 հայ և 20 վրացի աշակերտներով գործել է դպրոց, որի գոյության հետագա տարիների վերաբերյալ, ցավոք, տվյալներ չունենք. «Դպրոց, որ հաստատուած է 1831 թուին Հայոց Կաթողիկոսի կամօք և կառավարում է տեղացի Հայոց հոգևորականութեան ձեռքով. ուսուցանում են՝ կարդալ, գրել և հաշուապահութիւն հայերէն և վրացերէն լեզուներով»¹⁶⁸։

1857 թ. մի վավերագրում վկայված է, որ Թելավում 1 ուսուցչով և 15 աշակերտով գործել է դպրոց, հավանաբար, առանց շենքային հարմարությունների¹⁶⁹, իսկ 1860 թ. քայլեր են ձեռնարկվել դպրոցի շենքի կառուցման ուղղությամբ. «Առաջնորդն Հայոց Վրաստանի սրբազան Սարգիս Արքեպիսկոպոս Չալալեանց, որ յանցեալ ամի այց արարեալ փոքու հօտին իւրոյ նահանգին Թելաւայ. և տեսեալ դրութեանց նոցա, յորդորական և ճարտար բանիւք ազդեաց ի սիրտ և ի հոգի բոլոր քաղաքացոց խորհիլ զօգուտ ազգին, դարման տանել ազգակործան ցաւոյն և զամենայն կարելի միջոցս ի կիր առնուլ վասն բանալոյ զազգային վարժարան, որով մայր իցէ գտանել զկորուսեալ դրամն հայախօսութեան...»¹⁷⁰։ Այս հորդորներին ընդառաջ են գնացել թելավաբնակ աստիճանավոր Եփրեմ Սուքիասյանցը, իշխան Չաքարիա Երկայնաբազուկ Արդուրյանցը, Գևորգ Տեր-Սարգսյանցը, հոգևոր գործերի վերատեսուչ Գրիգոր Սողոյանցը, Ավետիք Խիթարյանցը, Սարգար Մարգարյանցը, Ղադո և Հարություն Թաթոսյանցները, Նազար Հովհաննիսյանցն ու Հովսեփ Սիմոնյանցը, թիֆլիսեցի Չուրաք Միրզոյանցը։ Դպրոցի շենքի կառուցմանը էապես օգնել է հայտնի բարեգործ և ազգային գործիչ Ղադո Թաթոսյանցը (1819-1866)՝ «...կառուցանելոյ ի միջակեղորոնի քաղաքիս արձակ յարմարաւոր մեծածախ շինուածոցն վասն ազգային ուսումնարանի, հանդերձ ամենայն հարկաւոր կրպակօք և սենեակօք...»¹⁷¹։ Շատ շուտով նույն թվականի հունիսի 4-ին, Տ. Տ. Մատթեոս կաթողիկոսի բարեհաճությամբ Թելավի հայոց ծխական դպրոցը սկսեց գործել. «Սրամիտ մանկունք Հայոց հեշտի սկսան պարապիլ յուսումն Հայոց և ի սուղ միջոցիս ցուցանեն զնշան յառաջադէմ լինելոյ և ի լեզուս և ի բարբառս Հայոց»¹⁷²։

Նույն 1860 թ. աշնանը, հոգաբարձուներ Հովսեփ Մարգարյանցի և Պողոս Եկվիմյանցի ջանքերով էլ «...հիմն արկաւ մեծակառոյց շինուածոց ազգային վարժարանի ի վերայ գետնոյ հին գերեզմա-

164 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, ք. 6:

165 **Երզնկեանց Ռոստոմ-Քեկ**, նշվ. հոդվ., էջ 164:

166 «Մշակ», 1900, № 50, էջ 2:

167 **Սելիքսեթ-Քեկ Լ.**, նշվ. աշխ., հատոր Գ, էջ 200:

168 **Աղէքսանդր Դ. Երիցեանց**, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 273:

169 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, ք. 204-205:

170 **Երզնկեանց Ռոստոմ-Քեկ**, նշվ. հոդվ., էջ 164:

171 «Մեղու Հայաստանի», 1862, № 35, էջ 3:

172 **Երզնկեանց Ռոստոմ-Քեկ**, նշվ. հոդվ., էջ 165:

նատան, սեպհական դրամօք և քրտնաջան աշխատութեամբք...»¹⁷³: Նորաշեն դպրոցի շենքն ամբողջացվեց 1861 թ. գարնանը (թերավարտ էին մնացել ծածկերը)՝ արհեստապետեր (ուստաբաշի) Ավետիք Խիթարյանցի և Մարգար Մարգարյանցի ջանքերի շնորհիվ¹⁷⁴:

1880 թ. հիշվում է «Վարդանյան» դպրոցի հոգաբարձուներից Թելավի աստիճանավոր Իվանե Ստեփանյանցը, որը կարևոր դեր է խաղացել կրթօջախի գոյատևման գործում: Թեմի առաջնորդ Գաբրիել արքեպիսկոպոսին նույն թվականին նրա հղած գրության մեջ կարդում ենք. «...տեսանելով զբացումն ուսումնարանին ի 1860 ամի ցանկացայ ձեռնտու լինել յառաջադիմութեան մանկանց ազգիս՝ իմ սեպհական ծախիւք կառուցեալ երեք ընդարձակ քարուկրեայ կրպակս, նուիրեցի նորաբաց ազգային ուսումնարանին, որ յամ յամէ բերէ արդինատոր վարձադրամս յօգուտ ուսումնարանին...»¹⁷⁵:

«Գալանյան» օրիորդաց դպրոց. բացվել է 1863 թ., իսկ դպրոցին կից գրադարանը՝ 1878-ին¹⁷⁶:

«Վարդանյան-Գալանյան» երկսեռ դպրոց. այս դպրոցները տարիներ շարունակ առանձին-առանձին գործելուց հետո՝ 1905 թ., հոգաբարձուներ Ա. Տեր-Բարսեղյանի, Մ. Վերմիշյանի, Գ. Տեր-Հարությունյանի և Ս. Տեր-Մարգարյանի գլխավորությամբ¹⁷⁷ միավորվում են իբրև երկսեռ դպրոց: Դրա գոյատևման համար մեծ դեր է կատարել Սբ. Գևորգ եկեղեցու քահանա Խաչատուր Եզեկյանցը. «Շնորհի արիաջանութեան Խաչատուր քահանայի Եզեկեանցի, նորոգուել է տաս քարաշէն կրպակներ Թելավի Ս. Ա(ստուա)ծածին եկեղեցու գաւթին կից, որոնց արդիւնքը ստանում է Թելավի երկսեռ հայոց դպրոցը: Նորա աջակցութեամբ կառուցուել է դարձեալ Թելավի Աւագ եկեղեցու գաւթում հինգ քարաշէն՝ նոր ձևի խանութներ, արդիւնքը դարձեալ ստանում է դպրոցը»¹⁷⁸:

«Վարդանյան» դպրոցի գործունեության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով ներկայացնում ենք սույն աղյուսակը.

տարեթիվ	այլ տեղեկություն	ուսուցիչ	աշակերտ
1860	հիմնադրվել է		
1863 ¹⁷⁹		3	102
1865 ¹⁸⁰		3	56
1866 ¹⁸¹		1	71
1867 ¹⁸²		1	70

173 Նույն տեղում:
 174 Նույն տեղում:
 175 ՀԱԱ, ֆ. 56, ց. 12, գ. 408, ք. 1:
 176 «Մշակ», 1878, № 79, էջ 2:
 177 «Արշալոյս», 1905, № 45, էջ 3:
 178 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 191, ք. 19:
 179 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, ք. 45-46: «Մեղու Հայաստանի», 1861, № 21:
 180 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 23:
 181 Նույն տեղում, գ. 3848, ք. 114:
 182 Նույն տեղում, գ. 3851, ք. 3-4:

1873 ¹⁸³		1	40
1874 ¹⁸⁴		3	80
1875 ¹⁸⁵		4	115
1876 ¹⁸⁶		4	65
1877 ¹⁸⁷		5	66
1878 ¹⁸⁸		4	63
1881 ¹⁸⁹		4	70
1882 ¹⁹⁰		4	138
1883 ¹⁹¹		5	85
1884 ¹⁹²			55
1885 ¹⁹³	փակվել է		
1886 ¹⁹⁴	վերաբացվել է		60
1888 ¹⁹⁵			44
1890 ¹⁹⁶			29
1891 ¹⁹⁷			26
1892 ¹⁹⁸			30
1894 ¹⁹⁹		4	42
1896 ²⁰⁰	փակվել է		
1903 ²⁰¹	փակ շենքը հրդեհվել է		

«Գալանյան» դպրոցի գործունեության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով ներկայացնում ենք սույն աղյուսակը.

տարեթիվ	այլ տեղեկություն	ուսուցիչ	աշակերտ
1863	հիմնադրվել է		
1865 ²⁰²		2	18

183 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, ք. 52:
 184 Նույն տեղում, գ. 3864, ք. 49-50:
 185 Նույն տեղում, գ. 3866, ք. 97-98, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 45:
 186 Նույն տեղում, ց. 3, գ. 62, ք. 13:
 187 Նույն տեղում, ց. 1, գ. 3850, ք. 99:
 188 Նույն տեղում, գ. 3850, ք. 176-177:
 189 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 554: Ի դեպ, 1881 թ. Գևորգ ավագ քահանա Տեր-Մարգարյանցի ջանքերով կառուցվել էր օրիորդաց դպրոցի նոր շենք («Մեղու Հայաստանի», 1881, № 225, էջ 3):
 190 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, ք. 159-60:
 191 Նույն տեղում, գ. 3875, ք. 135-136:
 192 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 554: Նույն թվականին դպրոցի ուսուցչակազմում ընդգրկված էին Գևորգ ավագ քահանա Տեր-Մարգարյանցը (տեսուչ), Աբել քահանա Մարգարյանցը, օր. Մարիամ Դուբայանցը, օր. Կատարինե Դուբայանցը, Երվանդ Ապրիլյանը, Տիգրան Եսայանը, Ստեփանոս քահանա Տեր-Սահակյանցը և Հովսեփ Եգորյանցը («Նոր-Դար», 1884, № 137, էջ 4):
 193 «Մշակ», 1886, № 132, էջ 3:
 194 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 554: Ի դեպ, ուսուցչակազմի անդամներն էին՝ Հ. Տեր-Սահակյան (կրոն և երգեցողություն), Ե. Ապրիլյան (հայոց լեզու), Գ. Խալաթյան (ռուսաց լեզու և թվաբանություն), օր. Մ. Դուբայանց (գծագրություն և ձեռագործ), օր. Կ. Դուբայանց՝ վերակացու («Մշակ», 1886, № 132, էջ 3):
 195 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, ք. 138: Գոյատևում էր նյութական սուղ միջոցների հաշվին և հատկապես Գևորգ ավագ քահանա Տեր-Մարգարյանցի ջանքերի շնորհիվ («Մշակ», 1890, № 10, էջ 3):
 196 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, ք. 137:
 197 Նույն տեղում, գ. 3891, ք. 109:
 198 Նույն տեղում, գ. 3896, ք. 34, գ. 3895, ք. 99:
 199 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 554: Նաև՝ «Արշալոյս», 1905, № 45, էջ 3:
 200 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 554: Նաև՝ «Արշալոյս», 1905, № 45, էջ 3:
 201 «Արշալոյս», 1905, № 45, էջ 3:
 202 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 23:

1866 ²⁰³		1	12
1867 ²⁰⁴		3	25
1871 ²⁰⁵			22
1873 ²⁰⁶		1	22
1875 ²⁰⁷		4	67
1876 ²⁰⁸		6	54
1877 ²⁰⁹		6	39
1878 ²¹⁰		5	48
1883 ²¹¹		2	100
1885 ²¹²	փակվել է		
1886 ²¹³	վերաբացվել է		80
1888 ²¹⁴			44
1890 ²¹⁵			58
1891 ²¹⁶			69
1892 ²¹⁷			104
1894 ²¹⁸		1	134

«Վարդանյան-Գայանյան» երկսեռ դպրոցի գործունեության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով ներկայացնում ենք սույն աղյուսակը.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1905 ²¹⁹	հոկտեմբերի 9-ին ավ. քահանա Աբել Սարգսյանը կատարել է երկսեռ դպրոցի բացման օրհնության հանդեսը		
1907/8 ²²⁰			201 (143-ը՝ աշ-ուհի)
1909 ²²¹		5	172 (140-ը՝ աշ-ուհի)
1911 ²²²		5	119 (107-ը՝ աշ-ուհի)
1914 ²²³			168
1919 ²²⁴	գործում էր որպես գիմնազիա		

Օրիորդաց այլ դպրոցներ. «Գայանյան» դպրոցից գատ Թելավում գոյություն են ունեցել նաև այլ օրիորդաց դպրոցներ: Մեկը գտնվում էր քաղաքի Չվելգավալանի քաղամասում՝ Սր. Գևորգ եկեղեցուն կից: Հայտնի է, որ «Մարիամյան» անվամբ այս դպրոցը բացվել էր 1878 թ. թեմական առաջնորդի՝ և տեսչի հրամանով: Հաստատությունը հատկապես կոչված էր նպաստելու չքավոր հայ ընտանիքների աղջիկների կրթության գործին: Վարժուհին եղել է

203 Նույն տեղում, գ. 3848, ք. 114:
 204 Նույն տեղում, գ. 3851, ք. 3-4:
 205 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 554:
 206 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, ք. 52:
 207 Նույն տեղում, գ. 3866, ք. 97-98, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 45:
 208 ՀԱԱ, ֆ. 53, ց. 3, գ. 62, ք. 13:
 209 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 99:
 210 Նույն տեղում, գ. 3850, ք. 176-177:
 211 Նույն տեղում, գ. 3875, ք. 135-136:
 212 «Մշակ», 1886, № 132, էջ 3:
 213 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 554:
 214 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, ք. 138:
 215 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, ք. 137:
 216 Նույն տեղում, գ. 3891, ք. 109:
 217 Նույն տեղում, գ. 3896, ք. 34, գ. 3895, ք. 99:
 218 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 554: Նաև՝ «Արշալոյս», 1905, № 45, էջ 3:
 219 «Արշալոյս», 1905, № 45, էջ 3:
 220 **Խուրդյան Ս.**, նույն տեղում:
 221 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, ք. 11:
 222 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 58:
 223 **Խուրդյան Ս.**, նույն տեղում:
 224 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 48, ք. 104:

Եղիսաբեթ Մակարյանը²²⁵: Դպրոցի հետագա տարիների գործունեությանը վերաբերող տեղեկությունները, սակայն, կցկտուր են: 1895 թ. Վեհափառ հայրապետի կոնդակի համաձայն՝ թեմակալին տրվել է Չվելգավալանի Սր. Գևորգ եկեղեցու զավթում (բակում) օրիորդաց նոր, այն է՝ «Հռիփսիմյանց» մեկդասյա դպրոց հիմնելու թույլտվություն²²⁶: Երբ արդեն նույն թվականին կառուցվել էր դպրոցի շենքը, Սր. Գևորգ եկեղեցու միաբան Կարապետ քահանա Ասլանյանցն ու երեցփոխը խնդրանքով դիմել էին թեմի առաջնորդին՝ դպրոցի բացման թույլտվությունը ստանալու ակնկալիքով. «Տեսանելով զգալի կարօտություն հայախօսութեան յայսմ վիրախօս Թէլա քաղաքի, վասնզի ի վաղուց հետէ լեզուն վրաց տիրապետեալ է ի վերայ լեզուին Հայոց և խլեալ է ի նմանէ բնաւ իւր մայրենի բարբառ և քաղաքն Թէլա արևելաարևմուտք տարածեալ գոյով երեք մղոն հեռաւորութեամբ և հիւսիսահարաւ նոյնպէս, ոչ բաւականացուցանէ բնակչաց Հայոց Թէլաւի մի ծխական եկեղեցական երկդասեան օրիորդաց և միդասեան տղայոց ուսումնարան...»²²⁷: 1896 թ. հաստատվել էր դպրոցի հոգաբարձության կազմը²²⁸: Բայց նույն տարում էլ կառավարության հրամանով դպրոցը փակվեց և այլևս չվերաբացվեց:

Սր. Աստվածածին եկեղեցուն կից դպրոց. 1896 թ. մեկ այլ տեղեկության համաձայն՝ մեկդասյա ծխական դպրոց է հիշվում (հաստատվել էր հոգաբարձության կազմը) Սր. Աստվածածին եկեղեցուն կից²²⁹: Այս դպրոցը, հասկանալի է, որ համարյա չի գործել, քանի որ նույն թվականին կառավարության հրամանով փակվել էին ազգային բոլոր դպրոցները:

Արքունի (պետական) դպրոց. Թելավի հայ աշակերտության մի փոքր մասը հաճախում էր նաև պետական դպրոց: Հայտնի է, որ Սր. Նունեի անվան օրիորդաց դպրոցում 1886 թ. ուսանում էին շուրջ 20 հայուհիներ: Ի դեպ, դպրոցի խնամակալ իշխանուհի Ճավճավաճեի օրոք հայոց լեզու և հայոց կրոն չէին դասավանդում, իսկ վերջինիս փոխարինած տիկին Բագատուրը վերացրել էր դասավանդման արգելքը. ուսուցչության համար հրավիրվել էին Կարապետ քահանա Ասլանյանը (կրոն) և Երվանդ Ապրիլյանը (հայոց լեզու)²³⁰:

Գիմնազիա. հակառակ Առաջին աշխարհամարտի հարուցած ընդհանուր դժվարություններին՝ թելավցի հայերը 1916 թ. հոկտեմբերի 29-ին բացեցին նաև հայկական գիմնազիայի դռները²³¹: Հայտնի է, որ այդ հաստատությունն իր գործունեությունը ծա-

225 «Մշակ», 1879, № 181, էջ 2-3:
 226 «Արարատ», 1895, էջ 437:
 227 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 78, թերթ 2:
 228 «Արարատ», 1896, էջ 385:
 229 «Արարատ», 1896, էջ 424:
 230 «Մշակ», 1886, № 133, էջ 3:
 231 «Մշակ», 1916, № 239: Նաև՝ «Армянский Вестник», 1916, № 48-49, с. 13-14.

վալել է նաև ողջ վիրահայության համար ստեղծված առավել դժնդակ ժամանակներում՝ 1919 թ.²³²:

Մանկապարտեզ. 1916/17 ուստարվա ընթացքում Կովկասի հայոց բարեգործական ընկերության հատկացրած 300 ռուբ. նպաստով Թելավում գործել է նաև մանկապարտեզ²³³:

Գալոցը խորհրդային տարիներին. Վրաստանի խորհրդայնացումից հետո նախկին գավառի հայկական բոլոր դպրոցները փակվեցին, բացառությամբ քաղաքի 9-ամյա դպրոցի: 1924 թ. այստեղ զգալի էր ուսուցիչների պակասը (հատկապես հայոց լեզվի, գրականության, բնագիտության, մաթեմատիկայի և հասարակագիտության), և դպրոցի վարչությունը հանդես է եկել համապասխան հայտարարությամբ²³⁴: Կարելի է պնդել, որ 1925 թ. դպրոցը դեռևս ծաղկման շրջանում էր, քանի որ՝ «Այս ուսումնական թվին դպրոցը բավական ընդարձակվել է, ցածր խմբակները բազմացել են և չնայելով խնդիրների ընդունելությունն արդեն ավարտված է, սակայն յուրաքանչյուր օր դարձյալ մեծ քանակությամբ խնդրատուներ են այցելում»²³⁵: Ուսուցչական խումբը բաղկացած էր 16 հոգուց²³⁶: Այն ուներ մոտ 15 խմբակ և շուրջ 500 աշակերտ²³⁷: Նույն տարվա սեպտեմբերին (1926/27 ուստարվա համար) մի շարք առարկաների գծով ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով դպրոցի վարչությունը կրկին հանդես եկավ հայտարարությամբ²³⁸: Հետաքրքրական էր ուսուցիչ Պ. Աթանեսյանի նախաձեռնությունը, որը կազմակերպել էր աշակերտական գյուղատնտեսական կոոպերատիվ²³⁹: Գալոցը գործել է նաև 1927²⁴⁰ ու հետագա տարիներին՝ ընդհուպ 1937 թ., երբ տվել է իր վերջին շրջանավարտները և ընդմիջտ փակվել²⁴¹:

Գրադարան-ընթերցարան. 1924 թ. քաղաքում գործում էր Ստ. Շահումյանի և Ա. Ջափարիձեի անվան գրադարան-ընթերցարանը, որի գլխավոր թերությունը հայերեն պարբերականների բացակայությունն էր²⁴²:

Պատմական հուշարձաններ. Թելավը՝ Կախեթի թագավորության երբեմնի մայրաքաղաքը (ԺԱ և ԺԷ-ԺԹ դդ.), հարուստ է պատմական հուշարձաններով²⁴³: Քաղաքի հին մասում պահպանվել է Ե-Չ

դարերում հիմնադրված ու ԺՁ դարում նորոգված վրացական «Ղըվթաբա» եկեղեցին: Քաղաքում կանգուն են ևս երկու վրացական եկեղեցիներ՝ Սբ. Պողոս-Պետրոս (ԺԹ) և Սբ. Աստվածածին (1758 թ.): Բայց Թելավն ավելի նշանավոր է իր պաշտպանական նշանակության կառույցներով:

Եկեղեցիներ. Թելավում գործել են մի քանի հայոց եկեղեցիներ: Ընդ որում, դրանցից հները միայն ԺԸ դարի կառույցներ են (հայոց ավելի հին եկեղեցիներ չեն պահպանվել): Անշուշտ, հավանական է, որ ավելի վաղ ժամանակներում էլ բազմամարդ հայ համայնքն ունենար իր եկեղեցին կամ եկեղեցիները, ինչպես՝ Գրեմում, բայց այդ մասին ստույգ տեղեկություններ չեն պահպանվել:

ԱՎԱԳ (ՄԱՅՐ) ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ


Ավագ կամ Մայր եկեղեցին, որ կոչվում էր Սբ. Գևորգ, գտնվում էր քաղաքի կենտրոնական մասում. «Սուրբ Գևորգ եկեղեցին հայոց Թելալի գոյով մերձ ի հրապարակս և ի փողոցս քաղաքին...»²⁴⁴: 1818 թ. բեմական առաջնորդը եկեղեցին համառոտ նկարագրելուց բացի, բարեբախտաբար ընդօրինակել է այժմ գոյություն չունեցող շինարարական արձանագրությունը. «Ի քաղաքն Թելալ գոյ եկեղեցի մի կամարաշեն կառուցեալ քարի և բոսմբ ընդ չորից սեանց յանուն սրբոյն Գևորգեայ, իսկ արտաքոյ եկեղեցոյ ունի զարձանագրութիւն ի վերայ մարմարեայ քարի այսպէս ոտանատրեալ.

Թուին ՌՍԼԵ (1786)
ի թագատրութեան Հերակլ արքային
ի հայրապետութեան Ղուկաս
կաթողիկոսին հանդերձ ի հիմանց
սկսեցի ձեռնտուութեամբ ազնի
բարեպաշտի զԲաղդասար Ղալօեանի
աւարտեցի Տեր Սարգիս գործակալ
բոլոր Կախեթի, որ եմ որդի՝ Տէր
Բաղդասար աւագ քահանայի. խնդրեմ
ի ձեռք ասել ողորմի, զի արժանանամ
տեսոյն Յիսուսի եւ խառնիմ ի դասս
աջակողմի, որ եւ դուք յիշեալ լիջիք
*յահեղ Ատենին»*²⁴⁵:

Եկեղեցին մի քանի անգամ նորոգվել ու վերակառուցվել է: Դադստանի լեռնականների արշավանքի նախօրեին ևս որոշ ամբացումներ էին կատարվել. «...աւագ եկեղեցին հայոց Թելալի գոյով կից ամրոցական պարսպին, կարել փտանգ մեծ լինել վասն բոլոր ամրոցին Թելալի յառաջիկայ յարձակման ամբոխից Շամիլի և վասնորոյ յայնմէն իսկ հարկատր է գբոլոր դրունսն երկաքապատ առնել, բաց յայնման զամրոցական բուրգն, յորոց վերանթադատեալ է շինել զգանգակատուն վասն

232 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 48, ք. 104:
233 «Համբարաբեր», 1916, № 33, էջ 1034:
234 «Մարտակոչ», 1924, № 220:
235 Նույն տեղում, 1925, № 245:
236 Նույն տեղում:
237 Նույն տեղում, 1926, № 17:
238 Նույն տեղում, 1926, № 207:
239 Նույն տեղում, 1926, № 295:
240 Նույն տեղում, 1927, № 113:
241 Տեղեկությունը մեզ հաղորդել է դպրոցի ուսուցիչ Նիկոլայ Ղազարյանը: Ըստ նրա վկայության՝ փակման տարում դպրոցը գործել է իբրև 7-ամյա:
242 «Մարտակոչ», 1924, № 113:
243 Քաղաքի պատմական հուշարձանների մասին ընդհանուր տեղեկությունները տես՝ **Իջուլի՝ Պեյգուլու Գ. Գ. Երզնկյան**. Թբիլիսի, 1963:

244 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4129, ք. 2:
245 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 1:



ԹԵԼԱՎ. Սր. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևելքից՝ 1969 թ. (լուս. Ալ. Արուստունովի), 1976-ին (լուս. Ս. Դարչինյանի) և 1988-ին

նոյն եկեղեցույ, վերանորոգել դնելով ի վերնայարկի նորին զգերանս հանդերձ յատակաւ, որ կարիցէ մնալ յետոյ ի շինելն ի վերա բրգան զգանգակատուն: Վասնորոյ պօլիցայն խնդրէ այժմէն իսկ տնօրինել երկաթապատ առնել յայնմ եկեղեցուջ գրդունսն և դնել զգերանս հանդերձ յատակաւն...»²⁴⁶:

Հայտնի է, որ 1829 թ. եկեղեցուն կից կառուցվել է զանգակատուն²⁴⁷:

1861 թ. քաղաքի հայ հասարակությունը հոգևոր իշխանությունից խնդրել է թույլտվություն՝ եկեղեցուն կաթողիկե (գմբեթ) կառուցելու կապակցությամբ: Նախատեսում էին կառուցել նաև շրջապարիսպ ու սենյակներ: Շուրջ 5000 ռուբլի կազմող ծախսից 3000-ը ցանկանում էին վերցնել Սր. Գևորգ եկեղեցու գումարներից, իսկ մնացածը՝ հանգանակել²⁴⁸: Հայտնի է, որ թելավցի Ղադո Թաթոսյանցը (մահ. 1866 թ.) դեռ մինչև Սր. Երրորդություն եկեղեցին կառուցելը (1862 թ.) իր գործուն աջակցությունն էր ցուցաբերել նաև Սր. Գևորգ եկեղեցու զանգակատան գմբեթի կառուցման գործում. «Յետ կառուցանելոյ շքեղաշէն կաթողիկե զանգակատան Թէլաւու սուրբ Գևորգ աւագ եկեղեցույ...»²⁴⁹: Մասնակի նորոգումներ կատարվել են նաև 1887 թ.: Այդ մասին իր հաշվետվությունն էր ներկայացրել երեցփոխ Ե. Սիմոնյանցը²⁵⁰: Հետագա տարիների բազմաթիվ վավերագրերում ևս Սր. Գևորգ եկեղեցին պարբերաբար հիշատակվում է: Դարավերջին՝ 1898 թ., ականատես Էմմանուել քահանան եկեղեցու մասին նշել է. «...աւագ եկեղեցին, որի վրայ, լսածիս նայելով, մեծ աշխատանք ունին թափած տեղոյն Գէորգ աւ. քահ. Տէր-Սարգսեանի նախնիքը, մասամբ և ինքը, բաւական հին եկեղեցի է, առանց կաթողիկէի, սակայն աչքի է ընկնում իւր ուրույն, բարձր ու գմբեթաւոր զանգակատնով...»²⁵¹:

1923 թ. մարտի 31-ից եկեղեցին փակ էր²⁵²:

Հիշյալ զանգակատունը քանդել են 1924 թ. ապրիլի 19-ին: Մայիսի 10-ին տեղական իշխանությունները քանդում են նաև. «...փակ Ս. Գէորգ աւագ եկեղեցու արևմտեան և հարաւային պարիսպը, գաւիթը և ...զանգակատան գմբեթը և եկեղեցուն այժմ թատրոն-պրօժեկտոր լինելով յաճախում է ժողովուրդը»²⁵³:

Եկեղեցական իրեր. 1818 թ. եկեղեցուն պատկանող բազմաթիվ զարդերի, անոթների ու այլ իրերի թվում եղել են նաև արձանագրվածներ: Դրանք են՝

246 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3245, ք. 5:

247 ՀԱԱ, ֆ. 209, ց. 1, գ. 157:

248 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4129, ք. 1:

249 «Մեղու Հայաստանի», 1862, № 35, էջ 3:

250 «Արարատ», 1888, էջ 127:

251 **Նագարեանց Էմմանուել քահ.**, Տպարտութիւններ Թելաւի ուղերտութիւնից. – «Նոր Դար», 1898, № 135, էջ 2:

252 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, ք. 7: Նաև՝ ֆ. 57, ց. 3, գ. 525, ք. 16:

253 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, ք. 139, 140:

Արծաթյա սկիհ. պատվանդանին.

Յիշատակ է Ղալօեանց Գէորգոյ ծնողաց՝ Բաղդասարին, եւ Դարէջանին, եղբարց՝ Պապին եւ հանգուցեալ Եսայոյ, որդի՝ Բաղդասարին. թուին ՌՃՂԳ (1745):

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 1:

Արծաթե աղավնի՝ որպէս մյուտոնի աման, վրացերեն.

Ընծայեցի զայս աղանիս Թէլավու Սրբոյ Աստուածածնայ եկեղեցոյ Կիրակոսս և Պետրոսս. արտահանողքն սորա պատճեալ լինին, թին վրաց 442 (1754):

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 2:

Ար. Աստվածածնի փոքր պատկեր («...շուրջ զգլխովն չորսորթնայ արծաթապատ, որոյ զլիսաբազն կից ընդ թագի որդոյ իւրոյ՝ ոսկէգօծ, ընդ գորով յօրինեալ տասն սատա ակունք, իսկ ի ստորի գրեալ գոյ արծաթի վերա»).

Յիշատակ է զպատկերս Յակոբի որդի Ստեփանին ի դուռն Թէլավու Սուրբ Գէորգեայ, թուին ՌՄԴ (1755):

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 2:

Ար. Աստվածածնի պատկեր. ստորին մասում, արծաթի վրա.

Յիշատակ է պատկերքս Ղալօեանց Մարտիրոսին ի դուռն Թէլավու Սուրբ Գէորգեայ, թուին ՌՄԴ (1755):

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 2:

Ար. Աստվածածնի պատկեր. ստորին մասում, արծաթի վրա վրացերեն.

Ընթերցողդդ տյն Աստուածապատկերին՝ ողորմի ասացէք Գօրցի Կիրակոսի կին Բատոհն. յօգոստոսի ամսոյ թին վրաց 452 (1764):

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 2:

Պահարան փայտե («...կամարածն երկդրամբ ներքուստ և արտաքուստ, այլև այլ չորսորթնայ պատկերօք և ընդմէջ պահարանի՝ ոսկէգօծ պատկեր սրբոյն Գէորգեայ, շուրջ շուրջանակի կարգաւ զետեղեալք երեք տասն պահարանք մասանց, ընդ որով եղեալ կան տասն մասն սրբոց, որոց զճանօթութիւն ընդ իւրաքանչիւր եղեալ փուսուլայից ունին յայտնել ՚ի ներքոյ գրեալ է»).

Յ(իսուս) Զ(րիստո)ս Տ(է)ր բարերար քեզ աղաչեմ միշտ անդադար. Տ(է)ր Սարգիս պահեայ միշտ յար յա(մենայ)ն թշնամե, որ սիրե չար և դու՝ Գէորգ ս(ուր)բ զօրատոր, որ վ(աս)ն մեր վկայ եղեալ, օգնական լեր Յոհաննէսին:

Նույն պահարանին («...գոյ կախեալ զկամարե պահարանի զխաչ մի ձեռաց ընթերցի արծաթայ շիւթէշի շուշայս ի ասին կան մասունք սրբոց և ի միս երեսին են զետեղեալք հինգ իրք հասարակ կարմիր ակամբք, որոյ պատուանդանին գրեալ է վրաց»).

Եւանգուլեանց Չուրարի կողակից Մայիայն՝ ընծայեցի Թէլավու Ս(ր)բ(ո)յ եկ(ե)ղ(ե)ցւ(ո)յն յունվարի 17 ի թին վրաց 491 (1803):

Պահարանին.

Պետրոս առաքեալ, Պողոս առաքեալ: Ահաւսիկ կամ աղախին Տ(եառ)ն: Ողջոյն ընդ քեզ Մարի(ա)մ, դու ողորմես Տ(է)ր Սարգսին:

Պահարանի եզրերին.

Ի թուին ՌՄԼԸ (1789) ի ժամանակս Հերակլ արքայի եւ ամենամեղ Տ(է)ր Սարգիս Թէլավ քաղաքի Ս(ուր)բ Գէորգեայ անուամբ կառուցեալ եկ(ե)ղ(ե)ցւ(ո)յ յետնեալ ք(ա)հ(ա)ն(ա)յս՝ որդի Տ(է)ր Բաղդասար աւագ ք(ա)հ(ա)ն(ա)յի, շինել տուայ զայս մասանց պահարանն ի յիշատակ իմ և իմ ծնողաց հոգւոյն, նաև զայս անցատոր աշխարիս մէջն առ ի վայելումն իմ և իմ որդոցն, վասն զի բազում ջանիւք զայս ս(ր)բ(ո)ց մասունքներն ճարեցի և երկու բարերարք ևս ճարեցի. ...Սէթի որդի Յոհաննէսն և Սէլիքի եղբայր Պապայն, հարիւր մսխալ արծաթի առնօղեղեն և այլ ս(ո)ր(ա) ... իմ հալալ արդեամբն եղեւ, վ(ա)ս(նորո)յ աղաչեմ վայելողաց և տեսողացդ միտով ողորմի զիս՝ Տ(է)ր Սարգսին և վերոյ գրեալ անձանց յիշէք և դուք յիշեալ լիջիք ի Զ(րիստո)ս:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 2-3:

Ավետարան (արծաթապատ և ոսկէգօծ), արծաթի վրա.

Յիշատակ է Աւագի կին Թինաթինին ի վայելումն Տէր Սարգիս աւագ քահանային և որդոց որդիս ի Թէլավ. 1794:

Նոտրգոթով նույն ավետարանի թղթի վրա.

Այս Սուրբ Աւետարանս առինք Նորաշէնու Տէր Յովսէփիցն. զինն չորս թուման. ՌՄԽԶ (1797):

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 2:

Արծաթյա սկիհ. պատվանդանին վրացերեն.

Ընծայեցի ես նացուալ Գէորգիս զայս սկիհս Թէլավու սբյ. Գէորգեայ եկեղեցոյն բարեխօս վասն հոգոյ իմոյ ևս ի վայելումն իմ խոստովանահայր գործակալ և աւագ քահանայ տէր Սարգսին, թիւ վրաց. 488 (488+1312=1800 ք.) կշիռն հարիւր երկու մսխալ:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 1:

Ար. Աստվածածնի պատկեր. ստորին մասում վրացերեն.

Վասն բարեխօս հոգոյ իմոյ ընծայեցի զպատկերս Սուրբ Աստուածածնայ Հայոց Սրբոյ Գէորգեայ եկեղեցոյ, որոյ եմ աստ թաղեալ Քովաթախէվեցի Պապայի դուստր և Նուխեանց Գիօրգոյ կողակից Էլիսաբեղն, մայիսի 1, թին վրաց 496 (1808):

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 2:

Արծաթե ձեռքի խաչ. պատվանդանին վրացերեն.

Ընծայեցի զխաչս Սրբոյ Գէորգեայ եկեղեցոյ. Յոհաննէս Սարգսեան, թին վրաց 498 (1810):

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 1:

Արծաթաբեղակար վակաս.

Յիշատակ է Մարիամին ի դուռն Թէլավու ս(ուր)բ Գէորգեայ եկեղեցոյն ի վայելումն իմ խոստովանահայր Տ(է)ր Սարգսին:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 1:

Սբ. Աստվածածնի պատկեր (արծաթապատ և ոսկեգոծ), ստորին մասում.

Յիշատակ է Տեր Բաղդասար քահանայի եղբոր՝ Ռամազի որդի Գարրիելին և կնոջն Էլենին ի դուռն թելավու Սրբոյ Գեորգեայ եկեղեցոյն ի վայելումն Տեր Սարգսին:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 2:

Արծաթե ձեռքի խաչ. պատվանդանին՝ վրացերեն.

Ընծայեցի թելավու Սրբոյ Գեորգեայ եկեղեցոյ վասն հոգոյ կողակցոյն ինոյ Թինաթինին և վասն կենաց կլեկչի Կիրակոսի որդոյ Դաթին:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 1:

Արծաթե ձեռքի խաչ. պատվանդանին՝ վրացերեն.

Թելավու Սրբոյ Գեորգեայ եկեղեցոյն:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 1:

Արծաթե ձեռքի խաչ. պատվանդանին՝ վրացերեն.

Ընծայեցի զայս խաչս Սողոյի որդի Մելքոնն թելավու Սրբոյ Գեորգեայ եկեղեցոյն վասն հոգոյ ինոյ և վասն կեցութեան ողոց ինոց:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 1:

Քահանա. *Տեր Հարություն Տեր-Սահակյան.* հիշվում է 1794-1818 թթ.: Ծնվել է 1768 թ., ձեռնադրվել 1794-ին Հաղբատի առաջնորդ Դավիթ արքեպիսկոպոսի կողմից²⁵⁴: Նույն եկեղեցու տիրացուներից էին նաև նրա երկու որդիները՝ Ահարոնը և Մովսեսը:

Տեր Մարտիրոս Տեր-Սահակյան. հիշվում է 1800-1818 թթ.: Ծնվել է 1770 թ., ձեռնադրվել 1800 թ. Հաղբատի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսի կողմից²⁵⁵: Նրա որդին՝ Հովհաննեսը, տիրացու էր:

Տեր Բաղդասար ավագ քահանա Տեր-Սարգսյան. հիշվում է 1805-1818 թթ.: Ծնվել է 1783 թ., ձեռնադրվել 1805-ին Հաղբատի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսի կողմից²⁵⁶: Նրա երկու եղբայրները՝ Ենոքը և Մարտիրոսը, տիրացուներ էին:

Տեր Սկրտիչ Հարությունյան. հիշվում է 1818 թ.՝ «...ի վաղուց հետե հիւանդ և յայժմոյս մերձիմահ»²⁵⁷:

1910-1921 թթ. եկեղեցում քահանայագործել է *Խաչատուր Եզեկյանցը*, որն աչքի է ընկել եկեղեցական, կրթական և նորոգչական բուռն գործունեությամբ²⁵⁸:

ՍԲ. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ

Կառուցվել է 1797 թ.: Եկեղեցու անվան հիշատակությանը հանդիպում ենք նաև 1803 թ. մի վկայագրում. «Ի բուրբերութեան Փրկչին մերոյ 1803 և

Հայոց ՌՄԾԲ-ին գերառնչակ սրբոյ վանից առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս զայս վկայականն ետու գրել և ձեռագրել կնքեցի ի հաճութիւն տեսողաց, զի առ տր. հանգուցեալ տր. Գրիգորի թոռն և տր. Սահակի որդի տր. Յարութիւն՝ խոհեմամիտ քահանայս ի պապայն ուրմէ ըստացեալ ունէր երկու տեսակ մասն, որոց միին էր ի նշխարաց սրբոյն Գեորգայ բազմաչարչար վկայն և միին սրբոյն Սարգսի՝ քաջ զօրաւարին հանդերձ վկայական թղթով հաստատեցեալ առ Աստուած հանգուցեալ առաջնորդացն Հաղբատայ սրբոյ վանիցն, բայց վկայական թուղթն այն անկանելով ի ջուր եղծեցեալ և պատառտեալ էր: Այժմ տյն տր. Յարութիւնս ի սեր և ի պատիւ յիշեալ սրբոցն վասն նոցին պատուական նշխարացն շինեցուցեալ էր գեղեցիկ պահարան արծաթեայ իւրեան հալալ աշխատանօքն, զորս տացէ տր. ի վայելիլ զշնորս նոցին յազգէ յազգ և որդոց յորդին, վասնորոյ և մեք ըստ ջերմեռանդ խնդրոյ տր. Յարութիւն քահանայիս նորոգեցաք զայն վկայական և ետուք ի ձեռս տրին, զի ունիցի ընդ մասանցն պահպանացեալ ի յեկեղեցոյ սրբոյ Կարապետի անուամբ կառուցելոյ, որ ի Թելաւ, որ և անդառնալի բարեխօսութեամբն նոցին լինիցին պահպանացեալք ամենայն փորձութեանց ուխտաւորքն և դիմողքն և կատարեսցի խնորածք նոցին: Ամէն գրեցաւ յունիս ԻՉ (26)ին վկայական վերջ:

Հաղբատայ սրբոյ վանից միաբան Սարգիս վարդապետ (կնիք), Հաղբատայ սրբոյ վանից յետնեալ միաբան Բաղդասար վարդապետ (կնիք)»²⁵⁹:

Եկեղեցին արդեն 1818-ին խարխլված ու անօգտագործելի վիճակում էր. «Դարձեալ գոյ եկեղեցի մի կիսակատար կառուցեալ գործունս և չորեսին սիւնսն մինչև ցոտսն կամարաց քարի և բռամբ յանուն սրբոյն Կարապետի, արդեամբ հասարակութեան, յամի 1797, որոյ դրութեան երկայնութիւն տասն և ինն գագ և կէս և լայնութիւն տասն և երկու գագ և կէս, բայց յայժմոյս գոյով արգելեցեալ ի մարմնաւոր կառուարութենէ»²⁶⁰:

Հետաքրքրական է, որ այս եկեղեցին հետագա մի քանի տասնամյակներում այլևս չի հիշատակվում, սակայն 1880-ական թվականների վերջերից կրկին հայտնվում է Թելավի հայոց եկեղեցիների ցուցակներում՝ «Սբ. Կարապետ հնաշեն եկեղեցի» անվանումով²⁶¹:

Եկեղեցական իրեր. 1818 թ. եկեղեցում պահվում էին բազմաթիվ անոթներ, խաչեր, շուրջառներ, աշտանակներ, մեկ տոնացույց, մասունքներ, զանգակ և այլն: Դրանց թվում եղել է նաև արձանագրված մեկը, որն էլ ներկայացնում ենք ստորև.

254 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 3:

255 Նույն տեղում:

256 Նույն տեղում:

257 Նույն տեղում:

258 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 191, ք. 19:

259 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 8:

260 Նույն տեղում, ք. 7:

261 Նույն տեղում, գ. 3896, ք. 6:



ԹԵԼԱԿ. Չվելգալավանի Սբ. Գևորգ եկեղեցին հյուսիսից, զանգակատունը՝ հարավ-արևմուտքից, խաչկալը, ներքին տեսքը դեպի արևմուտք (կանանց դասը՝ վերնահարկը), մկրտարանը և հիշատակագիր հարավային ծակատին

Երկրորդնաճի կամարաձև պահարան. արտաքուստ և ներքուստ՝ արծաթապատ, «...յետ կուս պահարանին գրեալ է»:

Յիշատակ է պահարանս մասանց քաջայաղթ վկայիցն Զ(րիստո)ս(ի)՝ Սր(բո)ցն Գեորգեայ և Սարգսի. Թէլավեցի Տէր Գրիգորեանց Տ(է)ր Յարութիւնս և կենակցոյն Մայիային և ի Տ(է)ր հանգուցեալ ծնողաց նորին Տ(է)ր Սահակին և Դարեջանին և եղբարցն՝ տիրացու Առաքելին, Գրիգորին, Գեորգին և ի Տ(է)ր հանգուցելոցն և կենդանի եղբոր՝ Ստեփանին, իւր եղբորորդոյ՝ Ահարոնին, Մովսէսին, Դաթին և դստերացն Սարթային և Կատարիին. ի հալալ արդեանց Տ(է)ր Յարութիւն շինեցեալ է ի վայելս իւր և իւրայնոցն վերոյ գրելոց. Առ ի դրոն Սր. Կարապետ եկեղեցոյն, յունվարի ելն ՌՄԾԲ (1803) թուին, ի Թիֆլիզ կազմեալ և ... ճարտարապետեալ ձեռամբ վարպետ Գուրգէնի, իսկ յիշատակագիրս՝ աշակերտի նորին՝ Գրիգորին...:

Գրակ. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 7-8:

ՍՐ. ԳԵՎՈՐԳ

(ՉՎԵԼ ԳԱԼԱՎԱՆԻ) ԵԿԵՂԵՑԻ

Գտնվում էր Թելավի Չվելգալավան քաղամասում՝ հին բերդի տարածքում:


Ցայսօր կանգուն այս եկեղեցու կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ, բայց այն կառուցվել է մինչ Կախեթի վերջին թագավոր Գեորգիի (1798-1800 թթ.) գահակալումը. «Ի Չվելգալաւան գոյ հին պարիսպ, որ է արտաքոյ Թէլաւ քաղաքի և ի մէջ պարսպի գոյ եկեղեցի մի կամարաշէն կառուցեալ քարի և բռամբ յանուն սրբոյն Գեորգեայ: Եկեղեցիս այս ունի զիրովարտակ շնորհեցեալ ի Գեորգի արքաէն, որով յայտ առնէ զեկեղեցիս այս գոլ հայոց ազգին»²⁶²: Ի դեպ, ֆրանսիացի նշանավոր հայագետ և վրացագետ Մ. Բրոսսեն նշել է, որ այս եկեղեցին եղել է վրացական և ապա փոխանցվելով հայ համայնքին՝ դարձել է հայկական²⁶³: Այս դիտարկումն իրական է, մանավանդ, եթե նկատի ենք ունենում վերոհիշյալ հրովարտակի վկայությունը²⁶⁴:

Չվելգալավանի Սր. Գևորգ եկեղեցին բազմիցս նորոգվել է: Արդեն 1852 թ. ծրագրվել էին վերականգնողական մեծածախ աշխատանքներ. «...վասն նորոգութեան եկեղեցոյն Չուելգալաւանի պահանջին ծախք ց1500 մանէթ հաւաստարաւանութեան ճարտարապետաց և արհեստաւորաց...»²⁶⁵: 1854 թ. քաղամասի հայ ժխականները մտադրվել էին վերակառուցմամբ ընդարձակել հին եկեղեցու շէնքը. «Որովհետև բոլոր հասարակութիւնս գտահիմք ի կարի նեղասկրութեան վասն չունելոյ մեզ

բաւական զեկեղեցի, ոյր աղագաւ համայն ժողովրդականքս նոյն եկեղեցոյ ցանկամբ մեծացուցանել զայն եկեղեցի նորոգ շինութեամբ մերովք սեպհական ծախսք, որոյ վասն, և կազմել տուաք տէր երկրաշափին Թէլաւու զաւառի զմակարդակ ըստ մերում ցանկութեան...»²⁶⁶: Այս աշխատանքներին իր մասնակցությունը բերեց հայտնի գործիչ թելավցի Ղաղո Թաթոսյանը. «...վերանորոգելոյ Չվելգալաւանի եկեղեցին ընդարձակ և շքեղ շինուածովք...»²⁶⁷: 1896 թ. վերականգնել էին եկեղեցու հյուսիսակողմի քանդված պարիսպը²⁶⁸: 1900 թ. մի վավերագրից իմանում ենք, որ 1874 թ-ից ի վեր Սր. Գևորգ եկեղեցուն քահանայագործող Կարապետ Ասլանյանը նորոգել էր զանգակատունը և պատրաստել եկեղեցու դուռն ու լուսամուտները²⁶⁹:

Եկեղեցին փակվել է 1923 թ. մարտի 31-ին²⁷⁰:

Ճարտարապետություն. Եկեղեցին երկթեք ծածկով, միանավ, արևմտյան ճակտոնի գագաթին սյունագարդ զանգակատնով, անմշակ քարով ու կրա-



ԹԵԼԱՎ. ՉՎԵԼԳԱԼԱՎԱՆԻ ՍՐ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՍՏԱԿԱԳԻԾ

շաղախով կառուցված պարզ շենք է: Թաղակապ տանիքը պահում են երեք գույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Թվով երեք մուտքերը բացված են արևմտյան, հարավային ու հյուսիսային ճակատներից: Ավագ խորանն ավարտված է կիսաշրջանաձև եզրագծով: Վերջինիս կենտրոնում սեղանի վեմ քարն է: Ավանդատները հաստակագծում ուղղանկյունաձև են: Հյուսիսային պատի մեջ՝ իր ավանդական տեղում 1988 թ. պահպանվում էր մկրտարանը՝ տաշտակաձև ավագանով հանդերձ: Հարավարևմտյան անկյունում՝ պատի միջով վեր բարձրացող սանդուղքները տանում են դեպի վերնահարկ:

Եկեղեցուն եղել են հետևյալ վիմագրերը.

Տապանաքար. 5 տող՝
Այս է տ(ա)պան | թէլավեցի Տ(է)ր Ալբր(ա)համի որդի | Ակօրին. | ՌՄԾԳ (1804):

262 Նոյն տեղում, գ. 2569, թ. 8:
263 **Brosset M.**, Rappports sur voyage archeologique dans la Georgie et dans l'Armenie, 1, p. 62. Տե՛ս նաև՝ **Чубинашвили Г. Н.**, Архитектура Кахетии, Тбилиси, 1959, с. 517.
264 “օցցօօս”, 1900, № 98, էջ 2:
265 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2207, թ. 6, գ. 3166, թ. 4:

266 Նոյն տեղում, գ. 3245, թ. 11:
267 «Մեղու Հայաստանի», 1862, № 35, էջ 3:
268 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3385, թ. 11:
269 Նոյն տեղում, գ. 1053, թ. 5:
270 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, թ. 7: Նաև՝ ֆ. 57, ց. 3, գ. 525, թ. 16:

Եկեղեցու հարավային պատին ագուցված սալիկին, վրացերեն՝

*აქ განისვენებენ | ტერ-აბეჯელ და
გიორგი | ხრისტიანთა-ძეობი |
სუქიასოვები.*

*Թարգմ. Այստեղ են հանգչում Տեր-Աբել²⁷¹ և
Գևորգ Քրիստափորի որդիներ Սուքիասովները:*

Տապանաքար. 2 տող՝

ձեզ ձեզ ձեզ | Եր-մարտիրոս Եր-Նաճաբով.

Թարգմ. Քահանա Տեր-Սարտիրոզ Տեր-Սահակով:

Գերեզմանոց. եկեղեցու շուրջ տարածված երբեմնի ընդարձակ գերեզմանատունն այժմ ավերված է. ժամանակին շիրմաքարերն այնքան շատ էին, որ գրեթե փակել էին արևմտյան մուտքը: Գերեզմանոցում ամփոփված հանգուցյալների հիմնական մասը Սուքիասյանց, Մամացյանց և Տեր-Սարգսյանց տոհմերից էին²⁷²: Ի դեպ, 1914 թ. գերեզմանատանն ամփոփվել էր ազգային բազմաշխատ գործիչ Աբել ավագ քահանա Սուքիասյանցը²⁷³:

1988 թ. մեր այցելության ժամանակ գերեզմանոցում պահպանվել էին միայն մի քանի շիրմաքարեր: Դրանք են՝

Տապանաքար (երկաթածույլ). եկեղեցու հյուսիսային պատի տակ, հայերեն և վրացերեն՝

Այս է տապան | Մայես Յարութին/եան Ոսկանանցի, | որ ծնաւ ի 1801 ամի | եւ հանգեաւ 1891 ամի, | դեկտեմբերի 11-ն հանդիպողացդ խնորեմ | յիշել ողորմի:

Վրացերեն՝

*ვარ მათა ოსკანოვი რომ მამობა ვავწივ, 7-
ობოლი დავზაქრდე დიდი შრომა ვავწივ,
ღმერთო მიცო ცხლე შვილები | ბოლოს
პაშ...(?) ამწი ეს ვაცოცხლოთ. წამ/
კითხველნო შენდობა შემო(მ)წივთ.*

Թարգմ. Ես Մայես Օսկանովս 7 որբերի հայր դարձա, դաստիարակեցի, մեծ ջանք ներդրի, աստված երկար պահի որդիներին,... [դագաղս] բարձրացրին, կարդացողը ողջ եղեք և ողորմի տվեք:

ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Գտնվում է քաղաքի հայոց հին գերեզմանատանը:

Հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Վավերագրերում դրա մասին՝ իբրև գերեզմանատան



ԹԵԼԱԿ. Չվեգալավանի Սբ. Գևորգ եկեղեցու գերեզմանոցում գտնվող Մայես Դարությունյանի մետաղածույլ տապանաքարը

տան քարաշեն եկեղեցի, հիշատակություններ կան 1840 թվականից (անշուշտ, այն կառուցված էր ավելի վաղ)²⁷⁴: 1861 թ. մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ «հայազգի հասարակութիւնք Թէլաւ քաղաքի ի պատճառն հեռաւորութեան եկեղեցեաց սրբոյն Գէորգայ և Չւէլ գալաւանի մշտապէս չկարելով դիմել յայնս՝ յԱստուածապաշտութիւն, ցանկան ի վերա գտանեցեալ ի քաղաքամիջի անդ հին գերեզմանատան սբ. Աստուածածին փոքր եկեղեցոյն կառուցանել սեպիական ծախիւք իրեանց գնոր ընդարձակ եկեղեցի»²⁷⁵: 1870 թ. վիճակով «ի պէտս շինութեան սբ. Աստուածածին եկեղեցոյն բոլոր գումարն ծախեալ է»²⁷⁶: Նույն թվականի մեկ այլ վավերագրում նշված է, որ Սբ. Աստվածածին եկեղեցու վերակառուցման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել էին, իսկ շենքը՝ օծվել²⁷⁷: Եվս 4000 ռուբ. ծախսվել էր 1879 թ.՝ եկեղեցու գմբեթի կառուցման նպատակով²⁷⁸:

Հարկ է նշել, որ եթե Սբ. Աստվածածին եկեղեցին մինչև 1860-ականների վերակառուցումները գերեզմանատան եկեղեցի էր, ապա 1870 թ. օծումից հետո արդեն ծխական էր, ուներ իր մշտական ծխատեր քահանաները:

Հայտնի է, որ 1894 թ. դեկտեմբերի 10-ին՝ գիշերը, Սբ. Աստվածածին եկեղեցին կողոպտվել է²⁷⁹: Հավանաբար այդ պատճառով էլ թեմի առաջնորդի պատվերով եկեղեցին պարսպապատվել է²⁸⁰: Դա-

271 Չմայած տապանագիրն անթվակիր է, հայտնի է, որ Աբել ավագ քահանա Սուքիասյանցը վախճանվել է 1914 թ. մարտի 30-ին: Հանգուցյալն ավարտել էր Ներսիսյան դպրոցը, եղել Կ.Հ.Բ.Ը. տեղական մասնաճյուղի նախագահը, աշխատակցել «Հովիտ» շաբաթաթերթին («Հովիտ», 1914, № 14, էջ 223):
272 «Մշակ», 1898, № 79, էջ 3:
273 «Մշակ», 1914, № 71, էջ 3: Նաև՝ «Հովիտ», 1914, № 14, էջ 233:

274 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, ք. 29:
275 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4129, ք. 4:
276 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, ք. 64-65:
277 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5374, ք. 16:
278 «Մեղու Հայաստանի», 1880, № 100, էջ 3:
279 «Նոր-Դար», 1894, № 213, էջ 2: Նաև՝ «Մշակ», 1894, № 145, էջ 3:
280 «Նոր-Դար», 1895, № 176, էջ 3:

րավերջին Սք. Աստվածածին եկեղեցին քայքայված էր, և նոր նորոգումների անհրաժեշտություն էր զգացվել: Այդ առթիվ եկեղեցու երեցփոխ Յագոր Դեմուրյանը 1897 թ. հայտնել էր. «Թէլա քաղաքի հայոց Սք. Աստուածածնայ եկեղեցին ինչպես ձեզ էլ քաջ յայտնի է վաղուց յետ կարիք ունի մի քանի անհրաժեշտ վերանորոգութեանց, այսինքն, որովհետև անհրաժեշտ են ծեփել եկեղեցույ որմերը, աւարտել թերակատար շրջապարիսպը, վերանորոգել ուխտատրների սենեակներն և այլ զանազան նորոգութիւններ և որոնց համար ծախք պահանջուած է գոնէ երեք հարիւր (300) ռուբլի...»²⁸¹: Նույն թվին հոգևոր իշխանությունները տվել էին եկեղեցու նորոգությունը սկսելու թույլտվություն²⁸²: Երկու տարի անց՝ 1899 թ., ձեռնամուխ էին եղել հատակի նորոգությանը, քանի որ «Թէլաի սք. Աստուածածնայ եկեղեցույ յատակը գտանի հնադարեան աղիսից շինած, ջարդուած և դար ու փոս դառած, միանգամայն անախորժ դրութեան մէջ, որը պատիւ չէ բերում Հայաստանեաց Առաքելական եկեղեցուն...»²⁸³: Ծախսը կազմում էր շուրջ 600 ռուբլի²⁸⁴: Նկատենք, որ առհասարակ, Յագոր Դեմուրյանցի (վախճ. 1909 թ.) երեցփոխական գործունեության շրջանը եկեղեցու համար արգասաբեր է եղել. «Նա մօտ տասը տարի նախանձելի եռանդով վարեց Թէլաի ս. Աստուածածին եկեղեցու երեսփոխությունը: Չորի ափին շինուած այդ եկեղեցին նա ստանձնեց շատ աննախանձելի դրութեան մէջ: Եկեղեցին անպաշտպան կերպով կանգնած էր բաց ձորի վրայ. հանգուցեալը հասարակութեան, գլխաւորապես իր ծանօթների մէջ կոպեկ-կոպեկ ժողովելով մի կլորիկ գումար եկեղեցու շուրջը մի գեղեցիկ պարիսպ քաշեց: Եկեղեցին արտաքուստ-ներքուստ վերանորոգութեան կարիք ուներ և իր անէր հանգ. Սեյրոն Բեգիջանեանին համոզեց և նրա ծախքով բարեգարդեց եկեղեցին: Նա գեղեցիկ կերպով ներսից իւտղաներկեց և տօմէտի աղիսով նորոգեց յատակը»²⁸⁵:

Եկեղեցին փակվել է 1923 թ. մարտի 31-ին²⁸⁶, բացվել օգոստոսի 11-ին՝ եկեղեցական իրերը հանձնելով երեցփոխ և հոգևոր խորհրդի անդամներ Գևորգ Սկրտումյանին և Ղազարոս Գուկասյանին²⁸⁷:

Յայտարար կանգուն Սք. Աստվածածին եկեղեցին Վրաստանի տարածքի հայկական այն սակավաթիվ հուշարձաններից է, որը վերականգնվել է այդ երկրի Մշակույթի նախարարության պատմական հուշարձանների պահպանության և օգտագործման

վարչության միջոցներով՝ 1970-ական թվականներին²⁸⁸:

Քահանա: *Հովսեփ Տեր-Հարությունյան*. 1896 թ. եկեղեցու բակում ամփոփվել էր Հովսեփ քահանա Տեր-Հարությունյանը, անձ, «...որի անխնայ ջանքով կառուցուած է նոյն Ս. Աստուածածին գողտրիկ եկեղեցին, և որը 24 տարի շարունակ իւր քահանայագործութեամբ և ընթացքով միանգամայն վայելում էր իւր հօտի սերը և համակրութիւնը...»²⁸⁹:

ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ

Թէլավի հայոց՝ թվով հինգերորդ եկեղեցին է: Կառուցման մասին պատմող արձանագրությունը թեև չի պահպանվել, բայց, բարեբախտաբար, ժամանակին այն ընդօրինակված ու հրատարակված է եղել. «...ս. Ղաղոյ Թադրսեանց տեսեալ, թէ բազմաթիւ բնակիչք վերին թաղի չունելով եկեղեցի յամենայն դէպս դիմեն ի հեռաւոր եկեղեցիս քաղաքին... ընտրեաց նախ զյարմարաւոր տեղի շինութեան նոր եկեղեցույ իւր սեպհական ծախիւք ի նոր գերեզմանատան քաղաքիս մերձ իւր շինած աղբերն, պատրաստեաց ամենայն հարկաւոր նիւթերը շինութեան, ի ձեռս բերեալ զձևակերպութիւն նոր եկեղեցույ, ետ փորել զհիմն նորա և ի 30 յունիսի արժանապատիւ գործակատարն տեղոյս Խաչատուր աւագ քահանայն Սուքիասեանց հանդերձ ուխտիւք եկեղեցույ ընդ այլ միաբան քահանայից մեծաւ և փառաւոր հանդիսի օրհնեաց զհիմն եկեղեցույն, և ըստ աւուր պատշաճին խօսեցաւ... Ապա ի հիմունս նորաշէն եկեղեցույս եղաւ կապարեայ տախտակ այսու արձանագրութեամբ՝ Ի ժամանակս կայսերութեան Ռուսաց Աղեքսանդրի Բ եւ ի հայրապետութեան Ամենայն Հայոց Տ.Տ. Մատթեոսի Ա եղև հիմնարկութիւն շինութեան սուրբ Երրորդութեան տաճարիս ի ձեռն Թէլավու քաղաքացի Ղաղոյի Եսայեան Թադրսեանց վասն փրկութեան հոգույն եւ արեւշատութեան որդոց իւրոց ի 1862 ամի եւ Ազգային Ռ-ՅԺԱ: Շինութիւնն օր ըստ օրէ առաջ է գնում և մեծ յոյս ունինք փութով տեսանել աւարտումն շինութեան այս նորաշէն տաճարին...»²⁹⁰:

1888 թ. վախճանված Բաղդասար Բաղդոյանի հիշատակին (Թէլավի հայոց դպրոցների հոգաբարձուն էր և առևտրական տան հիմնադիրը) 50 ռուբ. էին նվիրել Սք. Երրորդություն եկեղեցու նորոգման համար²⁹¹:

Եկեղեցին փակվել է 1923 թ.²⁹²:

Ճարտարապետություն. եկեղեցին երկթեք ծածկով միանավ շենք է: Թաղակապ տանիքը ներքուստ պահում են երկու զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Արևելքում կիսաշրջանաձև

281 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3348, թ. 2:

282 Նույն տեղում, թ. 3:

283 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3390, թ. 2:

284 Նույն տեղում, թ. 5:

285 «Հովի», 1909, № 9, էջ 143:

286 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, թ. 7: Նաև՝ ֆ. 57, ց. 3, գ. 525, թ. 16:

287 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, թ. 55, 120-121:

288 «Սովետական Վրաստան», 1981, № 85, էջ 3:

289 «Արձագանք», 1896, № 111, էջ 2:


290 «Մեղու Հայաստանի», 1862, № 35, էջ 3:

291 «Մշակ», 1888, № 74, էջ 2:

292 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, թ. 120-121:



ԹԵԼԱԿ. Սբ. Երրորդություն եկեղեցին հարավից, արևելքից, արևմտյան մուտքի առջև գտնվող շիրմաքարեր և եկեղեցին կառուցողի՝ Ղաղո Թաթոսյանի տապանաքարը



0 5m

ԹԵԼԱԿ. Սբ. Երրորդություն եկեղեցու հատակագիծը

եզրագծով խորանն է, որի երկու կողմերում կան մեկական ավանդատներ: Ունի երեք մուտք՝ բացված արևմուտքից, հյուսիսից և հարավից: Ներքուստ հյուսիսային պատի մեջ՝ իր ավանդական տեղում է մկրտարանի ավազանը: Արևմտյան ճակտոնի գագաթին սրածայր վեղարով ավարտվող փոքրիկ գանգակատունն է: Արտաքուստ որմերը զարդարված են որմնակամարաշարով: Եկեղեցին կառուցված է աղյուսով, գետաքարով ու կրաշաղախով: Արտաքին չափերն են՝ 14,05 x 8,85 մ:

Գերեզմանոց. Եկեղեցու շուրջ տարածված է հայոց գերեզմանոցը: Արձանագիր տապանագրերից հները վերաբերում են 1830-ական թթ.: Գերակշռող են վրացագիր տապանաքարերը:

Վավերագրերում Սբ. Երրորդություն եկեղեցին բազմիցս հիշվում է որպես գերեզմանատան եկեղեցի:

Վիմագրեր. եկեղեցու շուրջ սփռված տապանա-
քարերի վրա կան արձանագրություններ: Ստորև
ներկայացնում ենք դրանք.

Տապանաքար. արևմտյան մուտքի առջև (մեկենասի շիրմա-
քարն է): Տապանագիրը երկլեզվյան է. սկզբնամասում 16 տողը
հայերեն է, ապա նույնի հակիրճ քարգմանությունն է՝ վրացերեն:

*Ծնաւ ի 1819 ամի, վ(ա)խճ(ա)նեց(ա)ւ | ի 20 օ-
գոստ(ո)ս 1866 ամի: Արդ(ա)րն ի | վաստ(ա)կս
ճշմ(ա)րիտն ի բնաբուն քէլաւեցի Ղաղօյ Թ(ա)ղո-
սեանց կեսօրե(ա)յ կենօք դնի ի տապանս վա-
ռե(ա)լն ս(ուր)ք սիրով Ա(ստու)ծ(ապ)աշտու-
թե(ա)ն յա(ր)դ(ա)ր վաստ(ա)կ(ա)ց | յ(ա)յամիկ հան-
գստե(ա)ն կ(ա)ռոյց զ(ա)յս տ(ա)ճ(ա)ր եւ զծօտիկ
աղբիւրս. | ընկեր մտերիմ էր յառս եւ ի տուրս | որ-
բոց, տնանկ(ա)ց Տ(է)ր եւ մեծ պ(ա)շտպան, ք(ա)յց
օրհ(ա)ս մահու սմա | ժ(ա)մ(ա)նեաց կ(ա)րճել գրել
կեն(ա)ցն | ի Զ(րիստո)ս ննջեաց յոր մի յարու | յոյս
մ(ա)հկ(ա)ն(ա)ցուաց սպասիր | նգունել(°) յետ աստ
ի կենաց անձայն | աղաչէ ննջելն յ(ա)յ(ս)մ շիրմի
Ա(ստու)ծ ողորմի ի յիշել զիւր հոգի:*

Տապանաքար. եկեղեցու բակում.

*Աստ ընդ վիմօքս ամփոփի | ի հող դարձեալ
մարմնոյ փռչի | քէլաւեցի Յարութիւնի | ի մեծ տա-
նէն Թաղուզեանցի. | բարի գործով, հաւատով |
հանգեաւ առ Տէր. սա յուսով | թողեաւ գ...ան մեծ
սուգ. | ճեպեաց երկինն շուտափոյթ | գայս մի եւեթ
(°) աղաչէ յորժամ նստցի Տէրն ի բեմ | դատել զաշ-
խարհս ամենայն | տացէ ընդ ս(ր)ք(ոյ)ս սմա ճեմով
անցանողք յիշեցէք | հոգի սորա Հայր մերիւ եւ
Տեառնէ քառու(թ)ի(ւն) | մեղաց սրա խնորեցէք. |
ծնաւ 1817 ամի, վախճա/նեցաւ ի 1866 ամի | ի 1
դէկտեմբերի:*

Տապանաքար. հայերեն և ռուսերեն՝

*Այս է տապան | Ռոստոմ բէկի Յարութիւնի |
Երզնկեանց | Հաղթանեցոյ:*

Ռուսերեն՝

*Здесь покоится прах | Ростом Бека Ар-
темьевич | Ерзинкянца. 1813-1891.*

Ծանոթ. Ռոստոմ Բեկ Երզնկյանցը հեղինակ է Դաղստանին,
Կախեթին, Սամահինի ու Հաղբատի վանքերին նվիրված տե-
ղագրական մի շարք արժեքավոր աշխատությունների, որոնք
հրատարակել է ժամանակի պարբերական մամուլում: Նրա
մահվան 25-ամյա տարելիցի առթիվ ուշագրավ թղթակցություն է
հրատարակվել ժամանակի մամուլում²⁹³:

293 Ահա թե ինչ է գրել ժամանակի մամուլը Ռ. Բեկ-Երզնկյանցի
մահվան 25-ամյա տարելիցի առթիվ. «Կար ժամանակ և դա
շատ հեռու չէ, երբ ազգային և հասարակական գործիչները
գործում էին լուռ ու մունջ, մեռնում էին կարիքի մեջ և թաղում
լուռ ու մունջ: Այդ մարդիկ ապրում էին վաթսուհանգյակ
թուականներին և նրանց սիրած նշանաբանն էր „խօսքի և ցոյցերի
տեղ, թող գործը խոսի...»

Այդ ժամանակուայ գործիչներից էր Ռոստոմ-Բեկ Երզնկեա-
նը, Հաղբատ գիտի մի շինականի որդի, որը արարելով իր ու
սումը Թիֆլիզի Ներսիսեան դպրանոցում յայտնի հայագետ
Յակովբ Կարինեանի ժամանակ, նուիրել էր իրան հասարա-
կական ծառայութեան:

Տապանաքար.

*Աստ հանգչի մարմին Թալալի Յարութիւնեան
սմունոյ Մելքոյի Բեգիջանեանց. վախճանեալ 14
օգոստոսի 1896 թ. 55 ամաց. Աստուած հոգին
յուսաւորեսցէ:*

Սր. Թովմա մատու. Չվեկալական քաղամասի
գերեզմանոցում Կարապետ քահանա Ավանյանցի
նախաձեռնությամբ 280 ռ. ծախսով 1882-1885 թթ.
միջակայքում կառուցվել է Սր. Թովմա փայտաշեն
մատուռը²⁹⁴: Հիշատակվում է ԺԹ-Ի դարերի մի
շարք վավերագրերում:

Մատուռը փակվել է 1923 թ.²⁹⁵:

Ռուսական եկեղեցի. 1884 թ. Թելավում կառուց-
վել էր ռուսական մի եկեղեցի՝ կից դպրոցով, բայց
ընդամենը 10 տարի անց հրդեհվել ու ոչնչացել է
(1894 թ., մայիսի 26-ի գիշերը)²⁹⁶:

«Բատոնիսցիխե» բերդ. գտնվում է քաղաքի
կենտրոնում: Բաղկացած է աշտարակավոր բարձր
պարիսպներից, պալատից, բաղնիքից և եկեղեցուց:
Հուշարձանախումբը թվագրվում է ԺԷ-ԺԸ դարերով:

«Չվեկի Գալավանի» բերդ. գտնվում է քաղաքի
հյուսիսարևելյան ծայրին: Բերդանունը՝ Չվեկի Գա-
լավանի, թարգմանաբար նշանակում է հին պա-
րիսպ: Ունի ուղղանկյանը մոտ հատակագիծ, շուրջ
36 կիսաաշտարակներով հզորացված բարձր պա-
րիսպներ: Թվագրվում է Ժ-ԺԱ դդ.:

Դաղստանի պատերազմի ժամանակ (Շամիլի դեմ) նա մը-
տալ զինուորական ծառայութեան մեջ յայտնի հերոս գեներ-
ալ Մովսես Չաքարեան Երկայնաբազուկ Արդուբեանի հրա-
մանատարութեան տակ և ստացաւ սպայի աստիճան:

Պատերազմի վերջը Ռոստոմ-Բեկը թողեց ծառայութիւնը և ի-
րեն կրկին նուիրեց հասարակական կրթական ծառայութեան՝
ընտրելով գործելատեղի վրացախօս Թելաւ քաղաքը, ուր
մայրենի լեզուն մոռացուած էր և նույնիսկ քահանաները
դժուարանում էին հայերեն խօսել:

Բանում է այդտեղ վաթսուհանգյակ թուականներին «Կարդա-
նեան» անունը հայկական դպրոց և երկար տարիներ ծա-
ռայում է ռուսոցի և տեսչի պաշտօնով: Շնորհիւ այդ դպրո-
ցի, որ այժմ էլ գոյութիւն ունի, Թելալի հայերը այժմ մեծ մա-
սամբ խօսում են հայերեն:

Ռոստոմ-Բեկ Երզնկեանը ունի և գրական աշխատութիւններ-
տպագրուած՝ Հայոց պատմութեան դասագիրք գրաբար լե-
զուով, հարցու պատասխանով, որը երկար ժամանակ գոր-
ծադրում էր հայոց դպրոցներում, և Հնուքիւնը Հաղբատայ
Վանից: Անտիպ Մահն Աբելի՝ մի ընտիր գրութեան գրաբար լե-
զուով: Գաղտնիք Դաղստանի, և բազմաթիւ յօդուածներ և ո-
տանաւորներ զանազան մականուամբ գրութեան այն ժամա-
նակույ պարբերական մամուլի մէջ:

Ռոստոմ-Բեկը վախճանուեց Թելաւում և թաղուեց ս. Երրոր-
դութեան եկեղեցու գաւթում: Այս տարի ս. Աստուածածնի վե-
րափոխման տօնին լրացաւ նրա մահուան քսանհինգ ամեա-
կը և նրա հարազատները մի համեստ յուշարձան կանգնեց-
րին գերեզմանի վրայ:

Հանգիստ ոսկերացոյ, հայ համեստ գործիչ. Թելալի հայերը
գիտակցում են քո արածը և երախտագիտական զգացմուն-
քով միշտ վեր յիշում քո անմոռաց «Ռոստոմ-Բեկ» անունը»
(«Հովիտ», 1916, № 34, էջ 540):

294 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1053, թ. 5:

295 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, թ. 120-121:

296 «Արձագանք», 1894, № 61, էջ 2:

Այլ բերդեր. նշանավոր են նաև Վախավախիշվիլի և Ղորչիբաշիշվիլի բերդերը: Սրանցից առաջինը գտնվում է քաղաքի արևելյան, իսկ երկրորդը՝ արևմտյան կողմում: Երկուսն էլ ուշ միջնադարի կառույցներ են:

ԻՂԱԼԹՈ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հյուսիս-արևմուտք՝ Թելավ-Ախմետա մայրուղու վրա:

Պատմություն. Ալավերդու նման այս գյուղը ևս նշանավոր է իր պատմական փառավոր անցյալով ու ճարտարապետական հուշարձաններով: ԺԱ դարում Իդալթյուն գործել է Վրաստանի ուսումնական բարձրագույն հաստատություններից մեկը (համալսարան)²⁹⁷, ուր ուսանել է նաև Շոթա Ռուսթավելին:

Հայերը Իդալթյուն. հավանաբար ԺԸ դարում այստեղ ևս հանգրվանել են փոքրաթիվ հայեր: Վերջիններիս թվաքանակը երբևէ չի գերազանցել երկու տասնյակը: Չեն ունեցել ո՛չ եկեղեցի և ո՛չ էլ քահանա: Բնակիչների հոգևոր պետքերը հոգում էր Ռուխայիրի քահանան. 1908-ին հովվել է քահանա *Կարապետ Տեր-Ներսիսյանցը*:

Վիճակագրություն. երկրամասի հայ բնակչություն ունեցող գյուղերի ցուցակներում Իդալթուն հիշատակվում է ընդմիջումներով՝ երբեմն տասնամյակներ տևող: Ստորև ներկայացնում ենք հայ բնակիչների թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ²⁹⁸	3	10	10	20
1849 ²⁹⁹		7	6	13
1852 ³⁰⁰		8	5	13
1857 ³⁰¹		8	7	15
1858 ³⁰²		8	6	14
1860 ³⁰³		7	6	13
1862 ³⁰⁴		6	6	12
1864 ³⁰⁵		6	6	12
1865 ³⁰⁶	3	7	6	13
1867 ³⁰⁷		7	8	15
1870 ³⁰⁸		7	7	14
1873 ³⁰⁹		8	10	18
1880 ³¹⁰		8	10	18
1881 ³¹¹		9	10	19

297 Ломидзе З. Ш., Икалто, Тбилиси, 1968, с. 4.

298 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 18:

299 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:

300 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:

301 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:

302 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:

303 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:

304 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:

305 Նույն տեղում, գ. 3846, ք. 13:

306 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23, 54:

307 Նույն տեղում, գ. 3851, ք. 3:

308 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:

309 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:

310 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:

311 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:

1882 ³¹²		8	11	19
1883 ³¹³		8	11	19
1908 ³¹⁴	2	4	1	5

Ինչպես երևում է աղյուսակից, հայերն Իդալթյուն խիստ սակավաթիվ էին, իսկ եթե նկատի ունենանք ամբողջ բնակչության քանակը (1874 թ.՝ 1272³¹⁵, 1914 թ.՝ 1936 բնակիչ³¹⁶), ապա հայերն այստեղ պարզապես աննշան թիվ էին կազմում:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է գյուղի բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Մեթաղի որդիք՝ Սուլաման և Ջուրաբ, Սուլամանի կինն՝ Մարթայ, որդի՝ Ռամազ, դստերը՝ Անախանում և Մայիա, Ջուրաբի կին՝ Էլիսաբեդ, դուստր՝ Բարբարե:

2. Մելիքի որդի Պետրե, կինն՝ Աննա, որդիք՝ Պավել, Յովսեփ և Գիգոյի, դստերը՝ Սաբեդ և Էլենե:

3. Ասգի որդի Արզուման, կինն՝ Անի, որդիք՝ Աբրամ և Կոնի, դուստր՝ Մարմար»³¹⁷:

ԼԱԼԻՍՂՈՒՐ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից շուրջ 18 կմ հյուսիս՝ Ալազան գետի ձախ վտակ Ստորիի աջ կողմում՝ Փշավել գյուղին դեմ հանդիման:

Հայերը Լալիսղուրում. կարելի է ենթադրել, որ այստեղ հայերը բնակություն են հաստատել առնվազն ԺԸ դարում, բայց նրանց մասին վկայություններ, այն էլ բավականին առատ, պահպանվել են ԺԹ դարի սկզբներից: Մասնավորապես, 1802 թ. գյուղում վրացիներից զատ հիշվում են նաև հայ բնակիչներ³¹⁸:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակիչների թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ³¹⁹	9	25	26	51
1841 ³²⁰		32	27	59
1842 ³²¹		31	28	59
1843 ³²²		31	28	59
1844 ³²³		32	21	53
1845 ³²⁴		27	23	50
1847 ³²⁵		33	29	62
1849 ³²⁶		45	31	76
1852 ³²⁷		31	24	55

312 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:

313 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:

314 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:

315 "Кавказский календарь на 1886 г.", с. 117.

316 "Кавказский календарь на 1915 г.", с. 128.

317 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 18:

318 АКАК, т. 1, с. 472.

319 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 23:

320 Նույն տեղում, գ. 3802, ք. 41-42:

321 Նույն տեղում, գ. 3805, ք. 92-93:

322 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:

323 Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46:

324 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:

325 Նույն տեղում, գ. 3814, ք. 67-68:

326 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:

327 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:

1853 ³²⁸	34	33	67
1854 ³²⁹	33	31	64
1857 ³³⁰	23	24	47
1858 ³³¹	22	24	46
1860 ³³²	20	22	42
1861 ³³³	16	19	35
1864 ³³⁴	16	19	35
1865 ³³⁵	6	15	33
1867 ³³⁶	15	14	29
1870 ³³⁷	15	14	29
1873 ³³⁸	15	10	25
1874 ³³⁹	15	12	27
1875 ³⁴⁰	15	13	28
1876 ³⁴¹	15	12	27
1877 ³⁴²	13	13	26
1878 ³⁴³	13	14	27
1880 ³⁴⁴	13	16	29
1881 ³⁴⁵	13	16	29
1882 ³⁴⁶	15	14	29
1883 ³⁴⁷	15	15	30
1889 ³⁴⁸	17	13	30
1890 ³⁴⁹	16	13	29
1891 ³⁵⁰	16	12	28
1892 ³⁵¹	16	13	29
1893 ³⁵²	16	13	29
1894 ³⁵³	15	14	29
1897 ³⁵⁴	9	10	19
1898 ³⁵⁵	10	11	21
1899 ³⁵⁶	10	12	22
1990 ³⁵⁷	11	13	24
1901 ³⁵⁸	10	12	22
1902 ³⁵⁹	11	12	23

328 Նույն տեղում, գ. 2743, ք. 125-126:
 329 Նույն տեղում, գ. 3825, ք. 7-8:
 330 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:
 331 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:
 332 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 333 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:
 334 Նույն տեղում, գ. 3846, ք. 13:
 335 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23, 54:
 336 Նույն տեղում, գ. 3851, ք. 3:
 337 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:
 338 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:
 339 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:
 340 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:
 341 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:
 342 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:
 343 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:
 344 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:
 345 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:
 346 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:
 347 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:
 348 Նույն տեղում, գ. 3884, ք. 5:
 349 Նույն տեղում, գ. 3887, ք. 139:
 350 Նույն տեղում, գ. 3889, ք. 138:
 351 Նույն տեղում, գ. 3891, ք. 110:
 352 Նույն տեղում, գ. 3895, ք. 27:
 353 Նույն տեղում, գ. 3896, ք. 163-164:
 354 Նույն տեղում, գ. 3899, ք. 136-137:
 355 Նույն տեղում, գ. 3897, ք. 158:
 356 Նույն տեղում, գ. 3903:
 357 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:
 358 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:
 359 Նույն տեղում, գ. 3907, ք. 12-13:

1906 ³⁶⁰	9	5	14	
1908 ³⁶¹	2	7	2	9
1910 ³⁶²	8	3	11	
1912 ³⁶³	11	8	19	

Աղյուսակից երևում է, որ Լալիստիկում նույնպես հայերը միշտ էլ փոքրաթիվ են եղել (մոտ 50-70 շունչ), բայց նրանց թիվը հետագայում ավելի է նվազել և Ի դարի սկզբներին կազմում էր հազիվ 10-20 շունչ:

1914 թ. գյուղն ուներ 100 բնակիչ³⁶⁴, որից հայեր էին, ըստ երևույթին, միայն 10-20-ը, մնացածը՝ վրացիներ:

Ազատահմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է լալիստիկաբնակ հայերի անվանացուցակը.

«1. Փարսադանի որդի Բեժան, կինն՝ Էլենե, որդիք՝ Յարուբին, Թեվորե, Պապիայ և Իսակ:

2. Տեր Մարտիրոսի այրի կինն՝ Աննա, որդիք՝ Աղալո և Գրիգոր և Տեր Մարտիրոսի եղբոր՝ Ստեփանի այրի կինն՝ Նաթել, որդի՝ Անանիա, դուստր՝ Թամար:

3. Դաթի որդի Անտոն, կինն՝ Մարթայ, որդի՝ Գալսա, դուստրք՝ Մայի և Սաբեդ:

4. Սաբոյի որդի Գիորգի, կինն՝ Մարիամ, մայր՝ Աննա:

5. Պապի որդի Շիո, կինն՝ Մայի, դուստր՝ Մարթայ:

6. Վեդեան Ստեփանի այրի կինն՝ Դարեջան, որդիք՝ Իսանե և Մուրադ, դուստրք՝ Թինա, Քեթեվան, Մարթայ և Մարիամ:

7. Ջուրաբի որդիք՝ Դաիթ, Գիորգի, Իսակ և Մարտիրոս, դուստր՝ Մարթայ, մայր՝ Եղսուն, Դաթի կինն՝ Մարթայ, դուստր՝ Էլիսաբեդ:

8. Գալսայի որդի Դաիթ, կինն՝ Անախանում, որդի՝ Յոհաննես:

9. Մինասի որդիք՝ Թուման և Սկրսում, Թումանի կինն՝ Էլենե, որդի՝ Ջաքարիա, Սկրսումի կինն՝ Մարթայ, որդիք՝ Անանիա և Ստեփան, դուստրք՝ Մարիամ, Սաբեդայ և Հոսոմսին»³⁶⁵:

Եկեղեցի. գյուղում եկեղեցու գոյությանն առաջին անգամ հանդիպում ենք 1840 թ. մի վավերագրում³⁶⁶: Այն փայտաշեն էր և կոչվում էր Սբ. Աստվածածին: 1852 թ. մի վավերագրում նշված է, որ եկեղեցին քայքայված էր ու անօգտագործելի, խիստ կարոտ նորոգության³⁶⁷:

Մինչև 1910-ական թվականները եկեղեցին, այնուամենայնիվ, գոյություն է ունեցել և բազմիցս հիշատակվում է զանազան փաստաթղթերում՝ միևնույն Սբ. Աստվածածին անվամբ:

Քահանա. գյուղին հովվում էին Սանադիքո գյուղի քահանաները:

ԾԻՆԱՆԳԱԼ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 3 կմ հարավ-արևելք՝ Ալազան գետի աջ վտակի՝ Քիսիսիսի աջ ափին:

360 Նույն տեղում, գ. 3916, ք. 6:
 361 ՀԱԱ, ֆ. 35, գ. 1, գ. 559, ք. 21:
 362 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 3917, ք. 5:
 363 Նույն տեղում, գ. 3919, ք. 51-52:
 364 "Кавказский календарь на 1915 г.", с. 151.
 365 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 2569, ք. 23:
 366 Նույն տեղում, գ. 3798, ք. 30:
 367 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:

Պատմություն. 1854 թ. հուլիսի 3-ին և 4-ին Դաղստանի լեռնականները Շամիլի գլխավորությամբ հարձակվել են Կախեթի բնակավայրերի վրա, բայց հատկապես տուժել է Ծինանդալը³⁶⁸:

Հայերը Ծինանդալում. երկրամասի նշանավոր վրացական գյուղերից էր: Այստեղ հայերի հաստատվելու ստույգ ժամանակը հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ՝ դա տեղի է ունեցել ԺԸ դարում կամ նույնիսկ ավելի վաղ: Հայերի ներկայությունը գյուղում վկայված է 1802 թ. մի վավերագրում³⁶⁹:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք Ծինանդալի հայ բնակիչների թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ³⁷⁰	5	40	31	71
1841 ³⁷¹		40	39	79
1842 ³⁷²		39	41	80
1843 ³⁷³		39	41	80
1844 ³⁷⁴		40	41	81
1845 ³⁷⁵		42	42	84
1847 ³⁷⁶		45	38	83
1849 ³⁷⁷	12	47	38	85
1853 ³⁷⁸		56	45	101
1854 ³⁷⁹		57	46	103
1857 ³⁸⁰		54	48	102
1858 ³⁸¹		55	46	101
1860 ³⁸²		56	50	106
1862 ³⁸³		56	42	98
1863 ³⁸⁴		59	45	104
1864 ³⁸⁵		58	46	104
1865 ³⁸⁶	12	61	50	111
1867 ³⁸⁷		67	52	119
1870 ³⁸⁸		72	57	129
1873 ³⁸⁹		76	63	139
1874 ³⁹⁰		76	67	143

368 "Кавказ", 1867, № 89, с. 431. Տե՛ս նաև՝ **Вейденбаум Е.**, նույն տեղում, էջ 384:

369 АКАК, т. 1, с. 472.

370 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 16:

371 Նույն տեղում, գ. 3802, ք. 42-43:

372 Նույն տեղում, գ. 3805, ք. 92-93:

373 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:

374 Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46:

375 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:

376 Նույն տեղում, գ. 3814, ք. 67-68:

377 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:

378 Նույն տեղում, գ. 2743, ք. 125-126:

379 Նույն տեղում, գ. 3825, ք. 7-8:

380 Նույն տեղում, գ. 3830, ք. 130-131:

381 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:

382 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:

383 Նույն տեղում, գ. 3836, ք. 7:

384 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:

385 Նույն տեղում, գ. 3846, ք. 14:

386 Նույն տեղում, գ. 3848, ք. 23-24, 54:

387 Նույն տեղում, գ. 3851, ք. 4:

388 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:

389 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:

390 Նույն տեղում, գ. 3864, ք. 35: Ի դեպ, մեկ այլ վավերագրով՝ Ծինանդալը այդ թվականին ունեցել է 1874 բնակիչ, որից 2017-ը վրացիներ էին, 118-ը՝ հայեր ("Кавказский календарь на 1886 г.", с. 118):

1875 ³⁹¹	80	69	149
1876 ³⁹²	82	69	151
1877 ³⁹³	83	67	150
1878 ³⁹⁴	88	65	153
1880 ³⁹⁵	89	68	157
1881 ³⁹⁶	89	68	157
1882 ³⁹⁷	88	64	152
1883 ³⁹⁸	88	63	151
1885 ⁴⁹⁹	93	69	162
1889 ⁴⁰⁰	94	70	164
1890 ⁴⁰¹	94	75	169
1891 ⁴⁰²	95	70	165
1892 ⁴⁰³	93	72	165
1893 ⁴⁰⁴	98	76	174
1894 ⁴⁰⁵	73	86	159
1898 ⁴⁰⁶	87	61	148
1899 ⁴⁰⁷	91	55	146
1900 ⁴⁰⁸	90	58	148
1901 ⁴⁰⁹	93	61	154
1902 ⁴¹⁰	95	64	159
1908 ⁴¹¹	37	111	86
1910 ⁴¹²		115	95
1912 ⁴¹³		122	101
			223

Աղյուսակի տվյալներից երևում է, որ Ծինանդալում հայերի թիվը համարյա անընդմեջ փոքր-ինչ աճել է և 1818-1912 թթ. ընթացքում եռապատկվել:

1914 թ. գյուղն ուներ 2186 բնակիչ⁴¹⁴, որից ավելի քան 200-ը՝ հայեր:

Ազգատոհմներ. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Խանդոսի որդի Բեժան, կին՝ Լալո, որդիք՝ Իսան և Գիորգի, դստերք՝ Սօփիօ, Դասիա և Մայիա:

2. Լուարսաբի որդիք՝ Ջուրաբ, Յարութին, Թեմուրազ և Գարբիէլ, Ջուրաբի կինն՝ Անախանում, որդի՝ Լուրասաբ, դստերք՝ Թուրա և Սարրա, Յարութինի կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Սոլոման, Իսան և Աղայ, Թեմուրազի կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Գիորգի և եղբոր՝ Յովսէփի որդիք՝ Անդրիաս, Ջաբար, Պէլպան և

391 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3866, ք. 7:

392 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:

393 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:

394 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:

395 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:

396 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:

397 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:

398 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:

399 Նույն տեղում, գ. 3877, ք. 33:

400 Նույն տեղում, գ. 3884, ք. 5:

401 Նույն տեղում, գ. 3887, ք. 140:

402 Նույն տեղում, գ. 3889, ք. 139:

403 Նույն տեղում, գ. 3891, ք. 111:

404 Նույն տեղում, գ. 3895, ք. 27:

405 Նույն տեղում, գ. 3896, ք. 164-165:

406 Նույն տեղում, գ. 3897, ք. 159:

407 Նույն տեղում, գ. 3903:

408 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:

409 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:

410 Նույն տեղում, գ. 3907, ք. 13-14:

411 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:

412 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 5:

413 Նույն տեղում, գ. 3919, ք. 52-53:

414 "Кавказский календарь на 1915 г", с. 201.

Գօգի, մայր՝ Աննա, Անդրիասի կինն՝ Էլենե, որդիք՝ Իսակ և Դար, դուստր՝ Մարթայ, Ջաքարիայի կինն՝ Աննա, որդի՝ Սօսի:

3. Մատոյի որդիք՝ Գիորգի, Ջուրաբ, Սօսի և Նինի, մայր՝ Թինաթին, Գիորգոյ կինն՝ Մարիամ, որդի՝ Անդրիաս, դուստր՝ Մարթայ, Ջուրաբի կինն՝ Դասիայ, Սօսինի կինն՝ Մայիա, այլև եղբայր՝ Ջաքար և Բաղդասար:

4. Նատլոյի որդիք՝ Յարութին և Սիմօն, Յարութինի կինն՝ Ուսնիվեր, դստերք՝ Մալօմե և Մարիամ, Սիմօնի կինն՝ Թամար, որդիք՝ Յոհաննես, Պետրոս, Գիսի և Գրիգոր, դստերք՝ Մագաբադին, Մայիա, Նենե և Էլիսաբեդ:

5. Առաքելի որդիք՝ Յարութին և Գիորգի, Յարութինի կինն՝ Մարթայ, որդի՝ Նինի, դուստր՝ Էլիսաբեդ, Գիորգոյ կինն՝ Մարիամ, որդիք՝ Ջաքարիա և Սիլասե, դստերք՝ Նինո և Բարբարե, այլև դստերք՝ Յարութին, Սօփիօ և Աննա:

Այր մի այսահար՝ Դալիթ անուն»⁴¹⁵:

Ի դեպ, 1841 թ. մի վավերագրում գյուղի ազդեցիկ հայերից մեկն էր Գաբրիել Լվարսաբյանը⁴¹⁶:

1980-ական թվականներին Ծինանդալում բնակվում էին սակավաթիվ վրացախոս հայեր, որոնք կրում են հետևյալ այլափոխված ազգանունները՝ Մատինյաններ-Մատինով-Մատուշվիլի, Անտոնյաններ-Անտոնով, Լվարսաբյաններ-Լվարսաբով-Լվարսաբիշվիլի և այլն:

Եկեղեցի. գյուղի հայ համայնքը 1808 թ-ից ունեցել է իր ծխական եկեղեցին՝ Սբ. Աստվածածին անվամբ: Կառուցման վերաբերյալ հայտնի են որոշ մանրամասնություններ. «Աստ գոյ մատուռ մի սագաշեն կառուցեալ քարիւ և բռամբ, ի վերա հանգըստարանի, յանուն սրբոյ Աստուածածնայ, յամի 1808, արդեամբ վերոյիշեալ ազգին Լուարսաբեանց»⁴¹⁷:


1852 թ. եկեղեցին նորոգման կարիք ուներ. նախատեսվում էր ճակտոնի գագաթին զագաթին զանգակատան կառուցել, իսկ շուրջը՝ պարսպապատել. «Ի գիղն Ծինանդալ գտանին 4 տուն հայազգիք և ունին զեկեղեցի քարաշեն, բայց հնացեալ, գոր խոստանան նորոգել և կառուցանել ի յետ կոյս ըստ առաջնոյն զնորոգ, զանգակատուն՝ սեպհական ծախիւք, նոյնպէս և պարսպատ առնել քարուկրի զգալիք եկեղեցոյն միայն այնու, զի տացի նոցա իրաւունք թաղելոյ զմեռեալս իրեանց ի գալթի անդ...»⁴¹⁸: Մեկ այլ վավերագրից (1853 թ.) պարզվում է, որ եկեղեցին հնությունից քայքայված է եղել, իսկ զանգակատունը նախատեսվել էր կառուցել ավելի վաղ գոյություն ունեցած ու քանդված զանգակատան տեղում. «Գիղն Ծինանդալ հայազգի չորս տունք բնակիչք ունին զեկեղեցի քարաշեն հնացեալ և ուխտեն նորոգել զայն և յետկոյս զմբեթի շինել զզանգակատուն, որպէս և եղեալ է ի հնոց անտի և պարսպիլ զգալիք նորա քարուկրի պարսպաւ, եթե ունիցին իրաւունս թաղելոյ զմեռեալ իրեանց ի գալիք եկեղեցոյն»⁴¹⁹: Ինչ վերաբերում է Ծինանդալ

799 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, ք. 51-52, գ. 853, ք. 9:

800 «Кавказский календарь на 1915 г.», с. 190.

7. Կաճօյի որդիք՝ Միսօն, Գիօրգի, Յակոբ և Մարգիս, մայր՝ Մայիա:

8. Մկրտումի որդիք՝ Սօսի և Բաղդասար, Սօսիին կինն՝ Մարթայ, որդի՝ Սկրտում:

9. Ղարաբաղցի Յարութիւն, որդին՝ Գիօրգի, մայր՝ Մարգարիտ և Յօհանի որդիք՝ Ասլան և Յարութիւն, մայր՝ Քէթեվան:

10. Չուրաբի որդի Սուլտան, կինն՝ Լալիբարս:

11. Գարտիշի որդի Պէպան, կինն՝ Քէթեվան, որդիք՝ Յարութիւն, Նօնի, դուստր՝ Մարթայ, Յարութիւնի կինն՝ Մարթայ:

12. Թաթարի որդի՝ Գրիգոր, կինն՝ Մարթայ:

13. Գեորգի որդիք՝ Մաթօ, Թաթուլ և Դաւիթ, քոյր՝ Մարիամ, Մաթօյի կինն՝ Ախօ, որդիք՝ Եսայի, Միսօ և Գիօրգի, դստերը՝ Թամար և Թինաթին, Թաթուլի կինն՝ Աննա, որդի՝ Յարութիւն, Դաւթայ կինն՝ Աննա:

14. Խաչատուրի որդի՝ Յակոբ, կինն՝ Դասի, որդի՝ Յարութիւն, դուստր՝ Մարիամ, քոյր՝ Մագաղիին:

15. Ղազարի որդիք՝ Ղուրբան և Գիգօլ, մայր՝ Աննա, Ղուրբանի կինն՝ Աննա:

16. Փարթմուզի որդի Յովակիմ, կինն՝ Մաթօ, դուստր՝ Մարթայ և աներ Աւետիքի որդի՝ Մօսի:

17. Մարկոսի որդիք՝ Դաւիթ, Նօնի և Յօվսէփ, սորա կինն՝ Թէկէլ, որդի՝ Եօրդանէ և Դաւիթ որդի՝ Միխօ, սոցա ազգական՝ Մարտիրոսի այրի կինն՝ Միրամարգ:

18. Խարազ Յարութիւն, կինն՝ Մարթայ:

19. Մաթօյի որդիք՝ Պէպան, Ռամազ, Միսօն և Ռէվազ, սոցա քոյր՝ Մարիամ, Ռամազի կինն՝ Մաբեդ, որդի՝ Մարտիրոս:

20. Ղարաբաղցի Արահվերդի, կինն՝ Մարթայ, որդի՝ Շաքար, դուստր՝ Աննա:

21. Կալատօզի որդիք՝ Դաւիթ և Յոհաննես, Դաւիթի կինն՝ Անախանում, Յոհաննեսի կինն՝ Ռաօղէն, զոքանցն՝ Յարութիւնի կինն՝ Մարիամ և Մարտիրոսի որդիք՝ Մարտիրոս:

22. Աւետիքի որդի Մաթօ, կինն՝ Դարէշան, որդիք՝ Աւետիք, Յօհան, Յարութիւն, դստերը՝ Խամփեղվան, Մարիամ և Մարթայ:

23. Հախվերդի որդիք՝ Թաթուլ և Մարտիրոս, Թաթուլի կինն՝ Անախանում, որդիք՝ Գիօրգի, Դաւիթ և Ղազար, Մարտիրոսի կինն՝ Էլիսաբեդ, դուստր՝ Մարթայ:

24. Մուրադխանի որդի Անտօն, կինն՝ Խօրէշան, որդիք՝ Գիօրգի, Մակար, Մաթի և Չաքար, դուստր՝ Էլէնէ:

25. Մարտիրոսի այրի կինն՝ Մարգարիտ:

26. Խաչատուրի որդիք՝ Պապա, Գրիգոր, Պապայի կինն՝ Մարիամ, Գրիգորի կինն՝ Մարիամ, դուստր՝ Աննա:

27. Խաչօյի այրի կինն՝ Աննա, որդի՝ Մարգար և Յարութիւնի այրի կինն՝ Անէն, դուստր՝ Մարթայ, սորա փեսայ Չուրաբի որդի՝ Պափէ, կինն՝ Էլիսաբեդ:

28. Փարսաղանի որդիք՝ Յարութիւն, Մաթոս և Վարդան, Յարութիւնի կինն՝ Էլէնէ, որդի՝ Մարգիս, Մաթոսի կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Մարտիրոս և Անտօն, Վարդանի կինն՝ Մագաղիին, որդի՝ Մարտիրոս, դուստր՝ Աննա, այրի հարս, որ է կինն՝ Յօհանի՝ Խամփեղվան, սորա որդի՝ Պետրոս, դստերը՝ Ուսնիփեդ և Քալի:

29. Չէինալի որդի Մէլիք, կինն՝ Աննա, որդիք՝ Ղազար, Պէպան, Սօսի և Յարութիւն, դուստր՝ Մարիամ, Գիօրգոյ այրի կինն՝ Էլիսաբեդ:

30. Անազել Պապայի որդիք՝ Դաթօ, Մարտիրոս և Գիօրգի, Դաթօյի կինն՝ Աննա, որդիք՝ Մարգիս և Յարութիւն, Մարտիրոսի կինն՝ Թամար, դուստր՝ Քէթեվան:

31. Դարբին Մարգսի որդի Թօմի այրի կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Պէտրէ, դստերը՝ Շուշան և Մարթայ, միս որդի Յօհանի այրի կինն՝ Աննա, դուստր՝ Մարիամ և Առուշանի կինն՝ Մայիա:

32. Մարտիրոսի որդի՝ Յարութիւն, կինն՝ Մարիամ և եղբոր՝ Կացօյի այրի կինն՝ Մայիա, որդի՝ Մարտիրոս, դստերը՝ Աննա և Մարթայ և միս եղբոր՝ Մօսիին այրի կինն՝ Մարիամ, որդիք՝ Բաղդասար և Դաւիթ:

33. Վետինի որդի Պեպան, կինն՝ Թամար, որդիք՝ Գիգուլ և Յարութին:

34. Կիկոյի այրի կինն՝ Խանկերվան, որդիք՝ Գիորգի և Մաթեն, դստերք՝ Մարթայ և Անախանում:

35. Չաալի որդի Ղազար, կինն՝ Քեթևան, որդի՝ Շաքար, դուստր՝ Մարթայ:

36. Մարգարի որդի Ռեվակ, կինն՝ Անախանում, մայր՝ Սուսի և սղնախեցի Կողինի դուստր՝ Մարիամ:

37. Սիմոնի որդի Աղաջան, կինն՝ Մայիա, որդի՝ Թեմուրազ և Սոսի:

38. Ռոստոմի որդիք՝ Մօսե, Նօնի և Չաքար, մայր՝ Աննա, Մօսինի կինն՝ Քեթևան, որդիք՝ Գիորգի և Յարութին, Նօնինի կինն՝ Թինաթին, որդի՝ Դալիք:

39. Դաթնի որդի՝ Հերապետ, կինն՝ Մայիա, քոյր՝ Թինաթին:

40. Առաքելի որդի Մաքօ, կինն՝ Նաթել, որդի՝ Յարութին, դստերք՝ Քեթևան, Բալի և եղբոր՝ Մատինի այրի կինն՝ Լալօ, դստերք՝ Մաթեղ և Դախի:

41. Խառատ Մահակ, կինն՝ Մարթայ, որդիք՝ Իօանե և Մարտիրոս և միս եղբայր՝ Մարգիս:

42. Տիրացու Թաթուլի այրի կինն՝ Շուշան, դստերք՝ Մարիամ և Մագրադին:

43. Գօգինի որդի Յոհաննես, կինն՝ Մարթայ, որդի՝ Յարութին և Դաթոյի որդի՝ որք Յակոբ:

44. Քանքամի որդի Մաքօ, կինն՝ Մարիամ, դստերք՝ Մարթայ և Աննա և Մաթոյի եղբոր՝ Մատինի որդի՝ Թաթուլ, կինն՝ Էլիսաբեղ, մայրն Թաթուլի՝ Մայիա և Յօհանի որդի՝ Մօսե և Մատինի դուստր՝ Մաթեղ:

45. Խիթարեան Պետրոսի որդի Մահակ, դստերք՝ Թամար և Աննա, մայր՝ Էլիսաբեղ և Պետրոսի եղբոր՝ Մարտիրոսի որդի՝ Դալիք և դուստր՝ Թելկէ:

46. Տէր Ղազարի որդի՝ Թաթուլ, կինն՝ Լալօ, որդիք՝ Սօլօման և Ղազար, դուստր՝ Աննա, Սօլօմանի կինն՝ Էլենէ:

47. Յարութինի որդիք՝ ճարօ և Չաքար, դստերք՝ Թամար և Դարեջան, ճարօյի կինն՝ Մարթայ, որդիք՝ Պետրէ և Սուքիաս և Յակոբի որդի՝ Հայրապետ:

48. Աքուլեցի դավաք Մելքօն, այլևս բաղքարար Պապի կինն՝ Հօսօմսին»⁸⁰¹:

Եկեղեցի. հասարակության միջոցներով կառուցված Սբ. Սարգիս եկեղեցուն պահվող իրերից մեկի հիշատակագրությունից պարզվում է, որ այն գոյություն ուներ 1808 թ.⁸⁰²:

1852 թ. եկեղեցու փայտածածկը քայքայված էր և նորոգման անհրաժեշտություն էր զգացվում: Գյուղի հայ բնակիչները խոստացել էին դրա համար հավաքել 100 ռ.⁸⁰³: 1856 թ. դեկտեմբերի 24-ին եկեղեցու երեցփոխ էր կարգվել Գիգուլ Սարգսյան Քանքանյանցը: Նրա անբասիր ծառայությունը տևում է մինչև 1889 թ.⁸⁰⁴: Նույն թվին թեմական իշխանությունը միջնորդում է Գ. Քանքանյանցին ստանիսլավյան ժապավենով արծաթե մեղալ շնորհելու համար⁸⁰⁵, որը բավարարվում է, սակայն 1890 թ. Վրաստանի և Իմերեթիայի Հայոց կոնսիստորիայից Էջմիածնի Սինոդին հայտնել էին, որ երեցփոխը վախճանվել է⁸⁰⁶: Եկեղեցու հաջորդ նո-

րոգման անհրաժեշտությունը զգացվել էր տասնամյակներ անց՝ 1914 թ.: Երեցփոխ Իսահակ Հարությունյանցը նորոգման աշխատանքներ սկսելու և դրա համար եկեղեցական գումարներից 25 ռ. ծախսելու թույլտվություն ստացել էր նույն թվականի օգոստոսի 1-ին⁸⁰⁷: Ըստ երևույթին, վերանորոգման աշխատանքներին հետևել էր եկեղեցու օժման հանդեսը, որի արդյունքում եկեղեցին վերանվանվել էր Սբ. Աստվածածին: Այդ մասին է վկայում այն փաստը, որ երբ 1923 թ. ապրիլի 19-ին քանդում էին հայոց փայտաշեն եկեղեցին, այն հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ⁸⁰⁸:

Եկեղեցական իրեր. 1818 թ. եկեղեցուն պատկանող 13 միավոր իրերի հաշվառման ժամանակ դրանց մեջ արձանագրվածները հետևյալներն էին⁸⁰⁹.

Արծաթյա սկիհ. պատվանդանին՝ վրացերեն.

Ընծայեցի զսկիս և զմաղանս Լոմիսցիսու Սբ. Սարգիս եկեղեցոյն, ես Ուշիբեանց Դալիք Յոհաննեսեան յիշեսջիք յամ[ենայն] պատարագս ձեր զոռոգիս իմ, 496 թուին վրաց (+ 1312=1808):

Գիրք ճաշոց.

Յիշ(ա)տ(ա)կ տ(ի)ր(ա)ց(ո)ւ Թաթուլ Յովսէփեանի:

Բուրվառ՝ թիթեյա.

Յիշ(ա)տ(ա)կ Մաթոս Սարիկեանի:

Երկու զանգակ.

Յիշատ(ա)կ Ստեփանի եվ Մովսէսի Մարտ(ի)րոսեանը:

Քահանա. Տեր Հովհաննես Նորիբեգյան. հիշվում է 1783-1818 թթ.: Ծնվել է 1758 թ., ձեռնադրվել 1783-ին Սևանի վանքի առաջնորդ Եղիազար արքեպիսկոպոսի կողմից⁸¹⁰:

Տեր Հովսէսի Տեր-Ղազարյան. հիշվում է 1802-1818 թթ.: Ծնվել է 1778 թ., ձեռնադրվել 1802-ին Հաղբատի Սարգիս արքեպիսկոպոսի կողմից⁸¹¹:

Գևորգ Մելիքյանց. գյուղի ծխատեր քահանան էր. հիշվում է 1908-1923 թթ. (նույն ժամանակամիջոցում հովվել է նաև Գվարել և Շիրազ գյուղերին): Խորհրդային իշխանությունները նրան արգելել են քահանայագործել⁸¹²:

Գերեզմանոց. հայերը գյուղում ունեցել են գերեզմանոց. 1912 թ. հարևան Շիրազ գյուղի վրացի բնակիչ Բասիլ Չիտաշվիլին վարել ու ոչնչացրել է հնավայրի տարածքը: Այդ մասին զեկուցագիր է գրել Թելավի գործակալ Աբել Սուքիասյանը⁸¹³:

801 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 25-26:

802 Նույն տեղում, ք. 25:

803 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2207, ք. 6, գ. 3166, ք. 4:

804 Նույն տեղում, գ. 7427, ք. 14:

805 Նույն տեղում, ք. 17:

806 Նույն տեղում, ք. 20, 22:

807 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3456, ք. 4:

808 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, ք. 7:

809 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 25:

810 Նույն տեղում:

811 Նույն տեղում:

812 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 259, ք. 14:

813 Նույն տեղում, գ. 3443, ք. 9:

ՓՇԱՎԵԼ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս՝ Ալազան գետի ձախափնյա Ստորի վտակի ձախ ափին:

Հայերը Փշավելում. Կախեթի այն վրացական գյուղերից էր, որտեղ հաստատված հայերը խիստ սակավաթիվ էին: Հայեր այստեղ բնակություն են հաստատել, հավանաբար, 1802-1818 թթ. միջակայքում, քանի որ 1802 թ. մի վավերագրում նշված է, որ բնակիչները վրացիներ են⁸¹⁴, իսկ 1818-ին արդեն վկայված է հայերի գոյությունը գյուղում:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ⁸¹⁵	5	17	12	29
1841 ⁸¹⁶		32	23	55
1842 ⁸¹⁷		33	23	56
1843 ⁸¹⁸		33	22	55
1844 ⁸¹⁹		33	23	56
1845 ⁸²⁰		31	21	52
1847 ⁸²¹		4	4	8
1849 ⁸²²		9	9	18
1852 ⁸²³		10	4	14
1857 ⁸²⁴		5	5	10
1858 ⁸²⁵		5	5	10
1860 ⁸²⁶		4	5	9
1861 ⁸²⁷		5	4	9
1862 ⁸²⁸		5	5	10
1863 ⁸²⁹		4	5	9
1864 ⁸³⁰		4	5	9
1865 ⁸³¹	1	4	5	9

1867 ⁸³²		4	5	9
1908 ⁸³³	1	2	1	3
1910 ⁸³⁴		5	3	8

Աղյուսակի տվյալներից երևում է, որ 1845 թ. հետո գյուղի հայ բնակչությունը կտրուկ անկում է ունեցել, իսկ 1867 թվից այդտեղ այլևս հայեր չեն եղել: Միայն մի հայ ընտանիք է հիշատակվում 1908-1910 թթ.:

1914 թ. Փշավելն ուներ 884 բնակիչ (վրացիներ)⁸³⁵:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է փշավելաբնակ հայերի անվանացուցակը.

«1. Թամազի որդի՝ Գազար, կինն՝ Անախանում, որդի՝ Ստեփան, դուստր՝ Մարիամ:

2. Թամազի որդիք՝ Նինիա և Գիօրգի, մայր՝ Դարեջան, Նինինի կինն՝ Թամար, որդիք՝ Թամազ, Ջալի և Միքել, դստերք՝ Մարթայ և Մարիամ, Գիօրգոյ կինն՝ Էլիսաբեդի, որդի՝ Եսաէ:

3. Կօճի Գազար, կինն՝ Նինիայ, որդիք՝ Գրիգոր և Մարգիս, դուստր՝ Աննա:

4. Վարդանի որդի Յարութին, կինն՝ Սաբեդ, որդի՝ Յակոբ:

5. Գաբօյի որդիք՝ Նինի, Դաթ, Բէժան և Ջաքարիա, Նինինի կինն՝ Մազդադին, դուստր՝ Մարիամ»⁸³⁶:

Եկեղեցի. 1845 թ. հիշվում է փայտաշեն Սբ. Աստվածածին եկեղեցին⁸³⁷:

Հատկանշական է, որ այն որևէ այլ վավերագրում հիշատակված չէ: Այդ պատճառով նրա մասին լրացուցիչ տեղեկություններ հաղորդելու հնարավորություն չունենք: Ավելորդ չէ նշել, որ Փշավելի հայությունն իր «ծաղկման» շրջանում, այն է՝ մինչև 1845 թ., զուրկ է եղել ծխական քահանայից:

814 AKAK, T. 1, c. 472.

815 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 23:

816 Նույն տեղում, գ. 3802, ք. 41-42:

817 Նույն տեղում, գ. 3805, ք. 92-93:

818 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:

819 Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46, 63:

820 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:

821 Նույն տեղում, գ. 3814, ք. 67-68:

822 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:

823 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:

824 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:

825 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:

826 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:

827 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:

828 Նույն տեղում, գ. 3836, ք. 6:

829 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:

830 Նույն տեղում, գ. 3846, ք. 13:

831 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23:

832 Նույն տեղում, գ. 3851, ք. 3:

833 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:

834 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 5:

835 "Кавказский календарь на 1915 г.", с. 174.

836 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 23:

837 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:

ԼԱԳՈՂԵՒԻ ՇՐՋԱՆ

Գտնվում է Մեծ Կովկաս լեռնաշղթայի և Ալազան գետի միջակայքում: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը ներկայիս շրջանի տարածքում հայեր բնակվելիս են եղել միայն Լագողեխում, որն այժմ 63 բնակավայր ունեցող շրջանի վարչական կենտրոնն է: Սահմանակից է Վրաստանի Հանրապետության Թելավի, Դվարեի և Սղնախի շրջաններին, Ռուսաստանի Դաշնության Դաղստանի Ինքնավար Հանրապետությանն ու Ադրբեջանի Հանրապետությանը: Շրջկենտրոնը Լագողեխ քաղաքն է:

ԼԱԳՈՂԵՒ (ԼԱԳՈՂԱՂ)

Տեղադրություն. Վրաստանի Հանրապետության ամենաարևելյան քաղաքն է. գտնվում է Մեծ Կովկասի անտառածածկ լանջերի հարավային ստորոտին: Այստեղ են խաչվում Ջաքաթալայից, Սղնախից և Դվարեից ձգվող մայրուղիները:

Պատմություն. հայտնի է իր ամրոցով, որը կարևոր նշանակություն է ունեցել լեռնականների պարբերաբար կրկնվող արշավանքներին դիմակայելու ժամանակ: Համեմատաբար նոր բնակավայր է:

Հայերը Լագողեխում. առաջին անգամ Լագողեխում հիշվում են 1860-ականներին: Հայերն այստեղ գաղթել են Թիֆլիսից, Սղնախից, Դարաբաղից, Ագուլիսից, Մեղրիից և այլ վայրերից¹: Հայերից բացի բնակվում էին ռուսներ և վրացիներ: Դրանցից յուրաքանչյուրը թվաքանակով կազմում էր մոտավորապես 1/3 մասը:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1876 ²		72	71	143
1880 ³		57	61	118
1881 ⁴		90	65	155
1883 ⁵		69	71	140
1885 ⁶		58	56	114
1890 ⁷		74	75	149
1891 ⁸		120	125	245
1892 ⁹		125	126	251
1893 ¹⁰	55	108	117	225

1 «Նոր-Գար», 1889, № 29, էջ 3: Նաև՝ «Նոր-Գար», 1893, № 176, էջ 3:
 2 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 75:
 3 Նույն տեղում, գ. 3872, ք. 122-123:
 4 Նույն տեղում, գ. 3873, ք. 62-63:
 5 Նույն տեղում, գ. 3871, ք. 67-68, գ. 3877, ք. 39:
 6 Նույն տեղում, գ. 3879, ք. 221:
 7 Նույն տեղում, գ. 3887, ք. 141:
 8 Նույն տեղում, գ. 3889, ք. 140:
 9 Նույն տեղում, գ. 3891, ք. 112:
 10 Նույն տեղում, գ. 3895, ք. 63, 116-117:

1894 ¹¹	55	111	119	230
1894 ¹²		118	123	241
1898 ¹³		120	126	246
1901 ¹⁴		158	140	298
1902 ¹⁵		160	145	305
1905 ¹⁶		169	184	353
1906 ¹⁷		140	109	249
1907 ¹⁸				314
1908 ¹⁹	95	178	168	346
1912 ²⁰		235	217	452

1914 թ. մի աղբյուր Լագողեխի միայն ռուս բնակիչների թիվը ցույց է տալիս 368 շունչ²¹:

Ջրադնունք. լագողեխաբնակ հայերի մեծ մասը զբաղված էր արհեստներով ու վաճառականությամբ:

Առաջին հայ գաղթականները զբաղվում էին հատկապես ծխախոտագործությամբ, որի մշակությունը այդ ժամանակներում ողջ Այսրկովկասում նորություն էր. «Ծխախոտագործությունը Կախեթում սկիզբ է առել XIX դարի վաթսունականներին: Առաջին փորձավայր հանդիսացավ Լագողեխը, որտեղ Թուրքիայից եկած ոմն մեկը առաջին անգամ ծխախոտ ցանեց: Հաջողությունը ուրիշներին էլ դրդեց զբաղվել շահեկան գործով: Սկզբում գործին կաշում են ծխախոտի առևտրի խոշոր ներկայացուցիչ Ա. Էնֆիաճյանցն ու ուրիշները, հետո և տեղի բնակիչները՝ վրացիներն ու ռուսները...»²²: Ի դեպ, հիշյալ Էնֆիաճյանցի ժառանգներն ակնհայ-

11 Նույն տեղում, գ. 3896, ք. 165-166:
 12 Նույն տեղում, գ. 3899, ք. 138-139:
 13 Նույն տեղում, գ. 3897, ք. 160:
 14 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 131-132:
 15 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 14-15:
 16 Նույն տեղում, գ. 10403, ք. 208-209: Տե՛ս նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 3912, ք. 258-259:
 17 Նույն տեղում, գ. 3915, ք. 8:
 18 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, ք. 8:
 19 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22: Մեկ այլ վավերագրում նշված է 90 տուն (նույն տեղում, գ. 390, ք. 8):
 20 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, ք. 53-54:
 21 "Кавказский календарь на 1915 г.", с. 150.
 22 "Кавказ", 1903, № 204, с. 2.

տորեն շարունակել են զբաղվել արդյունաբերության և առևտրի մույն բնագավառով, քանի որ հայտնի է, որ 1897 թ. Սղնախի գավառի Մաշնախրի գյուղի մոտ ծխախոտի ցանքերն ընդարձակելու նպատակով 2-րդ կարգի վաճառական Ա. Էնֆիաճյանցին 12 տարով թույլատրվել էր վարձակալել 4 դեսյատին հողատարածք²³:

Հայոց դպրոց. լագոդեխցի հայերը զգալի ջանք են ներդրել իրենց մանուկների ուսման համար: Ծխական դպրոց բացելու խնդրանքով նրանք իշխանություններին դիմել էին դեռևս 1888 թ.²⁴: Գյրոցական շենքի հարցը մասամբ լուծվել էր վաճառական Արտեմ Չուրաբյանի մահվան կապակցությամբ վերջինիս այրու կողմից դպրոց կառուցելու նպատակին տրամադրված 400 ռուբ. նվիրատվության շնորհիվ²⁵: Գյրոցը բացվել է 1893/94 ուստարում, միայն թե նախապես ծրագրված երկսեռ դպրոցի փոխարեն (ցուցակագրվել էին 18 տղա և 14 աղջիկ)²⁶ գործել սկսել է իբրև արական: Առաջին տարում ունեցել է մեկ ուսուցիչ և 18 աշակերտ²⁷:

Հայոց բոլոր դպրոցների նման Լագոդեխի դպրոցն էլ 1896-1905 թթ. կառավարության կարգադրությամբ փակ է եղել: Վերաբացվել է 1907 թ.: Նույն թվի սեպտեմբերին ուսուցիչ Մովսես Հովհանյանին փոխարինել են տղնախցի Հակոբ Գրիգորյանը (500 ռ. աշխատավարձով) և տեղի քահանա Բագրատ Սուքիասյանը (կրոն և երգեցողություն՝ 120 ռ. աշխատավարձով)²⁸:

1908 թ. դեկտեմբերին դպրոցի շենքը քայքայված էր, մինչև իսկ փլուզման ենթակա²⁹: 1909 թ. դեռևս մի կերպ իր գոյությունը պահպանող դպրոցն ուներ 27 աշակերտ և 23 աշակերտուհի³⁰: 1909/10 ուստարվա սկզբներից դպրոցում ուսուցչություն էին արել Գրիգոր քահանա Ասրյանն ու իր կիները³¹: 1910 թ. հունվարի 15-ին նյութական սղության պատճառով դպրոցը փակվել էր՝ արձակելով իր ավելի քան 40 աշակերտներին³²: 1911 թ. վերանացվել է այս անգամ արդեն 2 բաժանմունքով, 3 ուսուցչով և 35 սանով (15 տղա, 20 աղջիկ)³³: 1914 թ. դպրոցն ունեցել է 2 ուսուցիչ և 42 աշակերտ³⁴: 1919-ին գործել է որպես տարրական դպրոց³⁵:

Գյրոցը գործել է նաև խորհրդային տարիներին: Կրթական այդ հաստատությունն իր վերջին

ուսումնական տարին բոլորել է 1932/33 թվականներին: Տեղացիներն այսօր էլ հիշում են հայոց դպրոցի վերջին ուսուցչուհուն Իզաբելա Բալարունյան-Բերբերյանին:

1985-1986 թթ. դպրոցի շենքը քանդել են և տեղում բաղնիք կառուցել:

Մեր օրերում Լագոդեխում շուրջ 300 տուն հայեր են բնակվում: 1988 թ. նրանց թիվն ավելացել է Աղբյուրեջանի Չաքաթալա և Կախ քաղաքներից բռնագաղթված հայերի հաշվին:

Հայոց եկեղեցի. դեռևս 1860-ական թվականների կեսին հայերը մտադրվում են Սբ. Աստվածածին անվամբ եկեղեցի կառուցել Լագոդեխի բերդի ներսում³⁶: 1866 թ. որոշում են գործի անցնել և կառուցել փայտաշեն եկեղեցի³⁷: Եկեղեցու հիմնադրումը տեղի է ունենում 1867 թ.³⁸: Ի դեպ, չնայած հաստատված նախագիծը ձեռք էր բերվել միայն 1869 թ.³⁹, այնուամենայնիվ, շինարարական աշխատանքները շարունակում էին ձգձգվել: 1876 թ. մի վավերագրում Լագոդեխի եկեղեցին հիշված է «նորաշեն»⁴⁰ ձևով, ուստի մինչ այդ նրա կառուցումն արդեն ավարտված է եղել:

1889 թ. եղբայրներ Նարինյանները խոստացել ու շատ չանցած եկեղեցուն կից կառուցել էին մի զանգակատուն. «Լագոդաղու փոքրաթիւ, բայց եկեղեցասէր հայ հասարակութիւնը զգալով անհրաժէշտ հարկատրութիւն եկեղեցու, իրենց ծախքով և մասամբ ուրիշների օժանդակութամբ կառուցել են քարաշէն գեղեցիկ եկեղեցի, բայց առանց զանգակատան, որի փոխարէն շինուած արևմտեան պատին կից տախտակեայ ծածկը ծառայում է փոխանակ զանգակատուն և պէտք է ասած, որ բաւականին անձև և անշնորհք բան է: Եղբայր Նարինեանցները տեսնելով զանգակատան կարևորութիւնը, իրենց յօժար կամքով խոստացան առաջիկայ գարնան կառուցանել զանգակատուն՝ համաձայն մակարդակի (պլանի)»⁴¹:

Բական աշխատանքներ կատարվեցին նաև 1891-1893 թթ. ընթացքում. «...ներկայ երեցփոխ պ. Ս. Մատինեանցն երկու տարուայ ընթացքում, բացի մի դրամագլուխ կազմելուց, որ մօտ 400 ռ. չափ է, շինել է տուել տեղիս վաճառականների հաշուով նաև եկեղեցու կաթողիկէն, առաստաղը, լուսամուտները և ամբողջ եկեղեցին էլ սուաղել է տուել...»⁴²: Նորոգումները շարունակվել են նաև 1894-ին⁴³:

23 "Кавказ", 1897, № 159.

24 ՀԱԱ, ֆ. 22, ց. 1, գ. 276, թ. 6:

25 «Նոր-Գար», 1893, № 74, էջ 2:

26 ՀԱԱ, ֆ. 22, ց. 1, գ. 276, թ. 4:

27 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 99, գ. 3896, թ. 34:

28 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 268, թ. 12:

29 Նույն տեղում, գ. 390, թ. 8:

30 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 11:

31 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 574, թ. 4:

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում, գ. 682, թ. 58:

34 **Խորդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 606:

35 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 48, թ. 104:

36 ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 4065, թ. 14:

37 Նույն տեղում, գ. 4065, թ. 8:

38 «Նոր-Գար», 1890, № 34, էջ 3, 1899, № 34, էջ 3:

39 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 4065, թ. 14:

40 Նույն տեղում, գ. 3868, թ. 75-76:

41 «Նոր-Գար», 1889, № 215, էջ 2: Տե՛ս նաև՝ «Նոր-Գար», 1889, № 218, էջ 2:

42 «Նոր-Գար», 1893, № 197, էջ 2:

43 Նույն տեղում, 1894, № 183, էջ 2:

Գարավերջին արդեն Սր. Աստվածածին եկեղեցու շուրջը գոյացել էր փոքրիկ գերեզմանատուն, ուր թաղվելու պատվին արժանանում էին միայն հասարակական ճանաչում ունեցող բարեգործ անձինք: 1893 թ. եկեղեցու բակում է թաղվել նաև վաճառական Արտեմ Ջուրաբյանը⁴⁴:

1900 թ. քահանա Բագրատ Սուքիասյանցի հրավերով եկեղեցին նորոգելու մտահոգությամբ ժողով էր գումարվել, և ընտրվել էին տեղացի մի քանի անհատներ՝ նախատեսված աշխատանքները ղեկավարելու համար⁴⁵:

1911 թ. Խանում Կալատուզյանցն իր հանգուցյալ ամուսնուն՝ Կոստանդին Մովսիսյան Կալատուզյանցին, նույն գերեզմանոցում թաղելու թույլտվություն ստանալով, փոխարենը 500 ռուբլի ծախսելով նորոգել էր եկեղեցու քայքայված մասերը. «Վերանորոգեցի զանգակատան տանիքը և եկեղեցու ներսի պատերը սուաղել և ներկել տուփ ամբողջությամբ...»⁴⁶:

Նույն թվականին այրի Եվա Ստեփանոսյան Օթարյանը, համաձայն իր ամուսնու կտակի, 600 ռ. ծախսելով, նորոգել էր եկեղեցու տանիքը, պատերը՝ դրսից, փոխել էր երեք դռները, լուսամուտները և այլն: Փոխարենը թույլտվություն էր ստացել ամուսնու աճյունը ամփոփել գերեզմանատանը՝ եկեղեցու գավթում⁴⁷:

1914 թ. ապրիլի 26-ին գործակալ Բագրատ քահանա Սուքիասյանցը «Մշակ» լրագրի միջոցով իր շնորհակալությունն էր հայտնել. «Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի պա. Արտաշես Համբարձումեան Էնֆիաճեանին, Սղնախաքաղաքացի Սարգիս Միմեօնեան Միմեօնեանցին, Յղնայ գիւղացի Գրիգոր Գաբրիէլեանին, որոնցից առաջինը իւր հաշուով շինեց աւանիս Ս. Աստուածածին եկեղեցույ յատակը տոմիտ քարով, երկրորդն՝ վերնատունը

ամբողջովին և երրորդը՝ բեմի վրայ եղած պատկերները. նաև աւանիս ու Ղօթախչ գիւղի այն բարեպաշտ նուիրատուներին, որոնք իրանց տուած լումաներով նպաստեցին եկեղեցուս վերանորոգութեանը»⁴⁸:

Եկեղեցին գործել է մինչև 1923 թ. օգոստոսի 30-ը⁴⁹. 1985-1986 թթ. դեռ կանգուն էր: Ավերելուց հետո տեղում սրճարան է կառուցվել:

Եկեղեցական իրեր. 1908 թ. եկեղեցուն նվիրաբերվել են նոր իրեր. «Յղնայ գիւղացի Վաճառական պ. Գրիգոր Գաբրիէլեանը, տեսնելով մեր եկեղեցու անշուք և չքաւոր դրութիւնը, ընծայեց տեղիս ս. Աստուածածին եկեղեցուն արծաթեայ ոսկեջրած աղանի 120 ռուբ. արժողութեամբ»⁵⁰:

1911 թ. ծխական քահանա Բագրատ Սուքիասյանցն ու երեցփոխ Հովհաննես Հարությունյանը մասնովի միջոցով իրենց շնորհակալությունն էին հայտնել թիֆլիսեցի վաճառական Գևորգ Չիլինգարյանցին, որը Լագողեխի եկեղեցու վարագույրի համար նվիրել էր 67 ռ. 50 կոպ. արժողությամբ 34,5 արշին թավիշ⁵¹:

Քահանա. Բագրատ Սուքիասյանցը քահանայագործել է 1900-1911 թթ.⁵²: Ինչպես ասվեց, կրոն և երգեցողություն է դասավանդել տեղի դպրոցում: Մեծ է եղել նրա դերը նաև եկեղեցու վերանորոգման գործում:

1923 թ. հիշվում է քահանա *Ղուկաս Տեր-Խաչատրյանը*⁵³:

Ռուսական եկեղեցի. հիմնադրվել է 1866 թ., սակայն 1893 թ. դեռևս կիսաշեն էր. «Լագողեխում իւր մեծութեամբ ու բարձրութեամբ իսկոյն աչքի է ընկնում ռուսաց աղիսաշէն անաւարտ եկեղեցին, որ հիմնարկուած է 1866-ին, բայց ճեղքուածների պատճառով ...մնացել է պարապ»⁵⁴:

Վրացական եկեղեցի. հիշվում է 1893 թ.⁵⁵:

44 Նույն տեղում, 1893, № 74, էջ 2:

45 «Մշակ», 1900, № 22, էջ 3:

46 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3437, թ. 3: Ի դեպ, Կ. Մ. Կալատուզյանցը սպանվել էր 1910 թ. մարտի 20-ին («Մշակ», 1910, № 98):

47 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3437, թ. 3:

48 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 639, թ. 26:

49 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, թ. 11: Մեկ այլ վավերագրի համաձայն՝ եկեղեցին փակվել է 1923 թ. մարտին (ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 463, թ. 58):

50 «Մշակ», 1908, № 20, էջ 3:

51 «Սուրհանդակ», 1911, № 5:

52 «Մշակ», 1900, № 22, էջ 3, «Սուրհանդակ», 1911, № 5:

53 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 463, թ. 58:

54 «Նոր-Դար», 1899, № 34, էջ 3:

55 Նույն տեղում, 1893, № 176, էջ 3:

ԴԵԴՈՓԼԻՍ-ԾՂԱՐՈՅԻ ՇՐՋԱՆ

Կախեթի ամենաընդարձակ վարչական միավորն է: Սահմանակից է Վրաստանի Հանրապետության Սղնախի և Ադրբեջանի Հանրապետության Ջաքաթալայի, Կախի, Խանլարի, Թուրքի և Ղազախի շրջաններին: Ջրադեցնում է 2529,2 կմ² մակերես, ունի 17 բնակավայր, որոնցից չորսում եղել է նաև հայ բնակչություն: Այս շրջանում է գտնվում Կախեթի ցարդ զուտ հայաբնակ, հայախոս հայերի միակ գյուղը՝ Սաբաթլուն:

ԴԵԴՈՓԼԻՍ-ԾՂԱՐՈ (ԾԻԹԵԼԻ-ԾՂԱՐՈ)

Պատմություն. Դեդոփլիս-Շղարոն (հայերեն քարզմ.՝ քազուխու աղբյուր) հիմնադրվել է ԺԹ դարի կեսերին: 4 անգամ անվանափոխվել է. նախապես կոչվել է Դեդոփլիս-Շղարո, հետո՝ Յարսկիե-Կոլոդցի, խորհրդային տարիներին՝ Կրասնիե-Կոլոդցի, այժմ՝ Դեդոփլիս-Շղարո¹: Թուրքերը կոչում էին Թուքուրմիշ²:

Հայերը Դեդոփլիս-Շղարոյում. ռուսական գործառնոցի շուրջ գոյացած այս փոքրիկ ավանում, բնակչության մեծ մասը նախապես եղել են ռուսներ: Այդպես էր 1874 թ., երբ 953 բնակիչներից 915-ը ռուսներ էին և 38-ը՝ լեհ³: Տասը տարի հետո՝ 1884 թ., Յարսկիե-Կոլոդցիում հիշվում են 20-25 տուն սղնախցի հայեր, որոնց գլխավոր զբաղմունքն առևտուրն էր⁴: 1885 թ. նրանց թիվը 105 շունչ էր (52 ար. և 53 իգ.)⁵: 1899 թ. հայերը 30 տուն էին⁶, 1908-ին՝ 36 տուն, 134 շունչ (82 ար. և 52 իգ.)⁷, 1913-ին՝ 80 տուն⁸: 1914 թ. բոլոր ազգությունների ընդհանուր թիվը 2030 էր⁹, ըստ այդմ՝ հայերը կազմում էին ողջ բնակչության մոտ 1/10 մասը: 1915 թ. ավանում բնակվում էր 30 տուն հայ¹⁰: 1916 թ. ավանի 395 տուն բնակիչներից 300-ը ռուսներ էին, 65-ը՝ վրացիներ և 30-ը՝ հայեր. «Հայերը բնակում են այստեղ մոտ 40 տարի, պարապում են վաճառականութեամբ, խօսում են վրացերեն, բացառութեամբ 6 տուն զոկերի: Նրանք գաղթել են զանազան տեղերից. մեծամասնութիւնը Սղնախից»¹¹:

1918-21 թթ. ընթացքում գյուղը համարվել է Շաքի և Արեշ գավառների հայկական ավերված բազմաթիվ գյուղերից (Դաշբուլաղ, Սաբաթլու, Վարդաշեն, Ջաֆարաբաղ, Գյոգ-բուլաղ և այլն) փրկված հայերի հաշվին:

1988 թ. Դեդոփլիս-Շղարոյում բնակվում էին շուրջ 400 տուն հայեր, որոնցից 50-ը՝ վրացախոս:

Դպրոց. հայտնի է, որ 1884-85 թթ. երեցփոխ Արտեմ Օթարյանը գյուղում կառուցել էր քարաշեն պատշգամբներով 4 սենյակից բաղկացած շենք՝ նպատակ ունենալով այդտեղ 1891-ից բացել ծխական դպրոց¹²: Ավանի փոքրաթիվ հայերին, սակայն, դա հաջողվում է իրականացնել միայն 1893 թ.: Դպրոցի բացումը տեղի է ունեցել սեպտեմբերի 26-ին, և այն օծվել է «Խրիմյան» անվամբ¹³: 1894 թ. ունեցել է 1 ուսուցիչ և 23 աշակերտ (բոլորն էլ տղաներ)¹⁴: Ի դեպ, այդ ընթացքում դպրոցի գոյությանն էպես նպաստել էր երեցփոխ Ա. Օթարյանը, որն «...իր հաշիվ պահել է դպրոցը, ծախսերով երեք տարում մոտ 1700 ռ.: Դպրոցի շարժական գույքը ձեռք է բերված Օթարեանի միջոցներով: Շինութիւնը արժէ մոտ 2000 ռ.»¹⁵: 1895-ին կառավարության հրամանով փակվել է ու վերաբացվել միայն 1909 թ. աշնանը¹⁶: 1911 թ. դպրոցը երկսեռ էր, քառամյա՝ 1 դասարանով, ուներ 1 ուսուցիչ և 23 աշակերտ (11 տղա ու 12 աղջիկ)¹⁷: 1914 թ. ուներ 1 ուսուցիչ և 16 աշակերտ¹⁸: Նույն թվականին օրիորդ Կատարինե Լիանոզյանը դպրոցին նվիրել էր «Հասկեր» պարբերականը¹⁹: 1916/17 ուստարում դպրոցը գործել է Կովկասի հայոց բարեգործական ընկերության տրամադրած 150 ռուբ. նպաստի շնորհիվ²⁰:

1 “Заря Востока”, 06.03.1983, с. 4.

2 “Кахетия. приложение к справочной книге старожила”, с. 79.

3 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.

4 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 3, ք. 1:

5 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3879, ք. 225:

6 Նույն տեղում, գ. 3905, ք. 243:

7 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

8 «Մշակ», 1913, № 60, էջ 3:

9 “Кавказский календарь на 1915 г.”, с. 200.

10 «Մշակ», 1915, № 4, էջ 4:

11 «Համբարաբեր», 1916, № 20, էջ 621:

12 «Մշակ», 1890, № 111, էջ 2:

13 «Նոր-Դար», 1893, № 173, էջ 3:

14 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, ք. 99, նաև՝ գ. 3896, ք. 34:

15 «Մշակ», 1910, № 199:

16 «Համբարաբեր», 1916, № 20, էջ 621:

17 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 58:

18 **Խորոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 608:

19 «Մշակ», 1914, № 55, էջ 3:

20 «Համբարաբեր», 1916, № 33, էջ 1035:



ԴԵՂՈՓԼԻՍ-ԾՂԱՐՈ. Սբ. Աստվածածին եկեղեցին արևմուտքից և հյուսիս-արևելքից

Գրադարան-ընթերցարան. բացվել է 1910 թ.²¹: 1916 թ. գրադարանն արդեն ուներ 500 կտոր գիրք, գրադարանավարը Հակոբ քին. Գրիգորյանն էր²²:

Եկեղեցի. հայ վերաբնակիչները 1880-ականների սկզբներին արդեն ձեռնամուխ էին եղել եկեղեցու շինարարական աշխատանքներին: Հայտնի է, որ այդ աշխատանքներն սկսվել էին 1883 թ., բայց ընդհատվել էին դրամական միջոցների սղության պատճառով²³: 1884 թ. եկեղեցին դեռևս կիսաշեն էր²⁴, իսկ մեկ տարի անց արդեն նշվում է՝ «Սբ. Ա(ստուա)ծածնի եկեղեցի Հայոց Յարսկի-Կոլոդցի նորաշեն»²⁵: Օծման հանդեսը կատարվել էր 1885 թ. մայիսի 11-ին²⁶: Եկեղեցու կառուցման գործում զգալի դեր են կատարել Գրիգոր քահանա Մատինյանցը և երեցփոխ Արտեմ Օթարյանը²⁷: Այդ առումով գնահատելով վերջինիս ծառայությունը՝ տարիներ անց ժամանակի մամուլում նշվել է. «...Օթարեանը ջերմ մասնակցություն է ունեցել եկեղեցու կառուցման գործում, ծախսելով և իր փողերը, գեղարունեստական ճաշակով զարդարել է և ներկել տուել եկեղեցին, ծախսելով մոտ 1500 ռ., որը հաւաքել էր կշեռքի կապալից կօպէկ-կօպէկ»²⁸:

1893 թ. եկեղեցու գավթում թաղված ուսանող Նիկողայոս Պաստյանի հայրը՝ սղնախեցի 2-րդ կարգի վաճառական Դավիթ Պաստյանը, որդու հիշատակը հավերժացնելու մտադրությամբ 1906 թ. ըսկսում է զանգակատուն կառուցել: Ծինարարությունը

ձգձգվում է մինչև 1910 թ. և մնում է անավարտ, քանի որ ինքն էլ սպանվում է Սուրամում²⁹: Ի դեպ, լրագրային մեկ այլ հաղորդման համաձայն էլ զանգակատան կառուցումն ավարտվել է 1910 թ. (ծախսը կազմել է 1500 ռուբ.), և մնում էր միայն զանգը, որը ևս հուսով էին, թե պիտի գներ մույն բարեգործ Դավիթ Պաստյանը³⁰: Հարկ է նշել, որ եկեղեցու, նաև դպրոցի նորոգման համար 1913 թ. ծախսվել է 200 ռուբ.³¹:

1914 թ. Հակոբ քահանա Գրիգորյանը շնորհակալություն էր հայտնել մի շարք նվիրատուների, որոնք եկեղեցուն նվիրել էին բուրվառ (Ծղալոբ Բեժանյանը), գրքակալ (Հովհաննես Թանդիլյանը), խաչվառ (Ստեփան և Լևոն Ամիրյանցները) և արծաթե մասնատուփ (Գրիգոր Դավթյանը)³²:

Ճարտարապետություն. Սբ. Աստվածածին եկեղեցին ցայսօր կանգուն է: Այն աղյուսաշեն միանավ թաղածածկ հասարակ կառույց է: Արտաքին չափերն են՝ 14,95 x 8,35 մ:

1988 թ. գտնվում էր անխնամ վիճակում և վերածվել էր աղբանոցի:

Գերեզմանոց. եկեղեցու շուրջը տարածված գերեզմանոցը ևս ավերված է: Տեղում կար միայն մի սրբատաշ սալատապան (չափերը՝ 75 x 67 սմ)՝ ռուսերեն հետևյալ արձանագրով.

Под симъ камнемъ покоится прахъ княгини Ефемии Араловой, родившаяся 1822 года, 19-го марта, скончалась 1884 года 11-го января.

Թարգմ. Ներքո վիմիս հանգչում է իշխանուհի Եֆիմիա Արալովի մարմինը, ծնված 1822 թ. մարտի 19-ին, վախճանված 1884 թ. հունվարի 11-ին:

21 Նույն տեղում, № 20, էջ 621:

22 Նույն տեղում, էջ 621, 622:

23 «Մշակ», 1883, № 142, էջ 2-3:

24 ՀԱԱ, ֆ. 222, ց 1, գ. 3, ք. 1:

25 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3879, ք. 225:

26 «Նոր-Դար», 1885, № 82, էջ 2:

27 «Մշակ», 1890, № 111, էջ 2:

28 Նույն տեղում, 1910, № 199:

29 Նույն տեղում, 1914, № 85, էջ 2:

30 Նույն տեղում, 1910, № 98:

31 Նույն տեղում, 1913, № 161, էջ 3:

32 Նույն տեղում, 1914, № 55, էջ 3:



ԴԵՂՈՓԼԻՍ-ՃՂԱՐՈՒ. Որդու՝ Նիկողայոսի հիշատակին Սբ. Աստվածածին եկեղեցու զանգակատունը կառուցած սղնախեցի 2-րդ կարգի վաճառական Դավիթ Գեորգի Պաստյանը (կենտրոնում կանգնած)

Քահանա. Հակոբ Գրիգորյան. հիշվում է 1911-1916 թթ³³:

Ռուսական եկեղեցի. հիշվում է 1885 թ.³⁴:

Ամբոց. Ի դարի սկզբին գյուղի մերձակայքում՝ բարձր ժայռի վրա, տեսանելի են եղել Թամար թագուհու ամբոցի ավերակները³⁵:

ՍԱՂԽԱՆ (ՎԵՐԻՆ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հյուսիս-արևմուտք, համանուն ներքին գյուղից 1-1,5 կմ դեպի հարավ-արևմուտք:

Հայերը Վերին Մաճխանում. փոքրաթիվ հայերն այստեղ հիշվում են 1842 թ-ից³⁶: 1908 թ. հայ համայնքը բաղկացած է եղել 3 տնից՝ 11 շունչ (7 ար. և 4 իգ.)³⁷, 1912-ին էլ՝ 4 տնից³⁸: Այնինչ Վերին Մաճխանը Մղնախի գավառի ամենամարդաշատ գյուղերից էր. այսպես, 1874 թ. 3692 բնակչի³⁹ դիմաց 1914 թ. արդեն ուներ 5500 շունչ (վրացիներ)⁴⁰:

33 «Արարատ», 1911, էջ 269, «Մշակ», 1914, № 55, էջ 3, «Համարաբեր», 1916, № 20, էջ 622:

34 «Նոր-Դար», 1885, № 82, էջ 2:

35 «Համարաբեր», 1916, № 20, էջ 621:

36 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, ք. 94:

37 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

38 «Մշակ», 1912, № 182, էջ 3:

39 «Кавказский календарь на 1886 г.», с. 118.

40 «Кавказский календарь на 1915 г.», с. 156.

ՄԻՐՉԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հյուսիս-արևմուտք՝ արևելյան կողմից կից է Վերին Մաճխան գյուղին:

Հայերը Միրզաանում. գյուղում նրանց ներկայությունը վկայված է արդեն ԺԸ դարի սկզբներից. հայտնի է, որ 1720 թ. Մղնախի Սբ. Ստեփանոս վրացական եկեղեցու մոտ գտնվող հողամասի գնման (հայոց գերեզմանոց հիմնելու նպատակով) պայմանաթղթի վկան և գրության շարադրողը միրզաանցի Հովհաննեսն էր⁴¹:

Հայ բնակչության առկայությունը գյուղում փաստված է նաև 1802 թ.⁴²: 1874 թ. գյուղի 2172 բնակիչներից հայեր էին 16-ը⁴³: 1908 թ. գյուղի հայ համայնքը բաղկացած էր 4 տնից՝ 19 շունչ (9 ար. և 10 իգ.)⁴⁴, իսկ 1912-ին՝ 8 տնից⁴⁵:

1914 թ. գյուղն ուներ 3301 բնակիչ⁴⁶: Հասկանալի է, որ եթե հայեր էլ եղել են, ապա խիստ փոքրաթիվ:

41 Մատենադարան, կաթ. դիվան, քղթ. 1, վավ. 9:

42 АКАК, т. 1, с. 474.

43 «Кавказский календарь на 1886 г.», с. 118.

44 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

45 «Մշակ», 1912, № 182, էջ 3:

46 «Кавказский календарь на 1915 г.», с. 158.

Ծնունդով այս գյուղից է վրաց հայտնի նկարիչ Նիկո Փիրոսյանին (1862-1918)⁴⁷:

ՍԱԲԱԹԼՈՒ (ԾԻԹԵԼԻ-ՍԱԲԱԹԼՈ)


Տեղադրություն. գտնվում է շրջանի հարավարևելյան ծայրում՝ Ալազան գետի աջ ափից ընդամենը 1,5-2 կմ հեռու՝ լայնատարած Շիրակի դաշտավայրում:

Գյուղի հիմնադրումը. հիմնադիրները եղել են 1918 թ. Շաքիի գավառի հայաբնակ մի քանի գյուղերից, առանձնապես Սաբաթուից թուրքական բանակի ներխուժումից մազապուրծ հայ գյուղացիները: Հայտնի է, որ վերջիններս, անցնելով Ալազան գետը, անասելի դժվարությունների ու զոհերի գնով

ջարդերի «վրացական» տարբերակից, որոնք էլ հենց 1918 թ. հիմնադրեցին Սաբաթու գյուղը: Ըստ էության, սակայն, գյուղը կազմավորվեց 1922-23 թթ.⁴⁹:

Նոր-Սաբաթու. Նոր Սաբաթուի կամ, ինչպես վրացիները կոչեցին, Ծիթելի-Սաբաթու (Կարմիր-Սաբաթու) գյուղի հայերի առաջին սերնդին բաժին հասած անասելի դժվարությունները ժամանակի ընթացքում հաղթահարվեցին. գյուղամերձ տափաստանը վերածվեց բարեբեր ու ծաղկուն օազիսի:

Գյուղաց. 1920-ական թվականների վերջին գյուղում բացվեց ազգային դպրոց, որի աշակերտների թվաքանակը՝ բնակչության ծայր առած արտա-



ՍԱԲԱԹԼՈՒ. գյուղի ընդհանուր տեսքը

մի կերպ հասել էին Յարսկի-Կոլոդցի, բայց վրացական իշխանությունները թշվառներին զենքի ուժով ստիպել էին ետ դառնալ Ալազանի աջափնյա անբնակ տափաստանները. «...Սղնախի գավառական ոստիկան Տղեմալաձեն մտրակով և հրացանի խզակոթով հայ կանանց և երեխաներին Յարսկի-Կոլոդցից քշեց անբնակ տափաստաններ...»⁴⁸: Արդյունքում՝ թուրքական սվիններից հրաշքով փրկված մի քանի հազար հայեր մերկ ու քաղցած հայտնվեցին Շիրակի լայնարձակ ու անջուր տափաստանում և մեծագույն մասով զոհվեցին: Սոսկ մի քանի ընտանիք հրաշքով փրկվեց հայկական

գաղթի հետևանքով (գլխավորապես դեպի Հայաստանի Հանրապետություն), 1960-ական թվականների վերջերից նվազում է (1967 թ. ուներ 270 աշակերտ, 1974-ին՝ 198, 1977-ին՝ 155, իսկ 1988-ին՝ 91):

Գերեզմանոց. Նոր Սաբաթու գյուղի գերեզմանոցում, բնականաբար, հին շիրմաքարեր լինել չէին կարող, բայց բնակիչներից մի քանիսը, անցնելով Ալազան գետը, հասել են Հին Սաբաթու և այդտեղից փոխադրել իրենց հարազատների մի քանի շիրմաքարեր (մեր տեսածներից երկուսը կրում էին 1906 և 1914 տարեթվերը):

47 «ՀՄՀ», հ. 12, Երևան, 1986, էջ 342-343:

48 Чалхушьян Гр., Красная книга, Ростов на Дону, 1919, с. 163 (բնագրում՝ "...сигнахский уездный исправник Ткемаладзе плетью и ружейными прикладами гнал из Царских Колодцев армян в безлюдные степи женщин, детей..."):

49 Գյուղի մասին ավելի մանրամասն տե՛ս Կարապետյան Ս., Սաբաթու. հայախոս հայերի միակ գյուղը Կախեթում.– «Հատաստանի Հանրապետություն», 1995, № 205, էջ 2:

ՂՎԱՐԵԼԻ ՇՐՋԱՆ

Սահմանակից է Վրաստանի Հանրապետության Թելավի, Գուրջաանի, Լագոդեխի շրջաններին և Ռուսաստանի Դաշնության Դաղստանի Ինքնավար Հանրապետությանը: Ջրաղեցնում է 1000,8 կմ² մակերես, ունի 17 բնակավայր, որոնցից 13-ում առկա է նաև հայ բնակչություն: Շրջկենտրոնը Ղվարել քաղաքն է:

ԱՂՏԳՈՍԱ					1862 ¹⁵	2	2	4	
Տեղադրություն. գտնվում է Ալազանի հովտում:					1863 ¹⁶	2	2	4	
Հայերը Աղտզոմայում. Փաշասան, Շիլդա, Ձեգասան և Աինճրիան գյուղերի հետ ԺԹ դ. կազմում էր մեկ հասարակություն: Թեև վիճակագրական հայտնի տվյալներում հայ բնակչությունը ցույց է տրված խիստ սակավաթիվ, սակայն արդեն 1840 թ. գյուղում գոյություն ունեցող հայոց գերեզմանատունը և քարաշեն եկեղեցին վկայում են, որ մինչ այդ, գուցեև ԺԸ դարից ի վեր, գյուղում հայ բնակչությունը եղել է մեծաթիվ:					1864 ¹⁷	2	2	4	
Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայերի թվաքանակն ըստ հետևյալ տարիների.					1865 ¹⁸	1	3	2	5
տարեթիվ	տուն	արական	իգական	միասին	1867 ¹⁹	2	3	5	
1818 ¹	3	8	11	19	1870 ²⁰	2	5	7	
1841 ²		5	4	9	1873 ²¹	2	5	7	
1843 ³		6	3	9	1875 ²²	2	5	7	
1844 ⁴		6	3	9	1876 ²³	2	5	7	
1845 ⁵		6	3	9	1877 ²⁴	2	5	7	
1847 ⁶		6	5	11	1878 ²⁵	2	5	7	
1849 ⁷		5	2	7	1880 ²⁶	2	5	7	
1852 ⁸		6	4	10	1881 ²⁷	2	5	7	
1853 ⁹		2	2	4	1882 ²⁸	2	5	7	
1854 ¹⁰		2	2	4	1883 ²⁹	2	5	7	
1857 ¹¹		2	2	4	1885 ³⁰	1	5	6	
1858 ¹²		2	2	4	1889 ³¹	2	6	8	
1860 ¹³		2	2	4	1890 ³²	2	6	8	
1861 ¹⁴		2	2	4	1891 ³³	3	5	8	
					1892 ³⁴	3	6	9	
					1893 ³⁵	3	6	9	
					1894 ³⁶	3	6	9	
					1898 ³⁷	6	7	13	

1 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 26:
 2 Նույն տեղում, գ. 3802, ք. 42-43:
 3 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:
 4 Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46:
 5 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:
 6 Նույն տեղում, գ. 3814, ք. 6768:
 7 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:
 8 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:
 9 Նույն տեղում, գ. 2743, ք. 125-126:
 10 Նույն տեղում, գ. 3825, ք. 7-8:
 11 Նույն տեղում, գ. 3890, ք. 129-130:
 12 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:
 13 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 14 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:

15 Նույն տեղում, գ. 3836, ք. 6:
 16 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:
 17 Նույն տեղում, գ. 3846, ք. 13:
 18 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23, 54:
 19 Նույն տեղում, գ. 3851, ք. 3:
 20 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:
 21 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:
 22 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:
 23 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:
 24 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:
 25 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:
 26 Նույն տեղում, գ. 3872:
 27 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:
 28 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:
 29 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:
 30 Նույն տեղում, գ. 3877, ք. 33:
 31 Նույն տեղում, գ. 3884, ք. 5:
 32 Նույն տեղում, գ. 3887, ք. 139:
 33 Նույն տեղում, գ. 3889, ք. 138:
 34 Նույն տեղում, գ. 3891, ք. 110:
 35 Նույն տեղում, գ. 3895, ք. 27:
 36 Նույն տեղում, գ. 3896, ք. 163-164:
 37 Նույն տեղում, գ. 3897, ք. 159:.

1899 ³⁸	6	8	14
1900 ³⁹	7	8	15
1901 ⁴⁰	8	9	17
1902 ⁴¹	9	10	19
1906 ⁴²	4	5	9
1908 ⁴³	1	4	8
1910 ⁴⁴	10	7	17
1912 ⁴⁵	1	11	20

1914 թ. գյուղի բնակչության թիվը կազմում էր 175 մարդ⁴⁶, որի մեծագույն մասը վրացիներ էին:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Պետրի որդի՝ Խօսրօ, Սօլօման և Նօնի, մայր՝ Թամար, Խօսրօյի կինն՝ Նաթել, որդիք՝ Փրիդօն, Սիմօն և Ռօստօմ, դստերք՝ Մայիա և Մարթայ, Սօլօմանի կինն՝ Թինաթին, դուստր՝ Սաբեդ:

2. Պղնձագործ Խիթար, կինն՝ Էլիսաբեդ, դստերք՝ Սօփիօ և Մայիա:

3. Գանջել Արզուման, կինն՝ Ռուստոյան, դուստր՝ Մարիամ»⁴⁷:

Եկեղեցի. վկայված է Սբ. Սարգիս անվամբ: Ընդհուպ 1910-ական թվականները բազմիցս հիշվում է վավերագրերում միևնույն անվամբ:

Քահանա. գյուղին հովվել են հարևան բնակավայրերի քահանաները: Այսպես, 1818 թ. Աղտոմայի հայ ծխականների հոգևոր պետքերը հոգում էր Լոմխիցիսի քահանան՝ *Տեր-Հովսեփ Տեր-Ղազարյանը*⁴⁸:

ԳՐԵՄ (ԳՐԻՄ)

Տեղադրություն. Կախեթի երբեմնի մայրաքաղաքի ավերակները գտնվում են շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևմուտք՝ Ալազան գետի ձախ կողմում, գետափից 3 կմ հեռու՝ Ինցոբա վտակի աջ կողմում, ծովի մակերևույթից 450-550 մ բարձրության վրա:

Քաղաքատեղիին արևելքից այժմ կից են Ենիսել և Գրեմ գյուղերը, արևմուտքից (4 կմ հեռու) Շաքրիանն է:

Պատմություն. Գրեմը՝ որպես բնակավայր, իսկ 1466-ից նաև մայրաքաղաք, ձևավորվել է ԺԵ դարում⁴⁹: Այդ են վկայում քաղաքատեղիի տարածքում հնագետ Պ. Չաքարայայի գլխավորությամբ իրականացված պեղումներն ու համակողմանի ու-

սումնասիրությունները⁵⁰: Գրեմի քաղաքային բնակավայր դառնալուն՝ և ապա դրա զարգացման ու բարգավաճման գործում առանձնահատուկ դեր էր վերապահված կենցաղի՝ հատկապես քաղաքային կերպին սովոր ու դեպի դրան ձգտող հայ բնակչությանը: Արհեստներն ու առևտուրը, որի գոյության պայմաններում ցանկացած բնակավայր քաղաքի կերպարանք է ստանում, Գրեմում կենտրոնացած էր հայերի ձեռքում: Հայոց եկեղեցիների և բնակելի խիտ կառուցապատումների հատվածում առկա են իջևանատների և առևտրական համալիրների մնացորդները:

Սկզբնաղբյուրների համակողմանի քննությունը հնարավորություն է ընձեռում նախ ասելու, որ Գրեմը հայ բնակչություն է ունեցել դեռևս ԺԵ դարում^{50ա}, և ապա, որ նրանց թիվն էլ ավելի է սովորացել ԺԶ դարի ընթացքում: 1640-ական թվականներին ռուսական դեսպանության հավաքած տվյալների համաձայն՝ քաղաքի նույնիսկ այն տեղը, որտեղ 1565 թ. Լևան թագավորի նախածեռնությամբ կառուցվել էր վրաց Սբ. Հրեշտակապետաց եկեղեցին, զանգակատունն ու միջնաբերդը⁵¹:

Ծաղկուն ու վաճառաշահ քաղաքի կարգավիճակը Գրեմը պահպանեց մինչև ԺԷ դարի սկզբները, այն է՝ Շահ-Աբասի 1614 և 1616 թթ. ավերիչ արշավանքները: Այդ մասին Առաքել Գավրիժեցին գրում է. «...եղին Պարսիկքն ի վերայ ամրոցաց նոցա, և զբազում ատուրս պէս պէս հնարիք մարտ եղեալ ընդ ամրոցացն մինչև յաղթեալ առնուին, և սուր ի վերայ եղեալ անխնայ կոտորէին, իբրև պաշտօն բարի մատուցանել Աստուծոյ համարէին, ըստ վկայութեան տեսոն: Ապա զինչս և զստացուածս կողոպտեալ յաւարի առնուին, և զմնացեալ կանայս և զմանկունս նոցա գերեալ ածէին ի բանակն իւրեանց: Եւ որպէս ասացի, յատուրս յիսուն կացեալ անդէն, ոչ մնաց ամրոց՝ որ ոչ առին. և կամ տեղի, որ ոչ աւերեցին, և միահաղոյն յաւեր և յապականութիւն դարձուցին զամենալի և գյուղի և զբազմամարդ աշխարհն Կախեթու և Գրիմու:

Եւ զԿախեթու և զԳրիմու եկեղեցեաց անօթն և զսրբութիւնսն, խաչ՝ և սկիհ՝ և աւետարան՝ և բուրվառ՝ և շուրջառ՝ և զայլ անօթս և զսրբութիւնս, որք էին մեծածախք և ծանրագինք, և զանազան յորինուածովք ակամբք և մարգարտովք յորինեալք, հրամայեաց շահն վասն նոցա՝ զի մի խորտակեսցեն, այլ տանել ի քաղաքն Սպահան և դնել ի զանձարանն արքունի...:

38 Նույն տեղում, գ. 3903:
 39 Նույն տեղում, գ. 3905, թ. 8:
 40 Նույն տեղում, գ. 3906, թ. 2
 41 Նույն տեղում, գ. 3907, թ. 13-14:
 42 Նույն տեղում, գ. 3915, թ. 6:
 43 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 21:
 44 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 5:
 45 Նույն տեղում, գ. 853, թ. 9, գ. 3919, թ. 52-53:
 46 "Кавказский Календарь, на 1915 г.", с. 83.
 47. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 26:
 48 Նույն տեղում:
 49 **Месхиа III. А.**, Города и городской строй феодальной Грузии XVII-XVIII вв., Тбилиси, 1959, с. 101. **Закарая II.**, նշվ. աշխ., էջ 34-35:

50 **ზაქარაია პ.**, ნაქალაქარო ვრემის არქიტექტურა, თბილისი, 1975.
 50ა **Мурадян П. М.**, նշվ. աշխ., էջ 153-154:
 51 "Материалы по истории грузино-русских взаимоотношений (1615-1640). Посольства, Харитона, Феодосия, Никифора, Геченева и Волконского". Документы к печати подготовил и предисловием снабдил Поливектов М., Тбилиси, 1937, с. 379.



ԳՐԵՄ. տեսարան քաղաքատեղիից, իջևանատունն ու հարավարևմտյան դարպասը վերականգնումից հետո (1988 թ.)



ԳՐԵՄ. խաչքարի բեկորներ Սբ. Հրեշտակապետաց եկեղեցու զանգակատան վերնահարկում (1559 թ.)




ԳՐԵՄ. Սք. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից՝ նորոգումից առաջ (լուս. 1985 թ.)





Եւ զքնակիչսն Կախէթու և Գրիմայ սպառեաց, զոմանս սպանմամբ, զոմանս գերութեամբ. և որք մնացին և գրեցան շահխտեվան հրաման արար վասն նոցին զամենեսեան արտասահման առնել և քշել տանել ի Պարսկաստուն: Եւ կարգեաց ի վերայ այսմ գործոյ զիշխանս և զօրս որ առաջին գրովն և թղթովն, զոր գրեցին զանուանս նոցա և առ ինքեանս ունէին, այն գրովն սկսան քննել զամենեսեան ընտանեօք իւրեանց, և զամենայն գնոսս իւրեանց ընտանեօք և ստացուածովք յիւրաքանչիւր տեղեաց հանել. և զորս հանէին բերեալ բանակեցուցանէին յայն Կուր գետոյն՝ ի տեղին, որ անուանի Ղազբին. քանզի անդէն սահմանեցին բանակետեղ, այսպէս արարին մինչև զամենայն շահխտեվան գրեալքն հանին: Եւ յորժամ եղև զրաւ հանե-

լոյն՝ նոյն գրովն և մատենին չուեցուցեալ անտի՝ և քշեցին տանել յաշխարհն Պարսից, և բերեալ հասուցին մինչև ի Ղազբին քաղաք. և անտի տարան ի քաղաքն Ֆահրապատ: Յորժամ հասուցին ի Ֆահրապատ, զոմանս ի նոցանէ ի մէջ Ֆահրապատու քաղաքին բնակեցուցին, թէ ի Վրաց և թէ ի Հայոց, թէ ի Սահմետականաց, թէ ի Ջիտաց, և զայլս բազումս ի նոցանէ բնակեցուցին ի գեղօրայսն, և ետուն սոցա ամենեցուն զտեղիս տանց և այգեստանաց՝ և անդաստանաց: Եւ այսու կերպիւ աւերեաց զաշխարհն Վրաց, Կախէթու և Գրիմու, և տարեալ ելից յերկիրն Ֆահրապատու»⁵²:



⁵² Առաքել Դարբիճեցի, Գիրք Պատմութեանց, Երևան, 1990, էջ 131, 137:



ԳՐԵՄ. Սր. Աստվածածին եկեղեցու տեսքը 1988 թ.՝ նորոգման ընթացքում և 1998 թվականին



ԳՐԵՄ. Սր. Աստվածածին եկեղեցու կտրվածքը դեպի արևելք և հարավ



ԳՐԵՄ. Սր. Աստվածածին եկեղեցու արևելյան, արևմտյան և հյուսիսային ծակատները

ԳՐԵՄ. Սր. Աստվածածին եկեղեցու հատակագիծը



ԳՐԵՄ. գմբեթավոր փոքր եկեղեցու տեսքը արևելքից (լուս. 1988 թ.) և արևմուտքից (վերականգնումից հետո՝ 1999 թ.), թմբուկի տեսքը ներքուստ, հյուսիսային պատը՝ մկրտարանով հանդերձ



ԳՐԵՄ. գմբեթավոր փոքր եկեղեցու հարավային պատի հիշատակագիրը և հենապարիսպը



ԳՐԵՄ. «Պատալոենց» եկեղեցին արևմուտքից, հյուսիս-արևելքից, ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք



ԳՐԵՄ. «Պատալոենց» եկեղեցու արևմտյան ճակտոնը զարդարող երեք խաչքարերը



ԳՐԵՄ. գմբեթավոր փոքր եկեղեցուց արևելք, հենապարսպի հարավահայաց ճակատում ագուցված հողմնահար խաչքարեր

Պարսկական աղբյուրները վկայում են, որ 1614 թ. շահը Կախեթից գերել էր 30.000 շունչ, իսկ 1616-ին ավելի քան 80.000-ին սպանել էր, իսկ 100.000 հոգու գերեվարել Պարսկաստան⁵³:

1616 թ. կործանարար արշավանքից հետո Գրեմը վերածվեց անշուք ու սակավարճակ գյուղի՝ փաստորեն, գոյատևելով շուրջ 150 տարի: Հատկանշական է, որ մոտ քառորդ դար անց՝ 1642 թ. նոյեմբերին, ավերակ քաղաքատեղիում վերահաստատված բնակիչները դարձյալ հայերն էին (մասամբ նաև հրեաները). «...Կրիմը գտնվում է կումիկյան լեռների ստորոտում: ...լեռան ստորոտին կառուցված եկեղեցին հայկական է: Նրա մոտ կա հայկական 3 շեն և 6 ավերակ տուն: Տեղում եղել են նաև

ԳՐԵՄ. «Պատալոենց» եկեղեցին վերականգնումից հետո (1998 թ.),

⁵³ Այդ մասին տես՝ **Мурдян П. М.**, 62վ. աշխ., էջ 156:



ԳՐԵՍ. Խաչքար (1502 թ.) գմբեթավոր փորք եկեղեցուց արևելք տարածված գերեզմանոցում

թվով՝ 5 քարաշեն կրպակներ, բոլորն էլ ավերված...»⁵⁴:

Պատմական հուշարձաններ. Գրեմում հայերն ունեին մի քանի եկեղեցի և գերեզմանատներ: Եկեղեցիների թվաքանակն աղբյուրներում տարբեր է: 1638 թ., օրինակ, հիշվում է թվով 15 եկեղեցի. «Հայկական եկեղեցիների թիվը 15-ն է, բոլորն էլ ամառի»⁵⁵: Խնդրո առթիվ մեկ այլ փաստաթղթում նշված

54 “Посольство князя Мышецкого и дьяка Ключарева в Кахетию: 1640-1643”. Документы издал и введением снабдил М. Полиевктов, Тифлис, 1928, с. 156 (բնագրում “...Крым место стоит под кумышскими горами. ...под горою церковь каменная, армянская. Около ее жилых армянских дворишка с 3 да пустых дворишков с 6. Да тут же бывали лавченка каменные, лавок с 5, все разбиты”).

է. «Քարաշեն 3 եկեղեցիներն առանց խաչերի են: Ըստ պատմողների, այդ եկեղեցիները եղել են հայկական: Նույն տեղում քարաշեն պարսպապատ բակում կար հայկական քառանկյուն եկեղեցի: Թաղը փլված էր, իսկ խորանը աղոթասրահից բարձր էր, այնտեղ կարելի էր բարձրանալ թվով 6 աստիճաններով: Գահաթոռ և զոհասեղան չուներ, միայն պատի մեջ պատրաստված էր բուխարի: Կրիմի և թագավորական պալատի շրջակայքում հայկական եկեղեցիների թիվը հասնում էր 10-ի»⁵⁶: Ինչևէ, էականն այստեղ եկեղեցիների ստույգ թիվը չէ (10 կամ 15), այլ այն, որ քաղաքում, իրոք, կային բազմաթիվ հայկական եկեղեցիներ: Արդեն 1849-ին ականատես Հովհաննես վարդապետ Արշարունին նշել է. «...եկեղեցեաց դեռ ևս բազումք կան կանգուն, և բազումք խոնարհեալք»⁵⁷:

Գրեմի հայոց եկեղեցիների իրական թվաքանակը, սակայն, հնարավոր է պարզել միայն քաղաքատեղիի ողջ տարածքում հետազոտական համապատասխան աշխատանքներ կատարելու միջոցով: Նման ուսումնասիրություններ կատարած վերոհիշյալ հնագետ Պ. Չաքարյան այդ առթիվ նշել է. «Քաղաքի առևտրական մասը, հավանաբար, ունեցել է մեծաթիվ հայ բնակչություն, քանի որ այստեղ գտնվում են շուրջ 10 հայկական եկեղեցիներ...»⁵⁸:

Ստորև ներկայացնում ենք քաղաքատեղիի հայոց եկեղեցիները, որոնց համակողմանի ուսումնասիրությունը կատարել ենք տեղում՝ 1986 և 1988 թթ.:

1. Սբ. Աստվածածին եկեղեցի (Թարսազալավանի). գտնվում է քաղաքատեղիի հարավարևմտյան կողմում: Գրեմի հայոց միակ եկեղեցին է, որը, շնորհիվ արևմտյան ճակատում պահպանված եռալեզու շինարարական արձանագրության, իր վրա է բեռնել բազմաթիվ հետազոտողների ուշադրությունը⁵⁹:

Բազմիցս վերահրատարակված այս «արժանապատիվ» արձանագրության համաձայն՝ եկեղեցին կառուցվել է 1595 թ.⁶⁰: Արժանապատիվ, որովհետև

55 “Материалы по истории грузино-русских взаимоотношений (1615-1640). Посольства Харитона, Феодосия, Никифора, Геченева и Волконского”, с. 378.

56 Նույն տեղում, էջ 286: Տե՛ս նաև՝ **Вейденбаум Е.**, նշվ. աշխ., էջ 387:

57 **Տր Գազարեանց Յովհաննես վարդապետ Արշարունի.** նշվ. հոդվ., էջ 281:


58 **Նախարար Զ.**, նշվ., աշխ., էջ 177:

59 **Գարիպ Մերեմա,** նշվ. հոդվ., էջ 323: **Кикнадзе В.**, նշվ. աշխ., էջ 41-43: “Кахетия, приложение к справочной книге старожила”, էջ 59: Նախարար Զ., նշվ. աշխ., էջ 118-124:


60 **Յանոյ Զ., Գրիգորի Զ.,** სამეცნიერო წარწერა კრემში, ენძიკის მოწამბე”, V-VI, თბილისი, 1940, 5-7: კახეთის ისტორიული ძეგლების წარწერები კრებული შვაგინა და გამნარტვებო დასურთო თეიმურაზ ბარნაველის, თბილისი, 1961, էջ 45-46: **Меликсет-Бек Л. М.,** К толкованию имени “Матарси” Гремской (Грузия) трилингвы конца XVI в.— “Эпиграфика Востока”, Москва-Ленинград, 1966, с. 72-78. **Муральян П. М.,** նշվ. աշխ., էջ 158-163:

եռալեզու (համարյա նույն բովանդակությամբ) արձանագրությունը նախ հայերեն է (մայրենի լեզվով), հետո՝ վրացերեն (երկրի պետական լեզվով) և վերջում՝ պարսկերեն (տարածաշրջանում գերիշխող տերության լեզվով): Երևույթ, որը, ցավոք, բնութագրական չեղավ հետագա, հատկապես ԺԹ-Ի դարերի համար:

Ճարտարապետություն. Սբ. Աստվածածին եկե-



ԳՐԵՍ. գմբեթավոր փոքր եկեղեցու, հենապարսպի, «Պատալունց» եկեղեցու և որմնափակ խաչքարի հատակագիծը



ԳՐԵՍ. եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից և հատակագիծը

ղեցին, որ, իրավամբ, կարող է համարվել Գրեմի հայոց Մայր եկեղեցի, ունի երկմույթ գմբեթավոր բազիլիկի հորինվածք: Առանձնահատուկ լուծում է տրված ավագ խորանին: Այն ունի ինչպես ստորգետնյա, այնպես էլ վերգետնյա հարկ: Խորանի երկու կողմերի ավանդատները կրկնահարկ են: Դրանց մուտքերը առաջին հարկում բացված են սրահի, իսկ 2-րդ հարկում՝ խորանի մեջ: Հյուսիսային պատի մեջ՝ իր ավանդական տեղում է մկրտարանի խորշը: Իսպառ կործանված թմբուկը կանգնած է եղել մեկ զույգ սյուների և մեկ զույգ որմնասյուների վրա: Երեք մուտքերը բացված են հյուսիսային, հարավային և արևմտյան ճակատներից: Կառուցված է անկանոն եզրագծերով, սակայն սրբատաշ մակերեսով քարով, աղյուսով և կրաշաղախով: Ծածկերը կղմինդրապատ են: Արտաքին չափերն են՝ 10,65 x 7,25 մ:




Եկեղեցին ունեցել է ընդարձակ մակերես ներառած շրջապարիսպ: Վերջինս հարավարևմտյան կողմում ունի լայն ու բարձր դարպաս:

Մեր վերջին այցելության ժամանակ (1988 թ.) եկեղեցին առնված էր փայտամածի տակ, և ընթացում էին վերականգնման աշխատանքներ:

2. Գմբեթավոր փոքր եկեղեցի. գտնվում է քաղաքի հյուսիսային սահմանով ձգվող լեռնաճյուղի հարավահայաց լանջին:

Կիսամշակ քարով, աղյուսով և կրաշաղախով կառուցված կենտրոնագմբեթ շինություն է: Խորանի երկու կողմերում մեկական ավանդատներն են, հյուսիսային պատին կից (այլ ոչ պատի մեջ, որ հազվադեպ երևույթ է և հուշում է, որ սկզբնապես ունեցել է տապանատուն- դամբարանի բովանդակություն և հետո է միայն վերածվել ծխականի) մկրտարանն է: Միակ մուտքը արևմուտքից է: Թմբուկը՝ ութանիստ: Ծածկերը՝ կղմինդրապատ: Ներքուստ՝ սփառված: Հատկանշական է, որ եկեղեցին ավելի լայն է, քան երկար (հյուսիս-հարավ՝ 6,18 մ, արևելք-արևմուտք՝ 6 մ): Պատերի մեջ ագուցված են խաչքարեր, այդ թվում արձանագիր⁶¹: Խաչաքանդակ-

61 Мурадян П. М., 62վ. աշխ., էջ 164:




ներ և նվիրատվական բովանդակությամբ արձանագրություն կա նաև հարավային պատի հարթ մակերեսով երեսապատի քարին⁶²:

ՋԾԱ (1502) թվագրությամբ մի խաչքար 1986 թ. նկատել էինք եկեղեցուց քիչ արևելք՝ հայոց գերեզմանատանը: 1988 թ. արդեն անհետացած խաչքա-

62 Նույն տեղում:

ԳՐԵՄ. «Աշտարակավոր» եկեղեցու տեսքը արևմուտքից և հարավ-արևմուտքից: Նույն եկեղեցու հատակագիծը, արևմտյան ճակատը և կտրվածքները դեպի հարավ և




ԳՐԵՄ. Եկեղեցու, մատուռ-զանգակատան և մատուռի, ընդհանուր տեսքը 1976 և 1988 թթ. (արևմուտքից), մատուռ-զանգակատան տեսքն արևմուտքից, որմնափակ խաչքար, խաչքար Եկեղեցու արևմտյան ծակատին և նվիրատվական հիշատակագիր



ԳՐԵՄ. Եկեղեցին արևմուտքից և արևելքից, ներքին տեսքը դեպի արևմուտք և հարավից կից ավանդատուն-սրահի արևելյան ճակատում (արտաքուստ) ազուցված խաչքարերից մեկը

ԳՐԵՄ. Եկեղեցու, մատուռ-զանգակատան, մատուռի և որմնափակ խաչքարի հատակագիծը



րի արձանագրության միակ հրատարակության հեղինակը Պ. Մուրադյանն է⁶³:

Եկեղեցու հյուսիսարևելյան կողմում՝ պարսպապատի հարավահայաց ճակատում ազուցված խաչքարերը մեծավ մասամբ հողմահար վիճակում են:

3. «Պատարտենց» եկեղեցի. գտնվում է գմբեթավոր փոքր եկեղեցուց մոտ 12-13 մ հյուսիս: Թաղակապ հորինվածքով, ավելի մատուռ, քան եկեղեցի հիշեցնող շինություն է: Կառուցված է աղյուսով (արևելյան և արևմտյան ճակատները բացառապես աղյուսաշեն են), անմշակ քարով և կրաշաղախով: Հյուսիսային պատի մեջ պահպանվել է մկրտարանի խորշը: Երկթեք տանիքը կղմինդրապատ է: Հարդարանքի առումով ուշագրավ է արևմտյան ճակա-


63 Նույն տեղում, էջ 165:



ԳՐԵՍ. Եկեղեցու (№ 12) տեսքը հարավ-արևմուտքից, արևմտյան ճակատում ագուցված խաչքարերը և հատակագիծը (չափագրությունը՝ Մ. Հասրաթյանի)

տը, որտեղ ագուցված են գեղաքանդակ և արձանագիր⁶⁴ երեք խաչքարեր: Եկեղեցու արտաքին չափերն են՝ 5,83 x 3,57 մ:

Եկեղեցու խորանի ներսում ամբողջական տեսքով պահպանվել է գեղաքանդակ խաչքար, որի քի-



վին և ստորին մասում մեկական տողով արձանագրված է.

Սուրբ խաչս քարէխասս է Միրոյին:

Եկեղեցուց 3-4 մ արևելք կանգուն է որմնափակ, հողմահար մի խաչքար:

1988 թ. ընթանում էին եկեղեցու վերականգրման աշխատանքներ:

4. Եկեղեցի. գտնվում է քաղաքատեղիի արևմրտյան ծայրում: Թաղածածկ միանավ շենք է՝ արևմտյան ճակատից բացված միակ մուտքով, հյուսիսային պատի մեջ մկրտարանի խորշով, երկթեք ծածկով և որ հատկանշական է, արևմտյան ճակտոնի գագաթին քառասյուն զանգակատնով: Կառուցված

⁶⁴ Նշվ աշխ., էջ 164:




ԳՐԵՄ. Եկեղեցու հարավային մուտքը և նվիրատվական հիշատակագրություն ճակատին

է անմշակ քարով, կրաշաղախով: Սվաղված է եղել ոչ միայն ներքուստ, այլև՝ արտաքուստ: Այնհայտորեն զանգակատունն ավելի ուշ շրջանի հավելում է: Արտաքին չափերն են՝ 5,80 x 4,62 մ:

Մուտքից հյուսիս՝ արևմտյան ճակատում երեսապատի մի քարի վրա, նկատվում են երկտող վիմագրի մնացորդներ (Գորնին / Ա Անե՞):

5. «Աշտարակավոր» (վրաց.՝ «Սակարաուր») **եկեղեցի.** գտնվում է «Պատարեոց» եկեղեցուց մոտ 100 մ հյուսիս-արևելք՝ լեռնաճյուղի ջրբաժան գծում: Ի սկզբանե միանավ թաղածածկ եկեղեցին ավելի ուշ գործածվել է նաև իբրև դիտակետ-պահակատուն. դրա համար հավելվել է 2-րդ հարկ: Վերջինս այժմ կիսավեր է: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Աշտարակի հատվածում՝ մասամբ նաև աղյուսով: Միակ մուտքը արևմուտքից է, դեպի ներս լայնացող լուսամուտները չորս ճակատներում էլ մեկական են: Հյուսիսային պատի մեջ մկրտարանի խորշն է: Արևմտյան ճակատում (արտաքուստ) ագուցված խաչքարերի միայն փոսորակներն են մնացել: Արտաքին չափերն են՝ 6,40 x 4,98 մ:

6. Եկեղեցի. գտնվում է քաղաքատեղիի հյուսիս-արևելյան կողմում՝ ջրբաժան լեռնաճյուղի հյուսիսային ստորոտում՝ վտակի աջ ափին, անտառի մեջ: «Աշտարակավոր» եկեղեցուց հեռու է 150-160 մ: Անմշակ քարով, կրաշաղախով կառուցված թաղածածկ շինություն է: Խորանի երկու կողմերում ունի ավանդատներ, հյուսիսային պատի մեջ՝ մկրտարան: Հարավային և արևմտյան ճակատներում՝ մեկական մուտքեր: Հարավային պատին՝ խաչքարանդակի տակ՝ նվիրատվական երկտող արձանագրություն⁶⁵: Արտաքին չափերն են՝ 9 x 7,32 մ:



ԳՐԵՄ. եկեղեցու (№ 6) հատակագիծը

7-9. Եկեղեցի, մատուռ-զանգակատուն և մատուռ. միմյանց կից են: Գտնվում են վրաց Հրեշտակապետաց եկեղեցուց հարավ՝ բլրի ստորոտում: Չափերով տարբեր, բայց միանման շինություններ են: Նախապես կառուցվել են հյուսիսային կողմում գտնվող եկեղեցին և մատուռ-զանգակատունը: Ավելի ուշ սրանց միջև կառուցվել է կրկնահարկ ավանդատուն, իսկ հարավից կցվել թաղակապ մի մատուռ ևս: Դրանով իսկ ձևավորվել է ճարտարապետական ուշագրավ մի համալիր: Եկեղեցուց մի քանի մետր արևմուտք կանգուն է նաև որմնափակ մի խաչքար: Բոլոր շինություններն էլ կառուցված են անմշակ քարով, աղյուսով և կրաշաղախով: Ներքուստ սվաղված է, ծածկերը՝ կղմինդրապատ:


65 Муррадян П. М., 62վ. աշխ., էջ 167 (աղյուսակ XII, 20):



Մուտքերը միայն արևմտյան ճակատներից են՝ մեկական: Որմերը հարուստ են խաչաքանդակներով և նվիրատվական բնույթի կարճառոտ արձանագրություններով (թվագրվածները՝ 1553 և 1566 թվականներից): Պահպանվել են նաև ամբողջական գեղաքանդակ խաչքարեր (օրինակ՝ եկեղեցու արևմտյան ճակատում) կամ դրանց երբեմնի գոյության ապացույց՝ խաչքարի ուրվագծով փոստրակները (օրինակ՝ մատուռի արևմտյան ճակատում, մուտքից բարձր): Եկեղեցու չափերն են՝ 6,13 x 4,52 մ, մատուռ-զանգակատանը՝ 3,58 x 3,53 մ, մատուռինը՝ 3,58 x 2,79 մ:


Հուշարձանախմբի շուրջ գերեզմանատուն է: 1987-88 թթ. հուշարձանախումբը վերականգնվել է:

10. Եկեղեցի. գտնվում է նախորդ հուշարձանախմբից փոքր-ինչ արևմուտք: Թաղակապ շենք է: Հարավային և հյուսիսային կողմերից ունի ավանդատների նմանությամբ կցորդումներ: Պատերի



0 2ս

ԳՐԵՄ. մատուռն արևմուտքից, հարավից, ներսում ընկած խաչքար և մատուռի հատակագիծը



0 1 2 3

ԳՐԵՄ. եկեղեցու (№10) հատակագիծը. չափագրությունը՝ Մ. Յասրաթյանի

մեջ՝ հատկապես արևելյան և արևմտյան ճակատներում, ազուցված են գեղաքանդակ խաչքարեր: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Ծածկերը կղմինդրապատ են:

1988 թ. ընթանում էին եկեղեցու վերականգնման աշխատանքներ:

11. Մատուռ. գտնվում է քաղաքատեղիի հարավարևմտյան կողմում՝ Թելավ-Ղվարել մայրուղու աջ մասում: Անմշակ քարով, կրաշաղախով, մասամբ նաև աղյուսով կառուցված թաղակապ շինություն է: Մուտքը արևմտյան կողմից է, նույն ճակատում արտաքուստ բացված խորշերի մեջ ազուցված են արձանագիր⁶⁶ խաչքարեր: Արձանագիր մեկ այլ խաչքար գտնվում է մատուռի ներսում (տե-

66 Նույն տեղում, էջ 166 (աղյուսակ XII, 12-13):

դահան, ընկած հատակին)⁶⁷: Արտաքին չափերն են՝ 4,55 x 3,68 մ:

12. Եկեղեցի. գտնվում է վերոհիշյալ մատուռից փոքր-ինչ հարավ-արևմուտք: Նույնպես թաղակապ շինություն է՝ կառուցված անմշակ քարով, աղյուսով, կրաշաղախով: Սվաղի շերտը բավականին լավ վիճակում պահպանվել է ոչ միայն ներքուստ, այլև արտաքուստ: Տանելի վիճակում է երկթեք տանիքի կղմինդրածածկը: Հարդարանքի մեջ ուշագրավ են արևմտյան ճակատում ագուցված գեղաքանդակ երկու խաչքարերը (հյուսիսակողմինը՝ 1556 թ.)⁶⁸:

13. Եկեղեցի՝ կից գավթով. գտնվում է քաղաքատեղիի արևելյան կողմում՝ Գրեմ գյուղի հարևանությամբ: Վրանած կղմինդրապատ թաղով աղյուսակերտ շինություն է: Հյուսիսային պատի մեջ պահպանվել է մկրտարանի խորշը: Արևմտյան միակ մուտքի շենքին տեղադրված է գեղաքանդակ խաչքար: Ունի աղյուսաշեն փոքրիկ զանգակատուն: Արտաքին չափերն են՝ 9,22 x 5,37 մ (գավթի հետ) և 4,67 x 5,37 մ (առանց գավթի):

Այլ եկեղեցիներ. Պ. Մուրադյանը Գրեմի տարածքում հիշում է նաև Սբ. Հովհաննես-Մկրտիչ և «Շիխանի» Սբ. Սարգիս եկեղեցիները⁶⁹, դրանք, ցավոք, չենք կարողացել ընդգրկել մեր ուսումնասիրությունների շրջանակում:

Հարկ է նշել, որ 1988 թ. մենք ակնատես ենք եղել արդեն վերականգնված կամ վերականգնվող հուշարձանների, մասնավորապես հայոց եկեղեցիների հանդեպ ցուցաբերված բարեխից՝ վերաբերմունքի. աշխատանքներն իրականացվում էին բավականին գրագետ ու վարպետորեն: Այդուհանդերձ, նկատելի բացը թերևս այն էր, որ հայ ճարտարապետության հուշարձանները վերականգնվում էին առանց հայ մասնագետների մասնակցության, որը ոչ միայն ճիշտ չէ, այլև՝ անթույլատրելի:

ԽԱՉՍԻԱՆ ԿԱՄ ՍԱՆԱՎԱՐԴՈ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 5 կմ հարավ՝ Ալազանի ձախակողմում փռված հարթավայրում:

Պատմություն. հայտնի է, որ Սանավարդո-Խաչմիանը, ի թիվս Կախեթի շատ այլ բնակավայրերի, ԺԷ դարի սկզբին Շահ-Աբասն ավերել է: Հին ու անբնակ գյուղատեղին վերստին բնակեցվել է միայն 1786 թ., քանի որ 1802 թ. այն արդեն 16 տարվա պատմություն ուներ⁷⁰:

Հայերը Խաչմիանում. հայերն այդտեղ հաստատվել են առնվազն ԺԸ դարի վերջին: Վավերագրերում համագյուղացի վրացիների հետ հայե-

րի ներկայությունն առաջին անգամ վկայված է 1802 թ.⁷¹: Ի դեպ, վերոհիշյալ 16 տարվա ընթացքում գյուղում հաստատված վրացի ու հայ ընտանիքների թիվը հասել էր 60-ի⁷²:

Կրկնվող վարակիչ հիվանդությունների պատճառով Խաչմիանում հայերի թիվը (և ոչ միայն հայերի) պարբերաբար նվազել է, իսկ 1880-ականների կեսից հետո գրեթե 3 տասնամյակ որևէ վավերագրում այլևս նրանք չեն հիշվում: Ուշագրավ է, որ միայն 1910-ական թվականներին են գյուղում կրկին հիշվում հայազգի բնակիչներ, բայց նրանք այլևս հայ առաքելական եկեղեցու հետևորդներ չէին, այլ՝ հայ կաթոլիկներ⁷³:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակիչների հետևյալ տարիների թվաքանակը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ⁷⁴	33	99	95	194
1841 ⁷⁵		49	44	93
1842 ⁷⁶		47	48	95
1843 ⁷⁷		47	46	93
1844 ⁷⁸		48	44	92
1845 ⁷⁹		48	45	93
1847 ⁸⁰		37	36	73
1852 ⁸¹		17	27	44
1853 ⁸²		30	29	59
1854 ⁸³		30	31	61
1857 ⁸⁴		25	26	51
1858 ⁸⁵		23	24	45
1860 ⁸⁶		23	19	42
1861 ⁸⁷		20	17	37
1862 ⁸⁸		17	16	33
1863 ⁸⁹		15	15	30
1864 ⁹⁰		15	15	30
1865 ⁹¹	9	9	15	24
1867 ⁹²		5	13	18
1870 ⁹³		13	8	21

71 Նույն տեղում, էջ 472:

72 Նույն տեղում:

73 ՀԱԱ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 10: Ցավոք, որ երկարատև պրպտումներից հետո էլ մեզ չհաջողվեց գտնել գյուղի հայերի կաթոլիկացման դրդապատճառներին և իրողության ստույգ ժամանակին վերաբերող տվյալներ:

74 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 29-30:

75 Նույն տեղում, գ. 3802, թ. 42-43:

76 Նույն տեղում, գ. 3805, թ. 92-93:

77 Նույն տեղում, էջ 46-47:

78 Նույն տեղում, գ. 3809, թ. 45-46:

79 Նույն տեղում, գ. 3811, թ. 106-107:

80 Նույն տեղում, գ. 3814, թ. 67-68:

81 Նույն տեղում, գ. 3825, թ. 7-8:

82 Նույն տեղում, գ. 2743, թ. 125-126:

83 Նույն տեղում, գ. 3819, թ. 64-65:

84 Նույն տեղում, գ. 3830, թ. 130-131:

85 Նույն տեղում, գ. 3823, թ. 129-130:

86 Նույն տեղում, գ. 3833, թ. 5:

87 Նույն տեղում, գ. 3839, թ. 6:

88 Նույն տեղում, գ. 3836, թ. 7:

89 Նույն տեղում, գ. 3843, թ. 45-46:

90 Նույն տեղում, գ. 3846, թ. 14:

91 Նույն տեղում, գ. 3848, թ. 23-24, 54:

92 Նույն տեղում, գ. 3867, թ. 4:

93 Նույն տեղում, գ. 3857, թ. 62-63:

67 Նույն տեղում (աղյուսակ XII, 14):

68 Նույն տեղում, էջ 167 (աղյուսակ XII, 16):

69 Նույն տեղում, էջ 167:

70 AKAK, т. 1, с. 209.

1873 ⁹⁴	14	8	22
1874 ⁹⁵	15	10	25
1875 ⁹⁶	15	10	25
1876 ⁹⁷	14	11	25
1877 ⁹⁸	14	10	24
1878 ⁹⁹	12	10	22
1880 ¹⁰⁰	13	7	20
1881 ¹⁰¹	12	7	19
1882 ¹⁰²	13	8	21
1883 ¹⁰³	12	7	19
1885 ¹⁰⁴	13	9	22
1913 ¹⁰⁵	26	109	86
			195

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Տեր Գեորգի ազգական, յայժմոյս որդեգիր՝ տիրացու Մուշեղ, ծնեալ յամի 1803, այլևս դուստր՝ իւր Մալալ: Դէրի Աթոյի որդիք՝ ճուկի և Պետրե, ճուկիկն կինն՝ Մարիամ, Պետրի կինն՝ Սառայ:

2. Կալավ Պէպան, կինն՝ Խօրէշան: Ջէքի որդի՝ Բէրօ, կինն՝ Մարթայ:

3. Բայրամի որդիք՝ Դաւիթ և Սօսի, մայր՝ Խանգադայ, Դաւիթի կինն՝ Աննա, որդիք՝ Պէտրե, Սօսիկն կինն՝ Էլէնէ, դստերք՝ Աննա և Ուսնիփէր և եղբոր՝ Ղազարի որդի՝ Յոհաննէս:

4. Բայրամի որդի՝ Մարգիս, կինն՝ Մարիամ, որդի՝ Գօգի, դստերք՝ Բարբարէ, Մարգարիտ և Մարթայ:

Դաւիթի որդի՝ Մատիկն այրի կինն՝ Դարէշան:

5. Դէրբեան Պէտրի որդիք՝ Ռամազ և Նօտար, մայր՝ Աննա, քորք Մաթօ և Սաբէր և քեռորդին՝ նավթուղեցի Գէվէ:

6. Խիթարի որդի՝ ջուլիակ Սէսօ, կինն՝ Թիմաթին, դստերք՝ Դարէշան և Իայ:

7. Մանուկեան Յակոբի այրի կինն՝ Թինաթին, որդիք՝ Սօսի և Ռամազ:

8. Տէրտբեան Սօղօմանի որդի՝ Մարգիս, ընդ սմա եղբայրացեալ Աթոյի որդի՝ Ղազար, կինն՝ Նինօ:

9. Ախալօսուլեան Յօսէփի որդիք՝ Գօգի, Դաթ և Գիգօյ, մայր՝ Էլէնէ, Գօգիկն կինն՝ Էլէնէ, Դաթի կինն՝ Թամար, որդի՝ Ջաքարիա, դստերք՝ Նինօ և Միսօնէայ, Գիգօյի կինն՝ Թամար, դուստր՝ Մալօմէ, քոյր՝ Քէթիվան:

10. Ախալօսուլեան Յօսէփի որդի՝ Սիմօն, կինն՝ Էլէնէ, դուստր՝ Էլիսաբէր, այլև չեթաւ Դաւիթի որդին Սահակ, դուստր՝ Սառայ:

11. Շէրմազանի որդի՝ Փասօ, որդի՝ Ռամազ և եղբոր՝ Թաթօյի որդի՝ Յարութիւն, դստերք՝ Աննա և Մուսան:

12. Մազմանեան Ղազարի որդիք՝ Մատեա, Պէտրե և Ջուրաբ, Մատիկն կինն՝ Մարթայ, որդի՝ Դեմէտրե և եղբոր՝ Նօնիկն որդի՝ Սիմօն և Յարութիւնի այրի կինն՝ Բարբարէ և դուստր՝ Բարբարէ:

13. Կօրծիա Գօգիկն որդիք՝ Պապեա և Յակոբ, քոյր՝ Անիա և միս որդոյ Ստեփանի որդիք՝ Յօրդանէ, դուստր՝ Թամար և Նիմիկնի որդիք՝ Դաթա և Գիգօյի:

14. Յօհանի որդիք՝ Նիկօղօս և Մարգիս, մայր՝ Դարէշան, Նիկօղօսի կինն՝ Աննա, Մարգիս կինն՝ Նինօ, որդի՝ Մարկոս, Թաթօյի այրի կինն՝ Մայիա, դստերք՝ Մարիամ և Բարբարէ և Պէպանի որդի՝ Բօւանէ, դստերք՝ Թամար և Դասիա և այրի դուստր՝ սոցայ Աննա: Մարգիս դուստր՝ Ռուսուդան:

15. Խէշօյի որդի՝ Եսայի, կինն՝ Մաթօ, որդիք՝ Յովսէփ, Գէվօ և Դաւիթ, Յովսէփի կինն՝ Ախօ:

16. Չէրբատօնի որդի՝ Գլախ, կինն՝ Մարթայ, որդի՝ Ջաքարիա, դուստր՝ Մալօմէ:

17. Մէրցխալի որդի՝ Մատի, կինն՝ Մայիա:

18. Ճօտրիսան Պէպանի այրի կինն՝ Մայիա, որդիք՝ Տէդիա և Ջաքարիա, դստերք՝ Մարիամ և Բարբարէ, ևս այրի դուստր՝ Շիրին, այլևս Բազբէի այրի կինն՝ Մայիա:

19. Դարբին Դաթնի այրի կինն՝ Թուբայ, որդիք՝ Ջուրաբ, Յարութիւն, Պէպան, դուստր՝ Մարիամ:

20. Բօթօշի որդիք՝ Թամազ, Յարութիւն, Գլախա, Դաթա և Սօսի, մայր՝ Աննա, Թամազի կինն՝ Մարիամ, որդի՝ Նիկի, Յարութիւնի կինն՝ Սաբէր, Գլախայի կինն՝ Ռուսուդան:

21. Նօքրի որդի՝ նացկալ Սիմօն, կինն՝ Անախանու:

22. Բաթի որդի՝ Գօգի, կինն՝ Եղսուն, որդիք՝ Գիգօյ, Պէտրե և Դեմէտրե և եղբոր՝ Աբէլի այրի կինն՝ Անախանու, որդիք՝ Ջազա և Քէրօբէ:

23. Ալիխանի որդի՝ Իւանէ և սորա ազգական Նինի, սորա կինն՝ Աննա, որդիք՝ Ջուրաբ և Գիգօյի, դուստր՝ Մալօմէ:

24. Իւանէի որդի՝ ջուլիակ Գլախ, կինն՝ Աննա, որդիք՝ Նօնի և Պէտրե, դուստր՝ Էլիսաբէր, Նօնիկն կինն՝ Մարիամ:

25. Մէրաբեան Սօլօմանի որդի՝ Խուլխի, կինն՝ Թագուհի, որդիք՝ Դաւիթ և Սօլօման, դուստր՝ Մայիա:

26. Սօլօմանի որդի՝ Մէրաբ, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յակոբ և Դուսնիխանու:

27. Գարաիշի որդի՝ Փարեմուզ, կինն՝ Դօղօն, որդի՝ Դաթն, Ռէվազի որդի՝ Յարութիւն, կինն՝ Մարթայ:

Ռամազի որդի՝ Դաւիթ և դուստր՝ Մարիամ:

28. Մէտուբրեան Ջուրաբի որդիք՝ Ջաքարիա և Դաւիթ, մայր՝ Մագթաղին, Ջաքարիայի կինն՝ Մագթաղին, Դաւիթի կինն՝ Մագթաղին, դուստր՝ Փեփրունէայ:

29. Մէտուբրեան Սահակի այրի կինն՝ Մաթօ, սորա որդեգիր Սօսիա, կինն՝ Շուշան:

30. Ջինօյի որդիք՝ Պէտրոս, Ղազար և Յոհաննէս, մայր՝ Նաթէլ, քոյր սոցա Քալի:

31. Եաչղուզ Գրիգորի որդի՝ Յոհաննէս, մայր՝ Թինաթին, սորա փեսայն Վէլիխանի որդի՝ Ջուրաբ, կինն՝ Մայիա, որդի՝ Դաթ, Կացիկն այրի կինն՝ Խօշեա:

32. Կուրկեան Դէրի որդիք՝ Յակոբ, Մատի և Գօգի, մայր՝ Մարիամ, Յակոբի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Նիկոլոյիմոս:

33. Ջօլօլիկեան Ջուրաբի այրի կինն՝ Անախանու, որդի՝ Գլախա»¹⁰⁶:

1988 թ. գյուղում բնակվող վրացախոս հայերից հայտնի էին Ակորով, Արուշանով, Գոզարով, Խաչատուրով և Պետրոսով ազգանունները կրող ընտանիքները:

Եկեղեցի. առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1818 թ. (փայտաշեն՝ կառուցված հասարակության ծախսով)¹⁰⁷: Կարծում ենք, որ եկեղեցին կառուցվել է ոչ ուշ, քան ԺԸ դարի կեսերին,

94 Նույն տեղում, գ. 3862, թ. 51:

95 Նույն տեղում, գ. 3864, թ. 35:

96 Նույն տեղում, գ. 3866, թ. 7:

97 Նույն տեղում, գ. 3868, թ. 6:

98 Նույն տեղում, գ. 3869, թ. 3:

99 Նույն տեղում, գ. 3870, թ. 57:

100 Նույն տեղում, գ. 3872, թ. 2:

101 Նույն տեղում, գ. 3873, թ. 2:

102 Նույն տեղում, գ. 3874, թ. 2:

103 Նույն տեղում, գ. 3875, թ. 22:

104 Նույն տեղում, գ. 3877, թ. 33:

105 ՀԱԱ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 10: Տես նաև՝ «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 72:

106 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 29:

107 Նույն տեղում:

քանի որ 1836 թ. գյուղի տարեցները դրա ժամանակի մասին ոչինչ չէին հիշում. «...ասացին հայ բնակիչք գեղջն այն, թե ի հնոց նախնեաց անդ լեալ է եկեղեցին այն, չկայ որ այժմ, որ զերբ շինել նոյն եկեղեցոյն պատմեսցէ ի մէջ մեզ, որոյ հնութեան վկայօղբ գոն և ծեր քահանայք բաց յօկանէ այժմ կենդանիք...»¹⁰⁸: Նույն թվականին քարմագրելտաշէլ էին հին, սևացած տախտակները, նորոգել էին տանիքը:

Ի դեպ, հայոց եկեղեցին, որ բազմաթիվ վավերագրերում հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ, խիստ մոտ էր գտնվում վրաց եկեղեցուն. այս հանգամանքը հարուցել էր վրացիների դժգոհությունը:

1864 թ. եկեղեցին հիշվում է անհայտ ավազակների կողմից կողոպտվելու կապակցությամբ¹⁰⁹: Սբ. Աստվածածին եկեղեցին վավերագրերում վերջին անգամ հիշվում է 1885 թ.¹¹⁰:

Հայտնի է, որ Սբ. Աստվածածինը անվանափոխվել է՝ օծվելով Սբ. Պողոս-Պետրոս անվամբ և գործել որպես հայ կաթոլիկ եկեղեցի¹¹¹:

Եկեղեցական իրեր. 1818 թ. եկեղեցուն պատկանող շուրջ 38 անուն իրերի մի մասը կրում էր հակիրճ արձանագրություններ¹¹².

Ավետարան.

Յիշ(ա)տ(ա)լ կնեագ Սիմօն Դիւան Զօրութլի:

Կտակարան.

Յիշատակ Չեթալ Դավթի:

Արծաթյա ձեռագ խաչ.

Պղնձ(ա)գործ Յարթին յիշատակ:

Ձեռագ շարական, ձեռագ ժամագիրք, կտավյա շապիկ, վակաս հին չթից.

Յիշատակ հանգուցեալ S(t)ր Դաւիթ ք(w)h-(w)ն(w)յէ:

Չթե պատկերատիպ վարագույր.

Յիշատակ Տէր Գեորգի կինն՝ Աննայի:

Բուրվառ՝ քիթելյա.

Յիշատակ S(t)ր Յահարօն Քամօտանի:

Քահանա. *Տէր Գեորգ Մեհրաբյանց.* քահանայագործել է 1810-1818 թթ.: Ծնվել է 1783-ին, ձեռնադրվել 1810 թ. Թիֆլիսի թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից¹¹³:

Հայտնի է, որ 1836 թ. գյուղին հովվել է Դորելի քահանան¹¹⁴:

Գյուղում քահանայագործած կաթոլիկ հոգևորականներից մեզ հայտնի է միայն *Տէր-Ստանիս*

լավ Կաճկաճյանցը. նա ծխատեր հովվի պարտականությունները ստանձնել էր առնվազն 1913 և 1914 թթ.¹¹⁵:

Գերեզմանոց. 1913 թ. Խաչմիսանի հայ կաթոլիկ համայնքը լուծել էր առանձին գերեզմանատուն ունենալու խնդիրը¹¹⁶:

ԿՈՒՃԱՏԱՆ

Տեղադրություն. գտնվում էր շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևելք:

Պատմություն. «Կուճատան է գիւղ Վրաց յայնկոյս Ալազանայ առ ստորոտով Կովկասու, հեռի ի Թէլաւայ միով ատուրբ. տունք Հայոց տասն, իսկ Վրացն բազումք յոյժ. երկիւղալի է այս գիւղ՝ ըստ որում Լեզկիք յամենայն ատուրս անպակաս երթևեկեն, և որպէս զներձաւոր ծանօթս ճանաչեն զբնակսն, մինչև յականէ յանուանէ թուել և զկանայս. ուստի և ի գեղջս գտանին բազում աշտարակաձև բրդունք վասն երկիւղի, մինչ զի յամենայն գիշերի կազմ և պատրաստ կան ամենայն արք և կանայք զէն ի ձեռին, զի և կանայք չեն պակաս արութեամբ քան զարս, որպէս և ինձ ի միում նուագի պատահեցաւ՝ զալ յայցելութիւն յայս գիւղ մերազգի ժողովրդոց՝ հանդերձ քանի մի քահանայիւք, և ի ձեռն բազում պահապանաց և զգուշաորութեան անցուցանել զմի գիշեր», – 1849 թ. Կուճատան կատարած իր այցելությունից հետո այսպես է նկարագրում այն Հովհաննես վարդապետ Արշարունին¹¹⁷:

Հայտնի է, որ Կախեթի շատ բնակավայրերի նման Կուճատանն էլ էր ավերել Շահ-Աբասը: Անալի գյուղատեղին վերստին բնակեցվել է միայն 1777 թ., և մինչև 1802 թ. (25 տարվա ընթացքում) տարբեր վայրերից հավաքված բնակիչների թիվը գյուղում կազմել է 50 ընտանիք¹¹⁸:

Հայերը Կուճատանում. հայերի ներկայությունն այստեղ վկայված է միայն 1802 թվականից¹¹⁹:

Հինավուրց Կուճատանը բազմիցս ենթարկվել է լեռնականների ասպատակությանն ու քաղաքին: Այդօրինակ հարձակումներից մեկի ժամանակ (1856 թ., մայիսի 17) միայն կուճատանաբնակ հայերը տվել էին տասը կորուստ, որից 8-ը՝ սպանված, 2-ը՝ գերեզմարված. «...ի 17 մայիսի անցելոյ, ի գիշերի յարձակեալ են զօրք լեկաց ի վերայ գեղջ Կուճատանի և ի ժողովրդոց հայոց վեց տունս ավար առեալ են, յորոց ութ անձինս սպանեալ և գերկուս վարեալ են ի գերութիւն, նույնպէս զորոտն եկեղեցոյն տեղոյն փշրեալ և յափշտակեալ են զշուրջառ, զերկու փորուարս, վակաս...»¹²⁰:

108 Նույն տեղում, գ. 3315, ք. 3:

109 ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, գ. 4610, ք. 3:

110 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 3877, ք. 33:

111 ՀԱԱ, ֆ. 316, գ. 1, գ. 26, ք. 10:

112 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 2569, ք. 29:

113 Նույն տեղում, ք. 29, 31:

114 Նույն տեղում, գ. 3315, ք. 3:

115 ՀԱԱ, ֆ. 316, գ. 1, գ. 26, ք. 10, գ. 30, ք. 119:

116 Վրաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՎՀՊՊԿԱ), ֆ. 204, գ. 1, գ. 1807, ք. 1-5:

117 *Տէր Գագարեանց Յովհաննես վարդապետ Արշարունի.* նշվ. հոդվ., էջ 283:

118 AKAK, տ. 1, գ. 209.

119 Նույն տեղում, էջ 472:

120 ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, գ. 3436, ք. 10:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք հայերի թվաքանակն ըստ հետյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ¹²¹	23	103	76	179
1841 ¹²²		85	84	169
1842 ¹²³		87	80	167
1843 ¹²⁴		87	75	162
1844 ¹²⁵		75	66	141
1845 ¹²⁶		76	71	147
1847 ¹²⁷		77	68	146
1849 ¹²⁸		80	76	156
1852 ¹²⁹		71	63	134
1853 ¹³⁰		34	31	65
1854 ¹³¹		34	31	65
1856 ¹³²	6			
1857 ¹³³		43	38	81
1858 ¹³⁴		46	41	87
1860 ¹³⁵		39	36	75
1861 ¹³⁶		38	33	71
1862 ¹³⁷		40	32	72
1863 ¹³⁸		38	32	70
1864 ¹³⁹		38	31	69
1865 ¹⁴⁰	10	35	32	67
1867 ¹⁴¹		33	28	61
1870 ¹⁴²		37	32	69
1873 ¹⁴³		38	31	69
1874 ¹⁴⁴		39	29	68
1875 ¹⁴⁵		39	28	67
1876 ¹⁴⁶		37	26	63
1877 ¹⁴⁷		36	25	61
1878 ¹⁴⁸		37	25	62
1880 ¹⁴⁹		36	27	63
1881 ¹⁵⁰		36	26	62
1882 ¹⁵¹		36	26	62

1883 ¹⁵²	38	31	69
1885 ¹⁵³	40	35	75
1889 ¹⁵⁴	52	47	99
1890 ¹⁵⁵	54	46	100
1891 ¹⁵⁶	38	45	83
1892 ¹⁵⁷	38	46	84
1893 ¹⁵⁸	38	46	84
1894 ¹⁵⁹	40	49	89
1897 ¹⁶⁰	48	51	99
1898 ¹⁶¹	50	53	103
1899 ¹⁶²	51	53	104
1900 ¹⁶³	50	54	104
1901 ¹⁶⁴	52	56	108
1902 ¹⁶⁵	58	54	112
1906 ¹⁶⁶	27	25	52
1908 ¹⁶⁷	14	25	52
1910 ¹⁶⁸	10	26	54
1912 ¹⁶⁹	10	25	56

Տվյալներից երևում է, որ 1840-ական թվականներից սկսած, երբ ավելի քան 170 հայ բնակիչ կար, նրանց քանակը շարունակաբար պակասել է ու 1860-ականներին դարձել 60-70 մարդ: Հետագայում փոքր-ինչ ավելացել է և Ի դարասկզբին անցել 100 շնչից, բայց շուտով՝ 1910-ականներին, կրկին նվազել: 1914 թ. Կուճատանն ուներ 359 բնակիչ¹⁷⁰:

Ազգատոհմեր. առանձնակի արժեք ունի 1818 թ. կազմված մի վավերագիր, որտեղ տրված է բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Բեգլարի որդի՝ Թամազ, Գլախա, Գօզի և Միքել, Թամազի կինն՝ Թամար, որդիք՝ Անդրե և Դարի, Գլախի կինն՝ Խօրեշան, որդիք՝ Յակոբ, Մատի, Բարդողիմեոս և Թադեոս, Գօզի կինն՝ Անախանում, որդի՝ Բեգլար, դուստր՝ Մարիամ, Միքելի կինն՝ Անախանում, որդիք՝ Պետրոս, Ադամ և Պողոս, Անդրի կինն՝ Դարեջան:

2. Յօհանի որդիք՝ Չաքար, Թաթուլ, Գիօրգի, Դաթին, Չաքարի կինն՝ Մաբեդ, որդիք՝ Սիմօն, Պեպան և Յովակիմ, Թաթուլի կինն՝ Թինաթին, որդիք՝ Օսկան և Դանիել:

3. Յօսեփի որդիք՝ Յօհան, Չաքարիա, Յարութիմ, Յօհանի կինն՝ Մայիա, դուստր՝ Մարիկ, Չաքարիայի կինն՝ Մաբեդ, որդիք՝ Յովսեփ և Դուկաս, Յարութիմի կինն՝ Բարբարե և Բայինդուրի որդի՝ Յովակիմ, կինն՝ Մարիամ և եղբոր՝ Դավթի որդիք՝ Նօնի, Աթօ, Օթօլայ և Իսանե, Նօնի կինն՝ Մաթօ, որդիք՝ Անդրե և

121 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 30-31:
 122 Նույն տեղում, գ. 3802, ք. 42-43:
 123 Նույն տեղում, գ. 3805, ք. 92-93:
 124 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:
 125 Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46:
 126 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:
 127 Նույն տեղում, գ. 3814, ք. 67-68:
 128 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:
 129 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:
 130 Նույն տեղում, գ. 2743, ք. 125-126:
 131 Նույն տեղում, գ. 3825, ք. 7-8:
 132 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3436, ք. 10:
 133 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, ք. 130-131:
 134 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:
 135 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 136 Նույն տեղում, գ. 3839, ք. 6:
 137 Նույն տեղում, գ. 3836, ք. 7:
 138 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:
 139 Նույն տեղում, գ. 3846, ք. 14:
 140 Նույն տեղում, գ. 3848, ք. 23-24, 54:
 141 Նույն տեղում, գ. 3851, ք. 4:
 142 Նույն տեղում, գ. 3846, ք. 62-63:
 143 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:
 144 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:
 145 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:
 146 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:
 147 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:
 148 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:
 149 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:
 150 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:
 151 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:

152 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:
 153 Նույն տեղում, գ. 3877, ք. 33:
 154 Նույն տեղում, գ. 3884, ք. 5:
 155 Նույն տեղում, գ. 3887, ք. 140:
 156 Նույն տեղում, գ. 3889, ք. 139:
 157 Նույն տեղում, գ. 3891, ք. 111:
 158 Նույն տեղում, գ. 3895, ք. 27:
 159 Նույն տեղում, գ. 3896, ք. 164-165:
 160 Նույն տեղում, գ. 3899, ք. 137-138:
 161 Նույն տեղում, գ. 3897, ք. 159:
 162 Նույն տեղում, գ. 3903:
 163 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:
 164 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:
 165 Նույն տեղում, գ. 3907, ք. 13-14:
 166 Նույն տեղում, գ. 3915, ք. 6:
 167 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:
 168 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 5, գ. 853, ք. 9:
 169 Նույն տեղում, գ. 3919, ք. 52-53, գ. 853, ք. 9:
 170 "Кавказский Календарь на 1915 г.", с. 149.

Գիգօլ, Աթօյի կիճն՝ Աճախանուն, Օթօյի կիճն՝ Աճնա, որդի՝ Եգեկիա, դուստր՝ Բարբարե:

4. Չախմախ Սազքահին կիճն՝ Գալիանե, որդի՝ Չաքարիա և Պեպան, դուստր՝ Սարրա:

5. Ալահվերդոյ որդի՝ Թաթօ, կիճն՝ Աճախանուն, որդի՝ Ազարիա:

6. Ալահվերդոյ որդի՝ Ասատուր, կիճն՝ Էլեճե, որդի՝ Սիճօն, դուստրք՝ Մարիամ և Նինօ:

7. Կիկոյի որդի՝ Աթօ, կիճն՝ Քեթվան, որդի՝ Մատի և եղբօր՝ Նօնինի ալրի կիճն՝ Մարիամ, դուստրք՝ Մաբեդ և Մայի:

8. Փիչխուլեան Ստեփանի որդիք՝ Առաքել, Պապի և Մատի, մայր՝ Խանուն, Առաքելի կիճն՝ Աճնա, որդի՝ Յօր, Պապինի կիճն՝ Բարբարե:

9. Աւետի որդիք՝ Գօգի և Մատի, մայր՝ Նաթել, քոյրն Ռաջդէն և Սօսինի ալրի կիճն՝ Մաբեդ:

10. Մէլքոյի որդի՝ Պետրե, որդի՝ Ստեփան և միւս որդոյ Համզայի ալրի կիճն՝ Թամար, որդիք՝ Սօսի, Սիճօն և Ղուքիսի դուստր՝ Թինաթին, Սօսինի կիճն՝ Նինօ, դուստր՝ Մանիա և Գալխալի ալրի կիճն՝ Քեթվան, ալլև Մէլքոյի որդոյ՝ Դաթի ալրի կիճն՝ Մարիամ, որդի՝ Յարութիւն, դուստր՝ Սօփիօ:

11. Սափարեան Աթօյի որդիք՝ Սիճօն և Սօսի, Սիճօնի կիճն՝ Մարիամ, որդիք՝ Աթօ և Չաքարիա, դուստր՝ Մարթայ, Սօսինի կիճն՝ Էլիսաբեդ:

12. Աթօյի որդի՝ Գիգօ, կիճն՝ Թինաթին, որդի՝ Սօլօմօն, դուստրք՝ Նինօ և Սօփիօ:

13. Զօրբուդեան Սարգսի որդի՝ Թաթօ, կիճն՝ Մարթայ, որդիք՝ Գրիգոր և Սարգիս, դուստր՝ Մարիամ:

14. Աղի որդիք՝ Սիճօն և Սարրալօ, Սիճօնի դուստր՝ Մաբեդօ:

15. Տուրմիշի որդիք՝ Թանդիլ և Յարութիւն, Թանդիլի կիճն՝ Մարիամ, դուստր՝ Նինօ, Յարութիւնի կիճն՝ Մարիամ և ինքն՝ Տուրմիշն:

16. Սիրաթեան Չազայի որդի՝ Սիճօն, կիճն՝ Մարթայ, որդի՝ Ռօստօմ, դուստր՝ Մարիամ և հօրամայրն՝ Թամար:

17. Գօկչակի որդիք՝ Յօհան և Չաքար, տրա մայրն Սառա, Յօհանի կիճն՝ Նինօ, որդի՝ Յարութիւն և եղբօր՝ Մատինի որդիք՝ Գալխա և Ներսէս:

18. Փեւար Դաթի կիճն՝ Մարթայ, որդիք՝ Յարութիւն և Տրդատ, դուստր՝ Աճնա:

19. Յոհաննէսի որդիք՝ Մատի, Յարութիւն և Գիօրգի, Մատինի կիճն՝ Մաբեդ:


20. Առաքելի որդիք՝ Յակոբ և Անտօն, մայր՝ Խանուն, Յակոբի կիճն՝ Դարեջան, դուստր՝ Մայիա, Անտօնի կիճն՝ Մաբեդ, որդիք՝ Ահարօն և Մէսրօպ և Յօհանի ալրի կիճն՝ Քեթվան, որդի՝ Մօսէ:

21. Կօտինի որդի՝ Մախարե, կիճն՝ Աճախանուն, որդի՝ Նօնի, տրա կիճն՝ Նինօ և եղբօր՝ Դաթի որդիք՝ Սէսի և Յարութիւն և մայրն՝ Մախարի Աճնա, Սէսինի կիճն՝ Մարիամ, որդի՝ Դաթի, Յարութիւնի կիճն՝ Բարբարե:

22. Սարուխանի որդիք՝ Ասլան, Պեպան, Յարութիւն և Քիդօ, Ասլանի կիճն՝ Էլեճե, որդիք՝ Մարտիրոս և ճուկի, դուստրք՝ Շուշան և Թինաթին, Պեպանի կիճն՝ Մարմար, Յարութիւնի կիճն՝ Էլիսաբեդ:

23. Վարդանի որդի՝ Աթօ, որդիք՝ Կօնի և Գալխ, Կօնինի կիճն՝ Մայիա»¹⁷¹:

Մեր այցելութեան ժամանակ (1988 թ.) տեղում պարզվեց, որ գյուղում դեռևս կան վրացախոս հայ ընտանիքներ: Նրանցից էին Թավրիզիանիները (Թավրիզյան), Ամբարիանիները (Համբարյան) և այլն:



0 5m

ՎՈՐՃԱՍՆ. Սր. Գևորգ եկեղեցու հատակագիծը

Սր. Գևորգ եկեղեցի. 1818 թ. հիշվում է որպես փայտաշեն շինություն՝ կառուցված հասարակության միջոցներով¹⁷²: 1840 թ. վավերագրերից

171 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1 գ. 2569, թ. 30:

172 Նույն տեղում:

մեկում արդեն նշված է, որ այն քարաշեն¹⁷³ կառույց էր: Ըստ ամենայնի՝ 1818-1840 թթ. միջակայքում կուճատանցի հայերը հին եկեղեցու փոխարեն տեղում կառուցել էին նորը: Հետագա բոլոր վավերագրերում եկեղեցին հիշվում է միևնույն անվամբ: *Ճարտարապետություն*. եկեղեցին ցայսօր կանգուն է. գտնվում է գյուղամիջում՝ նախկին դպրոցի տարածքում: Կառուցված է գլխավորապես տեղական գետաքարով ու աղյուսով, կրաշաղախով: Ունի միանավ թաղածածկ հորինվածք: Արևելյան կողմում խորանն է, որի բարձր բեմի կենտրոնում սեղանի վեմ քարն է: Արևմտյան պատը քանդված է, և դժվար է որոշել՝ այդ կողմից մուտք եղել է, թե ոչ: Լավ է պահպանված հարավային մուտքը: Ունի 4 լուսամուտ՝ բացված մեկական, յուրաքանչյուր ճակատից: Երկթեք ծածկի տակ առնված կիսաշրջանաձև թաղը ներքուստ հենված է թաղակիր մեկ կամարի վրա: Սվաղված է: Արտաքին չափերն են՝ 10,85 x 6,85 մ:

Քահանա. հրավիրել են հարևան գյուղերից: Այսպես, 1818 թ. հովվել է Խաչմիանի քահանա *Տեր Գեորգ Մեհրաբյանը*¹⁷⁴:

ՀԻՆ ԿԱՍ ՎԵՐԻՆ ԳԱՎԱԶ (ԱԽԱԼՍՈՓԵԼ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևելք՝ Ղվարել-Լագոդեխ մայրուղուց ձախ՝ Ալազան գետի ձախ ափից 9 կմ հեռու:

Պատմություն. ԺԺ դարում իշխան Ճավճավաձեների տոհմական կալվածն էր¹⁷⁵:

Հայերը Հին կամ Վերին Գավազում. Կախեթի բազմամարդ այս գյուղում ևս ԺԺ դարում բնակվել են սակավաթիվ հայեր: Հարկ է նշել, որ վավերագրերում առկա է որոշակի շփոթ, այն է՝ ինչպես Հին Գավազը, այնպես էլ Նոր Գավազը երբեմն կոչվում են նաև Ախալստփելի: Դրանով, հավանաբար, կարելի է բացատրել հետևյալ տարօրինակ փաստը. մի դեպքում՝ 1850 թ. Հին Գավազում կառուցվել է հայոց Սբ. Աստվածածին անվամբ փայտաշեն եկեղեցին ու հետագա բոլոր տարիներին էլ բազմիցս հիշատակվում է, մեկ այլ դեպքում՝ հայ բնակչություն ունեցող գյուղերի ցուցակներում Հին Գավազը 1818 թ. հետո կրկին հիշվում է միայն 1860-ական թվականներից հետո: Անշուշտ, եկեղեցին կարող էր կառուցվել միայն տեղում առկա բնակչության համար և նրանց ջանքերով, բայց, այնուամենայնիվ, 1850-ական թվականների որևէ վավերագրում Հին Գավազ գյուղում հայ բնակիչներ արձանագրված չեն:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ¹⁷⁶	2	7	3	10
1862 ¹⁷⁷		7	3	10
1863 ¹⁷⁸		6	2	8
1865 ¹⁷⁹	2	5	3	8
1867 ¹⁸⁰		4	4	8
1870 ¹⁸¹		6	6	12
1873 ¹⁸²		10	6	16
1874 ¹⁸³		10	6	16
1875 ¹⁸⁴		10	6	16
1876 ¹⁸⁵		10	6	16
1877 ¹⁸⁶		11	6	17
1878 ¹⁸⁷		10	6	16
1880 ¹⁸⁸		10	5	15
1881 ¹⁸⁹		12	5	17
1882 ¹⁹⁰		14	6	20
1883 ¹⁹¹		14	5	19
1885 ¹⁹²		17	9	26
1889 ¹⁹³		17	12	29
1890 ¹⁹⁴		18	12	30
1891 ¹⁹⁵		18	12	30
1892 ¹⁹⁶		22	12	34
1893 ¹⁹⁷		23	13	36
1894 ¹⁹⁸		25	15	40
1897 ¹⁹⁹		44	35	79
1898 ²⁰⁰		46	36	82
1899 ²⁰¹		45	36	81
1900 ²⁰²		50	41	91
1901 ²⁰³		60	47	107
1902 ²⁰⁴		61	50	111
1906 ²⁰⁵		15	23	38
1908 ²⁰⁶	7	16	25	41

176 Նույն տեղում, գ. 2569, թ. 31:
 177 Նույն տեղում, գ. 3836, թ. 7:
 178 Նույն տեղում, գ. 3843, թ. 45-46:
 179 Նույն տեղում, գ. 3848, թ. 23-24, 54:
 180 Նույն տեղում, գ. 3851, թ. 4-5:
 181 Նույն տեղում, գ. 3857, թ. 62-63:
 182 Նույն տեղում, գ. 3862, թ. 51:
 183 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 3861, թ. 35: Գյուղի ամբողջ բնակիչների թիվը 2579 շունչ էր ("Кавказский Календарь на 1886 г.", с. 117):
 184 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 3866, թ. 7:
 185 Նույն տեղում, գ. 3868, թ. 6:
 186 Նույն տեղում, գ. 3869, թ. 3:
 187 Նույն տեղում, գ. 3870, թ. 57:
 188 Նույն տեղում, գ. 3872, թ. 2:
 189 Նույն տեղում, գ. 3873, թ. 2:
 190 Նույն տեղում, գ. 3874, թ. 2:
 191 Նույն տեղում, գ. 3875, թ. 22:
 192 Նույն տեղում, գ. 3877, թ. 33:
 193 Նույն տեղում, գ. 3884, թ. 5:
 194 Նույն տեղում, գ. 3887, թ. 140:
 195 Նույն տեղում, գ. 3889, թ. 139:
 196 Նույն տեղում, գ. 3891, թ. 111 :
 197 Նույն տեղում, գ. 3895, թ. 27:
 198 Նույն տեղում, գ. 3896, թ. 164-165:
 199 Նույն տեղում, գ. 3899, թ. 137-138:
 200 Նույն տեղում, գ. 3897, թ. 159:
 201 Նույն տեղում, գ. 3903:
 202 Նույն տեղում, գ. 3905, թ. 8:
 203 Նույն տեղում, գ. 3906, թ. 2:
 204 Նույն տեղում, գ. 3907, թ. 13-14:
 205 Նույն տեղում, գ. 3915, թ. 6:
 206 ՀԱԱ, ֆ. 35, գ. 1, գ. 559, թ. 21:

173 Նույն տեղում, գ. 3798, թ. 30:
 174 Նույն տեղում, գ. 2569, թ. 30:
 175 "Кахетия. приложение к справочной книге старожила", с. 57.

1910 ²⁰⁷	20	30	50
1912 ²⁰⁸	3	16	37

Աղյուսակից երևում է, որ մինչև Ի դարի սկզբները գյուղում հայերի թիվը շարունակաբար փոքր-ինչ աճել է, բայց հետո տարածված վարակիչ հիվանդություններին զոհ է գնացել նրանց մեծ մասը, այնպես որ 1912 թ. գյուղում մնացել էին միայն 3 տուն հայեր²⁰⁹: 1914 թ. դրությամբ (1874 թ. հետ համեմատած) գյուղում նվազել էր ոչ միայն հայերի թիվը, այլև՝ վրացիների. այդ թվականին գյուղն ուներ 931 բնակիչ²¹⁰ (որից շուրջ 900-ը՝ վրացիներ):

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. կազմված գավազցի հայերի հետևյալ անվանացուցակը՝

1. Ղեքար Յարութին, կինն՝ Թամար, որդիք՝ Ջուրաբ, Մովսես և Գաիթ, դուստր՝ Էլիսաբեդ;
2. Փեքար Ջաքար, կինն՝ Մարթայ, որդի՝ Գիորգի, եղբոր որդի՝ ճօկի»²¹¹:

Եկեղեցի. Հին Գավազի հայոց եկեղեցին մինչև 1900 թ. հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ: Ի դեպ, այդ թվականին եկեղեցին քայքայված ու հնացած էր²¹²: 1901-1909 թ. եկեղեցին հիշվում է Սբ. Սարգիս²¹³, իսկ 1910-ին՝ Սբ. Գևորգ անվամբ²¹⁴:

1909 թ. մարտի 5-ին գյուղի ծխատեր քահանա Գևորգ Մելիքյանցը և երեցփոխ Նիկողայոս Սիմոնյանցը մի հայտարարության մեջ գրել են. «Մեզ անհրաժեշտ պարտականություն ենք համարում յայտնել ձեր բարեկրօնութեանը հետևեալ ցուցակի դեպքը, որ Ախալսուփել գիւղի, նոյն է Նոր Գաւազ²¹⁵, հայոց տախտակամած Ս. Սարգիս անուանեալ եկեղեցին, նոյն գիւղի վրաց հասարակութիւնը, որ բաղկացած է 500 տանից արեւի կրօնին հակառակ և մեր ազգութեանը վնասելու համար՝ համարձակ, օր ցերեկով խմբովին յարձակուել էին անցեալ 1908 թուին, մի բուն փոքրամասն հայերի աչքի առաջ բողբոլին յիմնայատակ էին արել, տանելով իրանց յետ եկեղեցույ բոլոր տախտակները և գերանները սեպհականացնելով իրանց...»²¹⁶: 1910 թ. այլ վավերագրերից մեկում էլ կարդում ենք. «Ի գիւղն Հին Գաւազ նոյն է Ախալսուփել յանուն Ս. Գեորգայ փայտաշէն եկեղեցի այժմ քայքայեալ հիմնովին ի ձեռն վրաց հասարակութեան»²¹⁷:

207 Նույն տեղում, գ. 3917, ք. 5:
 208 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 853, ք. 9, գ. 3919, ք. 52-53:
 209 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 853, ք. 9:
 210 "Кавказский календарь на 1915 г.", с. 183.
 211 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 31:
 212 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:
 213 Նույն տեղում, գ. 3906, ք. 2, գ. 3915, ք. 6:
 214 Նույն տեղում, գ. 3917, ք. 5:
 215 Ակնհայտ սխալ է, պետք է լինի՝ Հին Գավազ:
 216 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3443, ք. 4:
 217 Նույն տեղում, գ. 3917, ք. 5: Պարզ է, որ խոսքը նույն եկեղեցու մասին է, բայց մի դեպքում՝ Սբ. Սարգիս, մյուսում՝ Սբ. Գևորգ և մի տեղ էլ Նոր Գավազ (Ախալսուփել), մյուսում՝ Հին Գավազ (Ախալսուփել). այս ամենն ակնհայտ շփոթի արդյունք է:

Ի դեպ, խնդրո առթիվ վրացիները վկայել էին, թե այդ եկեղեցին դեռևս 13 տարի առաջ անտեր էր և քանդվում էր: Ըստ ամենայնի՝ ասվածն իրողություն է եղել, քանի որ 1900 թ. հիշատակված մի վավերագրում էլ այն նկատված է որպես «հնացեալ»²¹⁸ շենք: Ինչ վերաբերում էր տախտակներին, ապա վրացիները պնդել էին, թե դրանք լեզգիներն են տարել²¹⁹:

Ավելացնենք, որ այս առնչությամբ Թելավի գործակալ Աբել ավագ քահանա Սուքիասյանը 1912 թ. գրել է, որ գյուղը «Թելավից հեռու է 60 վերստ և Ղուարելից սկսած մինչև այդ գիւղը խճուղին չորս կողմից շրջապատուած է լեզգի բնակիչներով: Այդ գիւղի հայոց եկեղեցու մակարդակը՝ գտանք ոչընչացրած եկեղեցու նախկին տեղը: Բայց եկեղեցու գաւթի սահմանը ոչ ծխատէր քահանան և ոչ հայ բնակիչներ, որոնց թիւը ամբողջ գիւղում գաղթական, եկուր վաճառականների հետ 12 տուն է չկարողացան որոշել-ցոյց տալ: 700 տուն վրացիներ միացած գիւղապետի հետ հակառակ էին նախկին հայոց եկեղեցու տեղը կրկին հայերին յատկացնելու, չնայելով որ նա շինուել է դեռևս 1850 թ.: Եղած եկեղեցու շուրջը այժմ շինուել է գիւղական դատարան, գրադարան-ընթերցարանը, բանտը և այլ շինություններ, իսկ ընդարձակ հրապարակը յատկացուել է ժողովներին, այնպես որ եկեղեցու տեղը գտնուում է գիւղի տրամադրութեան ներքոյ, որովհետև հայերը տարիների ընթացքում հեռացել են այդ տեղից և բուն բնակիչներից մնացել է միայն 3 տուն...»²²⁰:

Քահանա. Գևորգ Մելիքյանց. 1909 թ. հիշվում է ծխատեր քահանա²²¹:

1910 թ. մի վավերագրից պարզվում է, որ ծխականների հոգևոր պետքերը բավարարելու համար քահանան գալիս էր Ղվարելից²²²:

ՁԵԳԱԱՆ (ՁԵԳԱԱՆ)

Տեղադրություն. գտնվում է Ալազանի հովտում:

ԺԹ դարում գյուղը Փաշան, Շիլդա, Ճինճրիան և Աղտգոմա գյուղերի հետ կազմում էր գյուղական մեկ հասարակություն:

Հայերը Ձեգասանում. թեև վիճակագրական տեղեկագրերում հայերն այստեղ հիշվում են միայն 1853 թվականից, բայց այդ իսկ տարում այնտեղ գտնված Սբ. Սարգիս եկեղեցու (փայտաշեն) գոյությունը²²³ խոսում է այն մասին, որ դրանից առաջ էլ են Ձեգասանում հայեր բնակվել, ընդ որում ոչ փոքրաթիվ, քանի որ եկեղեցի կառուցելու պահանջ է

218 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, ք. 8:
 219 Նույն տեղում, գ. 3443, ք. 12:
 220 Նույն տեղում, ք. 9:
 221 Նույն տեղում, ք. 4:
 222 Նույն տեղում, գ. 3917, ք. 5:
 223 Նույն տեղում, գ. 2743, ք. 125-126:

զգացվել: Կլիմայական ծանր պայմանների (տեղանքը ճահճոտ էր) հետևանքով զգալի զոհեր տալով՝ այստեղ հաստատված հայ գաղթականները 1860 թ. հեռացել էին այլ վայրեր²²⁴: Ի դեպ, Սբ. Սարգիս եկեղեցին հիշատակվում է նաև 1860-ական թվականների վավերագրերում, այն դեպքում, երբ գյուղում այլևս հայեր չէին բնակվում:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակիչների մի քանի տարիների թվաքանակը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1853 ²²⁵	9	7	16	
1854 ²²⁶	9	6	15	
1857 ²²⁷	2	1	3	
1858 ²²⁸	2	1	3	
1860 ²²⁹	2	1	3	

1914 թ. գյուղն ուներ միայն 22 վրացի բնակիչ²³⁰:

ՂՎԱՐԵԼ (ՂՈՐԵԼ)

Տեղադրություն. գտնվում է Ալազան գետի ձախ կողմում՝ Մեծ Կովկասի հարավահայաց ստորոտին:

Ներկայումս այն քաղաք է՝ համանուն շրջանի կենտրոնը:

Պատմություն. Արևելյան Վրաստանի նշանավոր ու բազմամարդ բնակավայրերից է Գորելը: Գարերի ընթացքում Ղվարելը, ինչպես և Գաղստանի սահմանի մոտ գտնվող մյուս բնակավայրերը պարբերաբար ենթարկվել են լեռնականների, մասնավորապես լեզգիների ավազակային և թալանչիական հանկարծահաս հարձակումներին:

Հայերը Ղվարելում. այստեղ հայերի հաստատվելու ստույգ ժամանակը հայտնի չէ, բայց կասկածից վեր է, որ առնվազն ԺԸ դարում գյուղն ուներ հայ գաղթականություն:

1849 թ. հայ ծխերի քանակը հասնում էր 35-ի, մինչդեռ բնիկ վրացիները կազմում էին շուրջ 700 տուն²³¹: 1874 թ. արդեն Ղվարելում բնակվում էին 79 հայ, 7 ռուս և 3232 վրացի՝ ընդամենը 3318 բնակիչ²³²:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ²³³	38	113	98	211
1841 ²³⁴		100	73	173
1842 ²³⁵		98	83	181

224 Նույն տեղում, գ. 853, ք. 9:
 225 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, ք. 125-126:
 226 Նույն տեղում, գ. 3825, ք. 7-8:
 227 Նույն տեղում, գ. 3830, ք. 130-131:
 228 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:
 229 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 230 “Кавказский Календарь на 1915 г.”, с. 125.
 231 **Տեր Գազարեանց Յովհաննես վարդապետ Արշարունի,** նշվ. հոդվ., էջ 284:
 232 “Кавказский календарь на 1886 г.”, с. 117. Անհնայտ է, որ հայերի թվաքանակը փոքր-ինչ նվազեցված է:
 233 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 27-29:
 234 Նույն տեղում, գ. 3802, ք. 42-43:
 235 Նույն տեղում, գ. 3805, ք. 92-93:

1843 ²³⁶	94	83	177
1844 ²³⁷	83	71	154
1845 ²³⁸	83	72	155
1847 ²³⁹	62	59	121
1849 ²⁴⁰	35	61	102
1852 ²⁴¹	60	37	97
1853 ²⁴²	45	41	86
1854 ²⁴³	42	40	82
1857 ²⁴⁴	30	31	61
1858 ²⁴⁵	30	30	60
1860 ²⁴⁶	27	33	60
1861 ²⁴⁷	45	36	81
1862 ²⁴⁸	43	32	75
1863 ²⁴⁹	42	33	75
1864 ²⁵⁰	42	33	75
1865 ²⁵¹	11	44	72
1867 ²⁵²	41	28	69
1870 ²⁵³	42	44	86
1873 ²⁵⁴	46	50	96
1874 ²⁵⁵	43	52	95
1875 ²⁵⁶	42	51	93
1876 ²⁵⁷	43	53	96
1877 ²⁵⁸	40	54	94
1878 ²⁵⁹	45	48	93
1880 ²⁶⁰	52	53	105
1881 ²⁶¹	51	57	108
1882 ²⁶²	51	57	108
1883 ²⁶³	53	60	113
1885 ²⁶⁴	50	63	113
1889 ²⁶⁵	46	73	119
1890 ²⁶⁶	48	72	120
1891 ²⁶⁷	49	56	105

236 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:
 237 Նույն տեղում, գ. 3808, ք. 45-46:
 238 Նույն տեղում, գ. 3811, ք. 106-107:
 239 Նույն տեղում, գ. 3814, ք. 67-68:
 240 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:
 241 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:
 242 Նույն տեղում, գ. 2743, ք. 125-126:
 243 Նույն տեղում, գ. 3825, ք. 7-8:
 244 Նույն տեղում, գ. 3830, ք. 130-131:
 245 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:
 246 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:
 247 Նույն տեղում, գ. 3839, ք. 6:
 248 Նույն տեղում, գ. 3836, ք. 7:
 249 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:
 250 Նույն տեղում, գ. 3846, ք. 14:
 251 Նույն տեղում, գ. 3848, ք. 23-24, 54:
 252 Նույն տեղում, գ. 3851, ք. 4:
 253 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:
 254 Նույն տեղում, գ. 3862, ք. 51:
 255 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:
 256 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:
 257 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:
 258 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:
 259 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:
 260 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:
 261 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:
 262 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:
 263 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:
 264 Նույն տեղում, գ. 3877, ք. 33:
 265 Նույն տեղում, գ. 3884, ք. 5:
 266 Նույն տեղում, գ. 3887, ք. 140:
 267 Նույն տեղում, գ. 3889, ք. 139:

1892 ²⁶⁸	51	54	105
1893 ²⁶⁹	49	52	101
1894 ²⁷⁰	52	57	109
1897 ²⁷¹	48	57	105
1898 ²⁷²	50	57	107
1899 ²⁷³	51	57	108
1900 ²⁷⁴	52	55	107
1901 ²⁷⁵	55	57	112
1902 ²⁷⁶	53	57	110
1906 ²⁷⁷	28	27	55
1908 ²⁷⁸	28	61	56
1910 ²⁷⁹	76	63	139
1912 ²⁸⁰	11	71	66

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ԺԹ դարի սկզբներից մինչև նույն դարի 60-ականները Ղվարելում հայերի թիվն անընդհատ նվազել է, իսկ այնուհետև մինչև Ի դարի սկզբները կրկին աճել, բայց չի հասել իր սկզբնական մակարդակին: 1914 թ. Ղվարելն ուներ 4737 բնակիչ, ճնշող մեծամասնությամբ վրացիներ²⁸¹:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Տեր Ղազար Յարութինեան, կինն՝ Մագթաղին, միս աշխարհական որդիք՝ Յովսէփ և Իովանէ, դստերք՝ Քալի և Քէրէվան, Դօլմազի որդիք՝ Ռէվազ, Գաբրիէլ և Բէժան, Ռէվազի որդիք՝ Եսայի, Գուրգէն, Գիօրգի և Դաւիթ, դուստր՝ Մարիամ, Գաբրիէլի կինն՝ Մարիամ, որդի՝ Գիգոլ, Բէժանի կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Ստէփանէ, Անդրի, Դէմէտրէ և Յոհաննէս, դստերք՝ Նինօ և Մարթայ, Եսայիի կինն՝ Շուշան, Գուրգէնի կինն՝ Մայիա:

2. Աւօյի այրի կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Անանիա, Իանէ և Գիօրգի, դուստր՝ Դարէջան:

3. Բախնդուրի որդիք՝ Թաթօ, Գէգօ և Սիմօն, Թաթօյի կինն՝ Մայիա, դստերք՝ Մարթայ և Նինօ, Գիգոյի կինն՝ Խանփէրվան, որդի՝ Դաւիթ:

4. Սիմօնի որդի՝ Գիօրգի, կինն՝ Մաթօ, որդի՝ Յակոբ, սորա մայր՝ Աննա և եղբայր Կաճայ և Բէժանի որդիք՝ Գիօրգի և Եօրդանէ, Գիօրգի Բէժանեանի կինն՝ Նինօ, այլև Բէժանի խորթ որդին՝ Չաքարիա և դուստր՝ Բարբարէ:

5. Երալի որդիք՝ Մօսէ և Թամազ, Մօսիմի կինն՝ Թումիան, որդիք՝ Կօղի և Սօսի, ևս Սիմօն, դուստր՝ Անախանում, Թամազի կինն՝ Մարթայ, դուստր՝ Մայիա:

6. Դաթնի այրի կինն՝ Թինաթին, որդիք՝ Նինի և Դէմէտրէ:

7. Կարապետի որդի՝ Գիօրգի, կինն՝ Մարթայ, որդի՝ Սիմօն, դուստր՝ Մարիամ:

8. Գուրգէնի որդիք՝ Ռէվազ, Գիգոլ և Գիօրգի, մայր՝ Մագթաղին, Ռէվազի կինն՝ Մայիա, դստերք՝ Նինօ և Մարթայ, Գիգոյի կինն՝ Մարթայ:

268 Նույն տեղում, գ. 3891, թ. 111:

269 Նույն տեղում, գ. 3895, թ. 27:

270 Նույն տեղում, գ. 3896, թ. 164-165:

271 Նույն տեղում, գ. 3899, թ. 137-138:

272 Նույն տեղում, գ. 3897, թ. 159:

273 Նույն տեղում, գ. 3903:

274 Նույն տեղում, գ. 3905, թ. 8:

275 Նույն տեղում, գ. 3906, թ. 2:

276 Նույն տեղում, գ. 3907, թ. 13-14:

277 Նույն տեղում, գ. 3915, թ. 6:

278 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 21:

279 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 4:

280 Նույն տեղում, գ. 853, թ. 9, գ. 3919, թ. 52-53:

281 “Кавказский календарь на 1915 г.”, с. 138.

9. Յարութինի որդիք՝ Նինի, Սիմօն և Տուրայ, մայր՝ Թինաթին, Նինիի կինն՝ Թինաթին:

10. Առաքելի որդի՝ Գօգի, կինն՝ Մարիամ, որդիք՝ Նինի և Գիգոյի, դուստր՝ Թինաթին, Նինիի կինն՝ Թինաթին, որդի՝ Մաթէ:

11. Առաքելի որդի՝ Յարութին, կինն՝ Մարիամ, որդիք՝ Սորբալօ և Մարկոս:

12. Առաքելի որդի՝ Նինի, կինն՝ Բարբարէ, որդի՝ Գլախա, դստերք՝ Մայիա և Մարիամ:

13. Ասլանի որդիք՝ Գիգօլ, Նօնի և Գօգի, Գիգօլի կինն՝ Մարթայ, որդիք՝ Դաթ և Գարսէվան, դուստր՝ Մաթէր, Նօնիի կինն՝ Աննա, դստերք՝ Էլիսաբէր և Քէրէվան, Գօգիի կինն՝ Աննա, որդի՝ Սօսի:

14. Բէժանի որդի՝ Դաթ, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Մամուլ, դուստր՝ Թինաթին, մայր՝ Մագթաղին, ևս եղբայր Դաթնի՝ Մարգիա:

15. Կարապետի որդի՝ Հանէս, կինն՝ Մարիամ, որդիք՝ Մօսէ և Սօսի:

16. Կալանօզի Շաքարօ, կինն՝ Թամար, որդիք՝ Իանէ և Սօսի, դուստր՝ Նինօ, Իանէի կինն՝ Մայիա:

17. Գիգօլի որդի՝ Պէտի, կինն՝ Մարթայ, որդիք՝ Գիգօլ և Սօսի, դուստր՝ Քէրէվան:

18. Սօրբոյի որդի՝ Փարսադան, կինն՝ վրացի Էլիսաբէր, դուստր՝ հայի գուրվ՝ Մարիամ:

19. Յակոբի որդի՝ Պէպան, կինն՝ Մայիա, որդի՝ Սօլօման, դուստր՝ Մարիամ:

20. Դավլաթ Գալուստ, կինն՝ Մարթայ, որդի՝ Մարտիրոս:

21. Երեցվորի Գիօ, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Նաստիղ:

22. Կրիճենի որդի՝ Գլախա, կինն՝ Մայա, որդի՝ Սարբալօ, կինն՝ Աննա, դուստր Մարթայ:

23. Ջուրաբի որդիք՝ Թէվորտէ, Ազարիա և Գիօրգի, մայր՝ Մարիամ, դուստր՝ Թամար, Գիօրգայ կինն՝ Քէրէվան, դուստր՝ Նինօ:

24. Դալլաթ Պէպան Յարութինեան, կինն՝ Նանօ, դուստր՝ Մաթէր:

25. Յակոբի որդի՝ Գլախա, կինն՝ Դարէջան, որդիք՝ Սիմօն և Գիգօլի, դուստր՝ Նինօ:

26. Նիազի որդի՝ Յարութին, կինն՝ Շուշան, որդի՝ Գիգօլ:

27. Խարազ Անտօն, կինն՝ Մայիա, որդի՝ Գիօրգի, դուստր՝ Շուշան:

28. Բօշի որդի՝ ղիլբանդ Անտօն, կինն՝ Մայիա, որդի՝ Պէտրոս:

29. Աթօյի այրի կինն՝ Թինաթին, որդի՝ Չաքար, կինն՝ Դարէջան և դստերք՝ Քալի և Մայիա:

30. Մէսվէլէ Առաքել, կինն՝ Մայիա:

31. Սօրբոյի որդի՝ Յովսէփ, կինն՝ Մայիա, մայր՝ Լալօ:

32. Սուրամէլ Ջուրաբ, կինն՝ Քէրէվան, որդիք՝ Աղոզոմէլ և Գիօ և եղբոր Պէտիմի կինն՝ այրի Մարմար, որդի՝ Սարբալօ, դուստր՝ Թինաթին:

33. Սուրամէլ Դաւիթ, որդի Իանէ և եղբոր Բէժանի որդիքն՝ Գիօրգի և Դարիթ, Իանէի կինն՝ Աննա, որդի՝ Չաքարիա, Գիօրգոյ կինն՝ Մաթէր և դուստր՝ Մարիամ:

34. Մարթի որդիք՝ Սօսի և Գիօրգի, Սօսիի կինն՝ Մաթէր, մայրն՝ Էլիսաբէր, քոյր՝ Նանօ:

35. Ջուլիակ Գօտէրծ, կինն՝ Անախանում, որդիք՝ Գլախա և Յարութին, դուստր՝ Թինաթին:

36. Սկրտումի որդի՝ Գէվօ, կինն՝ Հօօօմսիմ, դուստր՝ Մարթայ:

37. Աւօյի այրի կինն, որդիք՝ Թէրօն, Սիմօն և Թաթօ, Թէրօյի կինն՝ Մարթայ:

38. Սօրբոյի որդի՝ Մուդալ և Ջուրաբի որդի՝ Յարութին»²⁸³:

Մբ. Աստվածածին եկեղեցի. կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ: Վավերագրերում առաջին

283 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 27:

անգամ 1818 թ. հիշատակված փայտաշեն եկեղեցին կառուցվել էր Ղազար քահանա Հարությունյանի և վելիսցիխեցի Շաքարո Սկրտունյանի միջոցներով²⁸⁴:

1840 թ. հոկտեմբերի 20-ին եկեղեցին հիշվում է մի գողության առիթով, որի արդյունքում «...եկեղեցին մնացել է զուրկ ի սպասուց...»²⁸⁵: 1844 թ. եկեղեցին դեռևս փայտաշեն էր²⁸⁶, իսկ 1849 թ. հիշվում է «նոր եկեղեցի աղյուսակերտ»²⁸⁷: Պարզ է, որ 1844-1849 թթ. միջակայքում փայտաշեն եկեղեցու փոխարեն կառուցվել է նոր՝ աղյուսաշեն եկեղեցի և կրկին օծվել Սբ. Աստվածածնի անվամբ:

1909 թ. եկեղեցու նորընտիր երեցփոխ է հիշվում Գևորգ Միքայելյան Մումխյանցը, որը փոխարինել էր Նիկողայոս Հովհաննիսյան Սիմոնյանցին²⁸⁸:

Եկեղեցին գոյություն է ունեցել մինչև 1970-ական թվականները և հիմքից քանդվել է տեղական իշխանությունների որոշմամբ:

Ավելորդ չէ նշել, որ Ղվարելում կար նաև 4 ուղղափառ եկեղեցի²⁸⁹:

Եկեղեցական իրեր. մի քանիսն ունեին հակիրճ հիշատակագրություններ²⁹⁰: Ահա դրանք.

Շուրջառ.

Յիշատակ Դեղէքօ կնօջ եւ Տ(է)ր Ղազար ք(ա)հ(ա)ն(ա)յի:

Շուրջառ.

Յիշատակ Տէր Ղազար ք(ա)հ(ա)ն(ա)յի:

Վակաս, խաչի պատվանդանին՝

Ընծայեցի ի սեր Ա(ստուա)ծածնայ եկ(ե)ղ(ե)ց-ւ(ո)յն Երալի որդի Մովսէս:

Սկիհ.

Յիշատակ Տ(է)ր Դաթի, որ է կլէկ:

Սկիհ.

Յիշատակ Գաբրիէլի:

Չեռաց խաչ՝

Յիշատակ ջուլիակ Գէորգի:

Չեռաց խաչ (պատվանդանին գրված).

Յարութիւն եւ է իւր կնոջ Մարիամէն:

Աստվածածնի պատկեր.

Յիշատակ երեցփոխ Գիօտն:

Քահանա. *Տեր Ղազար Հարությունյան.* գյուղին հովվում էր 1804-1818 թթ.: Ծնվել է 1782 թ., ձեռնադրվել 1804-ին Սարգիս արքեպիսկոպոսի կողմից: 3

284 Նույն տեղում:

285 Նույն տեղում, գ. 52, ք. 1: Տես նաև՝ ֆ. 56, գ. 1, գ. 927, ք. 1:

286 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 3809, ք. 45:

287 **Տեր Ղազարեանց Յովհ. Արշարունի.** նշվ. հողվածը, էջ 284:

288 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 1303, ք. 1:

289 **Зедгинидзе Е.,** Село Кварели, “СМОМПК», вып. XVII, Тифлис, 1893, с. 73.

290 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 2569, ք. 27: Ի դեպ, երեցփոխ Գիոն հիշվում է 1818 թ. (նույն տեղում):

որդիներից Հարությունը գյուղի տիրացուն էր (ծնված՝ 1811)²⁹¹:

Տեր Պետրոս. հիշվում է 1840 թ.²⁹²:

Հայ բնակչություն ունեցող երկրամասի շատ գյուղերի նման երբեմն Ղվարելն էլ էր զուրկ մնում քահանայից: Այդ պատճառով, օրինակ, 1911 թ. ամբողջ տարվա ընթացքում եկեղեցին փակ էր մնացել²⁹³:

1858 թ. Ղվարելում ծնվել է հայ մեծանուն երաժշտահան Գեներարիոս Ղորղանյանը²⁹⁴:

ՃԻՆՃՐԻԱՆ

Տեղադրություն. դա մեզ չի հաջողվել ճշտել: Սակայն ԺԹ դարում Դինճրիանը գավառի փոքր գյուղերից էր և մոտակա Տուրիսցիխե, Փաշաան, Շիլդա և Աղտգոմա գյուղերի հետ կազմում էր մի գյուղախումբ:

Հայերը Դինճրիանում. 1818 թ. այստեղ բնակվում էին 3 տուն հայեր, իսկ 1857-1870 թթ. ընթացքում՝ միայն մի ընտանիք: Մեփական եկեղեցի, գերեզմանոց և քահանա երբևէ չեն ունեցել:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի բնակիչների թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ²⁹⁵	3	7	7	14
1857 ²⁹⁶		2	1	3
1858 ²⁹⁷		2	1	3
1860 ²⁹⁸		2	1	3
1861 ²⁹⁹		1	1	2
1862 ³⁰⁰		1	2	3
1863 ³⁰¹		1	2	3
1864 ³⁰²		1	2	3
1865 ³⁰³	1	1	1	2
1867 ³⁰⁴		1	1	2
1870 ³⁰⁵		1	1	2

Հետագա տարիներին գյուղում հայ բնակիչներ վկայված չեն:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է գյուղի հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Թաղաշարար Յարութիւնի որդիք՝ Գօզի և Սարգիս, մայր՝ Մանիճաւ, Գօզիին կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Գիգօլի, Սարգիս կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Սիմօն:

291 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 2569, ք. 27:

292 Նույն տեղում, գ. 52, ք. 1:

293 Նույն տեղում, գ. 1303, ք. 5:

294 «Արձագանք» 1890, № 5, էջ 5:

295 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 2569, ք. 26:

296 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:

297 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:

298 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:

299 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:

300 Նույն տեղում, գ. 3836, ք. 6:

301 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:

302 Նույն տեղում, գ. 3846, ք. 14:

303 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23, 54:

304 Նույն տեղում, գ. 3851, ք. 3:

305 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:

2. Չուրաբի որդի՝ Մամուկի, դստերը՝ Մարիամ և Քեթևան, Իսանէի դուստր՝ Թամար:

3. Գանջէլ Յարութիւնի կինն՝ Մարիամ, դուստր՝ Էլիսաբեթ»³⁰⁶:

ՆՈՐ (ՆԵՐՔԻՆ, ԱԽԱԼԻ) ԳՎՎԱԶ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևելք՝ Ալազանի ձախ ավից 2 կմ հեռու, խաղողի այգիներով շրջապատված հարթ դաշտավայրում:

Հայերը Նոր Գավազում. գյուղի անվանումն արդեն իսկ հուշում է, որ այն հին չէր: Հայերի թիվն այստեղ խիստ աննշան էր: Ի դեպ, խնդրին առնչվող վավերագրերն էլ հազվադեպ են: Հայտնի է միայն, որ 1861թ. գյուղում բնակվում էին ընդամենը 9 շունչ հայեր (6 ար. և 3 իգ.)³⁰⁷: 1874 թ. գյուղի բնակչությունը կազմում էր 1619 շունչ³⁰⁸, իսկ 1914 թ.՝ 1615 շունչ³⁰⁹: Հետևում է, որ Նոր Գավազը գրեթե ամբողջությամբ վրացաբնակ գյուղ է եղել:

Գյուղում հայերը եկեղեցի և գերեզմանոց չեն ունեցել:

ՇԱՔՐԻԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 21 կմ հյուսիս-արևմուտք՝ Ալազան գետի ձախ կողմում՝ Թելավ քաղաքից 17 կմ հյուսիս-արևելք:

Անվան ծագումը. մի վկայության համաձայն՝ գյուղն իր անունը ստացել է տեղի գինու քաղցրահամ տեսակի անվանումից. «...գիւղ մալ, որ Սաքրիան (շաքարի երկիր) կըսուի, իր գինւոյն տեսակին համար»³¹⁰:

Հայերը Շաքրիանում. հայերի թվաքանակը վավերագրերում արձանագրված է 1818-ից. սակայն տարածքում պահպանված հուշարձանները վկայում են հայերի գոյությունն առնվազն ԺՁ-ԺԷ դարերից: Ասենք, որ դա հավանական է հենց միայն այն պատճառով, որ նույն դարերում իր գոյության ծաղկուն շրջանն էր ապրում Գրեմ մայրաքաղաքը, որը, ինչպես հայտնի է, ուներ հոծ հայ բնակչություն և շատ մոտ էր Շաքրիանին (8 կմ արևելք):

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք շաքրիաբնակ հայերի թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ³¹¹	11	38	30	68
1841 ³¹²		58	60	118
1842 ³¹³		56	60	116
1843 ³¹⁴		58	62	120

306 Նույն տեղում, գ. 2569, թ. 26:
 307 Նույն տեղում, գ. 3839, թ. 6:
 308 “Кавказский календарь на 1886 г.”, с. 117.
 309 “Кавказский календарь на 1915 г.”, с. 167.
 310 **Գարլա Մերենա**, նշվ. հոդվ., էջ 323:
 311 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 24: Ի դեպ, շաքրիանցի հայերից երկուսը ծագումով Ղարաբաղից էին:
 312 Նույն տեղում, գ. 3802, թ. 41-42:
 313 Նույն տեղում, գ. 3805, թ. 92-93:
 314 Նույն տեղում, գ. 3805, թ. 46-47:

1844 ³¹⁵		57	59	116
1845 ³¹⁶		59	60	119
1847 ³¹⁷		52	54	106
1849 ³¹⁸	16	43	50	93
1852 ³¹⁹		44	62	106
1853 ³²⁰		47	62	109
1854 ³²¹		46	61	107
1857 ³²²		53	49	102
1858 ³²³		50	52	102
1860 ³²⁴		51	56	107
1861 ³²⁵		53	50	103
1862 ³²⁶		54	52	106
1863 ³²⁷		55	52	108
1864 ³²⁸		55	51	106
1865 ³²⁹	14	51	50	101
1867 ³³⁰		41	46	87
1870 ³³¹		40	42	82
1873 ³³²		33	37	70
1874 ³³³		31	36	67
1875 ³³⁴		31	34	65
1876 ³³⁵		27	33	60
1877 ³³⁶		27	31	58
1878 ³³⁷		27	30	57
1880 ³³⁸		27	33	60
1881 ³³⁹		26	35	61
1882 ³⁴⁰		25	34	59
1883 ³⁴¹		23	34	57
1885 ³⁴²		22	36	58
1889 ³⁴³		20	40	60
1890 ³⁴⁴		20	40	60
1891 ³⁴⁵		30	28	58
1892 ³⁴⁶		32	30	62

315 Նույն տեղում, գ. 3809, թ. 45-46:
 316 Նույն տեղում, գ. 3811, թ. 106-107:
 317 Նույն տեղում, գ. 3814, թ. 67-68:
 318 **Տեր Ղազարեանց Յովհաննես վարդապետ Արշարունի**, նշվ. հոդվ., էջ 283: Նաև՝ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 32-33:
 319 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, թ. 64-65:
 320 Նույն տեղում, գ. 2743, թ. 125-126:
 321 Նույն տեղում, գ. 3825, թ. 7-8:
 322 Նույն տեղում, գ. 3830, թ. 129-130:
 323 Նույն տեղում, գ. 3823, թ. 129-130:
 324 Նույն տեղում, գ. 3833, թ. 5:
 325 Նույն տեղում, գ. 3835, թ. 5:
 326 Նույն տեղում, գ. 3836, թ. 6:
 327 Նույն տեղում, գ. 3843, թ. 45-46:
 328 Նույն տեղում, գ. 3846, թ. 13:
 329 Նույն տեղում, գ. 3848, թ. 22-23, 54:
 330 Նույն տեղում, գ. 3851, թ. 3:
 331 Նույն տեղում, գ. 3857, թ. 62-63:
 332 Նույն տեղում, գ. 3862, թ. 51:
 333 Նույն տեղում, գ. 3864, թ. 35:
 334 Նույն տեղում, գ. 3866, թ. 7:
 335 Նույն տեղում, գ. 3868, թ. 6:
 336 Նույն տեղում, գ. 3869, թ. 3:
 337 Նույն տեղում, գ. 3870, թ. 57:
 338 Նույն տեղում, գ. 3872, թ. 2:
 339 Նույն տեղում, գ. 3873, թ. 2:
 340 Նույն տեղում, գ. 3874, թ. 2:
 341 Նույն տեղում, գ. 3875, թ. 22:
 342 Նույն տեղում, գ. 3877, թ. 33:
 343 Նույն տեղում, գ. 3884, թ. 5:
 344 Նույն տեղում, գ. 3887, թ. 139:
 345 Նույն տեղում, գ. 3889, թ. 138:
 346 Նույն տեղում, գ. 3891, թ. 110:



ՇԱՔՐԻԱՆ. գյուղի ընդհանուր տեսքը

1893 ³⁴⁷	32	30	62
1894 ³⁴⁸	36	32	68
1897 ³⁴⁹	40	37	77
1898 ³⁵⁰	18	11	29
1899 ³⁵¹	19	13	32
1900 ³⁵²	18	13	31
1901 ³⁵³	17	12	29
1902 ³⁵⁴	18	16	34
1906 ³⁵⁵	10	5	15
1908 ³⁵⁶	5	9	15
1910 ³⁵⁷	11	8	19
1912 ³⁵⁸	13	10	23

Աղյուսակից երևում է, որ հայերի թիվը շարունակաբար նվազել է: Դա պայմանավորված է եղել ինչպես բռնի դավաճանափոխության պարբերաբար կրկնվող դեպքերով, այնպես էլ վերջինիս հետևանքով ծայր առած արտագաղթի ու նաև ժամանակ առ ժամանակ տարածվող մահաբեր հիվանդություններիով:

1914 թ. գյուղն ուներ 287 բնակիչ³⁵⁹:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է շաքրիանցի հայերի հետևյալ անվանացուցակը.

347 Նույն տեղում, գ. 3895, թ. 27:
 348 Նույն տեղում, գ. 3896, թ. 163-164:
 349 Նույն տեղում, գ. 3899, թ. 136-137:
 350 Նույն տեղում, գ. 3897, թ. 158:
 351 Նույն տեղում, գ. 3903:
 352 Նույն տեղում, գ. 3905, թ. 8:
 353 Նույն տեղում, գ. 3906, թ. 2:
 354 Նույն տեղում, գ. 3907, թ. 12-13:
 355 Նույն տեղում, գ. 3915, թ. 6:
 356 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 21:
 357 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 5:
 358 Նույն տեղում, գ. 3919, թ. 51-52:
 359“Кавказский календарь на 1915 г.”, с. 209.


- «1. Նօնիհի որդիք՝ Լազարե, Իսակ, Սօսի և Թէմուր, դուստր՝ Մարթայ, մայր՝ Անախանում:
- 2. Դաթի որդի՝ Բասիլ, կինն՝ Մարթայ, որդիք՝ Թօմայ և Ստեփան, դուստր՝ Աննա:
- 3. Թէվազի որդի՝ Նաստիլ, կինն՝ Մարիամ, որդի՝ Սիմօն, մայր՝ Մարթայ, Սիմօնի կինն՝ Էլէնէ, որդի՝ Ստեփան:
- 4. Գարդէշի որդի՝ Թաթօ, կինն՝ Բարբարե, որդիք՝ Ջուրաբ և Իւանէ, դստերք՝ Մարթայ և Դասիա:
- 5. Գիօրգայ որդիք՝ Գօգի, Կօնի, Բաստս և Բէժան, Գօգիհի կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Գլախա և Սիմօն, դուստր՝ Մարթայ, Բաստսի կինն՝ Էլիսաբեդ, Կօնիհի կինն՝ Աննա, որդի՝ Սօսի, Բէժանի կինն՝ Էլիսաբեդ:
- 6. Սիմօնի որդիք՝ Դալիթ և Շաքար, Դալիթի կինն՝ Դարեջան, որդիք՝ Նաստիլ, Սիմօն և Լազարե, Շաքարի կինն՝ Մարիամ, որդի՝ Յարութիւն:
- 7. Սարգսի որդի՝ Կիկօ, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Իւանէ, Գօգի և Մարգիս, դստերք՝ Աննա, Թինաթին և Մարթայ:
- 8. Ալահվերդայ որդի՝ Բաղայ, կինն՝ Մարմար:
- 9. Պապայի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Աննա, որդի՝ Սօսի, դստերք՝ Թամար և Անախանում:
- 10. Ղարաբաղցի Մարտիրոս, կինն՝ Հերիքնագ, որդի՝ Սօսի, դստերք՝ Մարիամ և Էլիսաբեդ:
- 11. Ղարաբաղցի Գասպար, կինն՝ Նանավերդի, որդիք՝ Սկրտում և Սօսի, դուստր՝ Մարիամ»³⁶⁰:

Սր. Գևորգ եկեղեցի, մատուռ. կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ: 1840 թ. վավերագրում գյուղում հիշվում է երկու եկեղեցի, մեկը՝ գյուղամիջում՝ փայտաշեն, մյուսը՝ գյուղի հարավարևմտյան կողմում՝ հայոց գերեզմանատան մեջ՝ քարաշեն: Վերջինս ավելի մատուռ է, քան եկեղեցի: Երկուսն էլ հիշվում են Սր. Գևորգ անվամբ³⁶¹: Թեև 1852 թ. մի փաստաթղթում գյուղամիջի եկեղեցին հիշատակվում է արդեն «քակտեալ հիմամբ»³⁶² ձևով, բայց հետագա

360 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 24:
 361 Նույն տեղում, գ. 13798, թ. 30:
 362 Նույն տեղում, գ. 3819, թ. 64-65:



ՇԱՔՐԻԱՆ. գերեզմանատան Սբ. Գևորգ մատուռը և դրա հարավային պատի մեջ ագուցված արձանագիր խաչքարը (ԺՁ դ.)



ՇԱՔՐԻԱՆ. գերեզմանատան Սբ. Գևորգ մատուռի հատակագիծը

վավերագրերում բազմիցս նշվում է. ուստի, հասկանալի է, որ այն վերանորոգվել կամ վերակառուցվել էր: Երկու եկեղեցիներն էլ պարբերաբար հիշվում են ընդհուպ 1910-ական թվականները:

Մեր այցելության ժամանակ՝ 1988 թ., գոյություն ուներ միայն գերեզմանատան Սբ. Գևորգ մատուռը: Այն անմշակ քարով, կրաշաղախով, անկանոն հատակագծով թաղակապ փոքրիկ ու հասարակ շենք է: Խորանն ուղղանկյուն է: Միակ մուտքը բացված է արևմուտքից, իսկ լուսամուտը՝ արևելքից: Խորանի կենտրոնում սեղանի վեմ քարն է: Արևմտյան կողմում, մուտքի սեղանի առջև է հիմնավեր փոքրիկ գավիթը: Մատուռի արտաքին չափերն են՝ 4,90 x 4 մ: Ուշագրավ է հատկապես մատուռի հարավային պատի մեջ ագուցված փոքրիկ խաչքարը (41 x 35 սմ), որի աջ կողմում խազագիր փորագրությամբ կա կիսատեղծ արձանագրության մնացորդ.

Ես Մաթեոս կ(անկն)եց[ի] յիշ(ա)տ(ա)կ Գոգ...:

Գերեզմանոց. մատուռի շուրջ տարածված գերեզմանոցում պահպանվել են բազմաթիվ անմշակ

սալատապաններ: Դրանցից և ոչ մեկը չունի արձանագրություն կամ զարդաքանդակ: Հավանաբար, ԺԵ-ԺԷ դարերի հնավայր է:

ՇԻԼԴԱ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հյուսիս-արևմուտք՝ Ալազան գետի ձախ վտակներից մեկի ափին:

Ներկայիս Ղվարելի շրջանի գլխավոր բնակավայրերից է:

Հայերը Շիղայում. այստեղ սակավաթիվ հայերը, հավանաբար, հաստատվել են ԺԸ դարի վերջերին:

1905 թ. Շիղայում հիշվում են 5 տեղացի և 24 եկվոր հայեր³⁶³:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ³⁶⁴	13	39	30	69
1841 ³⁶⁵		35	24	59
1842 ³⁶⁶		31	24	55
1843 ³⁶⁷		33	24	57
1844 ³⁶⁸		32	25	57
1845 ³⁶⁹		32	25	57
1847 ³⁷⁰		47	32	79
1849 ³⁷¹		45	19	64

363 1923. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 853, ք. 1:

364 Նույն տեղում, գ. 2569, ք. 26:

365 Նույն տեղում, գ. 3802, ք. 42-43:

366 Նույն տեղում, գ. 3805, ք. 92-93:

367 Նույն տեղում, գ. 3805, ք. 46-47:

368 Նույն տեղում, գ. 3809, ք. 45-46:

369 Նույն տեղում, գ. 3811, ք. 106107:

370 Նույն տեղում, գ. 3814, ք. 67-68:

371 Նույն տեղում, գ. 3818, ք. 32-33:

1852 ³⁷²	22	19	41	1900 ⁴⁰³	42	41	83	
1857 ³⁷³	14	19	33	1901 ⁴⁰⁴	44	42	86	
1858 ³⁷⁴	15	19	34	1902 ⁴⁰⁵	45	43	88	
1860 ³⁷⁵	15	21	6	1906 ⁴⁰⁶	25	23	48	
1861 ³⁷⁶	14	12	26	1908 ⁴⁰⁷	10	35	36	71
1862 ³⁷⁷	10	11	21	1910 ⁴⁰⁸		37	32	69
1863 ³⁷⁸	10	10	20	1912 ⁴⁰⁹	6	42	33	75
1864 ³⁷⁹	7	9	16					
1865 ³⁸⁰	5	6	9					
1867 ³⁸¹		9	11					
1870 ³⁸²		22	22					
1873 ³⁸³		27	26					
1874 ³⁸⁴		29	26					
1875 ³⁸⁵		30	27					
1876 ³⁸⁶		32	27					
1877 ³⁸⁷		34	26					
1878 ³⁸⁸		32	26					
1880 ³⁸⁹		34	29					
1881 ³⁹⁰		34	30					
1882 ³⁹¹		31	32					
1883 ³⁹²		31	33					
1885 ³⁹³		32	35					
1889 ³⁹⁴		33	33					
1890 ³⁹⁵		32	33					
1891 ³⁹⁶		32	27					
1892 ³⁹⁷		33	27					
1893 ³⁹⁸		33	27					
1894 ³⁹⁹		35	33					
1897 ⁴⁰⁰		36	41					
1898 ⁴⁰¹		38	42					
1899 ⁴⁰²		40	43					

372 Նույն տեղում, գ. 3819, ք. 64-65:

373 Նույն տեղում, գ. 3830, ք. 129-130:

374 Նույն տեղում, գ. 3823, ք. 129-130:

375 Նույն տեղում, գ. 3833, ք. 5:

376 Նույն տեղում, գ. 3839, ք. 5:

377 Նույն տեղում, գ. 3836, ք. 6:

378 Նույն տեղում, գ. 3843, ք. 45-46:

379 Նույն տեղում, գ. 3846, ք. 13:

380 Նույն տեղում, գ. 3848, ք. 22-23, 54:

381 Նույն տեղում, գ. 3851, ք. 3-4:

382 Նույն տեղում, գ. 3857, ք. 62-63:

383 Նույն տեղում, գ. 3862, ք. 51-52:

384 Նույն տեղում, գ. 3864, ք. 35:

385 Նույն տեղում, գ. 3866, ք. 7:

386 Նույն տեղում, գ. 3868, ք. 6:

387 Նույն տեղում, գ. 3869, ք. 3:

388 Նույն տեղում, գ. 3870, ք. 57:

389 Նույն տեղում, գ. 3872, ք. 2:

390 Նույն տեղում, գ. 3873, ք. 2:

391 Նույն տեղում, գ. 3874, ք. 2:

392 Նույն տեղում, գ. 3875, ք. 22:

393 Նույն տեղում, գ. 3877, ք. 33: Ըստ մեկ այլ աղբյուրի՝ նույն քվականին գյուղի 2963 բնակիչներից հայեր էին միայն 42-ը, մնացածը՝ վրացի («Кавказский календарь на 1886 г.», с. 117).

394 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 13884, ք. 5:

395 Նույն տեղում, գ. 3887, ք. 140:

396 Նույն տեղում, գ. 3889, ք. 139:

397 Նույն տեղում, գ. 3891, ք. 111:

398 Նույն տեղում, գ. 3895, ք. 27:

399 Նույն տեղում, գ. 3896, ք. 164-165:

400 Նույն տեղում, գ. 3899, ք. 136-137:

401 Նույն տեղում, գ. 3897, ք. 159:

402 Նույն տեղում, գ. 3903:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ մինչև Ի դարի սկզբները գյուղի հայերի թվաքանակը համարյա մնացել է անփոփոխ՝ մերթ ընդ մերթ որոշ չափով աճելով ու պակասելով: Գյուղի բնակչությունը հաճախ զգալի քանակով նվազել է նաև վարակիչ հիվանդությունների հետևանքով⁴¹⁰: 1914 թ. գյուղի բնակչության թվաքանակը 3450 շունչ⁴¹¹ էր: Դրա մի աննշան մասը (70-80 մարդ) հայեր էին, մնացածը՝ վրացի:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է շիրվաթյաբնակ հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Շերմազանի որդի՝ Յոհաննես, կինն՝ Էլենե, որդիք՝ Նոնի և Դաիթ, դստերք՝ Շուշան, Մայիա և Տասի, Նոնիի կինն՝ Մալոմ:

2. Շերմազանի որդիք՝ Գիգոյի և Յարութին, Գիգոյույ կինն՝ Խանփեթի, որդիք՝ Դաիթ և Գիգոգի, Յարութինի կինն՝ Սոփիո, որդիք՝ Պեպան և Էսխաղի:

3. Շերմազանի որդի՝ Մատի, կինն՝ Ուսնիփեթ, որդի՝ Բաղդասար, դստերք՝ Ովսաննա և Մարիամ:

4. Աղաջանի որդիք՝ Թաթո, Մոսե, Գիգի, Գոգի, Թաթոյի կինն՝ Մանիժա, որդիք՝ Կիկո և Ջաթար, դուստր՝ Մարթայ, Սոսի-նի կինն՝ Էթար:

5. Յարութինի որդի՝ Թաթո, կինն՝ Դարեջան, որդիք՝ Սուլման և Գիգոգի:

6. Յարութինի որդի՝ Օթո, որդի՝ Բաղդասար, տրա փեսայն դարաբաղդի Յոնդադասազ, Յոհաննեսի կինն՝ Մայիա և եղբայր՝ Գալուստ:

7. Յարութինեան Գոգինի այրի կինն՝ Դարեջան, որդիք՝ Պետրոս, Յարութին և Յակոբ, դստերք՝ Մարթայ և Մարիամ:

8. Յարութինի որդի՝ Գրիգոր, կինն՝ Մարիամ:

9. Սահակի որդի՝ Ալետիք, այլևս անձն մի՛ թվավեցի ճարել, Ստեփան:

10. Մանթիկի որդիք՝ Մարտիրոս և Սոսի, Մարտիրոսի կինն՝ Աննա, որդի՝ Գրիգոր, դուստր՝ Մարթայ, Սոսիի կինն՝ Մարիամ և միս եղբոր՝ Պեպանի այրի կինն՝ Մարթայ:

11. Գանջել Գաբրիել, տրա որդին Յարութին:

12. Թիֆլիզցի Բեթղեհեմի ճուրա դավաթ Գիգոգույ որդիք՝ Թոմայ և Մովսես, Թոմի կինն՝ Մագթաղին, դստերք՝ Ովսաննա, Գայիանե և Նաթել:

13. Սոսինի կինն՝ Աննա և եղբոր՝ Նոնիի որդի՝ Գիգոգի և Յոհաննես»⁴¹²:

1905 թ. շիրվաթյաբնակ հայերը կրում էին հետևյալ ազգանունները՝ Ամիրխանյանց, Բիճյանց, Լվարսա-

403 Նույն տեղում, գ. 3905, ք. 8:

404 Նույն տեղում, գ. 3906, ք. 2:

405 Նույն տեղում, գ. 3907, ք. 13-14:

406 Նույն տեղում, գ. 3915, ք. 6:

407 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 21:

408 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 5:

409 Նույն տեղում, գ. 853, ք. 9, գ. 3919, ք. 52-53:

410 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 853, ք. 9:

411 «Кавказский календарь на 1915 г.», с. 210.

412 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 26:

բյանց, Հարությունյանց, Չուկակյանց, Շինգարտե-
լյանց, Փիփինյանց, Օհանյանց, Հովհաննիսյանց,
Տեր-Սարգսյանց, Դեմուրյանց, Մամայանց, Չոլա-
խյանց, Օթարյանց, Աղաջանյանց, Աղաջանյանց,
Շարմազանյանց, Յանքոլյանց, Թանդիլյանց, Հախ-
վերդյանց, Ալյանց, Տեր-Բարսեղյանց և այլն⁴¹³:

Եկեղեցի. մինչև 1850-ական թվականների վեր-
ջերը հայերը եկեղեցի չեն ունեցել: Թեև 1848 թ. մա-
յիսի 8-ին նրանք հոգևոր իշխանություններից ստա-
ցել էին գյուղում եկեղեցի կառուցելու թույլտվու-
թյուն, բայց դա կարողացան իրականացնել միայն
1858-1860 թթ. ընթացքում: Ընդ որում, այդ փայտա-
շեն, կղմինդրածածկ եկեղեցին կառուցել էին հա-
մազուղացի Չարարիա Մունթիկյանից գնած հո-
ղամասի վրա և օծել Սբ. Աստվածածնի անվամբ⁴¹⁴:

Դարավերջին շիրախարհակ հայերը որոշել էին
կառուցել նոր եկեղեցի. «1893 թուի մարտի 30-ից
Շիրազ գիւղի հայ հասարակութիւնը դիմել էր վիճա-
կային կոնսիստորին, խնդրելով թոյլ տալ նոր քա-
րուկրեայ եկեղեցի կառուցանելու հին փայտաշեն
եկեղեցու փոխարեն, ծախսելով առ այն եկեղեցու
դրամից 400 ռ. ...»⁴¹⁵: 1895 թ., սակայն, այդ աշխա-
տանքները դեռևս ավարտված չէին⁴¹⁶: Թելավի
գործակալ Աբել ավագ քահանա Մուքիասյանը
1906 թ. հոկտեմբերի 31-ին գրել է, թե 1905 թ. հոգևոր
իշխանությունները թույլ էին տվել եկեղեցին նորո-
գել ու այդ նպատակի համար եկեղեցու գումարնե-
րից ծախսել վերոհիշյալ գումարը, թեև «...հոգա-
բարձութիւնը մասամբ պատրաստել էր շինութեան
նիւթը, բայց մի բռուն հայեր սխմած գոյով մի դիս-
րիմ՝ ազգի ճիրաններում և վախենալով սպառնա-
ցող վտանգներից առ ժամանակ թողում է շինու-
թյան հոգաբարձութիւնը և մայրում է շարժման
հետևանքին: Պատճառն էլ այդ է, որ ցարդ ոչ հոգա-
բարձութիւնն է ինձ դիմած եկեղեցույ հիմքի օրհնու-
թեան մասին և ոչ էլ ես որևիցե տեղեկութիւն եմ
տուած հոգևոր իշխանութեան»⁴¹⁷:

1912 թ. եկեղեցու շինության համար ընտրված
շիրազի հոգաբարձուներն էին Արտեմ Տեր-Բարսե-
ղյանցը, Գիգա Ամիրխանյանցը, Եգոր Ուլուխան-
յանցը: Ըստ նախահաշվի՝ հարկավոր էր առնվազն
2000 ռուբլի, որից 400-ը պիտի կազմեր եկեղեցու
գումարը, իսկ մնացածը հոգալու էր Շիրազի հայ
հասարակությունը⁴¹⁸: Երեցփոխ Իսահակ Մողոմո-
նյան Հարությունյանի օրոք՝ 1913 թ. հոգևոր իշխա-
նությունները դարձյալ տվել էին եկեղեցին կառու-
ցելու թույլտվություն⁴¹⁹: 1914 թ. եկեղեցու կառուց-
ման աշխատանքները դեռևս ձգձգվում էին⁴²⁰:

413 Նույն տեղում, գ. 1265, թ. 3:
414 ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, գ. 4152, թ. 3:
415 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 3443, թ. 5:
416 ՀԱԱ, ֆ. 204, գ. 1, գ. 988, թ. 1-24:
417 Նույն տեղում, գ. 1265, թ. 5:
418 Նույն տեղում, թ. 8:
419 Նույն տեղում, թ. 4:
420 Նույն տեղում, թ. 24:

Փաստ է, սակայն, որ Շիրազում, ի վերջո, ա-
վարտին են հասցվել նոր եկեղեցու կառուցման աշ-
խատանքները, քանի որ 1923 թ. ապրիլի 19-ին
խորհրդային իշխանության ներկայացուցիչները
մեկ օրվա մեջ քանդել էին տարիների քրտնաջան
աշխատանքի արգասիք Սբ. Աստվածածին եկեղե-
ցին⁴²¹:

Ի դեպ, ոմն Դավի Օսեփաշվիլի լրագրային մի
հոդվածում, առանց որևէ փաստարկի հայտարարել
է, թե իբր ԺԹ դարում Շիրազում մի որոշ ժամանակ
է դարի վրացական եկեղեցին գործել է որպես
«հայկական»⁴²²: Կարծում ենք՝ այսչափ անհեթեթ
ու անհիմն պնդումը քննության իսկ ենթակա չէ:

Քահանա. հիմնականում հրավիրվում էր
հարևան գյուղերից: Այսպես, 1818 թ. հովվել էր Լո-
միսցիխեսի քահանա Տեր-Հովհաննես Նորիքեզյա-
նը⁴²³:

Գևորգ Մելիքյանց. 1914 թ. հիշվում է որպես
ծխասեր քահանա⁴²⁴:

ՓԱՇԱՆՆ

Տեղադրություն. գտնվում է Ալազանի հովտում՝
Չեգաան գյուղի մոտ. մտնում էր Տուրիսցիխես, Աղտ-
գոմա, Շիրազ և Դինճրիան գյուղախմբի մեջ:

Հայերը Փաշաանում. վրացական այս գյուղում
ևս հայերը հաստատվել են ԺԸ դարում, հավանա-
բար՝ Արցախից կամ Գանձակից: Վավերագրերում
հայերի ներկայությունը Փաշաանում վկայված է
1802-ից⁴²⁵: ԺԹ դարի սկզբներին նրանց թիվը մեծ
էր, բայց ժամանակի ընթացքում ավելանալու փո-
խարեն նվազել է՝ կապված դավանափոխության ու
արտագաղթի հետ:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք
Փաշաանի հայ բնակչության թվաքանակն ըստ
հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1841 ⁴²⁶	95	65	160	
1842 ⁴²⁷	90	61	151	
1843 ⁴²⁸	90	61	151	
1844 ⁴²⁹	92	63	155	
1845 ⁴³⁰	91	63	154	
1847 ⁴³¹	63	50	113	
1849 ⁴³²	55	61	116	
1852 ⁴³³	56	36	92	

421 ՀԱԱ, ֆ. 409, գ. 1, գ. 3146, թ. 7: Նաև՝ ֆ. 57, գ. 3, գ. 525, թ. 20,
120-121:
422 “տժոցոցոսո”, 1998, № 42, 18 ապրիլի, էջ 3:
423 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 2596, թ. 26:
424 Նույն տեղում:
425 AKAK, T. 1, c. 472.
426 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 3802, թ. 42-43:
427 Նույն տեղում, գ. 3805, թ. 92-93:
428 Նույն տեղում, գ. 3805, թ. 46-47:
429 Նույն տեղում, գ. 3809, թ. 45-46:
430 Նույն տեղում, գ. 3811, թ. 106-107:
431 Նույն տեղում, գ. 3814, թ. 67-68:
432 Նույն տեղում, գ. 3818, թ. 32-33:
433 Նույն տեղում, գ. 3819, թ. 64-65:

1853 ⁴³⁴	49	31	80	1892 ⁴⁶⁰	3	3	6
1854 ⁴³⁵	46	26	72	1893 ⁴⁶¹	3	3	6
1857 ⁴³⁶	36	22	58	1894 ⁴⁶²	4	5	9
1858 ⁴³⁷	37	22	59	1897 ⁴⁶³	5	5	10
1860 ⁴³⁸	37	17	54	1898 ⁴⁶⁴	6	5	11
1861 ⁴³⁹	23	24	47	1899 ⁴⁶⁵	6	5	11
1862 ⁴⁴⁰	22	25	47	1900 ⁴⁶⁶	6	5	11
1863 ⁴⁴¹	23	20	43	1901 ⁴⁶⁷	6	6	12
1864 ⁴⁴²	23	16	35	1902 ⁴⁶⁸	5	5	10
1865 ⁴⁴³	12	20	29	1906 ⁴⁶⁹	1	2	3
1867 ⁴⁴⁴	19	16	35				
1870 ⁴⁴⁵	29	29	58				
1873 ⁴⁴⁶	26	28	54				
1874 ⁴⁴⁷	27	26	53				
1875 ⁴⁴⁸	27	25	52				
1876 ⁴⁴⁹	26	24	50				
1877 ⁴⁵⁰	25	23	48				
1878 ⁴⁵¹	23	24	47				
1880 ⁴⁵²	20	21	41				
1881 ⁴⁵³	19	22	41				
1882 ⁴⁵⁴	19	22	41				
1883 ⁴⁵⁵	21	20	41				
1885 ⁴⁵⁶	18	19	37				
1889 ⁴⁵⁷	16	11	27				
1890 ⁴⁵⁸	16	11	27				
1891 ⁴⁵⁹	2	4	6				

1908 թ-ից Փաշաանը գավառի հայ բնակչություն ունեցող գյուղերի շարքում այլևս չի հիշատակվում: 1912 թ. մի վավերագրից պարզվում է, որ Փաշաանը, նաև մոտակա Չեգասանը հայազրկվել էին տարածված մահաբեր հիվանդությունների պատճառով⁴⁷⁰: 1914 թ. գյուղում բնակվում էին 18 շունչ վրացիներ⁴⁷¹:

Սր. Աստվածածին եկեղեցի. կառուցման ժամանակը հայանի չէ: Վավերագրերում այն հիշվում է 1840 թ-ից, որպես փայտաշեն կառույց՝ Սր. Աստվածածին անվամբ⁴⁷²: Հետագայում ևս եկեղեցին բազմիցս հիշատակվում է միևնույն անվամբ: Վերջին անգամ Սր. Աստվածածին եկեղեցին (դարձյալ փայտաշեն) հիշվում է 1906 թ.⁴⁷³:

434 Նույն տեղում:

435 Նույն տեղում, գ. 3825, թ. 7-8:

436 Նույն տեղում, գ. 3830, թ. 129-130:

437 Նույն տեղում, գ. 3823, թ. 129-130:

438 Նույն տեղում, գ. 3833, թ. 5:

439 Նույն տեղում, գ. 3839, թ. 6:

440 Նույն տեղում, գ. 3836, թ. 6:

441 Նույն տեղում, գ. 3843, թ. 45-46:

442 Նույն տեղում, գ. 3846, թ. 13:

443 Նույն տեղում, գ. 3848, թ. 22-23, 54:

444 Նույն տեղում, գ. 3851, թ. 3:

445 Նույն տեղում, գ. 3857, թ. 62-63:

446 Նույն տեղում, գ. 3862, թ. 51:

447 Նույն տեղում, գ. 3864, թ. 35:

448 Նույն տեղում, գ. 3866, թ. 7:

449 Նույն տեղում, գ. 3868, թ. 6:

450 Նույն տեղում, գ. 3869, թ. 3:

451 Նույն տեղում, գ. 3870, թ. 57:

452 Նույն տեղում, գ. 3872, թ. 2:

453 Նույն տեղում, գ. 3873, թ. 2:

454 Նույն տեղում, գ. 3874, թ. 2:

455 Նույն տեղում, գ. 3875, թ. 22:

456 Նույն տեղում, գ. 3877, թ. 33:

457 Նույն տեղում, գ. 3884, թ. 5:

458 Նույն տեղում, գ. 3887, թ. 139:

459 Նույն տեղում, գ. 3889, թ. 138:

460 Նույն տեղում, գ. 3891, թ. 110:

461 Նույն տեղում, գ. 3895, թ. 27:

462 Նույն տեղում, գ. 3896, թ. 163-164:

463 Նույն տեղում, գ. 3899, թ. 136-137:

464 Նույն տեղում, գ. 3897, թ. 158:

465 Նույն տեղում, գ. 3903:

466 Նույն տեղում, գ. 3905, թ. 8:

467 Նույն տեղում, գ. 3906, թ. 2:

468 Նույն տեղում, գ. 3907, թ. 12-13:

469 Նույն տեղում, գ. 3915, թ. 6:

470 Նույն տեղում, գ. 853, թ. 9:

471 “Кавказский календарь на 1915 г.”, с. 171.

472 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, թ. 30, գ. 3802, թ. 33:

473 Նույն տեղում, գ. 3915, թ. 6:

ՍԱԳԱՐԵՉՈՅԻ ՇՐՋԱՆ

Ջբաղեցնում է 1491,3 կմ² մակերես: Սահմանակից է Վրաստանի Հանրապետության Մղնախի, Գարդաբանի, Թելավի շրջաններին և Ադրբեջանի Հանրապետության Ղազախի շրջաններին: Շրջկենտրոնը Սազարեջո քաղաքն է: Ունի 44 բնակավայր, որից 11-ը ունեցել է հայ բնակչություն:

ԱՆԹՈԿ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 3 կմ արևելք՝ հարավահայաց անտառապատ սարի փեշին:

Հայերն Անթոկում. այստեղ հայերի թիվը միշտ էլ աննշան է եղել, ասենք, որ վրացական այս գյուղն էլ առանձնապես մարդաշատ չէր: Գյուղի հայ բնակիչների թիվը մեծ մասամբ հաշվել են Սազարեջոյի հետ, և քիչ վավերագրեր կան, որտեղ նրանց թվաքանակն առանձին է ցույց տրված:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք Անթոկի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ¹	2	17	14	31
1870 ²		11	8	19
1874 ³				17
1875 ⁴				17
1876 ⁵				24
1877 ⁶		4	4	8
1878 ⁷		3	4	7

1914 թ. Անթոկն ուներ 155 բնակիչ⁸: Եթե այդ թվին գյուղում հայեր կային, ապա, անկասկած, նրանց թիվն աննշան է եղել:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է հայ ընտանիքների անվանացուցակը.

«1. Էջմիածնայ ճուրտ Յարութիւն, որդի՝ Յոհաննէս, կինն՝ Քալօ, որդիք՝ Ասլան, Դէմուր և Ստեփան, դստերք՝ Աննա, Մագթաղին և Մելանիա, այլ միւս եղբոր՝ Դաթի որդին՝ Չաքարիա և Ասլանի կինն՝ Էլէնէ:

2. Չայինի որդիք՝ Մասուր, Գօգէլ և Դափթ, Մասուրի կինն՝ Մայիա, որդիք՝ Աբրամ և Չուալ, Գօգիլի կինն՝ Մարիամ, որդիք՝ Պէտրք և Փարսաղան, դստերք՝ Էլիսաբէդ և Մարթայ և Դաթի կինն՝ Մայիա, դուստր՝ Սօփիօ և ննջեցեալ եղբոր՝ Տէտիայի այրի կինն՝ Աննա, որդիք՝ Չաքարիա, Լազարէ և Չարիձէ, դստերք՝

1 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 11-12:
 2 Նույն տեղում, գ. 3857, ք. 147-148:
 3 Նույն տեղում, գ. 3864, ք. 20-21:
 4 Նույն տեղում, գ. 3866, ք. 14-15:
 5 Նույն տեղում, գ. 3868, ք. 63-64:
 6 Նույն տեղում, գ. 3869, ք. 81-82:
 7 Նույն տեղում, գ. 3870, ք. 40-41:
 8 «Кавказский Календарь на 1915 г.», с. 89.

Թամար և Թինայ, այլև ննջեցեալ եղբոր՝ Նինիայի որբք Գաբրիէլ և Պէտրէ»⁹:

ԳԻՈՐԳԻԾՄԻՆԴԱ

Տեղադրություն. արևելքից կից է շրջկենտրոնին: **Անվան ծագումը.** Անվան հայերեն թարգմանությունը Սուրբ Գևորգ է:

Հայերը Գիորգիծմինդայում. այստեղ հայերի հաստատվելու հավանական ժամանակը ԺԸ դարի կեսերն են: Սակավաթիվ հայերի ներկայությունը Գիորգիծմինդայում վկայված է 1802 թ. մի վավերագրում¹⁰:

1818 թ. գյուղում ընդամենը 2 տուն հայեր էին բնակվում՝ 9 ար. և 5 իգ.¹¹: 1870-ին՝ 12 ար. և 9 իգ.¹²: 1874 թ. գյուղի 1136 բնակիչներից 11-ը հայեր էին¹³: 1914 թ. Գեորգիծմինդայի բնակչությունը 1747 մարդ էր¹⁴:

Ներկայումս մարդաշատ գյուղ է:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է գյուղի հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Աարէսի որդի՝ Դափթ, կինն՝ Շուշան, որդիք՝ Ասլ, Դահրամ, Գեորգ, Յակոբ և Յարութիւն, դուստր՝ Թամար և զոքանչն՝ դաջարդուզ Յարութիւնի կինն՝ Մարիամ, որդի՝ Աւետիք:

2. Գալուստի այրի կինն՝ Մարիամ, որդի՝ Աւետիք և Մովսես, դուստր՝ Անախանում»¹⁵:

ԴԱՎԻԹ - ԳԱՐԵՉԱ

Տեղադրություն. այս մեծահռչակ ուխտատեղի-հուշարձանախումբը գտնվում է շրջկենտրոնից ուղիղ գծով 32 կմ հարավ՝ Վրաստանի և Ադրբեջանի Հանրապետությունների միջև ձգվող սահմանից հսկիվ 1 կմ հեռավորության վրա:

Անվան ծագումը. հիմնականում ժայռափոր կացարաններից, մատուռներից և եկեղեցիներից բաղկացած հուշարձանախմբի հիմնադիրն է Չ դարում

9 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 11-12:
 10 AKAK, т. 1, с. 473.
 11 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 11:
 12 Նույն տեղում, գ. 3857, ք. 147-148:
 13 «Кавказский календарь на 1886 г.», с. 117.
 14 «Кавказский календарь на 1915 г.», с. 109.
 15 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 11:



ԴԱՎԻԹ-ԳԱՐԵՉԱ. Սաբերեբեի. Ժայռափոր եկեղեցիների խումբը



հայ առաքելական եկեղեցու հետևորդ լինելու համար հետապնդումներից խույս տված Դավիթը՝ հետագայում Դավիթ Գարեջաջի:

Պատմաբան Լ. Մելիքսեթ-Բեկը հանգել է այն ուշագրավ կարծիքին, որ Դավիթ Անհաղթն ու Դավիթ Գարեջաջին կարող էին լինել միևնույն անձնավորությունը. «XV դարի հայ իմաստասեր Առաքել Սյունեցին Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց»-ի մեկնաբանության մեջ Դավիթին նմանեցնում է Մովսես Իսրայելացուն, որը «բազում վիշտս կրեաց յԻսրայել», «այսպես և Դավիթ ի Հայոց նեղութիւն, և հարուածք, և վերք»: Ապա մեկ առ մեկ թվելով Դավիթ Անհաղթի՝ Հայաստանում ունեցած անհաջողության պատճառները, Առաքել Սյունեցին, իմիջիայոց, նշում է. «Չի ազգամբք էին յանդիմանեալք ի նմանէ, անարգեցին զնա և զբանս նորա, և հարեալ վիրաւորեցին զնա և նա զնացեալ ի Վիրս և անդ կացեալ վախճանեցաւ»: Չարմանալի զուգադիպությամբ Դավիթ Անհաղթի ժամանակակից «ասորի» հայր համարվող Դավիթ Գարեջեղին (Գարեջաջին) և, մուտք գործելով *via armeniaca* Տփղիս, նույն բախտին է արժանանում, ինչ որ Դավիթ Անհաղթը, այսինքն՝ ենթարկվում է անարգանքի և վիրավորանքի, ուստի և ստիպված է լինում հեռանալ Տփղիսից ու հաստատվել հետագայում «Գարեջաջա» (=իմաստոնոց արտաքնոց) կոչված վայրը, ուր և մնում է ցմահ: Միաժամանակ հետաքրքիր է և այն, որ Դավիթ Գարեջեղին միակն է VI դարի Վրաստանի գործիչներից, որը իմաստասիրությամբ է զբաղվում և նույնիսկ արիստոտելյան ուսմունքի հետևորդ է: Բացի դրանից, նա միակն է, որ խոսում է հայերեն և պայքարում «բարբարոսի»

(=բորբորիտոնի) դեմ «Տվարածատափ» (=Տավարարածատափ) և «Հայոց ձոր» կոչված վայրերի մոտ, իսկ մահվանից հետո պաշտամունքի առարկա է դառնում առանձնապես հայերի աչքում, որոնք հեռավոր տեղերից գալիս են երկրպագելու նրա զերեզմանը, որին կից հայերեն արձանագրություններ են թողնում՝ ակնարկելով «անյաղթ փիլիսոփային»: Թվում է, որ մեր կատարած հատուկ պրպտումներից հետո անհիմն չպիտի թվա կռահումը, որ Դավիթ անունով հայտնի VI դարի հայ փիլիսոփաներից մեկը՝ Անհաղթը, նույնացվում է Դավիթ Գարեջեղիի հետ: Դրանով իսկ միանգամայն հասկանալի է դառնում մի քանի տասնյակ հայերեն արձանագրությունների առկայությունը «Գարեջաջի բազմալեռանց» անապատներում»¹⁶:

Հիմնադրման ժամանակը. այն հանգամանքը, որ անդրկուրյան Կամբեճան գավառը, որտեղ և գտնվում են Գարեջան և մերձակա համանման մյուս հուշարձանախմբերը (Սաբերեբեի կամ Մաղազան, Քվարեբի, Լավրա, Բերեբիս-սերի, Նաքլիսնցեմեղի, Ծամերուլի, Դողոս-ռկա, Փոքր Քվարուլի և վիմափոր այլ անապատական համալիրներ), մինչև 918 թ. ուներ միաբնակ եկեղեցու հետևորդ բնակչություն, հուշում է, որ Գարեջում և մերձակայ-


16 Մելիքսեթ-Բեկ Լ., Հայերը Վրաստանում. «Кавказ и Византия», № 1, Երևան, 1979, էջ 170-171: Հմմտ. «Գիրք սահմանաց սրբոյն Դավիթ Անյաղթ փիլիսոփայի, Հայոց իմաստասիրի, շարադրեալ ընդդէմ իմաստակ պիտոնացոյ որ ուրանային զեութիւն իմաստասիրութեան և յետ ժամանակի արարեալ լուծումն սորին հոգեշահ մեկնութեամբ տեսան Առաքելի եռամեծ վարպետի, աշակերտի սրբոյն Գրիգորի Տաթևացոյ», Մաղրաս, 1797, էջ 166:



ՍԱՐԵՐԵՐԻ. պայմանական № 7 եկեղեցու հատակագիծը

ԴԱՎԻԹ-ԳԱՐԵՋԱ. Սաբերեբի (պայմանական № 7 եկեղեցի), հայերեն արձանագրություններով որմնանկարված ժայռափոր եկեղեցին

քում մինչև Ժ դարի սկզբները ծնունդ առած պաշտամունքային կառույցների թվում կարող էին լինել կամ եղել են հայածես (առաքելական) եկեղեցիներ, որոնց վաղագույն նմուշներն այստեղ թվագրվում են Ջ դարի 20-ական թվականներով: Հետագոտողներից ոմանք, սակայն, գտնում են, որ Գարեջում անապատականների ներկայությունն սկզբնավորվել է Դ դարի 30-ական թվականներից: Առհասարակ, Գարեջան և մերձակա համանման հուշարձանախմբերն արդեն բավականին ու բազմակողմանիորեն հետազոտվել են: Արդյունքում առկա են գիտական մեծաթիվ հրապարակումներ և աշխատու-




ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԻՆԳՅՆ ԼԵԳՆ
 ԵՒ ԲԵՅՆԻՈՎԻՍՏԻ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ



ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ

ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
 ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ



թյուններ¹⁷: Ներկա ուսումնասիրության տեսանկյունից առավել հետաքրքրական են գիտական այն աշխատանքները, որոնք լույս են սփռում առկա հայերեն վիմագրերի վերծանության բնագավառի վրա: Այս իմաստով հատկապես մեծարժեք և բովանդակալից է Ջազա Մխիթրովածեի ուսումնասիրությունը¹⁸: Հանգամանորեն հետազոտելով Դավիթ-Գարեջայի հյուսիսարևելյան կողմում գտնվող Սաբերեբեի հուշահամալիրի ժայռափոր եկեղեցիներից մեկի (պայմանական № 7) որմնանկարները՝ հեղինակը, ամենայն բարեխղճությամբ, գրչանկարներով հանդերձ ներկայացրել է այդ եկեղեցու հյուսիսային խաչաքևի հարավահայաց պատի որմնանկարների (խաչելության տեսարանն է) շուրջ և կամարաթաղին պահպանված հայերեն արձանագրությունների վերծանությունները: Անթվակիր արձանագրությունների ու նաև որմնանկարների (բացառապես կտակարանային քեմաներով) ստեղծման ժամանակաշրջանն են Թ-Ժ դարերը: Աշխատության մեջ ներկայացված են նաև նույն եկեղեցու հունարեն և վրացերեն վիմագրերը: Նշված աշխատությունից սույն գրքում ներկայացնում ենք հիշյալ խաչաձև-միախորան եկեղեցու հայերեն վիմագրերի գրչանկարները: Շուրջ 3 տասնյակ հայերեն վիմագրեր է վերծանել (նախկին հրատարակու-

թյունները վերստուգելով), ամբողջացրել ու հրատարակել Պ. Մուրադյանը¹⁹:

ԹՈՒՆԼԻԱՌԻՐ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 6 կմ արևելք՝ Մանավ գյուղի արևմտյան կողմում՝ Թբիլիսի-Սղնախ մայրուղու հյուսիսային եզրին:

Հայերը Թոխլիարում. հայտնի չէ, թե վրացական այս գյուղում հայ գաղթականները երբ են հաստատվել, բայց հիշվում են 1845 թ.²⁰: Թոխլիարում հայերի թիվը միշտ էլ եղել է աննշան:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակիչների թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1875 ²¹				8
1876 ²²				17
1877 ²³		4	3	7
1878 ²⁴		8	11	19

1914 թ. գյուղի բնակչությունը կազմում էր 514 մարդ²⁵: Հայերի թիվը, պարզ է, որ աննշան է եղել:

Տեղի հայերը եկեղեցի կամ սեփական քահանա չեն ունեցել:

ԽԱՇՄ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 11 կմ արևմուտք՝ Իորի գետի ձախ ափին:

Հայերը Խաշմում. վրացաբնակ այս գյուղում հայերի ներկայությունն արդեն փաստված է 1802 թ.²⁶: Հայտնի է, որ 1818 թ. գյուղում բնակվում էր մեկ հայ ընտանիք՝ Շահնագարի որդի՝ Պողոսը կնոջ՝ Սառայի, որդու՝ Թամազի և աղջիկների՝ Մարոյի ու Հերիքի հետ (5 շունչ)²⁷: 1843 թ. վավերագրերում ևս այստեղ հիշված են սակավաթիվ հայեր²⁸: Հետագա տարիներին գյուղում հայ բնակիչների առկայության վերաբերյալ տեղեկություններ չունենք: 1874 թ. Խաշմն ուներ 1003²⁹, իսկ 1914 թ.՝ 1917 բնակիչ (վրացիներ)³⁰:

ԿԱԿԱԲԵԹ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 16 կմ արևելք՝ Չալուր և Ղանդաուր գյուղերի միջև:

Պատմություն. Կախեթի նշանավոր ու բազմամարդ գյուղերից է: Կակաբեթի մոտ 1800 թ. նույնքե-

17 Դրանցից են՝ **Чубинашвили Г. Н.**, Пещерные монастыри Давид Гареджа.— “Очерк по истории искусства Грузии”, Тбилиси, 1948; **Абрамишвили Г.**, Ктиторская надпись главной церкви “Удабно” в Давид Гареджа.— “Вестник Отд. Обществ. Наук АН Груз. ССР”, 1962, № 3, с. 296-304; **Вирсаладзе Т.**, К вопросу о датировке первоначальной росписи северного придела главного храма монастыря Удабно в Давид-Гаредже.— “მაცნე”, 1968, № 6, с. 223-239; **აბრამიშვილი გ.**, დავით გარეჯელის ციკლი ქართულ კუდლის მხატვრობაში, თბილისი, 1972: გაფრინდაშვილი გივი, 1089 წლის წარწერა მთწმინდის შესახებ გარეჯის წამებულის უდაბნოს “ხარიტონის ქუა-ბიდენ”; “Серия истории. археологии. этнографии и истории искусства”, Тбилиси, 1976, № 2, с. 177-186; **Квливидзе И.**, Давидгареджа, Тбилиси, 1981; **Гаприндашвили Г.**, Гареджи, Тбилиси, 1987; **Вольская А. И.**, Росписи пещерных монастырей Давид-Гареджи.— “II межреспубликанская научная конференция по проблемам искусства Армении и Грузии, Тезисы докладов”, Ереван, 1981; նույնի՝ “Ранние росписи Гареджи”.— “IV международный симпозиум по Грузинскому искусству”, Тбилиси 1983; **Схиртладзе З. Н.**, Фресковая эпиграфика монастырского комплекса Сабереби.— “Актуальные проблемы изучения и издания письменных исторических источников”.— “Все-союзная научная сессия: Тезисы докладов”, Тбилиси, 1982. **Мурадян П. М.**, նշվ. աշխ.: **Մխիթրովածե Լ.**, XVI դարում Ալսանի որդի Սարգիս քառակուսի հազվագյուտ արձանագրության մասին.— «ՀՄՄՌ-ԳԱ Տեղեկագիր», 1946, № 7, էջ 31-38: Տե՛ս նաև նույնի՝ Гаресджийская тегралингва эпохи монголов 1352 г., “Эпиграфика Востока”, М.-Л., 1953, с. 55-62 և այլն:

18 **Նեոտրեյազե ՆաՅա**, Նաճերքեթի օրհեստային վարժարան, თბილისი, 1985, էջ 77-110.

19 **Мурадян П. М.**, նշվ. աշխ., էջ 182-190:
 20 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, ք. 55-56:
 21 Նույն տեղում, գ. 3866, ք. 14-15:
 22 Նույն տեղում, գ. 3868, ք. 63-64:
 23 Նույն տեղում, գ. 3869, ք. 81-82:
 24 Նույն տեղում, գ. 3870, ք. 40-41:
 25 “Кавказский календарь на 1915 г.”, с. 190.
 26 АКАК, т. 1, с. 473.
 27 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 12:
 28 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1383, ք. 2:
 29 “Кавказский календарь на 1886 г.”, с. 117.
 30 “Кавказский календарь на 1915 г.”, с. 197.

րի 7-ին հայազգի գեներալ Լազարևի հրամանատարության ներքո գործող ռուս-վրացական միացյալ ուժերը ջախջախել ու փախուստի են մատնել Օմար-խանի 15.000 լեռնականներին: Վերջիններս մարտադաշտում թողել են 2000 սպանված ու վիրավոր³¹:

Նկարագրություն. 1849 թ. գյուղ այցելած Հովհաննես վարդապետ Արշարունին գրել է. «Կակաբեթ՝ է զիող եկեղեցւոյն Վրաց և ժողովուրդքն ամենեքին Հայք և Վիրք ստրուկ եկեղեցւոյն այնորիկ, տեղին է արգաւանդ և բերրի, բնակիչքն առ հասարակ հողագործք և այգեպանք. տունք Հայոց 33, և ունին զմի անյարմար եկեղեցի»³¹:

Կառուցապատում. 1882 թ. ականատեսը նշել է. «Գիւղին եթէ նայես վերևից, ինչ տեղ որ կառուցված է հայոց ս. Աստուածածնայ միակ փայտաշէն եկեղեցին, աչքիդ ընկնում է մի շքեղ տեսարան. գիւղը ներկայացնում է աջ ու ձախ կողմդ մի մեծ տարածութիւն այգիների, որ փռված են լեռան հարթ ստորոտի վրա, նոցա մէջ ու ափերին, ծառերի ստուերների տակ, այս տեղ ու այն տեղ երևում են գիւղացւոց բնակարանները և խանութները, նոցա շուրջը երևում են իրանց կալօրայքը...»³²:

Հայերը Կակաբեթում. վրացաբնակ այս խոշոր գյուղում առնվազն ԺԸ դարում հաստատված փոքրաթիվ հայերի մասին գրավոր աղբյուրներում վկայություններ կան 1802 թ-ից³³: Հայերի թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալները հաճախակի են միայն ԺԹ դարի 2-րդ կեսից:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակիչների թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1849 ³⁴	33			
1874 ³⁵				324
1878 ³⁶		182	151	333
1882 ³⁷	48			
1885 ³⁸		222	195	417
1890 ³⁹		210	195	405
1891 ⁴⁰		214	202	416
1892 ⁴¹		252	221	473
1893 ⁴²	50	248	195	443
1897 ⁴³		247	204	451
1898 ⁴⁴		250	208	457

31 Вейденбаум Е., նշվ. աշխ., էջ 389:

32 «Մշակ», 1882, № 142, էջ 1-2:

33 АКАК, т. 1, с. 472.

34 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:

35 «Кавказский календарь на 1886 г.», с. 118.

36 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3870, ք. 40-41:

37 «Մշակ», 1882, № 142, էջ 2: Նույն թվականին գյուղում բնակվում էին 260 տուն վրացիներ:

38 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 39:

39 Նույն տեղում, գ. 3887, ք. 141:

40 Նույն տեղում, գ. 3889, ք. 140:

41 Նույն տեղում, գ. 3891, ք. 112:

42 Նույն տեղում, գ. 3895, ք. 63:

43 Նույն տեղում, գ. 3899, ք. 138-139:

44 Նույն տեղում, գ. 3897, ք. 160:

1901 ⁴⁵		273	225	498
1902 ⁴⁶		280	224	504
1908 ⁴⁷	61	311	227	538
1912 ⁴⁸		383	421	804
1917 ⁴⁹	130			

Թեև նկատելի է, որ շրջակա գյուղերում բնակվող հայերի համեմատ Կակաբեթի հայ համայնքն ավելի մեծաթիվ էր, բայց գյուղի ողջ բնակչության համեմատ կրկին խիստ փոքրաթիվ էր: Այդպես էր, օրինակ, 1874 թ., երբ գյուղի 1726 բնակիչներից հայեր էին 324-ը⁵⁰: 1914 թ. Կակաբեթի բնակչությունն աճել էր մինչև 3394 շունչ⁵¹:

Դպրոց. աղյուսակից երևում է, որ Ի դարի սկզբներին Կակաբեթի հայերի թիվը զգալի ավելացել էր, և դրանով էր նաև պայմանավորված գյուղում դպրոց բացելու հնարավորությունը: Ամենայն հայոց կաթողիկոսը 1916 թ. կոնդակով արտոնել էր այստեղ բացել եկեղեցական-ծխական դպրոց, որը պետք է պահվեր Տփղիսի հայ քահանաների դպրոցական հանձնախմբի ծախսով⁵²: Դպրոցը մեկ բաժանմունքով բացվել էր 1917 թ.՝ սղմախեցի Նիկողայոս Հովսեփյանի օժանդակությամբ⁵³: Հայտնի է, որ դպրոցի շենքը ևս կառուցվել էր նույն այս բարեգործի տրամադրած միջոցների շնորհիվ. «Սղմախեցի Նիկողայոս Յովսեփեան 10 հազար ռուբլի է յանձնել թեմիս գեր. Առաջնորդին Սղմախի գաւառի Կակաբեթ գիւղում դպրոցական շէնք կառուցանելու համար»⁵⁴: Դպրոցը գործել է նաև 1919 թ.⁵⁵: Ամենայն հավանականությամբ՝ Կակաբեթի հայոց դպրոցը փակվել է Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Եկեղեցի. հայոց եկեղեցու գոյությանը՝ Սբ. Աստվածածին անվամբ, արխիվային վավերագրերում հանդիպում ենք 1839 թ.: Անշուշտ, այն կառուցվել էր ավելի վաղ, բայց այդ մասին ստույգ տեղեկություններ չունենք: Կառույցը եղել է փայտաշէն: 1905 թ. մի վավերագրում նշված է, որ եկեղեցին քայքայված վիճակում էր⁵⁶:

Հայտնի է, որ Սբ. Աստվածածին եկեղեցին գործել է մինչև 1923 թ. ապրիլի 6-ը⁵⁷, որից հետո, ինչպես վկայել է Հարություն քահանան, փակվել է. «...Կակաբեթի Սբ. Աստուածածնայ զանկակատան

45 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 131-132:

46 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 14-15:

47 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

48 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, ք. 53-54:

49 «Համբարաբեր», 1917, № 5, էջ 115:

50 «Кавказский календарь на 1886 г.», с. 118.

51 «Кавказский календарь на 1915 г.», с. 131.

52 «Արարատ», 1916, էջ 791:

53 «Համբարաբեր», 1917, № 5, էջ 115:

54 «Հովիտ», 1917, № 9, էջ 142:

55 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 48, ք. 104:

56 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, ք. 258-259:

57 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, ք. 10: Նաև՝ ֆ. 57, ց. 3, գ. 463, ք. 33:

կաթուղիկեի վերայ կարմիր դրոշակ դնելով դրոշմել են եկեղեցայ դռները...»⁵⁸:

Քահանա. *Գևորգ Տեր-Նահապետյան և Տեր Գևորգ Տեր-Ազատյան.* հիշվում են 1842-1844 թթ.⁵⁹:

Տեր Հարություն Մանուկյան Ստեփանոսյանց. հիշվում է 1898 թ.: Հովվել է նաև Չայլուր գյուղը⁶⁰: Հայտնի է, որ 1923 թ. պարտադրանքով «ինքնակամ» հրաժարվել է քահանայագործությունից⁶¹:

ՂԱՆՂԱՌԻ

Տեղադրություն. շրջկենտրոնից 20 կմ հարավ-արևելք, իրարից 1 կմ հեռավորությամբ գտնվում են Ղանղաուր անվամբ երկու գյուղեր: Դրանք եղել են նույն գյուղի երկու՝ հին ու նոր կամ վերին ու ներքին թաղերը (այժմ՝ Չենո և Զվենո Ղանղաուր):

Նկարագրություն. 1849 թ. գյուղ այցելած Հովհաննես վարդապետ Արշարունին գրել է. «Ղանղաուր՝ էր գիտ ինչ գառաջինն ի գլուխ լերին, իսկ այժմ չուեալ անտի Հայոց իջին ի վայր ի տափարակ տեղի և անդ շինեցին այլ գիտ, յորում տունք Հայոց են 15. անտեղեակ լեզուի Հայոց, և ամենեքին հողագործք և արքունի ստրուկք: Ի հանդիպոյ գեղջն է լեռն և ի նմա կիսաւեր մատունն՝ գոր ոմանք Թէլէթ անուանեն և ոմանք Ծաղկավանք»⁶²:

Հայերը Ղանղաուրում. այստեղ հայերի հաստատման ստույգ ժամանակը հայտնի չէ, բայց, հավանական է, որ նրանք այդտեղ հանգրվանել են առնվազն ԺԸ դարի կեսերին: Վավերագրերում հայերի ներկայությունը վկայված է 1802 թ.⁶³: Վիճակագրական աղբյուրներում Ղանղաուրի հայերի թիվը մեծ մասամբ ցույց է տրված մերձակա 5-6 գյուղերի ավելի սակավաթիվ հայերի թվի հետ, և դժվար է որոշել, թե դրանցից յուրաքանչյուրում որքան հայեր էին բնակվում: Հայտնի է միայն, որ համեմատաբար հայաշատ էր Ղանղաուրը, որը և այդ գյուղախմբի կենտրոնն էր:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք Ղանղաուրի և կից գյուղերի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1803 ⁶⁴	8			
1849 ⁶⁵				
1874 ⁶⁶			461	
1877 ⁶⁷		169	155	324

58 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 463, ք. 25:
 59 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 929, ք. 3, նաև՝ ֆ. 56, ց. 1, գ. 1111, ք. 1 և գ. 2423, ք. 2:
 60 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3359, ք. 1:
 61 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 463, ք. 12:
 62 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:
 63 АКАК, т. 2, с. 472.
 64 Նույն տեղում: Ի դեպ, Ղանղաուրում 8 տուն հայերի հետ բնակվում էին նաև 48 տուն վրացիներ:
 65 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:
 66 Ղանղաուրի ողջ բնակչությունը կազմել էր 1448 մարդ (Кавказский календарь на 1886 г., с. 118). ըստ այդմ՝ հայերը կազմում էին գյուղի բնակչության շուրջ 1/3 մասը:
 67 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, ք. 81-82:

1878 ⁶⁸		168	152	320
1885 ⁶⁹		176	163	339
1888 ⁷⁰		193	184	377
1889 ⁷¹		201	189	390
1890 ⁷²		204	190	394
1891 ⁷³		210	198	408
1892 ⁷⁴		235	212	447
1897 ⁷⁵		197	168	365
1898 ⁷⁶		200	170	370
1901 ⁷⁷		216	184	400
1902 ⁷⁸		222	189	411
1908 ⁷⁹	107	262	207	469
1912 ⁸⁰		253	207	460

1914 թ. Ղանղաուրն ուներ 1940 բնակիչ⁸¹:

Արքունի (պետական) դպրոց. Ղանղաուրում ծխական դպրոց երբևէ չի եղել. գործել է պետական դպրոց, ուր բազմաթիվ վրացի երեխաների հետ ուսանում էին նաև փոքրաթիվ հայեր: Դպրոցում դասավանդում էին նաև հայ մանկավարժներ: Նրանցից էր, օրինակ՝ 1884 թ. Նիկողայոս Մելքոյանը⁸²: Դպրոցում ուսանում էին նաև մոտակա գյուղերի ուսումնաստենչ երեխաները. «Ի Ղանղաուր աւանի՝ ուր 50 տուն են հայք և ուր արքունի գիտական դպրոցն է ուսանին և հայ աշակերտք, ի շրջակայս Ղանղաուրի վերստիւք հեռի ի միմեանց են և չորս-հինգ գիտօրայք, ուր հինգ տուն և ուր ութն տուն հայ բնակչօք և զամենեսին զնոսա հովուէ Գուրջանի քահանայն...»⁸³:

Սբ. Աստվածածին եկեղեցի. կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ: Վավերագրերում որպես փայտաշեն կառույց՝ հիշվում է 1842 թվականից⁸⁴, բայց, անկասկած, կառուցվել էր ավելի վաղ ժամանակներում: Նույն եկեղեցին՝ Սբ. Աստվածածին անվամբ բազմիցս հիշատակվում է նաև հետագա վավերագրերում:

Ուշագրավ է, որ 1905 թ-ից հետո գյուղում միաժամանակ հիշվում են երկու եկեղեցիներ (Սբ. Աստվածածին և Սբ. Մարգիս)⁸⁵:

Քահանա. *Նիկողայոս Հարությունյան Տեր-Սարգսյանց.* սովորել է Ներսիսյան դպրոցում: 1892

68 Նույն տեղում, գ. 3870, ք. 40-41:
 69 Նույն տեղում, գ. 3879, ք. 225:
 70 Նույն տեղում, գ. 3882, ք. 226:
 71 Նույն տեղում, գ. 3884, ք. 95:
 72 Նույն տեղում, գ. 3887, ք. 141:
 73 Նույն տեղում, գ. 3889, ք. 140:
 74 Նույն տեղում, գ. 3891, ք. 112:
 75 Նույն տեղում, գ. 3899, ք. 138-9:
 76 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3897, ք. 160:
 77 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 131-2:
 78 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 14-15:
 79 Միայն Ղանղաուրը 68 տուն էր՝ 294 շունչ (161 ար. և 133 իգ.). տե՛ս ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:
 80 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, ք. 53-54:
 81 “Кавказский календарь на 1915 г.”, с. 133.
 82 «Արձագանք», 1886, № 42, էջ 549:
 83 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7727, ք. 1:
 84 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, ք. 96:
 85 Նույն տեղում, գ. 3912, ք. 258-259, գ. 3915, ք. 8:

թ. Էջմիածնի Սինոդը թույլատրել էր նրան քահանա ձեռնադրվել Ղանդաուրի համար⁸⁶: Քահանայագործել է առնվազն մինչև 1896 թ.: Մեծ հեղինակություն և սեր է վայելել ծխականների շրջանում:

1896 թ. նշանակալի աջակցություն է ցուցաբերել Ղանդաուր և մերձակա գյուղերի բնակիչների շրջանում «ծաղիկ» հիվանդության դեմ պատվաստումներ կատարելու գործում⁸⁷:

ՄԱՆԱՎ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 9 կմ արևելք՝ Թբիլիսի-Մոսկա մայրուղու ձախ եզրին:

Նկարագրություն. Մանավը Կախեթի նշանավոր բնակավայրերից է: Հատկապես հայտնի է իր միջնադարյան հզոր բերդով, որի ավերակներն անգամ հիացնում են այցելուին: 1849 թ. գյուղ այցելած Հովհաննես վարդապետ Արշարունին. «Մանաւ է գիւղ ինչ հնագոյն քան զբազում գիւղորայս. տեղին է զառ ի թափ և անվայելուչ, և ի ժամանակս անձրևաց յոյժ դժուարագնալի են ճանապարհքն: Օդն չէ գովելի, բայց այգիք յոլովք են ի սմա և զհին ընտիր, քան զբազում այլոց գիւղորէիցն Քիսեղի. տունք Հայոց 25. ունին զմի հնագոյն բերդ ի գագաթն լեռին, որոյ և որմունք ի բազում տեղիս խոնարհեալ կան. տունք և սենեակք չեն ի սմա: Չունին Հայք զօրինաւոր եկեղեցի, այլ զմի փայտեայ անշուք եկեղեցի ի բերդի, նմանապէս զայլ միւս եկեղեցի ի շինամիջին»⁸⁸:

Կառուցապատում. 1896 թ. ականատեսը նշել է, որ «Գիւղի մէջ հին և նոր շինութիւններ շատ կան, որոնք անֆիտէատրաձև ցրուած են ...այդ բարձրադիր սարի լանջի վրայ ծառատունկ պարտէզներով և գեղեցիկ այգիներով»⁸⁹:

Հայերը Մանավում. գյուղում հայ գաղթականության հաստատման ստույգ ժամանակը հայտնի չէ: Համենայն դեպս, այստեղ հայերի ներկայությունը վրացիների հետ վկայված է 1802 թ.⁹⁰:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք Մանավի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1849 ⁹¹	25			
1854 ⁹²		128	113	241
1874 ⁹³				160
1875 ⁹⁴				167
1876 ⁹⁵				193

86 «Արարատ», 1892, էջ 565:
 87 «Նոր-Դար», 1896, № 83, էջ 3:
 88 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:
 89 «Նոր-Դար», 1896, № 83, էջ 3:
 90 AKAK, т. I, с. 472.
 91 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:
 92 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, ք. 38-39:
 93 Նույն տեղում, գ. 3864, ք. 20-21:
 94 Նույն տեղում, գ. 3866, ք. 14-15:
 95 Նույն տեղում, գ. 3868, ք. 63-64:

1878 ⁹⁶		98	93	191
1878 ⁹⁷		99	78	177
1885 ⁹⁸		102	82	184
1893 ⁹⁹	32	141	103	244
1901 ¹⁰⁰		186	141	327
1902 ¹⁰¹		192	144	336
1908 ¹⁰²	32	149	142	291

1896 թ. գյուղի շուրջ 250 տուն բնակիչներից հայեր էին միայն մոտ 40-ը¹⁰³:

1914 թ. Մանավն ուներ 908 բնակիչ¹⁰⁴: Հայերը կազմում էին այդ թվի շուրջ 1/3 մասը:

Ղավանափոխություն. բազմաթիվ վավերագրերից հայտնի է, որ մանավաբնակ հայերը մշտապես ենթակա են եղել կրոնական հետապնդման ու հալածանքի վրաց հոգևորականության կողմից: Այսպես, 1842 թ. մոտակա Նինոծմինդա գյուղի վրաց Անդրեաս քահանան միանգամից ավելի քան 10 մանավցի հայերի վերամկրտել էր վրաց դավանության¹⁰⁵: Այդ դեպքի առնչությամբ բողոքարկած հայերին հաջողվել էր Անդրեաս քահանային ենթարկել պատասխանատվության (ի դեպ, նույն քահանան ավելի վաղ հավատափոխ էր արել չայլուրցի մի հայ կնոջ):

1854 թ. վավերագրերից մեկում նշված է, որ գյուղի տանուտերը հայագրի Անդրե Ղազարյանին պաշտոնանկ էր արել ու վրացադավան դարձրել¹⁰⁶:

Եկեղեցի. կառուցման ժամանակը հայտնի չէ, բայց, հավանաբար, այն գոյություն է ունեցել դեռևս ԺԸ դարում (գուցե և ավելի վաղ ժամանակներում): Եկեղեցին 1839 թ. հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ¹⁰⁷: Հայտնի է, որ 1849 թ. հայերը 2 եկեղեցի ունեին, մեկը՝ փայտաշեն, գյուղի հյուսիսային եզրին գտնվող բերդի ներսում, մյուսը՝ բուն գյուղի մեջ¹⁰⁸: 1878 թ. վավերագրերից մեկում նշված է, որ եկեղեցիներից մեկը քարաշեն էր ու ծխական, մյուսը՝ փայտաշեն և գտնվում էր գերեզմանատանը¹⁰⁹: 1885 թ. ծխական եկեղեցին խարխլվել էր. «Սբ. Աստուածածնի եկեղեցի Հայոց Մանաւի քայքայեալ»¹¹⁰: 1898 թ. մանավաբնակ հայերին հովվող հարևան Կակաբեթ գյուղի Հարություն քահանա Ստեփանոսյանցը մտահոգված էր եկեղեցու վիճա-

96 Նույն տեղում, գ. 3861, ք. 81-82:
 97 Նույն տեղում, գ. 3870, ք. 40-41:
 98 Նույն տեղում, գ. 3877, ք. 39:
 99 Նույն տեղում, գ. 3895, ք. 63:
 100 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 131-132:
 101 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 15-16:
 102 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:
 103 «Նոր-Դար», 1896, № 83, էջ 3:
 104 “Кавказский календарь на 1915 г.”, с. 155.
 105 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1111, ք. 1:
 106 Նույն տեղում, գ. 3197, ք. 8:
 107 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, ք. 26-27:
 108 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:
 109 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3870, ք. 40-41:
 110 Նույն տեղում, գ. 3879, ք. 225:



ՄԱՆԱՎ. գյուղի ընդհանուր տեսքը հարավից

կով և աշխատում էր կազմակերպել նորոգման գործը. «...սբ. Աստուածածին եկեղեցին Մանավ գեղջ, որ է քար և կրեայ շինեալ սեփական ծախիսք Տփղիսայ պատուաւոր քաղաքացի Եագոր Գրիգորեան Փրիղոնեանցէ, ըստ խնդրանաց իմոյ, ունի կարօտութիւն վերանորոգութեան: Ես դարձեալ խնդրատու եղեալ առ մեծապատիւ ժառանգաց հանգուցեալ Փրիղոնեանցի յանձնառու եղեն զի կրկին սեփական ծախուց իրեանց վերանորոգեսցի վերտառեալ եկեղեցի ներկայ գարնան»¹¹¹: Մեկ այլ գրութեամբ քահանան հայտնում էր. «...վերոյիշեալ եկեղեցին, որովհետև կոմստրածածկ է և կոտրատեալ, կամիմք ժեշտիւ ծածկել, նոյնպէս մի արշին բարձրացնել պատերն և գաջիւ սրել արտաքոյ և ի ներքուստ: Ըստ կարծեաց իմոյ ծախք հարկատր է մօտատրապէս չորս հարիւր թուրիս և սոյն ծախք ըստ խընդրանաց իմոյ խոստացեալ են ի յիշատակի հորն իրեանց՝ Տփղիսայ պատուաւոր քաղաքացոյ հանգուցեալ Գեորգ Գրիգորեան Փրիղոնեանցի ժառանգը՝ Գրիգոր և Մնացական, զի վերտառեալ եկեղեցին ևս շինեալ է սեպիական ծախիսք հանգուցելոյ, ըստ խնդրանաց իմոյ»¹¹²:

Եկեղեցու նորոգման աշխատանքները գլխավորելու նպատակով Մանավ գյուղից ընտրվել էին Սարգիս Բորյանցը, Պետրոս Ահարոնյանցը և Բեգիա Բորյանցը¹¹³: Ըստ ամենայնի, վերականգնման աշխատանքները բարեհաջող իրականացվել էին. «Գլխավոր բերդապարսպի ետևում գտնվում է հայկական եկեղեցին՝ վերականգնված պ. Փրիղոնովի ծախսով: Այս եկեղեցին ուշ շրջանի կառույց է»¹¹⁴: Ի դեպ, թիֆլիսաբնակ Փրիղոնյան հայտնի

տոհմը զգալի կալվածներ (այգիներ) ուներ Մանավ գյուղի տարածքում: Դրանք նախկինում պատկանում էին Բեհբուդյանների տոհմին¹¹⁵:

Հայտնի է, որ Մանավի Սբ. Աստվածածին եկեղեցին փակվել է 1923 թ. մարտի 29-ին¹¹⁶:

Քահանա. Դավիթ Տեր-Դավթյանց. հիշվում է ԺԸ դարի կեսին: Նրա շնորհիվ գյուղում կառուցվել էր Սբ. Համբարձման ռիստատեղին:

Մանավի հայերը թեև համեմատաբար մեծաթիվ էին, բայց դարձյալ հաճախակի մնացել են առանց հոգևոր հովվի: Այդպես է եղել 1861 թ., երբ վախճանվել է Տեր-Կարապետ քահանա Կախյանցը¹¹⁷: Նման դեպքերում ժամանակավորապես քահանա էր հրավիրվում Սագարեջոյից կամ Կակաբեթից: Այսպես՝ 1898-1923 թթ. հիշվում է Կակաբեթի քահանա Հարություն քահանա Ստեփանոսյանցը¹¹⁸:

Սբ. Համբարձման ուխտատեղի. հայտնի է, որ ԺԸ դարի կեսին մանավցի քահանա Դավիթ Տեր-Դավթյանցն իր միջոցներով գյուղի հյուսիսարևելյան կողմի անտառախիտ բարձրադիր սարի գագաթին կառուցել էր Սբ. Համբարձման ուխտատեղին¹¹⁹: Ի դեպ, 1896 թ. ուխտատեղիի ունեցվածքից ստացվող եկամուտներն օգտագործվել են «բերդի

111 Նույն տեղում, № 286, Ե. 4.

116 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, թ. 10: Ի դեպ, անդրադառնալով եկեղեցու փակման փաստին՝ Տեր Հարություն քահանան նշել է, որ մարտի 29-ին տեղի խորհրդային իշխանության ներկայացուցիչը հրամայել է «...Մանավ գիւղի սուրբ Աստուածածնայ եկեղեցոյ զանկակատան խաչը իջեցնել, սուրբ սեղանի վարագոյրը, սկիւղ ու մաղձմանը և ուրիշ պարակայք, պատկերներ և մոմակալներ ստանալով, եկեղեցոյ դուռը կնիքով դրոշմել են, առանց իմ ներկայութեամբ...» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 463, թ. 25):

117 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 4:

118 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3352, թ. 5, ֆ. 57, ց. 3, գ. 463, թ. 33: Նաև՝ «Նոր-Դար», 1896, № 83, էջ 3:

119 «Նոր-Դար», 1896, № 83, էջ 3:

111 Նույն տեղում, գ. 3352, թ. 2:

112 Նույն տեղում, թ. 5:

113 Նույն տեղում, թ. 9:

114 Кавказские заметки. Манавская крепость.—«Кавказ», 1883, № 63, Ե. 3.



մէջ շինուած հայոց ս. Աստուածածին եկեղեցու վերանորոգութեան վրայ»¹²⁰: Հայտնի է, որ 1890-ական թվականներին «վրաց այժմեան քահանան մտադրում է այդ ուխտատեղին յափշտակել հայերից, որպէս իրենց սեպիականութիւն...»¹²¹:

Գերեզմանոց. պահպանված տապանագրերը վրացագիր են: Դրանք են.

Ճա մաս Յոնա մճեբարց / Յար ամալոս ցօրցօս մեյլճլեյ. / Յեն հեյք.

Թարգմ. Աստ հանգչի Գիորգիի կին՝ Ամալիան, խնդրեմ ողորմի ասեք, 1825:

Տաջլաջս ամաս Յոնա մճեբարց Յար ռամաՅ / հերքեջոցօս մեյլճլեյ քեյոնոնո նոնո իջոմոն ցօրցեցեցօս միլճլեյլոնո ցեքք ճրցօս / Յենճոբա մոծոնցօս Վեյլսա հեյլսա, տեբերցօս – ց.

Թարգմ. Ներքո տապանիս հանգչում են Ռամազ Չերքեզովի կողակից Նինոն, դուստր՝ Սվիմոն Գուրգենիճեի, տեսնողին խնդրում են ողորմի ասեք, 1830 փետրվարի 5:

Այ թորոնտո նոնոս / մեյ ճաՅար ցեօս, յօնոց / Վոյոյոտոտ Յենճոբա / թոնցօս.

Թարգմ. Աստ հանգչի Բորյանց Նինիայի որդի Լազարը, կարդացող՝ ասեք ողորմի:

Տաջլաջսա Յոնա մճեբարց Յար արցօտն / Տեյլցանոցօս Յոծոճան 40 Վլոնոս / ցարճացօց-



ՍԱՆԱՎ. Բերդամիջի մատուռների խումբը՝ վերականգնումից առաջ և հետո

Յալեյ 1889 Վեյլսա / անոցօս 5-նա, միլճլեյլոնո / ցեքքեյլճլեյլոնո տօտօ թօրօ Յենճոբասա.

Թարգմ. Ներքո տապանիս է Արուֆին Ստեփանով, վախճանեցալ 40-ամյա հասակում, 1889 թ. ապրիլի 5-ին. տեսնողներին խնդրում են մի բերան ողորմի (ասեք):

«Թարաք» գյուղատեղի. գտնվում է Մանավից 3 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից շուրջ 1100 մ բարձրության վրա: ԺԹ դարի վերջերի վավերագրերում այստեղ հաճախակի հիշվում է մաս հայոց Սբ. Գևորգ ուխտատեղին¹²²:

120 Նույն տեղում:

121 Նույն տեղում:

122 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 66, գ. 3905, ք. 243:

ՆԻՆՈՇՄԻՆԳԱ

Տեղադրություն. արևմտյան կողմից կից է շրջակենտրոնին: Գյուղի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 820 մ է:

Պատմություն. Վրաստանի և մասնավորապես Կախեթի նշանավոր բնակավայրերից է: Հայտնի է միջնադարյան վանական պարսպապատ համալիրով, որի գլխավոր եկեղեցին (Է դ.) իր հորինվածքով պատկանում է Ավան-հոխիսիմեատիա եկեղեցիների շարքին: Ուշագրավ են ԺՁ դ. քառահարկ գանգակատունը և ԺԸ դ. մետրոպոլիտ Տուսիսվիլու տունը¹²³:

Նկարագրություն. 1849 թ. գյուղի այցելուներից Հովհաննես վարդապետ Արշարունին, գրել է. «Նինոծմինդայ (թարգմանի սբ. Նունե), է գիւղ Վրաց յայնկոյս գետոյն Եօրի միով մղոնա հեռի ի Սագարեջոյէ. Հայոց տունք 22. ստրուկք են եկեղեցոյն Վրաց, և ինքեանք հողագործք և այգեգործք, սոքա ևս չգիտեն զլեզու Հայոց և չունին զեկեղեցի»¹²⁴:

Հայերը Նինոծմինդայում. հայ համայնքի գոյացման ստույգ ժամանակը հայտնի չէ: Կարծում ենք՝ դա տեղի է ունեցել ԺԸ դարի կեսերին: Գրավոր աղբյուրներում նրանց ներկայությունը վկայված է 1802 թ.¹²⁵: Գյուղում հայերը միշտ էլ փոքրաթիվ են եղել. ԺԹ դարում արձանագրված բազմաթիվ բռնի հավատափոխության դեպքերն իրենց հերթին բացասաբար են անդրադարձել հայերի թվական աճին: Ի դեպ, գյուղի հայ բնակիչների թիվը վավերագրերի մեծ մասում ցույց է տրված Սագարեջոյի հետ, և քիչ տվյալներ կան, որոնցում նինոծմինդայաբնակ հայերի թիվն առանձին է նշված:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակիչների թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ¹²⁶	15	67	66	133
1842 ¹²⁷		133	137	270
1849 ¹²⁸	22			
1870 ¹²⁹		72	55	127

Պետք է նշել, որ վրացաբնակ բազմամարդ գյուղ է եղել. 1874 թ. ուներ 1072¹³⁰, իսկ 1914-ին՝ 1630 բնակիչ¹³¹ (նրանց մեջ, անշուշտ, քիչ չէին նաև վրացախոս հայերը):

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է բնակիչների հետևյալ անվանացուցակը.

123 Гелашвили Манана, Ниноцминда. – “Молодеж Грузии”, 1988, с. 6.
 124 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316-317:
 125 АКАК, т. 1, с. 473.
 126 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 12:
 127 Նույն տեղում, գ. 3804, ք. 8:
 128 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316-317:
 129 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, ք. 147-148:
 130 “Кавказский календарь на 1886 г.”, с. 117
 131 “Кавказский календарь на 1915 г.”, с. 165.

«1. Մծղլի որդիք՝ Գախիք, Նոնի և Սարգիս, մայր՝ Աննա, Գախի կինն՝ Մայիա, որդիք՝ Անդրեաս և Գիորգի, դստերք՝ Սփիօ, Նինօ և Լալօ, Նոնինի կինն՝ Թինաթին, դուստր՝ Ովսաննա, Սարգիսի կինն՝ Քալիա և միս ննջեցեալ եղբոր՝ Գախիսի այրի կինն՝ Մայիա, որդի՝ Սօսի:

2. Միրուէլի որդի՝ Պապա, կինն՝ Քեթեվան, որդի՝ Գախիք:
3. Ղարաբաղցի Յարութունի այրի կինն՝ Մարիամ, որդիք՝ Յակոբ և Մովսէս, դուստր՝ Շուշան:
4. Թօճիկի որդի՝ Գախիք, կինն՝ Մայիա, որդիք՝ Գօգի, Նոնի և Եօրամ, ևս Պէտրէ, Գօգինի կինն՝ Քեթեվան, որդիք՝ Ջուրաբ և Բասիլ, դստերք՝ Նինօ և Ովսաննա, Նոնիի կինն՝ Անախանում, որդիք՝ Սօլօման և Գիորգի, դուստր՝ Մարիան, Եօրամի կինն՝ Թինաթին, որդի՝ Օնափրէ, Պէտրէի կինն՝ Մարթայ, որդի՝ Աւետիք:
5. Գձէլի որդի՝ Նինինի այրի կինն՝ Նէնի, որդի՝ Չաքարիա:
6. Հասրաթի որդի՝ Թամազ, կինն՝ Բարբարէ, որդիք՝ Քուցու և Իօաննէ, դուստր՝ Նինօ և եղբոր՝ Ամիլբարի որդիք՝ Գիորգի, Ջուրաբ:
7. Ղանդինի որդի՝ Եօաննէ, կինն՝ Անախանում, որդիք՝ Յակոբ և Գրիգոր, դստերք՝ Մարիամ, Բարբարէ, Աննա և Մարթայ:
8. Ղանդինի որդիք՝ Լազարէ, Գուրգէն և Փարսադան, մայր՝ Մայիա, Լազարի կինն՝ Նէնէ, որդի՝ Ղանդին, դստերք՝ Նինօ, Անախանում, Թինա և Մարթայ, Գուրգէնի կինն՝ Նէնիա, դուստր՝ Էլիսաբէտ:
9. Բէժանի ողի՝ դալլաք Էլիզբար, կինն՝ Էլէնէ:
10. Բաքարի որդիք՝ Սօսի և Կիկօլի, մայր՝ Մարմար, Սօսինի կինն՝ Թինաթին, որդի՝ Պէտրէ, դստերք՝ Մայիա և Քրիստինէ, Կիկօլու կինն՝ Նինէ, դուստր՝ Սալօմէ և ննջեցեալ եղբոր՝ Շէրամազանի այրի կինն՝ Քալիա, որդիք՝ Սամէրու և Ամիրա, դուստր՝ Սարբէ, ևս և հօրեղբոր՝ Թաթուլի որդիք՝ Գօգիլ, Նինի և Գլախա, Գօգիլի կինն՝ Խանում, որդի՝ Սօսի, դուստր՝ Թամար, Նինինի կինն՝ Նէնիա, որդիք՝ Փերան և Անդրէ և Գլախի այրի կինն՝ Մարթօ, որդիք՝ Ջուրաբ, Օթիա և Իսակ:
11. Ղէբար Գօգին, կինն՝ Նէնիա, որդիք՝ Շավէրդի, Ջուրաբ և Լուարսաբ, դուստր՝ Թինաթին, Շավէրդու կինն՝ Խանփէրի, որդիք՝ Պէպան և Իօաննէ, դուստր՝ Նինօ, Ջուրաբի կինն՝ Մայիա, որդի՝ Գիորգի:
12. Յովակիմի որդիք՝ Անդրէ և Չաքար, մայր՝ Մարիամ, Անդրեսի կինն՝ Էլիսաբէտ, որդի՝ Իօսէք, դուստր՝ Նինօ:
13. Կուարակի Գիբօյի այրի հարս՝ Էլիսաբէտ, որդիք՝ Անդրեսա, Օնփրէ, Չաքարիա և Պէտրէ:
14. Յոհաննէսի որդի՝ Յովսէփ, կինն՝ Թամար, որդիք՝ Նոնի, Աղայ և Սարիօն, դստերք՝ Մարիամ, Բարբարէ և Մայիա:
15. Խառատ Բաղդասարի որդի՝ Շէրմազան, կինն՝ Սիմի, դստերք՝ Նինօ և Մէլանիա»¹³²:

Եկեղեցի. Նինոծմինդայում հայոց եկեղեցի չի եղել, և այդ բացը դեռևս 1828 թ. բնակիչները փորձել են լրացնել. «...ի գիւղն Սագարեջօ և մերձակայ գիւղօրայն նորա աւելի քան յիսուն զհարիւր գերդաստունս ի հայ ժողովրդոց, որոց թախանձանօք և յիշեալ հաւուն իմ պայծառափայլ Բէհբուտեանք ծախիւք իւրեանց շինեցին վասն նոցա զեկեղեցին, իսկ ցերեսուն տուն ի հայ ժողովրդոց Նինօծմինդայի մնացին առանց եկեղեցւոյ, որք ի հանդիսատր տօնս զնացին վասն աստուածապաշտութեան եկեղեցին վրաց, ուստի վասն առաջս ունելոյ, թե մի գուցէ ստեպ այցելութեանք կրոնափոխ գտցին, որպէս ազգին Հասրաթեանք, Մալալեանք և Հախտէրդեանք: Ի 1828-են հայրն իմ տեր Գրիգոր քահանայ

132 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 12:

յորդոր գտաւ ամեն ի բնակչայ Նինոծմինդայի՝ Շահուէրդի Միէրբեանց անուն մեծատան առ շինել անդ եկեղեցի և այնու ազատել զհայ եղբայրս ի հաւատափոխութենէ... յետ որոց յիշեալ Միմէօն արքեպիսկոպոսն և Խաչատուր վարդապետն Ելիսավետապօլցին զնացեալ անդ օրհնեցին զհիմն եկեղեցւոյն և ի ներկայութեան իւրեանց ետուն բարձրացուցանել զհաւասար հողոյն զհիմն նորին, բայց հոգևորականք վրաց՝ նախանձեալ...»¹³³ և խոչընդոտել են հայոց եկեղեցու կառուցմանը: 1870 թ. մի վավերագրում նշված է. «Եկեղեցին մինչ ցայսօր կիսակատար է մնացել»¹³⁴: 1871 թ. եկեղեցին դեռևս կառուցված չէր¹³⁵:

ՉԱՅԼՈՒՐ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 14 կմ արևելք՝ Թրիլիսի-Մղնախ մայրուղու ճախ կողմում:

Հայերը Չայրուրում. վրացաբնակ այս գյուղում, հավանաբար, հայերը հաստատվել են ԺԹ դարի սկզբներին:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1849 ¹³⁶	7			
1877 ¹³⁷		36	30	66
1878 ¹³⁸		34	41	75
1885 ¹³⁹		37	35	72
1893 ¹⁴⁰	17	50	48	98
1897 ¹⁴¹		48	47	95
1898 ¹⁴²	15	50	46	96
1901 ¹⁴³		57	53	110
1902 ¹⁴⁴		56	57	113
1903 ¹⁴⁵	18			
1908 ¹⁴⁶	13	34	53	87

Եկեղեցի. մինչև 1849 թ. մեզ հայտնի բոլոր վավերագրերում նշվում է, որ Չայրուրը հայոց եկեղեցի չունի: Այդ թվից հետո, սակայն, սկսում է հիշատակվել Սր. Աստվածածին անվամբ փայտաշեն մի եկեղեցի. ուստի դրա կառուցման ժամանակն էլ պետք է համարել հենց 1849 թ.: 1885 թ. մի վավերագրում նշված է, որ եկեղեցին քայքայված էր և նորոգման կարոտ¹⁴⁷: Մինչև 1893 թ. եկեղեցին բազմիցս հիշ-

վում է Սր. Աստվածածին, բայց 1894-ին և դրանից հետո հիշվում է Սր. Գևորգ անվամբ: Կարելի է եզրակացնել, որ եկեղեցին նորոգվել էր 1893-1894 թթ. ընթացքում և վերստին օծվել:

1898 թ. Տեր Հարություն քահանան գրել է. «Հայ ժողովրդականք ի Չայրուր գեղջ ընդամենն 15 տուն բնակիչք են, չքավոր, որպէս քաջայայտ է ձեզ, և որովհետև գտանին խոհալի դրութեամբ, ուստի կամին վերանորոգել նախկին քայքայեալ տախտակեայ հին եկեղեցին իւրեանց նոյնալիսի տախտակի և ծածկել կղմինդ, առ այս վերանորոգութեան հարկատր է ծախս միոյ հարիւր ռուբլոյ (100) և կամին ի միջի իւրեանց ժողովել զվերոյիշեալ գումարն և ոչ նեղացնել զայլսն»¹⁴⁸: Վերանորոգման աշխատանքները գլխավորելու նպատակով համագորդացիներն իրենց միջից ընտրել էին երեք անձ՝ Չաքարիա Սոսյան Կիրակոսյանցին, Գրիգոր Պողոսյան Կիրակոսյանցին և Միքայել Դավթյան Կիրակոսյանցին: Սակայն նյութականի պատճառով աշխատանքները ձգձգվել էին, և 1900 թ. վավերագրերից մեկում կարդում ենք. «...ընթացս անցեալ ամաց արտօրեայք և պտղաբերութիւնք այգեաց, յոյժ նուազք էին և ժողովրդականք վերոյիշեալ գեղջ գտանէին յոյժ ցաւալի դրութեան, առ որ խոստանան այսմ ամի նորոգել յեկեղեցին իւրեանց»¹⁴⁹: Հոգաբարձուներն իրենց հերթին խոստացել էին նորոգումն իրականացնել 1900 թ. աշնանը¹⁵⁰: Անհայտ պատճառներով եկեղեցին դարձյալ չի նորոգվել, և 1902 թվակիր մի գրության մեջ կարդում ենք. «...արդէն իսպառ հիմնայատակ է եղեալ և երևի միայն գետինն: ...Ուստի խնդրեմ խոհարհաբար թոյլատրել նոցա կառուցանել դարձեալ զփայտաշեն եկեղեցի, զի մնացեալ են իսպառ առանց հոգևոր մխիթարութեան»¹⁵¹: 1903 թ. Հարություն քահանան գրել է. «...արդարև յոյժ կարևոր է վասն յիշեալ ծխականաց եկեղեցի, քանզի իսպառ զրկեալ են ի հոգևոր մխիթարութենէ, որոյ հետևանքն կարին լինել յոյժ ցաւալի»¹⁵²: Նույն թվականի մեկ այլ վավերագրում կրկին կարդում ենք. «...Ի Չայրուր գեղջ բնակին, ի մէջ վրաց 18 տուն ամենախեղճ հայ ժողովրդականք և չունենալով կարօղութիւն ինչ, վասն յոյժ չքաւորութեան իւրեանց, կամին ի վերայ հիման հին նախկեայ եկեղեցոյ կառուցանել նոր տախտակեայ եկեղեցի...»¹⁵³: Ի վերջո, Հոգևոր կոնսիստորիան արգելել է առանց նախազօի նոր եկեղեցի կառուցել, քանի որ հին եկեղեցին ամբողջովին քանդված էր¹⁵⁴:

133 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1:
 134 Նույն տեղում, գ. 3857, ք. 147-148:
 135 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1:
 136 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316
 137 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, ք. 3:
 138 Նույն տեղում, գ. 3870, ք. 40-41:
 139 Նույն տեղում, գ. 3879, ք. 225:
 140 Նույն տեղում, գ. 3895, ք. 63:
 141 Նույն տեղում, գ. 3899, ք. 139-140:
 142 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3897, ք. 168, գ. 3359, ք. 1:
 143 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 131-132:
 144 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 15-16:
 145 Նույն տեղում, գ. 3359, ք. 13:
 146 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:
 147 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 39:

148 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3359, ք. 1:
 149 Նույն տեղում, ք. 6:
 150 Նույն տեղում, ք. 7:
 151 Նույն տեղում, ք. 8:
 152 Նույն տեղում, ք. 10:
 153 Նույն տեղում, ք. 11:
 154 Նույն տեղում, ք. 12:

Քահանա. չայուրաբնակ հայերին 1898-1903 թթ. հովվում էր Կակաբեթի քահանա *Տեր Հարություն Մանուկյան Ստեփանոսյանցը*¹⁵⁵:

ՊԱՏԱՐՁԵՈՒԼ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 5 կմ արևմուտք՝ Խաչման և Նինոծմինդա գյուղերի միջև:

Հայերը Պատարձեցում. երկրամասի վրացական խոշոր գյուղերից է: Հայտնի է, որ 1818 թ. գյուղում բնակվում էր երկու հայ ընտանիք (6 ար. և 7 իգ.):

«1. Նոնիմի որդի՝ Բերո, կինն՝ Նանո, որդիք՝ Նոնի, Աւետիք, Գիորգի և Սօրյան, դստերը՝ Նինիա, Էլիսաբեթ և Թինաթին:

2. Յարութիմի որդի՝ Դանիել, կինն՝ Աննա, դստերը՝ Մայիա, Նարգիզ և Էլիսաբեթ»¹⁵⁶:

1843 թ. վավերագրերից մեկում ևս գյուղում արձանագրված է սակավաթիվ հայերի ներկայությունը¹⁵⁷: Պատարձեցում վերաբերյալ այլ տեղեկություններ չունենք: Անշուշտ, եթե նրանք շարունակել են բնակվել գյուղում, ապա եղել են խիստ փոքրաթիվ, այնինչ 1874 թ. գյուղի բնակչությունը կազմում էր 1581 մարդ¹⁵⁸, իսկ 1914-ին՝ 2423 շունչ¹⁵⁹:

ՍԱԳԱՐԵՋՈՒ

Տեղադրություն. համանուն շրջանի կենտրոնն է՝ Թբիլիսիից 31 կմ արևելք՝ Թբիլիսի-Սղնախ մայրուղու վրա՝ հարավահայաց լեռնալանջին: Սագարեջոյին արևելքից կից են Գիորգիծմինդա, իսկ արևմուտքից՝ Նինոծմինդա գյուղերը:

Վարչական բաժանում. թեև ԺԹ դարի վարչական բաժանմամբ Սագարեջոն իր շրջակա գյուղերով մտնում էր Թիֆլիսի նահանգի համանուն գավառի մեջ, բայց և Կախեթ երկրամասի օրգանական մասն է կազմում: Ուստի վերջինիս ամբողջական պատկերը ներկայացնելիս անհնար է շրջանցել այն:

Նկարագրություն. 1849 թ. Սագարեջոյ այցելած Հովհաննես վարդապետ Արշարունին գրել է. «Սագարեջոյ՝ է գիւղ Վրաց բազմամարդ. տեղին յոյժ լայն անհարթ և բազմայգի. օդն է բարեյարմար և ջուրն ազնիւ. տունք Հայոց են 65. պարապին ի վաճառականութիւնս և յարհեստս. ստրուկք են արքունի, և ինքեանք ճողք և փարթամք. ունին զմի յարմարատր եկեղեցի կրապատ՝ բայց փոքր. տունք Վրաց թուով 900 յարևմտից գեղջս առ ափամբ հին պարապին անցանէ գետն Եօր, որ յառատանալն իւրում տայ բազում վնասս. այս գիւղ էր երբեմն ընդ հոգևոր տեսչութեամբ Թելաւայ՝ բայց այժմ է ընդ տեսչութեամբ Սղնախայ»¹⁶⁰:

155 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3359, ք. 1, 10:
156 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 12:
157 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1383, ք. 2:
158 “Кавказский календарь на 1886 г.”, с. 117.
159 “Кавказский календарь на 1915 г.”, с. 171.
160 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:

Հայերը Սագարեջոյում. վրացական այս հին բնակավայրում հայերի հաստատման ստույգ ժամանակը հայտնի չէ: Վավերագրերում հայ համայնքի մասին տվյալներ հիմնականում հանդիպում ենք միայն ԺԹ դարի սկզբներից. փաստացի նրանց ներկայությունը վկայված է 1802 թ.¹⁶¹: Վիճակագրական մեծաթիվ տվյալների մեջ Սագարեջոյի հայ բնակչությունը հիմնականում ցույց է տրված մեծակա 4-5 գյուղերում ցրված փոքրաթիվ հայերի թվի հետ, և անհնար է որոշել, թե դրանցից յուրաքանչյուրում որքան էր հայերի թիվը:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայերի թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1818 ¹⁶²	52	165	151	316
1841 ¹⁶³		169	118	287
1849 ¹⁶⁴	65			
1870 ¹⁶⁵		182	135	317
1874 ¹⁶⁶				258
1877 ¹⁶⁷		193	155	348
1885 ¹⁶⁸		210	194	404
1894 ¹⁶⁹		492	410	902
1901 ¹⁷⁰		560	470	1030
1914 ¹⁷¹	100			
1916 ¹⁷²		638	529	1167

Պատկերացում կազմելու համար, թե հայերը Սագարեջոյի բնակչության որ մասն էին կազմում, կարծում ենք, բավական է բերել 1-2 տվյալ. այսպես՝ 1849 թ. 900 տուն վրացիներ էին և միայն 65 տուն հայեր¹⁷³, իսկ 1874 թ. 3804 բնակիչներից հայեր էին 258-ը¹⁷⁴:

Ազգատոհմեր. ուշագրավ է 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է Սագարեջոյի հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Տեր Գարրիել Ամիրխանեանի միս աշխատական որդիքն՝ Մարգար և Չաքարիա, և տիրացու Գրիգորի կինն՝ Նինո, որդիք՝ Աւետիք և Յոհաննես, և տիրացու՝ Յովսէփի կինն՝ Մարիամ, դուստր՝ Զեքեվան:

2. Տիրացու Պետրոս Դեմուրեանի կինն՝ Շուշան, որդիք՝ Գեորգ և Յոհաննես:

3. Հախաջանի որդի՝ Մարգիս, կինն՝ Աննա, որդիք՝ Թունի և Սիմօն, դստերը՝ Մաթօ, Հերիքնազ և Էլիսաբեթ:

161 AKAK, т. 1, с. 473.
162 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 11:
163 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, ք. 42-43:
164 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:
165 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, ք. 147-148:
166 “Кавказский календарь на 1886 г.”, с. 117.
167 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, ք. 81-82:
168 Նույն տեղում, գ. 3879, ք. 225:
169 Նույն տեղում, գ. 3896, ք. 152-153:
170 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 117-118:
171 «Մշակ», 1914, № 260, էջ 3:
172 ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 1-2:
173 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:
174 “Кавказский календарь на 1886 г.”, с. 117.

4. Թիֆլիզցի Սարգսի որդի՝ Մարտիրոս, կինն՝ Շուշան, որդիք՝ Սարգիս և Դաիթ, դստերք՝ Քալի և Նինո, այլևս քոյր տրա՝ Սարգսի այրի կինն՝ Շուշան, որդի՝ Աւետիք:

5. Ռեվկազի որդիք՝ Գօզի և Ջաքար, մայր՝ Թուման, Գօզինի կինն՝ Սալօմէ, որդիք՝ Լազարէ, Աղալօ և Դաիթ, դուստր՝ Մայիա, Ջաքարի կինն՝ Մայիա, որդիք՝ Իօաննէ, Իսակ և Ազարիա, դուստր՝ Բարբարէ:

6. Վարդանի որդիք՝ Յակոբ, Ջաքարիա և Ջուրաբ, ևս Իսակ և Գիօրգի, մայր՝ Աննա, Յակոբի կինն՝ Մայիա, որդիք՝ Ազարիա, Գաբրիէլ և Յովսէփ, դուստր՝ Լալօ և Ջաքարիայի կինն՝ Անախանուն, որդի՝ Աբրամ, դստերք՝ Քէթեվան և Մարթայ, Ջուրաբի կինն՝ Անախանուն, Իսակի կինն՝ Սալօմէ:

7. Էջմիածնայ ճուրտ Միքէլի որդի՝ Պէպան, կինն՝ Մայիա, որդիք՝ Ջաքարիա և Գիօրգի, դստերք՝ Մաթօ և Շուշան, Ջաքարիայի կինն՝ Բօղան, որդիք՝ Աղալօ և Բէգլար:

8. Ասլամազի որդի Փարսադանի այրի կինն՝ Մարրա, որդի՝ Օնիճէ և միս որդոյ՝ Անդրիասի որդի՝ Դաիթ:

9. Ավաբարցի Ասատուր, կինն՝ Էլիսաբէր, դստերք՝ Մայի և Քէթեվան:

10. Նավասարթի որդի՝ Գօզի, կինն՝ Քէթեվան, որդիք՝ Ջաքարիա, Իսակ, Աբրամ, Դաիթ և Գէորգ, դստերք՝ Էլիսաբէր և Նինո, մայր՝ Մարիամ, Ջաքարիայի կինն՝ Սաբէրօ:

11. Թումազի որդի՝ Գաթօ, կինն՝ Թինաթին, որդի՝ Գիօրգի, կինն՝ Էլիսաբէր, դստերք՝ Շուշան, Սալօմէ և Բրաբարէ:

12. Գաբրիէլի որդի՝ Յարութիւն, կինն՝ Մայիա, որդի՝ Գաբրիէլ:

13. Իսավերդի որդի՝ Թադէոս, կինն՝ Մարիամ, որդիք՝ Դաիթ և Յոհաննէս, դստերք՝ Մաթօ և Էլիսաբէր:

14. Էջմիածնի ճուրտ Գօզինի որդիք՝ Յակոբ և Փարեմուգ, Յակոբի կինն՝ Սալօմէ, որդի՝ Աղալօ, դստերք՝ Նանօ, Սօփիօ, Քէթեվան և Մաթօ:

15. Փիրղուլի որդի՝ Ջաքարիա, կինն՝ Թամար, որդիք՝ Իաննէ, Աբրամ և Դաիթ, դստերք՝ Մարիամ և Մաթօ:

16. Ղազարի որդի՝ Թունի, կինն՝ Չանազան, դստերք՝ Աննա, Թինաթին և Շուշան:

17. Գիթօյի որդի՝ Գիօրգի, կինն՝ Հռիփսիմէ, որդի՝ Աբրամ:

18. Թունոյ որդի Գրիգորի այրի կինն՝ Մարգարիտ, որդիք՝ Մինաս, Յարութիւն, Իօաննէ և Պետրոս, դուստր՝ Մարթայ:

19. Յարութիւնի որդի՝ Աբրահամ, կինն՝ Կատարինէ, դստերք՝ Թինաթին և Նինո, ևս զոքանչն՝ Մաթօ:

20. Նալբանդի որդի՝ Բաղդասար, կինն՝ Քէթեվան, որդիք՝ Պապա և Մովսէս, դուստր՝ Քալիա:

21. Շավկայի որդի՝ Սօսի, կինն՝ Ովսաննա, որդիք՝ Ասլան և Իօաննէ, դստերք՝ Մայիա, Թինաթին, Շուշան և Նինո, մայր՝ Էլէնէ և մնջեցեալ եղբոր՝ Նինիմի այրի կինն՝ Մարիմէ, դուստր՝ Քալօ:

22. Վարդանի որդի՝ Դաիթ, կինն՝ Աննա, որդիք՝ Աղալօ, Իօաննէ և Կօնի, դստերք՝ Քալի և Մայիա:

23. Չիթա Նօնիկի որդիք՝ Աւետիք, Օնափրէ, Կիկօլի և Ջուրաբ, մայր՝ Էլիսաբէր, Ջուրաբի որդիք՝ Պէպան, Մէլքօ և Անանիա, դստերք՝ Բարբարէ և Նինո:

24. Բէրօյի որդի՝ Թաբու, որդիք՝ Թաթ և Գօզի, Դաթնի կինն՝ Մայիա, որդի՝ Մաթօ, դստերք՝ Նինո և Աննա, Գօզինի կինն՝ Թալալ, որդիք՝ Սօլօման և Գիօրգի, դստերք՝ Մարրա և Մարթայ:

25. Բերդի որդի՝ Նօնի, կինն՝ Խօրէշան, դուստր՝ Սօփիօ:

26. Շավկայի որդի՝ Դաիթ, կինն՝ Թինաթին, որդիք՝ Գիօրգի, Գաբրիէլ և Դետիայ, դստերք՝ Մարիամ, Էլիսաբէր, Կատարինէ և Բարբարէ, ևս Սալօմէ:

27. Յարութիւնի որդիք՝ Ղազար և Մկրտում, Ղազարի կինն՝ Աննա, որդի՝ Յոհաննէս:

28. Պողոսի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Թամար, դստերք՝ Մարթայ և Անախանուն, Նինո և Աննա:

29. Մարտիրոսի որդի՝ Միմօն, կինն՝ Քէթեվան, որդի՝ Գրիգոր, դստերք՝ Մարիամ, Նինո և Քալի և զոքանչն՝ Էլէնէ:

30. Էջմիածնի ճուրտ Գօզինի որդի՝ Ջազա, կինն՝ Թալիա, որդիք՝ Սօլօման, Ռօստօն և Գէորգ, դուստր՝ Քալի:

31. Դէմուրի որդի՝ Միմօն, կինն՝ Մայիա, որդի՝ Գիօրգի:

32. Մէլք Թավերդի որդոյ Գէորգի կինն՝ Էլիսաբէր, զոքանչն տրա՝ Մարիամ, որդին՝ Բասիլ:

33. Նաւասարթի որդի՝ Անդրիաս, կինն՝ Խօրէշան:

34. Դէմուրի որդի՝ Յովսէփ, կինն՝ Լալօ, որդիք՝ Դաթ և Աւետիք:

35. Դէմուրի որդիք՝ Ստեփան և Իօաննէ:

36. Ռեվկազի որդի՝ Անդրիաս, կինն՝ Մաթօ, որդիք՝ Սօլօման և Ասլան:

37. Ճէշմարիտի որդի՝ Բէժան, որդիք՝ Պէտրէ և Գիօրգի, դուստր՝ Խանփէրի:

38. Ռեվկազի որդի՝ Իաննէ, կինն՝ Թինաթին, որդիք՝ Դաիթ և Գիօրգի, դստերք՝ Աննա և Բարբարէ:

39. Ղօրղանի որդի Ազնի Գօրջասայի կինն՝ Թամար, որդիք՝ Կախաբէր և Ջազալ, դուստր՝ Էլիսաբէր:

40. Դիարի որդի՝ Ջուալ, կինն՝ Մայիա, որդիք՝ Մկրտում, Սօսի և Իօաննէ, դստերք՝ Աննա և Նինո, զոքանչ՝ Դարեշէ:

41. Աթօյի որդի՝ Գօզի, կինն՝ Մազարիին, որդի՝ Յարութիւն, դուստր՝ Մայիա:

42. Թիֆլիզցի Քարտաշի որդի՝ Բաղդասար, կինն՝ Քալի, որդի՝ Մէլքսէթ:

43. Իսակի այրի կինն՝ Մայիա, որդիք՝ Աղալօ և Բէգլար:

44. Աբրահամի որդի՝ Յակոբ, կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Ամիրան, Սամէրիս, Գիօրգի և Աբէլ, դուստր՝ Թագուհի:

45. Ջալիմի որդոյ որդի՝ Գօզի, մայր՝ Մարիմէ, մօրամայրն՝ Խանուն:

46. Մանուկի որդի՝ Թաթօ, կինն՝ Դարեշան, որդիք՝ Սօսի, Պէտրէ, Դաիթ և Իօաննէ, դստերք՝ Մայիա և Նինո:

47. Դալլաք Յոհաննէս, որդի Անտօն, կինն՝ Անախանուն:

48. Լէնչի Բաղդասար, կինն՝ Բարբարէ, որդի՝ Գէորգ, զոքանչն՝ թիֆլիզցի Յակոբի այրի կինն՝ Աննա, որդի՝ Մուլխան:

49. Դալլաք Յարութին, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Միմօն:

50. Միրօյի որդիք՝ Յօհան և Գրիգոր, Յօհանի դուստր՝ Թինաթին և Գրիգորի կինն՝ Էլիսաբէր, դուստր՝ Նինո:

51. Յօհանի որդի՝ Ջաքարիա, կինն՝ Աննա, որդիք՝ Նինի, Շավերտի, Դաիթ և Գիօրգի, դստերք՝ Խանփէրի, Թամար, Մարթայ և մայրն՝ Մայիա:

52. Ախակայի որդիք՝ Յակոբ և Նինի, Յակոբի կինն՝ Մարիամ, որդիք՝ Գիօրգի և Իօաննէ, դստերք՝ Նինո և Էլիսաբէր, Նօնի կինն՝ Մաթօ, դուստր՝ Շուշան»¹⁷⁵:

Դպրոց. Մագարեջոն Կախեթի վրացախոս հայ բնակչություն ունեցող սակավաթիվ այն բնակավայրերից էր, ուր հայերին հաջողվել էր բացել ազգային դպրոց: Յավոք դրա գոյության մասին միայն կցկտուր տվյալներ են հայտնի: Այսպես, պարզ չէ, թե որ թվից է գործել դպրոցը, բայց հայտնի է, որ 1866 թ. ունեցել է 1 ուսուցիչ և 32 աշակերտ¹⁷⁶: 1870 թ. դրությամբ դպրոցը չէր գործում ուսուցիչ չլինելու պատճառով¹⁷⁷: Այնուհետև վավերագրերը դպրոցի մասին լռում են մինչև 1909 թ.: Այդ թվի նոյեմբերի 8-ին գյուղի հայ համայնքը որոշել էր Սբ. Աստվածածին եկեղեցու բակում կառուցել երկու սենյակից բաղկացած դպրոցական նոր շենք:

175 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 11:

176 Նույն տեղում, գ. 3848, ք. 111:

177 Նույն տեղում, գ. 3857, ք. 147-148:

Այդ նպատակով ընտրել էին երեք հոգու՝ Ալեքսի Ռևազյանին, Աբրահամ Մարտիրոսյանցին և Եագոր Ռևազյանցին, որպեսզի երեցփոխ Շաքար Պեպանյանցի հետ լուծեն (եկեղեցու և ժողովրդի գումարներով) դպրոցի կառուցման գործը: Ըստ նախահաշվի՝ ծախսը կազմում էր 600 ռուբլի¹⁷⁸: Սակայն դպրոցի բացումն ինչ-ինչ պատճառներով ձգձգվել էր և իրականություն դարձել միայն 1914 թ.: Այդ առթիվ ժամանակի մամուլը գրել է. «Այս գիտը, որը ունի մօտ 100 տուն հայ բնակիչ և որը Թիֆլիսից հեռու է հազիւ 20 վերստով, մինչև օրս գուրկ է եղել մայրենի դպրոցից, որի կարիքը մեր օտարախօս և օտարամուլ գիտերում ամենակենսական պահանջն է ու նրա գոյութեան առաջին պատուանդանը: Ամսիս 2-ին բացվեց Սագարէջօ գիտի դպրոցը, որի նախաձեռնողը և նրա մասին հոգացողը եղել է Ղ. ա. ք. Մամիկոնեան...»¹⁷⁹: Երկսեռ աշակերտության ընդհանուր քիվը եղել է 50 սան¹⁸⁰: 1916/17 ուստարում դպրոցը գործել է՝ շնորհիվ Կովկասի հայոց բարեգործական ընկերության հատկացրած 200 ռուբ. նպաստի¹⁸¹: Դպրոցը գործել է նաև 1919 թ.¹⁸² խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին, ապա փակվել:

Սբ. Աստվածածին եկեղեցի. կառուցման ստույգ թվականը հայտնի չէ. 1818 թ. մի վավերագրում նըշված է, որ կառուցվել է իշխան Ավետիք Բեհբուդյանի միջոցներով. «Ի գեօղն Սագարէջօ գոյ եկեղեցի մի սագաշէն կառուցեալ քարի և բոսմբ յանուն Սբ. Աստուածածնայ, արդեամբ և ծախսիւք պայծառ իշխան Մելիք Աւետիք Բեհբուդեանին»¹⁸³: ԺԹ դարի կեսերին, հավանաբար, քայքայված եկեղեցու տեղում կամ նրա փոխարեն Բեհբուդյանները կառուցել են նոր եկեղեցի. «...ի գիտն Սագարէջո և մերձակայ գիւղօրայն նորա աւելի քան յիսուն զհարիր գերդաստունս ի հայ ժողովրդոց, որոց քայսանձանօք և յիշեալ հաւուն իմ պայծառափայլ Բեհբուտեանք ծախսիւք իւրեանց շինեցին վասն նոցա զեկեղեցին...»¹⁸⁴:

Սբ. Աստվածածին քարաշեն եկեղեցին բազմիցս հիշվում է ԺԹ-Ի դարերի վավերագրերում:

Այն գործել է մինչև 1923 թ., որից հետո փակվել է¹⁸⁵, ապա հիմքից քանդել են և տեղում հիվանդանոց կառուցել:

Եկեղեցական իրեր. այստեղ պահվող բազմաթիվ իրերից մի քանիսն ունեին հակիրճ հիշատակագրություններ¹⁸⁶: Դրանք են՝

178 Նույն տեղում, գ. 1304, ք. 7-8:

179 «Մշակ», 1914, № 260, էջ 3:

180 Նույն տեղում:

181 «Համբարաբեր», 1916, № 33, էջ 1034:

182 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 48, ք. 104:

183 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 10:

184 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1:

185 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 463, ք. 33:

186 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 10:

Շուրջառ.

Յիշատակ դալլաք Յոհանեսի:

Արծաթե սկիի.

Յիշատակ է դալլաք Յոհաննէսին եւ ծնողացն Գր(ի)գորին եւ Մարեամին, կողակցւոյն սորա՝ Սանդուխտին ի վայելումն Աստուածածնայ ս(ուր)ք եկեղեցւոյ աւագ քահանայ Տէր Գաբիէլին:

Խորհրդատետր.

Յիշեալ Տէր զհոգիս ծառայ Քրիստոսի Սիմօնին եւ ծնողացն՝ Մարտիրոսին եւ Հոռօմսիմին եւ զաւակին նորին՝ Գրիգորին եւ ողորմեայ նմայ ըստ մեծի ողորմութեան քում Քէթլվանին:

Աշտանակ (գրված է վրացերէն).

Չսոյն աշտանակն ընծայեցի հայոց Աստուածածնայ ս(ուր)ք եկեղեցւոյ, ես Յոհաննէս դալլաքս և իմ կողակից Սանդուխտն:

Աստվածածնի պատկեր.

Յիշ(ա)տ(ա)կ տիրացու Պետրոս Դաւթեանի:

Մաշտոց.

Յիշատակ լէհնչի Ղազարին:

Չեռագիր հայամավորք.

Յիշատակ Բօյաղի Գօգինին:

Ճաշոց գիրք.

Յիշատակ է հնչի Բաղդասարի:

Ժամագիրք.

Յիշատակ Աննա, կին՝ Վարդանեանի:

Գրակալի շապիկ.

Յիշատակ հաղբատցի Սիմօնին:

Քահանա. Սագարէջոն՝ իբրև համեմատաբար ավելի հայաշատ բնակավայր, գրեթե միշտ ունեցել է իր քահանան: Վերջինս հովվել է նաև Նինոծմինդա, Պատարձեուլ, Խաշմ, Անթոկ, Գիորգիծմինդա, երբեմն էլ ավելի հեռավոր գյուղերի հայությանը:

Ավագ քահանա Տէր Գաբրիէլ Ամիրխանեան. հիշվում է 1788-1818 թթ.: Ծնվել է 1753 թ., ձեռնադրվել 1788-ին արքեպիսկոպոս Հարություն Շուլավերցու կողմից¹⁸⁷: Նրա 5 որդիներից 3-ը՝ Գրիգորը, Ստեփանը և Հովսեփը, տիրացուներ էին: 1793-1818 թթ. եկեղեցու տիրացուների թվում հիշվում է նաև Պետրոս Դամուրյանը¹⁸⁸:

Հովհաննէս Մնացականյանց. ծխատեր քահանան է եղել 1846-1858 թթ.¹⁸⁹:

187 Նույն տեղում:

188 Նույն տեղում:

189 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3516, ք. 129:

ՍՂՆԱԽԻ ՇՐՋԱՆ

Սղնախի շրջանը զբաղեցնում է 1251,7 կմ² մակերես: Սահմանակից է Վրաստանի Հանրապետության Սագարեջոյի, Գուրջաանի, Լագոդեխի, Դեդոպիլիս-Շղարոյի շրջաններին և Ադրբեջանի Հանրապետությանը: Ունի 24 բնակավայր: Շրջկենտրոնը Սղնախ քաղաքն է: Դրանցից 11-ում բնակվել են նաև հայեր:

ԱՆԱԳԱ

Տեղադրություն. Գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հյուսիս՝ Գուրջաան, Լագոդեխ և Սղնախ քաղաքների ձգվող մայրուղիների միացման տեղում:

Հայերն Անագայում. Անագան Կախեթի, մասնավորապես ներկայիս Սղնախի շրջանի նշանավոր գյուղերից է: Հայ բնակչության՝ Անագայում հաստատվելու ստույգ ժամանակը հայտնի չէ: Հավանական է, որ դա տեղի ունեցած լինի առնվազն ԺԸ դարի կեսերին:

1840 թ. անագայաբնակ հայերը գրել էին. «Ի հին ժամանակաց անտի զկնի գաղթականութեան իրեանց ի Վրաստան կալեալ են ինքեանց տեղի բնակութեան զգիտն Անագ և բնակին այժմ անդէն աւելի քան զ50 գերդաստան...»¹: Անագաբնակ հայերը դեռևս ԺԹ դարի կեսերին մոռացության չէին մատնել մայրենի լեզուն, բայց դարավերջին տարբեր աղբյուրներ վկայում են, որ նրանք արդեն վիրախոս էին: 1849 թ. գյուղ այցելած Սբ. Էջմիածնի միաբան վարդապետ Արշարունին գրել է. «Հայք են վաճառականք և արհեստաորք և այգեգործք ...: Տունք հայոց են 110 և գիտեն խօսել զլեզու հայոց»²:

Ստորև ներկայացնում ենք վիճակագրական տեղեկագրերից դուրս հանված այն տվյալները, որոնք վերաբերում են անագաբնակ հայերի թվաքանակին.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 ³	50			
1841 ⁴		370	301	671
1849 ⁵	110			
1852 ⁶		321	270	591
1853 ⁷		285	248	533
1854 ⁸		167	170	337

1 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 810, ք. 1:
 2 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 317:
 3 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 810, ք. 1:
 4 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, ք. 194-195:
 5 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 317:
 6 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, ք. 94:
 7 Նույն տեղում, գ. 2743, ք. 79-80:
 8 Նույն տեղում, գ. 3825, ք. 38-39:

1874 ⁹			63
1885 ¹⁰	40	37	77
1889 ¹¹	39	45	84
1890 ¹²	40	44	84
1892 ¹³	49	52	101

1914 թ. Անագան ուներ 5289 բնակիչ¹⁴: Հայերն համարյա աննշան էին:

Սբ. Գևորգ եկեղեցի. հիմնադրման ժամանակը. 1839 թ. մի վավերագրում հիշվում է Սբ. Գևորգ փայտաշեն եկեղեցին¹⁵:

1840 թ. մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ Անագա և Վաքիր գյուղերի միջև ընկած ազատ հողակտորը, որը պատկանում էր վրաց քահանա Ստեփան Բալինովին, անագացիներն իրենց եկեղեցու գումարներով (500 ռ.) գնել էին, որպեսզի տեղում ավելի ընդարձակ նոր եկեղեցի կառուցեին¹⁶: Հայտնի է, որ «ըստ ժամանակին բերման չկարելով շինել վասն իրեանց զքարեայ և զընդարձակ եկեղեցի, ունին շինեալ ի վաղուց հետէ գաղթատակապատ եկեղեցի, որ որպէս գիտեն անվայելուչ է բնակութեան տեառն, այժմ պատուելի երեցփոխ եկեղեցոյ նոցա գնել զշրջակայ վայրս նոյն եկեղեցոյ շնորհեաց նովին գնով եկեղեցոյն յընդարձակութիւն նորա»¹⁷: Կառուցվելիք եկեղեցու ճակատների և հատակագծի գծագրերը պատրաստ են եղել 1841 թ. մայիսին¹⁸: 1842 թ. օգոստոսին եկեղեցին կառուցման ընթացքում էր և հասել էր մինչև «ցվերջին կարնիզ կամարակապ տեղին...»¹⁹: Աշխատանքները զլիսավորել էին անագացիներ Չա-

9 Նույն թվականին գյուղի բնակչությունը 3570 շունչ էր, այսինքն՝ 3507-ը վրացիներ էին («Кавказский календарь на 1886 г.», с. 118).

10 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3879, ք. 225:

11 Նույն տեղում, գ. 3884, ք. 95:

12 Նույն տեղում, գ. 3887, ք. 141:

13 Նույն տեղում, գ. 3891, ք. 112:

14 «Кавказский календарь на 1915 г.», с. 88.

15 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, ք. 26-27:

16 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 810, ք. 1:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում, ք. 8:

19 Նույն տեղում, ք. 15:

քարիա Խաչատրյանը և Մովսես Դավթյանը²⁰: Շինարարությունն ընթացել է ընդհատումներով: 1845 թ. Ջ. Խաչատրյանը և Մ. Դավթյանը հայտնել էին, որ «սույն եկեղեցի ունի պարտա 706 րուբլի ի վերա շինութեան եկեղեցոյն»²¹: 1849 թ. մոտակա Վաքիր գյուղի հայերի մասնակցությամբ արդեն կառուցված էր նոր եկեղեցին. «Երկոքին այս գիւղքն ի նորումս շինեցին զմի հոյակապ և երևելի եկեղեցի»²²: Այն կրում էր նախորդ եկեղեցու՝ Սբ. Գևորգ անունը: Այդ անվամբ եկեղեցի է հիշվում նաև Ի դարի սկզբներին:

Հայանի է, որ 1923 թ., խորհրդային իշխանությունների ներկայացուցիչները նախատեսել էին եկեղեցին վերածել թատրոնի շենքի: Այդ մասին տեղեկանում ենք Սղնախի գործակալ Հարություն քահանա Տեր-Նիկողոսյանի՝ Սղնախի հոգևոր իշխանություններին հղած գրությունից. «...ջրօրհնեաց օրը Անագա գիւղի հասարակութիւնը հաւաքուելով նոյն գիւղի հայոց Սուրբ Գեորգ եկեղեցոյ զաւիթը, վայր են ձգել զանգակատան խաչն ու զանգերը և եկեղեցին փեշատել, յայտնելով թէ ուզում են այդ եկեղեցին դարձնել գիւղի թատրոն»²³: Նույնն է վկայել նաև Սղնախի Սբ. Գևորգ եկեղեցու միաբան Հովսեփ քահանան. «...եկեղեցին գրաւում են իրենք որպէս թատրոնական շենք»²⁴: 1924 թ. հունվարի 11-ին եկեղեցին արդեն ամբողջովին վերանորոգված էր և հարմարեցված թատերական ներկայացումներին²⁵:

Սբ. Գևորգ եկեղեցին ցայսօր գոյություն ունի: Այն կառուցված է սրբատաշ քարով, աղյուսով, կղմինդրածածկ է: Արտաքին չափերն են՝ 26 x 11,95 մ: 1989 թ. օգտագործվում էր որպէս կինոթատրոնի շենք:

Անագա գյուղի հետ միավորված են եղել մոտակա Կարդանախ, Բակուրցիխե (հյուսիս-արևմուտքում) և Վաքիր (հարավ-արևելքում) գյուղերի սակավաթիվ հայերը: Թվարկված գյուղերում երբևէ հայոց եկեղեցի չի եղել, և դրանց հայ բնակիչները օգտվել են եկեղեցուց:

Քահանա. 1858 թ. Անագա և մերձակա գյուղերի համար քահանա էր ձեռնադրվել *Հովհաննես Տեր-Մխիթարյանցը*, որը, սակայն, փոխադրվել էր Թիֆլիս ու իր հոտը թողել անհովիվ²⁶:

Ստեփանոս Տեր-Հարությունյան Տեր-Նիկողոսյանց. գյուղի քահանա էր հիշվում 1877 թ.²⁷:

ԲՈՂԲԵ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 3,5 կմ հարավ: Ի դեպ, ներկայումս շրջանում կա նաև Ներքին Բողբե գյուղը, որը համեմատաբար նոր է:

Հայերը Բողբեյում. սակավաթիվ հայեր առնչվածն ժԹ դարում հաստատվել են Վերին կամ Հին Բողբե անվամբ այս գյուղում: Նրանց ներկայությունը վկայված է 1802 թ.²⁸: Առանց եկեղեցու և սեփական քահանայի վկայված է 1842 թ. մի վավերագրում ևս²⁹: Ավելի ուշ՝ 1874 թ., Բողբե-Ջուրաբյան ձևով հիշված գյուղում բնակվում էին 22 շունչ հայեր (գյուղի ողջ բնակչության թիվն էր 1822)³⁰: Հայ բնակչություն ունեցող գյուղերի հետագա տարիների ցուցակներում այն այլևս չի հիշվում:

1914 թ. Բողբեն 5051 բնակիչներով դասվում էր երկրամասի ամենաբազմամարդ գյուղերի շարքը³¹:

ԲՈՂԲԻՍԽԵՎ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 3 կմ հարավ-արևելք՝ մի գեղատեսիլ ու արգավանդ հովտում:

Նկարագրություն. Բողբիսխևը Կախեթի հնագույն և վրաց ճարտարապետության միջնադարյան շրջանի արժեքավոր հուշարձաններով հարուստ գյուղերից է: 1849 թ. գյուղ այցելած Հովհաննես վարդապետ Արշարունին գրել է. «Բողբիսխև՝ այսինքն Բողբելայ իս կամ ձոր, առեալ ի Բողբել մետրապոլտեն Վրաց, որոյ տուն բնակութեան մերձ է յայն տեղի. անդ է և մենաստանն, յորում և մարմին նորա կայ ամփոփեալ. և տեղիս այս պատկանի ընդ այլոց գիւղօրէից այնր վանաց, ուստի և յանուն նորա և ձորն անուանի. ընդ երկարութիւն այնր ձորոյ են և այլ գիւղորայք, եօթն կամ ութ թուով, և պարապին ի վաճառականութիւնս, իսկ Վիրք հողագործք են և այգեգործք: Տունք Հայոց են 120, իսկ Վրաց բազում յոյժ»³²:

Հայերը Բողբիսխևում. հայերի ներկայությունն այստեղ վկայված է արդեն 1802 թ.³³: 1874 թ. գյուղի 4120 բնակիչներից 18-ը հայ էին³⁴: 1908 թ. գյուղում մնացել էր մեկ տուն հայ՝ 3 (2 ար. և 1 իգ.)³⁵, 1912-ին՝ 3 տուն³⁶:

1914 թ. Բողբիսխևն ուներ 5751 բնակիչ և ողջ Կախեթի ամենամարդաշատ բնակավայրերից էր³⁷:

28 AKAK, т. 1, с. 474.

29 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, ք. 94:

30 «Кавказский календарь на 1886 г.», с. 118.

31 «Кавказский календарь на 1915 г.», с. 100.

32 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:

33 AKAK, т. 1, с. 474.

34 «Кавказский календарь на 1886 г.», с. 118.

35 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

36 «Մշակ», 1912, № 182, էջ 3:

37 Ի դեպ, վերոհիշյալ Գիգա Մախվիլաձեն միանգամայն անհիմն պնդում է, թե մինչև 1885 թ. Բողբիսխևը եղել է գուտ վրացաբնակ, և միայն դրանից հետո են այնտեղ հայեր հայտնվել, ընդ որում, իբր, նրանք էլ նախկին վրացիներ էին՝ Բրուլաձե և Կոճիաշվիլի ազգանուններով, բայց հայ հոգևորականի կողմից հայ էին մկրտվել և Գոգալով վերանվանվել: Գ. Մախվիլաձեն

20 Նույն տեղում, ք. 46:

21 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, ք. 60-61:

22 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 317:

23 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 463, ք. 5:

24 Նույն տեղում, ք. 9:

25 Նույն տեղում, գ. 525, 105:

26 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4077, ք. 1:

27 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 160:



ԱՆԱԳԱ. Սբ. Գևորգ եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից և հարավ-արևելքից

ՄԱՂԱՐՈ

Տեղադրություն. գտնվում է Մղնախի շրջանում: ԺԹ դարում Մաղարո անվամբ միայն մեկ գյուղ կար, այժմ երկուսը՝ Վերին և Ներքին: Վերին Մաղարոն գտնվում է շրջկենտրոնից 2,0-2,5 կմ հարավ-արևմուտք, կից է Նուկրիան գյուղին:

Անվան ծագումը. հայերեն թարգմանությամբ նշանակում է «Հանք»:

Հայերը Մաղարոյում. տասնամյակների ընթացքում գյուղի հայ համայնքը թվապես ոչ միայն չի ավելացել, այլև կտրուկ նվազել է: Այսպես, 1842 թ. հայերը 12 տուն էին՝ 122 շունչ (63 ար. և 59 իգ.)³⁸: 1874 թ. նրանք կազմում էին 45 շունչ: Ի դեպ, նույն թվին գյուղի բնակչությունը 1925 շունչ էր³⁹: 1908 թ. հայերը միայն 3 տուն էին՝ 11 շունչ (6 ար. և 5 իգ.)⁴⁰:

1914 թ՝ Վերին և Ներքին Մաղարո անվամբ երկու գյուղեր են հիշվում, որոնցից մեկն ուներ 3498, մյուսը՝ 2134 վրացի բնակիչ⁴¹:

ՄԱՃԽԱՆ (ՆԵՐՔԻՆ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 5-6 կմ հարավ-արևելք:

Հայերը Մաճխանում. առնվազն ԺԹ դարի սկզբներին այստեղ բնակություն են հաստատել սակավաթիվ հայեր: 1908 թ. գյուղի հայ համայնքը բաղկացած էր 5 ընտանիքից՝ 20 շունչ (9 ար., 11 իգ.)⁴², 1912-ին՝ 12 տնից⁴³:

Ներքին Մաճխանը վրացաբնակ բազմամարդ գյուղերից էր. 1874 թ. ուներ 2075⁴⁴, իսկ 1914 թ.՝ 3067 շունչ⁴⁵:

կասկածի տակ է առել նաև Օգանեզով և Ալիմով (Հովհաննիսյան և Հեքիմյան) ազգանունները կրող բնակիչների հայ լինելը, քանի որ իր ասելով Ալիմովի որդու անունը Վանո էր, հոր անունը՝ Նինիա, թոռների անունները՝ Միխեիլ, Ծղալոբ և Ալեքսանդրե (Գիգա Մախալիաճե, նշվ. հոդվ.):

38 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, ք. 94-95:
39 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.
40 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:
41 “Кавказский календарь на 1915 г.”, с. 153.
42 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:
43 «Մշակ», 1912, № 182, էջ 3:
44 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.
45 “Кавказский календарь на 1915 г.”, с. 156.

Գյրոց. 1909 թ. տեղում հայոց դպրոց բացելու միտք էր հղացել. նախատեսվում էր հաջորդ ուստարվանից բաքվաբնակ սղնախից ինժեներ-տեխնիկ Լ. Ե. Մելիք-Նուբարյանցի տրամադրելիք տարեկան 250 ռ. օժանդակությամբ հիմք դնել երկսեռ սկզբնական ծխական դպրոցի⁴⁶: 1912 թ. լրատվական մի աղբյուրից տեղեկանում ենք, որ դպրոցը դեռևս չէր բացվել, իսկ աշխատանքները շարունակվում էին: Մասնավորապես. «...Յակոբ քահանայ Գրիգորեանը Ջրօրհնէքին օրհնելով Մաչխաանի շրջանի տները, յորդորեց գիւղացիներին օգտվել Մելիք-Նուբարեանի բարերարութիւնից և դպրոց բաց անել Մաչխանում, որի համար առաջարկեց թոշակ տարեկան 3 ռ.: Գիւղացիները պատասխանեցին, որ կարող են տալ նոյն իսկ 6 ռ...»⁴⁷: Թե որքան էական էր Մաճխանի նման վայրում հայոց դպրոցի բացումը, երևում է հետևյալ հաղորդումից. «Մաչխաանի և հարևան գիւղերում ցիր ու ցան բնակվում են մօտ 60 տուն վրացախօս հայեր: Սրանք մի բառ չեն իմանում հայերէն, շունեն ոչ սեփական քահանայ և ոչ եկեղեցի, իսկ վերջերս սկսել են ամուսնանալ այլազգիների հետ»⁴⁸: Ի դեպ, Լ. Ե. Մելիք-Նուբարյանցն էլ, ըստ երևույթին, դժգոհ դպրոցի բացման ձգձգումից, հայտարարել էր, որ եթե մինչև 1913 թ. ուստարին հաստատությունը չբացվի, ինքը կհրաժարվի խոստացած նպաստը տրամադրելուց⁴⁹: Մի հաղորդումից էլ պարզվում է, որ դպրոցի չբացվելու պատճառը թեմի գործակալ Եղիշե քահանա Տեր-Աստվածատրյանն էր՝ իր անտարբեր վարքագծով⁵⁰:

Ինչևէ, Մաճխանում հայոց դպրոց ունենալու գաղափարն այդպես էլ կյանքի չի կոչվել. 1914 թ. էլ դեռևս չոչնչացվում էին նյութական միջոցների սղույթյան հարցերը⁵¹:

46 “Тифлисский листок”, 1909, № 129.
47 «Մշակ», 1912, № 27, էջ 3:
48 Նույն տեղում, 1912, № 164:
49 Նույն տեղում:
50 Նույն տեղում, 1913, № 184, էջ 3:
51 Նույն տեղում, 1914, № 54, էջ 3:

Մաճխանաբնակ հայերը երբևէ եկեղեցի կամ քահանա չեն ունեցել:

ՆԱՍՈՍԽԱՐ (ԱԽԱԼԻ ՍՂՆԱԽ)

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնի հարավային կողմում:

Նկարագրություն. 1849 թ. գյուղ այցելած Հովհաննես վարդապետ Արշարունին գրել է. «Նասոսխար՝ էր յառաջն աւան՝ և այժմ փոքր մի հեռի ի Սղնախայ կէս ժամաւ ընդ գառ ի վայր լերինս ելեւջութեամբ. տունք Հայոց այժմ են 6 կամ 7 արք ոստայնանկը, ունին զմի զմբէթազարդ փոքրիկ վանս յանուն սուրբ Աստուածածնի, ուր ուխտաւորք յաճախ դիմեն ի Սղնախայ»⁵²:

Ուշագրավ է նաև 1915 թ. ուն «Սղնախեցու» հարդորումը. «Սղնախի հարաւային կողմը մօտ 4 վերստ հեռաւորութեամբ գտնուում է «Նասոսխարի» անունով հայոց ուխտատեղի Ս. Աստուածածնայ անունով: Նասոսխարի բառը նշանակում է վրացերէն՝ տեղի՝ ուր մի անգամ բնակուելիս են եղել հայերը: Այնտեղ արդարև, մի անգամ եղել է հայերի բնակութիւն, բայց բնակավայրը լինելով վրաց Ս. Նունէի մենաստանի սեպհականութիւն՝ գետնահարկի ծանրութեան պատճառով՝ հեռացել են այնտեղից: Եկեղեցույ արևելեան կողմը զետեղուած են վրացական գիւղեր, ուր բնակուում են 60 տուն վրացախօս հայեր: Վրացիներից շատերը, ինչպէս յիշեալ նոյնպէս և այլ գիւղերում, կրում են հայկական ազգանուններ, գործիհնակ՝ Մանթաշովներ, Շանշիկներ, Բարսեղովներ, Յակոբովներ, Սահակովներ, Ղազազովներ, Ղուկասովներ, Ժամգարովներ (Ժամհարեան) և այլն, և այլն: Ակներև է, որ երբեմն եղել է այս կողմը հայերի մեծ գաղթը և ընդունել են յունաղականութիւն. «Փանիանի», «Միրգասանի», և «Ջուգասանի» անուններով գիւղերը, կարող են կենդանի ապացոյցներ լինել, որ սոքա հիմնուած են հայերից և անուանուել են հիմնողների ազգանուններով...»⁵³:

Հայերը Նասոսխարում. շրջակա 8-9 գյուղերում ցրված փոքրաթիվ հայերի համար (Տիբասան, Մաճխան, Ջուգասան, Միրգասան, Մաղարո, Բողբե, Բողբիսխև) այն կենտրոնական բնակավայր էր: Գյուղի քահանան հովվում էր շրջակա սակավաթիվ հայերին, իսկ Սր. Աստվածածին եկեղեցին այդ շրջանում միակ հայոց եկեղեցին էր: Այս պատճառով էլ նշված գյուղախմբի հայերի թիվը մեծ մասամբ ցույց է տրված միասին, և դժվար է որոշել Նասոսխարի հայերի թվաքանակը:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1890 ⁵⁴		71	71	142
1891 ⁵⁵		79	77	156
1906 ⁵⁶		90	74	164

Սր. Աստվածածին եկեղեցի. Նասոսխարը նշանավոր էր իր եկեղեցով, որի կառուցման հավանական ժամանակը, կարծում ենք, ԺԸ դարի վերջերն է կամ ԺԹ դարի սկիզբը: Վավերագրերում եկեղեցու մասին առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1839 թ.⁵⁷:

1845 թ. եկեղեցու շուրջ ուխտավորների համար կառուցվել էին թվով 4 սենյակներ. «Սոյն սենեկք եկեղեցույն շինեալ է արդեամբք Նուբարեանց Ստեփանոսին»⁵⁸: 1849 թ. վավերագրերից մեկում նշված է, որ Սր. Աստվածածին եկեղեցու շուրջը պարսպված էր, կար երեք սենյակ, որոնք իր ծախսով շինել էր Ստեփանոս Մելիք-Նուբարյանցը: Այդ թվին նա եկեղեցու երեցփոխն էր⁵⁹: 1851 թ. եկեղեցին կողոպտվել էր անհայտ չարագործների կողմից⁶⁰: Ի դեպ, հետագա վավերագրերում (հատկապես 1860 և 1870-ական թվականներին) առատ տվյալներ կան Սըղնախ քաղաքի Սր. Սահակյան արական ուսումնարանի մասին, որը գոյատևում էր Սր. Աստվածածին եկեղեցու եկամուտների հաշվին. «Սոյն եկեղեցույ բոլոր եկամուտն ամ ըստ ամէ ստանայ հոգաբարձութիւն Սղնախի Հայոց Սր. Սահակեան ուսումնարանի (հիշ. 1861 թ.)»⁶¹: 1870-ական թվականներին Ալեքսանդր և Մելքոն Ամիրխանյանցները Սր. Աստվածածին եկեղեցու մոտ իրենց միջոցների հաշվին ուխտավորների համար կառուցել էին 4 սենյակներից բաղկացած երկհարկանի քարաշեն մի տուն: Վերջինս 1914 թ. 500 ուրբ. ծախսով նորոգել է Ալեքսանդրի որդին՝ Նիկողայոսը⁶²: Հայտնի է, որ, բացի այդ շենքից, Ամիրխանյանցների տոհմի ուրիշ ներկայացուցիչներ էլ կառուցել էին աղբյուր և նվիրատվություններով զարդարել եկեղեցին. «Նասոսխարու Ս. Աստուածածնայ եկեղեցին, որ առաջին ուղտատեղին է: Դէպի այն եկեղեցին տանող ճանապարհի վերայ Յ. Ամիրխանեանցը երկու տեղ աղբիւր է շինել. Քէղէ և ուրիշ գիւղերի համար, բայց որովհետև ժամանակը իւր կնիքը դրօշմելով նոցա վերայ, արդէն քայքայվել են... Եկեղեցին պ. Ամիրխանեանցը շքեղացրել է զանազան ընծայաբերութիւններով և ուխտատրների համար էլ կառուցել է երկյարկանի տներ և հոգացել է սենեակների ամենայն հարկաւոր պարագաներն: Եկեղեցուն կից շինել է մի աղբիւր»⁶³:

54 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, ք. 140:
 55 Նույն տեղում, գ. 3889, ք. 139:
 56 Նույն տեղում, գ. 3915, ք. 8:
 57 Նույն տեղում, գ. 457, ք. 26-27:
 58 Նույն տեղում, գ. 3825, ք. 61-62:
 59 Նույն տեղում, գ. 3818, ք. 115, 121:
 60 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2788, ք. 1:
 61 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, ք. 53:
 62 «Մշակ», 1914, № 194, էջ 4:
 63 «Մեղու Հայաստանի», 1879, № 19, էջ 2:

52 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 316:
 53 «Հովիտ», 1915, № 48, էջ 758:

վավերագրերում հիշվում է ոչ թե որպես գյուղը, այլ Սղնախի մի թաղը՝ «քաղաքամասն Նուկրիան»:

Հայերը Նուկրիանում. այստեղ հայերի հաստատման հավանական ժամանակները ՇԸ դարի վերջերն են: Վիճակագրական աղբյուրները նուկրիանաբնակ հայերի թվաքանակի վերաբերյալ հակասական տեղեկություններ են ներկայացնում:

Վիճակագրություն. ստորև ներկայացնում ենք գյուղի հայ բնակիչների թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1842 ⁶⁹	11	38	31	69
1884 ⁷⁰	60			
1885 ⁷¹		344	335	679
1887 ⁷²	150			
1888 ⁷³		377	366	743
1889 ⁷⁴		384	376	760
1893 ⁷⁵	148	485	325	810
1894 ⁷⁶	162	487	327	814
1899 ⁷⁷	104	414	607°	1121°
1905 ⁷⁸		92	80	172
1906 ⁷⁹		244	198	442
1908 ⁸⁰	53	100	99	199

1914 թ. Նուկրիանն ուներ 4966 բնակիչ⁸¹: Հասկանալի է, որ հայերը կազմում էին այդ թվի փոքր մասը:

Ազգատոհմեր. 1899 թ. մի վավերագրից հայտնի են նուկրիանաբնակ հայերի հետևյալ տոհմանունները՝ Աբրահամյանց, Ազատյանց, Ալիխանյանց, Ալվազյանց, Ասեղյանց, Ավետիսյանց, Առաքելյանց, Արությունյանց, Գաբրիելյանց, Եղիգաբյանց, Եսայանց, Ջաքարյանց, Թամազյանց, Խարաչյանց, Խատյանց, Կիլատյանց, Մատինյանց, Մինասյանց, Սկրտումյանց, Մոսեսյանց, Մուրվալյանց, Յարալյանց, Շալամյանց, Սարգսյանց, Սիստյանց, Տեր-Հովհաննիսյանց, Տերտերյանց, Քանանյանց և Օհանեսյանց⁸²:

Ջրաղմուք. քաղաքամերձ բնակավայր լինելն ինքնին որոշ հարմարություն ուներ առևտրով զբաղվելու իմաստով, ուստի նուկրիանաբնակ հայերն իրենց ունակությունները դրսևորել էին հատկապես այդ բնագավառում. «Բնակիչները, ինչպես և ուրիշ շրջապատող գիւղերում՝ վրացիք են, բայց Նուկ-

րիանը ունի մտատրապալես և 60-ի չափ հայ բնակիչ: Վրացոց պարապմունքը գլխատրապալես կենտրոնացած է վարուցանքի մէջ, իսկ հայերի մեծամասնութիւնը պարապում է առևտրով...»⁸³:

Դպրոց. հայտնի է, որ 1884 թ. տեղում ուսումնարան չունենալու պատճառով հայ ծնողներն իրենց երեխաներին ստիպված ուղարկում էին Սղնախ. «...մանուկները յաճախում են Սղնախի հայոց երկսեռ և քաղաքային ուսումնարանները. նրանց թիւը շատ քիչ է, ի միջի այլոց հեռաւորութեան պատճառաւ...»⁸⁴: 1887-ին արդեն գործնական քայլեր էին մշակվել Նուկրիանում դպրոց բացելու հարցում⁸⁵:

Այդ դպրոցը, սակայն, բացվեց միայն շատ տարիներ անց՝ 1915 թ. սեպտեմբերին, սղնախցի մեծատուն Սարգիս Միմեռնյանի հոգացողությամբ՝ 1 ուսուցչով⁸⁶: Ի դեպ, սղնախցի վաճառական Սարգիս Միմեռնյանն իր ծախսով վերանորոգել էր Նուկրիանի Սբ. Սարգիս եկեղեցուն պատկանող մի շենքը այդտեղ հայկական դպրոց բացելու նպատակով: «Վաղուց անհրաժեշտութիւն էր զգացվում Նուկրիանում հայոց դպրոց բանալու: Այստեղ բնակվում են մօտ 120 տուն վիրախօս հայեր, որոնք բոլորովին չը գիտեն մայրենի լեզու: Այսուհետև, շնորհիւ Միմեռնյանի Նուկրիանի հայ երեխաները կը սովորեն հայերէն», իսկ դպրոցը ի պատիվ բարերարի պիտի անվանվեր «Միմեռնյան»⁸⁷:

1916/17 ուստարում դպրոցը գործել է Կովկասի հայոց բարեգործական ընկերության հատկացրած 200 ռուբ. օժանդակությամբ՝ 2 բաժանմունքով⁸⁸:

Սբ. Սարգիս եկեղեցի. նուկրիանաբնակ հայերը մինչև 1860-ական թվականների վերջերը եկեղեցի չեն ունեցել, բայց ձեռնամուխ լինելով այդ կարևոր գործին՝ կարողացել են հաջողությամբ գլուխ բերել ծխական համեստ մի եկեղեցու կառուցումը՝ ծախսելով եկեղեցական բոլոր գումարները և այն օժել Սբ. Սարգիս անվամբ: 1872 թ. մի վավերագրում կարդում ենք. «զբոլորն գումարն երեսփոխանն ծախեալ է ի վերա շինութեան նորակառոյց սուրբ Սարգիս եկեղեցոյն»⁸⁹: 1874 թ. եկեղեցու շինության որոշ մասեր անավարտ էին. «...ի վերա շինութեան նորոգ կառուցեալ կիսակատար եկեղեցոյն»⁹⁰: Շուտով դրանք ամբողջացվել են:

1899 թ. եկեղեցին ներկելու նպատակով 600 ռ. էր նվիրել Ռոստովում առևտրով զբաղվող սղնախցի Գևորգ Մամուլյանը⁹¹:

69 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, ք. 94-95:

70 «Նոր-Ռար», 1884, № 213, էջ 4:

71 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3879, ք. 225:

72 «Նոր-Ռար», 1887, № 178, էջ 3:

72 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, ք. 226:

74 Նույն տեղում, գ. 3884, ք. 95:

75 Նույն տեղում, գ. 3895, ք. 63:

76 Նույն տեղում, գ. 3896, ք. 66:

77 Նույն տեղում, գ. 3905, ք. 243:

78 Նույն տեղում, գ. 3912, ք. 257-258:

79 Նույն տեղում, գ. 3915, ք. 8:

80 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

81 «Кавказский календарь на 1915 г.», с. 167.

82 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1032 ք. 13, 16:

83 «Նոր-Ռար», 1884, № 213, էջ 4:

84 «Նոր-Ռար», 1884, № 213, էջ 4:

85 «Նոր-Ռար», 1887, № 178, էջ 3:

86 «Համբարաբեր», 1917, № 5, էջ 115:

87 «Մշակ», 1915, № 178, էջ 4:

88 «Համբարաբեր», 1916, № 33, էջ 1035:

89 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, ք. 217-218:

90 Նույն տեղում, գ. 3864, ք. 114-115:

91 «Մշակ», 1899, № 206, էջ 3:

1900 թ. սղնախցի Միքայել Պասառյանը եկեղեցուն զանգ էր նվիրել, իսկ 1901 թ. գարնանը նախատեսել էր կառուցել զանգակատուն. «Մղնախցի Միքայել Պասառյանն նուիրել է Նուկրիանի արուարձանն ու Սարգիս եկեղեցուն մեծ զանգակ մօտ 1200 ռ. արժողութեամբ: Բացի սրանից Միքայել Պասառյանն գարնան պետք է կառուցանի ու Սարգիս եկեղեցուն կից զանգակատուն իր հաշուով: Այս նուէրը մեծ ուրախութիւն է պատճառել Նուկրիանի բնակիչներին եւ նրանք շատ շնորհակալ են պ. Պասառյանից»⁹²:

1906 թ. եկեղեցին արդէն կարիք ուներ նորոգումների. «Սբ. Սարգիս եկեղեցոյ Նուկրիանու քաղաքամասին Մղնախի ի վաղուց հետէ քայքայեալ է տանիքն և զանձրևս կաթուածոց հեղանի ի խորանի եկեղեցոյն և թէ կարօտի իսկ բազմադիմի վերանորոգութեանց...»⁹³:

Այս շրջանում իրար հաջորդած երեցփոխներ են հիշվում Սարգիս Օհաննեսյան Մուրվայանցը և Նիկողայոս Գլախյան Խատյանցը⁹⁴:

1911 թ. նորոգման աշխատանքների անընդհատ հետաձգումների հետևանքով եկեղեցին դարձել էր վթարային⁹⁵:

1924 թ. ապրիլի 29-ին եկեղեցին փակվել է իշխանությունների կարգադրությամբ⁹⁶:

Քահանա. 1881 թ. Նուկրիանում եկեղեցու սպասավորի անդէմ ու ապաշնորհ լինելու հետևանքով ստեղծվել էր սուր կացություն. հայտնի է, որ ինչ-ինչ պատճառներով տեղի ծխատեր քահանա *Սարգիս Տեր-Անտոնյանը*, մեղմ ասած, սիրված չէր նուկրիանաբնակ հայերի կողմից այնքան, որ հանգուցյալին հուղարկավորել էին առանց վերջինիս մասնակցության⁹⁷: Ավելին, նույն թվականին այդ քահանայից ազատվելու համար արժարծել էին նաև հավատափոխ լինելու խնդիրը. «Լսում ենք, որ Մղնախի Նուկրիան գիւղի հայ քահանայի պատճառով կամենում են հաւատափոխ լինել: Մենք չենք հաւատում, որ Նուկրիանցիք այդքան թոյլ լինեն իրանց հաւատի մէջ և գուրկ հայկական արիւնից, որ միշտ առատութեամբ թափվել է հաւատի համար, և մի՞թէ նուկրիանցիք լինելով հայ՝ կարող են, իրանց դժգոհութեան համար մի քահանայի դէմ, հաւատափոխ լինել...»⁹⁸:

Տիգրան Տեր-Անտոնյանց. գյուղին հովվել է 1902 թ.⁹⁹:

1911 թ. գյուղը քահանա չունէր¹⁰⁰:

92 Նույն տեղում, 1900, № 204, էջ 3:

93 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1257, ք. 13:

94 Նույն տեղում, ք. 25:

95 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 107:

96 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, ք. 10: Նաև՝ ՀԱԱ, ֆ. 57Պ, ց. 3, գ. 525, ք. 136:

97 «Մշակ», 1881, № 7, էջ 2:

98 «Մեղու Հայաստանի», 1881, № 37, էջ 3:

99 «Արարատ», 1902, էջ 575:

100 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 107:

Սարգիս Ասլամազյանց. 1924 թ. հիշվում է ծխատեր քահանա¹⁰¹:

ՋՈՒԳԱԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հարավ-արևելք:

Հայերը Ջուգասնում. նրանց ներկայությունն այստեղ փաստված է 1802 թվականից¹⁰²: 1842 թ. մի վավերագրում նշված է, որ գյուղում վրացիներից բացի բնակվում էին փոքրաթիվ հայեր, որոնք չունեին եկեղեցի¹⁰³: 1874 թ. գյուղի 2306 բնակիչներից հայեր էին միայն 38-ը¹⁰⁴:

1908 թ. հայ համայնքը բաղկացած էր 5 ընտանիքից՝ 14 շունչ (6 ար. և 8 իգ.)¹⁰⁵: 1912-ին գյուղն ունեցել է 8 հայ ընտանիք¹⁰⁶: 1914 թ. Ջուգասն ուներ 2454 բնակիչ¹⁰⁷: Եթե այդ թվաքանակի մեջ հայեր կային, ապա պարզ է, որ վրացիների համեմատ՝ խիստ փոքր քանակով:

Ջուգասնաբնակ հայերը երբևէ չեն ունեցել սեփական եկեղեցի կամ քահանա:

ՍՂՆԱԽ

Տեղադրություն. գտնվում է Գոմբորի լեռնաշղթայի հարավարևելյան վերջավորության վրա՝ Թբիլիսիից 90 կմ արևելք: Համանուն շրջանի վարչական կենտրոնն է:

Անվան ծագումը. Մղնախ բառացի նշանակում է ամրություն, ապահով վայր կամ ապաստարան. «Մղնախ, որ ապաստարան կը թարգմանուի, կառնու իւր անունը հայկական Գարապաղ (սեաւ պարտեզ) գաւառին համանուն գեղէ մը, որ այսօրուան օրս զոռուսական Կովկասն ի Պարսկաստանէ կը բաժնէ: Պարսից հալածանքէն փախստական Հայոց խմբէ մը հիմնուեցաւ...»¹⁰⁸:

Պատմություն. Մղնախը Արևելյան Վրաստանի գլխավոր երկու քաղաքներից մեկն է (մյուսը Թեթլավն է): Ուսումնասիրողները ներկայիս քաղաքի տարածքում ԺԸ դարից ավելի հին հուշարձաններ կամ մշակութային շերտեր չեն հայտնաբերել¹⁰⁹: Ուստի որևէ հիմք չունենք հերքելու այն պնդումը, թե բուն քաղաքի «...հիմնադիրներն են եղել պարսկական հալածանքներից փախած հայերը...»¹¹⁰:

101 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, ք. 136:

102 АКАК, т. 1, с. 474.

103 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, ք. 94:

104 “Кавказский календарь на 1886 г.”, с. 118.

105 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

106 «Մշակ», 1912, № 182, էջ 3:

107 “Кавказский календарь на 1915 г.”, с. 120.

108 **Գարիա Մերենա**, նշվ. հոդվ., էջ 41: Տե՛ս նաև՝ **Белкин И.**, Очерки Сигнаха.— “Кавказ”, 1852, № 58, с. 212.

109 **Закарая Пармен**, նշվ. աշխ., էջ 90:

110 **Москвич Григорий**, Иллюстрированный практический путеводитель по Кавказу, изд. шестое, Одесса, 1901, с. 226 (բնագրում՝ “...основанъ был армянами, бежавшими отъ преследований персовъ”).





Սղնախը ԺԸ դարում. հարկ է նշել, որ երբ 1720 թ. հայերը քաղաքի արվարձանային մասում գերեզմանոց հիմնելու նպատակով հողամաս էին գնել, այդտեղ արդեն գոյություն ուներ վրացական Սբ. Ստեփանոս եկեղեցին: Սա ինքնին հուշում է, որ եթե ոչ հետագայի բուն քաղաքում, ապա դրանից ոչ շատ հեռու նախքան հայերի հաստատվելը գոյություն ուներ վրացաբնակ բնակավայր. Սղնախում հայերի հիմնվելու ստույգ ժամանակը հայտնի չէ: Չի բացառվում, որ դա կատարված լիներ դեռևս ԺԷ դարում: Չնայած արդեն ԺԸ դարի առաջին կեսին բուն Սղնախի գոյությունը հաստատող բազմաթիվ տվյալների առկայության հանգամանքին՝ այնուամենայնիվ, քաղաքի հիմնադրման տարեթիվ է համարվում 1762-ը¹¹¹, այսինքն՝ այն նույն տարին, երբ վրաց Հերակլ Բ-ի հրամանով պարսպապատվեց բնակավայրի հայաշեն ու վաճառաշահ հատվածը: Ավելի քան 2,5 կմ երկարությամբ ձգվող շրջապարիսպ ուներ 5 դարպաս և հզորացված էր 23 աշտարակներով¹¹²: Այս նույն թվականը համարվում է նաև Սղնախի՝ քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը¹¹³:

Ամբողջ ԺԸ դարում և գրեթե մինչև ԺԹ դարի կեսերը Սղնախը (բուն քաղաքը) զուտ հայաբնակ էր: 1770 թ. ապրիլի 5-ին անցկացված մարդահամարի արդյունքների համաձայն՝ այստեղ բնակվում էին միայն հայեր. «Քիզիդումն է քաղաք Սղնախը: Այստեղ բնակվում են հայեր՝ 100 ծուխ»¹¹⁴:

Սղնախը ԺԹ դարում. Կախեթում ռուսաց տիրապետության հաստատման (1801 թ.) սկզբնական տարիները մասնավորապես Սղնախ քաղաքում հանգիստ չեն եղել: Դժգոհությունները երբեմն վեր են ածվել անգամ ապստամբության: Այսպես, 1812 թ. քաղաքամերձ վրացիները դաժան հաշվեհարդար տեսան Սղնախի զորանոցներից մեկում տեղակայված ռուսական փոքրաթիվ զնդի մարտիկների հետ, որոնց խաբեությամբ զինաթափելուց հետո կոտորեցին: Ռուսական կառավարությունն իր հերթին չարաչար պատժեց վրացի քաղաքաբնակներին: Արդյունքում հետապնդումներից խուսափելով՝ առանց այն էլ փոքրաթիվ վրաց ազգաբնակչությունը կարճ ժամանակահատվածում հարկադրաբար լքեց Սղնախը: Այս դեպքերը մանրամասն շարադրել է Հովհաննես վարդապետ Արշարունին. «...ի գալստեանն զօրաց Ռուսաց յաշխարհն Վրաց և ի տիրապետելն յայսկոյս Կովկասու՝ արքայորդին Վրաց Ալեքսանդր Բագրատունի՝ չխոնարհեալ զիջանել ընդ ձեռամբ տէրութեան Ռուսաց, ըմբոստացեալ ի տէրութենէն՝ դեգերեր ի

կողմն Ղեկաց և Պարսից և վրդովեաց զխաղաղութիւնն Ռուսաց, և երբեմն ասպատակ սիռէր աստ և անդ ուր և կարէր, թէպէտ միշտ պարտեալ տաղտապէր, և երբեմն Վիրք ազգային խմբիք աստ և անդ ուր և գտանէին զսակաւաթիւ զօրս Ռուսաց ի վերայ յարձակէին. որպէս և յաւուր միում՝ ժողովեալ սևափետուր ազգին Վրաց ի վերայ միոյ աշտարակի բերդիս այսօրիկ, որ յարևելս կոյս՝ (և որ է եկեղեցի փոքրիկ յանուն սրբոյն Ստեփանոսի) զոր պահէին սակաւաթիւ զօրք Ռուսաց, զովով քաղաքիս ըստ ամենայնի ազատ ի պաշարմանէ, և Հայոց տեղոյն յիրաքանչիւր գործս պարապեալ, քանզի Վիրք միայն պասքեալ էին արեան Ռուսաց, ի վրէժ գրաւելոյ նոցա գերկիւր իւրեանց: Պաշարեալքն զաւուրս ինչ քաջութեամբ մարտեան յաշտարակէ անտի, կամ լաւ ևս ասել յեկեղեցոյն, և զի պակասեաց ջուրն՝ վասն որոյ և սկսան խօսիլ ի խաղաղութիւն ընդ թշնամեացն, դիտելով թէ ի Տրփիսեաց չունին զոյս փրկութեան, և քաջ ծանուցեալ զանհաւտարմութիւն Վրաց, և թէ առաջի կայ նոցա տանել վշտաց, սակայն լաւ հարմարեցան մատնիլ ի ձեռս ուխտադրուժ ազգին, քան ի ծարաւոյն չարաչար մեռանիլ յարգելարանի անդ, միայն այսու թութեամբ սկսան զդաշն, զի ի կողմանէ Վրաց յղեսցեն առ Ռուսս քահանայ մի երդնով վասն ապահովութեան կենաց իւրեանց: Հաւանեալ Վրաց ընդ դաշնն՝ յղեն առ նոսա զքահանայ մի յազգէ իւրեանց, վասն երդնոյ ի դիմաց իւրեանց և հաւտարմացուցանելոյ զնոսա ի դաշնադրութիւնն: Քահանայն Վրաց մինչ գնաց առ նոսա, ընկալան զնա մեծարանօք, և դարձուցին յետս՝ խնդրելով զի և քահանայ մի ի Հայոց յղեսցեն յերդնուլ, և երդմնագանց Վրացիք կոչեալ առ ինքեանս զմի քահանայ Հայոց հաւտարմացուցանեն և ասեն նմա թէ ի դիմաց մերոց երդուիք յանուն Աստուծոյ կենդանոյ՝ զի յելանելն նոցա յաշտարակէ անտի չիք ինչ կասկած երկիւղի նոցա. և քահանայն Հայոց զգեստաւորեալ եկեղեցական զարդուք ուղտորի յաշտարակն, և ի տեսանելն Ռուսաց իսկոյն բանան զգրուժն և բացագլուխ ընդ առաջ ելանեն քահանային՝ համբուրեն զաւետարանն որ ի գիրկս քահանային և զաջ նորա, և նա հաւտարմացուցանէ զնոսա յանուն Վրաց չունիլ ինչ կասկած նեղութեան, վասն որոյ շահեալ զքահանայն դրամովք յետս առաքեն խաղաղութեամբ. և ինքեանք ելեալ ի տանիս եկեղեցոյն, սկսանին զարքունի զանձն ի վերուստ ի վայր սփռել առ պաշարողս, կամեցեալ այսու զուր արկանել ի սիրտս չարանենգ Վրաց, և նոքա տեսեալ գրոհ տան մեծ ամբոխի և հաւաքեն զգանձսն: Եւ յետ այնորիկ բացեալ զդրոնս աշտարակին՝ զինաթափ և զլխիբաց ելանեն արտաքս հանդերձ զօրապետան առ նենգաւոր Վրացիս. իսկ նոքա զի՞նչ, որպէս զկատաղի յովազունս ծարաւիս արեան դիմեն ի վերայ անմեղաց և առ ետեղ զնունոյ որպէս

111 **Закаря П.**, նշվ. աշխ., էջ 90:

112 **Закаря Пармен**, նշվ. աշխ., էջ 91: Տե՛ս նաև՝ «Заря Востока», 1990, մայիս, № 22, էջ 1:

113 **Бегнашвили Л.**, Сигнахи (путеводитель), Тифлис, 1974, с. 8.

114 **Մելիքսեթ-Քելեկ Լ. Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 156:

զոչխարս անմեղս, և զնշանակս արեանցն մինչև ցայսօր ցուցանեն յորմունս եկեղեցւոյն: Յետ ատորց ինչ այս համբաւ հասեալ ի Տղիխիս քաղաք, հասանէ անտի զօրապետ մի հանդերձ զօրօքն և Վրացիք որպէս զծուխ առաջի հրոյ այնպէս ցնդեցան. սակայն այն եղև որքոց արժանատր, զի եղկելիքն այնոքիկ կուր եղեն դաւաճանաց պատրեալք ի նենգուպատիր բանից նոցա. բայց և Վրացիք գլխովին ոչ մինչ ի սպառ զերծան ի պատուհասէն, զի զլուխք դաւաճանացն առաքեցան ի մետաղս»¹¹⁵:

1840 թ. ստացել է գավառական քաղաքի կարգավիճակ¹¹⁶:

1852 թ. ականատեսը նշել է. «Ազգաբնակչությունը համարյա ամբողջապես բաղկացած է հայերից, որոնք, ինչպես իրենք են վկայում, հիմնականում նախկին Հայաստանից և Ղարաբաղի խանությունից գաղթածներ են (ներկայիս Նախիջևանի, Երևանի և Շուշու գավառները)»¹¹⁷:

1886 թ. Սղնախի արվարձան համարվող Նուկրիան գյուղը, ինչպես նաև Ճոտոր և Մաղարո գյուղերը մտցվել էին քաղաքային վարչության մեջ, բայց նորաթուխ քաղաքացիներին բարձր էին թվացել նոր հարկերը, և նրանք կրկին դիմել էին նահանգապետին՝ Սղնախից իրենց անջատելու խնդրանքով¹¹⁸:

Սղնախը խորհրդային տարիներին և 1990-ական թվականներին. խորհրդային առաջին 2-3 տասնամյակներին Սղնախում ոչնչացվեցին ճարտարապետության և պատմության մի շարք կարևոր հուշարձաններ: Վրացախոս հայությանը բարոյական ծանր հարված հասցրեց հատկապես մայր եկեղեցու և զանգակատան քանդումը: 1976 թ. հրոճարակ դարձան մի շարք բնակելի շենքեր¹¹⁹:

1981 թ. սկիզբ առան քաղաքի շրջապարսպի վերականգնման աշխատանքները¹²⁰: Կենտրոնական երկու փողոցների «վերականգնման» աշխատանքներն ավարտվեցին 1984 թ.¹²¹: Դրանք ներկայիս Սարաջիշվիլու և Կույբիշևի անվան փողոցներն են (փողոցների հին անվանումները միտումնավոր կերպով «մոռացվել» են), որ երբեմնի վաճառաշահ հայաքաղաքի սիրտն էին:

1990 թ. մամուլում քննադատություն հնչեց քաղաքի ամենահին մասում (առևտրական և արհեստավորական համալիրներով հարուստ հիշյալ փողոցներում) կառուցված հյուրանոցի և դեղատան

շենքերի առթիվ¹²²: Հեղինակը, նշելով «վրացական» ինքնատիպ քաղաքի արդեն քանդված կամ պահպանության ենթակա մի շարք տների մասին, չի բարեհաճել հիշել, սակայն, դրանց հայագրի տերերից և ոչ մեկի անունը՝ «զգուշանալով» պատմական իրողությունների մատնիչ էությունից¹²³: Հավանաբար «վերականգնողական» այս աշխատանքների ընթացքում էլ «վնասագերծվել» են բնակելի տների շինարարական արձանագրությունները, իսկ այդպիսիք քիչ չեն եղել: Մի առիթով, բարեբախտաբար, ժամանակին ընդօրինակվել է տներից մեկի (առաջին հարկը՝ խանութ) շինարարական հետևյալ արձանագրությունը.

*Ի յառաջնորդութեան Տեանն Յովհաննիսի ծայրագոյն կառավարչի, ես՝ Փարեմուզ և որդիք՝ իմ Մովսէս, Դանիէլ, Թաթո և Դաիթ և թոռունք իմ Գօգի, Եօվանէ, Գիքօ և Գասպար, զայս դուրանս մեր ընծայեցաք յիշատակ Հաղբատայ Սուրբ Նշանի, վասն կենաց և փրկութեան կենդանեաց եւ ննջեցելոց մերոց, ես առաւել վասն հոգւոյ հանգուցեալ որդւոյս Մելքոյին, զի միաբանք Սուրբ ուխտին յիշեցեն զմեզ ի Սուրբ պատարագս, որ անդ մատչի հանապազ թ(ու)ի Հայոց ՌՄԾ (1801)*¹²⁴:

Կառուցապատում. 1849 թ. Հովհաննես վարդապետ Արշարունին նշել է. «Սղնախ՝ է նոր քաղաք շինեալ ի յետին ատուրս Հերակլի Բ արքայի Կախէթի և Քարթլայ, ի գաւառի ներքին Քիսեդի կամ սահմանակից Կախէթի, յանդիման մեծի լերին Կովկասու ի հարաւային կողմանէ նորա և Ալազան գետոյն, տասն մղոնաւ հեռի ի սմանէ՝ և ի մայրաքաղաքէն Տփլիսայ, անջրպետեալ երկաւորք յարևելեան ի հիւսիսային կողմն նորա. կառուցեալ վասն Հայոց՝ որպէս և ի բազմութենէն Հայոց նշմարի: Տեղի քաղաքին անհարթ գառ ի վայր ելևէջ. օղն ամենամաքուր. ջուր աղբերացն վճիտ և ախորժ. բնակիչքն բնականաբար յոյժ առողջք են և քաղաքավարք ...: Ի հիւսիսային կողմն քաղաքին է բերդ մի ամրակառոյց և լայնատարած յոյժ, մինչև բաւական լինել ի հարկատր դէպս՝ ոչ միայն բավական զօրս յինքն ամփոփել, այլ և զբոլոր գաւառն ամենայն բնակչօքն ժողովել յինքն, բազմաթիւ կրկնայարկ աշտարակս ունելով կառուցեալ ի նմին: Կայ յամրոցին և երկայնաձիգ լայնածոց վիհ մեծ, ընդմին և աղբիւր, և յովով տունք և այգիք և եկեղեցի և ամբողջ թաղ մի վասն Հայոց»¹²⁵:

1881 թ. ուղեգիրը նշել է, որ Սղնախը «...բազմաթիւ բլրոց վրայ է, հաղորդակցութիւնը դժուարին են. անհաւասար գեկիւնն՝ ելևէջներով լի է, և փողոցաց մէջ մի շրջագայութիւնն իսկ բաւական է զնացողը

115 **Հովհաննես վարդապետ Արշարունի**, նշվ. հոդվ., էջ 314-315: Հմմտ. **Օ. Ս. Մարկովա**, Восстание в Кахети 1812 г. “Утверждение русского владычества на Кавказе”, под редакцией генерал-майора Потто, том XII, Тифлис, 1901, с. 75-83.

116 “Кавказский календарь на 1849 г.”, с. 76.

117 **Белкин И.**, նշվ. հոդվ., էջ 212:

118 «Մշակ», 1900, № 101, էջ 3:

119 **Ձկջլոթի ճոնճո**, Երևան, “ձկջլոթի ձկջլոթի”, № 65.

120 «Ախալգաղղա Իվերելի» (վրացերեն), 1986, 22 հուլիսի:

121 “Заря Востока”, 19.08.1984, с. 4.

122 **Мамисашвили Давид**, Обидели город!.—“Заря Востока”, 30.08.1990, с. 4.

123 Նույն տեղում:

124 «Նոր-Դար», 1889, № 76, էջ 2: Տե՛ս նաև՝ **Մурдян П.**, նշվ. աշխ., էջ 170:

125 «Բազմավեպ», 1851, № 20 էջ 314:

խոնջեցնելու: Ժողովրդեան մեծ մասն Հայոց վաճառականք կը կազմեն, որոնք մեկմեկով կապրին, և ծամածուռ փողոցաց խառնակութեան մէջ, որք շուկայն կը ձևացնեն, ուրիշ բան չի գտնուիր բայց եթէ ամենակարևոր բաներն: Բլրոց վրայ կը նշմարուին բազմաթիւ գեղեցիկ տուներ, հարուստ վաճառականաց պատկանեալք... Տուներուն մեծ մասն մեկմեկու վրայ շինուած են, մէկուն առաստաղն միւսին յատակի տեղ կը բռնէ»¹²⁶:

1884 թ. ականատեսը քաղաքը նկարագրել է այսպէս. «Մղնախը պատկանում է ասիական քաղաքների տիպին, նեղ ու կեղտոտ փողոցներով, առանց մայրերի ու զբոսայգիների...»¹²⁷:

Ջրամատակարարում. 1903 թ. քաղաքային վարչությունը, անշուշտ, քաղաքագլխի նախաձեռնությամբ ձեռնարկել էր դեպի 3 հիմնական աղբյուրներ տանող ճանապարհների բարեկարգման գործը: Հատկապէս անբարեկարգ էր Մամուլովների աղբյուրը տանող ճանապարհը¹²⁸: Ի դեպ, Մամուլովների աղբյուրից օգտվում էին նաև քաղաքամերձ Նուկրիան գյուղի բնակիչները, այնինչ այն 1905 թ. դեռևս անբարեկարգ էր¹²⁹:

1909 թ. ջրմուղի բացման կապակցությամբ ականատեսը նշել է. «Օգոստոսի 15-ին տեղի ունեցաւ Մղնախի ջրմուղի հանդիսատր օրհնութիւնը: Քաղաքի բուլվարը զարդարված էր դրօշակներով: Պատարագից յետոյ, ռուս հոգևորականութիւնը թափօրով դուրս եկաւ հրապարակ և օրհնեց ջուրը: Սրանից յետոյ հայ հոգևորականութիւնը կայացրեց մաղթանք՝ օրհնելով ջուրը: Քաղաքային աւագ Վ. Ենիկոյսիեան արտասանեց մի ճառ՝ յիշելով ջրմուղի գաղափարը արծարծող Սարգիս Տեր-Գրիգորեանը...»¹³⁰:

Քաղաքագլուխները. անկասկած, սկսած այն ժամանակվանից, երբ Մղնախն ստացել է քաղաքի կարգավիճակ (1762 թ.), ունեցել է իր քաղաքային ավագը (քաղաքագլուխ), որը հայաբնակ մի քաղաքում, բնականաբար, հայագլի անձ պետք է լինէր: Ցավոք, ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն չեն ընձեռում կազմելու նրանց ամբողջական հաջորդական ցանկը կամ, ավելի ճիշտ, հստակ է միայն ԺԹ–Ի դարերի սահմանագլխին՝ շուրջ քառորդ դար ընդգրկողը:

Հարկ է նկատել, որ առհասարակ, քաղաքագլուխի պաշտոնում հոգատար, բանիմաց և ձեռներեց անձի հաստատումով են պայմանավորված տվյալ քաղաքի զարգացման շատ բնագավառներ՝ բարեկարգման, կառուցապատման, սպասարկման, կրթության, հաղորդակցության և այլն: Ինչպէս աս-

վեց, Մղնախի ավագանիների գործունեության մի նշանակալի հատվածի վերաբերյալ մեր ձեռքին չկան քիչ թե շատ հիշարժան նյութեր: Ըստ էության՝ նշված ժամանակահատվածում քաղաքի զարգացումը խթանող հասարակական նշանակության արժանահիշատակ գործեր էլ հազվադեպ են իրականացվել:

Եվ այսպէս, մեզ հայտնի առաջին քաղաքագլուխը (մամասախլիս) Թեյմուրազ Թեյմուրազովն է: Այդ պաշտոնը նա ստացել էր Կախեթի վերջին թագավոր Գեորգի ԺԲ-ից¹³¹:

1896 թ. ապրիլին Ստեփան Տեր-Ավագյանի նախագահությամբ կայացել են քաղաքային ինքնավարության ընտրությունները: Մասնակցելու իրավունք ունեցող 191 մարդուց ներկա են եղել 98-ը: Ընտրվել են՝ Ա. Շահվերդյանը, Ս. Տեր-Ավագյանը, Ա. և Մ. Ամիրխանյանները, Ս. և Ա. Օթարյանները, Հ. Շահվերդյանը, Մ. և Հ. Բաշինջաղյանները, Հ. Կաջարտուգյանը, Ա. Սարգսյանը, Վ. Ենիկոյսյանը, Մ. Մարինյանը, ինչպէս նաև Ն. Նադիրիշվիլին և Լ. Մոսուլիշվիլին (վերջին երկուսը՝ վրացի): Ընդամենը 13 հայ և 2 վրացի¹³²: Նույն թվականի սեպտեմբերի 1-ին կայացել են քաղաքային ավագի և օգնականի ընտրությունը. ձայների մեծամասնությամբ ավագ ընտրվեց *Ամիրխան Շահվերդյանը*, օգնական՝ Վարդան Ենիկոյսյանը¹³³: Սակայն Թիֆլիսի նահանգապետը Ա. Շահվերդյանին այդ պաշտոնում չի հաստատել. նրա փոխարեն ավագության պաշտոնում նշանակվել է *Ստեփան Տեր-Ավագյանը*¹³⁴: Ինչ վերաբերում է օգնականին, ապա մինչև 1902 թ. այդ պաշտոնը զբաղեցրել է Վարդան Ենիկոյսյանը¹³⁵:

Քաղաքային ավագի պաշտոնում Ս. Տեր-Ավագյանը մնացել է մինչև 1901 թ.¹³⁶:

Նոր ընտրությունները տեղի են ունեցել 1901 թ.. թեկնածուներ են եղել Ստեփան Տեր-Ավագյանը, Նիկողայոս Ամիրխանյանը, Հովհաննես Սափարյանը, Արշակ Եարյանը, Նիկողայոս Տեր-Մատթեոսյանը և Ծղալոբ Լիանոզյանը¹³⁷: Ընտրվել է Վարդան Ենիկոյսյանը, բայց չի հաստատվել: 1902 թ. քաղաքագլխի պաշտոնում հաստատվել է *Նիկողայոս Ամիրխանյանը*¹³⁸. պաշտոնավարության հենց սկզբում նա քաղաքային վարչության ուշադրությունն է հրավիրել քաղաքային միակ զբոսավայրի՝ «Ալեքսանդրովյան այգու» անբարեկարգ վիճակի վրա: Երեցփոխից ստացվել է Սբ.

131 ՀՍՀ, հ. 10, Երևան, 1984, էջ 450:

132 «Մուրճ», 1896, № 3-4, էջ 523: Նաև՝ «Արձագանք», 1896, № 45, էջ 3:

133 «Մշակ», 1896, № 110, էջ 3:

134 Նույն տեղում, № 130, էջ 2:

135 Նույն տեղում 1913, № 183, էջ 3:

136 Նույն տեղում, 1900, № 195, էջ 2: Տե՛ս նաև՝ «Кавказский календарь на 1902 г.», с. 146.

137 «Մշակ», 1901, № 201, էջ 2, 1913, № 183, էջ 3:

138 «Մշակ», 1902, № 68, էջ 2, № 100, էջ 2:

126 Մերենա Գաբրիա, նշվ. հոդվ., էջ 42:

127 Сослани Давид, Путевые заметки. — «Новое Обозрение», 1884, №113, с. 3.

128 «Кавказ», 1903, № 183.

129 «Тифлисский листок», 1905, № 144.

130 «Մշակ», 1912, № 192, էջ 2:

Կարապետ եկեղեցու ջրհորի ջրով այգին ոռոգելու թույլատվություն, իսկ որպես հատուցում՝ նույն այգու մի ծայրում՝ Ազատյանի տան մոտ, հիմնվել է «Տիր» (նախատեսված էր «Տիր»-ի անսական 12 ուր. եկամուտը վճարել որպես ջրի վարձ)¹³⁹:

1905 թ. քաղաքագլուխ է ընտրվել Վարդան Ենիկոլայանը¹⁴⁰: Նա միաժամանակ եղել է հայոց դպրոցի հոգաբարձուն¹⁴¹: 1909 թ. դարձյալ քաղաքագլուխ է ընտրվել Վարդան Ենիկոլայանը¹⁴²: Նրա օրոք «հիմնվեց քաղաքում ջրմուղ, որը հսկայական ձեռնարկություն է, հիմնատրապետ վերանորոգվեց քաղաքային տունը, որտեղ տեղադրված է Սղնախի քաղաքային դպրոցը: Աշխատեց Մարինսկի դպրոցին տալ օրիորդաց պրոգիմնագիայի իրատունքները և աջողեց: Հիմնեց քաղաքային դեղատուն: Բուլվարը շրջափակվեց»¹⁴³: 1913 թ. «օգոստոսի 12-ին վախճանվեց Սղնախի քաղաքային աւագ Վարդան Ենիկոլոփեան: Հանգուցեալի մահով Սղնախի հայ հասարակությունը կորցրեց խոշոր դեմք...»¹⁴⁴: Տիֆլից վախճանված Վ. Ենիկոլայանի մարմինն ամփոփվել է Սբ. Կարապետ մայր եկեղեցու գավթում (բակում)՝ Սբ. Աստվածածին մատուռի մոտ:

Քաղաքագլխի պաշտոնակատար է նշանակվել Նիկողայոս Տեր-Մատթեոսյանը: 1913 թ. աշնանը տեղի է ունեցել նոր ընտրություն¹⁴⁵:

1914 թ. քաղաքային իրավասուների ընտրությունները հայերի ու վրացիների միջև ընթացել են բավականին սուր պայքարում (նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր իշխանությունն իր ձեռքը վերցնել)¹⁴⁶: Ի վերջո, ընտրություններն ավարտվել են Նիկողայոս Ամիրխանյանի հաղթանակով (9 սպիտակ, 4 սև): Նրան օգնական է նշանակվել Նիկողայոս Տեր-Մատթեոսյանը, որը մինչև ընտրությունները քաղաքագլխի պաշտոնակատարն էր¹⁴⁷:

Բնակչություն. հայերն այստեղ ճնշող մեծամասնություն էին կազմում հատկապես ԺԹ դարի սկզբներին. տասնամյակների ընթացքում հիմնականում ավելանալով հանդերձ՝ աճման տեմպերով ետ էր մնացել քաղաք ներթափանցող վրաց բնակչությունից, որոնց հիմնական մասը մերձակա գյուղերից էին:

Վիճակագրություն. ԺԸ-Ի դարերում հայերի տեսակարար կշիռը քաղաքաբնակների ամբողջ թվի մեջ ներկայացրել է հետևյալ պատկերը.

Տարեթիվ	հայեր	վրացիներ	այլ ազգ.	միասին
	տուն բնակիչ	տուն բնակիչ	բնակիչ	տուն բնակիչ
1770 ¹⁴⁸	100			
1806 ¹⁴⁹				1346
1835 ¹⁵⁰				3500
1849 ¹⁵¹	700	3890	12	165
1851 ¹⁵²		4267		200
1865 ¹⁵³		5857		
1868 ¹⁵⁴				9924
1874 ¹⁵⁵		5676	3588	1078
1886 ¹⁵⁶		5854	4644	106
1896 ¹⁵⁷				11895
1914 ¹⁵⁸				17690
1916 ¹⁵⁹		8968	8470	224
				17662

Սղնախում միայն հայ բնակչության թվաքանակը ցույց տվող վիճակագրական աղբյուրներն անհամեմատ հարուստ են: Ըստ ժամանակագրության դրանց համադրումը հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել ԺԸ-Ի դարերում քաղաքի հայ համայնքի թվաքանակի վերաբերյալ.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1770 ¹⁶⁰	100			
1818 ¹⁶¹	368	945	838	1758
1822 ¹⁶²	375	1169	994	2163
1839 ¹⁶³	566	1788	1472	3260
1841 ¹⁶⁴		2034	1790	3824
1842 ¹⁶⁵	680	1823	1830	3653
1843 ¹⁶⁶	636	1849	1527	3376
1849 ¹⁶⁷	700	2062	1774	3836
1852 ¹⁶⁸		2221	1918	4139

148 Մելիքսեթ-Քեյ Լ. Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 156:

149 А. К-дзе, նշվ. հոդվ.:

150 Նույն տեղում:

151 «Բազմավեպ», 1851, № 20, էջ 315-316: «Кавказский календарь на 1849 г.», с. 74 (շնչերի թիվը ցույց է տալիս միայն արքունի հարկատուներին):

152 «Кавказский календарь на 1852 г.», Тифлис, 1851, с. 382-383.

153 «Тифлисский листок», 1900, № 61. Տե՛ս նաև՝ «Кавказ», 1866, № 73, с. 46; № 78, с. 49.

154 «Кавказский календарь на 1870 г.», с. 406.

155 «Кавказский календарь на 1886 г.», с. 118. Այլագիտների մեջ մեծաթիվ էին հույները՝ 905, հրեաները՝ 24, լեհերը՝ 4 մարդ:

156 «Кавказский календарь на 1897 г.», Тифлис, 1896, с. 152-153. Տե՛ս նաև՝ «Кавказский календарь на 1898 г.», с. 24-25. «Тифлисский листок», 1900, № 61.

157 «Արձագանք», 1891, № 2, էջ 18, նաև՝ 1896, № 45, էջ 3: «Մուրճ», 1896, № 3-4, էջ 523:

158 «Кавказский календарь на 1898 г.», с. 24-25.

159 «Кавказский календарь на 1915 г.», с. 181.

160 «Кавказский календарь на 1917 г.», с. 190-193.

161 Մելիքսեթ-Քեյ Լ. Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 156:

162 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 32-41:

163 ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 866, ք. 1:

164 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 8:

165 Նույն տեղում, գ. 3802, ք. 194-195:

166 Նույն տեղում, գ. 3805, ք. 94-95:

167 Նույն տեղում, գ. 3809, ք. 134-135:

168 Նույն տեղում, գ. 3818, ք. 115-116: Նաև՝ «Բազմավեպ», 1851, № 20, էջ 315:

169 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, ք. 94:

139 «Новое обозрение», 1902, № 6134, с. 2.

140 «Մշակ», 1913, № 183, էջ 3:

141 Նույն տեղում, 1906, № 42, էջ 3:

142 Նույն տեղում, 1913, № 183, էջ 3: Վ. Ենիկոլայանի հաստատումը նահանգապետի կողմից տեղի էր ունեցել 1910 թ. («Հնովիտ», 1910, № 7, էջ 112):

143 «Մշակ», 1913, № 183, էջ 3:

144 Նույն տեղում, էջ 3:

145 Նույն տեղում, № 193, էջ 3:

146 Նույն տեղում, 1914, № 87, էջ 3:

147 Նույն տեղում, 1914, № 218, էջ 4, № 96, էջ 2:

1853 ¹⁶⁹	2177	1882	4059
1854 ¹⁷⁰	2231	1709	3940
1857 ¹⁷¹	2251	2040	4291
1858 ¹⁷²	2290	2078	4368
1860 ¹⁷³	2376	2192	4568
1861 ¹⁷⁴	2483	2281	4764
1862 ¹⁷⁵	2591	2378	4969
1863 ¹⁷⁶	2689	2495	5184
1865 ¹⁷⁷	2780	2586	5366
1867 ¹⁷⁸	2973	2793	5766
1868 ¹⁷⁹	3074	2874	5948
1870 ¹⁸⁰			6301
1872 ¹⁸¹	3408	3213	6621
1873 ¹⁸²	3484	3287	6771
1874 ¹⁸³	3579	3360	6939
1875 ¹⁸⁴	3600	3388	6988
1876 ¹⁸⁵	3633	3431	7064
1877 ¹⁸⁶	3611	3431	7042
1878 ¹⁸⁷	3639	3452	7091
1883 ¹⁸⁸	3810	3615	7425
1885 ¹⁸⁹	1730	1585	3315
1886 ¹⁹⁰			5854
1888 ¹⁹¹	1866	1632	3498
1889 ¹⁹²	1884	1661	3545
1893 ¹⁹³	662	1851	1661
1894 ¹⁹⁴	662	1870	1669
1897 ¹⁹⁵		1995	2149
1899 ¹⁹⁶	586	1740	1580
1901 ¹⁹⁷		2152	2192
1902 ¹⁹⁸		2172	2214

169 Նույն տեղում, գ. 2743, ք. 79-80:
 170 Նույն տեղում, գ. 3825, ք. 38-39:
 171 Նույն տեղում, գ. 3830, ք. 118-119:
 172 Նույն տեղում, գ. 3823, ք. 122:
 173 Նույն տեղում, գ. 3834, ք. 7-8:
 174 Նույն տեղում, գ. 3839, ք. 49:
 175 Նույն տեղում, գ. 3836, ք. 76:
 176 Նույն տեղում, գ. 3843, ք. 70-71:
 177 Նույն տեղում, գ. 3848, ք. 42-43:
 178 Նույն տեղում, գ. 3851, ք. 32-33:
 179 Նույն տեղում, գ. 3853, ք. 11-12:
 180 Նույն տեղում, գ. 3857, ք. 98-99:
 181 Նույն տեղում, գ. 3859, ք. 215:
 182 Նույն տեղում, գ. 3862, ք. 49:
 183 Նույն տեղում, գ. 3864, ք. 37-38:
 184 Նույն տեղում, գ. 3866, ք. 89-90:
 185 Նույն տեղում, գ. 3868, ք. 83-84:
 186 Նույն տեղում, գ. 3869, ք. 71-72:
 187 Նույն տեղում, գ. 3870, ք. 76-77:
 188 Նույն տեղում, գ. 3875, ք. 67-68:
 189 Նույն տեղում, գ. 3877, ք. 39:
 190 «Кавказский календарь на 1897 г.», Тифлис, 1896, с. 152-153. Տե՛ս նաև՝ «Кавказский календарь на 1898 г.», с. 24-25. «Тифлисский листок», 1900, № 61. «Արձագանք», 1891, № 2, էջ 18, նաև՝ 1896, № 45, էջ 3: «Մուրճ», 1896, № 3-4, էջ 523:
 191 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, ք. 226:
 192 Նույն տեղում, գ. 3884, ք. 95:
 193 Նույն տեղում, գ. 3895, ք. 63:
 194 Նույն տեղում, գ. 3896, ք. 66:
 195 Նույն տեղում, գ. 3899, ք. 137-138:
 196 Նույն տեղում, գ. 3905, ք. 243:
 197 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 130-131:
 198 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 13-14:

1905 ¹⁹⁹	1898	1761	3659
1906 ²⁰⁰	2362	1967	4329
1907 ²⁰¹			3291
1908 ²⁰²	545	1309	1250
1912 ²⁰³		1428	1314
			2742

Ինչպես տեսնում ենք, ակնառու են բնակչության կտրուկ նվազման կամ ավելացման դեպքերը: Դրանց ստույգ պատճառները թեև մեզ հայտնի չեն, բայց կարծում ենք արդյունք են ներգաղթ-արտագաղթի, պարբերաբար կրկնվող վարակիչ հիվանդությունների, որոնց մեծ մասամբ զոհ էին դառնում հատկապես մանուկները: Անհասկանալի են նաև թեմական առաջնորդարանի ու պետական մարմինների անցկացրած մարդահամարների արդյունքների ակնառու տարբերությունները (համեմատի՛ր միևնույն տարիների տվյալները): Մենք հակված ենք ավելի վստահելի համարել պետական մարդահամարի տվյալները:

Ազգատոհմեր. Մղնայսցի հայերի թվում կային նաև Ղազախի գավառից գաղթածներ: Տեղացիները ճանաչում էին նրանց նաև ըստ տոհմերի: Վերջիններս կրում էին Հարությունյան, Մխոյան, Փարեմուզյան, Դավթյան, Սկրտումյան և Զոհրաբյան ազգանունները: Ուշագրավ էր հատկապես նրանց մեջ պահպանված մի սովորություն, ըստ որի՝ յուրաքանչյուր տարի ձիավոր էին ուղարկում՝ Ղազախից մի տուրակ հող բերելու: Հողը բաժանում էին և տներում դրա մեջ մոմ վառում:

Հնաբնակներից հայտնի տոհմ էր Շահվերդյանների գերդաստանը. «Աստ բնակի ազգատոհմ մեծ Շահվերտենց՝ որ ազգասէր նախանձու վառեալ ազատեաց յստրկութենէ զմերազմեաց զքառասուն տունս յիշխանաց Վրաց»²⁰⁴:

Մեզ է հասել նաև 1818 թ. մի վավերագիր, որտեղ տրված է հայ բնակիչների հետևյալ անվանացուցակը.

1. Աագ քահանայ Տեր Աւետիքի կինն՝ Աննա, որդի՝ Ստեփան, դստերը՝ Մարիամ, Ովսաննա և Շուշան:
2. Տեր Յարութին Նիկողոսեանի կինն՝ Թագուհի, որդիք՝ Պօղոս և Ստեփան, դստերը՝ Մարիամ և Աննա:
3. Տեր Յոհաննես Թեմուրազեանի կինն՝ Աննա, դուստր՝ Քալի:
4. Մովսէսի որդի՝ Նօնի՝ Տիրացու կոչեցեալ, ծնեալ 1779, կինն՝ Մարիամ, որդի՝ Մովսէս և Մէլքօն, դստերը՝ Մարթայ և Աննա:
5. Բարի որդի՝ Մնացական Էլիսաբեդայօցի՝ Տիրացու կոչեցեալ, կինն՝ Եղիսաբէթ, որդիք՝ Աւետիք, Գրիգոր և Դավիթ, դստերը՝ Հօռօմսիմ և Քալի:
6. Ծատուրի որդի՝ Սիմօն, կինն՝ Մարրա, որդիք՝ Գէվօ և Անտօն և Սև Ստեփան և Իօհանէ, դստերը՝ Նանօ և Ովսաննա:
7. Միրաքի որդի՝ Կարապետ, կինն՝ Խանսիբիբեկ, որդիք՝ Անտօն, Թարօ, Յարութին, Կօնի և Գէվօ, դստերը՝ Ովսաննա և Մարէդ, Անտօնի կինն՝ Աննա, դուստր՝ Քալի:
8. Արիստակէսի որդի՝ Մովսէս, կինն՝ Մագթաղին, որդի՝ Նօնի, դստերը՝ Շուշան, Մարէդ և Մարիամ:

199 Նույն տեղում, գ. 3912, ք. 257-8:
 200 Նույն տեղում, գ. 3915, ք. 8:
 201-ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, ք. 8:
 202 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:
 203 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, ք. 52-53:
 204 «Բազմավէպ», 1851, № 20, էջ 316:

9. Տեր Մաթեոսի որդի՝ Պողոս, կինն՝ Նինո, որդիք՝ Գասպար, Մելքոն և Բարդասար, դուստր՝ Շուշան և եղբոր՝ Գիքոյի այրի կինն՝ Էլիսա, որդիք՝ Օւտի, Գեվո, Ստեփան և Ադայ, դուստր՝ Քալի: Սոյն Գիքոյի խորք որդիք՝ ուստր Կոնի և դուստր՝ Անքալի:

10. Փերանի որդի՝ Սիմոն, կինն՝ Նաթել, որդի՝ Յակոբ և Յարութիւն, դստերք՝ Խանում և Ուսնիփէր, Յակոբի կինն՝ Մայիա, որդի՝ Ղազար, դուստր՝ Ուսնիփէր, Յարութիւնի կինն՝ Ովաննա, որդի՝ Փերան:

11. Ծատուրի որդի՝ Կիրակոս, կինն՝ Եագունդի, որդիք՝ Նոնի և Գեվո:

12. Ծատուրի որդի՝ Մաքո, կինն՝ Անախանում, որդիք՝ Գլախա և Դափթ, դուստր՝ Սաբէդո:

13. Ծատուրի որդիք՝ Յարութիւն և Կոնի, մայրն՝ Թամար, Յարութիւնի կինն՝ Մայիա:

14. Ծատուրի որդի՝ Մկրտում, կինն՝ Հօռօմսիւն, որդիք՝ Սարգիս և Ղազար, դստերք՝ Ովաննա և Մարիամ:

15. Հէքիմ Աբելի որդիք՝ Ստեփան և Ռօստօմ, Ստեփանի կինն՝ Էլիսաբէր, Ռօստօմի կինն՝ Մայիա, որդիք՝ Դանէլ, Յակոբ և Աբել:

16. Պոնճագործ Գրիգոր, կինն՝ Մայիա, որդիք՝ Պէպան, Միկօ և Սօյօման, դուստր՝ Թագուհի, Պէպանի կինն՝ Քէթիվան, որդի՝ Աւետիք, դուստր՝ Նանօ:

17. Մահտէսի Սարգսեան Գէորգի, կինն՝ Մագթաղին, որդիք՝ Սարգիս, Ստեփան և Նիկողայոս:

18. Թիֆլիզցի բաղլա Պետրոս, կինն՝ Մարիամ, դուստր՝ Շուշան:

19. Մարիորոսի որդի՝ Յովակիմ, կինն՝ Քէթիվան, որդիք՝ Գեվո և Գրիգոր:

20. Աքրլեսեցի Սինաս, կինն՝ Մագթաղին, դուստր՝ Մարիամ:

21. Յարութիւնի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Մաքօ, որդի՝ Պողոս, դստերք՝ Ովաննա և Քալի:

22. Յարութիւնի որդի՝ Վարդան, կինն՝ Մարիամ, մայր՝ Մարմար:

23. Ջավախի որդին Ջուրաբ, այրի կինն՝ Խանփէրվան, որ է մայր՝ Ջուրաբի և կինն՝ Ջուրաբի՝ Թինաթին:

24. Պանկոյի որդի՝ Նոնի, կինն՝ Խանփէրի:

25. Էլիսաբէրայօցի Սիմոն, կինն՝ Մառա, որդիք՝ Գեվո, Յոհաննէս և Բադի, դստերք՝ Ովաննա և Մայիա:

Թէլէթցի Ստեփանի այրի կինն՝ Նաթել:

26. Ամիրխանի որդի՝ Մովսէս, կինն՝ Մայիա, որդիք՝ Մկրտում և Յովակիմ, դուստր՝ Աննա:

27. Մխիթարեան Մարտիրոսի որդիք՝ Մխիթար, Յովսէփ, Յովակիմ և Ղազար, սոցայ մայրն՝ Մագթաղին:

28. Մարօյի որդի՝ Յարութիւն, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յոհաննէս, Աբել, Ջաքարիա և Գալուստ:

29. Ստեփանի այրի կինն՝ Սաբէդօ, որդի՝ Երեմիա, դուստր՝ Քալի:

30. Կոնդախասազ Ստեփան, կինն՝ Մայիա:

31. Գալուստի որդի՝ Մակի, կինն՝ Լէյօ, որդի՝ Գալուստ:

32. Փարէմուզի որդի՝ Մովսէս, կինն՝ Դասօ, որդիք՝ Գիքօ, Արախան և Սիմօն, դուստր՝ Թէկլի:

33. Փարէմուզի որդիք՝ Դանէլ և Դաթ, Դանէլի կինն՝ Էլէնէ, որդի՝ Ջաքար, դստերք՝ Ռանիփէր և Ովաննա:

34. Փարէմուզի որդի՝ Թաքօ, կինն՝ Բարբարէ, որդիք՝ Գասպար, Փարէմուզ և Ամիրան, դուստր՝ Մալօմէ:

35. Փարէմուզեան Մելքոյի որդիք՝ Գօգի և Իօաննէ, մայր՝ Քալօ:

36. Հէրասպետի որդի՝ Կիկօ, կինն՝ Մայիա:

37. Դալլաք Գօգիի որդի՝ Սօսի, դուստր՝ Լալօ:

38. Ղազարի այրի կինն՝ Նանօ, որդի՝ Նոնի, դստերք՝ Թինաթին, Մարիամ:

39. Մարգսի որդի՝ Աւագ, կինն՝ Հօռօմսիւն, որդի՝ Յարութիւն:

40. Գալուստի որդի՝ Գեվօ, կինն՝ Ռուսուղան:

41. Յօնանի որդի՝ Բարդասար, կինն՝ Մայիա, մայր՝ Մարիամ:

42. Չիքա Յոհան, կինն՝ Խանփէրվան, որդի՝ Իօաննէ:

43. Պոնճագործ Շաքարօ, կինն՝ Լալիթարա:

44. Գասպարի որդի՝ Վարդան, կինն՝ Ռէհան, որդի՝ Գեվօ և զոքանչն՝ Մարտիրոսի այրի կինն՝ Նազլու:

45. Գասպարեան Ղազարի այրի կինն՝ Ռէհան, դստերք՝ Մաք, Սառա և Մարիամ և Ղազարի մօրեղբօր որդի՝ Աւետիք:

46. Պետրոսի որդի՝ Ստեփան, կինն՝ Աննա, որդիք՝ Նինիա, Սիմօն և Գեվօ, դուստր՝ Նազիկ:

47. Ռօստօմեան Յարութիւնի որդի՝ Ջաքար, կինն՝ Մարօ, մայր՝ Լալիթարա, որ է ճուրաղ Էջմիածնայ:

48. Նաստիդեան Ջազայի որդի՝ Ջաքար, կինն՝ Աննա, որդիք՝ Թաքօ, Պապա, Թամազ, Ասլան և Դալիթ, Թաքօյի կինն՝ Պալօ, որդի՝ Սարգիս:

49. Նիկօղօսի որդիք՝ Գասպար և Սարգիս, մայր՝ Նազլու, Գասպարի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Իօաննէ:

50. Գօգիի որդի՝ Լալաիզ, կինն՝ Մաքօ, որդի՝ Իօաննէ:

51. Պանկիսեան Արթանդիլի որդիք՝ Գրիգոր և Եսայի, մայր՝ Քալօ:

52. Գալուստի որդիք՝ Բէժան, Խէչօն և Թօմէն, Բէժանի կինն՝ Նաթել, որդիք՝ Յօհաննէս, Մելքօն և Շաքարօ, դուստր՝ Ռուսնիփէր, Խէչօյի կինն՝ Էլէնէ, դստերք՝ Էլիսաբէր և Քալի, Թօմնայի կինն՝ Մաքօ:

53. Օրօեանց Պէպան, կինն՝ Շուշան, դուստր՝ Ովաննա:

54. Պապայի որդի՝ Յովսէփ, կինն՝ Նանօ, որդիք՝ Թամազ և Աբել:

55. Դաբաղ Ղազար, կինն՝ Մալալ, որդի՝ Պէպան, դստերք՝ Նաթել և Մայիա:

56. Յարութիւն քէվլի որդիք՝ Իօաննէ և Գուրգէն, դուստր՝ Դափա, մայրն՝ Էլիսաբէր և Յարութիւնի փեսայն՝ Ջուրաբի որդի՝ Սօյօման, կինն՝ Քալի, դուստր՝ Թէկլէ և Մարտիրոսի այրի կինն՝ Մարիամ:

57. Քէվլսեան Կիկօյի այրի կինն՝ Լէյօ, որդիք՝ Գլախա և Ստեփան:

58. Յօհանի որդի՝ Յակոբ, կինն՝ Թինաթին, որդիք՝ Դափթ, Յոհաննէս, Ասլան և Ջաքարիա, դուստր՝ Մարիամ, Դափթի կինն՝ Մայիա, որդի՝ Կարապետ:

59. Ջուրաբի որդի՝ Գիօրգի, կինն՝ Թագուհի, դուստր՝ Քալի:

60. Աւետիքի որդի՝ Սօյօման, Նինիա և Գրիգոր, Սօյօմանի կինն՝ Մայիա, որդի՝ Պէպան, Նինիի կինն՝ Սաբէդօ, դուստր՝ Քալի:

61. Բէժանի որդի՝ Թաքօ, կինն՝ Թինաթին, որդի՝ Բայրամ, դուստր՝ Մարմար:

62. Բուրդուզի որդի՝ Գօգի, կինն՝ Ովաննա, որդիք՝ Բէժան, Սօյօման, Աբել և Ռօստօմ:

63. Օսնի որդիք՝ Գիքօ, Պէպան, Գաբրիէլ, Գուրգէն և Լալալ, մայրն սոցայ՝ Նաթել, Գիքօյի կինն՝ Խօրէշան, որդիք՝ Ջաքար և Միխաէլ, Պէպանի կինն՝ Մարթա, դստերք՝ Քալի և Անաքալի, Գաբրիէլի կինն՝ Մայիա, որդի՝ Գէորգ:

64. Մեսօյի որդի՝ Անտօն, կինն՝ Նանօ, որդի՝ Ստեփան, դստերք՝ Քալի և Ովաննա:

65. Աւետիքի որդիք՝ Պէպան և Արրահան, Պէպանի կինն՝ Մաքօ, որդի՝ Գէորգ, դստերք՝ Քալի և Շուշան:

66. Ճէտլի Մամադափթ, կինն՝ Մարգարիտ, որդիք՝ Սօսի, Գալօ և Մատի, Սօսիի կինն՝ Մաքօ:

67. Դօլմազի որդի՝ Գեվօ, կինն՝ Մարթայ, որդի՝ Իօաննէ:

68. Մեսօյի որդի՝ Գօգի, կինն՝ Մայիա, որդիք՝ Յարութիւն, Յովսէփ և Սարգիս:

69. Մաքիմջեանց Մարգարն, Աւետն, Մարգարի կինն՝ Փառզարդ, որդի՝ Առաքէլ, Աւետի կինն՝ Աննա, որդիք՝ Սիմօն, Յարութիւն և Մարտիրոս:

70. Թօքմազի Պողոս, կինն՝ Եղիսաբէր, որդիք՝ Գէորգ և Աղաջան, դուստր՝ Քալի:

71. Գնաճուտեանց Դանիէլ և Մկրտում, Դանիէլի կինն՝ Մայիա, որդիք՝ Յոհաննէս և Քալի:

72. Խաղէնի որդիք՝ Կիկօ, Նոնի և Պէպի, մայր՝ Աննա, Կիկօյի կինն՝ Մարիամ, որդի՝ Շէրմազան, դստերք՝ Շուշան, Մագթաղին և Քալի:

73. Գասպարի որդի՝ Թունի, կինն՝ Նանօ, որդի՝ Ղուկաս, դստերք՝ Մայիա և Մարթայ:

74. Շահլամեան Պետրոսի որդիք՝ Ղազար և Յոհաննէս, Ղազարի կինն՝ Տալօ, դուստր՝ Մարիամ, Յոհաննէսի կինն՝ Թինաթին, որդի՝ Դափթ, դուստր՝ Եղիսաբէր, մայր՝ Խաթուն:



ՍՂՆԱՍ. հատված քաղաքն երիզող շրջապարսպից

- 75. Շահլամեանց Պօղոս, կինն՝ Խախօ, որդիք՝ Ստեփան և Գեվօ, դուստր՝ Ջուահիր:
- 76. Խաչումի որդի՝ Գրիգոր, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յոհաննես և Գափօ, Յօհաննեսի կինն՝ Մագթաղին, որդիք՝ Խաչօ և Դափք:
- 77. Գասպարի որդի՝ Յոհաննես, կինն՝ Վառի, որդիք՝ Գասպար և Պօղոս, դստերք՝ Սառա և Ովսան:
- 78. Ստեփանի որդիք՝ Յարութիւն և Մահակ, Յարութիւնի կինն՝ Սաբէր, որդիք՝ Ստեփան, Յակոբ և Գեորգ, դուստր՝ Մարիամ, Մահակի կինն՝ Մարմար:
- 79. Յովսէփի որդի՝ Թաթօ, կինն՝ Մայիա, որդի՝ Յովսէփ:
- 80. Թաթուլի որդիք՝ Նօնի և Աւետիք, Նօնիին կինն՝ Անաքալի, Աւետիքի կինն՝ Բարբարէ:
- 81. Էջմիածնայ ճուրտ Ասատուրի որդիք՝ Նօնի և Մարգիս, Նօնիին կինն՝ Լալօ, որդիք՝ Գեվօ և Աղալօ, դուստր՝ Ովսաննա, Մարգիսի կինն՝ Անախանում, որդիք՝ Կարապետ և Աւետիք, դուստր՝ Թաթլօ:
- 82. Նօնիին որդի՝ Գլախա, կինն՝ Լուսիայ, որդի՝ Յովսէփ, դուստր՝ Ովսաննա:
- 83. Եարօյի որդի՝ Դափք, կինն՝ Աննա:
- 84. Մարգիսի որդի՝ Յոհան, կինն՝ Հէրիք, որդի՝ Մարտիրոս:
- 85. Դուրիջանի որդի՝ Բաղդասար, սորա որդիք՝ Նօնի, Գասպար և Գիվի, Նօնի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Գրիգոր, դստերք՝ Շուշան և Սառա և միս եղբօր՝ Սիմօնի որդիք՝ Մէլքօ, Աբէլ, Ալէքսանդրէ և Դուրիջան, Մէլքօյի կինն՝ Մարմար:
- 86. Գիվինա քելիսի որդիք՝ Պէպան և Մեհրապ, Պէպանի կինն՝ Սաբէրօ, Նօնիին այրի կինն՝ Մարիամ, դուստր՝ Աննա:
- 87. Քելիսանց Սիմօն, կինն՝ Մարիամ, որդի՝ Յովսէփ, Ամփօ և Դաթօ, դուստր՝ Լալի:
- 88. Քելեանց Դազարի այրի կինն՝ Աննա, որդի՝ Մէլքօ և սորա թոռն՝ Աղաջանի որդի՝ Գեվօ:
- 89. Քատուրբաշեան Ջանի որդիք՝ Բաղէն և Իօաննէն, Բաղի կինն՝ Մաթ, որդիք՝ Յովակիմ, դուստր՝ Անաքալի, Իօաննի կինն՝ Մարմար:
- 90. Ուստաբաշի Թամազ, կինն՝ Քէթիվան և սորա թոռն՝ Կարապետի դուստր՝ Մաթի:
- 91. Թամազի որդի՝ Պէպան, կինն՝ Դարեջան, որդիք՝ Էլիզբար և Խօսրով, դուստր՝ Ովսաննա:
- 92. Թամազի որդի՝ Դազար, կինն՝ Էլիսաբէր, դուստր՝ Քալի, սորա քեռորդի՝ Յարութիւն Կարապետեան:
- 93. Տէր Մովսէսի այրի կինն՝ Մագթաղին, որդի՝ Ներսէս:
- 94. Ջանի որդի՝ Ռօշան, կինն՝ Մարիամ, որդիք՝ Մեհրան, Ռօստօմ, Թարխան, Յակոբ և Գեորգ:

- 95. Գրիգորի որդի Յարութիւն, կինն՝ Հօռօմ, որդիք՝ Գրիգոր և Բէգի, դստերք՝ Մարիամ, Աննա, Սաբէր և Հէրիք:
- 96. Գրիգորի որդի՝ Գաբրիէլ, կինն՝ Մաբէրօ, որդիք՝ Դազար և Կարապետ, դստերք՝ Սառա և Քալի:
- 97. Տէր Գրիգորի այրի կինն՝ Մաթօ, որդի՝ Աղալօ:
- 98. Աբրահամի որդիք՝ Դափք և Ջաքարիա, մայր՝ Աննա, Դափքի կինն՝ Մարմար, որդի՝ Իօաննէ, դստերք՝ Լէլօ, Մաբէրօ, Սալօմէ և Մարիամ, Ջաքարի կինն՝ Մաթօ, որդի՝ Ափրիամ, դուստր՝ Խանփերվան:
- 99. Տէր Մարտիրոսեան Գիքօ, կինն՝ Էլէնէ, որդի՝ Դազար և զոքանչն՝ Կիրակոսի այրի կինն՝ Մարիամ:
- 100. Յոհաննէսի որդիք՝ Ստեփան, Ջաքար և Աւետիք, Ստեփանի կինն՝ Նաթլէ:
- 101. Տէր Մարտիրոսի որդի՝ Մէլքօն, կինն՝ Մալալ, որդիք՝ Մովսէս և Դաթօ:
- 102. Տէր Սիմօնի որդի՝ Սիքալէ, կինն՝ Լէլօ, դստերք՝ Անախանում, Մաթօ և Աննա:
- 103. Տէր Սիմօնի որդի՝ Ասրի, կինն՝ Ռէհան, որդի՝ Գասպար, դստերք՝ Քալի և Հօռօմսիմ:
- 104. Ժամկոչ Եղեայ, սորա որդի՝ Մակի, կինն՝ Ովսաննա:
- 105. Տէր Սիքալէի որդիք՝ Անտօն և Ջաքար, մայր՝ Եղսում:
- 106. Հէքիմ Ստեփանեան Ջաքարի որդիք՝ Կարապետ, Գրիգոր, Յարութիւն և մայրն՝ Ջաքարի՝ Սառա և կինն՝ Տալօ:
- 107. Հէքիմ Մաթեոսի որդի՝ Գեորգ:
- 108. Սղնախու պօլիցմէյեստր և կօլլէժկի ասէտր Իայկոբ Սիմէլիչ Արէշով, կինն՝ Մալալ, որդի՝ Գիգօլի, դստերք՝ Բարբարէ և Նինօ:
- 109. Բաղդասարի որդի՝ Պէտրոս, կինն՝ Գարան, որդիք՝ Մէլքօ, Յոհաննէս և Ներսէս:
- 110. Պէտրոսի որդի՝ Եսայի, կինն՝ Մաթօ, որդիք՝ Սօլօման և Գեորգ, դուստր՝ Սաբէրօ:
- 111. Սուքիասի որդիք՝ Խէչօ, Մանուէլ, Ստեփան, Խէչօյի կինն՝ Քալի:
- 112. Բէժանի որդի՝ Դափք, կինն՝ Մարիամ, դստերք՝ Էլիսաբէր և Մագթաղին:
- 113. Գօձիկնի որդիք՝ Խօսրով և Մարգիս, մայր՝ Դարեջան:
- 114. Լօրի Յակոբի որդի՝ Վարդան, կինն՝ Քէթիվան, որդի՝ Դափք, դուստր՝ Սաբէրօ:
- 115. Ալահվերդուրդ որդի՝ Ալէք, կինն՝ Մաթօ, որդիք՝ Գասպար, Մէլքօ, Բաղդասար, Յարութիւն և Պօղոս, Գասպարի կինն՝ Աննա, դուստր՝ Ովսաննա, ևս դուստր՝ Ալէքի՝ Քալի:
- 116. Նացար Դափք, կինն՝ այրի՝ Ռօստուրան, որդիք՝ Գասպար և Դափք, դստերք՝ Մարիամ և Մարմար:



ՄՂՆԱԽ. քաղաքի կենտրոնական թաղերը

- 117. Սարգսի որդի՝ Նօնի, կինն՝ Մարիամ, մայր՝ Թամար, քոյր՝ Նանօ, Արթուրի որդիք՝ Դար և Ասլան:
- 118. Առաքելի այրի կինն՝ Անախանուն և հարսն սորա՝ Սօսինի այրի կինն՝ Մաթօ, որդին սորա՝ Սարգիս:
- 119. Սկրտումի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Թագուհի, որդի՝ Սարգիս:
- 120. Աբրահամի որդի՝ Յարութիւն, կինն՝ Արզուբան, որդիք՝ Խաչատուր և Յովսէփ, դուստր՝ Մալալ, Խէչօյի կինն՝ Մարիամ, դուստր՝ Քալի:
- 121. Յարութիւնի որդի՝ Սիմօն, կինն՝ Մաթօ, որդիք՝ Աւետիք և Դարչի, դստերք՝ Ովսաննա և Քալի:
- 122. Մինասի որդի՝ Գեորգ, կինն՝ Թինաթին, դուստր՝ Ովսաննա, մայր՝ Մարիամ:
- 123. Վարդանի որդիք՝ Գօգի և Գիքօ, Գօգինի կինն՝ Աննա, դուստր՝ Մալալ, Գիքօյի կինն՝ Քալի, մայրն՝ Մարիամ:
- 124. Սկրաչի որդիք՝ Սարգիս և Գիքօ, մայր՝ Չարի, Սարգսի կինն՝ Նաթէլ, որդի՝ Ստեփան:
- 125. Սօղօմօնի այրի կինն՝ Մաթօ:
- 126. Յօնանի որդի՝ Դաւիթ, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Արսէն, Ամսօ և Յոհաննէս, դուստր՝ Քալի:
- 127. Նիկողոսի որդի՝ Գեվօ, կինն՝ Խանփերվան, որդիք՝ Նիկողայոս, Ռօստօմ, Ստեփան, Յոհաննէս և Յովսէփ:
- 128. Փարսադանի որդիք՝ Միկօ, Պէպան և Բաղդասար, մայր՝ Էլիսաբեդ, դուստր՝ Մարիամ և Յարութիւնի որդի՝ Գեորգ:
- 129. Շաքարօյի որդիք՝ Բէժան, Գեվօ և Սօսի, Բէժանի կինն՝ Թամար, որդի՝ Բաղդասար, դստերք՝ Մարիամ և Աննա, Գեորգի կինն՝ Քալի, որդիք՝ Դաւիթ և Ստեփան, Սօսինի կինն՝ Խանփերի, որդիք՝ Սարգիս և Շաքարօ, դուստր՝ Էլիսաբեդ:
- 130. Ներսէսի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Աննա, դուստր՝ Քալի:
- 131. Արթուրի որդի՝ Սասան, կինն՝ Մաթօ, որդի՝ Աւետիք, դուստր՝ Ովսաննա:
- 132. Բէրօյի որդի՝ Դաւիթ, կինն՝ վրացի, որդի՝ Նօնի:
- 133. Յակոբի որդիք՝ Շերմազան, Նօնի, Չուրաբ և Գաբրիէլ, մայր՝ Թանդուր, Շերմազանի կինն՝ Քալի, որդիք՝ Սօսի, Սօլօման և Բէզլար:
- 134. Բէրօյի որդի՝ Ռէվազ, կինն՝ Մարիամ, դուստր՝ Մագրադին, մայր՝ Աննա և մօրաքոյր՝ Մարքարիս:
- 135. Ղազարի որդի՝ Յակոբ, կինն՝ Ազիզ, որդիք՝ Գասպար և Մէլքօ, դուստր՝ Ովսաննա:
- 136. Սարգսի որդի՝ Յակոբ, կինն՝ Մարիամ, դստերք՝ Անաքալի և Նաթէլ:
- 137. Սարգսի որդի՝ Կարապետ, կինն՝ Աննա, որդիք՝ Խէչօ, Յօհաննէս և Յովակիմ, դուստր՝ Մարիամ:

- 138. Յարութիւնի որդի՝ Սարգիս և Սօսի, Սարգսի կինն՝ Թալալ, որդի Յարութիւն, Սօսինի կինն՝ Էլիսաբեդ, որդի՝ Յոհաննէս:
- 139. Բէրօյի որդի՝ Սիմօն, կինն՝ Էլէնէ, որդիք՝ Դաւիթ, Յոհաննէս և Յակոբ, դուստր՝ Էթթվան:
- 140. Յակոբի որդի՝ Ստեփան, կինն՝ Բարբարէ, դուստր՝ Մարիամ:
- 141. Յակոբի որդի՝ Թաթօ, կինն՝ Դասիա, որդի՝ Կարապետ, դստերք՝ Ովսաննա և Մագրադին:
- 142. Խաչատուրի որդի՝ Յարութիւն, կինն՝ Խաթուն, որդիք՝ Յոհաննէս, Խաչատուր, Կարապետ և Սարգիս, դուստր՝ Քալի, Յոհաննէսի կինն՝ Մարիամ:
- 143. Պետրոսի որդի Յարութիւն, կինն՝ Մարիամ:
- 144. Բաթի որդի՝ Մնացական, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Աւետիք, Գիքօ, Գեորգ և Դաւիթ, դստերք՝ Քալի և Հօնօմսիմ:
- 145. Դաւթի որդի՝ Շուշի, կինն՝ Մարիամ, որդի՝ Դաւիթ:
- 146. Դանիէլի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Նազու:
- 147. Օթարի որդի՝ Յոհան, կինն՝ Սառա, որդիք՝ Միքայէլ և Շաքարօ, դուստր՝ Խանում, Միքայէլի կինն՝ Անախանուն, որդիք՝ Թաթօ և Խաչօ, դուստր՝ Ովսաննա և Խէչօյի այրի կինն՝ Մարիամ:
- 148. Բարսեղի որդի՝ Ոսկան, կինն՝ Մարիամ:
- 149. Մէրանդուլի որդի՝ Յոհաննէս, որդի՝ Գրիգոր:
- 150. Մանուկի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Սառա, դուստր՝ Ովսաննա:
- 151. Պօղոսի որդի՝ Սիմօն, կինն՝ Մագրադին:
- 152. Յարութիւնի որդի՝ Սահակ, որդի՝ Յարութիւն, սորա կինն՝ Մարիամ և Յարութիւնի դուստր՝ Մաբէդօ:
- 153. Պէտրի այրի կինն՝ Էլէնէ:
- 154. Չիթաւ Յարութիւնի որդի Ոսկան, կինն՝ Մարիամ, որդի՝ Գեորգ, դստերք՝ Ովսաննա, Քալի և Մագրադին:
- 155. Չիթաւ Յարութիւնի որդի՝ Կիրակոս, կինն՝ Մարիամ, որդիք՝ Չաքարիա և Մողոմն, մայր՝ Աննա:
- 156. Սկրտումի որդի՝ Մէլքօն, Պապա և Կօնի, մայր՝ Մաթօ, սոցա քոյր՝ Մարիամ:
- 157. Յոհաննէսի որդի՝ Մովսէս, կինն՝ Աննա, որդիք՝ Չաքարիա և Կարապետ, դուստր՝ Քալի:
- 158. Վարդանի որդիք՝ Ոսկան և Ասլան, մայր՝ Սառա, Ոսկանի կինն՝ Միրունան, որդիք՝ Բաղդասար և Ռօստօմ, դստերք՝ Մագրադին և Շուշան:
- 159. Վարդանէան Սիմօն, կինն՝ Թինաթին և եղբոր՝ Ալահվերդայ որդի՝ Մէլքօ:
- 160. Սահակի որդի՝ Յովսէփ, կինն՝ Սառա, որդիք՝ Յարութիւն և Գեորգ, դստերք՝ Ովսաննա, այլևս որդին՝ Յովսէփայ՝ Բօսանէ:



ՍՂՆԱՍ. հատված քաղաքի կենտրոնական թաղամասերից

161. Թեմուրազի որդի՝ Թամազ, կինն՝ Թինաթին, որդիք՝ Թեմուրազ, Չաքար, Մակո և Յոհաննես, դուստր՝ Շուշան:

162. Յոհանի որդիք՝ Դալիթ և Մակո, մայր՝ Աննա, Դալիթի կինն՝ Քալի, դստերք՝ Մարիամ և Էլիսաբեդ:

163. Յակոբի որդի՝ Խաչատուր, կինն՝ Մարմար, դուստր՝ Քալի, մայր՝ Մարիամ:

164. Յոհանի որդի՝ Ստեփան, կինն՝ Հերիքնազ, որդի՝ Յոհաննես, դուստր՝ Սաբեդ:

165. Քիստևի որդի՝ Սոսի, կինն՝ Լալիքարա, որդի՝ Յարութին, դստերք՝ Մարմար և Ովսաննա:

166. Յարութինի որդի՝ Գեվո, կինն՝ Աննա, որդի՝ Յարութին:

167. Նոնի որդի՝ Դազար, մայր՝ Մարիամ:

168. Չաքարի որդի՝ Ստեփան, կինն՝ Աննա, որդի՝ Սոսի, դուստր՝ Բարբարե:

169. Չավախ Դալիթ, կինն՝ Մուսան, որդի՝ Չաքար, դուստր՝ Մարիամ և որդույ՝ Ոսկանի այրի կինն՝ Անախանում, դուստր՝ Ովսաննա:

170. Ալեքսանդրի որդի՝ Գօգի, կինն՝ Խօրեշան, որդիք՝ Գուրգեն և Յովսեփ, դուստր՝ Մալի:

171. Յարութինի որդի՝ Աւետիք, կինն՝ Գայիանե, որդի՝ Յարութին, դուստր՝ Մարիամ, զոքանչն՝ Եսսեայ այրի կինն՝ Հօռօմ, դուստր՝ Հերիք:

172. Վարդանի որդի՝ Յոհաննես, կինն՝ Մալք, որդիք՝ Գասպար և Մարգիս, դուստր՝ Շուշան և զոքանչն՝ Գրիգորի այրի կինն՝ Եղիսաբեդ, բռն սորա՝ Յոհաննեսի որդի՝ Յոհաննես:

173. Դալիթի որդի՝ Թամազ, կինն՝ Աննա և Աբրահամի որդի՝ Նոնի, կինն՝ Շուշի:

174. Դաբաղ Նոնի, կինն՝ Մաթո, որդի՝ Անդրի:

175. Ասփարի որդի՝ Գալուստ, կինն՝ Մաթո, որդիք՝ Մէլքօ, Գասպար և Բաղդասար:

176. Ոսկանի այրի կինն՝ Մաթո, որդի՝ Սկրտում, դուստր՝ Ովսաննա:

177. Չիքաի որդի՝ Գօգի, կինն՝ Մագրաղին, դուստր՝ Սաբեդ:

178. Ծարբեցի Դալիթ, որդի՝ Գօգի և միս որդույ՝ Քախոյի այրի կինն՝ Մարմար, դստերք՝ Թաթլ և Աննա և Յարութինի այրի կինն՝ Թամար, որդի Չաքար:

179. Յարութինի այրի կինն՝ Մարիամ, որդիք՝ Ապրես և Դալիթ, Ապրեսի կինն՝ Մագրաղին, Դալիթի կինն՝ Մարիամ:

180. Գալուստի որդիք՝ Յարութին և Յոհան, Յարութինի կինն՝ Մարգարիտ, Յոհանի կինն՝ Մաբեդ, որդի՝ Գեորգ, դուստր՝ Մարիամ:

181. Մափարի որդի՝ Գրիգոր, կինն՝ Մայիա, որդիք՝ Չանչէր և Պէպան, դուստր՝ Ովսաննա և եղբոր՝ Պօղինի այրի կինն՝ Անախանում, որդի՝ Թէվորթ, դուստր՝ Աննա:

182. Աբազի որդի՝ Յոհաննես, որդիք՝ Թաթօ, Խէչօ, Գիգօլ և Դալիթ, դստերք՝ Թամար և Մարիամ և սորա ազգական Կարապետի որդի՝ Մովսես, կինն՝ Մաթօ:

183. Գրիգորեան Դալիթի որդի՝ Նոնի, կինն՝ Էլիսաբեդ, որդիք՝ Գեորգ և Գրիգոր, դուստր՝ Մայիա:

184. Անտօնի այրի կինն՝ Ազիզ, որդի՝ Մարգիս, դուստր՝ Մարիամ:

185. Մուճօ Սկրտում և Ալան, սորա կինն՝ Ովսաննա, դուստր՝ Մայիա:

186. Բերօյի որդի՝ Յարութին, կինն՝ Դարեշան, որդի՝ Գեորգ, դստերք՝ Էլիսաբեդ, Ովսաննա և Քէթիվան, մայր՝ Մարիամ:

187. Ճէտլի որդու Դալիթի կինն՝ Մառա, դուստր՝ Մարմար:

188. Մխիթարի որդի՝ Գաբրիէլ, կինն՝ Մարմար, որդի՝ Գրիգոր, դստերք՝ Մայիա և Անախանում:

189. Ստեփանի որդիք՝ Գուրգեն և Դուկաս, քոյր՝ Նանօ, Գուրգենի կինն՝ Նաթլէ:

190. Դալիթի այրի կինն՝ Աննա, որդի՝ Նոնի:

191. Ալեքսանդրի որդի՝ Յարութին, որդիքն սորա՝ Ալան և Յոհաննես, Ալանի կինն՝ Մայիա:

192. Տէր Գեորգ Երալեանի կինն՝ Անախանում, որդիք՝ Դալիթ, Բաղդասար, Սօլօման, Յոհաննես և Մէլքօ:

193. Տէր Մարտիրոս Տէր-Ստեփանեանի որդիք՝ Գեորգ և Ստեփան:

194. Տէր Պօղոս Տէր-Ստեփանեանի կինն՝ Էլիսաբեդ, դուստր՝ Մարիամ և եղբայրք Սկրտում և Դալիթ, քոյր՝ Շուշան, մայր՝ Քէթիվան:

195. Տիրացու Գեորգ Տէր-Յարութինեանի կինն՝ Նինօ, որդիք՝ Աւետիք և Յարութին և եղբոր՝ Դալիթի դուստր՝ Ովսաննա:

196. Կլէկչի Խաչօյի որդիք՝ Մարգիս և Մատի, դուստր՝ Մագրաղին, Մարգիսի կինն՝ Մագրաղին:

197. Երեմեան Գասպար, կինն՝ Մալալ, որդիք՝ Յարութին և Յոհաննես:

198. Յարութինի որդի՝ Գեվո:

199. Սիմօնի որդի՝ Սոսի, Չաքար և Սօլօման, մայր՝ Լալօ և Սօսի կինն՝ Ովսաննա:

200. Փերոյի այրի կինն՝ Նաթլէ:

201. Սկրտում քելխի որդիք՝ Յոհաննես և Գաբրիէլ, մայր՝ Եղիսաբեդ, Յոհաննեսի կինն՝ Խանում, դուստր՝ Մարիամ, Գաբրիէլի կինն՝ Խանփերվան, դուստր՝ Աննա:

202. Խաչումի որդի՝ Ստեփան, կինն՝ Թինաթին, որդիք՝ Աղալօ, Աւետիք և Ալան, դստերք՝ Մարմար, Մարիամ և Մագրաղին:

203. Մարգարի որդի՝ Մաթօ, կինն՝ Խանփերվան, դստերք՝ Քալի, Մաթի և Աննա:



ՍՂՆԱԽ. հատված քաղաքի կենտրոնական թաղամասերից

204. Գգրեան Դազարի որդիք՝ Կօղի, Յոհաննէս, Մովսէս, Ջաքար և Դաւիթ, մայր՝ Մայիա, Կօղինի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Դազար, դուստր՝ Մաթօ, Յոհաննէսի կինն՝ Մարթայ:

205. Դազարի որդի՝ Նազար, կինն՝ Մառա:

206. Թէվդօրի որդի՝ Գուրգէն, կինն՝ Նաթէլ, որդիք՝ Պէպան և Յոհաննէս:

207. Մարգարի որդի՝ Աթօ, կինն՝ Մայիա, որդիք՝ Կօնի, Յակոբ, Կիրակոս և Մէլքօ, դուստր՝ Նաթէլ:

208. Գգիրի որդի՝ Յարութիւն, որդի՝ Մէլքօ, կինն՝ Աննա, որդիք՝ Յակոբ և Բաղդասար, դստերք՝ Մարմար և Ովսաննա:

209. Մծիթլա Մատինի այրի կինն՝ Էլէնէ, որդիք՝ Աւտիք, Ստեփան, Խէչատուր և Իօանն:

210. Մծիթլա Աւտիքի որդի՝ Դանէլ, կինն՝ Լալօ, որդիք՝ Կիկօ և Յարութիւն, Կիկօյի կինն՝ Մարիամ, որդի՝ Սարգիս, դստերք՝ Ծիծանա և Մարմար:

211. Խէնիթգեան Ստեփանի այրի կինն՝ Մաթօ, որդիք՝ Պետրոս և Դաւիթ, դուստր՝ Անաստաս:

212. Արքանդիլեան Նօնիկի այրի կինն՝ Մարթայ, դստերք՝ Մարիամ, Ովսաննա:

213. Աւագի որդ Մարտիրոս, կինն՝ Մայիա, որդի՝ Աւտիք, դստերք՝ Թալալ և Քալի:

214. Դարաեան Սօլօման, կինն՝ Ուսնիփէր, որդի՝ Ստեփան, մայր՝ Դարմահմուդ:

215. Փալանդուզ Սարգսի որդիք՝ Վարդան, Կարապետ:

216. Սարգսի որդի՝ ճօն Ռուշան, կինն՝ Մարիամ, դստերք՝ Քալի և Էլիսաբէր և զոբանչն՝ Մամաջանի կինն՝ Անախանում:

217. Յոհաննէսի որդի՝ Գասպար, կինն՝ Մաթօ, դստերք՝ Մայիա, Աննա և Ովսաննա, զոբանչն՝ Փարսադանի այրի կինն՝ Մարմար:

218. Յարութիւնի որդի՝ մծիթլա Գիքօ, կինն՝ Լալօ, դստերք՝ Մարիամ և Մաթօ և զոբանչն՝ Պապայի կինն՝ Մաթօ և դանդուկսազ Յարութիւնի դուստր՝ Մայիա:

219. Յարութիւնի այրի կինն՝ Թալալ, որդիք՝ Սիմօն, Ռօստօմ և Գիօրգի և Ծուռիկեան Նիկողոսի այրի կինն՝ Մարմար:

220. Յարութիւնի որդի՝ խարազ Դուլի, կինն՝ Քալի, որդի՝ Յարութիւն և զոբանչն՝ Ջունփանեան Նօնիկի այրի կինն՝ Էլէնէ, սորա դուստր՝ Խօրիշան:

221. Էջմիածնայ ճուրտ Յոհաննէսի որդիք՝ Խէչօ, Դաւիթ և Գիքօ, Խէչօյի կինն՝ Անախանում, որդիք՝ Յոհաննէս, Աւտիք, Շաքարօ և Մէլքօ:

222. Յարութիւնի որդի՝ Պետրոս, կինն՝ Աննա, որդի՝ Մնացական:

223. Նրեմիայի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Թալալ, դուստր՝ Մայիա:

224. Ռօստօմի որդի՝ Սարգիս, կինն՝ Աննա, որդի՝ Մամաջան:

225. Յոհանի որդիք՝ Սահակ և Գիքօ:

226. Կախօյի որդի՝ Խէչօ, կինն՝ Մագթաղին, որդի՝ Դազար և Գօգիլօյի որդի՝ Մէլքօ:

227. Հալաջ Գօգիլի որդի՝ Յովսէփ, կինն՝ Մարիամ, որդի՝ Յոհաննէս, մայր՝ Թամար:

228. Քետէսոյ որդի՝ Դաւիթ, կինն՝ Մագթաղին, որդի՝ Ծղալօբայ, դստերք՝ Խանփէրի, Աննա և Ովսաննա:

229. Քետէսոյ որդի Պէպան, կինն՝ Մարիամ, որդի՝ Դակի և դուստր՝ Հօնօմիմ:

230. Քետէսոյ որդի՝ Պապօ, կինն՝ Թամար, որդիք՝ Սօլօման և Քետէսի, դստերք՝ Ուսնիփէր և Սառա:

231. Գօգիլի որդի՝ Ստեփան, կինն՝ Մարմար, մայր՝ Էլէնէ:

232. Բէժանի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Դասիա, որդիք՝ Սօլօման, Դաքրիէլ և Աւտիք, դուստր՝ Քալի:

233. Մովսէսի որդի՝ դալլաք Գէվօ, կինն՝ Աննա, որդիք՝ Յոհաննէս, Ստեփան և Մովսէս, դուստր՝ Մայիա:

234. Ալլանի որդի՝ Դարչի, կինն՝ Շոլիսաբէր, որդի՝ Նօնի, սորա կինն՝ Աննա:

235. Յոհանի որդի՝ Խէչօ, կինն՝ Մարթայ, որդիք՝ Սօսի, Ստեփան, Սլրոսոմ և Յոհան:

236. Յոհանի որդի՝ Թաթօ, կինն՝ Մարիամ, որդի՝ Սարգիս:

237. Սիրաքի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Շուշան, որդիք՝ Յարութիւն, Բէժան, Գօգի, Աբէլ, Մէլքօ և Մովսէս, Յարութիւնի կինն՝ Մայիա:

238. Էնակօլօփի որդի՝ Չատէն, կինն՝ Եայգունդի, որդիք՝ Բէժան, Բարթօ, Ջաքար, Գիքօ, Յարութիւն, և Ստեփան, դստերք՝ Մաբէրօ և Քէթէվան, Բէժանի կինն՝ Մայիա, որդի՝ Իւանէ:

239. Էնակօլօփեան Ջուրաքի որդիք՝ Գիգօլի, Մովսէս, Սարգիս և Յոհաննէս, դստերք՝ Քալի և Ովսան, մայր՝ Մաթօ, Գիգօլու կինն՝ Լէլօ:

240. Թունիկի որդի՝ Ստեփան, կինն՝ Մարիամ, մայր՝ Լէլօ:

241. Դաջարդուզ Ստեփանի որդի՝ Աթօ, կինն՝ Մայիա, դուստր՝ Քալի:

242. Ստեփանի որդի՝ Սիսօյի այրի կինն՝ Անախանում, որդի՝ Յարութիւն:

243. Մէրաք Քէվխի որդի՝ Ստեփան, մայր՝ Մարիամ:

244. Յովսէփի որդի Յակոբ, կինն՝ Մայիա, որդիք՝ Մամաջան, Մէլքօ, Գասպար, Բաղդասար, Ստեփան և Մամաջանի կինն՝ Մագթաղին, որդի՝ Յովսէփ:

245. Ափրիամի որդի՝ Գալուստ, կինն՝ Շուշան, որդիք՝ Գուրգէն, Թամազ, Յովսէփ և Գիքօ, դստերք՝ Մաբէրօ և Քալի:

246. Դազարի որդի՝ Ճէտէլ Գօգի կինն՝ Մայիա, որդի՝ Սօլօման, դուստր՝ Քալի:

- 247. Հերապետի որդի՝ Սարիբեգ, կինն՝ Փերի, որդիք՝ Յոհաննես, Յարութիւն և Սաքո:
- 248. Յոհաննի որդի՝ Գելօ, կինն՝ Ովսան:
- 249. Չարեբեան Մովսէսի որդիք՝ Շերմազան, Աբանդիլ և Դաւիթ, Աբանդիլի կինն՝ Քալի, Դաւիթի կին՝ Մաբեդո, դուստր՝ Քալի և Նօնիկնի այրի կինն՝ Մարիամ:
- 250. Գրիգորի որդի՝ Մարտիրոս, կինն՝ Դասօ, որդի՝ Գիքօ, դուստրք՝ Աննա, Բարբարէ:
- 251. Յակոբի որդի՝ մծիկլա Գլախ, կինն՝ Աննա, որդիք՝ Պէպան, Գեորգ և Իօաննէ, դուստրք՝ Մարիամ և Ովսան:
- 252. Յակոբի այրի կինն՝ Խանում:
- 253. Յարութիւնի որդի՝ Շաքարօ, մայր՝ Մայիա:
- 254. Սարգսի որդի՝ Չաքար, կինն՝ Մարթայ, մայր՝ Էլիսօ:
- 255. Բերօյի որդի՝ Յարութիւն, որդիք՝ Ստեփանն և Դաւիթ, Ստեփաննի կինն՝ Մաքօ:
- 256. Մարգարի որդի՝ Կիկօ, կինն՝ Թինաթին, որդիք՝ Պէպան, Չաքար և Սարգիս, դուստրք՝ Ովսան և Դօդօ և եղբօր՝ Յովսէփի որդիք՝ Եսայի և Ջանշէլ:
- 257. Գօղէրձու որդիք՝ Խէչօ և Թաքօ, մայր՝ Մարիամ և Խէչօյի կինն՝ Թինաթին, որդի՝ Գուրգէն, դուստրք՝ Ովսան, Սաբէդ և Նաթէլ:
- 258. Յակոբի որդիք՝ Յոհաննէս և Գալուստ, Յոհաննէսի կինն՝ Նանօ:
- 259. Գալուստի որդի՝ Նիկողոս, կինն՝ Լալօ, որդի՝ Յարութիւն, դուստրք՝ Քալի և Սալօմէ:
- 260. Յոհաննէսի որդի՝ Շերմազան, կինն՝ Խօրիշան, որդիք՝ Ասլան և Սարգիս, դուստր՝ Մարիամ և Յարութիւնի կինն՝ Մարիամ:
- 261. Պետրոսի որդի՝ Գեորգ, կինն՝ Մարիմէ, որդի՝ Գասպար, դուստրք՝ Մարիամ, Էլիսաբէդ և Էլէնէ:
- 262. Մարկոսի որդի՝ Ռէվազ, կինն՝ Սուլբան, դուստր՝ Չուրբարէ:
- 263. Յարութիւնի որդի Խէչօ, կինն՝ Մաքօ, որդիք՝ Յարութիւն, Իօաննէ և Գասպար:
- 264. Միղբար Գարբիէլ, կինն՝ Աննա, որդիք՝ Գիքօ, Յոհաննէս, Միմօն, Յովակիմ և Պէպան, դուստրք՝ Մարիամ և Հօռօմսիմ:
- 265. Աբրահամի այրի կինն՝ Անան, որդիք՝ Յարութիւն և Գասպար:
- 266. Ղարաբաղի խարազ Ստեփանն, կինն՝ Մարմար:
- 267. Յարութիւնի որդի՝ Դաքօ, կինն՝ Մագրաղին:
- 268. Պետրոսի որդիք՝ Գէվօ, Յարութիւն և Պօղոս, քոյր՝ Ովսան, մայր՝ Թինաթին:
- 269. Գօղէրձու որդի՝ Գօգի, կինն՝ Լալօ, որդի՝ Նօնի, դուստր՝ Մայիա, Նօնիկնի կինն՝ Թալալ և ծառայքն՝ Յովսէփ և աղայիսին՝ Թամար:
- 270. Աւետիք որդիք՝ Շերմազան և Գիքօ, մայր՝ Աննա, Շերմազանի կինն՝ Քալի:
- 271. Մինասի որդի՝ Մովսէս, կինն՝ Մագրաղին:
- 272. Փարսաղանի որդի՝ Կօնի, կինն՝ մայր՝ Նանօ:
- 273. Թաթուլի այրի կինն՝ Թինաթին:
- 274. Դաւիթի որդի Մինաս, կինն՝ Լալօ, որդիք՝ Թաքօ, Նօնի, Ասլան և Թաքօ, դուստրք՝ Մարիամ և Անաբալի:
- 275. Ղարիսի որդի՝ Մարգիս, կինն՝ Էլէնէ, որդիք՝ Գէվօ և Միմօն, դուստրք՝ Թագուհի և Դասօ:
- 276. Գօշիկնի որդի՝ Նօնի, կինն՝ Հօռօմսիմ, որդիք՝ Համբարձում, Չաքարիա և Մէլքօ, դուստրք՝ Բարբարէ և Շուշան:
- 277. Պետրոսի որդիք՝ Առաքել, Գափօ և Մովսէս, մայր՝ Թալալ և եղբօր այրի կինն՝ Աննա, որդիք՝ Գէվօ, Ալավէրդ և Դաւիթ:
- 278. Աբօյի որդիք՝ Նօնի և Գրիգոր, մայր՝ Աննա, Նօնիկնի կինն՝ Բարբարէ, որդիք՝ Սարգիս և Գեորգ, ևս դուստր Աբօյի՝ Մագրաղին:
- 279. Ռօստօմի որդի՝ Բէժան, կինն՝ Լալօ, որդիք՝ Նօնի և Ռօստօմ, դուստր՝ Էլիսաբէդ:
- 280. Խէչօյի որդի՝ Մարգիս, մայր՝ Խանում:
- 281. Շէշիկնէան Թաթուլի որդիք՝ Մարգիս և Գօգի, Սարգիսի կինն՝ Էլիսաբէդ, որդիք՝ Թաքօ և Սօլօման, դուստրք՝ Մայիա, Շուշան և Քալի:
- 282. Բայրամի որդի Դաւիթ, սորա որդիք՝ Գեորգ, Ստեփանն, Բէզլար, դուստր՝ Մարմար, Գեորգի կինն՝ Սաբէդօ:

- 283. Յարութիւնի որդի՝ Մարգիս, կինն՝ Նանօ, որդիք՝ Գեորգ և Խէչօ, դուստր՝ Մարիամ:
- 284. Դաւիթի որդիք՝ Ստեփանն և Դաւիթ, մայրն՝ Մարմար:
- 285. Յարութիւնի որդի՝ Չաքար, կինն՝ Նաթէլ, որդիք՝ Յարութիւն և Մնացական:
- 286. Մուրադեան Մանուշար, կինն՝ Նանօ, որդի՝ Ռօստօմ, դուստրք՝ Ովսան և Չաար, ևս Թամար:
- 287. Խէչատուրի որդի՝ Պէպի, կինն՝ Մագրաղին:
- 288. Գումիլատրեան Յոհաննէսի որդիք՝ Մովսէս, Բէժան և Գօգի, Մովսէսի կինն՝ Մաքօ, որդի՝ Յարութիւն, դուստր՝ Մայիա:
- 289. Գումիլատրեան Յոհաննէսի որդի՝ Գիքօ, սորա որդիկն՝ Մէլքօ և եղբօր Բաբլօյի այրի կինն՝ Աննա, դուստր՝ Թէկէլ:
- 290. Գումիլատրեան Գեորգի այրի կինն՝ Մարմար, որդիք՝ Ազարիա և Միքայէլ, դուստր՝ Մարիամ:
- 291. Գրիգորի որդի՝ Վարդան, կինն՝ Մայիա, որդիք՝ Հերապետ և Ստեփանն, Չավախ Սաքօյի այրի կինն՝ Մարիամ:
- 292. Հերապետի որդիք՝ Գալօ, Ղազար և Յովսէփ, Գալօյի կինն՝ Մայիա, որդի՝ Մնացական, Ղազարի կինն՝ Էլէնէ, որդի՝ Գեորգ, դուստրք՝ Մարիամ և Էլէնէ, Յովսէփի որդի՝ Սարգիս, դուստր՝ Բարբարէ:
- 293. Աւետիքի որդի՝ Թաքօ, սորա որդի՝ Դաւիթ, դուստրք՝ Նանօ և Մարիամ:
- 294. Բայրամի որդի՝ Գափօ, կինն՝ Էլէնէ, որդիք՝ Գասպար և Բաղի:
- 295. Թունիկնի կինն՝ այրի Լալօ, որդիք՝ Ստեփանն և Մէլքօ:
- 296. Յարութիւնի այրի կինն՝ Լալօ, որդիք՝ Կօնի, Փրիդօն և Իօաննէ, դուստրք՝ Խանփէրի և Սուլբան, Կօնիկնի կինն՝ Էլիսաբէդ, որդի Յարութիւն և միւս որդուդ՝ Աղալօյի այրի կինն՝ Անաբալի:
- 297. Ջիլահի որդիք՝ Ասլան, Պէպի և Բէժան, Ասլանի կինն՝ Թամար, դուստրք՝ Աննա և Ովսաննա և միւս եղբօր՝ Դաւիթ որդիք՝ Գօգի և Ամիրան:
- 298. Երեմիայի որդիք՝ Թադօ և Մարտիրոս, մայր՝ Ովսաննա և Թադօյի կինն՝ Էլէնէ:
- 299. Ղարիսի որդի՝ Խէչօ, կինն՝ Էլիսաբէդ, որդիք՝ Մէլքօ, Գասպար և Բաղդասար, դուստրք՝ Նաթէլ և Անախանում:
- 300. Ղարիսեան Պէտրի որդիք՝ Աբէլ և Յովակիմ, դուստր՝ Ովսաննա, մայր՝ Էլէնէ:
- 301. Ազատեան Գրիգորի որդի՝ Պէպան, կինն՝ Լալօ, դուստրք՝ Քալի և Ովսաննա:
- 302. Ունրիկեան Սարգիսի որդի՝ Պէպան, կինն՝ Մագրաղին, որդիք՝ Գուրգէն, Մէլքօ, Չաքար և Իօվաննէ և դուստրք՝ Ովսաննա, Մարիամ և Մարմար:
- 303. Ունրիկեան Սարգիսի որդի՝ Ունրի, կինն՝ Մաքօ և եղբօր՝ Բէժանի որդիք՝ Գէվօ, Սարգիս և Յարութիւն:
- 304. Ռէվազի որդիք՝ Աղալօ, Նօնի և Չաքարիա, մայր՝ Մարիամ, Աղալօյի կինն՝ Էլէնէ, որդի՝ Իօվաննէ, Նօնիկնի կինն՝ Շուշան:
- 305. Կրքչի Յոհաննէսի որդի՝ Դաւիթ:
- 306. Թումանեան Դաւիթ, կինն՝ Թինաթին, որդիք՝ Շերմազան, Նօնի, Գիվի և Աբէլ, դուստր՝ Ովսան Շերմազանի կինն՝ Էլիսաբէդ, դուստր՝ Բարբարէ, Նօնիկնի կինն՝ Մարիամ, որդի՝ Մէլքօ:
- 307. Սիրաճի Սարուխան, կինն՝ Մարիամ, որդի՝ Գեորգ, դուստրք՝ Ովսան և Մարթայ:
- 308. Լեհնչի Չազա, սորա որդիք՝ Գեորգ և Ղազար:
- 302. Միրզանէլի Յոհաննէս, որդի՝ Սօսի, կինն՝ Մայիա, որդիք՝ Գափօ և Գրիգոր:
- 309. Խէչօյի որդի՝ Ներսէս, կինն՝ Քալի, որդի՝ Թովմայ, անջեցեալ եղբօր՝ Նօնիկնի որդի՝ Պէպան, դուստր՝ Ովսաննա:
- 310. Միրզանէ Պօղոսի որդիք՝ Գօգի, Յովսէփ, Միրզայ, Պէտրոս և Մէլքօ, դուստրք՝ Քալի և Աննա, մայր՝ Հօռօմսիմ, կինն՝ Մագրաղին:
- 311. Ղալթաղսազ Յոհաննէս, կինն՝ Մարիամ, որդիք՝ Գասպար և Սարգիս, դուստր՝ Նաթէլ:
- 312. Յակոբի որդի՝ Վերդի, մայր՝ Չանազան:
- 313. Դալլաք Աւագ, կինն՝ Մարիամ, որդի՝ Յոհաննէս, դուստրք՝ Խաթուն և Ովսան:
- 314. Մատուրի որդի՝ Յարութիւն, կինն՝ Մաբէդ:
- 315. Մայրեանց Օթարի որդիք՝ Առաքել, Մովսէս, Մաքօ և Օսկին, մայրն՝ Թումիան, Առաքելի որդիք՝ Թադօ և Յօսէփ, Մով-

ստի որդիք՝ Գեորգ, Ստեփան, Աւետիք և Յարութիւն, դուստր՝ Սաբէր, Մաքօյի կինն՝ Աննա, դստերք՝ Թալալ, Դասօ և Զալի, Ոսկանի կինն՝ Մալալ, որդի՝ Դարչի, դուստր՝ Մարիամ:

316. Միրաբեան Զալի կինն՝ Մաքօ, որդիք՝ Գօգի, Կիկօյի, Իօվանէ, Գուրգէն, Զուրաբ, Նօնի, Մէլքօ, Գասապար, Ստեփան, դուստր՝ Մայիա:

317. Խատինի որդի՝ Դաթ, կինն՝ Սուսան, որդիք՝ Գէվօ, Պէպի և Գուրգէն և դուստր՝ Մայիա:

318. Ղաջարուզ Ստեփանի որդի՝ Մարտիրոս, կինն՝ Թամար, որդիք՝ Պէպան, Յարութիւն, Յոհաննէս և Գասապար, դստերք՝ Մարիամ, Մագաղին և Մարմար:

319. Նիմիհի որդիք՝ Խատի և Թօմայ, Խատինի կինն՝ Անախանն:

320. Դաթի որդի՝ Թաթօ, կինն՝ Մայիա և հօրեղբօր՝ Պաղի որդիք՝ Պէպան և Գիքօ, ևս հօրեղբօր՝ Մամուկօյի այրի կինն՝ Նանօ, որդիք՝ Մէլքօ և Գասապար, այլև յիշեալ Թաթօյի եղբայրք Կօնի և Սարգիս:

321. Բոյախի Սարգիս, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Յոհաննէս:

322. Թալկաղի Եսայի, կինն՝ Փէրի, որդիք՝ Յարութիւն և Զաքար:

323. Չէքազ Ղազարի որդի՝ Յարութիւն:

324. Ղէբար Մատինի որդիք՝ Նօնի և Պէպան:

325. Ղէբար Փարսաղան, կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Աւետիք, դստերք՝ Թալալ, Մաթի և Մայիա:

326. Թաթուլի որդիք՝ Գօգի և Կօնի, Գօգինի կինն՝ Մարմար:

327. Օթարի որդիք՝ Փարսաղան և Նօնի, Փարսաղանի կինն՝ Ոսնիփէր, որդի՝ Գարսէվան և Պէպէ, դուստր՝ Թալալ:

328. Նօնիի կինն՝ Մագաղին, դուստր՝ Ովսաննա:

329. Ղալաբէգեան այրի կինն՝ Ախօ:

330. Ղարաբէգի որդի՝ Դաիթ, կինն՝ Մագաղին, որդիք՝ Ղալօ, Գասապար, Մէլքօ և Բաղդասար և դուստր՝ սորա՝ Գօտէրօնայ այրի կինն՝ Մագաղին և Ղալօյի կինն՝ Բարբարէ, դուստր՝ Աննա:

331. Ասատուրի որդիք՝ Յոհաննէս և Մարտիրոս, Յոհաննէսի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Սարգիս, դուստր՝ Ովսաննա, Մարտիրոսի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Պէպան, դստերք՝ Էլէնէ, Մարիամ և Զալի:

332. Բայիհնուրի որդի՝ Յարութիւն, կինն՝ Մայիա, մայրն՝ Էլէնէ:

333. Ալահվերդայ որդիք՝ Գրիգոր և Սարգիս, մայր՝ Մարիամ, Գրիգորի կինն՝ Դալիթա, որդի՝ Մարտիրոս, դստերք՝ Հօռօմսիմ, Աննա, Ովսան, Ոսնիփէր և Սարգիս կինն՝ Մաթի:

334. Բաթի որդի՝ Մարտիրոս, դուստր՝ Աննա կոյր, Մարտիրոսի կինն՝ Լալօ, որդիք՝ Մէլքօ, Կարապետ:

335. Դաթի որդի՝ Ոսկան, կինն՝ Էլիսաբէր, որդիք՝ Գալուստ և Յարութիւն, Դաիթ և Մէլքօ:

336. Դաթի որդի՝ Գրիգոր, որդիք՝ Գէվօ, Գուրգէն, Գէվօյի կինն՝ Մաքօ, դուստր՝ Աննա, Գուրգէնի կինն՝ Փաթ, որդի՝ Յոհաննէս:

337. Այվազի որդիք՝ Թաթուլ և Մովսէս, Թաթուլի կինն՝ Մարիամ, որդի՝ Գեորգ, Մովսէսի կինն՝ Մայիա, որդիք՝ Մէլքօ, Ստեփան և Սարգիս և դուստր՝ Նաթէլ:

338. Մուսինի որդիք՝ Գօգի և Բէժան, մայր՝ Սարրա, Դաթայ կինն՝ Մայիա, որդիք՝ Յարութիւն և Միմօն, Գօգինի կինն՝ Մարթայ և ննջեցեալ որդայ Ասատուրի որդիք՝ Շօշի և Գեորգ:

339. Բէժանի որդի՝ Յակոբ, կինն՝ Աննա, որդի՝ Իօվանէ, դուստր՝ Զալի:

340. Բէժանի որդի՝ Նօնի, կինն՝ Էլէնէ, որդիք՝ Մէլքօ, Գասապար և դուստր՝ Նաթէլ:

341. Տէր Կիրակոսի որդի՝ Վարդան, սորա որդի՝ Պէպան, կինն՝ Քէթէվան, որդիք՝ Գասապար, Մէլքօ և Բաղդասար և դստերք՝ Ովսան և Սաբէր:

342. Գրգորի որդի՝ Նօնի, կինն՝ Թինաթին, դուստր՝ Զալի:

343. Գրիգորի որդիք՝ Պէպան և Սօսի, մայր՝ Թամար:

344. Մուրատի որդի՝ Ստեփան, կինն՝ Խաննու, որդի՝ Յովսէփ:

345. Զանազանեան Նօնիի այրի կինն՝ Անախանն, որդի՝ Դաիթ:

346. Գրիգորի որդի՝ Մովսէս, կինն՝ Մագաղին:

347. Բայաթեան Յարութիւնի այրի կինն՝ Լալօ:

348. Ղազարի որդի՝ Դանէլ, կինն՝ Էլէնէ, սորա փեսայն՝ Արէշի որդի՝ Սօլօման, կինն՝ Մայիա, որդի՝ Իօվանէ:

349. Էլիվազի որդիք՝ Պետր, Ռամազ և Մարգար, Պետրի կինն՝ Էլիսաբէր, որդի՝ Գիվի, դուստր՝ Նինօ, Ռամազի կինն՝ Էլէնէ, որդիք՝ Յոհաննէս և Յարութիւն, դստերք՝ Մայիա, Ովսան և Թագուհի, Մարգարի կինն՝ Մարիամ, որդի՝ Նիկողոս:

350. Ապրիկեանց Ասլանի որդիք՝ Փափի և Մէլքօ, մայր՝ Անախանն:

351. Յարութիւնի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Ովսաննա, որդի՝ Յարութիւն, դստերք՝ Թագուհի և Ոսնիփէր:

352. Դաթի որդիք՝ Գեորգ և Յարութիւն, Գեորգի կինն՝ Էլէնէ, որդի՝ Գրիգոր:

353. Դաթի որդի՝ Զազի, կինն՝ Մագաղին:

354. Միրզի որդի՝ Պէպի, կինն՝ Էլիսաբէր, դուստր՝ Նաթէլ:

355. Քունէլօեան Դաթի որդիք՝ Գեորգ, Զաքար և Պէպի, Գեորգի կինն՝ Թաթէլ, որդի՝ Յարութիւն, Զաքարի կինն՝ Աննա և Պէպիի կինն՝ Նանօ:

356. Զումփանեան Սարգսի որդի՝ Յովսէփ, կինն՝ Մարիամ, որդի՝ Գեորգ և Ստեփան, դուստր՝ Լալի:

357. Զումփանեան Սարգսի որդի՝ Պօղոս, կինն՝ Նանօ, որդիք՝ Յովակիմ և Սարգիս և դուստր՝ Թէլէլ:

358. Զումփանեան Խէչօն, կինն՝ Նինօ, որդի՝ Կարապետ, դստերք՝ Թագուհի, Աննա և Թալալ:

359. Զումփանեան Սարգսի որդիք՝ Գիքօ, Ղազար և Դաթ, Գիքօյի կինն՝ Ոսնիփէր, որդիք՝ Գեորգ և Սօլօման, դստերք՝ Թաթէլ և Աննա, Ղազարի կինն՝ Մալաթ, որդի՝ Գալիա:

360. Գուլաղկեան Ղազարի այրի կինն՝ Աննա:

361. Սկրտումի որդի՝ Մնացական, կինն՝ Մարիամ, որդիք՝ Յակոբ և Սկրտում, դուստր՝ Եղսապետ:

362. Յարութիւնի որդի՝ Յոհաննէս, կինն՝ Մագաղին, որդիք՝ Յարութիւն, Ստեփան, Իօվանէ և Գասապար:

363. Դարբին Սահակ, որդի՝ Գեորգ:

364. Շահվերդեան Յոհաննէսի որդիք՝ Թաթօ, Արէլ, Զանշէլ, Ամբրան և Գասապար և դուստր՝ Մայիա, Թաթօյի կինն՝ Շուշան, որդի՝ Դաիթ, Արէլի կինն՝ Զալի, դուստր՝ Լալօ, Զանշէլի կինն՝ Մարիամ և Գեորգի որդիք՝ Յարութիւն և Պօղոս:

365. Գեօրգայ որդի՝ Բէրօ, կինն՝ Թաթ, որդիք՝ Նօնի, Գիօրգի, Պէպանէ և դստերք՝ Դարէջան, Սաբէրօ և Մայիա:

366. Սարգսի որդի՝ դալլաթ Պետրոս, կինն՝ Մարիամ, դստերք՝ Մագաղին, Սաբէրօ, Ովսաննա և Խաննու:

367. Հերապետեան Մեհրապի որդիք՝ Յոհաննէս, Մաթոս, Պէպան և Սկրտում, մայր՝ Խաննու, Յոհաննէսի կինն՝ Ովսաննա:

368. Դիբբցի Պետրոսի որդի՝ Նօնի, մայր՝ Զալօ»²⁰⁵:

Մայրենիի վիճակը. Կախտի շատ այլ բնակավայրերի հայ համայնքների համեմատ, որոնց մեծ մասն արդեն ԺԹ դարի սկզբներին վրացախոս էր դարձել, սղնախցի հայերը կարողացել էին մնալ հայախոս, որը շրջապատի համատարած վրացախոս միջավայրում, անշուշտ, հեշտ բան չէր:

Հայտնի է, որ Սղնախը ԺԹ դարում, ի տարբերություն, օրինակ, Թելավի, ուներ անհամեմատ ավելի անաղարտ ազգային նկարագիր. «...հիմնականում այդտեղ բնակվում էին նոր վերաբնակիչներ և նրանց մշակութային վրացականացումը ընթացել է համեմատաբար դանդաղ»²⁰⁶: Այս կարծիքը հաս-

205 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, ք. 32-41: Ի դեպ, Սր. Գևորգ եկեղեցու ավագ քահանա Տեր Ավետիքի ծովան էին համարվում 4-105 և 359-361 համարների ներքո առկա սղնախցիները, 107-148-ը՝ Տեր Հարություն Նիկողոսյանի, 149-186-ը՝ Տեր Հովհաննէս Թեմուրազյանի, իսկ Սր. Աստվածածին տուն-եկեղեցու քահանա Տեր Գևորգ Երայանի ծովան էին կազմում 187-220 համարների ներքո առկա սղնախցիները, 221-266-ը՝ Տեր Մարտիրոս Տեր-Ստեփանյանի, 267-322-ը՝ Տեր Պողոս Տեր-Ստեփանյանի, 323-358-ը՝ Տեր Հարություն Եղյանի (1818 թ. արդեն վախճանված էր):

206 **Мурadian П. М.**, նշվ. աշխ., էջ 169:

տատող բավականաչափ տվյալներ կան, որոնցից մի քանիսը, կարծում ենք, հարկ է ժամանակագրորեն ներկայացնել: Այսպես, 1849-ին տիրող կացության ակնհայտորեն նշել է. «...հայախօսք ամենեքին և քաղցրագիտակք և արք արթունք ի տուրևառս վաճառաշահութեան. ջերմեռանդք են և կրօնասէրք և գաղթեալք յԱրցախայ և ի Գանձակայ. և զամենայն ինչ հնարին առ ի անկորուստ պահել զհայրենին բարբառ. վասն որոյ և մեծաց գովութեանց արժանաւորք...»²⁰⁷: 1852 թ. ռուս հետազոտող Ի. Բելկինը, սակայն, մռայլ է ներկայացրել իրականությունը. «Մղնախի բնակիչները, չնայած իրենց ոչ այնքան վաղուց գաղթած լինելուն, յուրացրել են ոչ միայն վրացիների լեզուն՝ որպես սովորական խոսակցական լեզու, այլև ավանդույթները, սովորույթները, տարազը. մի խոսքով նրանք այնպես են վրացացել, որ դժվար է վրացու և հայի միջև գտնել որևէ էական տարբերություն: Դա կարելի է վերագրել նրանց ճկուն խառնվածքին, և եթե մի բանում տրամագծորեն հակառակ են վրացիներից, ապա դա ձեռքբերումների մոլուցքն է և խնայողությունը»²⁰⁸:

1880 թ. «Кавказ» թերթի թղթակից «Մղնախիցին» էլ հաղորդել է, որ քաղաքի բնակչության 9/10 մասը կազմող հայերը «...համարյա բոլորը խոսում են վրացերեն, չնայած նրանք մայրենի լեզվով խոսելու հնարավորություն ունեն: Քաղաքում հայ երեխաների համար երկդասյա դպրոց կա, որտեղ առանձին-առանձին ուսանում են երկսեռ երեխաներ, բայց դպրոցը գտնվում է անմխիթար վիճակում: Աղջիկների թիվը հազիվ հասնում է 15-ի, ընդ որում բոլորն էլ 7-10 տարեկան»²⁰⁹: Նույն թվականին մեկ այլ թղթակից արձանագրել է, որ քաղաքային ակումբը հայերեն միայն մեկ պարբերական էր ստանում՝ «Մշակ» օրաթերթը, և այն էլ «...ոչ ոք չէ կարդում որովհետև հայերեն լեզու իմացողը չը կայ...»²¹⁰:

Իրականում հայոց լեզվին տիրապետող քանի՞ մարդ կա. այդ մասին իմանում ենք վիճակագրական հետևյալ աղբյուրից. պարզվում է, որ 1886 թ. քաղաքաբնակ 5854 հայերից գրաճանաչ էին 1194-ը: Դրանցից 750-ը տիրապետում էր վրացերենին (գրաճանաչների 64,2 %-ը), 387-ը՝ ռուսերենին (33,1 %-ը) և միայն 57-ը՝ հայերենին (4,9 %)՝²¹¹:

207 Հովհաննես վարդապետ Արշարունի, նշվ. հոդվ., էջ 314:

208 Белкин И., նշվ. հոդվ., էջ 212:

209 "Кавказ", 1880, № 266, с. 2 (բնագրում՝ "...почти все говорят по-грузински, не смотря на, что у них есть возможность говорить на своем родном языке. В городе есть школа для армянских детей, состоящая из 2-х классов, в них обучаются дети обоего пола, каждый отделено, но школа находится в безотрадном положении. Число простирается всего только до 15-ти, притом все от 7 до 10 л.")

210 «Մշակ», 1880, № 58, էջ 1:

211 "Кавказский календарь на 1908 г., Тифлис, 1907, отдел III, с. 62 (ի դեպ, 27 մարդ կան հայ գրաճանաչների 2,3 %-ը տիրապետում էր մեկից ավելի լեզուների):

Ներկայացնելով պաշտոնական այս տվյալները՝ այնուամենայնիվ, նշենք, որ զուգահեռաբար առկա են նաև կացության այլ բնութագրումներ, ինչպես, օրինակ, 1884 թ. հետևյալ հաղորդումն է. «Մղնախը համեմատելով Վրաստանի վրացախօս գաւառական քաղաքների հետ՝ հայկական բարբառի (լեզուի) կողմից առաջին տեղ է բռնում: Այստեղ չը կայ այնպիսի ընտանիք, որ հայերեն խօսալիս չը լինին-ծերերից սկսած ամենափոքրերը, մեծ մասը հայերեն են խօսում: Սորա գլխատր պատճառը այն է, որ տեղացիներից շատերը ի վաղուց գաղթած են Հայաստանի հայաբնակ զանազան տեղերից: Կան և այնպիսիք, որ վրացերեն մի բառ անգամ չը գիտեն: Աւելի նկատելի է փոքր հասակաւորների մէջ. նամանաւանդ շատ ուրախալի երևոյթ է քաղաքիս համար, որ այս երկու տարուայ ընթացքում մայրենի լեզուով խօսալը այնքան ընտելացել է և ընդհանրացել, որ սովորական բան է դարձել...»²¹²: 1888 թ. լրագրային մեկ այլ նյութ հայտնում է. «...Հայերը շատ են վրացիներից և նրանք գաղթած են Հայաստանի զանազան տեղերից. իսկ վերջինները՝ քաղաքիս շրջակայ գիւղերից: Ընդհանրապէս վերցրած պետք է ասել, որ հայերն էլ վրացախօսներ են, բայց կան շատ ընտանիքներ, որ հայերեն էլ են խօսում...»²¹³: Խնդրո առթիվ դարավերջին էմանուել քահանա Նազարյանը նշել է. «...մինչդեռ Թէլաւում հայախօսութիւնը մի հազուադէպ բան է, Մղնախում նա մի շատ տարածուած երևոյթ է, միանգամայն անսպասելի՝ հայ ուղևորի համար»²¹⁴: Ուշագրավ է, որ 1906 թ. նույնպես մի վավերագրում նշված է, թե քաղաքաբնակ հայերի մեծ մասը հայախոս էր. «Մղնախ քաղաքի, Լազոտաղի և Յարսկի Կոլոդցի աւանի բնակիչք մեծամասնութիւնք են հայախօսք իսկ մնացեալքն դարերից ի վեր բնակիչք ի գիւղօրէս Վրաստանի վրախօսք են ամենքեան»²¹⁵:

Գլխոցներ. վավերագրերում տեղեկություններ կան Մղնախում մինչև 1860 թ. գոյություն ունեցած արական դպրոցի վերաբերյալ: Հայտնի է, որ Մղնախում 32 աշակերտով և 1 ուսուցչով հայոց դպրոց գործել է դեռևս 1854 թ.²¹⁶: Նույն դպրոցը 1857 թ. ունեցել է 30²¹⁷, իսկ 1858-ին՝ 36 աշակերտ²¹⁸:

Հետաքրքրական տվյալներ է պարունակում 1903 թ. հրապարակված վիճակագրությունը, համաձայն որի՝ Մղնախի գավառում գործում էր 41 դպրոց: Գավառի 85,411 վրացի բնակիչներն ունեին 1914, իսկ 13,098 հայերը՝ 498 աշակերտ: Այս թվերից հետևում է, որ 1903 թ. կրթվում էր վրացիների 2,2%-ը, հայերի՝ 3,8%-ը²¹⁹:

212 «Նոր-Դար», 1884, № 19, էջ 3:

213 «Նոր-Դար», 1888, № 26, էջ 3:

214 «Նոր-Դար», 1899, № 30, էջ 2:

215 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, ք. 8 (վկայությունը՝ 1906 թ.):

216 Նույն տեղում, գ. 3825, ք. 38-39:

217 Նույն տեղում, գ. 3830, ք. 118-119:

218 Նույն տեղում, գ. 3823, ք. 112:

219 "Հեթոսի ցըրցըլո", 1904, № 256: Տե՛ս նաև՝ "օցըրօս", 1880, № 193, էջ 3:

Սբ. Սահակյան դպրոց. 1860 թ. համարվում է Սրբնախում եկեղեցական-ծխական առաջին դպրոցի հիմնադրման պաշտոնական թվականը: Դպրոցի բացման մասին մեզ է հասել հետևյալ պատմությունը. «Սղնախցիք, տեսնելով որ իրենց երեխաներ անուս, անկիրք մնացել են, և առաջնորդը բոլորովին հոգացողություն չընէր այս մասին, շատ տարակուսանքի մէջ կրնկնին: Վերջապէս նոցա մէջէն Թովմաս Նուպարեանց, Յովհաննէս Էնակոլփեանց և Յարութիւն Հեքիմեանց ըստած պատուական անձինքը, տեսնելով իրենց խնդիրը ու բողոքը առաջնորդին դիմացը ոչինչ գործութիւն չունին և պարապ կելլեն, ազգասիրական ոգով վառուած, ամառուան մէջ, սաստիկ տաքերուն մարդու մը չիմացուցած, իրենց ծախովքը կելլեն Էջմիածին կերթան Սրբազան կաթողիկոսին իրենց վիճակը յայտնելու: Ազգասէր հովուապետը շատ կուրախանայէ անոնց գալուն, կգովէ նոցա ուսումնասիրութիւնը, կմխիթարէ նոցա ճամբուն քաշած ներութեան մէջ, որովհետև գնացողներէն երկու անձինք տաքերուն չդիմանալով կհիւանդանան. կունդունէ նոցա խնդիրը և կպատրաստէ երկու կոնդակ. մէկը՝ վիճակին առաջնորդին վրայ, որին մէջ յայտնելով Սղնախ քաղաքի վարժարանին հաստատուիլը, կիրամայ՝ այսպէս. „Չարդինս ուխտատեղեաց և մոմավաճառութեան, որ մինչև ցայսօր առաքեալ են ի հոգաբարձութիւնս Ներսիսեան դպրոցի՝ այսուհետև թողուլ ի գործադրութիւն Սղնախու ուսումնարանին առանց իրիք արգելանաց, նոյնպէս և զնշանակեալ գումարն դրամոց, որ յաղագս մարգութեան որդոցն քահանայից Սղնախու՝ մնացել ի յիշեալ յուսումնարանն յօգուտ և ի պայծառութիւն եկեղեցոյս և ազգիս.„: Այս կերպով մէկ կոնդակ ալ Սղնախու հասարակութեանը վրայ, կկապէ նորա պահպանութեանը համար վերը բերած աղբիւրները:

Սրբազան կաթողիկոսը այսպիսի գործովը Սրբնախցիներուն սրտին մէջ երախտագիտութեան անմոռանալի կորով մը իր համար տնկեց: Եթէ Աստուծով, Սղնախցիք ուսումով ծաղկին, պայծառանան պարտական են այժմեան Սրբազան կաթողիկոսին, որ իրենց համար մէկ նոր լուսատրիչ մը էղաւ: Վերը յիշած իրեք անձինքը, երբոր իրենց վարժարանին հաստատութեան այս կոնդակը բերին, Սղնախեցիներուն ուրախութիւնը չափ չունէր: Թէ երեխայ, թէ երիտասարդ, թէ այր և թէ կին ամէնքը հաւասար այս ուրախութիւնը զգացին, կարծես թէ՝ փրկութեան նոր լոյս մը իրենց համար ծագեցաւ: Այս միջոցին էկա այստեղ Տէր Մովսէս Սայաթնով ըստած քահանան, որ այս կոնդակին գործութեանը համաձայն, կարգադրութիւն ընէ: Այս պատուական քահանան, սիրտը ուրախութեամբ լցուած կառնու թերթ մը թուրք, և կակրսի վարժարանին համար փող հաւաքել. բանը ի՞նչ երկնցունում, մէկ, երկու օրուան մէջ, եօթը հազարէն անէ փող կը ժողով: Այս պատուական քահանային խանութները քալած ստորագրութիւն ժողոված ատենը, մէկ բարեպաշտ չունեալ պառաւ մը, Ռեհան Տէր Միմեօնեանց անունով, կտեսնէ որ մարդիկ խումը խումը մէկ թրթի տակ բան մը կգրեն ու փող կուտան, կհարցունէ, „ի՞նչ է այդ,“ երբ կիմանայ որ վարժատուն պիտի բացուի և անոր համար փող կծողունէ, իր անձնէ խնայած, բերնէն կտրած, պահած տասը մանէք փողը կհանէ կնուիրէ վարժատան: Այսքան էր սհա Սղնախցիներուն լուսատրութեան համար ցուցըցած ջերմեռանդութիւնը: Պատուական Տէր Մովսէս քահանան այդ իրեն ազգասիրական գործին համար Սղնախցիներուն սրտին մէջ անմոռանալի յիշատակ թողուց, և Սրբազան կաթողիկոսէն ալ արժանօրէն վարժատրուեցաւ:

Վարժարան բանալու օրը, որ 1860 սեպտեմբերի 14-ին էր, առաւօտը մեծ հանդիսով պատարագ մատուցին. սուրբ պատարագէն վերջը՝ բազմութիւնը հանդէսով վարժարան մըտաւ, օրհնեցին, և ի յիշատակ Սուրբ Սահակ Պարթև Թարգմանչի, ըստեցաւ նա Սահակեան Վարժարան: Այս այսպէս կատարելէն՝ բոլոր բազմութիւնը պատրաստուած այս առիթով սեղանի էկաւ, որ շատ փառատոր կերպիւ պատրաստած էր, մինչև անգամ՝ օտարազգիներուն վրայ, որ հասարակութենէն հրաւիրուած էին, զարմանք բերաւ: Գաւառապետը սկսեց սեղանը Տէր Մովսէս քահանային կենաց խմելով, վերջացուց հասարակութեանը և սրբազան կաթողիկոսին կենացը խմելով: Գաւառապետին այնքան սրտին լաւ թուեցաւ Սղնախցիներուն այսպիսի ուսումնասիրութիւնը, որ իր համակրութիւնը ևս նոցա այս բանին մէջ ցուցնել կամենալով՝ սեղանի վրայ նստած բազմութիւնը, որ հարիւրի չափ էին, միւս օրը իր մօտ սեղանի հրաւիրեց:

Այսպէս սհա Սղնախցիք փառատոր կերպիւ կատարեցին իրենց վարժարանին բացումը»²²⁰: Այսպիսով, 1860 թ. սեպտեմբերի 14-ին տեղի է ունեցել դպրոցի հանդիսավոր բացումը²²¹: Ի դեպ, 1861 թ. վավերագրերից մեկում նշվել է, որ դպրոցը գոյատևում էր Նաստմիսարի Սբ. Աստվածածին եկեղեցու եկամուտների հաշվին²²²:

1865 թ. դպրոցի գրադարանը համարվել է ազնվական Ծղալուր Հովհաննիսյան Գորղանյանցի նվիրաբերած 120 կտոր գրքով²²³:

Դպրոցական երկհարկ քարաշեն շենքը, որը միայն 2-րդ հարկում ունէր 4 ընդարձակ դասասենյակ, կառուցվել էր 1868 թ.²²⁴:

220 **Աքամանեանց Բարսեղ**, Սղնախու վարժարանի սկզբնաւորութիւնը եւ բարեկարգութիւնը.– «Վտունկ Հայոց Աշխարհի», Տիփլիս, 1862, էջ 447-450: Դպրոցի բացման վերաբերյալ մանրամասները տես նաև՝ **Ստեփանց Չարմայր**, Նոր ուսումնարան ի Սղնախ, յանուն սրբոյն Սահակայ.– «Ճոռաբաղ», 1860, հ. Բ, տետրակ Է, էջ 113-115:

221 **Աքամանեանց Բարսեղ**, նշվ. հոդվածը, էջ 449: Այդ մասին տես նաև՝ «Մեղու Հայաստանի», 1862, № 36, 8 սեպտեմբերի, էջ 143: «Նոր-Գար», 1898, № 35, էջ 2:

222 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, ք. 53:

223 «Մեղու Հայաստանի», 1865, № 45, էջ 356:

224 «Մշակ», 1914, № 166:

1871 թ. հրապարակված մի հաշվետվության համաձայն՝ դպրոցը պահվում էր Սղնախի Սբ. Կարապետ և Սբ. Գևորգ եկեղեցիների, Սբ. Աստվածածին ուխտատեղիի եկամուտների, ինչպես նաև նվիրատուների և թոշակադրամների հաշվին²²⁵:

1884 թ. դպրոցը երկդասյա էր²²⁶: Նույն թվականին «Новое обозрение» լրագրի թղթակիցը, ծանոթանալով դպրոցին, նշել է, որ «...այս երկար ժամանակամիջոցում նույնն է մնացել, առանց նվազագույն հաջողության»²²⁷: Թղթակցի զնահատականը թերևս ճշմարիտ է, քանի որ անցնող տարիների հետ դպրոցի աշակերտության թիվն ավելանալու փոխարեն տարեցտարի նվազել է: Դա ինքնին փաստում է կրթական այդ օջախի անկումը:

1885 թ. Սղնախի Սբ. Սահակյան դպրոցը կառավարության պահանջով փակվել է:

1886 թ., երբ տրվել էր եկեղեցական-ծխական դպրոցների գործունեությունը վերսկսելու թույլտրվությունը, Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով հաստատվել էր վերաբացվելիք դպրոցի հոգաբարձության հետևյալ նոր կազմը՝ Ստեփան Քոչարյանց, Սարգիս Հակոբյան Հագարապետյանց և Գասպար Սկրտչյան Տեր-Ստեփանոսյանց²²⁸: Սակայն ինչ-ինչ հանգամանքների պատճառով դպրոցի վերաբացումն իրականացել էր միայն 1888 թ.²²⁹: Այդ թվականին այն կրկին եղել է մեկդասյա՝ 3 բաժանմունքով²³⁰:

1889 թ. մոսկվայաբնակ սղնախցի եղբայրներ Գևորգ և Ստեփան Լիանոզյանցներն իրենց հանգուցյալ մոր՝ Եղիաբեթ Լիանոզյանցի հիշատակը հավերժացնելու նպատակով դպրոցին նվիրել էին Սղնախում գտնվող և տարեկան մինչև 800 ռուբ. եկամուտ ապահովող իրենց եռահարկ տունը²³¹:

1894 թ. դպրոցի շենքի վթարային վիճակը նկատի առնելով՝ հաստատությունը փոխադրում են մեկ այլ մասնավոր շենք²³²:

1896 թ. Սբ. Սահակյան դպրոցը շուրջ քառասունամյա գործունեությունից հետո կառավարության կարգադրությամբ կրկին փակվեց: Ինչպես հայտնի է, ողջ Ռուսաստանում հայոց դպրոցները փակ մնացին 10 տարի և վերաբացվելու թույլտվություն ստացան միայն 1905 թ.: Այդ ընթացքում (1901 թ.) Սբ. Սահակյան դպրոցի շենքը, որը 1848 թ. կառույց էր և վթարային վիճակում, ոստիկանության պահանջով քանդել է Սբ. Կարապետ եկեղեցու երեց-

փոխ բժիշկ Մովսիսյանը²³³: Ի դեպ, այդ շենքն արդեն 1899-ին անօգտագործելի էր և, ըստ երևույթին, վերանորոգումների ենթակա չէր. «Գալթի հիսուսային կողմը տխուր կանգնած էր նախկին ծխական դպրոցի խարխուլ և անգործադրելի շենքը...»²³⁴:

Ստորև ներկայացնում ենք Սբ. Սահակյան դպրոցի գործունեությունն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1862 ²³⁵		3	100
1865 ²³⁶		4	76
1866 ²³⁷			68
1867 ²³⁸		4	70
1868 ²³⁹		3	83
1871 ²⁴⁰			72
1873 ²⁴¹			65
1875 ²⁴²	4		65
1876 ²⁴³			60
1877 ²⁴⁴			55
1878 ²⁴⁵	3		50
1881 ²⁴⁶	5		60
1883 ²⁴⁷	4		56
1876 ²⁴⁸			32
1891 ²⁴⁹			33
1892 ²⁵⁰			21
1894 ²⁵¹	4		69

«Շուշանիկյան» օրհորդաց դպրոց. Սղնախի հայոց դպրոցների պատմության մեջ իր տևականությամբ երկրորդ տեղում է: Հիմնադրվել է 1875 թ.²⁵², նույնպես Սբ. Կարապետ եկեղեցու բակում (գավթում) գտնվող մի շենքում: Հարկ է նշել, որ դպ-

233 Նույն տեղում:
 234 «Նոր-Դար», 1899, № 30, էջ 3:
 235 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, ք. 70-71:
 236 Նույն տեղում, գ. 3848, ք. 43:
 237 Նույն տեղում, ք. 113:
 238 Նույն տեղում, գ. 3851, ք. 33:
 239 Նույն տեղում, գ. 3853, ք. 12:
 240 **Խուդդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 606:
 241 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, ք. 49: Նաև՝ ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 44:
 242 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, ք. 49: Նաև՝ ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 44:
 Ի դեպ, լրագրային մի նյութի մեջ նշված է, որ 1875 թ. Սբ. Սահակյան դպրոցում ուսանում էր 72 աշակերտ, ուստի դժվար է տվյալներից որևէ մեկին նախապատվություն տալ («Մշակ», 1875, № 34, էջ 2): Նույն թվականին դպրոցում դասավանդում էին Արշակ քահանա Տեր-Ստեփանյանցը, Կամսար Տեր-Գավթյանցը, Եղիշե քահանա Տեր-Աստվածատրյանցն ու «նստվորնի սովետնիկ» Նիկողայոս Սարաջյանցը (ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 44):
 243 ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 62, ք. 13: Նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 99:
Խուդդյան Ս., նշվ. աշխ., էջ 606:
 244 Նույն տեղում:
 245 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 176:
 246 Նույն տեղում, գ. 3874, ք. 159-160:
 247 Նույն տեղում, գ. 3875, ք. 135-136:
 248 Նույն տեղում, գ. 3887, ք. 140:
 249 Նույն տեղում, գ. 3889, ք. 139:
 250 Նույն տեղում, գ. 3891, ք. 111:
 251 Նույն տեղում, գ. 3896, ք. 164-165, ք. 34:
 252 «Новое обозрение», 1884, № 51, с. 2.

225 «Արարատ», 1871, էջ 371-372:
 226 **Խուդդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 606:
 227 «Новое обозрение», 1884, № 51, с. 2 (բնագրում՝ «...мужская школа остается все при одномъ и томъ-же классе. Ни малейшаго успеха за все это долгое время»):
 228 «Արարատ», 1886, էջ 469:
 229 **Խուդդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 606:
 230 Նույն տեղում:
 231 «Նոր-Դար», 1889, № 78, էջ 2:
 232 «Մշակ», 1901, № 106, էջ 3:

րոցի բացման թույլտվությունն Ամենայն Հայոց կաթողիկոսից ստացվել էր դեռևս 1872 թ.²⁵³: Դասավանդում էին Սբ. Սահակյան դպրոցի ուսուցիչները, ինչպես նաև տիկին Կատարինե Մանուչարյանը²⁵⁴:

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտների
1875 ²⁵⁵			42
1876 ²⁵⁶			30
1877 ²⁵⁷			30
1878 ²⁵⁸			34
1883 ²⁵⁹			60
1885	փակ է եղել		
1888 ²⁶⁰			75
1890 ²⁶¹			66
1891 ²⁶²			59
1892 ²⁶³			69
1893 ²⁶⁴			83
1894 ²⁶⁵			80

Երկսեռ դպրոց. 1905 թ. «Շուշանիկյան» դպրոցն այլևս իբրև առանձին միավոր չի գործել, այլ համդես է եկել Սբ. Սահակյան դպրոցի հետ միավորված՝ որպես երկսեռ կրթօջախ²⁶⁶: Դպրոցական շենքի բացակայության պայմաններում դասատվությունը սկսվել էր վարձակալված 4 սենյակում²⁶⁷: Արդեն 1906 թ. Սղմախի հայ մտավորականները մտածում էին կառուցել դպրոցի նոր շենք²⁶⁸:

Երկսեռ դպրոցի աշակերտների թիվը նկատելիորեն աճել էր: Համեմայն դեպք, 1908/9 ուստարում այդտեղ ուսանել էին 166 աշակերտ (50 տղա և 116 աղջիկ)²⁶⁹: 1911/12 թթ. գործել է 4 դասարանով՝ 5-ամյա կարգով, ունեցել 4 ուսուցիչ և 102 աշակերտ (23 տղա և 79 աղջիկ)²⁷⁰: Ինչպես երևում է, զուտ նյութականի պատճառով դպրոցական նոր շենքի կառուցումը ձգձգվել է, բայց հույսը վերակենդանացել է 1913 թ. «...Նիկողայոս Գօրղանեանի այրին իրագործեց իր հանգուցյալ ամուսնու կտակը, յատկացնելով 3000 ռ. հայոց դպրոցի շինութեան համար ս. Կարապետ մայր՝ եկեղեցու գաթում: Հին դպրոցական շինութիւնը արդեն սկսել են քանդել և նրա տեղը կը կառուցվի նոր շինութիւն 6 սենյակով: Հայոց դպրոցի միս սեփական շինութիւնը, որտեղ տե-

ղաորված է հայոց դպրոցը ներկայումս, ցանկանում են տալ վարձով...»²⁷¹:

1914 թ. տիկին Գորղանյանը Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին էր հանձնել հանգուցյալ ամուսնու կտակած 2000 և իր կողմից ևս 1200 ռուբլի՝ ի նպաստ Սբ. Կարապետ եկեղեցու բակում կառուցվելիք դպրոցի²⁷²: Նույն նպատակին ևս 1000 ռուբ. նվիրել էր Ա. Օթարյանը²⁷³: Ուշագրավ է, որ 25.000 ռուբ. ծախս պահանջող (ըստ նախահաշվի) կառույցի աշխատանքները նախատեսվում էին անհապաղ սկսել դեռ այն պահին, երբ այդ նպատակին ժողոված գումարը կազմել էր միայն 7000 ռուբ.²⁷⁴: Շենքի հիմնօրհների հանդեսը 1914 թ. Վարդավառին կատարել է Մեսրոպ եպիսկոպոսը: Նոր դպրոցը կառուցվելու էր դարձյալ Սբ. Կարապետ եկեղեցու բակում, բայց ոչ հին քանդված դպրոցի տեղում²⁷⁵: Նոր դպրոցում ծրագրվել էր ավելացնել անվճար ուսումնառուների թիվը (ինչպես եղել էր տասնամյակներ, և, որի շնորհիվ աշակերտության մեծ թիվ էր ապահովվել)²⁷⁶: Դպրոցի ավելի ուշ շրջանի գործունեության մանրամասները մեզ հայտնի չեն:

«*Լիանոզյան դպրոց*». հարկ է նշել, որ «Շուշանիկյան» օրիորդաց դպրոցը (1875-1896 թթ.) հետագոտող Ս. Խոտոյանը նույնացրել է «Լիանոզյան» դպրոցի հետ²⁷⁷:

Ի դեպ, ինչ-ինչ հանգամանքների բերումով միայն 1894 թ. է իշխանությունների թույլտվությամբ հաստատվում դպրոցի «Լիանոզյան» անվանումը²⁷⁸:

1898 թ. «...հանրային դպրոցներու Ռուս տեսուչ Բալովիչ վարչութեան եւ ժողովրդի հոծ բազմութեան ներկայութեամբ բացել է նախկին Հայոց եկեղեցական-ձխական դպրոցի տեղ տարրական ուսումնարան մը՝ Լիանոզովի անունով»²⁷⁹:

Հայտնի է, որ «Լիանոզյան» դպրոցը պահվում էր մոսկվայաբնակ տղամայրի Գ. Լիանոզյանի այն կալվածքի արդյունքով, որը նա «նուիրել էր ս. Կարապետ եկեղեցուն այն պայմանով, որ դրա արդյունքով պահպանվի նախկին հայոց եկեղեցական-ձխական դպրոցը եւ վերջինը կրէ իր անունը»²⁸⁰:

1907 թ. դարձել է երկսեռ երկդասյա դպրոց²⁸¹ (դարձյալ որևէ կապ չունի «Շուշանիկյան» օրիորդաց դպրոցի հետ, որը, փաստորեն, 1905-ից միա-

253 Խոտոյան Ս., նշվ. աշխ., էջ 607:

254 ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 44:

255 Նույն տեղում: Նաև՝ «Մշակ», 1875, № 34, էջ 2:

256 ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 62, ք. 13: Նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 51:

257 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 99:

258 Նույն տեղում, ք. 176:

259 Նույն տեղում, գ. 3875, ք. 135-136:

260 Խոտոյան Ս., նշվ. աշխ., էջ 607:

261 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, ք. 140:

262 Նույն տեղում, գ. 3889, ք. 139:

263 Նույն տեղում, գ. 3891, ք. 111:

264 Խոտոյան Ս., նշվ. աշխ., էջ 607:

265 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 34, 164-165:

266 Խոտոյան Ս., նշվ. աշխ., էջ 606:

267 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1226, ք. 17:

268 Նույն տեղում:

269 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, ք. 11:

270 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 58:

271 «Մշակ», 1913, № 104, էջ 4:

272 Նույն տեղում, 1914, № 57, էջ 3: Տե՛ս նաև՝ «Тифлисский листок», 1914, № 63, с. 3; № 66, с. 3.

273 «Тифлисский листок», 1914, № 64, с. 2.

274 «Тифлисский листок», 1914, № 149, с. 3.

275 «Մշակ», 1914, № 165, 166:

276 Նույն տեղում, 1915, № 196, էջ 3:

277 Խոտոյան Ս., նշվ. աշխ., էջ 607:

278 «Մշակ», 1901, № 109, էջ 2:

279 «Բիւզանդիոն», 1898, № 626, էջ 3:

280 «Մշակ», 1901, № 109, էջ 2:

281 «Վտակ», 1907, № 8:

վորված էր «Սահակյան» դպրոցին): Նույն թվականի նոյեմբերի 25-ին տեղի է ունեցել «Լիանոզյան» երկսեռ երկդասյա դպրոցի առաջին ծնողական ժողովը, որը վարում էր ուսուցիչ Արշալույս Գրիգորյանը²⁸²:

Սբ. Գևորգ եկեղեցու ծխական երկսեռ դպրոց. կարճատև կյանք է ունեցել: Այսպես, 1896 թ. դպրոցի բացման թույլտվությունն ու հոգաբարձության կազմը Վեհափառ հայրապետի կոնդակով հաստատվելուց հետո²⁸³, նույն թվականի «նոյեմբերի 17-ին Սուրբ Գեորգ եկեղեցու անունով, հանդիսատար կերպով բացվեց հայոց միդասեան երկսեռ ուսումնարան...: Աշակերտների և աշակերտուհիների թիւը առ այժմ հասնում է 60 հոգու»²⁸⁴: Նույն տարում էլ փակվել է հայկական բոլոր դպրոցների հետ:

«Մարինսկի» («Մարիամյան») օրիորդաց դպրոց. 1899 թ. հիշվում է այլ կրթօջախների թվում: Բացի հայերից, սովորում էին նաև վրացիներ²⁸⁵: 1900 թ. սեպտեմբերի 1-ից դպրոցը վերակազմավորվել է 2 դասարանով և 2 պատրաստականով²⁸⁶: Ավելի ուշ, ինչպես ասվեց, քաղաքագլուխ Վարդան Ենիկոլոյանի ջանքերի շնորհիվ «Մարինսկի» օրիորդաց դպրոցը ստացել է պրոգիմնազիայի կարգավիճակ²⁸⁷:

1909 թ. դպրոցը տեղափոխվել է Ն. Ա. Ամիրխանյանցի տունը (նախկինում գետեղված էր Ա. Օթարյանի տանը): Ի դեպ, նույն թվականին դպրոցի ղեկավարությունը դիմել էր քաղաքագլխին՝ Ամիրխանյանցի տանը կից գտնվող ազատ հողատարածությունը խաղերի և մանուկների ֆիզիկական կոփման նպատակով ժամանակավորապես օգտագործելու խնդրանքով, որն էլ բավարարվել էր²⁸⁸:

Հայտնի է, որ 1913 թ. «Հայոց դպրոցի միս սեփական շինութիւնը..., ցանկանում են վարձով տալ Մարինսկի օրիորդաց դպրոցին, տարեկան 900 ռ.»²⁸⁹:

Քաղաքային երկդասյա դպրոց. գործել է կառավարության կողմից հայկական դպրոցների փակված լինելու ժամանակամիջոցում (1896-1905 թթ.)²⁹⁰:

Հայ կանանց կարուճակի դպրոց. Սղնախում գործած հայկական մեզ հայտնի վերջին դպրոցն է: Բացվել էր 1912 թ. դեկտեմբերին՝ 10 աշակերտուհիներով: Ուսուցումը երկու տարի էր: Վարժուհին հրավիրվել էր Թիֆլիսից²⁹¹: Կովկասի հայոց բարեգործական ընկերության Սղնախի մասնաճյուղի

միջոցներով պահվող այս ուսումնարանի տնօրինությունը ակնկալում էր, «...որ աշխատանքը գրաւէ չքատրներին, որոնք չեն կարող փող տալ ուսման համար»²⁹²:

Թատրոն. դպրոցից զատ մայրենի լեզվի պահպանման, ամրապնդման ու զարգացման համար, անշուշտ, կարևոր նշանակություն ուներ նաև ազգային թատրոնը:

Սղնախում թատերական ներկայացումներ են կազմակերպվել 1880-ական թվականների սկզբից: Հայտնի է, որ 1880 թ. օգոստոսի 28-ին «Շուշանիկյան» օրիորդաց դպրոցի դահլիճում բարեգործական նպատակներով հայ թատերասեր երիտասարդների խումբը մի ներկայացում էր տվել, որն ուղեկցվել էր հայկական ազգային երգերով²⁹³: Բեմի հարդարման գործին օժանդակել էր Եղիշե քահանա Տեր-Աստվածատրյանը²⁹⁴:

Մի հաղորդման համաձայն՝ Սղնախում թատերական գործի զարգացմանը գործուն մասնակցություն է ցուցաբերել Վարդան Ենիկոլոյանը և Դավիթ Տեր-Ստեփանյանը. «Մինչև 1880 թ. Սղնախում թատրոնական գործը զարգացած չէր: Եղել են սակաւաթիվ ներկայացումներ: Ենիկոլոյանի Վարդանը և Տեր-Ստեփանեան Դավիթը 1882 թ. կանոնադր ներկայացումներ են տալիս Սղնախում: Նրանք հաւաքում են երիտասարդներին, պատրաստում և բեմ դուրս բերում: Նրանց գործը աջողութեամբ պսակվեց: Նրանք ունեցան հետևողներ, որոնք շարունակեցին թատրոնական գործը: Ենիկոլոյանը լաւ էր խաղում դրամատիկական, իսկ Տեր-Ստեփանեանը՝ կօմիկական դերեր: 1901 թ. Սղնախում տօնվեց նրա բեմական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը»²⁹⁵:

Թատերական խմբի բեմադրությունների մասին 1882 թ. գովեստով է խոսել նաև “Кавказ” օրաթերթի թղթակիցը՝ նշելով, որ օգոստոսի 15-ին ներկայացվել էր 2 ներկայացում, մեկը՝ վրացերեն, մյուսը՝ մայրենի լեզվով²⁹⁶: Ընդ որում, թղթակիցը վկայում է, որ «ամեն անգամ այնքան շատ հանդիսատես է հավաքվում, որ տեղի հայկական ծխական դպրոցի ընդարձակ դահլիճը հազիվ է բավարարում»²⁹⁷: Ի դեպ, դերասանուհիներ չլինելու պատճառով կանանց դերերը կատարում էին 14 և 16 տարեկան տղաներ²⁹⁸: Ուշագրավ է, որ հիշյալ բեմադրության ընդմիջման ժամին ցուցադրվել էին Պետերբուրգի նկարչական ակադեմիայում ուսանած սղնախցի Եգոր Բաշինջաղյանի՝ թրքահայերի կյանքը պատկերող աշխատանքներ²⁹⁹:

282 Նույն տեղում:

283 «Արարատ», 1896, էջ 142:

284 «Մշակ», 1896, № 136, էջ 3:

285 «Նոր-Դար», 1899, № 30, էջ 3:

286 «Մշակ», 1900, № 181, էջ 2:

287 Նույն տեղում, 1913, № 183, էջ 3:

287 “Кавказ”, 1909, № 243.

288 «Մշակ», 1913, № 104, էջ 4:

290 Նույն տեղում, 1912, № 27, էջ 3:

291 Նույն տեղում:

292 Նույն տեղում:

293 «Մեղու Հայաստանի», 1880, № 72, էջ 3:

294 Նույն տեղում:

295 «Մշակ», 1913, № 183, էջ 3:

296 “Кавказ”, 1882, № 218.

297 Նույն տեղում:

298 Նույն տեղում:

299 Նույն տեղում:

Եկեղեցիներ. Սղնախ քաղաքում հայերն ունեին իրենց եկեղեցիները, որոնք եղել են բավականին ճոխ ու հարուստ հաստատություններ: Դրանց մասին 1849 թ. ակնանատեսը գրել է. «...ունին գերկու եկեղեցիս զմին յանուն սրբոյն Կարապետի, իսկ զմիսն յանուն սրբոյն Գեորգայ՝ ի ներքոյ պարսպի բերդին ...Եկեղեցիք քաղաքիս ճոխք են և վայելուչք, զարդարեալք եկեղեցական անօթովք և դրամովք քան զայլ եկեղեցիս Վրաց աշխարհին. բաց յեկեղեցեաց Տփղեաց»³⁰⁰:

Սբ. Կարապետ եկեղեցի. համարվում էր քաղաքի հայոց մայր (գլխավոր) եկեղեցին: Հիմնադրման ժամանակը մեզ հայտնի չէ, բայց արդեն 1788 թ. հիշվում է մի վավերագրում³⁰¹: Հավանաբար 1840-ական թվականներին Սբ. Կարապետ եկեղեցին քայքայված վիճակում էր, քանի որ 1847-1849 թթ. եկեղեցական ողջ գումարը ծախսվել է վերակառուցումների նպատակով³⁰²: Անգամ 1130 ռուբլի էլ 1848 թ. փոխարինաբար վերցրել էին Սբ. Գևորգ եկեղեցու եկամուտներից ու ծախսել նույն աշխատանքների համար³⁰³:

1852 թ. մայիսին 14-օրյա հորդ ու անընդմեջ անձրևներից եկեղեցին խիստ վնասվել էր: Այդ մասին Վեհափառ հայրապետին տեղյակ էր պահել Մովսես ավագ քահանան. «Յընթացս չորեքտասան ատուրց անդադար յորդահոս անձրևաց և սաստիկ որոտմանց ամպոց և ահա ի 29 մայիսի յերեկոյեան պահու ինն և կէս ժամու շանթիս կայծականց հարեալ եղև կաթուղիկէն սբ. Կարապետ եկեղեցոյ Հայոց, զի յարևմտեան կոյս ծակեալ երկու մատնաչափ ի վերուստ գլխոյն պատուհանի ի չափ միոյ գնդակի թնդանօթի զկաթուղիկէն և ուժգին հարմամբ թափանցեալ ի մէջ եկեղեցոյ խորտակեաց զբոլոր ապակիս պատուհանաց կաթուղիկէն և որմոց եկեղեցոյն, նմանապէս և պատկերաց, պահարանաց, առանց հասուցանելոյ զվնաս ինչ սրբոց արծաթապատ պատկերոցն՝ յոր եղեալ կային ի ցայգից նորա սևացան նկարք հրեշտակաց, որք էին առ ընթեր պատկերի Հօր Աստուծոյ ի մէջ կաթուղիկէն և անտի թափանցեալ խորտակեաց գերկուս մոմակալս միայն ի չորից, որք կարգաւ եղեալ կային յատենի ի վերա բեմի առաջի պատկերք տիրամօրն և անտի թափանցեալ ցովմոնք նորին ի խորան աջակողման, ուր և ծակեալ էր զմի աղիս ի փիլաքանոցն, բաց ի վերոյ գրեղոց գետ ինչ երևելի վնաս եկեղեցոյն ի զարմացումն բոլոր բնակչաց տեղոյս որք և եկեալ յապուշ կտրէին՝ թէ զի արդ չէ կործանեալ կամ ճեղքեալ զկաթուղիկէն»³⁰⁴:

1879 թ. նախատեսվել էր իրականացնել եկեղեցու ներքին հարդարման աշխատանքներ (վարպետ՝ թիֆլիսաբնակ Վլադիմիր Գրայսիերտ)³⁰⁵:



ՍՐՆԱԽ. Սբ. Կարապետ եկեղեցին և զանգակատունը հարավ-արևելքից

Ի դեպ, ԺԹ դարի վերջին ակնանատես Էմմանուել քահանա Նազարյանցը նշել է. «Այս եկեղեցին կարելի է ասել մութն է, չորս թանձր սիւները իրենց հաստութեամբ բաւական փոքրացնում են տղամարդոց դասը...»³⁰⁶:

Սբ. Կարապետ եկեղեցին նորոգելու անհրաժեշտություն էր ծագել և 1901 թ.: Նորոգման կարիք ունեին ծածկերն ու գավթի պատերը³⁰⁷: Աշխատանքները, որոնք իրականացնելու համար պահանջվել էր 300 ռուբլի, գլխավորում էին եկեղեցու երեցփոխները, նախ՝ բժիշկ Մովսես Սկրտչյան Մովսիսյանցը, ապա (1905-ից)՝ Մովսես (Աղա) Սկրտչյան Ամիրխանյանցը³⁰⁸: Նորոգումներին հետևել և օժանդակել էին նաև երեցփոխ Վ. Տեր-Հակոբյանն³⁰⁹ ու ծագումով չարդախլվեցի փաստաբան Արտեմ Եղիազարյանը (վախճ. 1910 թ.)³¹⁰:

1906 թ. երեցփոխ Մովսես Ամիրխանյանցն ազատվել էր պաշտոնից և նրա փոխարեն ընտրվել էր Արշակ Քիշվարդյան Բուլիջանյանցը³¹¹:

300 «Բազմավեպ», 1851, էջ 315-316:

301 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 447, ք. 1:

302 Նույն տեղում, գ. 3818, ք. 120:

303 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3438, ք. 5:

304 Նույն տեղում, ց. 6, գ. 5, ք. 22:

305 Նույն տեղում, ց. 12, գ. 382, ք. 1-2, 5-6:

306 «Նոր-Դար», 1899, № 30, էջ 2:

307 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1226, ք. 1-2:

308 Նույն տեղում, ք. 4, 14:

309 «Закавказье», 1909, № 154, с. 3.

310 «Մշակ», 1910, № 38:

311 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1226, ք. 20, 23:

1912 թ. Վարդան Միրզոյանը եկեղեցու բակում ուխտավորների համար իր միջոցներով կառուցել էր 2 սենյակ³¹²:

Նույն թվականին որմնադիր Գ. Գևորգյանը ցանկություն էր հայտնել իր տունը նվիրել Սբ. Կարապետ եկեղեցուն³¹³:

1913 թ. երեցվոխն էր բժիշկ Գրիգոր Սարգսյան Օհանյանը³¹⁴:

Եկեղեցին փակվել է 1923 թ. մայիսի 4-ին և հարմարեցվել ակումբի³¹⁵: Նույն թվի օգոստոսի 23-ին քանդել են եկեղեցուն կից «գմբեթածև» մատուռը, որն օծված էր Սբ. Աստվածածնի անվամբ («...արդեն սկսել են եկեղեցու գմբեթների քանդելը: Քանդեցին նոյնպես եկեղ. կից Սբ. Ածածնայ մատուռը»)՝³¹⁶: Բուն եկեղեցին էլ քանդել են 1924 թ. քաղաքային իշխանությունների կարգադրությամբ. «...Սղնախի Սբ. Կարապետ եկեղեցին համարեայ թե ամբողջովին քանդել են. առաջին պատը, բեմի կողմից մինչև վերջը քանդուած է, կաթուղիկէն, կամարները և գաւիթները նմանապէս. մնում է միայն երեք պատեր, այն էլ քանդուած են»³¹⁷:

Սբ. Կարապետ եկեղեցու զանգակատուն. 1868 թ. մի վավերագրից պարզվում է, որ խիստ քայքայված և վթարային վիճակում էր Սբ. Կարապետ եկեղեցու զանգակատունը, որն անգամ ենթակա չէր վերանորոգման: Նախատեսել էին կառուցել նոր զանգակատուն՝ ծախսելով 3461 ռուբլի³¹⁸: 1869 թ. դրվել էր նոր զանգակատան հիմքը³¹⁹:

1870-80-ական թվականների մի շարք վավերագրերից տեղեկանում ենք մեծածախս զանգակատան կառուցման պատմությունը³²⁰: Այսպես, 1872 թ. մայր եկեղեցու ողջ եկամուտը սպառվել էր. «...նորոգ կառուցանելի զանգակատան սբ. Կարապետ եկեղեցույն Հայոց Սղնախի ...»³²¹, իսկ 1874 թ. Սբ. Կարապետ եկեղեցու եկամուտները ծախսվել էին զանգակատան 4-րդ հարկի կառուցման համար³²²: 1875 թ. շինարարությունը գլխավորող երեցվոխը, չվերջացնելով աշխատանքները, խրվել էր պարտքերի մեջ³²³: Լրագրային մի հաղորդումից դարձյալ տեղեկանում ենք, որ շուրջ 10 տարի տևած (1869 թ.) շինարարական աշխատանքները երեցվոխ Նովսեփ Ամիրխանյանի հոգացողությամբ և 5034 ռուբ. 54,5 կոպ. ծախսով հաջողությամբ ավարտվել էին 1878 թ.³²⁴:

312 «Մշակ», 1912, № 182, էջ 3:

313 Նույն տեղում, № 27, էջ 3:

314 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1226, ք. 35:

315 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, ք. 10:

316 Նույն տեղում: Նակ՝ ֆ. 57, ց. 3, գ. 525, ք. 56:

317 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, ք. 105:

318 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5496, ք. 1:

319 Նույն տեղում, գ. 5496, ք. 20:

320 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, ք. 217-218, ֆ. 56, ց. 1, գ. 5496, ք. 15:

321 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5496, ք. 9:

322 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, ք. 114-115:

323 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3866, ք. 92:

324 «Մշակ», 1878, № 91, էջ 2:

1885-ին արդեն Սղնախից հոգևոր իշխանությամբ զեկուցել էին. «...որպես երևի ի յայտարարութենէ գործակալին Սղնախի ի 12 սեպտեմբերի 1878 ամի համարաւ 48՝ զանգակատունն սբ. Կարապետ եկեղեցույ Սղնախի կառուցեալ է արդէն ի 1869 ամի թոյլտուութեամբ և համահաճ խորհրդով բազմաթիւ ժողովրդականաց քաղաքին»³²⁵:

1886 թ. հունիսի 14-ին աստիկ քամին վնասներ պատճառելուց զատ «...վայր գցեց նաև Ս. Կարապետ եկեղեցույ զանգակատան ոսկեգոծած գեղեցիկ խաչը իրեն քարէ պատուանդանով, որի ծանրութիւնը 25-30 պուղ են ասում...»³²⁶: Վերականգնման համար ենթադրվող ծախսը կազմել էր մոտ 1000 ռուբ.³²⁷: Խաչը վերստին տեղադրելու գործը հանձն էր առել մոսկվայաբնակ սղնախցի Գևորգ Լիանոզյանը: Ի դեպ, տարիներ առաջ այդ խաչը հենց նա էր ընծայել, ուստի չզրացավ հարկավոր գումարը (400 ռուբ.) տրամադրել՝ խաչը վերականգնելու համար³²⁸: Խաչի վերականգնումը կատարվել էր անմիջապես³²⁹:

Դարավերջի ականատես Էմմանուել քահանա Նազարյանցի վկայության համաձայն՝ այդ զանգակատունը բավական շքեղ ու բարձր կառույց էր. «Առանց այն էլ քաղաքի բարձր տեղում կանգնած աւագ եկեղեցու՝ մօտ 8 սաժէն (17 մ – Ս. Կ) բարձրութիւն ունեցող զանգակատունը իւր փառահեղ դիրքով ասես թէ իշխում է ամբողջ քաղաքի վրայ...»³³⁰:

Հայտնի է, որ 1915 թ. Սբ. Կարապետ եկեղեցու զանգակատունը վերստին վերանորոգելու անհրաժեշտություն էր առաջացել³³¹:

Քահանա. Տեր Մովսես ավագ քահանա. հիշվում է 1852 թ.³³²:

Ավագ քահանա *Ստեփանոս Տեր-Ստեփանոսյան.* ծնվել է 1824 թ., սկզբնական կրթությունն ստացել է հոր՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի հայոց լեզվի և կրոնի ուսուցիչ Տեր-Պողոսի մոտ, 1840-ական թվականներին սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1852-ին՝ Չաքաքալայի համար ձեռնադրվել է քահանա, ապա տեղափոխվել Սղնախ և 46 տարի քահանայագործել այստեղ: Մեծ է նրա ավանդը Սղնախի դպրոցի բացման գործում (1860 թ.): Իր բեղուն գործունեության համար արժանացել է օրհնության բազմաթիվ կոնդակների: Վախճանվել է 1898 թ.³³³:

Սրապիոն Տեր-Բաղդասարյան Տեր-Հովհաննիսյանց. ծնվել է 1838 թ. Սղնախում, սովորել

325 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5496, ք. 20:

326 «Նոր-Դար», 1886, № 100, էջ 1:

327 Նույն տեղում:

328 «Արձագանք», 1888, № 8, էջ 95:

329 «Մշակ», 1888, № 51, էջ 2:

330 «Նոր-Դար», 1899, № 30, էջ 2:

331 «Մշակ», 1915, № 196, էջ 3:

332 ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 5, ք. 22:

333 «Նոր-Դար», 1898, № 35:

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1864 թ. մարտի 29-ին ձեռնադրվել է քահանա և ծառայել նախ Սղնախի Սր. Կարապետ եկեղեցում, ապա՝ Թիֆլիսի Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում, որից հետո կրկին քահանայագործել է Սղնախի նույն եկեղեցում առնվազն մինչև 1876 թ.³³⁴:

1923 թ. մայիսին արդեն չգործող Սր. Կարապետ եկեղեցու ավագ քահանա *Արշակ Տեր-Ստեփանյանը* դիմել էր Վրաստանի Հայոց եկեղեցական խորհրդին՝ իր և ձերբակալված *Հարություն քահանա Տեր-Նիկողոսյանի* ծխերը Սր. Գևորգ եկեղեցու միաբանությանը միավորելու խնդրանքով³³⁵: Նույն թվականի հունիսի 16-ին խնդրանքը բավարարվել էր³³⁶:

Սր. Գևորգ եկեղեցի. կառուցվել է 1793 թ. «Ի քահապն Սղնախ, ի մէջ պարսպի գոյ եկեղեցի մի առանց յարկի, միմեայն գործունս քարի և բռամբ կառուցեալ յանուն Սրբոյն Գեորգեայ յամի 1793, որոյ առաստաղն է եղեգնածածկ, արդեամբ հասարակութեան»³³⁷: Իր գոյության ընթացքում Սր. Գևորգ եկեղեցին ենթարկվել է մի շարք նորոգումների: Այսպես, 1851 թ. երեցփոխ Հովսեփ Մխիթարյանի օրոք կատարվել են 820 ռ. 39 կոպ. գումարի աշխատանքներ³³⁸: Այլ վավերագրերից տեղեկանում ենք, որ 1861 թ., առանց հոգևոր իշխանությունների թույլտվությունը ստանալու, Սր. Գևորգ եկեղեցու շուրջը, 18 սաժեն տարածությունում, կառուցել էին պարսպապատ և ուխտավորների համար սենյակներ³³⁹: 1864 թ. երեցփոխ Գավիթ Հարությունյանը խնդրել էր «...թոյլ տալ նմա շինել զվեղար նախեղակ զանգակատուն նոյն եկեղեցոյ...»³⁴⁰: Այդ աշխատանքների համար նախատեսվել էր եկեղեցու գումարներից ծախսել 1000 ռուբ. արծաթե դրամ:

1902 թ. Սր. Գևորգ եկեղեցու երեցփոխ էր ընտրվել Վ. Տեր-Հակոբյանը, որը 1909 թ. վերստին ընտրվել էր նույն պաշտոնում³⁴¹:


1911 թ. դրությամբ Սր. Գևորգ եկեղեցուն են պատկանել պարսպից դուրս գտնվող որոշ ազատ հողատարածություններ³⁴²:

1915 թ. եկեղեցին կարոտ էր նորոգության³⁴³:

Եկեղեցին փակվել է 1924 թ. հունվարի 22-ին և հարմարեցվել ակումբի³⁴⁴:

Ճարտարապետություն. Սր. Գևորգ եկեղեցին ցայսօր կանգուն է և, իրավամբ, Սղնախ քաղաքի ճարտարապետական զարդն ու խորհրդանիշը կա-

րող է համարվել: Այն բավականին յուրատեսակ հորինվածքով, ներքուստ միանավ, արտաքուստ եռանավ բազիլիկների բնորոշ ծածկերով թաղակապ կառույց է: Արտաքին չափերն են՝ 15,45 x 9,70 մ: Արևելյան կողմում կիսաշրջանաձև եզրագծով խո-



ՄՂՆԱԽ. Սր. Գևորգ եկեղեցու հասակագիծը

րանից հարավ և հյուսիս կրկնահարկ ավանդատներն են: Հյուսիսային պատի մեջ պահպանվում է մկրտարանի ավազանը: Որմերին նկատվում են հայերեն մակագրություններով կիսաեղծ որմնակարներ: Ունի երեք մուտք (արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում): Կառուցված է աղյուսով, անմշակ քարերով ու կրաշաղախով: Կղմինդրածածկ երկլանջ ծածկերի կենտրոնում կանգուն է սրածայր վեղարով ավարտվող փոքրիկ զանգակատունը: Գլխավոր և քաղաքի բոլոր ծայրերից տեսանելի բարձրաշեն զանգակատունը գտնվում է եկեղեցուց մի քանի մետր հարավ-արևելք՝ պարսպապատին կից: Վերջինս ունի կամարակապ դարպաս: Ի դեպ, Սր. Գևորգ եկեղեցուց հեռու չէ այն տունը, ուր ծնվել է մեծանուն նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը:

Վիմագիր.

Եկեղեցու ներսում մի տապանաքարի վրա կա վրացագիր արձանագրություն.

...ქ საფლავსა შინა ვარ შორვანგელი /
 Եղբոր ? յճցელი სააკას შვილი Եր ճրոქյուր-
 ვისა ჩაօკითხოს შგნდობის ბძანეთ ქს
 (յրօնօլ) շք (485+1312).

Թարգմ. Գերեզմանի ներքո ամփոփված են Շիրվանցի ոսկերիչ Մահակի որդի Տեր-Գրիգորովս, կարդացողաց խնդրեն ասել ողորմի, թիվ 1797:

Եկեղեցական իրեր. այստեղ պահվող բազմաթիվ զարդերի, անոթների ու այլ իրերի թվում եղել են նաև արձանագիրներ³⁴⁵: Դրանք են՝

Արծաթե սկիի՝ մաղվանով. պատվանդանին՝

Ես Սղնախեցի Սամուլեանց Պապի կողակից

334 ՀԱԱ, ֆ. 56, ց. 12, գ. 332, թ. 1-2:

335 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 463, թ. 38:

336 Նույն տեղում, թ. 46:

337 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 32:

338 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3438, թ. 5:

339 Նույն տեղում, գ. 4152, թ. 7-8:

340 Նույն տեղում, գ. 5218, թ. 1:


341 «Закавказье», 1909, № 154, с. 3.

342 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 107, 114:

343 «Մշակ», 1915, № 196, էջ 3:

344 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, թ. 10:

345 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2569, թ. 32:



ՄՂՆԱՆ. Սբ. Գևորգ եկեղեցուն հարող թաղամասը, եկեղեցու արևելյան ճակատը, փոքր զանգակատունը, եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և որմնանկար եկեղեցու հյուսիսային պատին

Գարեջանս ընծայեցի Սղնախու բերդի ՚ի դռուն Սր. Գէորգեայ եկեղեցոյն զայս սկիհս յիշատակ է, ով որ ձեռնամուխ լիցի տրա Յուդայի բաժին առցէ, ամէն. մսխալ հարիւր ութսուն, բուին ՌՄԾԳ (1805):

Արծաթե խաչ, պատվանդանին վրացերեն գրված է եղել.

Ես Յոհաննէսի որդի Թաթօն հանդերձ իմով եղբարքք:

Խաչ. «...ընդ մէջ խաչին գետեղեալ է շուշայ մի ընդ, որով եղեալ գոյ... մասն Սրբոյն Գէվորքայ, շուրջ գորով գրեալ ՚ի վերա փոքրի բողոյ»

Ս(ուր)բ Գէվորքայ մասունքն է:

Արծաթ խաչ, պատվանդանին վրացերեն.

Ընծայեցի ես Սարգսի որդի Կար(ա)պ(ե)տն Սղնախու ամրուցի Ս(ր)բ(ոյ)ն Գէորգեայ եկ(ե)ղ(ե)-ց(ոյ)ն վասն յիշատակ ինձ:

Արծաթե բաժակաման. վրան՝ վրացերեն.

Ընծայեցի Մօսինի որդի Ասատուրս և կինն իմ Սալօմէն Սղնախու Ս(ր)բ(ոյ)ն Գէորգեայ եկ(ե)-ղ(ե)ց(ոյ)ն վասն բարեխօս լինի մեր. մսխալ եօթանասուն:

Արծաթե գինու քաս. վրան՝ վրացերեն.

Ես Ջավախեանց Այվազի որդիք՝ Թաթուլ և Մովսէսս, ընծայեցաք բերդին Ս(ր)բ(ոյ)ն Գէորգեայ, վ(ա)ս(ն) յիշատակ ննջեցելոցն մերոց և վ(ա)ս(ն) առողջութեան կենդանեաց. մսխալ երեսուն և եօթն. բուին վրաց 504 (1816):

Քահանա. Տեր Բարսեղ Տեր-Մուսայեյանը քահանայագործել է 1778-1818 թթ. ընթացքում: Ծնվել է 1738 թ., ձեռնադրվել 1778-ին՝ Թիֆլիսում Աղվանից Իսրայել կաթողիկոսի կողմից³⁴⁶:

1800 թ. Հաղբատի Սարգիս արքեպիսկոպոսի կողմից Թիֆլիսում Սղնախի համար քահանաներ էին ձեռնադրվել ազուլիցի *Տեր Հարություն Նիկողոսյանը* և շուկավերցի *Տեր Հովհաննես Թեմուրազյանը*, որոնք հովվել են առնվազն մինչև 1818 թ.³⁴⁷: Նույն թվականին եկեղեցու տիրացուներից էին Տեր Հարությունի որդին՝ Պետրոսը և Տեր Հովհաննեսի որդին՝ Թոմասը:

Ավագ քահանա *Տեր Ավետիք Տեր-Մուսայեյանց*, հիշվում է 1805-1818 թթ.: Ծնվել է 1778 թ., ձեռնադրվել 1805-ին Թիֆլիսում Կ.Պոլսի պատրիարք Գրիգոր արքեպիսկոպոսի կողմից³⁴⁸: 1818 թ. եկեղեցու տիրացուների թվում հիշատակվում է նաև Տեր Ավետիքի որդին՝ 10-ամյա Արիստակեսը:

Հայտնի է, որ 1912 թ. սղնախաբնակ հայերի որոշմամբ Սր. Գևորգ եկեղեցու երկու քահանաներից

Հարություն Տեր-Նիկողոսյանն իր ծխով տեղափոխվել է Սր. Կարապետ եկեղեցի³⁴⁹:

1924 թ. հիշվում է քահանա *Հովսեփ Առաքելյանցը*³⁵⁰:

Երրորդ եկեղեցի. վավերագրերում այս եկեղեցու մասին առաջին վկայությանը հանդիպում ենք 1796 թ.³⁵¹: 1822 թ. վավերագրերից մեկում կարդում ենք. «Ձեր առ իս գրութեան ի 26 ապրիլի սոյն 1822 ամի յաղագս շինութեան եկեղեցոյն հիմնարկելոյ ի պարուն Գօկինէն յառաջ քան զբազում ամս և արգելմամբ աթենայի վանից վարդապետին անկատար մնացելոյ մինչև ցայժմ, ընկալեալ յոյժ բաւականութեամբ և որպէս հարկատուրն էր ի մասին նշանակեալ արգելմանցն՝ ահա ընկալեալ ի նորին գերագանցութենէ Ռօսման Իւանիչ Խոզէն տէր կուպէրնատօրէն և կաւալերէն գերկու օրինակս, յառաջինն յինքենէ գրեցելոյն առ գրլխատր կառավարիչն ի գաստուն յամի 1819 մայիսի 3, համարաւ 1362 յաղագս հրաման տալոյ Հայոց Սղնախու վերջացուցանել զշինութիւն հիմնարկուեցն յիշեալ եկեղեցոյն: Եւ երկրորդն ի գլխատր կառավարչէն գրեցելոցն առ ինքն ի 27 մայիսի այն ի 1819 ամի համար 1725, ի պատասխանի գրեցելումն յաղագս նոյն սկզբնատրեալ շինութեանց կատար ունակելոյն...»³⁵²:

Չորրորդ եկեղեցի. 1818 թ. հիշվում է մի տուն, որն օծված է եղել Սր. Աստվածածնի անվամբ և ծառայել որպէս ծխական եկեղեցի (տունը պատկանում էր Հովհաննես Փարեմուզյանցին): 1842 թ. մարտի 13-ին վերոհիշյալ տան տեղում Սր. Աստվածածնի անվամբ եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալու խնդրանքով սղնախցիները դիմել են հոգևոր իշխանություններին (ի դեպ, տարածքը կազմում էր 17,5 x 15 սաժեն (37,3 x 32 մ)³⁵³, բայց հողամասի շուրջ ծագած վեճերն ավարտվել էին եկեղեցին կառուցելու ծրագրերի ձախողմամբ)³⁵⁴:

Եկեղեցական իրեր. 1818 թ. այստեղ պահվելիս են եղել եկեղեցական բազմաթիվ իրեր և մասունքներ: Վերջիններիս թվում եղել են նաև արձանագրվածներ³⁵⁵: Դրանք են՝

Արծաթե սկիի մազմանով, պատվանդանին.

Յիշատակ է արծաթայ սկիհս Սր. Ա(ստուա)-ծածնայ եկեղեցոյ վասն հանգուցեալ առն իւրոյ Ջավախ Սաթօյին հոգոյն և հոգոյն իւրոյ Մարիամին. ի թուջ ՌՊԵ (1805):

Չեռքի արծաթե խաչ, պատվանդանին վրացերեն.

Չայս խաչս ընծայեաց Սղնախու Ա(ստուա)-ծածնայ Ս(ր)բ(ոյ) եկեղեցուն Չունիանի որդի Նօ-

346 Նույն տեղում, թ. 33:

347 Նույն տեղում:

348 Նույն տեղում:

349 «Մշակ», 1912, № 182, էջ 3:

350 ՀԱԱ, ֆ. 57, գ. 3, 4, 463, թ. 38:

351 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, 4, 447, թ. 1:

352 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, 4, 3309, թ. 3:

353 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, 4, 3308, թ. 4:

354 Նույն տեղում, թ. 8:

355 Նույն տեղում, գ. 2569, թ. 37:

նին հանդերձ իւրոյ եղբարք: Թուին վրաց 492 (1804):

Ավետարան.

Աւետարանս այս յիշատակ է Փարէմուզեան Մէլքոյի կողակից Մարիամին:

Սբ. Գևորգի պատկեր. «Մէկ արծաթեայ և չօքուրքմայ պատկեր սրբոյն Գևորգեայ յարմարեալ ի վերա տախտակի միտոյ, ընս ստորի գրեալ է»:

Յիշատակ Մէրաբին և Մատինին:

Սբ. Աստվածածնի փոքր պատկեր. «...շուրջ զգլխով չորուրքմայ և արծաթապատ, որոյ ի վերա թագին գոյ յօրինեալ գերիս սաստայ ակունք և ընդ ստորի գրեալ է»:

Յիշատակ է Փարէմուզին հանդերձ որդովք իւրովք:

Հինգերորդ եկեղեցի. 1823 թ. հիշվում է նորաշէն մի եկեղեցի³⁵⁶. «...վէճ յարոյց ընդ դէմ հայոց քաղաքիս՝ յաղագս նոր եկեղեցոյս պատկանեալ գետնոյն, ուր եկեղեցին մեր կայ շինեալ, որ է հին հանգստարանն հայոց, սեփական տեղի եկեղեցոյս...»³⁵⁷:

Հայոց գերեզմանատանը կառուցված այս եկեղեցին այժմ էլ գոյութիւն ունի: Կանգուն է:

Էջմիածնապատկան կալվածք. Էջմիածնի իրավասութեան ներքո էր գտնվում Սղնախ քաղաքի կրպակներից մեկը, որի նորոգման գործը 1858 թ. ստանձնել էր սղնախցի Հովհաննես Եմիկոյալյանը, սակայն աշխատանքները ձգձգվել են³⁵⁸: 1872 թ. այն դեռևս նորոգված չէր³⁵⁹:

Գերեզմանոցներ. Սղնախի հայոց գերեզմանատները մի քանիսն էին: Հայտնի է, օրինակ, որ 1720 թ. հայ Դավիթը վրաց Սբ. Ստեփանոս եկեղեցու մոտ գտնվող հողամասը գնել էր այդ տեղը հայոց գերեզմանատան վերածելու նպատակով: Վաճառողներն էին վրացիներ Դումաշվիլի Գոգին, Գոգիի որդին և ազգական Չաքարեն: Գնման պայմանաթուրը շարադրել և որպէս վկա հանդես էր եկել Սիրգաանցի Հովհաննեսը³⁶⁰: Ի դեպ, այդ գերեզմանատունը գտնվում էր «...քաղաքից դուրս բաւական բարձր բլրի վրայ, ճանապարհ չունէր և այդ պատճառով շատ դժարութիւնով էին բարձրացնում այդ տեղ ննջեցեալներին...»³⁶¹: Ավագ քահանա Արշակ Տեր-Ստեփանյանցի հորդորների ու ջանքերի շնորհիվ ճանապարհի թերութիւնները վերացվել էին և երկու կողմերում ծառեր տնկվել³⁶²:

1897 թվականին 2-րդ կարգի վաճառական Ծղալուր Դորդանյանը «...ի նկատի ունենալով Սղնախ քաղաքի հայոց գերեզմանատան սուղ տարա-



ՄՂՆԱՄ. բնակելի շէնք (ԺԹ դարի վերջ) Սբ. Գևորգ եկեղեցուն հարող թաղամասում

ծութիւնը՝ գնել է նորերս նրան կից մի հողաբաժին 600 քառակ. սաժ. տարածութեամբ և նուիրել է Սղնախի գերեզմանատան վարչութեանը՝ այն պայմանով, որ յիշեալ հողաբաժնի վրայ ննջեցեալները թաղուին անվարձ»³⁶³:

Գերեզմանոց կար նաև Սբ. Կարապետ եկեղեցու բակում, որտեղ հողարկավորվող հանգուցյալի հարազատները պարտավոր էին հայոց դպրոցին դրամական նվիրատվություն անել: Այդպես էր վարվել, օրինակ, Լիանոզյանը, որն իր որդուն այդ գերեզմանատնում ամփոփելուց հետո դպրոցին նվիրել էր 1000 ռուբ.³⁶⁴:

Վիմագիր. Սղնախի գերեզմանատան մուտքի մոտ կան արձանագրված հետևյալ տապանաքարերը.

Տապանաքար (վրացերեն).

სავლანაპარ მღვდარე ვარ ძველი ერევნელი დოღანასძე | ჳონი ანტონ უდ-როთ სიკვდილმან აღმტაცა მხილველ-ნო შენდობა ბბანეთ ხეკვ (1824).

Թարգմ. Ներքո. տապանիս է հին երևանցի Դուանի որդի ճոն Անտոնի. տարածամ մահը տարավ, տեսնողներ ողորմի հրամցեք, թվ. 1824:

Տապանաքար (ռուսերեն, ապա հայերեն).

Աստ հանգչի մարմին Գրիգոր Լուարսաբեան Մելիք | Բեգլարեանի, ծնեալ 15 մարտի 1863 ամի. վախճանեալ 27 մարտի 1894 ամի:

Տապանաքար (հայերեն և վրացերեն).

Միքայել Մայաջանեանց | Լուծեա սմսեա ցան-օսեցեցեքս ցեթո | միեցեջ Թաջանուցոս

356 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1641, թ. 1:
357 Նույն տեղում, թ. 6:
358 ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 10, թ. 5:
359 Նույն տեղում, թ. 25:
360 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 1, վավ. № 9:
361 «Տարագ», 1893, № 30, էջ 484:
362 Նույն տեղում: Տե՛ս նաև՝ «Տարագ», 1893, № 34, էջ 515:

363 «Արձագանք», 1897, № 3, էջ 2: Այդ մասին տես նաև՝ «Новое обозрение», 1897, № 4475, с. 2.
364 Արամանեանց Բարսեղ, նշվ. հոդվ., էջ 449:



ՍՐՆԱԽ. նկարիչ Գ. Բաշինջադյանի տունը

Միջոցառումներ օր(օտո) Մյենգլոձա թղոճեթոտ Յարճոճոցճեթո 1879 Վ. Մոճոթոճոն 40 Վեթեճ.

Թարգմ. Տապանի ներքո հանգչում է Միքայել Սա-յաջանովի մարմինը, ընթերցողներ ողորմիի արժա-նացրեք, վախճանվեց 1879 թ., 40-ամյա հասակում:

Զեռագրեր. Մ. Մաշտոցի անվան Մատենադա-րանում պահվում են Սղնախ քաղաքում ստեղծված ոչ հին ձեռագրեր: Դրանցից է «Նամակք Գրիգորի և Սիմեոնի Լոռու Մելիքեանց առ միմեանս» գրված 1819-41 թթ. ընթացքում³⁶⁵: Վրացատառ հայերենով մի ավետարան էլ գրվել է 1853 թ.³⁶⁶ Քայխոսրով Խի-զանովի ձեռքով³⁶⁶:

Վրացական եկեղեցի. վրաց ազգաբնակչությունը Սղնախում ևս ուներ իր եկեղեցիները: Դրանցից հնագույնը հիշվում է դեռևս ԺԸ դարի սկզբին՝ Հերակլ Բ-ի օրոք և կոչվում է Մր. Ստեփանոս³⁶⁷: 1849 թ., երբ վրացիները քաղաքում խիստ փոքրաթիվ էին, այդ ե-կեղեցին նկարագրված է հետևյալ կերպ. «Տունք Վրաց են 12 թուով, և ունին զմի փոքր եկեղեցի յա-նուն սրբոյն Ստեփանոսի»³⁶⁸: Հետագայում քաղաքի ուղղափառները (վրացիներ, հույներ, ռուսներ) կա-ռուցեցին ևս մի եկեղեցի: Հայտնի է նաև, որ մինչև 1878 թ. քաղաքում ուղղափառ (վրացական) եկեղեցի չի եղել: Փաստորեն, եթե արվարձանում գտնվող Մր. Ստեփանոս հին եկեղեցին էլ նկատի առնենք, ապա 1878 թ. Սղնախում կառուցվել է վրացական 2-րդ ե-կեղեցին³⁶⁹: Ուշագրավ է, որ մինչև 1884 թ. քաղաքում չի եղել նաև ուղղափառ գերեզմանոց³⁷⁰:

365 «Յուցակ Ձեռագրաց», Երևան, 1970, հ. Բ, էջ 905:

366 Նույն տեղում, էջ 570:

367 **Бегнашвили Л.**, նշվ. աշխ.:

368 «Բագնավեպ», 1851, № 20, էջ 316:

369 «Кавказ», 1898, № 140, с. 3.

370 Նույն տեղում:

Հայտնի է, որ 1923 թ. ապրիլի 30-ին փակվել էր նաև քաղաքի վրաց Մայր եկեղեցին³⁷¹:

ՎԱՔԻՐ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 2,5 կմ հյուսիս:

Հայերը Վաքիրում. նրանց ներկայությունը վկայված է 1802 թ.³⁷²: Հայերի թվաքանակը միշտ էլ արձանագրվել է միացյալ գյուղերի հետ (Անագա, Կարդանեխ, Բակուրցիխե) և անհնար է որոշել, թե դրանցից յուրաքանչյուրում որքան հայ կար: 1841 թ. հիշվում է վաքիրցի Գ. Առաքելյանը³⁷³: 1874 թ. գյուղի 3851 բնակիչներից հայեր էին 78-ը³⁷⁴: 1914 թ. Վաքիրն ուներ 5482 բնակիչ, որտեղ, հասկանալի է, հայերը փոքր թիվ էին կազմել:

Վաքիրն երբևէ եկեղեցի կամ քահանա չի ունե-ցել: Ինչպես վերև ասվեց, 1840-ին Անագայի Մր. Գևորգ եկեղեցու կառուցման աշխատանքները գլխավորել են Չաքարիա Խաչատրյանը և Մովսես Դավթյանը³⁷⁵:

ՏԻԲԱԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևելք:

Հայերը Տիրաանում. այստեղ հայ գաղթական-ների հաստատվելու ժամանակի մասին ստույգ տե-ղեկություններ չունենք: Մ. Բարխուտարյանը նշում է, որ գյուղն իր անունն առել է Չաքարալա քաղաքի մոտակայքում գտնվող Դիպան գյուղա-տեղից, որի հայ բնակիչները Կախեթ են գաղթել՝ ԺԸ դարի կեսերին՝ հիմնելով ներկայիս Տիրաանը. «Դիպան աւերակ գիւղատեղի, որ գտնուում է Դառի արևելյան կողմում: Գիւղիս հայ բնակիչներն ան-ճարացեալ լեկզիների անընդհատ աւերումընթե-րից, փոխադրում են Սղնախի կողմն և հիմնում մի գիւղ Դիպան անուն՝ չուգելով մոռանալ իւրեանց նախնի գիւղի ցանկալի անունը...»³⁷⁶: Եթե այս տե-ղեկությունը ճիշտ է, ուրեմն Տիրաանում ԺԸ դարի կեսերին արդեն պետք է հայեր եղած լինեն: Վավե-րագրերում, սակայն, նրանց ներկայությունը վկայ-ված է միայն 1802 թ-ից³⁷⁷: 1874 թ. գյուղն ուներ 1157 բնակիչ, որից 70-ը հայեր էին³⁷⁸: 1908 թ. հայերի թի-վը գյուղում զգալիորեն նվազել էր և կազմել 18 տուն՝ 51 շնչով (30 ար. և 21 իգ.)³⁷⁹, իսկ 1912-ին կար 20 տուն³⁸⁰: 1914 թ. Տիրաանն ուներ 1988 բնակիչ³⁸¹:

371 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 525, ք. 31:

372 ԱԿԱԿ, տ. 1, с. 474.

373 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 884, ք. 1:

374 «Кавказский календарь на 1915 г.», с. 118.

375 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 810, ք. 46:

376 **Բարխուտարյանց Մակար**, Աղուանից երկիր և դրացիք,

Թիֆլիս, 1893, էջ 272:

377 ԱԿԱԿ, տ. 1, с. 474.

378 «Кавказский календарь на 1886 г.», с. 118.

379 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 22:

380 «Մշակ», 1912, № 182, էջ 3:

381 «Кавказский календарь на 1915 г.», с. 188.

Պարզ է, որ եթե այնտեղ հայեր եղել են, ապա փոքր թիվ են կազմել:

Եկեղեցի. Տիբասանի սակավաթիվ հայերը գուրկ են եղել եկեղեցուց, հաճախ նաև քահանայից, էլ չենք խոսում դպրոցի մասին: Եկեղեցի ունենալու խնդրով տեղաբնակ հայերը սկսել էին զբաղվել միայն Ի դարի սկզբին. «Տիբասանի գիւղում հայոց եկեղեցի կառուցանելու հարցը առաջ է գնում: Արդէն պատրաստ է եկեղեցու պլանը, որ ձրիաբար կազմեց երկրաչափ Չ. Գեորգեան: Գործի նախաձեռնող Գրիգոր քահանայ Մատինեան շուտով առաջարկելու է պլանը Թիֆլիսի կոնսիստորիային»³⁸²: 1900 թ. մեկ այլ հաղորդումից տեղեկանում ենք, որ Թիֆլիսի նահանգական վարչության շինարարական բաժինը թերի է գտել և ետ է ուղարկել եկեղեցու նախագիծը: Վիճակը բարդացել էր, քանզի Չ. Գեորգյանը խոստովանել էր, որ անկարող է լրաց-

նել աշխատանքը, ուստի պետք է գտնել գործի շարունակությունը հանձն առնող մեկ այլ մասնագետ³⁸³: Ի դեպ, եկեղեցին նախատեսված էր կառուցել քարաշեն՝ մինչև 2000 ռուբ. ծախսով: Այն պետք է ծառայեր ոչ միայն Տիբասանի, այլև մերձակա գյուղերում ցրված փոքրաթիվ հայ բնակիչներին³⁸⁴: Շուտով գտնվեց անհրաժեշտ լրացումներն ու շտկումներն իրականացնող մասնագետը՝ ճարտարագետ Ավշարյանը³⁸⁵: Կառուցվելիք այս եկեղեցու հետագա ճակատագիրը մեզ անհայտ է:

Գերեզմանոց. այն հանգամանքը, որ 1913 թ. ձմռանը վախճանված տիբասանցի Սիմեոն Սոմխյանին թաղել էին Նաստմխարի եկեղեցու շուրջը տարածված գերեզմանոցում, ենթադրել է տալիս, որ Տիբասանի հայ համայնքը սեփական գերեզմանոց չի ունեցել³⁸⁶:

382 «Մշակ», 1900, № 78, էջ 3:

383 Նույն տեղում, № 193, էջ 2:

384 Նույն տեղում:

385 Նույն տեղում, № 195, էջ 2:

386 Նույն տեղում, 1913, № 184, էջ 3:

ԲԵԼՈՎԱՆԻ ՇՐՋԱՆ

Գտնվում է Մեծ Կովկասի լեռնաշղթայի ջրբաժան գծի և Ալազան գետի միջև՝ Ադրբեջանի Հանրապետության հյուսիսարևմտյան կողմում: Սահմանակից է Ջաքաթալայի, Լազոդեխի և Սդնախի շրջաններին, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության Դաղստանի Ինքնավար Հանրապետությանը: Հայերի ներկայությունը փաստված է շրջկենտրոն Բելոկանում և մերձակա լեզգիաբնակ մի քանի գյուղերում:

ԲԵԼՈՎԱՆ (ԲԵԼԱԶԱՆ)

Հայերը Բելոկանում. ծագումով ազուլիսցի հայ վաճառականների փոքրաթիվ մի խումբ այստեղ հաստատվել է ԺԹ դարի կեսերին: 1878 թ. շուրջ 2000 լեզգի բնակչություն ունեցող Բելոկանում հայերի թիվը հասել է 20-ի¹: Դարավերջին գյուղի բացառապես վաճառականներից բաղկացած հայ համայնքի մասին ժամանակի մամուլը գրել է. «...այդտեղ կան նաև մի քանի տուն հայեր, որոնք եկած են մեծ մասամբ Ազուլիսից և նրա շրջակայ գիւղերից: Բնակիչների պարապմունքը գլխաւորապէս երկրագործութիւնն է... Բելաքանի հայերը պարապում են գլխաւորապէս վաճառականութեամբ,

ծախում են մանրունք և ճոթեղէն, պարապում են նաև ծխախոտի մշակութեամբ: Գիւղում չկայ հայոց եկեղեցի՝ այդ գիւղի հայերը Ջատկի ջրօրհնէաց տօներին գնում են Ջաքաթալա և Լազոդաղ տարուայ մնացած ժամանակներում... Շատ լաւ կլիմի, որ հոգևոր իշխանութիւնը մի շրջող հովիւ նշանակէ այս կողմերի ցրուած հայերին հովուելու համար, որովհետև բացի Բելաքանից կան նաև ուրիշ մի քանի լեզգի գիւղեր օրինակ՝ Դոբախչուլի, Կատէխ և այլն, որտեղ շատ թէ քիչ հայ վաճառականներ կան իրենց ընտանիքով»²:

Համայնքի վերաբերյալ այլ տեղեկություններ չունենք:

¹ «Մշակ», 1878, № 109, էջ 2:

² «Նոր-Դար», 1896, № 107, էջ 3:

ՉԱՔԱԹԱԼԱՅԻ ՇՐՋԱՆ

Գտնվում է Մեծ Կովկասի ջրբաժան գծի և Ալազան գետի միջև՝ Ադրբեջանական Հանրապետության հյուսիսում: Շրջկենտրոնը Չաքաթալա քաղաքն է: Մահմանակից է Ռուսաստանի Դաշնության Դաղըստանի Ինքնավար Հանրապետությանը, Վրաստանի Հանրապետության Դեղուփլիս-Շղարոյի շրջանին և Ադրբեջանի Հանրապետության Բելոկանի, Կախի շրջաններին: Միջնադարում մեծ մասամբ վրացաբնակ, ԺԷ դարից նաև թրքաբնակ (մուղալներ), ԺԸ դարից նաև մահմեդական բնակչություն ունեցող ներկայիս Չաքաթալայի շրջանում բնակվել են նաև հայեր:

ՉԱՔԱԹԱԼԱ

Պատմություն. շրջանի տարածքում պահպանված բազմաթիվ գյուղերի և գյուղատեղիների թվաքանակը, ինչպես նաև դրանցում կամ այլուր եղած կիսավեր կամ ավերակ վանքերն ու եկեղեցիները վկայում են, որ միջին դարերում և ընդհուպ մինչև ԺԷ դարի սկզբներն այդտեղ առկա է եղել քրիստոնյա հոծ բնակչություն, գերակշիռ մասով՝ վրացիներ:

ԺԷ–ԺԸ դարերում, իրար հաջորդած իրադարձություններով պայմանավորված, շրջանի բնակչության ազգային կազմը ենթարկվեց խոշոր փոփոխությունների: Նախ՝ Շահ-Աբասի կազմակերպած քրիստոնյաների բռնագաղթը Պարսկաստան և, ընդհակառակը. մահմեդականների վերաբնակեցումը վերջիններիս բնակավայրերում, ապա՝ մնացած քրիստոնյաների հալածանքը և բռնի դավանափոխումը հանգեցրել էին նրան, որ արդեն ԺԹ դարի սկզբներին, երբ տարածքը միացվեց Ռուսաստանին, տեղում քրիստոնյա բնակիչներ գրեթե չկային: Շրջանի մահմեդական բնակչությունը գլխավորապես բաժանվում է երկու մասի. մուղալներ¹, որոնք այստեղ են փոխադրվել Շահ-Աբասի հրամանով և ենգիլներ², որոնք ԺԸ դարում բռնությամբ մահմեդականացվել են Շաքիի խան Հաջի-Չելերու ձեռքով:

1 «Մուղալները (ադրբեջանական թաթարներ) բնակվում են Չաքաթալայի օկրուգի հյուսիսարևելյան մասում: Նրանք բռնագաղթեցվել են XVII դարում պարսից Շահ-Աբասի կողմից երկրի նվաճման ժամանակ այդտեղ ապրող քրիստոնյաների մեջ մահմեդականությունը արմատացնելու համար: Մուղալները, հաստատվելով գետեզերքներին ու հարթավայրերում, կազմավորեցին շատ գյուղեր...» («Յակաբաշե», 1912, № 206, c. 3):

2 Մահմեդականացած վրացիների՝ ենգիլների մասին ընդհանուր գաղափար կազմելու համար, թերևս, հետաքրքիր է ժամանակի մամուլում հրապարակված հետևյալ հաղորդումը. «Չաքաթալայի շրջակայ գիւղերի բնակիչները բոլոր

Ռուսական տիրապետության հաստատումով՝ Չաքաթալայի գավառում մեկընդմիջտ վերջ դրվեց կրոնական խտրականությանը: Բայց մահմեդական վրացիները ոչ միայն դարձի գալու ձգտումներ չդրսևորեցին, այլ, ընդհակառակը, Ի դարի սկզբին նրանք և մուղալները Թուրքիա փոխադրվելու ցանկություն էին հայտնել. «...տեղական մահմեդական ազգաբնակչության մի մասի մեջ նկատվում է ձգտումն թողնելու իրանց հայրենիքը և գաղթելու Թուրքիա»³:

1886 թ. Չաքաթալայի գավառում 88 գյուղ կար: Դրանք բաժանված էին 4 գյուղախմբերի. Կախի՝ 45 գյուղ, Ալիաբադի՝ 21 գյուղ, Ճար-Մուխախի՝ 16 գյուղ, Բելոքանի՝ 6 գյուղ: Միասին կազմում էին 14.534 ծուխ՝ 73.218 շունչ⁴:

Հայերը Չաքաթալայում. գավառում հայերի ներկայությունը դարերի պատմություն ունի⁵: Էջմիածնապատկան Թասմալուր գյուղի, Չագյան և Վարխիսան մահմեդականացած հայ գյուղերի,

մահմեդական են և պատկանում են սունի աղանդին: Այդ գիւղերից մօտ 15 մահմեդական վրացիներով են բնակեցրած, իրաքանչիւրը 300 մինչև 1500 տուն բնակիչներով: Ասացի, որ այստեղի վրացիները բոլոր մահմեդական են, բայց նրանցից ոմանք դեռ չեն մոռացել իրանց մայրենի լեզուն և խօսում են վրացերէն: Մրանք այնքան մոլեռանդ մահմեդական են, որ կօբուլետցիները կամ աջարցիները սրանց առջև ամենահամբերող ազգ են երևում: ...Մահմեդական վրացիները չեն բազմանում, այլ ընդհակառակն նրանց թիւը տարուց տարի նուագում է: Մի գիւղ, որ սրանից 20, 30 տարի առաջ 1600 տուն բնակիչներից էր բաղկանում այժմ հագիւ 500 տուն ունի ...: Կան տեղեր, օրինակ Կախ գիւղից մինչև Սղնախ, մօտ 140 վերստ տարածութեամբ, որոնք բոլորովին աւերակ և անայի դարձած գիւղօրայք են: Երևում է, որ այդ քանդված գիւղերի մնացորդները շատ հին են և վրացիներին էին պատկանում: Շատ անգամ մի խիտ անտառի գագաթում կը տեսնէք մի հին եկեղեցու աւերակ...» («Մշակ», 1877, № 55, էջ է):

3 «Մշակ», 1903, № 67, էջ 2:
4 «Նոր-Դար», 1888, № 144, էջ 3 (հաշվի մեջ չէր Կովախչուլ նոբաստեղծ գյուղը՝ 39 ծխով և 103 շնչով):

Կախ առևտրական ավանի և շատ այլ բնակավայրերի գոյությունն այդտեղ դրա վառ ապացույցն են: Բուն Ջաքարալա քաղաքում հայերի հաստատվելու ժամանակը համարվում է ԺԹ դարի սկզբները. «Քաղաքի բնակիչները բոլորն էլ գաղթականներ են՝ Ազուլիսից, Շուշուց, Մղնախից, Գանձակից և այլն և գաղթականությունը սկսուել է մոտաւորապես 1818 թից, երբ միայն մի քանի ընտանիք էին, իսկ այժմ հասնում է մօտ 300 տան, որոնցից 200-ի չափ հայեր են, իսկ մնացածը ռուսներ, վրացիք, լեհեր, իսկ մահմեդականներ քաղաքի մէջ չը կան, բացի մի քանի ծառայողներից և վաճառականներից»⁶:

Առևտրական գործունեություն ծավալելու տեսակետից Ջաքարալայի դիրքը սկզբից ևեթ ձգել է այդ ոլորտի շատ հայ գործարարների: ԺԹ-Ի դարերի ընթացքում այս երևույթն այնքան է խորանում, որ Ջաքարալան իրավամբ ձեռք է բերում «հայաքաղաքի» բնութագիր: Վիճակագրական աղբյուրներից քաղված տվյալները, որտեղ հստակ է հայերի՝ քաղաքաբնակների թվում բացարձակ մեծամասնություն կազմելը, վերն ասածի վկայությունն է.

	1886 ⁷			
	արակ.	իզակ.	միասին	%
հայեր	288	222	510	41,4
ավարներ	246	247	493	40,0
ռուսներ	126	41	167	13,5
թաթարներ	20	5	25	2,0
վրացիներ	11	9	20	1,6
լեհեր	4	4	8	0,6
հրեաներ	8		8	0,6
ընդամենը	703	528	1231	
	1905 ⁸			
	արակ.	իզակ.	միասին	%
հայեր	1295	950	2245	57,9
ռուսներ	183	124	307	7,9
թաթարներ	585	476	1061	27,4
վրացիներ	101	70	171	4,4
լեհեր	57	32	89	2,3
	1916 ⁹			
	արակ.	իզակ.	միասին	%
հայեր	1218	947	2165	48,0
ավարներ	537	531	1068	23,7
ռուսներ	153	117	270	6,0
թաթարներ				
չիա	250	236	486	10,8
սունի	148	140	288	6,4
	398	376	774	17,2

5 Մի հաղորդման համաձայն՝ Ջաքարալայում հայերը հաստատվել էին մոտավորապես 1770-ականներին, իսկ Կախում՝ 1670-ականներից. «Ջաքարալա նահանգումը հայերն սկսել են բնակվել մօտ 100 տարի սրանից առաջ, ոմանք ասում են թէ սրանից 200 տարի առաջ Կախումը հայք կրպակներ են ունեցել ...»: («Մշակ», 1872, № 21, էջ 2):

6 «Նոր-Գար», 1886, № 40, էջ 1:

7 «Кавказский календарь на 1897 г.», с. 64.

8 «Кавказский календарь на 1908 г.», с. 323.

9 «Кавказский календарь на 1917 г.», с. 194-197.

վրացիներ	138	66	204	4,5
լեհեր	11	10	21	0,4
հրեաներ	1	2	3	0,06
ընդամենը	2456	2049	4505	

Աղյուսակից հստակ երևում է, որ ԺԹ-Ի դարերի սահմանագծում՝ ճիշտ 30 տարվա ընթացքում, Ջաքարալայի բնակչության շրջանում ամենամեծ աճը գրանցվել է թաթարների (իմա՝ աղրբեջանցի) հաշվին, որոնց տեսակարար կշիռը 2,0 %-ից հասել էր 17,2 %-ի: Աճել էր նաև վրացիների (1,6-ից հասել էր 4,5 %-ի) ու հայերի թիվը (41,4-ից հասել էր 48,5 %-ի):

Վիճակագրություն. Ջաքարալայի՝ տակ հայ բնակչության թվաքանակը ցույց տվող տվյալներն առավել առատ են: Այսպես.

տարեթիվ	սուն	արակա	իզակա	միասին
1854 ¹⁰	4	8	5	13
1857 ¹¹		19	27	46
1858 ¹²		22	20	42
1860 ¹³		21	31	52
1861 ¹⁴		23	37	60
1862 ¹⁵		26	40	66
1863 ¹⁶		29	44	73
1865 ¹⁷		36	49	85
1867 ¹⁸		48	59	107
1868 ¹⁹		60	63	123
1872 ²⁰		98	107	205
1873 ²¹		110	122	232
1874 ²²		129	141	270
1875 ²³		143	145	288
1876 ²⁴		130	145	275
1880 ²⁵		237	218	455
1881 ²⁶		248	229	477
1883 ²⁷		175	180	255
1884 ²⁸	140			
1885 ²⁹		352	283	635
1886 ³⁰	99			510
1890 ³¹		412	316	728

10 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, ք. 38-39:

11 Նույն տեղում, գ. 3830, ք. 118-119:

12 Նույն տեղում, գ. 3823, ք. 122:

13 Նույն տեղում, գ. 3834, ք. 7-8:

14 Նույն տեղում, գ. 3839, ք. 49:

15 Նույն տեղում, գ. 3836, ք. 76:

16 Նույն տեղում, գ. 3843, ք. 70-71:

17 Նույն տեղում, գ. 3848, ք. 43:

18 Նույն տեղում, գ. 3851, ք. 33:

19 Նույն տեղում, գ. 3853, ք. 11-12:

20 Նույն տեղում, գ. 3859, ք. 215:

21 Նույն տեղում, գ. 3862, ք. 45,49:

22 Նույն տեղում, գ. 3864, ք. 37-38:

23 Նույն տեղում, գ. 3866, ք. 89-90:

24 Նույն տեղում, գ. 3868, ք. 83-84:

25 Նույն տեղում, գ. 3872, ք. 122-123:

26 Նույն տեղում, գ. 3873, ք. 62-63:

27 Նույն տեղում, գ. 3875, ք. 67-68:

28 «Նոր-Գար», 1884, № 146, էջ 3:

29 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 39:

30 «Նոր-Գար», 1888, № 144, էջ 3: «Кавказский календарь на 1897 г.», с. 64.

31 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, ք. 141:

1891 ³²	450	326	776
1892 ³³	458	330	788
1893 ³⁴	590	437	1027
1894 ³⁵	611	440	1051
1897 ³⁶	690	518	1208
1898 ³⁷	710	532	1242
1899 ³⁸	750	586	1336
1901 ³⁹	760	602	1362
1902 ⁴⁰	765	608	1373
1904 ⁴¹	805	715	1520
1905 ⁴²	780	700	1480
1907 ⁴³			1676
1908 ⁴⁴	276	875	760
1910 ⁴⁵		856	760
1912 ⁴⁶		875	780
1916 ⁴⁷		1218	947
1928 ⁴⁸	200		2165
1930 ⁴⁹	206		

Աղյուսակից երևում է, որ Չաքաթալայում 1854-1916 թթ. հայ բնակչության շարունակական աճը երբեմն տատանումներ է ունեցել: Սովորաբար դրանք պայմանավորված են լինում արտակարգ դեպքերի (հիվանդություններ, դավանափոխություն, արտագաղթ և այլն) հետ: 1875-76 թթ., օրինակ, բնակչության փոքր-ինչ նվազումը, ըստ ամենայնի, հետևանք էր քաղաքում տեղի ունեցած ուժեղ հրդեհի (1875 թ. հունիսի 5-ին), որի արդյունքում «...քաղաքի երկու երրորդը մասը այրվեցաւ ...»⁵⁰:

Յավոք, խորհրդային հետագա տարիներին վերաբերող անհրաժեշտ տվյալներ չունենք. կարող ենք միայն նշել, որ 1988 թ., երբ տեղի ունեցավ աղբրեջանահայերի բռնագաղթը, Չաքաթալան ուներ ընդամենը 80 տուն հայ բնակիչ (չուրջ 300 շունչ):

Վաճառականություն. վերն ասվեց, որ առևտրի զարգացման տեսակետից հարմար դիրքում գտնվող Չաքաթալան հենց սկզբից իրեն է ձգել շատ

հայերի: 1844 թ. հիշվում են. «...Չաքաթալայ փողոցի բնակեալ վաճառականքս...»⁵¹: Ասվեց նաև, որ արդեն 1854 թ. Չաքաթալայում գործում էին 125 կրպակատեր հայեր⁵²: 1872 թ. քաղաքում գոյություն ունեցող 120 խանութներից միայն 15-ի տերերն էին օտարազգի, մյուսները հայապատկան էին⁵³: 1884 թ. բացի վաճառականությունից հիշվում են նաև այլ զբաղմունքի տեր հայեր. «Սրանք բոլորն էլ համարեայ թէ պարապում են վաճառականութեամբ, մասամբ արուեստներով և այգեգործութեամբ ...»⁵⁴:

Կրթություն. Չաքաթալայում առաջին դպրոցը բացվել է 1877-ին, իսկ 1888 թ. դրությամբ արդեն գործող դպրոցները չորսն էին՝ ռուսաց քաղաքային, օրիորդաց քաղաքային, արհեստավորաց, հայոց միդասյա: Բոլորը միասին ունեին 250 աշակերտ⁵⁵:

Սր. Գևորգ եկեղեցու արական և իգական դպրոցներ. այդ դպրոցների սկզբնավորումը վերաբերում է 1877 թ.: Ստորև ներկայացնում ենք դպրոցի գործունեության համառոտ ժամանակագրությունը.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1877 ⁵⁶	բացվել է հունիսի 31-ին		
1877/78 ⁵⁷		1	32
1878 ⁵⁸		1	44
1881 ⁵⁹			50
1883 ⁶⁰		2	40
1884 ⁶¹	երկդասյա կարգով, դասավանդում էր Ներսիսյան դպրոցի շրջանավարտ Թադեոս Առովվյանը		
1885 ⁶²	փակվել է		
1886 ⁶³	վերաբացվել է		
1887 ⁶⁴	դպրոցի շենքը նորոգման կարոտ էր: Դասավանդում էր Գրիգոր Խալաթյանը		
1889/90 ⁶⁵	ուսուցիչ՝ Գ. Մուրադյան		68 (8-ը ուսումը թողել էին)

51 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2319, ք. 2:
 52 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, ք. 38-39:
 53 «Մշակ», 1872, № 22, էջ 2:
 54 «Նոր-Դար», 1884, № 146, էջ 3:
 55 «Նոր-Դար», 1888, № 144, էջ 3 (1 սեպտեմբերի):
 56 «Մշակ», 1877, № 93, էջ 2: Տես նաև՝ «Մանկավարժական թերթ», 1878, № 2, էջ 63:
 57 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 130:
 58 Նույն տեղում, գ. 3850, ք. 177:
 59 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 502:
 60 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, 67-68:
 61 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 502: Տես նաև՝ ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 51, ք. 2:
 62 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 502:
 63 Նույն տեղում:
 64 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 51, ք. 2, 4: Տես նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 3887, ք. 141:
 65 ՀԱԱ, ֆ. 22, ց. 1, գ. 56, ք. 6: Նաև՝ ֆ. 35, ց. 1, գ. 51, ք. 6: Ի դեպ, 1890 թ. դպրոցի հոգաբարձությունը ուսուցիչ Գ. Մուրադյանի մասին մի առիթով նշել է. «...մեզ համար պարզև ենք համարում յայդմել մեր խորին շնորհակալությունը, որ մեզ ողորկեցիք մի առագ ուսուցիչ, որը բացի եկեղեցուց, ուսումնարանից ոչինչ չի ճանաչում և անճանաչելի կերպով աշխատում է մեր որդոց յառաջադիմութեան համար և երկրորդն՝ պատիւ ունենք յայտնելու, որ պ. Մուրատեանի այստեղ գալուց, հոգաբարձությունս բացի շնորհակալությունից, ոչինչ պատճառ չի ունեցել դժգոհելու նրանից...» (ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 51, ք. 6):

32 Նույն տեղում, գ. 3889, ք. 140:
 33 Նույն տեղում, գ. 3891, ք. 112:
 34 Նույն տեղում, գ. 3895, ք. 71, 116-117:
 35 Նույն տեղում, գ. 3896, ք. 165-166:
 36 Նույն տեղում, գ. 3899, ք. 138-139:
 37 Նույն տեղում, գ. 3897, ք. 160:
 38 Նույն տեղում, գ. 3905, ք. 251 (մինչև 1 տարեկան երեխաների թիվը ցույց չի տրված):
 39 Նույն տեղում, գ. 3906, ք. 31: Տես նաև՝ ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 131-132 (մինչև 1 տարեկան երեխաների թիվը ցույց չի տրված):
 40 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 14-15:
 41 Նույն տեղում, գ. 3910, ք. 3:
 42 Նույն տեղում, գ. 3912, ք. 258-259:
 43 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, ք. 3:
 44 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 46:
 45 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 91:
 46 Նույն տեղում, գ. 3919, ք. 53-54:
 47 “Кавказский календарь на 1917 г.”, с. 194-197.
 48 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2652, ք. 25:
 49 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3245, ք. 29:
 50 «Մշակ», 1876, № 22, էջ 1: Ի դեպ, հրդեհի հետևանքները 1881 թ. նկատելի էին («Մեղու Հայաստանի», 1881, № 29, էջ 3):

1891 ⁶⁶		60
1892 ⁶⁷		62
1893 ⁶⁸	կազմվել էր կառուցվելիք օրիորդաց դպրոցի նախա հաշիվը (3088 ռ.)	
1894 ⁶⁹	3(1 ուս-ուսի)	78(25աշ- ուսի)
1896 ⁷⁰	տարեսկզբին գործել է երկսեռ միդասյա կարգով և նույն թվականին փակվել	
1906 ⁷¹	վերաբացվել է	
1907 ⁷²	հրավիրյալ ուսուցիչներն էին՝ Տեր-Հարությունյանը, տիկ. Ս. Տեր-Իսրայելյանը, Մ. քին. Տեր-Սկրտչյանը և Հ. Խաչատրյանը	
1908/09 ⁷³	դպրոցը երկսեռ-միդասյա էր, ուսուցիչներ էին հրավիրվել՝ Նիկողայոս Ստեփանյան Մանու- չարյանը, Կատարինե Խաչատրյանը, Կարապետ Արամյանը, Սիրանուշ Գաղատյանը	
1909 ⁷⁴		2 (2-ը ուս-ուսի) 155(80 աշ-ուսի)
1910 ⁷⁵	ավագ ուսուցիչն էր՝ Նիկ. Մանուչարյանը	
1911 ⁷⁶		2 (2-ը ուս-ուսի) 288(138աշ-ուսի)
1914 ⁷⁷		4 181

Չաքաթալայում ազգային դպրոցը գործել է նաև խորհրդային տարիներին. փակվել 1953 թ.⁷⁸:

Արքունի (պետական) օրիորդաց դպրոց. հա- յազգի աշակերտներ արձանագրվել են նաև Չաքա- թալայի արքունի դպրոցում: Օրինակ՝ 1872 թ. ար- քունի օրիորդաց դպրոցում, որի շենքը, ի դեպ, նույն թվականին նորոգել էր հայազգի գավառապետ Բ. Շելկովնիկյանը («...մայիսի 30-ին այստեղի օ- րիորդների արքունի ուսումնարանը նահանգական կառավարիչ պ. Շելկովնիկյանի աշխատանքով նո- րոգեցաւ ...»)⁷⁹, 16 աշակերտուհիներից 10-ը հայ

էին, 6-ը՝ ռուս: Այդ դպրոցում դասավանդվել է նաև հայոց լեզու⁸⁰:

Արհեստավորաց դպրոց. կրթական մյուս հաս- տատությունը, որտեղ ուսանել են նաև հայազգի երեխաներ, արհեստավորաց դպրոցն էր: Այսպես, 1886 թ. 14 լեզգի, 24-25 ենգիլո, 1 թուրք աշակերտ- ների կողքին այդտեղ սովորում էին 4 հայ երեխա- ներ⁸¹:

Գրադարան. 1870-ից քաղաքում գործում էր հա- յոց գրադարանը, որը 1872 թ. ուներ 165 անուն գիրք⁸²:

Սր. Գևորգ եկեղեցի. Չաքաթալայում հայոց ե- կեղեցի կառուցելու ստույգ թվականը մեզ հայտնի չէ. առաջին վկայություններից մեկը վերաբերում է 1833 թ.⁸³: 1844 թ. հիշվում է. «...ի միջի սուրբ Գեոր- գեանց եկեղեցոց մեր որ կառուցեալ է աստ ի մէջ փողոցիս Նոր Չաքաթալայ...»⁸⁴: Հայտնի է, որ այս եկեղեցու նախնական շենքը փայտաշեն կառույց էր⁸⁵: Նույն՝ 1840-ականների վերջերին զաքաթալցի հայերը, անսայով Գանձակի Սր. Հովհաննես եկե- ղեցու ավագ քահանա Մարտիրոս Տեր-Դանիելյան Տեր-Հովհաննիսյանցի հորդորին, ձեռնամուխ էին եղել նոր՝ քարաշեն եկեղեցու կառուցմանը⁸⁶: Ի դեպ, այս հոգևորականը 1853 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու կողմից («...յաղագս աշխատութեան իրոյ վասն յորդորելոյ գծողովորդս ի կառուցումն եկեղեցոյ Չաքաթա- լու...»), ստացել էր կոնդակ գոհունակության⁸⁷: Թեև շինարարական աշխատանքների հիմնական մասը կատարվել էր 1851-1852 թթ. (այդ են վկայում եկե- ղեցու վիմագրերը), սակայն 1868 թ. աշխատանք- ները տակավին ամբողջացված չէին, քանի որ եկե- ղեցական ողջ գումարը ծախսվել էր եկեղեցու շինա- րարության վրա, և դեռ պարտքեր էլ կային⁸⁸: 1883 թ. կառուցվել էր նաև զանգակատուն: Ընդ որում՝ ե- կեղեցու և զանգակատան համար ծախսվել էր շուրջ 33000 ռուբլի. «...եկեղեցին նստել է մօտ 30000 ռուբ- լի, անցեալ տարուայ զանգակատունը - մօտ 3000 ռուբլի, իսկ նրա մօտ գտնուող ախոռանման հոգևոր ուսումնարանի վերայ մի կոպէկ անգամ մախելը մեղք են համարում...»⁸⁹:

1899 թ. Չաքաթալա այցելած Էմանուել Նազար- յանը եկեղեցուն վերաբերող իր տպավորություննե-

66 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, թ. 140: Նույն թվի փետրվարին շո- շափվել էր Չաքաթալայում բացվելիք օրիորդաց դպրոցի հարցը (ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 51, թ. 10): Ի դեպ, Սր. Գևորգ եկե- ղեցու բակը, դպրոցին կից լինելով, փաստորեն, աշակերտու- թյանը ծառայում էր որպես խաղահրապարակ: Ավագ ու- սուցիչ Գ. Մուրադյանը 1891 թ. գրավոր մտահոգություն էր հայտնել բակում գտնվող 3 տապանաքարերի (մեկը՝ ուն դեռ- ձակի, մյուսը՝ տիկ. Արդուրյանի 1865 թ., 3-րդն անհայտ) առ- թիվ ու առաջարկել դրանք «գետնին հավասարեցնել» (ֆ. 35, ց. 1, գ. 51, թ. 11-12, 20):

67 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, թ. 112:

68 ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 192, թ. 10: Հայտնի է, որ օրիորդաց դպրոցի հիմնադրման նպատակով 700 ռ. գումարով (տոկոսներով՝ 800 ռ.) գնվել էր Սր. Գևորգ եկեղեցու բակի հողատարածքի մի մասը. «...քաղաքիս մէջ եղած եկեղեցապատկան գետինը ծախսուած է 700 ռուբլիով և գործադրուած շինութեան վերայ: Շինութիւնը բաղկացած է առայժմ երկու սենեակից, մեկը՝ մեծ, որը կարելի է բաժանել երկու սենեակի, միւսը՝ փոքր, ներքին յարկունմ էլ կայ մի փայտետուն» (ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3370, թ. 7):

69 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 99, գ. 3896, թ. 34, 165-166:

70 **Խոսրոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 502:

71 Նույն տեղում:

72 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 173, թ. 14:

73 Նույն տեղում, գ. 387, թ. 47:

74 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 12:

75 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 19, թ. 16:

76 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57: Գործել է 3 բաժանմունքով:

77 **Խոսրոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 502:

78 Տեղեկությունը ստացել ենք զաքաթալեցի հայերից 1984 թ.:

79 «Մշակ», 1872, № 25, էջ 2:

80 Նույն տեղում:

81 «Մշակ», 1886, № 73, էջ 1-2: Ի դեպ, Չաքաթալայում արհես- տավորաց դպրոց հիմնելու միտքը դեռևս 1866 թ. հղացել էր նույն Բեհբուս Շելկովնիկյանը: Դպրոցի շենքը կառուցվում է միայն 1881 թ.: 1886 թ. դպրոցը տվել էր իր առաջին 13 շրջա- նավարտը (8 լեզգի, 4 ենգիլո, 1 թուրք):

82 «Մշակ», 1872, № 22, էջ 2:

83 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2319, թ. 2:

84 Նույն տեղում:

85 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 55-56:

86 Նույն տեղում, գ. 3833, թ. 114-115:

87 Նույն տեղում:

88 Նույն տեղում, գ. 3853, թ. 13-14:

89 «Նոր-Դար», 1884, № 147, էջ 3:




ՉԱՔԱԹԱՍԱ. Սբ. Գևորգ եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից և հարավ-արևմուտքից

րում նշել է. «...Եկեղեցու հիւսիսային դրան փոխանակ՝ դրսի կողմից մի փոքրիկ սենեակ է շինուած՝ երկրպագութեան տեղ: Ասում են որ պատկերների շատութեան պատճառով՝ թեմիս նախկին առաջնորդ գերապատիւ Արիստակէս Արքեպիսկոպոսի կարգադրութեամբ շինուած է այդ յաւելեալ շէնքը՝ յատկապէս պատկերների պահպանութեան համար: Իսկ ատեանը տղամարդոց դասից այնքան բարձր է շինուած, որ ս. Բեմին մօտեցող ու նրանից հեռացող ժողովուրդն ստիպուած է քայլափոխ անելով բարձրանալ ու իջնել, որ շատ անյարմարութիւն է ներկայացնում: Ինչ վերաբերում է խաչկալի վրայ բազմեցրած ս. Երրորդութեան մեծադիր և նուրբ պատկերին՝ թէպէտև մեր եկեղեցում տեսնուած պատկեր չէ, սակայն խորհրդատու է նրանով, որ ի դէմս երեք հրեշտակների և ի տես խաղողի մի ողկուզի՝ ներկայացնում է ս. Երրորդութիւնը՝ միանգամայն հին ու նոր ուխտի մէջ: Այս եկեղեցին, որ բաւական մաքուր է պահուած՝ ունի մի գանձակեցի կրթուած երիտասարդ քահանայ...»⁹⁰:

Սբ. Գևորգ եկեղեցին գտնվում է քաղաքի կենտրոնական մասում, որի հարավարևմտյան կողմում է հրապարակը՝ շրջափակված դարավոր սուհներով⁹¹: Կառույցը շրջակա բնակելի ու հասարակական շենքերի հետ առանձնահատուկ հմայք է տալիս Չաքաթալայի հայաշեն այս թաղամասին:

Ճարտարապետություն. Սբ. Գևորգ եկեղեցին եռանակ գմբեթավոր կառույց է: Այն ունի երեք դուռ՝ բացված հարավային, արևմտյան ու հյուսիսային ճակատներից: 12 նիստանի աղյուսաշեն գմբեթը ներքուստ պահում են թվով չորս բլուրածն հաստա-



ՉԱՔԱԹԱՍԱ. Սբ. Գևորգ եկեղեցու հասակագիծը

հեղույս սյուները: Եկեղեցու արևելյան կողմում ավագ խորանն է, որից հյուսիս և հարավ կան մեկական ուղղանկյուն հատակագծով կրկնահարկ ավանդատներ: Եկեղեցու տարբեր մասերից բացվում են թվով 36 լուսամուտներ, որոնցից 12-ը՝ գմբեթից, 4-ական՝ հարավային ու հյուսիսային և 3-ական՝ արևելյան ու արևմտյան ճակատներից: Բոլոր լուսամուտներն էլ ունեն կիսաշրջան վերնամասով ավարտվող ուղղանկյունաձև հորինվածք, բացառությամբ ալ. ճակատի եզրային երկու կլոր լուսամուտների, որոնք բացվում են ավանդատների մեջ: Եկեղեցին ամբողջապես կառուցված է աղյուսով ու սվաղված ծեփով: Տաճարի ստորին շարվածքում օգտագործված է նաև գետաքար:

Վիմագրեր. մեր այցելության ժամանակ (1984 թ.) եկեղեցու որմերի՝ նախկինում հրատարակված արձանագրությունները, որոնք կարևոր տեղեկություններ էին պարունակում կառուցման վերաբեր-

90 «Նոր-Ղար», 1899, № 39, էջ 2-3:
 91 Ծառերից մեկի վրա փակցված ցուցանակի համաձայն՝ այն 700 տարեկան է:

յալ, ծածկված էին սվաղի շերտով: Ժամանակին, սակայն, այդ արձանագրությունները հրատարակվել են⁹²: Ստորև ներկայացնում ենք դրանք.

Հարավային դռան ճակատին.

Շինեցաւ Հայոց 1851 թվին Զարաթալու դարիպական Հայոց վաճառականաց տրօքն եւ արդեանքն Սրբոյն Գեորգայ զօրավարին ի ժամանակս Ռուսաց թագավորութեան Նիկալայ Պաւլովիչին եւ ի հայրապետութեան Հայոց Տեառն Ներսեսի Ե կաթողիկոսին, ի ժամանակս սոցա փոխարքայն էր գնեազ Վարանցովն եւ տեղոյս զօրագլխապետ գեներալ Գրիգոր գնեազ Որբելանովն եւ քահանայն էր Տէր Մարտիրոս Տէր Դանիէլովն եւ բուականն Հայոց Ռ-Յ (1851):

Սկրտոթյան ավազանի ճակատին.

Յիշատակ է դաշտեցի Հօհանիսի որթոց Ստեփանովներին. 1851:

Սյան վրա.

1852 կանգնեցաւ սիւնս տրօք կանջեցի Մարգսի, Պօղոսի, Յարութիւնի Շահապրոնեանց ի յիշատակ իւրեանց:

Սյան վրա.

1852 կանգնեցաւ սիւնս ծախիւք դարաբաղցի Մարգսի, Դաթի եւ Մարգարի Բարխուդարեանց ի յիշատակ իւրեանց:

Մեր այցելութեան ժամանակ եկեղեցու արևմտյան դռան ճակատային մասում հայտնաբերվեց եւ մեկ արձանագրություն: Ահա այն.

Ս(ուր)ք գաւիթս շինեցաւ տրօք | արթեանքն տղնախեսեցի Ստեփան Գրիգորովին 1851 ամի:

ՎԱՐԽԻԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հարավ՝ Թասմալուր գյուղից 8 կմ հյուսիս-արևմուտք՝ հարթավայրում:

Դավանանք. բռնությամբ մահմեդականացված հայկական գյուղերից է: Այս բնակավայրը միակն է, որտեղ հայ հոգևորականի քարոզներին անսալով՝ բնակիչների թեկուզև փոքրագույն մասը վերամկրտվել է նախնիների դավանանքին: Դա իրականություն է դարձել 1850-ական թվականների սկզբներին՝ Գանձակի Սք. Հովհաննես եկեղեցու ավագ քահանա Մարտիրոս Տեր-Դանիելյան Տեր-Հովհաննիսյանցի անձնուրաց գործունեության շնորհիվ, որի համար Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու կողմից արժանացել է հատուկ կոնդակի. «...յաղագս ջանադրութեան իւրոյ վասն դարձուցանելոյ ի մահմետականութենէ ի հաւատս լուս. հայոց եկեղեցոյ գնախկին տաճկացեալ հայ բնակիչս Վարխիան գեղջ 960 հոգի ստացեալ է ի նորին վեհափառութենէ 23 հոկտ. 1855 ամի № 321: Զկնի մկրտելոյն զվերոյգրեալ բնակիչս ստացեալ է զթաւնջեայ կամիլկալկայ կոնդակը նորին յ9-ն յու-



ԶԱՔԱԹԱՆԱ. արձանագրություն Սք. Գևորգ եկեղեցու արևմտյան ճակատին

լիսի 1856 ամի № 222»⁹³:

Վիճակագրություն. վիճակագրական տվյալներ պարունակող վավերագրերում Վարխիանում հայ առաքելական դավանությամբ բնակիչներ հիշվում են 1857-ից.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1857 ⁹⁴		16	27	43
1858 ⁹⁵		22	28	50
1860 ⁹⁶		24	28	52
1861 ⁹⁷		24	28	52
1862 ⁹⁸		23	28	51
1863 ⁹⁹		23	28	51

Այն հանգամանքը, որ 1863 թ. հետո վավերագրերն այլևս այստեղ հայ բնակչության գոյության մասին տվյալներ չեն պարունակում, կարծել է տալիս, թե քրիստոնյա բնակիչներն անհովիվ մնալով՝ կամ կրկին մահմեդականացել էին, կամ էլ հեռացել Վարխիանից՝ խույս տալով համագյուղացի մահմեդականների վրեժխնդրությունից:

Ի դեպ, Ի դ. սկզբի վիճակագրական նյութերում գյուղի բնակիչներին տրվել է մուղալներ անվանումը¹⁰⁰:

93 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, ք. 115-116:
 94 Նույն տեղում, գ. 3830, ք. 118-119:
 95 Նույն տեղում, գ. 3823, ք. 122:
 96 Նույն տեղում, գ. 3834, ք. 7-8:
 97 Նույն տեղում, գ. 3839, ք. 49:
 98 Նույն տեղում, գ. 3836, ք. 76:
 99 Նույն տեղում, գ. 3843, ք. 70-71:
 100 “Кавказский календарь на 1915 г.”, с. 105.

92 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 275:

ԿԱՆԻ ՇՐՋԱՆ

Ջբաղեցնում է 1494 կմ² մակերես: Սահմանակից է Ռուսաստանի Դաշնության Դաղստանի Ինքնավար Հանրապետությանը, Վրաստանի Հանրապետության Դեդոփլիս-Շղարոյի, Ադրբեջանի Հանրապետության Չաքաբալայի, Շաքիի, Եվլախի և Խանլարի շրջաններին: Ներկայիս շրջանի տարածքում գտնվող 60 գյուղերի զգալի մասը ԺԸ դարում բռնությամբ մահմեդականացված վրացական, իսկ մի քանիսն էլ նույն փորձությանը ենթարկված հայկական գյուղեր էին: Վերջիններից հայտնի են Չագյան, Թասմալուր, Մարսան և Մալղ գյուղերը: Շրջկենտրոն Կախ ավանում հայերի ներկայությունը փաստված է 1760-ական թվականներից:

ԿԱԽ

Հայերը Կախում. հայտնի է, որ դեռևս ԺԸ դարում այստեղ հաստատված առաջին հայերը բացառապես առևտրականներ էին: Անվանի ճարտարապետ Ռ. Իսրայելյանի հայրը՝ Սարգիս Իսրայելյանը, որը դարասկզբին ուսուցչություն է արել Կախ ավանում, գրել է. «Դեռ 1770 թվականներին Հին Նախիջևանի գաւառից մի քանի հայեր, առևտրական նպատակով գալիս են այս կողմերը և ցրելով զանազան վրացական և թրքական գիւղեր, սկսում են պարապել վաճառականութեամբ»¹:

1872 թ. «Մշակ»-ի թղթակից Մ. Քոչարյանցը նշել է. «Չաքաբալու նահանգումը հայերն սկսել են բնակվել մօտ 100 տարի սրանից առաջ (ոմանք ասում են թե սրանից 200 տարի առաջ Կախումը հայք կրպակներ են ունեցել)...»²: Միևնույն հարցը շոշափած մեկ այլ հաղորդման մեջ նշված է. «Թէև Ադուանից հայերից ոչ ոք չէր մնացել Կախում, բայց 1826 թուից յետոյ սկսեցին վաճառականութեան նպատակով գալ ագուլեցիք. նրանց վաճառականութիւնը ձեռնառու լինելով Կախում, սկսեցին հետզհետեւ ստուարանալ և բնակութիւն հաստատել...»³: Ուշագրավ այս վկայությունները միանգամայն հավաստի ու վավերական են, քանի որ արդեն 1766 թ. Կախը հիշվում է որպես գրչօջախ (գրիչ՝ Ստեփանոս քահանա, նույն ինքը՝ աշուղ Մայաթ-Նովան. «Գրեցաւ ի Կախոյ քարանասարէն ...»)⁴: 1872 թ.

Կախում հայերն արդեն ունեին մոտ 70 կրպակ, իսկ այլագիներն ընդամենը 5-6⁵:

Հատկանշական է, որ Կախի հայերին, որպես ոչ բնիկների, ԺԹ դարում ռուսական իշխանություններն արգելել էին հող գնել: Այդ ուղղությամբ առանձին փորձերը հետապնդվում ու մինչև իսկ պատրվովում էին. «Հայերին իբրև ոչ տեղացիների կառավարութիւնը թոյլ չի տալիս հող գնելու: Եղել են նոյնիսկ այնպիսի դեպքեր, որ հայի գնած հողը կառավարութիւնը ստիպել է ետ տալ, որի ժամանակ քիչ չէ տուժել հայը՝ ստանալով իր միանուագ վճարած գումարը մի որևիցէ հողի համար՝ մաս-մաս, երբեմն էլ մի-միայն մի մասը...»⁶:

Գլխավորապես առևտրով զբաղվելով հանդերձ՝ Ի դարում արդեն համայնքն ուներ նաև իր արհեստավորները. «...գաղթել են Ագուլիսից, Յղնայից և հարևան գիւղերից. մի խօսքով զօկեր են. պարապում են վաճառականութեամբ: Կան փոքր թով նաև արհեստատրներ...»⁷:

Առևտրի ասպարեզում հայերի մենաշնորհն իր դիրքերը կարուկ զիջեց միայն 1905 թ. հայ-թուրքական ընդհարումների հետևանքով. «...Հայերը մնում են պաշարած դրութեան մեջ, միանգամայն կտրուելով դրսի աշխարհից: Իսկ տեղական մթերքները պէտք էր որ արտահանւէին: Եւ ահա հանդէս են գալիս, կամ աւելի շատ, մօմենտը ծնում է այնպիսի անձնատրութիւններ, որոնք օգտուելով առիթից՝ առևտուրը, ինչպէս և մթերքների արտահանութիւնը գցում են իրենց ձեռքը: Հէնց սրանով կարելի է բացատրել այն, որ այժմ Կախ-աւանում հայկական գաղութում չկան այն աչքի ընկնող վաճառականները, որոնք եղել են նախքան հայ-թրքական ընդհարումները...»⁸:

1 Իսրայելյան Սարգիս, Կախ Աւանի հայկական գաղութը. «Մուրհանդակ», 1909, № 43, էջ 1:

2 «Մշակ», 1872, № 21, էջ 2:

3 «Նոր-Դար», 1890, № 185, էջ 3:

4 Մատենադարան, ձեռ. № 4270: Տե՛ս «Յուգակ ձեռագրաց», Խ. Ա. Երևան, 1965, էջ 1182, նաև՝ «Քազմավէպ», 1963, էջ 187: Ի դեպ, «Նոր-Դար»-ի թղթակցի պնդումը՝ Կախում հայերի միայն ԺԹ դարի սկզբներին հաստատված լինելու մասին անհիմն է («Այս գիւղը հիմնուած է ներկայ դարի սկզբում. բնակիչները գաղթել են Ագուլիսից. առաջ քսան տուն են եղել. պարապում են ընդհանրապէս վաճառականութիւնով...») («Նոր-Դար», 1893, № 89, էջ 2):

5 «Մշակ», 1872, № 21, էջ 2:

6 «Մուրհանդակ», 1909, № 43, էջ 3:

7 «Հորիզոն», 1913, № 72, էջ 3:

8 Իսրայելյան Սարգիս, նշվ. հոդվ., էջ 1:

Հայերի առևտրական գործունեությունը և առ-
հասարակ, հայ համայնքի կենսունակությունն ամ-
բողջովին Կախում մարեցին 1918-1920 թթ.:

Վիճակագրություն. տվյալների համաձայն՝
1851 թ. Կախն ունեցել է 858⁹, իսկ 1876 թ.՝ 3139¹⁰
բնակիչ: Վերջիններից 1081-ը լեզգիներ, իսկ 2058-ը
քրիստոնյա էին¹¹: Հարկ է նշել, որ քրիստոնյա բնա-
կիչների մեծ մասը ԺԷ-ԺԹ դարերում բռնությամբ
մահմեդականացված վրացիներ էին¹², որոնցից շա-
տերը ռուսական տիրապետության հաստատումից
հետո ու վերջիններիս հովանավորությամբ վերըս-
տին վերադարձել էին իրենց նախնյաց հավատ-
քին¹³: Ի դեպ, 1891 թ. մի վավերագրում Կախի բնա-
կիչներ են հիշվում հունադավանություն ընդունած
լեռնականները. «...բնակիչք են նորադարձ յունա-
դաւան լեռնականք...»¹⁴: Ինչ վերաբերում է Կախի
հայ համայնքի թվաքանակին, ապա մշտական
բնակչի կարգավիճակ չունենալու պատճառով վի-
ճակագրական աղբյուրներում նրանց իրական



ԿԱՍ. հայոց դպրոցի շենքը

թվաքանակը չի արտահայտվել: Հայտնի է, որ
1890-ական թվականների սկզբին Կախն ունեցել է
40 տուն, 382 շունչ (226 ար. և 116 իգ.)¹⁵, իսկ 1913 թ.
65 տուն հայ բնակիչ¹⁶:

1984 թ. մեր այցելության ժամանակ Կախն ու-
ներ ընդամենը 17 հայ բնակիչ¹⁷, որոնք բռնագաղթի
ենթարկվեցին 1988 թ.:

Գպրոց. եկեղեցական-ծխական դպրոցի պատ-
մությունը Կախում սկիզբ է առնում 1893-ից: Մինչ
այդ հայ երեխաները հաճախում էին գավառապետ
Բեհրուտ Շելկովիկյանի ջանքերով 1874 թ. հիմ-
նադրված արքունի (պետական) դպրոցը¹⁸. «...որ
գլխավորն է ոչ ունին նոքա (հայերը - Ս. Կ.) գդպրոց
եկեղեցական և մանկունք նոցա յաճախելով անդ ի
յունադաւանից դպրոցն՝ զուրկ են միանգամայն ի
գիտութիւնէ մայրենի լեզուի և կրօնի ...»¹⁹: 1893 թ.
Կախում հայկական դպրոց բացելու թույլտվություն
ստանալու ակնկալիքով հոգաբարձությունը խընդ-
րագիր էր հղել թեմական առաջնորդ Կարապետ
սրբազանին²⁰: 1896-1905 թթ. կառավարության
հրամանով դպրոցը չի գործել: Վերաբացումից հե-
տո արդեն 1909 թ., դպրոցը գտնվում էր նյութական
ծանր վիճակում և կանգնած էր փակվելու վտանգի
առջև: Վարժուհի Մարիամ Իսրայելյանի հիմնած
կանանց ընկերությունը փորձել էր նվիրատվու-
թյունների օգնությամբ դպրոցը դուրս բերել այդ վի-
ճակից²¹: Նույն թվականին շուրջ 70 աշակերտ ու-
նեցող դպրոցի մասին մամուլում նշվել է. «Հինգե-
րորդ տարին է ինչ գոյութիւն ունի մեր եկ.-ծխ. դպ-
րոցը, այժմս նա ունի հինգ բաժանմունք՝ տեղաւոր-

9 «Кавказский календарь на 1852 г.», Тифлис, 1851, с. 84.
10 «Кавказский календарь на 1885 г.», с. 226. Տե՛ս նաև՝
«Кавказский календарь на 1886 г.», с. 135.

11 Նույն տեղում:
12 Հայտնի է, որ երկրամասի քրիստոնյա բնակչության բռնի
մահմեդականացումը առավելապես տեղի է ունեցել ԺԸ դարի
ընթացքում, բայց այդօրինակ բռնությունները շարունակվել
էին ԺԹ դարի սկզբներին, մասնավորապես 1810-ական
թվականներին «...Վրաց լեզուն այստեղ մի խառնուրդ է ներ-
կայացնում վրաց և թուրք բաների և վրացիներից շատերը
թուրքերեն են խօսում: Մորանից վատսուն տարից առաջ մահ-
մեդականները բռնութեամբ ստիպեցին վրացի ընտանիքնե-
րից շատերին մահմեդական կրօնը ընդունելու և թէև շատերը
նոցանից կրկին վերադարձան քրիստոնեական հաւատքին,
բայց թէ լեզուի մէջ մնացին թուրքաց լեզուի հետքերը, թէ վեր-
ջապէս և այժմս էլ կան մի քանի վրացիք որք մահմեդական
կրօնը են դաւանում...» («Մշակ», 1876, № 12, էջ 3):

13 Մահմեդական վրացիների վերստին քրիստոնյա մկրտվելը
խրախուսվում և հովանավորվում էր ռուսական իշխանու-
թյունների կողմից. «...այն ժամանակ, երբոր Վրաստանը
մտաւ Ռուսաց կառավարութեան հովանաւորութեան տակ,
իշխան Վորոնցովի աշխատութեամբ նոցա մի մասը կրկին
ընդունել է քրիստոնէութիւնը, պաշտպանելով ի հարկէ իր
նախկին դաւանութիւնը (յունական): Այս վերջինն յայտնի էր
ինգլերյ ամունով, որ ինչպէս ինձ թարգմանեցին նշանակում է
նորահաւաստ» («Մեղու Հայաստանի», 1874, № 44, էջ 2):
Քրիստոնյա վերամկրտվող մահմեդականների նկատմամբ
կառավարության հատուկ հոգածության մասին են վկայում
բազմաթիվ նյութեր, որոնցից մեկը վերաբերում է Կախից 8 կմ
հարարվ-արևմուտք գտնվող Ալիբեկլու գյուղին. «Այդ գիւղի
ժողովուրդը մինչև քառասնական թուականները թուրք է եղել,
բայց յետոյ վրաց կղերի ճնշումից դարձել է քրիստոնէայ:
Բնակիչները թէև քրիստոնէայ անուն են կրում, բայց իսկա-
պէս թուրք են և միտ ու կացը թուրքերի նման է: Գիւղն ունի
մօտ 800 տուն բնակիչ, բոլորն էլ «Ենկիլով» ազգութեան են
պատկանում. լեզուն վրացերեն է թուրքերենի խառնուրդով, ե-
թէ՛ մի բուն վրացի գայ խօսակցելու սրանց հետ, շատ բան չի
կարող հասկանալ...: Ալիբեկլու գիւղում կայ ռուսաց միղա-
սեան ուսումնարան և կառավարութեան ծախքով շինած եկե-
ղեցի, զինուորագրութիւնից ազատ են. նոր դարձ գալու և յու-
նադաւանութիւն ընդունելու առթիւ...» («Նոր-Դար», 1893,
№ 132, էջ 3):

14 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8718, ք. 7:

15 **Քարխտաարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 271:
16 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11136, ք. 6:
17 Հայկական հուշարձանների ուսումնասիրության նպատակով
Կախում գտնված ժամանակ մեզ անգնահատելի աջակցու-
թյուն է ցուցաբերել ավանի բնակիչ՝ լուսանկարիչ Վանյա
Անդրեասովը:
18 «Մշակ», 1877, № 44, էջ 2-3:
19 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8718, ք. 1-2:
20 «Նոր-Դար», 1893, № 89, էջ 2:
21 «Մուրհանդակ», 1909, № 41, էջ 3-4:

ւած 3 դասարաններում... Դասատուները թույլ 3 են՝ տեղական քահանան, 1 վարժուհի և 1 ուսուցիչ...»²²: Կրթօջախի հետագա գործունեությունն ապահովվել է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության Չաքաբալայի բաժանմունքի միջոցներով: 1914 թ. դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ և 55 աշակերտ²³:

Դպրոցի հետագա գործունեության վերաբերյալ այլ տվյալներ չունենք:

Եկեղեցի. Կախի հայերը 1840 թ. սեփական միջոցներով կառուցեցին եկեղեցի²⁴ և այն օծեցին Սր. Աստվածածին անվամբ: 1887 թ. ագուլեցի մի վաճառական եկեղեցուն 1887 թ. նվիրել էր Գևորգ Բաշինջաղյանի կտավներից մեկը: Այդ մասին մամուլը հաղորդում է. «Նորերումս Կախի եկեղեցին զարդարուեցաւ մի գեղեցիկ և փառաւոր պատկերով: Պատկերը ներկայացնում է սուրբ կոյսը, որ իւր գոգում գրկած ունի մանուկ Յիսուսին: Դրա երկայնութիւնը գրեթէ 1 սաժէն է, իսկ լայնութիւնը 2 արշին: Այդ պատկերը նկարուած է Թիֆլիսում և նկարիչ Բաշինջաղեանի գործն է»²⁵: 1909 թ. Ս. Իսրայելյանն այսպէս է նկարագրել արդեն նորոգման կարիք ունեցող եկեղեցին. «Այս եկեղեցին (ս. Աստվածածնայ) դրսից ներկայացնում է մի հասարակ տուն և ներսից է, որ ջահերի և պատկերների շնորհիւ եկեղեցու նմանութիւն է տալիս, սրան էլ խանգարում են այն մի շարք սիւները, որոնց վրայ կառուցուած է վերնատունը և եկեղեցին միանգամայն այլանդակում է: Ունի երկու դուռ, հին գիւղական կրունկատուր, և չափից դուրս ցածրիկ...»²⁶:

Խորհրդային տարիներին եկեղեցին հիմնովին քանդել են:

ՉԱԳՅԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 19 կմ արևմուտք՝ Ալազան գետի ափից ընդամենը 4 կմ հեռավորությամբ՝ հարթ տեղանքում:

Հայերը Չագյանում. բնակիչների ծագման խնդրին վերաբերող տեղեկությունները հակասա-

կան են: Լրատվական մի հաղորդման համաձայն՝ գյուղի մահմեդական բնակիչները, որ աչքի էին ընկնում իրենց աշխատասիրությամբ, ծագումով հայեր էին²⁷: Մեկ այլ վկայության համաձայն՝ զագյանցիները ենգիլոներ են:

ԹԱՍՍԱԼՈՒԻ (ԹԱՍՍԱԼԻ)

Տեղադրություն. գտնվում է Չագյան գյուղից 3 կմ հյուսիս-արևելք:

Պատմություն. հայտնի է, որ Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի (1655-1680) օրոք այս գյուղը Կախեթի տիրակալները նվիրաբերել էին Էջմիածնի վանքին. «Կախեթու պարոն Թեմուրազ-խանն, և իւր որդի Հերակլն, և իւր կին Խորի-շանն ի մէջ Կախեթու և Քիսեղու, ի Էնիսուլ կոչեցեալ նահանգօջն զգեօղ մի Թասմալուր կոչեցեալ տան Յակովբ Կաթողիկոսին Ջուղայեցոյ՝ ամենայն բնակչօքն՝ ամենայն այգեստանեօքն՝ ջրօքն և ամենայն պարագայիքն՝ ի ծառայութիւն սրբոյ Աթոռոյս՝ ի յիշատակ յալիստենական, ի ի թուօջն մերում՝ ի ...գիտ զղապալայն Վրացերէն յերեսն գրեցեալ ցուցակաւն»²⁸:

Հայաբնակ այս գյուղի բնակիչները ևս բռնությանը մահմեդականացվել են ԺԸ դարում²⁹:

ՄԱՐՍԱՆ

Տեղադրություն. գտնվում է շրջկենտրոնից 11 կմ արևմուտք՝ Թասմալուրի և Կախի միջև:

Հայերը Մարսանում. գյուղի մասին Բարխուտարյանց եպիսկոպոսը նշել է. «Մարսան գիւղի բնակիչներն, որ Կախաւանից ներքև է, եղած են Էջմիածնապատկան և ամեն տարի վճարած են զաւազանապատու մայր՝ Աթոռին, ինչպէս վկայում են ծերունիք»³⁰:

Հայաբնակ այս գյուղի բնակիչները ևս բռնությանը մահմեդականացվել են ԺԸ դարում և Ի դարի սկզբի վիճակագիր աղբյուրում հիշված են իբրև ենգիլոներ³¹:

22 **Իսրայելյան Մարգիս,** Կախ Աւանի Հայոց եկեղ. ծխական դպրոցը. – «Սուրհանդակ», 1909, № 39, էջ 3:

23 **Խորոյան Ս.,** նշվ. աշխ., էջ 502:

24 «Նոր-Վար», 1893, № 15, էջ 1:

25 Նույն տեղում, 1887, № 5, էջ 2:

26 **Իսրայելյան Ս.,** Կախ Աւանի հայոց եկեղեցին. – «Սուրհանդակ», 1909, № 100:

27 «Նոր-Վար», 1888, № 144, էջ 3:

28 «Չամբո համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմօն կաթողիկոս Երեսնցոյ», Վաղարշապատ, 1873, էջ 207:

29 Թասմալուրի մահմեդականները Չագյան գյուղի նման Ի դարի սկզբի աղբյուրներում բյուրիմացաբար ցույց են տրված որպես մահմեդական վրացի՝ ենգիլո («Кавказский календарь на 1915 г.», с. 186).

30 **Բարխուտարյանց Ս.,** նշվ. աշխ., էջ 272:

31 «Кавказский календарь на 1915 г.», с. 155.

ՎԵՐՁԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Կախեթում հայերն առնվազն շուրջ հազարամյակի պատմություն ունեն, և հետևաբար հայկական գաղթավայրերի շարքում այն հնագույններից մեկն է: Բացի այդ, երկրամասը գտնվելով Մեծ Կովկասի հարավ ու հարավարևմտահայաց փեշերին՝ բավականին մոտ է բուն Հայաստանին և դարերի ընթացքում սերտորեն կապված է եղել Անդրկովկասի մյուս շրջանների ու մասնավորապես Հայաստանի հետ և դրանով արժանի է առանձնահատուկ ուշադրության:

Երկրամասի տարածքում ապրած հայերը դարերի ընթացքում ստեղծել են մշակութային մեծաթիվ արժեքներ: Դրանք կազմում են հայ մշակույթի անբաժանելի մասը և արժանի են առավել խորն ուսումնասիրության:

Կախեթի հայ գաղթավայրերի պատմության նշանակությունը խիստ կարևոր է ու հանգուցային, քանի որ նրա ուսումնասիրության շնորհիվ է հնարավոր Հայաստանի ու ավելի հեռու ընկած հայ գաղթավայրերի հարաբերությունների պատմության շատ հարցերի լուսաբանումը:

1920-ական թթ-ից հետո, երբ վրաց խորհրդային իշխանությունները հայաստանյան իշխանությունների «եղբայրասիրությունից» բխող մեռելային լռության պայմաններում բռնությամբ փակեցին Կախեթի հայաշատ գյուղերում և քաղաքներում այնքան դժվարություններով բացված ու մի կերպ իրենց գոյությունը պահպանող հայոց դպրոցները, կախեթահայերը ազգային ինքնությունը պահպանելու իմաստով փաստորեն հայտնվեցին միանգամայն անպաշտպան վիճակում:

Պարտադրված կացությունն անցնող տասնամյակների ընթացքում կախեթահայերի շրջանում էլ առավել արմատացրեց միջավայրում տիրող լեզուն՝ վրացերենը, իսկ մայրենիին տիրապետողների թվաքանակը տարեցտարի կրճատվելով մեր օրերում սահմանափակվեց սոսկ առանձին անհատների իմացությամբ: Արդյունքում, Կախեթի ավելի քան 200.000 հայերից մեծագույն մասի համար ներկայումս հայերենը՝ իբրև մայրենի լեզու, դուրս է մղվել՝ տեղը զիջելով միջավայրի ընդհանրական լեզվին՝ վրացերենին:

ՑԱՆԿԵՐ

Գունավոր լուսանկարների ցանկ

Սղնախ և Չաքաքալա քաղաքների զինանշանները

1-2. Գրեմ. քաղաքատեղին և Սբ. Հրեշտակապետաց վրաց եկեղեցին

3. Վաքիր գյուղի տեսքը

4. Սղնախ. քաղաքի կենտրոնական թաղամասերը

5. Մանավ գյուղի տեսքը

6-7. Գրեմ քաղաքատեղի. հայոց եկեղեցիներ

8. Գրեմ քաղաքատեղի. իջևանատուն

9-16. Գրեմ քաղաքատեղի. հայոց եկեղեցիների և մատուռների խումբ

17-19. Գրեմ. Սբ. Աստվածածին եկեղեցի, 1595 թ.

20-21. Գրեմ. Սբ. Աստվածածին եկեղեցու եռալեզվյան արձանագրությունը

22-24. Գրեմ. խաչքարեր Պատալոյենց եկեղեցու որմերում

25-27. Գրեմ. խաչքարեր և խաչաքանդակներ, ԺՉ դ.

28-32. Գրեմ. հայոց եկեղեցիներ, ԺԵ-ԺՉ դարեր

33. Գրեմ. արձանագրություն, ԺՉ դար

34. Սղնախ. հատված Սբ. Գևորգ եկեղեցուն հարող թաղամասից

35-38. Սղնախ. Սբ. Գևորգ եկեղեցի, 1797 թ.

39-41. Վելիսցիխեն. Սբ. Աստվածածին եկեղեցի, ԺԹ դ.

42-44. Թելավ. Սբ. Գևորգ Մայր եկեղեցի, 1786 թ.

45-46. Թելավ. Սբ. Երրորդություն եկեղեցի, ԺԹ դար

47. Ծինանդալ. Սբ. Աստվածածին եկեղեցի, 1808 թ.

48. Մատան. Սբ. Աստվածածին, ԺԹ դար

49, 51. Ուրիաթուբան (Վազիսուբան). Սբ. Սարգիս եկեղեցի, ԺԹ դար

50. Մուկուզան. Սբ. Համբարձման եկեղեցի, 1909 թ.

52. Մուկուզան. Սբ. Համբարձման եկեղեցու վերաշինության արձանագրությունը, 1909 թ.

53. Ախատել. մատուռ, ԺԹ դար

Տեղանուններ

Ա

Ագրամ 30
 Ագրամի-Դարչիանի տե՛ս
 Ագրամ
 Ագուլիս 103, 195, 200
 Աղբբեջանի Հանրապետություն 7, 17, 103, 104, 106, 143, 159, 193, 194, 200
 Ազատյան տուն 171
 Ալազան գետ 7, 18, 20, 30, 37, 38, 58, 59, 60, 83, 87, 89, 92, 95, 99, 102, 103, 109, 110, 111, 129, 132, 134, 137, 139, 141, 169, 193, 194, 202
 Ալավերդի 18, 83
 Ալիաբադ 194
 Ախալի Սղնախ տե՛ս
 Նասամխար
 Ախալի տե՛ս Նոր Գավազ
 Ախալշենի տե՛ս Ախաշեն
 Ախալսովել տե՛ս Գավազ
 Ախաշեն 30, 33, 36, 38
 Ախատել 58
 Ալամետա քրք. 18, 19, 26, 83
 Ախմետայի շրջ. 17, 19, 24, 29, 58
 Ածովեր 19
 Աղվանք 49
 Աղտոգոմա 99, 110, 111, 133, 136, 141
 Ամիրխանյանց տուն 184
 Այսրկովկաս 103, 203
 Անագա 31, 33, 159, 160, 191
 Անթոկ 143, 158
 Առաշենդա 30, 33, 37, 56
 Արթանա 25, 59
 Արեշ գվռ. 106
 Արտոզան (Վերնաթաղ) 92 (ծան.) 95
 Արցախ 9, 31, 38, 62, 63, 99, 103, 141, 165, 169, 180
 Արցախ-Ուտիք 7

Բ

Բախտրիոն 19

Բակուրցիխե 30, 31, 33, 50, 160, 191
 Բայիխտ 60
 «Բատոնիսցիխե» բերդ (Թելավ) 82
 Բելոկան 7, 17, 193, 194
 Բերեբիս-սերի 144
 Բխովել տե՛ս Փխովել
 Բողբե 160, 162
 Բողբիսխե 162
 Բոչորմա 7, 8
 Բոստանա 19

Գ

«Գայանյան» դպրոց (Թելավ) 71, 72
 Գանձակ 8, 31, 61, 62, 63, 99, 141, 180, 195
 Գավազ (հին, վերին) 132, 133
 Գարապաղ, տե՛ս Արցախ
 Գարդաբան 7, 143
 Գարդմանք 7
 Գիորգիծմինդա 143, 156, 158
 Գյոգ-բուլաղ 106
 Գյուլիստան 63
 Գոլովինսկի պողոտա 38
 Գոմբոռ լեռ 7
 Գոմբորի լ.շղթա 165
 Գորի քրք. 16
 Գրեմ 8, 61, 73, 111, 113, 118, 119, 120, 127, 137
 Գրին տե՛ս Գրեմ
 Գուլգուլա 60
 Գուրջաանի շրջ. 13, 17, 30, 58, 110, 159
 Գուրջաան քրք. 13, 14, 30, 31, 32, 33, 36, 37, 50

Դ

Դաղստան տե՛ս Դաղստանի Ինքնավար Հանրապետություն
 Դաղստանի Ինքնավար Հանրապետություն 58, 73, 82, 85, 103, 110, 193, 194, 200

Դաշբուլաղ 106
 Դավիթ Գարեջա 143, 144, 145, 148, 150
 Դեդոփլիս-Ճղարոյի շրջ. 17, 106, 109, 159, 180, 194, 200
 Դիպան 191
 Դոդոս-ոկա 144
 Դուշեթի շրջ. 18

Ե

Ելիգավետապոլ տե՛ս Գանձակ
 Ենիսել 111
 Եվլախ 200
 Երևան գվռ. 169
 Եօր գետ 156

Զ

Չարաթալա 7, 16, 17, 103, 104, 106, 186, 193, 194, 195, 196, 197, 199, 200, 202
 Չագյան 194, 200, 202
 Չենո Ղանդասուր 150
 Չիար 31, 32, 37, 56

Է

Էոր գետ տե՛ս Իոր գետ

Թ

Թասմալի տե՛ս Թասմալուր
 Թասմալուր 194, 200, 202
 Թարաք գյուղատեղի 153
 Թրիլիսի տե՛ս Թիֆլիս
 Թելավի գավառ 7, 9, 10, 11, 14, 18, 19, 29, 30, 38, 58
 Թելավի նահանգ 70
 Թելավի շրջ. 17, 18, 30, 58, 103, 110, 133, 143
 Թելավ քրք. 8, 10, 15, 16, 17, 19, 20, 23, 26, 28, 31, 32, 36, 51, 54, 58, 60, 61, 62, 63, 64, 65, 69, 70, 71, 72, 73, 75, 76, 78, 79, 80, 82, 83, 87, 88, 89, 91, 95, 99, 101, 126, 129, 156, 179, 180
 Թելեթ 61, 150

- Թելովան 61
 Թիանեթի գավառ 7, 19, 24
 Թիանեթի շրջ. 18
 Թիֆլիս 7, 13, 36, 38, 56, 60, 63, 78, 82 (ծան.), 103, 105, 129, 148, 149, 151, 152, 155, 156, 158, 163, 165, 169, 170, 184, 185, 186, 189, 192, 202
 Թոխլիաուր 148
 Թոուզ 7, 106
 Թուրքիա 9, 103, 194
 Թուրքումիչ տե՛ս Դեղոփլիս-Ծղարո
- Ի**
 Իդալթո 83, 95
 Իմերեթ 10, 101
 Ինցոբա 111
 Իոթի գետ 6, 7, 30, 148
 Իրան 9
- Լ**
 Լագոտաղ ավան, տե՛ս Լագոդեխ
 Լագոդեխի բերդ 104
 Լագոդեխի շրջ. 17, 30 103, 104, 110, 159, 193
 Լագոդեխի քրք. 16, 103, 105, 132, 180
 Լագարյան ճեմարան 186
 Լալիսուր 25, 83, 84
 Լավրա 144
 Լեռնային Ղարաբաղ տե՛ս Արցախ
 «Լիանոզյան» դպրոց (Մղնախ) 183, 184
 Լոպոտա գետակ 89
 Լոռի 63
- Խ**
 Խանլար 7, 106, 200
 Խաչմ 148, 156, 158
 Խաչմիան 127, 132
 Խորբալո 19
 Խորխեղ 19, 20, 24, 27 (ծան.)
 Ծաղկավանք 150
 Ծամբուլի 144
 Ծիթելի-Ծղարո տե՛ս Դեղոփլիս-Ծղարո
 Ծիթելի-Մաբաթլու տե՛ս Մաբաթլու
 Ծինանդալ 84, 85, 86
- Ծինանդալի Սբ. Աստվածածին եկեղեցի 58
- Կ**
 Կալաուր 30, 32
 Կախ 7, 17, 104, 106, 195, 200, 202
 Կախեթ 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 17, 18, 19, 22, 24, 30, 33, 37, 38, 42, 51, 60, 73, 82, 85, 88, 90, 92, 95, 102, 106, 111, 113, 118, 127, 129, 132, 148, 151, 154, 156, 157, 159, 160, 168, 169, 170, 179, 191, 202, 203
 Կախեթ-Հերեթ 61
 Կակարեթ 148, 149, 152, 156
 Կաճրեթ 32, 37
 Կամբեճան 6, 7, 8, 144
 Կատելի 193
 Կարդանախ 31, 32, 33, 160, 191
 Կարդանեխ տե՛ս Կարդանախ
 Կոդալո տե՛ս Քոդալո
 Կոլակ 31, 33, 37, 50
 Կոդոթո 29, 87, 95
 Կոնդուլ 87, 88, 97
 Կոստանդնուպոլիս 189
 Կովկաս 9, 129
 Կվարել տե՛ս Գվարել
 Կվելաժմինդա վրացական եկեղեցի 95
 Կրասնիե-Կոլոցի տե՛ս Դեղոփլիս-Ծղարո
 Կուխեթ 6
 Կուճատան 129, 130
 Կույրիչև փողոց (Մղնախ) 169
 Կուր գետ 6, 7, 113
 Կուրդղելաուր 89
- Հ**
 Հայաստան 6, 7, 8, 17, 63, 109, 168, 180, 203
 Հաղբատ 55, 63, 76, 82 101
 Հախբատեյանց թաղ 63
 Հերեթ 6, 7, 8
 Հյուսիսային Արցախ 10
 «Հոփսիսիմյանց» դպրոց (Թելավ) 72
- Չ**
 Չեզաան 110, 133, 141, 142
 Չվեղալավան 62
 Չվեղալավանի եկեղեցի տե՛ս Չվեղալավանի Սբ. Գևորգ եկեղեցի
- Չվեղալավանի Սբ. Գևորգ եկեղեցի (Թելավ) 19, 28, 54, 58, 63, 71, 72, 78, 79
 «Չվելի Գալավանի» բերդ (Թելավ) 82
- Ղ**
 Ղազախ 7, 106, 143
 Ղազբին 113
 Ղալաուր տե՛ս Կալաուր
 Ղանդաուր 30, 32, 37, 148, 150, 151
 Ղարաբաղ տե՛ս Արցախ
 «Ղրվթաներա» վրացական եկեղեցի (Թելավ) 73
 Ղոբախչուլի 193
 Ղոշավանք 29
 Ղորեղ տե՛ս Գվարել
 Ղորչիբաշիչվիլի բերդ (Թելավ) 83
 Գվարել 14, 101, 110, 126, 132, 133, 134, 135, 136, 139
 Գվարելի շրջ. 17, 30, 58, 103, 110,
 Գլոբաղչ 105
- Ճ**
 Ճառի 191
 Ճար-Մուխախ 194
 Ճինճիրան 99, 110, 133, 136, 141
 Ճոտոր 169
- Մ**
 Մաղան տե՛ս Մատան
 Մաղ 200
 Մախարաձե տե՛ս Ազրան
 Մաղարո 161, 169
 Մաղրան 19, 20, 21, 26
 Մաճխան 162
 Մաճխան (Վերին) 108, 161
 Մաճխան (Ներքին) 161
 Մամուլովների աղբյուր 170
 Մանավ 148, 151, 152, 153
 Մաշնախրի 104
 Մատան 10, 14, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 29
 Մարելիս 24
 «Մարիամյան» դպրոց (Թելավ) 72
 Մարինսկ 171

«Մարինակի» («Մարիամյան») օրիորդաց դպրոց 184
 Մարսան 200, 202
 Մելասան 33
 Մեծ Կովկասի 1-շրթա 7, 21, 59, 103, 134, 169, 193, 194, 203
 Մեղրի 103
 Միրզասան 108, 162
 Մոսկվա 186
 Մուկուզան 30, 33, 34, 36, 38

Ն

Նաթլիսանցեմեյի 144
 Նախիջևան գվռ. 169, 200
 Նասումխար 162, 163
 «Նասումխար» Սր. Աստվածածին ուխտատեղի 162
 Նասումխարի եկեղեցի 192
 Նափարեուլ 25, 89, 90, 97
 Ներսիսյան դպրոց 150, 186
 Ներքին Խողաշեն 26
 Ներքին Մաղարո 161
 Նինո Ծմինդա 151, 154, 155, 156, 158
 Նորաշեն 75
 Նոր Գավազ 137
 Նոր Ջաքաթալա 197
 Նոր Կիրակի եկեղեցի (Նափարեուլ) 90,
 Նոր Կիրակի եկեղեցի (Տողմիան) տե՛ս Սր. Աստվածածին եկեղեցի (Տողմիան)
 Նուկրիան 161, 163, 164, 165, 169

Շ

Շալաուր 87, 91
 Շամախի 8
 Շամխոր 7, 51
 Շամքոր տե՛ս Շամխոր
 Շանշիան տե՛ս Շաշիան
 Շաշիան 30, 36
 Շաքի գվռ. 106, 109, 194, 200
 Շաքի-Շիրվան 9, 62
 Շաքրիան 25, 111, 137
 Շիրվա 99, 101, 110, 133, 136, 139, 141
 «Շիխիան» Սր. Սարգիս եկեղեցի (Գրեմ) 127
 Շիրակի դաշտավայր 109

«Շուշանիկյան» դպրոց (Սղնախ) 183, 184
 Շուշի գվռ. 169, 195

Չ

Չաբինատր 24
 Չալաուրան 33, 36
 Չալուր 148, 150, 155
 Չումլաղ 30, 37

Պ

Պարսկաստան 113, 118, 165, 168, 194
 Պատարեմ եկեղեցի (Գրեմ) 123, 125
 Պատարձեուլ 156, 158
 Պետերբուրգ 184

Պ

Պանան 91, 92
 Պաֆարաբաղ 106
 Ջիմիթ 30, 37
 Ջուզասան 162, 165

Ռ

Ռուխայիր 19, 58, 83, 87, 91, 92, 93, 95
 Ռուսաստան 10, 18, 58, 61, 103, 110, 182, 193, 194, 200
 Ռուսաստանի Դաշնություն տե՛ս Ռուսաստան

Ս

Սաբաթլու 106, 109
 Սաբերեթի 144
 Սագարեջոյի շրջ. 17, 18, 30, 58, 143, 159
 Սագարեջո թղթ. 143, 152, 154, 156, 157, 158
 Սակարաուլո եկեղեցի (Գրեմ վրացական) 125
 Սամշվիլդե 8
 Սամուխ դաշտ 7
 Սանադիրո 24, 25, 84
 Սանահին 82
 Սանավարդո տե՛ս Խաչմիան
 Սանիրո 14, 59, 89, 91, 95
 Սարաջիշվիլի փողոց (Սղնախ) 169
 Սղնախի գավառ 7, 9, 10, 11, 30, 42, 108
 Սղնախի շրջ. 17, 30, 33, 159, 161

